

# ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԸ



ՏԻԳՐԱՆ
ՄԱՐՈՒԹՅԱՆ

# ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԸ

## ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1976

72 Ap
Մ 89

Խմբագիրներ՝ Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Վ. Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մ $\frac{801021(2028)}{701\ (01)76}$ 212, 75 «Տ»

© «Հայաստան» հրատարակչություն, 1976

# Ե Ր Կ Ո Ւ  Խ Ո Ս Ք

Սույն աշխատությունը հիմնականում նվիրված է հայ ճարտարապետության վաղ միջնադարում կառուցված հուշարձաններից Ավանի տաճարին: Նկատի առնելով, որ Ավանը իր տեսակի մեջ միակը չէ և հանդիսանում է տվյալ տիպին պատկանող մոտ երկու տասնյակ հուշարձաններից մեկը միայն, և որ բոլորը միմյանց միջև ունեցած որոշակի, երբեմն նշանակալից տարբերությամբ հանդերձ, էապես նույնի տարատեսակներն են՝ ավել կամ պակաս չափով կապված են միմյանց, կախված են միմյանցից, առնչվում են միմյանց հետ, իրենց վարգացման աստիճանով՝ առաջինը երկրորդի համար նախօրինակ է, հաջորդը նախորդի կրկնօրինակը կամ տարբերակը, անհրաժեշտաբար այդ բոլոր հուշարձանները տեղ են գտել սույն աշխատության էջերում: Դրանցից յուրաքանչյուրը առանձին վերցրած ֆենոմեն չէ, ստեղծված միանգամից, առանց հեռավոր և անմիջական նախորդների, և ոչ էլ դասականորեն անթերի գործ, որով ավարտվեր տվյալ տիպի վարգացումը: Այդ հուշարձաններից ամեն մեկը որոշակի աստիճան է տաճարների տվյալ տիպի կատարելագործման ճանապարհին և այստեղ նայվում է այն տեսանկյունից, թե մեր ժամանակներում ո՞րն ինչ կողմով է հետաքրքիր, նրա վերաբերյալ որ հարցերն են այժմեական, կամ կարոտ հետազոտության ու, թերևս ցարդ մեկնաբանվել են տարբեր դիրքերից, աղերս ունեցող այլ հարցերի լուծման հետ: Այժմ այդպիսիք կարիք են զգում նոր վերլուծության՝ ստանալու իրենց նշանակությանը համապատասխան տեղ ու արժեքավորում, ինչպես ճարտարապետական առանձին շրջաններում, այնպես էլ համընդհանուր ճարտարապետության պատմության անդաստանում:

Երբեմնի քրիստոնեական հավատի այս տաճարները այժմ արժեքավորվում են որպես ժողովրդի արվեստի և շինարար գործունեության ստեղծագործություններ՝ պատմական հուշարձաններ: Աշխատության մեջ առանձնապես մեծ տեղ չի հատկացվում այդ տաճարների ուսումնասիրության պատմությանը, թե ով ինչ է ասել այս կամ այն հուշարձանի ճարտարապետական-գեղարվեստական արժեքի, կառուցման ժամանակի և այլ հարցերի վերաբերյալ, դրանց հետ ավելի օգտակար է ծանոթանալ բնագրերում: Այստեղ ասվում է, թե մեր օրերում ո՞ր հուշարձանի մասին ի՞նչ ընդհանուր տիրապետող կարծիք կա, որքանով է այն համապատասխանում ռեալ իրավիճակին և ինչ նոր կողմ է բացում, մինչ այդ չասված նոր խոսք ասում, կամ ասվածին իր անհամաձայնությունը բերում հեղինակը: Ըստ որում, այդ արվում է երբեմն կարծիքի պարզ շարադրման ձևով, հաճախ գծագրերով, վերակազմական առաջարկներով ու նրանց տարբերակներով:

Այս խումբ տաճարներից շատերի վերաբերյալ չեն պահպանվել մատենագրական նյութեր նրանց կառուցման ժամանակի, պատվիրատուի անձնավորության, ճարտարապետ-կառուցողի, կառուցման հանգամանքների և դրանց հետ կապված, պատմությանը հետաքրքրող բազմաթիվ մեծ ու փոքր հարցերի մասին:

Մատենագրությամբ չհիշատակված և չթվագրված հուշարձանների կառուցման մոտավոր ժամանակի որոշման համար այստեղ կիրառվել է ճարտարապետական-գեղարվեստական ձևերի, կառուցվածքի կարևոր հանգույցների ճարտարագիտական-տեխնիկական լուծման վարգացման տենդենցների և կոնկրետ արտահայտությունների, ճշգրիտ թվագրված հուշարձանների հետ դրանց համեմատական ուսումնասիրության, դրանցով ըստացված արդյունքի դասակարգման մեթոդը:

Տակավին մինչև վերջերս ոմանց կողմից հու-

շարձանների այս տիպը դիտվում էր որպես բացառապես Կովկասյան երևույթ[1]: Ա. Լ. Յակոբսոնը ուղղակի գրում է. «Ավանի, Հռիփսիմեի, Ջվարիի և նրանց նմանների ներքին տարածության յուրօրինակ ռիթմով [տաճարներ] Անդրկովկասի սահմաններից դուրս՝ ոչ մի տեղ չի հանդիպում»[2]: Ս. Խ. Մնացականյանը նույնիսկ մեր օրերում (1963) պարզապես գրում է. «Ուշագրավ է, որ այս տիպի տաճարներ հանդիպում են հատկապես Կովկասում»[3]:

Ո՛չ, այդ թյուր կարծիքը հետևանք է այն բանի, որ տվյալ հեղինակները այդ տիպի ոչ բոլոր հուշարձաններն են ընդգրկել իրենց հետազոտություններում: Եթե այս տիպի այժմ հայտնի քսան հուշարձաններից յոթը գտնվում է Վրաստանում, յոթը Սովետական Հայաստանում, ապա վեցը՝ Արևմըտյան Հայաստանում, այսինքն՝ ոչ Կովկասում:

Այս տիպի տաճարների Արևմտյան Հայաստանում տարածված լինելը ենթադրել է տալիս, որ գուցե թե սրանց նախօրինակները ևս այնտեղ են, այն ճանապարհներին, որտեղով քրիստոնեությունը մուտք է գործել Հայաստան, ապա՝ Վրաստան: Դրանք և դրանց նման շատ տաճարներ մեր օրերում դեռևս անհայտ են գիտական աշխարհին, Արևմտյան Հայաստանի անմարդաբնակ դարձած անտառապատ վայրերում գտնվելու, նաև հողի տակ՝ հնագիտական հետազոտության կարոտ լինելու հետևանքով:

Նույն տիպի տաճարների, մոտավորապես նույն ժամանակներում ճարտարապետական տարբեր շրջանակներում երևան գալը, երբեմն բացատրում են նույնպիսի սոցիալ-տնտեսական, կուլտուրական պայմանների առկայությամբ այդ երկրներում, երբեմն՝ ճարտարապետական տարբեր շրջաններում գործող ստեղծագործողների նույն նախասկզբից օգտված լինելու հանգամանքով:

Պետք է կարծել, որ նույն սոցիալ-տնտեսական, աշխարհագրական և այլ պայմանները կարող էին դառնալ այս կամ այն չափով ընդհանրություն ունեցող շինությունների ստեղծման դրդապատճառ, սակայն նույնություն հանդիսացող ստեղծագործության առիթ չէին կարող լինել: Նույնիսկ մի ընդհանուր նախատիպի առկայությունն անգամ ճարտարապետության տարբեր շրջանակներում տարբեր արձագանք կունենար, տարբեր արդյունք կնշանավորեր, մինչ, ինչպես հայտնի է, Ավանի, Հռիփսիմեի, Ջվարիի և, ընդհանրապես այս տիպի դասական օրինակների հատակագծային և ներքին տարածական լուծումները ակնբախորեն նույնական են, նրանցում էական տարբերություններ չկան:

Այն, որ այդ տիպի տարբեր տաճարներում, երբեմն այս կամ այն չափով տարբեր են ներքին մասերի, սանենք՝ երկար և կարճ առանցքների թվային հարաբերությունները, կամ ինչ որ ձևով տարբեր են արտաքին պարագծերը, նույնիսկ տարբեր են անկյունային սենյակների քանակն ու ձևերը, միևնույն է, դրանք մի ստեղծագործություն են: Այդ բոլորի մեջ նույն է ներքին հատակաձևը և, որ գլխավորն է՝ տվյալ տիպի ամենաբնորոշ և պարտադիր առանձնահատկությունը՝ անկյունային մասերի լուծման եղանակը $^{3}/_{4}$ խորշերի ձևով:

Այս էլ նկատի առնելով, հետազոտվող հուշարձանները ամենայն իրավամբ կարող ենք կոչել մեկ ընդհանուր անունով՝ «երեք քառորդ խորշերով քառակոնխ (տետրակոնխ) տաճարներ»:

Հատկանշական է, որ ուսումնասիրվող հուշարձանների մեծ մասը և հատկապես դասական օրինակները կառուցվել են մի, ոչ շատ մեծ ժամանակահատվածում, երբ դրանք կառուցող համայնքները հետևել են քրիստոնեական նույն՝ լուսավորչական հավատին:

Այժմ ատիճանաբար տիրապետող է դառնում այն համոզումը, որ այդ հուշարձաններից շատերը, գտնվելով ճարտարապետական մեկ և մյուս շըրջանակներում, լինելով նույն նախօրինակի տարատեսակներ, կառուցվել են նույն վարպետներով համալրված կազմակերպությունների կողմից ու, թերևս ունեցել են նաև նույն պատվիրատուները, հանգամանք, որը բացառում է դրանց միջև որևէ անջրպետի գոյություն:

Ավան-Հռիփսիմեի տիպի հայկական հուշարձանների ուսումնասիրության ընթացքում առաջացող որոշ հարցերի լիակատար լուսաբանմանը մեծ չափով օգնում են երեք-քառորդ խորշերով տետրակոնխների նաև վրացական ճարտարապետության օրինակները, որոնց հետազոտությանը, բնականաբար պատշաճ տեղ է հատկացված սույն աշխատության էջերում, որպես նրա օրգանական և անքակտելի մասը:

# Ա Վ Ա Ն Ի   Տ Ա Ճ Ա Ր Ը

Հայաստանի առաջին բաժանումից (387 թ.) 204 տարի անց՝ 591 թվականին այն երկրորդ անգամ բաժանվեց երկու աշխարհակալ տերությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Արարատյան նահանգի կցալի մասը սահման ունենալով Ազատ գետը, անցավ Բյուզանդիային: Մորիկ կայսեր (582—602)[4] հրամանով Հայաստանի իր տիրապետությանն անցած մասում հայ լուսավորչադավան բնակչությանը հունադավան-քաղկեդոնական դարձնելու նկատառումով հայոց եկեղեցին ևս նրա կողմից տրոհվեց երկուսի ու այդ ժամանակ էլ բյուզանդական մասում գտնվող Կոտայքի Ավան գյուղաքաղաքը դարձավ հակաթոռ կաթողիկոս Հովհան Բագարանցու նստավայրը: Հայաստանի Պարսկաստանին անցած մասում հոգևոր կենտրոնը շարունակում էր մնալ Դվինում, որտեղ, դեռևս 574 թվականից գահակալ էր Մովսես Բ Եղվարդեցին:

Հովհան Բագարանցու կաթողիկոսական գահը հիմնվում է Ավանի, իր կողմից կառուցված Կաթողիկե եկեղեցում:

Հայ ճարտարապետության ազգային դեմքի կազմավորման և հետագա զարգացման առումով, մեր մյուս հուշարձանների թվում Ավանի կաթողիկե եկեղեցու դերը, որպես ճարտարապետական կառուցվածք, մեծ է եղել: Այժմ կիսակործան վիճակում պահպանվող այդ հուշարձանը մեզ համար, մեր դարավոր ճարտարապետության պատմության համար ունի անգնահատելի արժեք:

Ավանը հետաքրքրել է շատերին: Նրա կառուցվածքային առանձնահատկությունների և ճարտարապետության վերաբերյալ հետաքրքիր մտքեր են հայտնել արվեստաբանության մեծ գիտակներ. գրվել են նաև շատ հոդվածներ տարբեր առումներով, փարբեր մեկնաբանությամբ: Այդ հոդվածները, սակայն գերազանցապես (որոշ բացառություններով) կրել են պատմահնագիտական բնույթ, առավելապես արծարծվել են հուշարձանի կառուցման ժամանակի ճշգրիտ որոշման հարցեր և այդ կապակցությամբ միայն շոշափվել տաճարի ճարտարապետական-գեղարվեստական կողմը, նրա ծավալային տարածական հորինվածքին ու արտաքին պատկերին վերաբերող խնդիրներ[5]:

Հիմնվելով VII դարի պատմիչ Սեբեոսի հաղորդման վրա[6], որ Ավանի եկեղեցին կառուցել է Հովհանը և, նկատի ունենալով Հովհան Բագարանցու կաթողիկոս հաստատվելը 591 թվականին ու մահը 610—611 թվականին աքսորում, Ավան եկեղեցու կառուցման ժամանակը մինչև վերջերս համարվում էր հենց այդ ժամանակամիջոցը՝ 591—610/611 թվականները (ոմանց կարծիքով՝ 604—609/610, 591—608, 591—609 և այլն):

Ավանի կառուցումը սակայն չէր կարող տեղի ունենալ VII դարի առաջին տասնամյակում, ինչպես ընդունում են ոմանք, քանի որ VII դարի առաջին տարիներին վիճակը շատ խառն էր. «Մորիկ կայսեր սպանությունից հետո (602 թ.) Ավանի կաթողիկոսությունը անկում է ապրել, իսկ Դվինը ամեն կերպ աշխատել է մեկուսացնել Ավանը և շրջապատի վանքերն ու բյուզանդական իշխանության տակ գտնվող հոգևորականներին ապատել նրա ազդեցությունից: Հասկանալի է, որ անկման շրջանում չէր կարող կառուցվել Ավանի տաճարը»[7]:

Հետաքրքիր է, որ «Գիրք թղթոց»-ում (606—610 թթ.), ուր այնքան խոսվում է քաղկեդոնականության դեմ, Ավանի հակաթոռ կաթողիկոսության գործունեության վերաբերյալ որևէ հիշատակություն չկա:

Վրաց կաթողիկոս Կիրիոնը Դվինի կաթողիկոս Աբրահամի նամակի իր պատասխանում (բերված «Գիրք թղթոց»-ում) հիշեցնում է, որ երանելի Մովսեսի օրոք (574—604) հավատի միաբանություն կար, և որ ինքը չէր մեղադրվում որևէ պանցանքի համար, որ Աբրահամն արդ իզուր է կարծում, թե ինքը հարում է քաղկեդոնությանը և այլն:

Կիրիոնի պատասխան նամակում ակնարկ անգամ չկա, որ Դվինը առաջին հերթին պիտի պայքարեր իրեն առավել մոտ գտնվող Ավանի քաղկեդոնականների դեմ:

Դվինի՝ լուսավորչական եկեղեցու հավատարիմ Մովսես քերթող Եպիսկոպոսը 606 թվականին խուսափելով քաղկեդոնականների հետապնդումներից, թողնում է Ցուրտավի իր նստավայրը, գաղտնի մեկնում Դվին, անցնելով Հայաստանի բյուզանդական մասով, այդտեղ ձմեռում, և միայն գարնանը հասնում Մայր աթոռ: Եվ ահա Մովսեսի մեզ հասած գրություններում չենք հանդիպում



Գծ. 1. Ավան. տաճարի ակոնոմետրիկ տեսքը ճարավ-արևմտակողմից։

որևէ ակնարկի իր ճանապարհին ընկած գավառներում քաղկեդոնականների գործունեության վերաբերյալ։

Այս ամենով հասկանալի է դառնում, որ VII դարի 4—10 թվականներին Ավանի հակաթոռավորչական կաթողիկոսությունը գործելիս չի եղել, հետևաբար Ավանի գոյություն ունեցող կաթողիկոսական եկեղեցին և առաջնորդի ամբիոնը պետք է որ կառուցված լինեին մինչ այդ։

Բ. Ն. Առաքելյանը պատմական փաստերի հիման վրա եզրակացնում է, որ Ավանի եկեղեցու կառուցումը պետք է ավարտված լինի ամենաուշը 602 թվականին։ Ավանի հակաթոռ կաթողիկոսությունը 602 թվականին դադարում է գոյություն ունենալուց։ Ա. Բ. Երեմյանը ևս Ավանի կառուցումը այժմ դնում է VI դարի վերջին տասնամյակում[8]։

Թորոս Թորամանյանը միշտ էլ Ավանը համարել է VI դարի վերջերի հուշարձան։

Նոր, առավել հանգամանալից ուսումնասիրությունները պարզում են, որ Ավանի եկեղեցին կառուցվել է ավելի վաղ։ Օրինակ Կ. Գ. Ղաֆադարյանը գտնում է, որ Ավանը Հովհան Բագարանցին կառուցել է նախքան կաթողիկոս դառնալը՝ VI դարի երկրորդ կեսին։ «Անշուշտ կաթողիկոս դառնալուց առաջ նա իր հիմնադրած Ավանի տաճարի վանահայրն է եղել և այդ տաճարը կառուցել է ավելի շուտ, քան կաթողիկոս դառնալը», «...այլապես պետք է ենթադրենք, որ այդ Հովհան հակաթոռն առանց եկեղեցու է սկսել իր գործունեությունը Ավանում»[9]։

Եվ իրոք, Ավանում առկա ճարտարապետական ձևերը գործածական են եղել VI դարի կեսերում։ Յոթերորդ դարի սկզբներում կառուցված տաճարներում չեն երևում Ավանում տեղ գտած որոշ տարրեր. այդ ժամանակ արդեն երևան են գալիս նոր միայն ծնունդ առած, ոճական դեմք արտահայտող երևույթներ։ Խոսք չի կարող լինել, իհար-




Գծ 2. Ավան. հատակագիծ:

կե, կառուցող ճարտարապետի հին նկատմամբ պտհպանողական հակվածության վերաբերյալ, ինչպես այդ կարծում են ոմանք: Այն թռիչքային նորարարությունը, որ տեղի ունի տաճարի հատակագծի մշակման մեջ, հավաստում է նրա ճարտարապետի մեծ քանքարի, բնական օժտվածության



Գծ. 3. Կոստանդնուպոլիսի Առաքելոց եկեղեցի. կտրվածք:

առկայությունը: Այդ կարգի ստեղծագործողը չէր կարող տաճարին, նրա նոր բովանդակությանը անհարիր, ժամանակավրեպ արտաքին արտահայտություն տալ, հետևաբար Ավանի հատակագիծը ստեղծվել է այն ժամանակ, երբ առկա էին նրա օրգանիզմը կազմող ճարտարապետական միջոցները, ձևերը, այսինքն՝ VI դարի կեսերին, ավելի որոշակի՝ յոթանասնական, ութսունական թվականներին:

Հովհան Բագարանցին նշանակվելով հակաթոռ կաթողիկոս, իր գահը հիմնելով իր իսկ կողմից մինչ այդ կառուցած տաճարում, անմիջապես ձեռնարկում և տաճարի հյուսիսակողմում կառուցում է իր նստոցը՝ կաթողիկոսարանը:

Տաճարի հյուսիսային խորանի ներքնամասում այժմ էլ առկա դուռը, որ բացվել է մինչ այդ գոյություն ունեցող պատի մեջ, վերաբերում է կաթողիկոսարանի կառուցման ժամանակին, երբ անհրաժեշտ էր դարձել անմիջական կապ և անցում ստեղծել տաճարի և նորակառույց կաթողիկոսարանի միջև (գծ. 17):

**Այս պարագան ինքնին հավաստում է տաճարի գոյությունը նախքան կաթողիկոսարանի կառուցումը 591 թվականին:**

## ՏԱՃԱՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ

Ավանը պատկանում է հայ ճարտարապետության կենտրոնագմբեթ կառուցվածքների տիպին: Նրա հատակագիծը արտաքինից ուղղանկյունքառանկյունի է, փոքր ինչ ձգված արևելք-արևմուտք ուղղությամբ: Ներքին կենտրոնական տարածությունը բարձրանում է արտաքին ուղղանկյանը ներգծված քառախորան խաչաձևի և անկյունային դասավորության չորս խորշերի վրա: Արտաքին ուղղանկյուն և ներքին խաչաձև պարագծերի միջև չորս անկյուններում առկա են բոլորակ հիմքով, գմբեթարդ ծածկով սենյակներ (գծ. 2):

Ի տարբերություն այժմ տիրապետող դարձած կարծիքի, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ավանի տաճարը եղել է ոչ թե մեկ, այլ հինգ գմբեթանի՝ մեկ կենտրոնական, որ բավական մեծածավալ էր, և չորս «երկրորդական» շինության չորս անկյուններում՝ ավանդատների գլխին, որ փոքրածավալ էին և անհամեմատ ցածր դիրքում (գծ. 1, 10—12):

Թորոս Թորամանյանը դեռևս այս դարասկզ-

բում առաջին անգամ ծանոթանալով Ավանին, կազմում է նրա հատակագիծը, հանգում որոշակի և շատ կարևոր եզրակացությունների: Նա գրում է. «Ավանը հինգ գմբեթանի եկեղեցի է և հատակագծով շատ նման է Էջմիածնի հին կաթողիկեին, որ հետո 7-րդ դարում ևս մի քանի եկեղեցիներ նույն ձևով շինվեցին իբրև Լուսավորչավանդ ձև», «...Անիի մեջ միևնույն ձևով շինվեցավ Պահլավունիների Առաքելոց եկեղեցին, որովհետև Պահլավունիները ինքնիրենքնին համարում էին Լուսավորչի սերունդ և Լուսավորչի ավանդած ձևը պահում էին իրենց կանգնած եկեղեցիների համար»[10]:

Համաձայն Թորամանյանի՝ Ավանը նախօրինակ է հանդիսացել Նեա հինգ գմբեթանի այն եկեղեցու համար, որը արդեն IX դարում կառուցել է Բյուզանդիայի Մակեդոնական (Հայազգի) դինաստիայի կայսր Վասիլ Առաջինը:

Նեա եկեղեցին այժմ չկա, ինչպես որ չկան դեռևս VI դարում Հովիանի Կոստանդնուպոլսում կառուցած Առաքելոց ու, ինչպես այժմ ենթադրում են, նրա նմանողությամբ, նույնպես VI դարում կառուցված Եփեսոսի հինգ գմբեթանի եկեղեցիները: Հետազոտողներն այս տաճարների վերաբերյալ պատկերացում են կազմում պահպանված նկարագրությունների հիման վրա և Վենետիկի ս. Մարկոսի տաճարով (XI դար), քանի որ այս վերջինս, ինչպես կարծում են, պետք է որ կառուցված լինի Կոստանդնուպոլսի վերը նշած հուշարձանների օրինակով:

Որոշ գիտնականներ ենթադրում են, որ Վասիլ Առաջինի կառուցած Նեա եկեղեցին այս մյուսներից պետք է տարբերվելիս լիներ մի շատ կարևոր յուրահատկությամբ, նրանում չորս երկրորդական գմբեթները տեղադրված են եղել քառախորան եկեղեցու ոչ թե խաչաթևերի ծայրերում, ինչպես նախորդներում էր, այլ քառակուսի շինության անկյուններում՝ ամեն զույգ խաչաթևերի միջև:

Թորամանյանը թարգմանաբար բերում է Շարլ Դիլի Նեա եկեղեցու հետևյալ նկարագրությունը[11]. «Հատակագիծը կներկայացներ հավասար թևերով խաչաձև մը քառակուսիի մը մեջ ամփոփված և հինգ գմբեթներով պսակված: Բայց գմբեթները այնպես չէին, ինչպես (Կոստանդնուպոլսի—Տ. Մ.) Առաքելոց եկեղեցիինը և անոր ընդօրինակությունը եղող Ս. Մարկոսինը, որոնց խաչաձևի չորս թևերուն վրա պետեղված էին չորս գմբեթները: Վասիլի (Նեա—Տ. Մ.) եկեղեցվույն մեջ կենտրոնական գմբեթին շուրջը չորս երկրորդական գմբեթները ՝ կբարձրանային bas-coté-ներուն վրա խաչաձևի չորս թևերու հետ արտաքին քառակուսիի միացումով ձևացած անկյուններուն մեջ: Այսպիսով, արտաքին ճակատին վրա խաչաձևը անտեսանելի եղած էր, մինչդեռ (Կոստանդնուպոլսի—Տ. Մ.) Առաքելոց եկեղեցվույն վրա խաչաձևը արտաքուստ տեսանելի էր»[12]:

Ահա այս էլ նկատի ունենալով է, որ Հ. Ստըրժիգովսկին Վասիլ կայսեր եկեղեցին համարում է կառուցված հայկական ոճով, ազդված Էջմիածնի հատակագծից:

Թորամանյանը մեծ ափսոսանքով է նշում, որ Ավանը հիշյալ գիտնականներին մինչ այդ հայտնի չի եղել. «Որչափ լավ պիտի ըլլար,— գրում է Թորամանյանը,— եթե վերոհիշյալ երկու գիտնականներն իրենց սեղանին վրա ունենային Հայաստանի մեջ տակավին պահված քանի մը եկեղեցիներու հատակագծերն ու պատկերները, որոնք կետ առ կետ Վասիլի եկեղեցվույն նման ըլլալե զատ, անոնցմե ոմանք ավելի հին են, քան Վասիլի եկեղեցին»[13]: Թորամանյանը նկատի ունի Ավանը և Անիի Առաքելոց եկեղեցին:

Թորամանյանը այնուհետև գրում է, որ Ավանի «...գոյությունը, կհուսամ, թե Ստրջիգովսկիի համար հաճելի անակնկալ մը կլլա, անգամ մը ևս փաստացի հաստատելով տարիներ առաջ իր կատարած տեսությունը, առանց գիտնալու Ավանի եկեղեցվո գոյությունը: Իսկ Շարլ Դիլի համար ալ անշուշտ հետաքրքրական նորություն մէ, որով փոխանակ Վասիլի եկեղեցվույն հայ ճարտարապետության հետ առնչություն ունենալ կամ չունենալուն մասին վարանման մեջ մնալու, և նույն ձևը 10-րդ դարու բյուզանդական ոճի հատկանիշը համարելու, առայժմ գոնե, եթե ոչ 5-րդ դարու, գեթ 6-րդ դարու հայ ճարտարապետության հատկանիշը պիտի համարի»[14]:

Ինչպես տեսնում ենք, Թորամանյանի արծարծած նյութը, իրոք որ շատ սկզբունքային է: Այն վերաբերում է կենտրոնագմբեթ եկեղեցիների մի կարևոր ճյուղի սկզբնավորման հարցին, տեղին ու ժամանակին, ոճին ու նախաստեղծողին:

Ճիշտ է, Կոստանդնուպոլսի Առաքելոցը նույնպես եղել է խաչաձև եկեղեցի, ունեցել է հինգ



Գծ. 4. Անի. Առաքելոց եկեղեցի, ճակատ:




Գծ. 5. Անիի Առաքելոց եկեղեցի. հատակագիծ:

գմբեթ և կառուցվել է նույնպես VI դարում՝ ութսունական թվականներին, սակայն ի տարբերություն հայկականի՝ Ավանի և Անիի Առաքելոցի, նրանում երկրորդական չորս գմբեթները ունեցել են այլ դասավորություն և այդ պատճառով մասնագետների կողմից այն նույնիսկ չի համարվում կենտրոնագմբեթ կառուցվածք[15]: Նրանում «Կենտրոնական գմբեթի հրող ուժերը մարվել են ոչ թե թաղերի, այլ այն փոքր գմբեթների սիստեմի միջոցով, որոնք դասավորված են եղել խաչաթևերի ծայրերում»[16]: «Կենտրոնագմբեթ տաճարներում փոքր գմբեթները դասավորված են շենքի անկյունային մասերի վրա»[17], այսինքն այնպես, ինչպես այդ եղել է Ավանում, Անիի Առաքելոցում և Վասիլի Նեա եկեղեցում:

Այստեղից հետևում է, որ **VI դարի մոտավորապես ութսունական թվականներին Ավանում Հովհան Բագարանցու կառուցած եկեղեցին առաջին կենտրոնագմբեթ հինգ գմբեթանի եկեղեցին է և հանդիսանում է աշխարհի բոլոր կողմերում մեծ տարածում գտած կենտրոնագմբեթ հինգ գմբեթանի եկեղեցիների նախօրինակը**[18]: Սրանով է, գլխավորապես, Ավանի նշանակությունը դուրս գալիս ազգային շրջանակներից, արժանանում համընդհանուր ճանաչման, ոչ միայն որպես բարձր կարգի արվեստի գործ, ճարտարապետական եզակի ստեղծագործություն, այլև որպես հուշարձանների մի նոր տիպի սկզբնավորող:

* * *

Թորոս Թորամանյանը աներկմիտ, կատարյալ համոզվածությամբ պնդում է, որ Ավանում կենտրոնական մեծ գմբեթից բացի, գմբեթներ են եղել նաև շինության չորս անկյուններում գտնվող հիմքում բոլորակ սենյակների վերևում:

Թորամանյանից հետո Ավանի բոլոր հետազոտողները չեն բաժանում գիտնականի այդ կարծիքը: Օրինակ Ն. Տոկարսկին իր «Հին Հայաստանի ճարտարապետությունը» աշխատության մեջ գրում է. «...այն կարծիքը, որ Ավանի եկեղեցին ունեցել է հինգ գմբեթ — **սխալ է**, քանի որ իրականում ավանդատների թաղերը ծածկված են եղել շինության անկյունային մասերի տանիքի տակ»[19]:

«Ավանի վերակազմությունը» իր աշխատության մեջ Ռ. Աղաբաբյանը գրում է. «Ինչ վերաբերում է պատմիչների հաղորդմանը Ավանի հինգ

գմբեթայնությանը (որը և կրկնվում է Թ. Թորամանյանի մոտ), ապա այն չի **հաստատվում** բոլորակ ավանդատների պահպանված մասերով՝ վերջիններս ունեցել են գմբեթներ, ծածկված թեք տանիքով»[20]:

Ն. Տոկարսկին կրկին անդրադառնալով Ավանի գմբեթների հարցին, իր վերահրատարակված «Հայաստանի IV—XIV դարերի ճարտարապետությունը» աշխատության մեջ գրում է. «Ավանդատները կլոր են, ծածկերը համապատասխանաբար գնդաձև թաղեր շլագոտիներով (գուրտերով) Ավանդատների այդպիսի ձևը առիթ է տվել ենթադրելու, որ Ավանի եկեղեցին ունեցել է հինգ գլուխ (գմբեթներ): Բայց այդ կարծիքը **սխալ է**, քանի որ իրականում ավանդատների թաղերը ծածկված են եղել շինության անկյունային մասերի տանիքի տակ»[21]:

Վ. Հարությունյանն ու Ս. Սաֆարյանը իրենց «Հայ ճարտարապետության հուշարձանները» աշխատության մեջ գրում են՝ «Թորամանյանը ենթադրել է, որ Ավանի տաճարում գոյություն են ունեցել հինգ գմբեթներ՝ գլխավորը՝ կենտրոնում և չորսը՝ անկյունային բոլորակ ավանդատների վրա՝ մինչ հուշարձանի ներկա վիճակը հնարավորություն չի ընձեռում ստուգել այդ հետաքրքիր ենթադրությունը»[22]:

Ա. Երեմյանը իր «Հռիփսիմեի տաճարը» աշխատության մեջ գրում է. «Հուշարձանի մանրակրկին ուսումնասիրությունը մեզ համոզում է, որ նրա անկյունային սենյակները իրականում չէին կարող ծածկված լինել գմբեթներով՝ այդ սենյակների կի-



Գծ. 6. Էջմիածին. տաճարի ընդհանուր տեսքը:



Գծ. 7. Կենտրոնագմբեթ կառուցվածք ըստ Լեոնարդո դա Վինչիի:

սագնդաձև ծածկը կողերից այնքան է ցածր, որ չէր կարող դուրս գալ և արտահայտվել ինքնուրույն գմբեթի ձևով»[23]:

Նույն ոգով է արտահայտվում Ս. Մնացականյանը, գրելով. «Չի կարելի համաձայնել այն տեսակետի հետ, ըստ որի Ավանի տաճարը դրսից ևս ունեցել է իբրև հինգ գմբեթ: Անկյունային շրջագծային սենյակները ծածկող գմբեթները այնքան ցածր են դասավորված, որ նրանք բնավ չէին կարող դուրս գալ տաճարի ծածկի տակից և որևէ կերպ դրսևորվել էքստերյերում»[24]:

Այսպես, հարցը մնում է կարոտ ճշգրտման: Տարիների ընթացքում հուշարձանի քայքայումը շարունակվել է և նրա հորինվածքին վերաբերող որոշ հարցեր, այդ թվում նաև չորս փոքր գմբեթների գոյության հարցը՝ դարձել առեղծվածային:

Հարցի պարզաբանման համար ունկնդրենք Թորամանյանին: «Փլած են գմբեթները, սակայն ինչ որ այստեղ մեզի կարևոր է և ըստ ամենայնի հետաքրքրական, երկրորդական չորս գմբեթներու գոյության ապացույց է, որոնք մեկուն երկու կարգ քարի բոլորակ շարքերը տակավին կմնան հարավարևմտյան անկյունին վրա:

Մասնավոր շնորհակալության արժանի է Գարեգին Վարդապետ Հովսեփյանի մեկ հոգածությունը՝ այս անգնահատելի հիշատակարանի մա-

սին, որ մանրամասն լուսանկարելով կորուստե ազատեց: Մասնավորապես լուսանկարած է նաև հարավ-արևմտյան անկյունի փոքր գմբեթին մնացորդ քարերու բոլորակ շարքերն ալ»[25]:

Պարզվում է, որ Ավանի չորս անկյուններում, հիմքում բոլորաձև չորս սենյակների վերևում, շինության ծածկից վերև գոյություն են ունեցել ինչ-որ ծավալներ, որոնք փլվել են և նրանցից մեկի՝ հարավ-արևմտյան անկյան ծավալից մնացած երկու շարքը լուսանկարել է Գարեգին Հովսեփյանը:

Ցավոք, Թորամանյանի ուշադրությունը զրաված այն լուսանկարը, որ իր ժամանակին կատարել է Գարեգին Հովսեփյանը և որի վրա, համաձայն Թորամանյանի, երևում էին տաճարի հարավ-արևմտյան անկյան փոքր գմբեթից պահպանված պատի երկու շարք, մինչև օրս չի հայտնաբերվում ոչ պետական հավաքածուներում, ոչ էլ առանձին անձանց մոտ: Այդպիսի լուսանկար, ըստ երևույթին, եղել է, այն տարիներ առաջ, ինչպես ինքն է ասում, տեսել է մեր հուշարձանների քաջատեղյակ հետազոտող Մորուս Հասրաթյանը:

Ավերակի հարավ-արևմտյան տեսքն արտահայտող առկա լուսանկարներում որոշակիորեն երևում է կենտրոնական գմբեթի հիմքը կազմող պատը քարի երկու-երեք շարքի բարձրությամբ (նկ. 1, 2, 3): Այդ պատը ևս այժմ տեղում չկա՝ կործանվել է: Նրա երբեմնի գոյության միակ վկան ցարդ պահպանված լուսանկարն է: Մենք, նույնիսկ չենք փորձում ենթադրել, թե գուցե կենտրոնական գմբեթի հիմքը կազմող երկու-երեք շարքը Թորամանյանի կողմից սխալմամբ ընկալված լինի, որպես անկյունային փոքր գմբեթի մնացորդ: Թորամանյանի պես բազմահմուտ գիտնականը չէր կարող կենտրոնական գմբեթի մեծ ձգվածության շարվածքը շփոթել և այն ընդունել իբրև փոքր գմբեթի մնացորդ:

Հույժ կարևոր է, որ հիշյալ լուսանկարի կամ նրա սևապակու որոնումները շարունակվեն, որ հնարավոր դառնա ճշգրտել փոքր գմբեթների արտաքին տեսքը, մի բան, որ շատ արժեքավոր գյուտ կհամարվի մեր և ընդհանուր ճարտարապետության պատմության համար:

Ստեղծված իրավիճակից ելնելով, անհրաժեշտաբար Ավանի կաթողիկեի չորս փոքր գմբեթների առեղծվածի լուծումը մնում է որոնել հուշարձանի ցարդ գոյությունը պահպանած ավերակում, նրա նոր չափագրման և ռեալ տվյալների հիման վրա ստեղծվելիք նոր վերակազմության միջոցով:

## ՏԱՃԱՐԻ ԱՎԵՐԱԿԸ

Արդ, ինչ վիճակում է հուշարձանի ավերակն ընդհանրապես և hատկապես անկյունային հանգույցներում, որտեղ բոլորակ սենյակների մնացորդներն են, որոնց հետ կապում ենք մեր հույսերը, ինչպես Թորամանյանն է անվանում՝ այդ «երկրորդական գմբեթների» առեղծվածը լուծելու համար: Ինքնին հասկանալի է, որ նկատի է առնվում ոչ այնքան այսօրվա, որքան Գարեգին Հովսեփյանի, թերևս նաև Թորոս Թորամանյանի ժամանակների ավերակը, չէ՞ որ նրանցից հետո ոչ միայն շարունակել է գործել բնության քայքայիչ ձեռքը, այլև կատարվել են նորոգումներ (1940-ական թվականներին), ոչ բոլոր դեպքերում զերծ խակալանի եղծումներից ու սխալներից: Ցավով պետք է նշել, որ հուշարձանը ժամանակին՝ նորոգումներից առաջ լուսանկարվել է ոչ բոլոր կողմերից և ոչ ամենայն մանրամասնությամբ. օրինակ տաճարի հարավային և հյուսիսային ճակատների լիակատար, բոլոր մանրամասները պարզող լուսանկարներ չկան, չկան ինչպես հյուսիսային պատի ներքին տեսքն արտահայտող, այնպես էլ շատ դրվագների լուսանկարներ: Մինչդեռ այդպիսիք օգտակար պիտի լինեին շինության տվյալ հանգույցների մասին ավելի որոշակի գաղափար կազմելու համար: Հայտնի կլիներ նաև, թե տաճարի կրած նորոգումներից որոնք են վերաբերում այս քառասնական թվականներին, և որոնք՝ ավելի վաղ ժամանակներին:

Առկա 60—70 տարի առաջ կատարված լուսանկարների և այժմյան ավերակի հետազոտման համաձայն՝ տաճարի արևելակողմի ճակատից պահպանվում է պատի 1,30 մետր բարձրության ստորին երկու շարքը (նկ. 4) եռաստիճան որմախարիսխի վրա (տեղանքի թեքության հետևանքով որմախարիսխի առաջին աստիճանը իր աջ մասում կազմված է երկու շարքից):

Տաճարի հյուսիսակողմի ճակատային պատը լավ է պահպանվել իր կենտրոնական մասում միայն. երկու ծայրերում այն կործանվել է, ըստ

որում՝ արևմտյան կործանված մասը վերջին նորոգումների ընթացքում վերաշարվել է, արևելյան մասը՝ մնում է ձեռք չտված: Նորոգումից վերծ են մնացել հյուսիսային խորանի պատուհանից ձախ ինը շարք՝ 4,90 մետր բարձրությամբ, հաշված որմախարիսխի վերևից, պատուհանից աջ տասնմեկ շարք՝ 5,90 մետր բարձրությամբ, ինչպես որ գծագրում է (գծ. 17):

Տաճարի հարավակողմի ճակատային պատը շատ է վնասվել Գարեգին Հովսեփյանի լուսանկարումներից հետո: Անաղարտ պահպանվում է ճակատի աջ կեսի մի փոքր մասը միայն՝ 4,50 մետր բարձրությամբ, մնացածը, ինչպես կա այժմյան ավերակում, վերաշարվել է վերջին վերանորոգումների ընթացքում (գծ. 18):

Տաճարի արևմտյան ճակատի նույնպես կենտրոնական մասն է, որ պահպանվում է ամբողջ բարձրությամբ՝ որմախարիսխից մինչև ճակտոնի ստորին՝ հորիզոնական գոտին ներառյալ և գոտուց վերև՝ առաջին շարքից մի քանի քար: Ճակատային պատի հարավային և հյուսիսային հատվածները՝ ավանդատների պատուհաններից սկսած, կործանվել են, դրանք վերաշարվել են վերջին նորոգման ընթացքում: Համեմատաբար լավ է պահպանվել շքամուտքը (նկ. 6):

Հյուսիս-արևմտյան սենյակի ներքնամասը միայն կա՝ մինչև լուսամուտի գոգը, որ պահպանվել է վերնամասի փուլքերով ծածկված լինելու շնորհիվ: Ներսի կողմից համեմատաբար լավ է պահպանվել այդ սենյակի հարավային պատահատվածը, գմբեթարդ ծածկի որոշ մնացորդներով:

Հարավ-արևմտյան սենյակի պատերը լրիվ պարագծով պահպանվում են նույնպես մինչև պատուհանի գոգը, դեռ մի քիչ էլ ցած (հարավակողմից). դրանից վերև՝ սենյակի հարավ-արևմտյան պատահատվածը կործանված է: Նույն սենյակի հյուսիսարևելյան պատահատվածը բարձրանում է մինչև ծածկի սկիզբը: Այնուհետև շարունակվում է բարձրանալ գմբեթածածկի մնացորդը 3—4 շարքի սահմաններում խիստ խարխլված վիճակում: Այդ սենյակի այժմյան ծածկի մասը կազմող հատվածը, ինչպես և պատերի արևելյան մասն ու մնացած պատերի ողջ վերնամասը ակներև վերաշարվել են վերջին նորոգումների ժամանակ:

Ինչպես երևում է, այդ պահպանված ծածկի վրայի՝ գմբեթային հանգույցին վերաբերող պատի երեք շարքը, նույնպես և հարավ-արևմտյան որմնամույթերին կառչած կամարային փոխանցման դրվագը քանդել են հենց այդ նորոգումների ընթացքում ու չեն վերաշարել:

Հյուսիս-արևելյան սենյակի պատերի ներքնամասերից բացի, պահպանվել է նաև պատամիջի կրաբետոնին կառչած գմբեթածածկի դրվագը, քարակերտ խաչի մի ճյուղը վրան՝ քարի երեք շարքի բարձրությամբ, հենված ծածկի հիմքով անցնող գոտու մնացորդին: Այդ սենյակի հյուսիս-արևելյան ու հարավային պատահատվածները չկան՝ կործանված են:

Մյուսների համեմատ լավ է պահպանվել հարավ-արևելյան սենյակը: Ողջ պարագծով պահպանվել է պատերի ներքնամասը. ավելի վերև՝ հյուսիս-արևելյան կեսից ավելին չկա, սակայն արևմտյան կեսը կա և այն բարձրանում է մինչև գմբեթատակ գոտին. նրանից վերև՝ գմբեթածածկի անաղարտ պահպանված մասն է՝ հինգ շարքի բարձրությամբ: Ծածկի ներքին հարթության վրա առկա են քարակերտ խաչի երկու ճառագայթաձև ճյուղերը չորս-հինգ շարքի բարձրությամբ: Այս սենյակի ծածկի վերոհիշյալ մնացորդն է միայն, որ վերծ է մնացել այլ և այլ նորոգումներից: Ծածկի հիմքով անցնող գոտուց ցած, պատահատվածի որոշ խարխլված մասեր վերաշարվել են նույնպես վերջին նորոգումների ընթացքում (նկ. 12):

Վերևում բերված անկյունային սենյակների ծածկերի մնացորդները բնորոշում են կիսագնդաձևություն: Նկատի ունենալով այս և, հատկապես, արևելակողմի երկու սենյակների ծածկերի քարակերտ խաչերի դրվագների առկայությունը, հետազոտողներից ոմանք ակամայից գործ են ածում «գմբեթածածկ» արտահայտությունը: Այդ, ինչ խոսք, բնական է, չէ՞ որ հենց այդպիսին են մեր կենտրոնագմբեթ տաճարների գմբեթածածկերը ներսից: Անշուշտ, ճիշտ չեն հետազոտողներից նրանք, ովքեր Ավանի անկյունային սենյակների ծածկերը անվանում են «թաղեր»:

Հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան անկյունային սենյակների ծածկերից մնացած դրվագները մեր օրերում դեռևս շարունակում են իրենց անխախտ գոյությունը և այդ վիճակում լիակատար հիմք են կատարյալ չափագրության համար:

## ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Ավանի համար վերակազմության առաջին նախագիծը ստեղծել է Ռուբեն Աղաբաբյանը, հիմք ունենալով ճարտարապետ Գ. Գ. Աղաբաբյանի քառասնական թվականների ընթացքում կատարած չափագրության նյութերը:

Ինչպես նկատվել է Գ. Գ. Աղաբաբյանի չափագրությունները կատարվել են հուշարձանը մասնակիորեն վերականգնելուց հետո[26]: Այժմ ակներև է, որ այդ հանգամանքը իր հետևանքներն է ունեցել Ռ. Աղաբաբյանի վերակազմության նախագծում:

Համաձայն վերոհիշյալ վերակազմության, Ավան տաճարի ներքին, խաչաձև հիմքով հորինվածքը ամփոփված է արտաքին, արևելք-արևմուտք առանցքով մի քիչ ձգված, ուղղանկյուն հիմքի վրա բարձրացած ծավալի մեջ. այն ծածկված է երկթեք տանիքով, որին խաչաձևում է հյուսիս-հարավ առանցքով ստեղծված, ավելի փոքր չափերի մի այլ երկթեք տանիք: Երկու զույգ խորանների խաչաձև դասավորությամբ կենտրոնում առաջացած քառակուսու վրա, տանիքից սկսած վեր է բարձրանում դրսից ու ներսից ութնիստ գմբեթաթմբուկը, ունենալով կիսագնդաձև ծածկ՝ բրգաձև տանիքով: Վերակազմության նախագծում գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթի հիմքի բոլորակին ցույց է տրված տրոմպների եռաստիճան սիստեմով: Հատակագծի և ճակատների գծագրերի համաձայն՝ գմբեթաթմբուկի յուրաքանչյուր նիստի վրա եղել է ոչ լայն, ձգված համաչափությամբ, կոր վերնամասով մեկ պատուհան: Շինության ներքին տեսքը բացահայտող կտրվածքի գծագրի համաձայն՝ գմբեթի պատուհանները չորսն են՝ մեկական հատ երկու հիմնական՝ առանցքային նիստերի վրա: Անկյունագծային ուղղության նիստերի վրա պատուհանները չկան: Նրանց տեղում ցույց են տված տրոմպների երկրորդ և երրորդ շարքերը: Վերակազմության նախագծում ներկայացված են շինության հատակագիծը, մեկ կտրվածք և ճակատներից երկուսը: Այդտեղ ճակտոններն ունեն նաև հորիզոնական գոտի: Չնայած հատակագծում չկան, սակայն հյուսիսային ճակատի վրա վերակազմության հեղինակը ցույց է տվել ավանդատների երկու զույգ շատ փոքր չափերի պատուհաններ՝ ստորին երկուսը ուղղանկյուն եզրագծով, բարձրի երկուսը՝ կոր վերնամասով: Արևմըտյան ճակտոնի կենտրոնում ցույց է տրված չորս կիսակորերով ստեղծված, խաչաձև եզրագծեր ունեցող պատուհան: Այն լուսավորում է ճակատային պատի և արևմտյան խորանի գմբեթարդ ծածկի միջև ստեղծված տարածությունը:

Այս է ահա Ավանի առաջին վերակազմության համառոտ նկարագիրը:

* * *

Ավանի համար վերակազմության նոր՝ երկրորդ նախագծի ստեղծումը տողերիս գրողի կողմից անհրաժեշտություն համարվեց հուշարձանի ավերակը և մյուս նյութերը առավել մանրամասն ուսումնասիրելուց հետո միայն, երբ որոշակի դարձան նախորդ հետազոտողներից մի քանիսի գործերում տեղ գտած ակներև անճշտությունները և, հատկապես նրանց՝ այդ անճշտությունների վրա խարսխված եզրահանգումների անհամապատասխանությունը այս հուշարձանի ռեալ տվյալներին, նրա արժանիքների գնահատման առումով, որպես արվեստի գործ:

Տաճարի նոր, ամբողջական վերակազմության, այդ թվում՝ նաև առանձին ճակատների վերականգնման համար հիմք են հանդիսացել ավերակում իրենց կանգունությունը ցարդ պահպանած բոլոր նյութերը, այդ թվում ներսի և դրսի պատերը ու, հատկապես նրանց այն մասերը, որոնք գոյություն ունեն սկզբնական կառուցումից ի վեր, առանց հուշարձանում ժամանակ առ ժամանակ կատարված նորոգումներով եղծվելու:

Արժանահիշատակ գիտնական Գարեգին Հովսեփյանը թողել է տաճարի ներքին տեսքը պատկերող շատ արժեքավոր լուսանկարներ, առանց որոնց այսօր անհնար կլիներ տաճարի համար առաջարկել վերակազմության ճշմարտանման նախագիծ: Այդ լուսանկարներում պատկերված են տաճարի հարավային խորանը իր գմբեթարդ ծածկով, երեք-քառորդ շրջանի հիմքով անկյունագծային դասավորության խորշերից հարավ-արևելյանն իր ողջ բարձրությամբ ու ծածկով, հարավ-արևմըտյանը՝ իր ծածկի սկզբնամասով (նկ. 8, 9, 10, 12):

Ամենաարժեքավորը այդ լուսանկարներում այն է, որ այդտեղ երևում է, թե կառուցողը ինչ ձևով է իրականացրել անցումը գմբեթատակ քառակուսուց գմբեթի բոլորակ հիմքին: Այդ առումով, այն, ինչ տեսնում ենք այդ լուսանկարներում, այժմյան ավերակում չկա:

Հիմնվելով գոյություն ունեցող ավերակից բացի նաև Գարեգին Հովսեփյանի, Թորոս Թորամանյանի ու, ավելի ուշ՝ հուշարձանների պահպանման մարմինների նյութերի և լուսանկարների վրա (որոնց նեգատիվները պահվում են Պետական պատմական թանգարանում), ստեղծվել է Ավանի տաճարի վերակազմության նոր (թվով երկրորդ) նախագիծը:

Նոր վերակազմությամբ հուշարձանի մի քանի կարևոր կողմերի ճշգրիտ բացահայտման շնորհիվ, որոշ սկզբունքային հարցեր ստանում են առավել հավանական լուսաբանություն, հանգուցային ամբողջական դրվագներ արմատապես նոր պատկերավորում:

Սա, իհարկե, չի վերաբերում տաճարի հատակագծին, այն նոր վերակազմության մեջ այնպիսին է, ինչպիսին կես դար առաջ չափագրել, գծագրել ու առաջին անգամ հրատարակել է Թորոս Թորամանյանը: Ներկա հատակագծում մանրամասներն արդյունք են հուշարձանի անաղարտ մնացած մասերի նոր չափագրման: Նոր վերակազմությամբ ճշգրտված է տաճարի գմբեթների քանակը, որը և ըստ էության սույն հետազոտության առանցքը կազմող հարցերից մեկն է:

Նախորդ էջերում բերվեցին Ավանով զբաղվող մասնագետների կարծիքները տվյալ հարցի վերաբերյալ: Դրանք միմյանցից, գրեթե չեն տարբերվում: Կարծիքների հեղինակները այդ հարցում համերաշխ են և գտնում են, որ Ավանը ունեցել է մեկ գմբեթ, բարձրացած կենտրոնական քառակուսու՝ խորանային թևերի այդ խաչմերուկի վրա: Նրանք իրենց տվյալ եզրակացության համար, որպես անառարկելի կռվան, շարունակ նշում են անկյունային սենյակների ծածկերի տաճարի ընդհանուր երկթեք տանիքի տակ մնալը և, որպես դրա տրամաբանական հետևանք, ինչպես ենթադրում են՝ արտաքին ընդհանուր ծավալային հորինվածքում որևէ ձևով արտահայտված չլինելը:

Քննարկվող հարցում որոշակիություն ստեղծելու անհրաժեշտությունից ելնելով նախ պարզենք, թե որքա՞ն է ճիշտ, որ տվյալ շինությունը ծածկված է եղել մեկ ընդհանուր՝ շինության ողջ լայնքն ընդգրկող տանիքով և, ապա, որքա՞ն է ճիշտ և որտեղի՞ց է հայտնի, որ չորս անկյունային սենյակների ծածկերը մնում են ընդհանուր տանիքի տակ ու որևէ ձևով չեն դրսևորվում արտաքին ծավալային հորինվածքում:

Հայ հին ճարտարապետության հուշարձաններին այս կամ այն չափով ծանոթ մարդը չի կարող նկատած չլինել, որ մեր հուշարձանների և, հատկապես, գմբեթավոր տաճարների տանիքները աստիճանավոր են՝ թևերի տանիքները ցածր են և միաթեք, կենտրոնական մասի տանիքը բարձր է և երկթեք. նրանք միմյանց շարունակություն չեն կազմում, նրանց միջև ուղղաձիգ խզում կա, որը և ստեղծում է աստիճանավորություն: Այդպես են ծածկված վաղ միջնադարի հայ ճարտարապետության հուշարձաններից՝ Տեկորի, Օձունի, Հռիփսիմեի, Գայանեի, Մրենի, Թալինի, Արուճի, Սիսիանի տաճարները: Այդ նույն ծածկաձևը պետք է ունեցած լինի նաև Ավանը. ոչ մի փաստ չկա, որով ժխտվեր այդ, կամ հաստատվեր հակառակը:

Աստիճանավոր ծածկի ավանդույթը, ինչպես պետք է կարծել, գալիս է բազիլիկաներից. նրանց ծածկաձևը ճիշտ այդպես է՝ կողային, համեմատաբար նեղ նավերի ծածկերը միաթեք են և ցածր, կենտրոնական՝ ավելի լայն նավի ծածկը երկթեք է ու բարձր: Ծածկի այդ ձևը հնարավոր է դարձնում, որ այդ տաճարներում կենտրոնական նավը լուսավորվի նաև վերևից՝ այն պատուհաններից, որոնք բացվում են ցածր և բարձր ծածկերի միջև եղած պատերի վրա:

Ծածկերի այս ընդունված ձևից բացառությունները եզակի են:

Շինությունն իր ամբողջական լայնքով ընդհանուր երկթեք տանիքի տակ առնելը հունական-հելլենական շրջանի հուշարձանների առանձնահատուկ կողմն է: Այդպիսի ծածկ ունի Գառնիի հեթանոսական տաճարը, կառուցված դեռևս մեր թվականության առաջին դարում:

Հատկանշական է, որ Ավանի արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատներում պահպանված պատերը բավական բարձր են իրենց միջին մասերում, անխտիր ցածր են անկյուններում (արևելյան պատն ամբողջությամբ ցածր է):

Ընդհանուր ուղղանկյուն ծավալի մեջ ամփոփ-




Գծ. 8. Ավան. հարավ-արևելյան բոլորակ հիմքով. սենյակի (մատուռի) ծածկի կտրվածք:

ված լինելով հանդերձ, Ավանի ներքին խաչաձևությունը արտաքին հորինվածքում ողջ լիակատարությամբ դրսևորվում է տանիքի բարձրության վրա: Ըստ որում, խաչաթևերը ծածկվում են երկթեք տանիքով, ծայրերը փակվում՝ ճակտոններով, որոնք էլ կազմում են ճակատների կենտրոնական բարձրացած մասերը: Այդպես է մեր այդ տիպի դեռևս կանգուն բոլոր տաճարներում՝ Ավանում, Գառնահովտում, Հռիփսիմեում, Սիսիանում, Ախթամարում, Զորադիրում: Այս երևույթը, ըստ էության, կազմում է մեր այդ տիպի հուշարձանների հատկանշական կողմերից մեկը:

Գ. Չուբինաշվիլին, վրացական այդ տիպի, հուշարձանների տվյալ դրվագի հատկանշական կողմը իրավացիորեն համարում է ոչ թե ճակտոնը, այլ կիսակոնային ծածկաձևը:

Համաձայն Վ. Բերիձեի ճակտոնների գործածությունը Վրաստանում Ծրոմիով սկսվում և շարունակվում է հաջորդ դարերում:

Վերակազմության նախագծում ճակատների բարձրությունը որոշվում է ճշտորեն — առանց դըժվարության, քանի որ արևմտյան ճակատի վրա առ այսօր իր տեղում պահպանվում է ճակտոնի հորիզոնական գոտու դրվագը՝ երեք երկար քարեր (նկ. 1, 2, գծ. 12):

Համաձայն կանոնի, արևմտակողմի ճակտոնը պետք է ընդգրկեր պատի մի հատված, հավասար կենտրոնական գմբեթի լայնքին[27]: Պատերը ճակտոնից աջ և ձախ՝ մինչև շինության անկյունները պիտի ավարտվեին ավելի ցածր միաթեք քիվով:

Տաճարի արևելյան ճակատը հար և նման պիտի լինի արևմտյան ճակատին, տարբերությամբ՝ արևմտյան ճակատի կենտրոնում տաճարի շքամուտքըն է, արևելյան ճակատի կենտրոնում՝ գլխավոր խորանը լուսավորող պատուհանը (գծ. 12, 16):

Տաճարի հյուսիսային և հարավային ճակատներում ճակտոնները կարող են եղած լինել առանց հորիզոնական գոտու, այդպես է եղել նաև Տեկորում: Ճակտոնի այդ ձևը (առանց հորիզոնական գոտու) ընդհանրացած է հայ միջնադարյան հուշարձաններում:

Հորիզոնական գոտով ճակտոնները յուրահատուկ են հելենական ժամանակներին: Դրանց հանդիպում ենք մեր առավել վաղ շրջանի հուշարձաններում:

Հյուսիսային և հարավային ճակատներում ճակտոններն ունեն նույն չափերը, ինչ չափեր ունեն այդպիսիք արևելյան և արևմտյան ճակատներում: Այս նշանակում է՝ տանիքում արտահայտված խաչաձևի թևերն ունեն նույն լայնքը:

Կողային ճակատների արևելյան և արևմտյան հատվածներում պատերն ավարտվում են հորիզոնական քիվերով, որոնք արևելյան և արևմտյան ճակատների երկու ծայրերի թեք քիվերի շարունակությունն են: Սրանք նույնպես քարի երկու շարքի չափով ցածր են ճակտոնների քիվերի հորիզոնական մասերից (գծ. 17, 18):

Ավանի նոր վերակազմությամբ տաճարի ճակատներն ընդունում են բնականոն տեսք, հարազատ հայկական այդօրինակ տաճարների ձևերին՝ շինության խորանարդաձև ամբողջական ծավալը երկու հիմնական առանցքների ուղղությամբ բարձր է, անկյունագծային ուղղությամբ՝ ցածր: Այս պարագաներում Ավանի անկյունային սենյակների ծավալները որոշակիորեն դրսևորվում են տաճարի արտաքին ընդհանուր հորինվածքում (գծ. 1):

Հուշարձանի նոր հետազոտության ընթացքում անհրաժեշտաբար ուշադրություն է կենտրոնացվել տաճարի անկյունային սենյակների ծածկաձևի վրա, նպատակ ունենալով այդ ծածկերի պարագծերի և




Գծ. 9. Ավան. ընդլայնական կտրվածք արևմտակողմի ավանդատներով:

դիրքի ճշգրտումը բարձրության առումով: Բանն այն է, որ Ավանում անկյունային սենյակների ծածկերի կորաձևությունն այնպիսին է, որ չէր կարող վրիպել հետապոտողի աչքից: Այդ պարզորոշ երևում է հատկապես հարավ-արևելյան սենյակի ծածկից մնացած դրվագը դիտելիս: Ինչպես տեղում, այնպես էլ լուսանկարում (նկ. 12) հստակորեն ուրվագծվում է ծածկի կտրվածքի շատ բնորոշ կողադեմը: Այստեղ ծածկի գնդաձևությունը սկըսվում է ոչ թե անմիջապես ծածկի հիմքով անցնող գոտու վրայից, այլ կգալի՝ մոտ մեկուկես քարի շարք բարձրից: Գմբեթածածկի առաջին շարքը բարձրանում է ուղղաձիգ, երկրորդ շարքի ցածրի կեսը թեքվում է դեպի դուրս, բարձրի կեսը՝ ներս: Հենց այստեղից էլ սկսվում է ծածկի կորագիծը: Այս ծածկի կողադեմի առանձնահատկությունը չի սահմանափակվում ներքնամասի պայտաձևությամբ: Այստեղ կողադեմի կոր վերնամասը միակենտրոն՝ շրջագծային չէ, այլ երկկենտրոն է[28], առանց գագաթի բեկվածքի, ավելի ճիշտ՝ էլիպտիկ է, թերևս՝ պարզ ձվաձև: Ինչպես երևում է չափագրության վերակազմական գծագրում (գծ. 8, 9), **ծածկի գագաթը մոտ մեկ մետր ավելի բարձր է, քան եթե ծածկված լիներ միակենտրոն կիսաշրջագծի կողադեմով: Այսպիսով, պարզվում է, որ անկյունային սենյակների ծածկերը կգալի բարձրություն են ունեցել և ոչ մի կերպ չէին կարող ծածկված մնալ տաճարի ընդհանուր տանիքի տակ** (գծ. 9):

Մեզ հայտնի չէ, թե Ն. Մ. Տոկարսկին ինչ տվյալների վրա է հիմնվել, ի՞ր, թե՞ որևէ մեկի չափագրության, նա այդ մասին լռում և իր «Архитектура древней Армении» աշխատության մեջ (էջ 85) շարադրում է. «...իրականում ավանդատների թաղերը ծածկված են եղել շենքի անկյունային մասերի ծածկի տակ»:

Ինչպես տեսնում ենք տանիքի սխալ պատկերումը և չափագրական վրիպումները թյուրիմացության մեջ են գցել ինչպես Ն. Տոկարսկուն, այնպես էլ նրանից հետո, գրեթե նույն ձևով արտահայտվող հետապոտողներին:

Հուշարձանի նոր ուսումնասիրությամբ, իրեղեն տվյալների հիման վրա հնարավոր է դառնում Ավան տաճարի համար առաջարկել վերակազմության նոր նախագիծ, որտեղ **շինությունն իր ողջ լայնքով չի ծածկվում մի ընդհանուր տանիքով, անկյունային սենյակների ծավալները որոշակիորեն դրսևորվում են դրսից՝ տաճարի ընդհանուր հորինվածքում, որպես գմբեթներ** (գծ. 1):

Այսպիսով, **համաձայն նոր վերակազմության Ավանի երբեմնի կանգուն եկեղեցին եղել է հինգ գմբեթանի՝ մեկ կենտրոնական և չորս երկրորդական**, այսինքն այնպես, ինչպես տասնամյակներ



Գծ. 10. Ավան. գմբեթային մասի հատակագիծ:



Գծ. 11. Ավան. տանիքի հատակագիծ:

առաջ պատկերացնում էր մեծ գիտնական Թորոս Թորամանյանը:

Ավանի համար վերակազմության նախագիծ Թորամանյանը չի առաջարկել, սակայն առկա ավերակի նյութերի ընդհանուր տվյալներով մտապատկերել և որոշակիորեն տեսել է երբեմնի կանգուն տաճարի ընդհանուր լուսավորչավանդ հորինվածքը, հինգ գմբեթներով:

## ՏԱՃԱՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ավանի հատակագիծը ամբողջական հորինվածքի առումով իր նախորդը չի ունեցել[29]:

Թորոս Թորամանյանը Ավանի հատակաձևը համարում է լուսավորչավանդ, այսինքն՝ այնպիսին, ինչպիսին Էջմիածնի հատակաձևն է եղել նախապես: Իսկ ինչպիսին է եղել Էջմիածնի սկզբնական հատակաձևը, տարբեր հետազոտողների կողմից ներկայացվում են տարբեր:

Համաձայն Թորամանյանի Էջմիածնի սկզբնական հատակաձևը եղել է քառախորան (խաչ) անկյունների չորս սենյակներով ամփոփված քառանկյան մեջ (գծ. 6)[30]:

Ըստ Ն. Տոկարսկու, մինչև 7-րդ դարը Էջմիածինը եղել է այն ժամանակվա համար սովորական փայտածածկ միանավ բազիլիկ եկեղեցի[31]:

Ա. Երեմյանի կարծիքով Էջմիածնի սկզբնական հատակաձևը եղել է «մի ուղղանկյունի արևելակողմի աբսիդով և երկու ավանդատներով»: Տաճարի գմբեթը բարձրացել է կենտրոնում կանգնած չորս մույթերի վրա[32]:

Ա. Սահինյանը գտնում է, որ Հայաստանում քրիստոնեության առաջին տարիներին կառուցված Էջմիածինը եղել է եռանավ թաղածածկ բազիլիկ եկեղեցի[33]:

1950-ական թվականների պեղումների նյութերի հիման վրա Ա. Խաչատրյանը հանգել է եզրակացության, որ Էջմիածնի Մայր տաճարը հիմնադրվել է, որպես քառամույթ գմբեթավոր կառուցվածք, արևելյան խորանով և նրա երկու կողմերի ավանդատներով[34]:

Ինչպես տեսնում ենք Ավանը իրականում, ամբողջական առումով չի կրկնում սկզբնապես կառուցված Էջմիածնի հատակաձևը, վերը բերված




Գծ. 12. Ավան. արևմտյան ճակատ:

կարծիքներից որ մեկն էլ որ նկատի ունենալու լինենք: Ավանի հատակաձևը իր ժամանակին եղել է առաջինը և այն բոլոր նորը, որ կա նրանում, նրա ստեղծող ճարտարապետի ներդրումն է կայմավորվող հայ ճարտարապետության նորաձևությունների շարքում (գծ. 2):

Արդ, փորձենք հետամուտ լինել Ավանի հատակագծի ստեղծման ընթացքին, աշխատենք կռահել,



Գծ. 13. Ավան. արևմտյան ճակատի տարբերակ։

թե ի՞նչ գործոնների և դրդապատճառների հետևանք են տաճարի, ինչպես ընդհանուր, այնպես էլ նրա առանձին հանգույցների տվյալ լուծումներն ու նորաստեղծ ձևերը։

Հայտնի է, որ մինչ այժմ հետազոտողները զբաղվել են միայն տեսական հարցերով։ Արդ, փորձ է արվում խնդրին մոտենալ մի այլ՝ նախագծող ճարտարապետի դիրքերից, նկատի ունենալով, որ Ավանն ստեղծողը իր գործին ձեռնամուխ է եղել որպես նախագծող՝ նորն ստեղծող ճարտարապետ։

Նախքան Ավանը, հայ շինարարական արվեստը ստեղծել էր քրիստոնեական կրոնի պահանջները բավարարող տարբեր տիպերի եկեղեցական շենքեր։ Այդ ժամանակ արդեն կային հիմքում խաչաձև կենտրոնագմբեթ տաճարներ. բացառություն չէին նաև քառակոնխերը, որոնցում ոչ միայն արևելյան, այլև մյուս երեք խաչաթևերն էին կիսաբոլորակ խորաններ։ Ըստ որում, արարողության պահանջներից ելնելով, որոշ տաճարներում արևելյան խորանները արդեն խորացել և նրանց առջևում առաջացել էին ուղղանկյուն թաղածածկ տարածություններ, նախախորաններ, նախաբեմեր, ինչպիսին տեսնում ենք Եղվարդի բազիլիկ տաճարի կենտրոնական նավի արևելյան ծայրում։

Ավանին նախորդած մեր տաճարներում, արևելակողմի խորանների մեկ կամ երկու կողմերում առկա էին նաև ավանդատներ։

Ավանի ճարտարապետը իր շինության հատակագծը ստեղծելիս, նկատի է ունեցել մեր եկեղեցաշինության սահ այդ նվաճումները, օգտագործել այդպիսիք իր նոր ձեռնարկում։



Գծ. 14. Ավան. արևմտյան ճակատի տարբերակ:

Փոքր քառակոնխերում, ըստ երևույթին պարզվում էր, որ արևմտյան մուտքի և արևելյան խորանի՝ սեղանի միջև եղած տարածությունը շատ փոքր է և, նույնիսկ անհարմար օրլսաօրե նոր ձևեր ու չափեր ընդունող արարողության համար: Նոր քառակոնխերում իրենց տեղերում անփոփոխ թողնելով գմբեթատակ քառակուսին և հյուսիսային ու հարավային խորանները, մեծացվում է մուտքի և սեղանի միջև եղած տարածությունը, այսինքն՝ արևելյան և արևմտյան խորանները հեռացվում են գմբեթատակ քառակուսուց, ապա ազատված տարածությունները՝ նախախորանները, ծածկվում են թաղերով: Այս միջոցառման շնորհիվ մեծանում է նաև արևելյան խորանը՝ դառնալով առավել հարմարավետ եկեղեցական արարողության համար: Այսպիսով նոր քառակոնխերը արևելք-արևմուտք առանցքի ուղղությամբ երկարում են, իրենց նախորդների համեմատությամբ ստանում ձգված համաչափություններ:

Արևելյան խորանի մեկ կամ երկու կողմերում փոքրիկ սենյակների գոյությունը այդ ժամանակներում սովորական էր: Ավանի կառուցման ժամանակ կանսական պահանջներով անհրաժեշտություն էր դարձել նման սենյակներ ունենալ նաև արևմտյան խորանի երկու կողմերում[35], որոնք և ստեղծվում են արևելակողմի երկու սենյակների նմանողությամբ: Այդ սենյակների մակերեսները փոքր էին, դրանց ինչ-որ չափով մեծացնելու նպատակով անհրաժեշտ էր պատեր կառուցել խորանների գագաթների հեռավորությամբ, կոչգահեռ՝ տաճարի երկու առանցքներին:

Այսպիսով, տաճարի գմբեթատակ քառակուսին, չորս խորանները և անկյունային չորս սենյակները ամփոփվում են մի ընդհանուր ուղղանկյան մեջ. փոքր ծավալներով առաջացած այդ մասնատվածությունը ամբողջանում է մի ընդհանուր պարզ ծավալում:

Այստեղ, ինչպես և այս տիպի մեր բոլոր տա-

ճարներում ներքին խաչաձևությունն ստեղծող չորս խորանների ծավալները դուրս չեն գալիս ճակատային պատից՝ մնում են վերջիններիս ետևում: Այդպես է Ավանում, Արամուսում, Գառնահովտում, Հռիփսիմեում, Թարգմանչացում, Քոլատակում, Սիսիանում, Վարագավանքում, Զորադիրում: Աղթամարում ճակատային պատերից դուրս են գալիս միայն կողային խորանների ծավալները: Գ. Չուբինաշվիլին այս երևույթը որակում է, որպես հայկական այդ տիպի տաճարների յուրահատուկ կողմը[36]:

Ավանում ստեղծված այս ձևը այնուհետև ընդհանրանալով, դառնում է հայ միջնադարյան ճարտարապետության շատ գնահատելի յուրահատուկ կողմերից մեկը, որ առկա է Ավան—Հռիփսիմեի ու Զվարթնոցի տիպի և այլ բազմաթիվ հուշարձաններում:

Խաչաձև դասավորությամբ չորս խորան և չորս սենյակ ունեցող մյուս տաճարներից Ավանը տարբերվում է անկյունային սենյակների ձևով: Եթե մյուսներում դրանք քառանկյունի, քառակուսի են, կամ խաչաձև, ապա Ավանում բոլորաձև են: Արդ, ինչո՞վ բացատրել այդ տարբերությունը: Նրանո՞վ, որ առաջինը Ավանն էր, հաջորդների կառուցողներն այդ սենյակների համար կոր ձևը անընդունելի համարեցին ու իրենց նոր տաճարներում ավելի պարզ ձևեր նախընտրեցին, թե՞ Ավանի համար գոյություն ուներ մյուսներից տարբեր առաջադրանք: Եթե հավանականն այս վերջինն է, ապա ի՞նչ առաջադրանք պետք է ունեցած լիներ ճարտարապետը, երբ ձեռնամուխ էր լինում Ավան տաճարի ստեղծմանը:

Ինչպես ասվեց, այդ նույն ժամանակներում (VI դարի 80-ական թվականներ) Բյուզանդիոնի մայրաքաղաք Կոստանդնուպոլսում կառուցվում էր հինգ գմբեթանի Առաքելոց եկեղեցին: Շատ հնարավոր է, որ Ավանի ճարտարապետը առաջադրանք ստացած լինի Ավանում ևս կառուցել եկեղեցի, որ լիներ նույնպես հինգ գմբեթանի: Եվ ահա, ճարտարապետը կենտրոնում խաչաձև իր շինության չորս անկյուններում նախատեսում է բոլորակ հիմքով չորս սենյակներ, որոնցից արևմտյան երկուսը պիտի լինեին ավանդատներ, արևելյան երկուսը՝ մատուռներ, իրենց ինքնուրույն գմբեթներով կենտրոնական գմբեթի շուրջը, ամփոփված ընդհանուր օրգանիզմի մեջ: Այնուհետև աշխատանք է տարվում գմբեթատակ քառակուսու շուրջը եղած ներքին բոլոր առանձին-առանձին տարածությունները օրգանապես կապել կենտրոնական տարածության հետ: Այդ նշանակում է՝ քառանկյուն կառուցվածքի չորս անկյուններում հոծ պատերով փակված հիշյալ մատուռները և ավանդատները հարմարագույն ձևով շաղկապել ներքին գլխավոր տարածությանը:

Մինչ այդ գոյություն ունեցող քառակողխերում արևելակողմի երկու ավանդատները մուտք էին գործում հյուսիսային և հարավային խորաններից: Եթե Ավանից առաջ եղել են քառակողխեր նաև արևմտակողմի ավանդատներով, ապա նրանց մուտքերը կազմակերպված են եղել արևմտյան խաչաթևի երկու կողմերից: Համենայն դեպս Ավանից հետո եղած հայտնի օրինակներում տվյալ հանգույցները լուծված են հենց այդպես: Ճիշտ և ճիշտ նույն ձևով են եղել կազմակերպված չորս անկյունների մատուռների մուտքերը նաև Անիի Առաքելոց եկեղեցում (գծ. 5): Թորոս Թորամանյանը Էջմիածնի իր վերակազմության հատակագծում հենց այդպես էլ պատկերել է արևմտակողմի երկու սենյակների մուտքերը՝ այն է՝ արևմտյան խորանի երկու կողմերից:

Ինչպես բերված օրինակներում, այնպես էլ այս կամ այն չափով նման պարագծեր ու բովանդակություն ունեցող մյուս հուշարձաններում կիսաբոլորաձև խորաններից ավանդատների համար բացված մուտքերը բարդ և անհարմար ձևեր են ստեղծել հիշյալ խորանների քարակերտ պատերի վրա: Դրանց ոչ միայն կառուցումն է որոշակի դժվարությունների հետ կապված, այլև տեսքն է ստացվում բավական անարվեստ: Ավանի ճարտարապետը, որ կառուցում է մի նոր, իր հիմնական ձևերով աննախադեպ մի տաճար, չպիտի հանդուրժեր նման երևույթներ իր կառույցում: Նա փորձեր է անում, որոնում նոր ուղիներ եկեղեցու կենտրոնական ընդարձակ տարածության և անկյուններում գտնվող մատուռների միջև առավել հարմար և գեղեցիկ կապ և անցում ստեղծելու համար: Եվ ոչ միայն այդ, անհրաժեշտ է, որ ներքին տարածության այդ երկու բաղադրիչները՝ կենտրոնական և չորս երկրորդային գմբեթատակ տարածությունները միմյանցից մեկուսացված, անջատված չլինեն երկար ու խճողված անցումներով. նրանց կապը լինի մոտիկ և անմիջական՝ ներքին տարածության փոխներթափանցող ընդհանրություն, որ

մատուռներում գտնվողները իրենց միաժամանակ կզգան եկեղեցու կենտրոնում ու գլխավոր խորանում կատարվող մեծ արարողության անմիջական մասնակից:

Կենտրոնական և անկյունային տարածությունները միմյանց շաղկապելու կապակցությամբ տաճարի ներսում խաչաձև դասավորված չորս խորաններից, նրանց պատուհաններից ու գլխավոր մուտքից բացի, ի հայտ են գալիս ճարտարապետական նոր տարրեր, այդ թվում՝ մատուռների մուտքերի բացվածքներ, նրանց վերնամասի ձևավոր բարավորներ, մատուռ բարձրանալու ոչ մեծաթիվ աստիճաններ և այլն: Ճարտարապետը, բնական է, պետք է հոգ տաներ, որ հիշյալ նոր տարրերը տաճարի ներսում չդառնային պասիվ, մանավանդ իրենց մասշտաբային փոքր չափերով, ակներև ոչինչ չասող, ավելորդ թվացող հավելումներ:

Դեպի մատուռներ բացվող մուտքերի չորս տարբերակ է ցույց տրված այստեղ բերված գծագրում (գծ. 15): Դրանցից հյուսիս-արևելյանը, սեղան հանդիսացող արևելյան խորանի հարևանությամբ որքան աննկատ է, անմասշտաբ: Այդ մուտքը, որ միջանցքի տեսք է ստացել, անկանոն ձևով է բացվում բոլորակ հատակագծով մատուռի գոգավոր պատի վրա:

Հյուսիս-արևմտյան մուտքը, եթե նախորդից առավել է մատուռի գոգավոր պատի վրա կանոնավոր բացվելով, ապա ամենևին էլ նախընտրելի չէ անցման միջանցքի բեկյալության պատճառով:

Հարավ-արևմտյան մուտքը նույնպես կանոնավոր է բացվում մատուռի գոգավոր պատի վրա, միջանցքն էլ ուղիղ է, սակայն այս էլ տաճարի կենտրոնական տարածության անկյունային մասն է դարձնում անկանոն:

Տաճարի ներքին տարածությունը կզգալի չափեր ունի, դրան հակառակ՝ հարավ-արևելյան մատուռի մուտքը անհամեմատ փոքր բացվածք. և ահա այդ փոքր մուտքը ճարտարապետի կողմից հետ է տարվել, ընդհուպ մոտեցվել մատուռին, բացվել նրա գոգավոր պատի վրա ամենայն կանոնավորությամբ: Այն տարածությունը, որը նախորդ տարբերակներում կքաղեցվում էր մուտքի միջանցքով և հոծ պատի կանգվածով, ճարտարապետի կողմից վերամշակվել, ստացել է մեծ բարձրության, գմբեթարդ ծածկով խորշի տեսք, բաց կողմով ուղղված



Գծ. 15. Ավան. երեք-քառորդ խորշերի կազմավորման ընթացքը հատակագծում:

տաճարի ներքին ընդարձակ տարածությանը: Սրանով գմբեթատակ տարածության անկյունային մասը ճեղքվել, բաժանվել է երկուսի, ի հայտ բերելով մի նոր, հզոր էլեմենտ, որն իր չափերով ու տաճարի ներսը (ինտերյերը) ձևավորող նշանակությամբ համաչափ է և համահնչուն հարևան խորաններին: Հատակաձևում շրջագծի երեք-քառորդի ընդգրկմամբ խորշի առաջացումով ոչ միայն գմբեթատակ տարածությունն է ընդարձակվում անկյունագծային ուղղությամբ, այլև անկյունային չորս մատուռներն են անմիջական շփման մեջ մտնում այդ տարածության հետ: Սովորական խաչաձև եկեղեցիների գմբեթակիր չորս որմնամույթերի փոխարեն Ավանում վերոհիշյալ գործողություններով ըստեղծվել են ութ որմնամույթեր:

Հայ ճարտարապետության հուշարձանների թվում քիչ չեն այնպիսիները, որոնց ներքին տարածությունը, ինչպես Ավանում է, կազմակերպված է խաչաձև հիմքի վրա, անկյուններում ունեն ավանդատներ, իսկ դրսից ամփոփված են ուղղանկյուն պարագծեր ունեցող պատերի մեջ, սակայն իրենց ճարտարապետական ընդհանուր հորինվածքով չեն պատկանում Ավանի տիպին: Նրանց միջև առկա հիմնական տարբերությունը վերաբերում է




Գծ. 16. Ավան. արևելյան ճակատ:

այն հանգույցների ձևին, որոնց մասին խոսվեց վերևում: Հետևում է, որ Ավանի, իր ձևերով խիստ յուրահատուկ, ճարտարապետության մեջ մի նոր շրջանի սկիզբ բնորոշող հատակագիծը արգասիք, արդյունք է ո՛չ թե ներքին գմբեթատակ տարածությունն ընդարձակելու, կամ կենտրոնական գմբեթի սեյսմակայունությունը կատարելագործելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների[37], ո՛չ թե Մաստարայի տիպի հատակագծի նպատակային վերամշակման, այլ նախ և առաջ **հինգ գմբեթանի եկեղեցում կենտրոնական և երկրորդական գմբեթատակ տարածությունների անմիջական շփման, հարմարագույն հաղորդակցման ուղիների ճարտարապետական մշակման[38]:**

Ավանի ներքին անկյունային հանգույցների այդ նորովի, մեծ վարպետությամբ և նուրբ ճաշակով մշակելու մեջ պիտի տեսնել ու ըստ ամենայնի գնահատել ճարտարապետի փայլատակող շնորհքը:

Անկախ այն իրավիճակից, որ Ավանի տիպին պատկանող հաջորդ շրջանում կառուցված տաճարները հինգ գմբեթանի չեն, Ավանի մատուռների փոխարեն այդտեղ առկա են ավանդատներ, նրանց հատակագծերը սկզբունքով Ավանի հատակագծից չեն տարբերվում: Առկա տարբերությունները վերաբերում են անկյունային մատուռների և ավանդատների պարագծերին և արտաքին ճակատների վրա առաջացած եռանկյունի (կամ սեղանաձև) հիմքով խորշերին:

**Այն, հիմքում խաչաձև տաճարները, որոնք չունեն ավանդատներ, սակայն գմբեթատակ տարածության անկյունային մասերում Ավանի օրինակով ունեն երեք-քառորդ տրամագծաչափի խորշեր, չեն կարող Ավանից վաղ կառուցված լինել, չէ որ այդ խորշերը, ինչպես պարզվեց վերևում, առաջացել են անկյունային սենյակներ տանող մուտքերի[39] մշակումով:** Անկյունային սենյակներ չունեցող, սակայն $^3/_4$ խորշեր ունեցող տաճարները, ըստ էության հիմնական տիպի՝ Ավան-Հռիփսիմեի ոչ



Գծ. 17. Ավան. հյուսիսային ճակատ:

թե նախօրինակները, այլ հետագա, որոշ առումով անտրամաբանական պարզեցումներն են: Անտրամաբանականությունը այն է, որ վերացնելով անկյունային սենյակները, պահպանվում են արդեն աննպատակ դարձած խորշերը, որոնք, ինչ խոսք, նոր պարագաներում դիտվում են, որպես ձևավորող, դեկորատիվ հավելումներ: Այս էլ, ըստ էության հետազոտության ամենակարևոր եզրակացություններից մեկն է:

Առաջին հայացքից թվում է ոչ տրամաբանական այն, որ կարծես սկզբնապես ստեղծվել է բարդ կառուցվածք, որին հաջորդել են ավելի պարզերը: Պետք է, սակայն նկատել, որ բարդ կառուցվածքն անպայման ունեցել է իր պարզ նախօրինակները, որոնք պատկանել են կառուցվածքների, թերևս մի այլ տիպի: Տիպերի մեկից մյուսին՝ պարզից բարդին անցնելու պրոցեսը ստեղծագործական բարդ երևույթներից է՝ անցումներ, որ լինում են երբեմն պարզ, երբեմն՝ թռիչքաձև, երբեմն էլ որակական այլ երանգավորումներով, բոլորովին նորի հայտնագործությամբ: Որևէ երևույթի վարգացման պրոցեսը, որոշ դեպքերում այդպես էլ լինում է՝ պարզ ձևին հետևում են բարդերը, ստեղծվում է նոր որակ, ապա դրան՝ բարդ ձևին հետևում են նոր պարզեցումներ:

Ավանին նախորդած պարզ խաչաձև եկեղեցիների զարգացումով ծնվել է Ավանը, որը նախորդներից տարբերվում է նորովի լուծված հանգույցներով, այդ թվում՝ բոլորակ հիմքով մատուռներով և անկյունագծային ուղղության երեք-քառորդ խորշերով: Հետագայում չորս մատուռները կամ չորս ավանդատները վերանում են (փոքր Շումթա—գծ. 94, Կվետերա—գծ. 97), երբեմն միայն երկուսն են վերանում (Զորադիր—գծ. 40, Աղթամար—գծ. 74, նաև Այգեշատի Թարգմանչաց վանքը—գծ. 58), սակայն պահպանվում են առաջին դեպքում՝ կենտրոնական խաչաձևը, երկրորդ դեպքում՝ նաև արևելակողմի անկյունային սենյակները և, երկու դեպքում էլ՝ անկյունագծային ուղղության երեք-քառորդ խորշերը:

Ավանի պարզեցումով՝ անկյունային սենյակների վերացումով առաջացած նոր խաչաձև եկեղեցիները 3/4 խորշերի առկայությամբ, արդեն տարբերվում են նախկին՝ Ավանին նախորդող պարզ խաչաձև եկեղեցիներից, որոնցում անկյունագծային ուղղության վրա ոչ թե խորշեր էին, այլ պատերի հանդիպումով առաջացած պարզ անկյուններ, կամ 3/4 տրամագծաչափի գմբեթակիր մույթեր:

Ճարտարապետության պատմության մեջ միայն մի դեպք է հայտնի, որ Ավանի պարզեցումով կառուցված 3/4 խորշեր ունեցող խաչաձև եկեղեցին, անկյունային սենյակների հետագա ավելացումով վերադառնա նախօրինակին, տվյալ դեպքում՝ Ավանի որոշ ձևերին: Այդ մասին հետո:

* * *

Մեր պատմական ճարտարապետության հետազոտողներից ոմանք հակված են Ավանի սկզբունքներով կառուցված տաճարներից անկյունային չորս սենյակ ունեցողները, այդ թվում՝ Ավան, Արամուս, Գառնահովիտ, Այգեշատի Թարգմանչաց, Հռիփսիմե, Սիսիան, Քոլատակ (Ալուչալու), Վարագավանք (Հայաստան), Ջվարի (վերջնական ձևը), Աթենի, Մեծ Շուամթա և Մարտվիլի (Վրաստան), համարել մեկ տիպի: Միայն արևելակողմի երկու սենյակ ունեցողները, այդ թվում Զորադիր և Աղթամար (Արևմտյան Հայաստան), այլ տիպի, իսկ անկյունային սենյակներ բոլորովին չունեցողները, այդ թվում Փոքր Շուամթա և Կվետերա (Վրաստան)՝ մի երրորդ տիպի:

Նկատի առնելով, որ **քննարկվող տաճարների տիպը բնորոշվում է ոչ թե ավանդատների քանակով, այլ անկյունագծային ուղղության երեք-քառորդ խորշերի առկայությամբ,** պետք է, որ այդ բոլորը համարվեն մեկ տիպի հուշարձաններ, ըստ որում, մի մասը տիպի հիմնական ձևով, մյուսները՝ տիպի հետագա պարզեցումներով:

* * *

Ասվեց, որ Ավանի ներքին խաչաձև հիմքով հորինվածքը ամփոփված է արևելք-արևմուտք առանցքով մի քիչ ձգված ուղղանկյուն-քառանկյունի ծավալի մեջ:

Արևելյան և արևմտյան խորանները, առավել ևս՝ գմբեթակիր կամարները հյուսիսային և հարավային խորաններից և գմբեթակիր կամարներից կգալիորեն լայն են: Անկախ դրանից, ամեն զույգ խորանների չափերի միջև նույնպես առկա են որոշ, սակայն ոչ մեծ տարբերություններ: Միմյանց նման, կամ համապատասխան մասերի չափերի միջև այդպիսի ոչ մեծ տարբերություններ միջնադարի, առանց բացառության, գրեթե բոլոր հուշարձաններում կան: Եթե այդպիսիք, այդ փոքր տարբերությունները առանձին վերցրած որևէ նշանակություն չեն ունենում շինության ներքին տարածության կազմակերպման կատարելության գործում, ապա խորանների և գմբեթակիր կամարների բացվածքների չափերը՝ նրանց լայնքի, բարձրության ու խորության չափային արտահայտությունների փոխադարձ հարաբերություններն ու համապատասխանությունները հատկապես նշանակալից են ներքին տարածության ամբողջական և առանձին մասերի գեղագիտական ընկալման, առավել ևս՝ ֆունկցիոնալ, բովանդակային կողմի ճշգրիտ արտահայտման ու կողմնորոշման առումով:

Այս հանգամանքը, հասկանալի է, սերտ առնչության մեջ է տաճարի գլխավոր մուտքի տեղի հետ՝ թե ինչ ձևով են ներգործում ներս մտնողի վրա, նրա քայլ առ քայլ առաջ շարժվելուն համապատասխան և գտնված տեղին համեմատ ներքին տարածությունը կազմավորող շինությունն ամբողջությամբ վերցրած, նրա առանձին ու, հատկապես հիմնական մասերը՝ հատվածներն՝ իրենց հերթին:

Ավանում գլխավոր, ավելի ճիշտ՝ միակ մուտքը արևմտակողմից է: Մուտքից ներս ոտք դրած հավատացյալին նախ բացվում է անմիջապես վերևում, լույսով ողողված ընդարձակ գմբեթը և, ապա արևելյան՝ գլխավոր խորանը — սեղանը, որտեղ տեղի է ունենում պաշտոնական արարողությունը, ուր ուղղված են ներկաների հայացքները: Դրանից հետո միայն հավատացյալը ժամանակ է գտնում հագուրդ տալու իր հետաքրքրասիրությանը, դառնում է աջ, դառնում է ձախ, դիտում կողային՝ երկրորդական խորանները, անկյունային դասավորության 3/4 խորշերը և այլ մանրամասներ, որ սկզբնապես չէին կարող նկատվել, սեռուն ուշադրության արժանանալ: Հայտնի է, որ տաճարի ներսում առաջնայինը բարձրադիր գմբեթից հետո՝ սեղանն է՝ արևելյան խորանը, հետևաբար ակներև



Գծ. 18. Ավան. ճարավային ճակատ:

է Ավանն ստեղծող ճարտարապետի միանգամայն արդարացի լինելը, որ սեղան հանդիսացող արևելյան խորանի համար, մյուս՝ երկրորդական հյուսիսային և հարավային խորանների համեմատությամբ ապահովել է լայնության, խորության և բարձրության մեծ չափեր: Այլ կերպ էլ չպիտի լիներ, այստեղ տրամաբանությունն անխոցելի է:

Ավան-Հռիփսիմեի տիպի տաճարների ուսումնասիրություններով բացահայտվել են երևույթներ, որպիսիք որոշ հետազոտողների կողմից որակվում են որպես անկանոնություններ: Այդ «անկանոնություններից» են գմբեթատակ քառակուսու ոչ քառակուսի լինելը՝ ձգվածությունը հյուսիս-հարավ առանցքով, ապա անկյունագծային դասավորության $^3/_4$ խորշերի թեքվածությունը տաճարի կենտրոնի նկատմամբ և այլն: Ահա այս երևույթները հիշյալ հետազոտողների մեկնաբանությամբ հետևանք են տաճարի ներքին խաչաձև հորինվածքը արտաքին ուղղանկյան մեջ ամփոփելուն: Մինչդեռ, ինչպես նկատում ենք, տաճարի ամբողջական հատակաձևի մշակման ընթացքում առավել մեծ դեր են խաղում շինության ներսում փոխադարձ սերտ կապի մեջ գտնվող կարևոր դրվագները, իրենց դիրքով ու չափերով, և որ արտաքին ուղղանկյուն պարագծերը իրենցով ամենևին էլ չեն պայմանավորում ներքին կանոնիկ սխեմայի տրամաբանական հյուսվածքը[40]: Իրականում, գմբեթատակ քառակուսու ձգվածությունը և $^3/_4$ խորշերի թեքված լինելը անխուսափելի, ուղղակի և անմիջական արգասիք են խորանների տարբեր չափերի: Վերոհիշյալ երևույթները առկա են այդ տիպի այն բոլոր տաճարներում, որոնցում խորանները, ավելի ճիշտ՝ գմբեթակիր կամարների թռիչքները անհավասար են: Չէ որ հենց այդ գմբեթակիր կամարներն են ստեղծում գմբեթատակ քառակուսին: Իսկ տարբեր թռիչքների կամարներով ստեղծված քառակուսին արդեն քառակուսի չէ:

Այս տիպի տաճարներում, արևելյան և արևմտյան խորանները գմբեթատակ քառակուսուց հեռացված են, խորաններից ավելի մեծ թռիչք ունե-



Գծ. 19. Ավան. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով

ցող թաղածածկ տարածությամբ՝ նախախորանններով, մյուս խորանները այդպիսի նախախորաններ (տե՛ս էջ 44, 45) չունեն[41], այստեղից էլ՝ գմբեթակիր կամարների տարբեր թռիչքներ. հետևում է, որ գմբեթակիր կամարների թռիչքների տարբեր լինելը, այսինքն՝ գմբեթատակ քառակուսու ձըգվածությունը հյուսիս-հարավ առանցքով անխուսափելի է, ուրեմն՝ անհրաժեշտություն, այս նշանակում է, որ այդ երևույթը ընդհանուր առմամբ անկանոնություն չէ:

Ավանում արևելյան խորանի լայնքը 4,45 մետր է (արևմտյանը՝ 4,16 մետր), թաղածածկ նախախորանի թռիչքը՝ 4,92 մետր, արևելակողմի գմբեթակիր կամարի թռիչքը՝ 5,59 մետր: Մինչ հյուսիսային խորանի լայնքը 3,92 մետր է (հարավայինը՝ 3,68 մետր), այստեղ նախախորան չկա, գմբեթակիր կամարի թռիչքը 4,52 մետր է: Ստացվում է, որ Ավանում գմբեթատակ քառակուսին ձգված է հյուսիս-հարավ առանցքով: Եվ եթե $^3/_4$ խորշերը դրված լինեին ճիշտ անկյունագծով, ապա գմբեթատակ քառակուսու ձգվածությունը կարտահայտվեր 1,07 (5,59—4,52) մետրի չափով: Իրականում՝ բուն հուշարձանում 1,07 մետրի փոխարեն գմբեթատակ քառակուսու կողերի երկարությունների տարբերությունը կազմում է 48—67 սանտիմետր:

Նկատենք, որ ոչ բոլոր դեպքերում է գմբեթի հիմքի ձևը պայմանավորված գմբեթատակ քառակուսով: Գմբեթային փոխանցման ամբողջովին տրոմպային համակարգ ունեցող տաճարներում է, որ գմբեթատակ քառակուսու ձգվածությունը գմբեթի հիմքին տալիս է օվալային եսրագիծ:

Մեր այս տիպի տասը հուշարձաններից Գառնահովտում ու Սիսիանում է, որ գմբեթային փոխանցումը ամբողջովին տրոմպային է, դրանցում գմբեթի հիմքով գոտի չի անցնում: Նույն տասը հուշարձաններից միայն չորսում է (Զորադիր, Քոլատակ (Ալուչալու), Վարագավանք և Աղթամար), որ $^3/_4$ խորշերը ամենայն ճշտությամբ ուղղված են գմբեթատակ քառակուսու կենտրոնին: Վրացական այդ տիպի յոթ հուշարձաններից այդպես է երկուսում (Մարտվիլի, Կվետերա), մնացած բոլոր հուշարձաններում $^3/_4$ խորշերը թեքված են, գմբեթատակ քառակուսիներն էլ ձգված են հյուսիս-հարավ առանցքով:

## ԳՄԲԵԹԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ ԱՎԱՆՈՒՄ

Հինգերորդ—վեցերորդ դարերին վերագրվող մեր պարզ խաչաձև եկեղեցիներում գմբեթատակ քառակուսուց գմբեթի բոլորակին անցնելը իրականացվել է տրոմպների միջոցով: Նույն ժամանակի Բյուզանդիոնի տաճարներում ընդունված էր գմբեթային փոխանցման առագաստային համակարգը:

Փոխանցման տարբեր համակարգերի գործադրությունը թերևս բացատրվի ոչ թե անտեղյակությամբ[42] և ոչ էլ կառուցողների նախասիրություններով, այլ տեխնիկական նպատակահարմարությամբ:

Բանն այն է, որ մեր հնագույն կենտրոնագմբեթ տաճարները համեմատաբար մեծ չէին, գմբեթով ծածկվելիք տարածություններն էլ ունեին փոքր չափեր: Այս դեպքում գմբեթային փոխանցումը պետք է իրականացվեր երկու եղանակներից առավել պարզով: Փոխանցման տրոմպային եղանակը առագաստային եղանակի համեմատությամբ կառուցողական առումով ակներև պարզ է:

Տրոմպների առաջին շարքով գմբեթատակ քառակուսին փոխարկվում է ութանիստ թմբուկի: Փոքր գմբեթներում տրոմպների երրորդ շարքի



Գծ. 20. Ավան գմբեթային փոխանցման համակարգի դրվագ:

կարիքը չի կգացվում, երկրորդ շարքի տրոմպներով ստացված 16 նիստերով թմբուկը հստակորեն ծածկվում է գմբեթի կիսագնդով:

Բյուզանդիոնում հենց սկզբից առկա էր կառուցվածքների հռոմեական մասշտաբը: Անհրաժեշտ էր գմբեթով ծածկել մեծ տարածություն: Այդ դեպքում, որպեսզի գմբեթատակ քառակուսին փոխարկվեր ութնիստ թմբուկի, անհրաժեշտ պիտի լիներ գմբեթակիր մեծաթռիչք կամարներին հենել տրոմպների, գրեթե նույն թռիչքաչափն ունեցող եպրակամարներ: Ավելին, գմբեթի բոլորակին մոտենալու համար անհրաժեշտ պիտի լիներ ստեղծել տրոմպների բազմաստիճան համակարգ: Աթեն տաճարի 10 մետրից պակաս թռիչք ունեցող գմբեթի բոլորակին հասնելու համար անհրաժեշտ է եղել իրականացնել եռաստիճան տրոմպային համակարգ:

Չորս և ավելի շարք տրոմպների համար գմբեթա-թմբուկների ողջ բարձրությունը ինքնին անբավարար է: Կարևոր հանգամանք է նաև այն, որ գմբեթաթմբուկի բարձրության ավելացումը մեծաթռիչք գմբեթներում կայունության առումով վտանգավոր է:

Առագաստային փոխանցման համակարգի գործադրմամբ հնարավոր է եղել գմբեթակիր կամարների բարձրության սահմաններում սկսել և ավարտել գմբեթատակ քառակուսուց գմբեթի բոլորակին հասնելու գործողությունը: Դրանով էլ, թերևս բացատրվի գմբեթաթմբուկների բացակայությունը Բյուզանդիոնի վաղ կառուցված տաճարներում:

Գմբեթային փոխանցման տրոմպային համակարգի կիրառումն էլ, հավանական է, եղել է գմբեթաթմբուկի առաջացման ռեալ դրդապատճառը մեկանում ի սկզբանե:

Բյուզանդիոնում տաճարների վրա գմբեթաթըմբուկներ կառուցվեցին բավական ուշ, հայ ճարտա-

րապետության ազդեցությամբ, երբ գմբեթով ծածկում էին արդեն ոչ մեծ տարածություններ:

Ավանում գմբեթատակ քառակուսու անկյունները $^3/_4$ խորշերով արդեն կտրվել էին և այդ պարագաներում անցման նպատակով հնարավոր չէր լիակատար (կիսակոնաձև) տրոմպի գործադրությունը: Այստեղ հնարավոր էր տեղավորել հատած տրոմպը, պայմանով, որ նրա եզրակամարը որմնամույթերին հենվելու փոխարեն, առաջանալով հենվի կից խորանների եզրակամարների՝ գմբեթակիր կամարների վրա: Ավանի կառուցողը, ըստ երևույթին հարմար չի համարել ավելացնել առանց այն էլ ծանրաբեռնված գմբեթակիր կամարները, և սահմանափակվել է խորանների միջև առկա տարածությամբ: Այս պայմաններում նրան մնում էր ստեղծել անցման մի նոր եղանակ, խորության համեմատաբար փոքր չափերով:

Ավանի ճարտարապետը իր առաջ ծառացած խնդիրը լուծել է հաջորդաբար մեծացող և միաժամանակ առաջացող կամարների օգնությամբ: Սակայն այդ եղանակով, այնուամենայնիվ գմբեթատակ քառակուսին միանգամից չէր կարող փոխարկվել կանոնավոր ութնիստ թմբուկի՝ կմնար թմբուկ չորս մեծ և չորս փոքր նիստերով: Ճարտարապետը տրոմպին փոխարինած երկրորդ՝ ըլլգալի առաջացած կամարի կողքերից և վերևից անկյունային անցումը մինչև գմբեթի հիմքով անցնող բոլորակ գոտին շարունակում է առագաստային եղանակով: Երկու նորագյուտ միջոցների՝ հաջորդական կամարների և առագաստի համադրության այս ձևը, որ այժմ ընդունված է անվանել գմբեթային փոխանցման կոմբինացված եղանակ, առաջին անգամ գործադրվել է ցարդ հայտնի հուշարձաններից Ավանի տաճարում: Այս պայմաններում կասկած չի կարող լինել, որ գմբեթի հիմքը եղել է ճշտորեն բոլորակ (գծ. 20):

Լեոնարդո դա Վինչիի (1452—1519) ճարտարապետական էսքիզներից հինգ գմբեթանի տաճարի հորինվածքում չորս երկրորդական գմբեթները, որ դասավորված են Ավանի սկզբունքով (խաչաթևերի միջև՝ շինության չորս անկյուններում, և ոչ խաչաթևերի վրա, ինչպես Վենետիկի ս. Մարկոսի տաճարում է), կենտրոնական գմբեթի համեմատությամբ բավական փոքր են (գծ. 7):

Ճշտորեն նույն սկզբունքներն են դրված Հռոմի Միքելանջելոյի (1475—1564) կառուցած ս. Պետրոսի տաճարի հիմքում և նրա չորս երկրորդական գմբեթներից միայն արևմտյան երկուսն են երևում, այն էլ որոշ տարածությունից: Դրանք իրենց սգալի չափերով հանդերձ, անհամեմատ փոքր են կենտրոնական հսկայաչափ գմբեթից:

Համաձայն Թորամանյանի վերակազմության (գծ. 4), Անիի Առաքելոց հինգ գմբեթանի եկեղեցու (X—XI դարեր) չորս երկրորդական գմբեթները կենտրոնական գմբեթի համեմատությամբ նույնպես շատ փոքրածավալ են:

## ՏԱՃԱՐԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԳՄԲԵԹՆԵՐԻ ՁԵՎԻ ՄԱՍԻՆ

Արդ, գիտենալով, որ Ավանում, կենտրոնական գմբեթից բացի, իրոք գոյություն են ունեցել նաև չորս երկրորդական գմբեթներ, փորձենք հնարավորին չափ պարզել, թե ինչ ձևի են եղել դրանք:

Ավանի կառուցման ժամանակներում (VI դարի երկրորդ կեսը) գմբեթները թերևս այն տեսքը չունենային, ինչպիսին տեսնում ենք հետագայում կառուցված տաճարներում: Այս իմաստով, տվյալ պարագաներում, որպես համապատասխան օրինակ, հնարավոր է հիշատակել Կոստանդնուպոլսի, այդ նույն ժամանակներում (VI դարի երկրորդ կեսը — մոտ 80-ական թվականները) կառուցված Առաքելոց հինգ գմբեթանի եկեղեցին:

Ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր Ա. Վ. Կուզնեցովը իր «Своды и их декор»[43] աշխատության մեջ գրում է «Центральный купол церкви Апостолов имел возвышенную скуфью с окнами (как в куполе Софии Константинопольской), четыре других представляли парусные своды без окон (рис. 362)». Ահա այս չորս գմբեթները, ինչպես տեսնում ենք գծագրում (գծ. 3), գրեթե չեն նշմարվում, բայց հայտնի է, որ դրանք համարվում են գմբեթներ:

Հետազոտողներից ոմանք ենթադրում են, որ նույնպիսի՝ ոչ շատ ուռուցիկ (անվանում են՝ հարթ) առագաստային ծածկ է ունեցել Կոստանդնուպոլսի ս. Սոֆիայի սկզբնապես կառուցված կենտրոնական գմբեթը և, ըստ երևույթին, դրսից շատ էլ որոշակի չի գծագրվել[44]:

Համաձայն Թորամանյանի վերակազմության (գծ. 4), Անիի Առաքելոց հինգ գմբեթանի եկեղե-




Գծ. 21. Ավան. հատակագծի համաչափությունների վերլուծություն:

ցու չորս «երկրորդական» գմբեթները կենտրոնական գմբեթի համեմատությամբ նույնպես շատ փոքրածավալ են: Արդ, ինչո՞ւ չենթադրել նույն վիճակը նաև Ավանում: Պետք է նկատել, որ Ֆիրուզ-Աբատի հայտնի պալատի ներսից իսկայական չափեր ունեցող գմբեթները և դրսից առանձնա-

պես ցցուն չեն գծագրվել, լուսամուտ չեն ունեցել, և այնուամենայնիվ, ոչ ոքի մտքով չի անցնում դրանք գմբեթներ չհամարել:

Ավանում անկյունային բոլորակ հիմքով սենյակների ներսից, մոտավորապես կիսագնդաձև ծածկերը, որ տաճարի տանիքից որոշ չափով բարձր են, իրենց արտաքին ձևերով ու ծավալային չափերով ակներև վիջում են կենտրոնական գմբեթին՝ նրա համեմատությամբ շատ փոքր են և դիրքով՝ ցածր: Այդ իրավիճակը միանգամայն բնական է ու պատմականորեն հասկանալի, ճիշտ այնպես, ինչպես տեսանք վերը բերված օրինակներում:

Բացառված չէ հնարավորությունը նաև այլ ենթադրությունների համար. օրինակ, կարելի է մտածել, որ այդ բոլորակ սենյակներն իրենց վերևում ունեցած լինեն վերնահարկեր, որոնք ինչ-որ ձևով արտահայտված լինեն որպես գմբեթներ[45], այս անգամ արդեն ավելի բարձր դիրքում: VII դարի հուշարձան Բանակ տաճարում ավանդատները ոչ միայն երկհարկ, այլ եղել են եռահարկ:

Ավանի անկյունային սենյակների գմբեթածածկերից ոչ մեկը ամբողջական կանգուն վիճակում մեզ չի հասել. պահպանվում են այդ ծածկերի ներքնամասերը միայն: Ինչո՞ւ չենթադրել, որ այդ ծածկերն իրենց վերևում ունեցած լինեն երդիկ: Այսպիսի ծածկեր որ կոչվում են «բութ գմբեթներ», մեր միջնադարում՝ որքան ուզեք (այդ թվում ժամատներ, գավիթներ և այլն):

Գիտության մեջ ընդունված է, որ եկեղեցաշինության և, հատկապես, գմբեթաշինության մեջ իրենց անդրադարձումն են գտել մեր ժողովրդական հայարաշեն կոչվող տների վերևում լուսիջուք ունեցող գմբեթավոր ծածկերը: Հետևաբար, ոչինչ չի խանգարում ենթադրելու, որ մոնումենտալ կառուցվածքներում ևս գմբեթներն սկզբնապես կարող են ունեցած լինել ոչ թե լուսամուտներ գմբեթաթմբուկների վրա, այլ լուսիջուքներ գմբեթի գագաթում: Եվ եթե Ավանի անկյունային չորս գմբեթները նույնպես լինեին լուսիջուքով ու նրանց վրա բարձրացած լինեին համապատասխան ծավալներ (որոնց ճարտարապետական այլ շրջանակներում անվանում են фонарь), այդպիսիք իրավամբ պիտի համարվեին օրինական գմբեթներ: Ճշտորեն այս նկարագիրն ունեն Հաղբատի և Սանահինի գմբեթավոր կանգակատները:

Մեր բազմաթիվ գավիթների գմբեթները, որ ընդհանուր ձևերի առումով սերում են Տեկորի վաղ միջնադարի գմբեթից, երդիք ունեն և առանց վերոհիշյալ ծավալների նույնպես հանդիսանում են գմբեթներ:

Լուսիջուք ունի (ու վրան фонарь) նաև մ. թ. երկրորդ դարի հուշարձան Հռոմի հռչակավոր Պանթեոնը:

Էջմիածնի չորս թևերի վրա այժմ գոյություն ունեցող չորս փոքր գմբեթները նման ծավալներ են և համարվում են տաճարի չորս անկյուններում երբեմնի գոյություն ունեցող գմբեթների արձագանքը:

Այս օրինակները մեզ բերում են համոզման, որ Ավանում ևս անկյունային չորս, հիմքում բոլորակ սենյակների ծածկերը, ինչ ձևով էլ ավարտված լինեին, հանդիսացել են գմբեթներ:

Ներկա վերակազմական գծագրերում բերված է չորս երկրորդական գմբեթների, հեղինակի կողմից հավանական համարվող տարբերակը (գծ. 12), ինչպես և վերակազմության երկրորդ տարբերակը՝ տաճարի արևմտյան ճակատը, երկրորդական գմբեթներով: Դրանք քառանկյուն շինության չորս անկյունների տանիքների վրա երևացող բազմանիստ, ոչ բարձր թմբուկներ են, ծածկված բրգաձև վեղարով (գծ. 14):

## ՏԱՃԱՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՄԲԵԹԻ ՁԵՎԻ ՄԱՍԻՆ

Ավանի կենտրոնական գմբեթի ձևի հարցը լուրջ տարակարծությունների առիթ է դարձել: Օրինակ, Ն. Մ. Տոկարսկին գտնում է «հնարավոր, որ այն (գմբեթը—Տ. Մ.) եղել է ինչ-որ չափով անկանոն, նրա այն կողերը, որ ընկնում էին անկյունային խորշերի վերևը, ունեին պակաս լայնություն, քան մյուսները»[46]: Նույն աշխատության վերամշակված հրատարակության մեջ կարդում ենք. «Թմբուկի սկզբնական տեսքի վերաբերյալ դժվար է որոշակի բան ասել, քանի որ այն ամբողջովին քանդված է»[47]:

Գ. Ն. Չուբինաշվիլին դեռևս 1924 թվականին գտնվելով Ավանում, տաճարի մնացորդների հետազոտության ընթացքում փորձում է գաղափար կազմել երբեմնի կանգուն տաճարի կենտրոնական

գմբեթի ձևերի վերաբերյալ: Այդ ժամանակ գմբեթից ոչինչ չէր պահպանվում, բացի այն 3—4 շարք արտաքին երեսապատումից, որ երևացել է ծածկի վրա (նկ. 1, 2, 3): Եվ ահա, այդ 3—4 շարքն էլ ընդունելով որպես գմբեթի մասը կազմող մնացորդ, հիմնվելով դրա վրա, նա շարադրում է իր տեսությունը Ավանի, մասնավորապես նրա գմբեթի ճարտարապետական կազմության վերաբերյալ: Նա գրում է. «Դեռևս 1924 թվականին գմբեթի թմբուկը 3—4 շարքի սահմանում պահպանում էր դրսի երեսապատումը, որով հստակորեն պատկերվում էր նրա ձևը՝ թմբուկ, որ եղել է ոչ որոշակի կողերով, պզալի երկարությամբ ուղղագիծ ձգվել է հարավային ճակատով, այնուհետև, կատարելով կտրուկ շրջադարձ և, ըստ երևույթին, նորից ուղղագիծ ձգվել է դեպի արևմուտք: Մնացյալը չըկար»[48]: Նա այնուհետև գրում է. «Ավանի շենքն իրենից ներկայացնում էր խիստ գետնամած, արտակարգ տափակած ուղղանկյուն մարմին. նույնպիսի, սակայն փոքր չափերի մարմին էր նաև անկյունները հատած թմբուկը»[49], կամ «արտաքուստ երկու անձևակերպ մասսիվ դրված իրար վրա»[50], և ապա «...գմբեթն այստեղ եղել է ծանր, ինչպես և շենքը: Նրա ձևը գրեթե անկյունները կտրած քառակուսի էր, այսինքն՝ այս առումով ևս անհամաչափ էր, անբարեկազմ, ավելի շուտ՝ մասերի պատահական զուգակցում է»[51]:

Այն, ինչ տեսել են ոմանք 1924 թվականին Ավանում, պատկերված է դեռևս 1910-ական թվականների մի շարք լուսանկարներում, որպիսիք բերվում են ստորև (նկ. 1, 2, 3, 12): Իրոք, ծածկի բարձրության վրա երևում է երեք շարք ունեցող մի պատ տաճարի հարավային կեսի սահմաններում, ըստ որում՝ հարավակողմի նիստը բավական երկար է, հարավ-արևմտյան և հարավ-արևելյան նիստերը՝ կարճ, արևմտակողմի նիստը պահպանվում է մի մասով: Նկատի ունենալով այդ նիստերը և այդպիսիք վերագրելով գմբեթին, կարելի կլինի եզրակացնել, որ այդտեղ եղել է չորս լայն և չորս նեղ նիստերով մի ծավալ, գրեթե այնպես, ինչպես այն պատկերացնում էր Գ. Ն. Չուբինաշվիլին, սկզբնապես նաև Ն. Մ. Տոկարսկին: Իսկ իրականում ի՞նչ է իրենից ներկայացնում այն ծավալը, կամ ի՞նչ է բնորոշվում լուսանկարներում պատկերված Ավանի ծածկի բարձրության վրայի այդ երեք շարք ունեցող պատահատվածով: Այդ գմբեթաթմբուկի ստորին մա՞սն է, ինչպես ընդունում են որոշ հետազոտողներ, այդ կարծիքն ընդունելի՞ համարել երբեմնի կանգուն գմբեթի պատկերը վերականգնելու համար: Ոչ, այստեղ ակներև տեղի ունի տասնամյակներ գոյատևող մի պարզ թյուրիմացություն և դրա վրա հիմնված հեռու գնացող մի ամբողջ տեսություն Ավան-Հռիփսիմեի տիպի հայկական հուշարձանների վերաբերյալ:

Խաչաձև հիմքով գմբեթավոր տաճարների ներքին տարածությունը իր յուրահատուկ կողմերով ու ձևերով որոշակիորեն ուրվագծվում է շինության արտաքին ծավալներում: Խաչաթևերը արտաքուստ արտահայտվում են ուղղանկյուն կամ տարբեր քանակի նիստեր ունեցող ծավալներով, այդպիսիք վերևից ավարտվում են ճակտոնով կամ կիսակոնաձև-կիսաբրգաձև ծածկով: Խաչաթևերի միջև եղած սենյակները՝ ավանդատները ծածկվում են միաթեք տանիքով: Սովորաբար քառակուսի հիմքի վրա բարձրացող գմբեթատակ տարածությունը տաճարի արտաքին հորինվածքում դրսևորվում է կենտրոնական խորանարդով, որ բարձրանում է խաչաթևերի տանիքներից էլ վեր, իր վրա ունենալով բազմանիստ գմբեթաթմբուկն իր ծածկով: Այս կենտրոնական խորանարդաձև ծավալը իր ընդհանուր հորինվածքը չի փոխում նաև այն դեպքերում, երբ տաճարի ներքին տարածությունը՝ այդ թվում կենտրոնը, խաչաթևերը, ավանդատները և այլ հարամասեր ամփոփվում են արտաքին ուղղանկյուն ծավալի մեջ, այնպես, ինչպես Ավան-Հռիփսիմեի և այլ տիպերի տաճարներում է: Գմբեթաթմբուկները հիմքում բազմանիստ (կամ բոլորակ) լինելու հետևանքով ամբողջությամբ չեն ծածկում կենտրոնական խորանարդի վերին, քառակուսի եզրագծով հարթությունը, վերջինիս չորս անկյունները, որ ներքին տրոմպների և առագաստների արտաքին արտահայտություններ են, մնում են ազատ և ունենում են իրենց առանձին ինքնուրույն ծածկերը:

Ավանը, որ բացառություն չի կազմում, իր վերնամասում ունեցել է ճիշտ այդպիսի պատկեր, լոկ մի տարբերությամբ, այդ այն է, որ այստեղ կենտրոնական խորանարդաձև ծավալի չորս անկյունները ինչ-որ չափով կտրված են: Կառուցողի այդ նախամտածված քայլը արվել է, որպեսզի խորանարդի անկյունները ծածկելով $^3/_4$ խորշերը, ընդհուպ չմոտենան բոլորակ հիմքով ավանդատներին,

ինչ-որ տարածություն մնա նրանց վրա չորս փոքր գմբեթներ ձևակերպելու համար (նկ. 12, գծ. 10): Այդ խորանարդաձև ծավալի անկյունների աստիճանական բթացումը հնարավոր է եղել, քանի որ $^3/_4$ խորշերի ճակատային մասի կամարները առանձնապես մեծ խորություն չեն ունեցել:

**Այսպիսով պարզվում է, որ հետազոտողների նկատած և լուսանկարներում երևացող քարի երեք շարք ունեցող պատը շինության ծածկի վրա ո՛չ թե գմբեթաթմբուկի ստորին մասն է, ինչպես թյուրիմացաբար պատկերացրել են ոմանք, այլ գմբեթատակ տարածության արտաքին արտահայտությունը հանդիսացող կենտրոնական խորանարդաձև ծավալի մասը:** Ըստ որում, այն պիտի ունենար ոչ թե հավասար չափի ութ նիստեր, որպեսզի այդ հետազոտողների կողմից կանոնավոր համարվեր, այլ պիտի լիներ հիմքում ամբողջական քառակուսի. իրականում Ավանում այն եղել է անկյունները ինչ-որչափով հատած քառակուսի: **Այս իրավիճակն իր հերթին լրացուցիչ կռվան է տաճարում չորս փոքր գմբեթների առկայության տաճարի արտաքին հորինվածքում:**

Արդ, ի՞նչ հիմք ունենք նախորդ հետազոտողների կարծիքը վիճարկելու և պնդելու, որ 3—4 շարք ունեցող այդ պատահատվածը պատկանում է ոչ թե գմբեթաթմբուկին, այլ նրա հիմքը կազմող կենտրոնական խորանարդին:

Ինչպես հայտնի է, գմբեթաթմբուկը սկսվում է այնտեղ, որտեղ վերջանում են խաչաթևերի ծածկերը՝ ճակտոնների կամ երկլանջ ծածկերի գագաթները: Այդ սահմանագիծը բնորոշվում է կենտրոնական խորանարդը պսակող գոտով, որը երբեմն անցնում է այդ ծավալի ողջ պարագծով, երբեմն մնում նրա բաց մնացած չորս անկյունների սահմաններում: Ավանի խաչաթևերի ծածկերը չկան, սակայն նրանց բարձրակետը ճշտորեն որոշելը հին լուսանկարների և նոր գծագրերի օգնությամբ արդ դառնում է հնարավոր:

Հուշարձանի արևմտյան պատի վրա մեր օրերում առկա է ճակտոնի ներքնամասով անցնող ձևավոր գոտու մնացորդը իր տեղում: Այդ գոտու երկարությունը պետք է եղած լինի գմբեթի արտաքին տրամագծաչափին ավելացրած գոտու երկու կողադեմի չափը:

Հատակագծային տվյալներից հայտնի են ոչ միայն գմբեթաթմբուկի արտաքին տրամագիծը, այլև խորանների եզրակամարների՝ գմբեթակիր կամարների թռիչքաչափը. նրանց բարձրությունը ճշգրտվում է լուսանկարների օգնությամբ:

Ճակտոնի ներքնով անցնող գոտու երկու ծայրերից տարված լանջագծերը ճակտոնի գագաթում հանդիպեցվում են այն հաշվով, որ այդ լանջագծերի և խորանի գմբեթարդ ծածկի միջև ամենափոքր տեղում մնա սովորական ծածկի հաստության համար անհրաժեշտ տարածություն: Սովորաբար ճակտոնների գագաթները ստացվում են տաճարի ներսում գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտու բարձրության վրա, որտեղից և սկսվում են գմբեթի պատուհանները:

1940-ական թվականների վերականգնման աշխատանքների նախօրյակին տաճարի հարավ-արևմտյան քառորդը կործանված էր: Ձեռքի տակ ունեցած լուսանկարներից մեկում (նկ. 3) երևում է վերը հիշատակված 3—4 շարք ունեցող պատի կործանումից փրկված արևմտյան ծայրը, հենված հարավ-արևմտյան $^3/_4$ խորշի կիսով չափ կանգուն եզրակամարին: Ծածկից վերև պահպանված պատահատվածի երրորդ շարքը հավասարվում է խորշի եզրակամարի բարձրությանը, չորրորդ շարքը գտնվում է նրանց վրա: $^3/_4$ խորշի եզրակամարը և հարավային խորանի եզրակամարը գտնվում են նույն բարձրության վրա: Այդ կամարների վրայից մինչև ճակտոնի գագաթը մնում է 1,30 մետր տարածություն, իսկ պատահատվածի վերին՝ չորրորդ շարքից մինչև նույն ճակտոնի գագաթը 0,90 և մինչև կենտրոնական ծավալի վերին եզրը՝ 0,65 մետր տարածություն: Ավերակի և նրա հին լուսանկարների տվյալներով ստեղծված վերակազմության գծագրերի համաձայն, հիշյալ չորրորդ շարքը հանդիսացել է գմբեթաթմբուկն իր վրա կրող կենտրոնական խորանարդի նախավերջին շարքը: Ստացվում է, որ մինչև գմբեթաթմբուկի հիմքին հասնելը, այդ պատահատվածի չորրորդ շարքի վրա եղել է ևս մեկ շարք, ու նրա վրա էլ կենտրոնական ծավալը պսակող գոտին (մոտ 0,65 մետր տարածություն):

Գմբեթային տվյալ հանգույցը լուսաբանվում է նաև 12-րդ լուսանկարի օգնությամբ: Դրանում պատկերված է հարավ-արևելյան ավանդատան ծածկի անաղարտ պահպանվող արևմտյան հատվածը հինգ շարքի բարձրությամբ: Ծածկի 6-րդ և հաջորդ շարքերը չկան՝ կործանվել են: Հիշյալ

ծածկահատվածի 6-րդ շարքի բարձրության վրա երևում է գմբեթային հանգույցին վերաբերող քարի երկու-երեք շարքից կազմված պատը, ինչպես պարզորոշ տեսնում ենք վերոհիշյալ լուսանկարում, այն ձգվում է արևմուտքից արևելք, անցնելով հարավային խորանի գմբեթապարդ ծածկի վրայով, հարավ-արևելյան ավանդատանը չհասած, թեքվում է դեպի հյուսիս-արևելք: Հավանական է որ այդ պատը ծածկված չի եղել շինության ընդհանուր տանիքով, իր ավելի բարձր դիրքում գտնվելու պատճառով:

Լուսանկարից պարզ հասկացվում է, որ հարավ-արևելյան բոլորաձև ավանդատան այժմ գոյություն չունեցող 6-րդ և հաջորդ շարքերը, որ եղել են վերոհիշյալ 2—3 շարք ունեցող պատի մակարդակի վրա և շարունակել են բարձրանալ, նույնպես ծածկված չեն եղել տաճարի, ավելի ցածր դիրքում գտնվող ընդհանուր տանիքով, հետևաբար ունեցել են իրենց առանձին ծածկերը ու ինչ-որ ձևով դրսևորվել են տաճարի արտաքին հորինվածքում:

Ամենահետաքրքիրն այն է, որ գմբեթատակ ծավալի մնացորդ 2—3 շարք ունեցող պատահատվածը ավանդատանը մոտենալով, ինչպես ասվեց վերևում, թեքվել է դեպի հյուսիս-արևելք, տեղ թողնելով վերջինիս ծածկի վերնամասի՝ գմբեթի համար: Այդ առավել պարզ պատկերված է 10-րդ գծագրում, որ տաճարի հատակագիծն է տանիքի մակարդակում:

Մանրամասներում խորանալով, նկատում ենք, որ հիշյալ 3—4 շարք ունեցող պատահատվածի քարերը ի հակադրություն տաճարի ճակատների քարերի, բարձրությամբ համեմատաբար փոքր են ու մի քիչ էլ վատ են մշակված, նրանց հորիզոնական և ուղղաձիգ կարերը որոշ չափով անկանոն են, բարձրության չափերը միմյանցից մի քիչ տարբեր: Իրավիճակը ենթադրել է տալիս, որ այդ պատահատվածը տաճարի որոշ մասերով ծածկված է եղել և մոտ տարածությունից չի դիտվել, իսկ որոշ հեռավորությունից այդ փոքր անկանոնությունները չեն նկատվել: Վերակազմության գծագրերից հասկացվում է, որ կենտրոնական ծավալի վզալի մասը իրոք ծածկված է եղել ճակտոններով և անկյունային չորս ոչ մեծ գմբեթների ծավալներով:

Այսպիսով, եզրակացվում է, որ **Ավանի կենտրոնական գմբեթի ձևը ոչ մի առնչություն չի ունեցել հիշյալ 3—4 շարք ունեցող պատահատվածի չափերի ու հատակագծային ձևերի հետ:** Այդ պատահատվածի հատակագծային ուրվագիծը, ինչպես և կառուցելակերպը պետք է գնահատվեն որպես շատ արժեքավոր երևույթներ չորս փոքր գմբեթների ռեալ գոյության, երբեմնի կանգուն տաճարի արտաքին հորինվածքում:

Արդ, ինչպիսին է եղել Ավանի կենտրոնական գմբեթը:

Ավանի գմբեթի ձևերի պատկերման համար ընտրելով սխալ հիմքեր, գմբեթաթմբուկին վերագրելով որոշակի անկանոնություններ, հետազոտողներից ոմանք ի վիճակի չլինելով գալ որևէ համոզիչ կարծիքի, այդ մասին լռել են: Մյուսները թերահավատություն հանդես բերելով տաճարի ճարտարապետի հնարավորությունների նկատմամբ, համոզվելով, որ իբր ինքը՝ Ավանի ճարտարապետը ի վիճակի չլինելով լուծել իր առաջ ծառացած պրոբլեմները, դիմել է նախորդ շրջանում եղած իրեն ծանոթ օրինակներին, ու, թերևս կրկնել է Տեկորի նախնական ձևեր ունեցող գմբեթը:

Եղան ու կան հետազոտողներ, որոնք Ավանը կառուցողի նկատմամբ «վստահություն» ցուցաբերելով, գտնում են, որ Ավանը պետք է ունեցած լինի հաջորդ շրջանի նույն տիպի հուշարձաններից որևէ մեկի գմբեթի կրկնօրինակը: Դրանցից է Ստ. Մնացականյանը, ըստ որի «...ամենայն հավանականությամբ, Ավանից ընդամենը երկու տասնամյակ հետո կառուցված Հռիփսիմեի գմբեթի 16 նիստ ունեցող թմբուկը իր հիմնական ձևերով կրկնել է Ավանի գմբեթի թմբուկի հորինվածքը»[52]:

Ավանի համար առաջին վերակազմության հեղինակ Ռ. Յա. Աղաբաբյանը տաճարի գմբեթը ներկայացրել է ութնիստ թմբուկ բրգաձև տանիքով:

Ավանի գմբեթը չէր կարող հանդիսանալ Տեկորի գմբեթի կրկնօրինակը, չէ որ ավերակում (այժմ միայն լուսանկարներում) առկա են գմբեթատակ քառակուսուց գմբեթի բոլորակին անցնող դրվագները, այդ թվում առաջացող կամարները և նրանց երկու կողմերում առագաստային անցման ստորին չորս շարքերը: Դրանցից վերև՝ մինչև արևելակողմի և արևմտակողմի գմբեթակիր կամարների բարձրությանը հասնելը երբեմնի եղած առագաստային փոխանցման երեք շարքերը և դրանց վրայով անցնող գոտին ավելի քան բավարար պիտի լինեին, որպեսզի գմբեթաթմբուկն իր

հիմքում ունենար լիակատար շրջագիծ: Մինչ Տեկորի գմբեթը հիմքում եղել է քառակուսի, նա լրիվ կլորացման կարիք չի ունեցել:

Ավանի գմբեթը նաև չէր կարող Հռիփսիմեի 16 նիստեր ունեցող գմբեթի նախօրինակը լինել, չէ որ նրա կառուցողը ճարտարապետ է եղել և գաղափար է ունեցել նույն կառուցվածքում տարբեր մասերի չափային փոխադարձ հարաբերակցության և համաչափությունների ներդաշնակության վերաբերյալ: Նա ինչպե՞ս կարող էր ձգված համաչափությունների նեղ (2,55 մետր) նիստերով գմբեթաթմբուկ դնել տաճարի առաջին աստիճանի այնքան կուսպ միջոցներով ստեղծված ընդհանրական ծավալի վրա, որի կարճ և երկար պատերն ունեն ավելի քան 15 և 18,6 մետր երկարություն, առանց բեկյալների, խորշերի և թեթևացնող այլ և այլ ձևերի:

Ավանի գմբեթի ձևի հարցը, ըստ երևույթին չպետք է համարել դժվար լուծելի պրոբլեմներից: Նրա կառուցման ժամանակներում հայ վարպետների համար քարեղեն գմբեթ կառուցելը նորույթ չի եղել[53]: Նրանք չէին կարող իրենց առաջին քայլը փորձարկել ավելի քան ինը մետր ներքին տրամագծով գմբեթածածկ ստեղծելիս: V և, հատկապես VI դարերում կառուցված ոչ քիչ խաչաձև կենտրոնագմբեթ տաճարներ կային սփռված Հայաստանի երբեմնի ընդարձակ տարածքում: Սակայն ամենառեալն այն է, որ կենտրոնական գմբեթի ձևերը որոնենք նախ և առաջ բուն ավերակի մնացորդներում: Բարեբախտաբար բնությունը բարի գտնվելով՝ հուշարձանում պահպանել է որոշ նշխարներ և նրանցում առկա է մեկ հետաքրքրող հարցի պատասխանը: Ահավասիկ, տաճարի չորս անկյունների բոլորակ սենյակների ծածկերը իրական գմբեթներ են, իսկ հյուսիս-արևելյան ու հարավ-արևելյան սենյակների ծածկերը կատարյալ կարգացած գմբեթներ: Այս դեպքում ինչո՞ւ նրանց ձևերում չտեսնել կենտրոնական գմբեթն իր հարամասերով և մանրամասերով, թեպետև կենտրոնական գմբեթն, անշուշտ, պիտի ավելի կարգացած ու հետաքրքիր լիներ, քան այդ սենյակների գմբեթածածկերը:

Արևելյան սենյակների ծածկերի հիմքով անցնում է պարզ կողաղեմ ունեցող գոտի, այնպես, ինչպես հետագայում կառուցված շատ ու շատ տաճարներում է: Ուրեմն Ավանի մեծ գմբեթի հիմքով ևս կարող է անցած լինել ձևավոր կողաղեմով գոտի: Այդ սենյակների կիսագնդաձև ծածկի վրա եղել է քարակերտ դեկորատիվ խաչ, ստեղծված երկուական ճառագայթներով, այնպես, ինչպես հետագայում կառուցված մի շարք տաճարներում է: Հետևում է, որ Ավանի մեծ գմբեթի կիսագնդաձև ծածկի վրա նույնպես եղել է դեկորատիվ խաչ, հնարավոր է երեքական ճառագայթներով: Ինչ վերաբերում է բուն գմբեթաթմբուկին, ապա նրա համար որպես նախաձև պետք է հիշատակել ոչ միայն անկյունային սենյակների բոլորակ պատերը, որ իրենց վրա ունեն նաև պատուհաններ, այլ նաև այն բազմաթիվ ներսից բոլորակ, դրսից միանգամայն կանոնավոր բազմանիստ և նիստերի վրա պատուհաններ ունեցող խորանները, որ առկա են Ավանից վաղ կառուցված և՛ բազիլիկ, և՛ կենտրոնագմբեթ խաչաձև հիմքով տաճարներում: Մեր գնահատմամբ երկու խորանը մեկ գմբեթ է. կառուցողի համար խորանից գմբեթ մի քայլ է: Եվ իրոք, խորան կառուցող վարպետի համար շատ էլ դժվար չէր լինի կառուցել խորանից շատ էլ չտարբերվող գմբեթ: Գմբեթի և խորանի կառուցման հիմնական տարբերությունն այն է, որ խորանն իր գմբեթարդ ծածկով բարձրացվում է իր իսկ պարագծերով հիմնապատի վրա, իսկ գմբեթը՝ տրոմպով ու առագաստով ստեղծված բոլորակ հիմքի վրա: Ինչ վերաբերում է այս վերջիններին, ապա դրանց մնացորդների հիման վրա նախորդ էջերում եզրակացվեց, որ Ավանում անցումը գմբեթատակ քառակուսուց գմբեթի հիմքի բոլորակին իրականացված է եղել կոմբինացված եղանակով, միանգամայն օրինական, կանոնիկ ձևերով:

Հետաքրքիր է, որ «Разыскания...» գրքի հեղինակը մի պահ մոռանալով իր բացասական բնորոշումները Ավանի գմբեթի ձևերի վերաբերյալ, բոլորակ սենյակների գմբեթաձև ծածկերը նկարագրելիս, տրամաբանում է. «Թվում է հավանական՝ դրանից ելնելով էլ վերականգնել Ավանի գմբեթը, նույնպես ութ ճառագայթներ ունեցող ռելիեֆ խաչը վրան»[54]:

Ավանի կիսագմբեթարդ ծածկով խաչաթևերի և, հատկապես անկյունային բոլորաձև սենյակների գմբեթածածկերը հավաստում են, որ Ավանի մեծ գմբեթը թե՛ ներսից, թե՛ դրսից ունեցել է կատարյալ ձևեր, կառուցված բարձր որակով ու վարպե-

տությամբ, ու այն դարձել է օրինակ այդ և այլ տիպերի տաճարների ծածկերի համար (գծ. 1, 10, 12, 13, 14, 16—20)։

### ՏԱՃԱՐԻ ՆԵՐՔԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ավանում ներքին տարածությունը լուսավորող պատուհանները մեծաքանակ չեն, սակայն իրենց չափերով բավական մեծ են (նրանց լայնությունը 1,16—1,18 մետր է, բարձրությունը՝ 2,40—2,46 մետր, անկյունային սենյակներում լայնությունը ավելի քան 0,8 մետր, բարձրությունը՝ 1,80—1,86 մետր)։

Տաճարում լուսամուտներ են եղել մեկական հատ արևելյան, հյուսիսային և հարավային խորաններում, արևմտյան խորանում սովորական պատուհանի փոխարեն առկա է մեծ բացվածքով լունետ շքամուտքի վերնամասում։

Ութ նիստեր ունեցող գմբեթում կարող էին լինել չորս կամ ութ պատուհաններ։ Նախորդ հետազոտողներից ոմանք[55] սխալ ձև վերագրելով Ավանի գմբեթաթմբուկին, գտնում էին, որ այդտեղ չորսից ավել պատուհան հնարավոր չէ ենթադրել։ Մինչդեռ գմբեթային փոխանցման համակարգը Ավանում, որ ավարտվում է գմբեթի հիմքով անցնող գոտու տակ, հնարավորություն է ընձեռել կառուցողին գմբեթում ունենալ ցանկացած թվով պատուհան։ Հետևում է, որ տաճարի ութ նիստերից յուրաքանչյուրի վրա մեկ պատուհան եղած լինելու ենթադրությունը նույնքան ռեալ է, որքան չորս պատուհանի հավանական լինելը (գծ. 13, 14)։

Ավանում պահպանված պատուհանների մեծ չափերը նշան են այն բանի, որ կառուցող ճարտարապետը տաճարի համար ապահովել է անհրաժեշտ լուսավորություն. սրան հակառակ ենթադրության համար լուրջ հիմքեր չկան։

Ավանում առատորեն լուսավորված են եղել նաև բոլորակ հիմքով անկյունային չորս սենյակները. համենայն դեպս այդ են հաստատում արևմտակողմի երկու անկյունային սենյակների առկա պատուհանների մեծ չափերը։

### ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՃԱՐԻ ՕՐԳԱՆԻԶՄՈՒՄ

Ավան-Հռիփսիմեի տիպի հուշարձանների համեմատական ուսումնասիրությունը ի հայտ է բերում երևույթներ, որոնք ժամանակի ընթացքում ձևավորվել, ստացել են որոշակի, գրեթե կանոնիկ բնույթ։ Այդ երևույթների ընկալումն ու ճիշտ գնահատումը օգնում և, երբեմն այլ կոմպոնենտների թվում ու նրանց հետ միասին կարևոր գործոն են հանդիսանում տաճարների ինչպես ճարտարապետական-գեղարվեստական կողմի ճշմարիտ արժեքավորման, այնպես էլ նրանց կառուցման ժամանակը, երբեմն կառուցման հերթականությունը որոշելու կամ ճշգրտելու գործում։

Ավանում ևս շինության և՛ ամբողջի, և՛ առանձին մասերի միջև առկա են համաչափություններ, որոնց բացահայտումը նույնպես ներկայացնում է որոշակի հետաքրքրություն։

Գրավոր և այլ աղբյուրներից մեզ հայտնի չէ, թե ճարտարապետը իր կառուցելիք տաճարը նախատեսելիս (եթե չասենք՝ նախագծելիս) որքանով է դիմել դեռևս այն ժամանակներում հայտնի համաչափական կանոնների կիրառմանը, անառարկելի է սակայն, որ որպես արդյունք բծախնդիր պրպտումների, տաճարի մասերում և մանրամասերում ի հայտ են գալիս որոշ օրինաչափություններ, ֆունկցիոնալ կապեր ու կախումներ, որոնք ինչ-որ չափով ենթադրել են տալիս առկա երևույթների նաև ոչ պատահական լինելը։

Այսպես՝ Ավանի տաճարի երկարության չափից հանելով «ոսկե բաժանման» փոքր հատվածի փոքր հատվածը, ստանում ենք նրա լայնությունը 1860—1860×0,382×0,382=1589 սմ. իրականում տաճարի արևմտյան ճակատի լայնքը 15,85 սմ է, որ շատ քիչ է տարբերվում 1589 սմ-ից։

Նույնպիսի հարաբերության մեջ են արևելյան և հարավային խորանների լայնքերը՝ 4,25—4,25×0,38×0-38=3,64 մ., իրականում հարավային խորանի լայնքը 3,68 մետր է, որը 4 սանտիմետրով է տարբերվում 3,64 մետրից (այս հարաբերությունը, իհարկե, չի ստացվում, երբ նայում ենք հյուսիսային խորանը, որը հարավային խորանից լայն է 24 սանտիմետրով)։

Շատ էլ տարբեր չէ անկյունային սենյակների և ³/₄ խորշերի միջև առկա հարաբերությունը։

Երեք-քառորդ խորշի տրամագիծը հավասար է բոլորակ սենյակի տրամագծի «ոսկե բաժանման» մեծ հատվածին՝ 3,47×0,62=2,15 մ., նաև՝ 3,40×0,62=2,11 մ.: Տաճարում բոլորակ սենյակների տրամագծերն են՝ 3,34, 3,39, 3,47 և 3,49 մետր, իսկ 3/4 խորշերն ունեն 2,12, 2,15, 2,18 և մի դեպքում միայն՝ 2,27 մետր տրամագիծ:

Մոտավորապես նույնպիսի հարաբերություններ են մեջ են հատակագծի նաև մյուս մասերն ու դրվագները:

Բանն այն է, որ այդ հարաբերությունները նկատելիորեն տարբերվում են պատմական հաջորդ շրջանում կառուցված նույնատիպ տաճարներում առկա համաչափություններից: Օրինակ Ավանում տաճարի լայնքը (15,85 մ.) նրա երկարությանը (18,61 մ.) հարաբերում է, ինչպես 1:1,17-ին. այս ցույց է տալիս նրա քառակուսուն բավական մոտ քառանկյունի լինելը, մինչ հաջորդ տաճարներում, ինչպես տեսնում ենք աշխատության վերջում բերվող աղյուսակում, քառանկյունի պարագծերով հատակագծերը կգալի երկարում են արևելք-արևմուտք ուղղությամբ: Նույնպիսի պատկեր գոյություն ունի տաճարների նաև ներքին չափերում, այսպես՝ երկարության և լայնության հարաբերությունը Ավանում ստացվում է 1:1,19, Գառնահովտում՝ 1:1,33, Հռիփսիմեում՝ 1:1,29, Թարգմանչացում՝ 1:1,34, Սիսիանում՝ 1:1,36 և այլն: Այս պատկերն, անշուշտ, առավելապես արդյունք է արևելյան և արևմտյան նախախորանների գոյության, թեպետև նույն ուղղության խորանները կողային խորաններից ավելի խոր են: «Բեմ» անվանված հիշյալ նախախորանների միջին լայնքը Ավանում 1,16 մետր է, Գառնահովտում՝ 1,63, Հռիփսիմեում՝ 2,98, Թարգմանչացում՝ 1,15, Սիսիանում՝ 2,10: Թվերի բացարձակ մեծությունն այս դեպքում արժեք է ստանում, երբ հարաբերության մեջ ենք դնում գմբեթի տրամագծաչափի հետ, այսինքն, թե նախախորանի լայնքը քանի անգամով է փոքր գլխավոր գմբեթի տրամագծաչափից:

Ավանում այդ հարաբերությունը կազմում է 1:7,52 (8,73:1,16), Գառնահովտում՝ 1:5,72, Հռիփսիմեում՝ 1:4.70, Թարգմանչացում՝ 1:5,17, Սիսիանում՝ 1:3,43: Նույնպիսի արդյունք է ստացվում նաև տաճարի ներքին երկարության և գմբեթի տրամագծի հարաբերությունից:

Ավանում 3/4 խորշերի երկու կողմերում բարձրացող որմնամույթերի լայնքը 0,85—0,87 մետր է. դրանց լայնքի և բարձրության հարաբերությունը հավասար է 1:5,5, մինչ հաջորդ տաճարներում այդ որմնամույթերը Ավանի որմնամույթերի սեղմած համաչափությունների համեմատությամբ ստանում են առավել սլացիկ համաչափություններ:

Շքամուտքի վերնամասը պահող սյուների տրամագծի հարաբերությունը բարձրությանը կազմում է 1:3,5, որը նույնպես սեղմված համաչափություն է բնորոշում:

Ի տարբերություն հաջորդ շրջանում կառուցված տաճարների, Ավանում շքամուտքի, ինչպես և նրա վերևում՝ բաց լյունետի երկու կողերը միմյանց զուգահեռ են, պատուհաններում ևս կողերը ունեն չնչին թեքվածք:

Նայվող հատակագծերում որոշակիորեն ուրվագծվող այս օրինաչափությունները տաճարներից մի քանիսում երբեմն խախտվում են, սակայն այդ խախտումները բնորոշվում են որպես բացառություններ:

Ավանի ներքին հատակաձևը ստեղծվել է որոշակի սխեմայի հիման վրա, որը մինչ այդ, ըստ երևույթին, հասած է եղել մշակվածության որոշակի մակարդակի: Ակներև է, որ դրանից հետո էլ այդ սխեման շարունակել է կատարելագործվել, գործադրություն գտնելով հաջորդ շրջանում կառուցված հուշարձաններում:

Ավանի հատակագծի հիմքում, ինչպես մինչ այդ կառուցված մի շարք պարզ խաչաձև գմբեթավոր եկեղեցիներում, ընկած է գմբեթատակ քառակուսին: Այս վերջինիս արևելակողմից և արևմտակողմից հարում են կիսաշրջան եզրագծով խորաններն իրենց նախախորաններով: Այդ խորանների գագաթները ընկնում են գմբեթատակ քառակուսուց գմբեթի կես տրամագծաչափով հեռու: Հետևում է, որ տաճարի ներքին երկարությունը հավասար է գմբեթի ներքին տրամագծի կրկնակի մեծությանը (գծ. 21): Մյուս կողմից, հիշյալ խորանների տրամագծերը կրկնակի փոքր են գմբեթի տրամագծաչափից:

Ավանի հյուսիսային խորանի կենտրոնը գտնըվում է տաճարի կարճ առանցքի վրա, արևելյան և արևմտյան խորանների գագաթներից տաճարի երկար առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերի հանդիպման կետում: Հարավային խորանի կենտրոնը նույն ձևով ստացված կետից



Գծ. 22. Ավան. հարավային ճակատի համաչափությունների վերլուծություն։

մի փոքր հեռու է ընկնում խորանի շառավղի 10—12 սմ. փոքր լինելու հետևանքով։

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում, որ այս տաճարում $^3/_4$ շրջագծային խորշերի կենտրոնները ընկնում են արևելյան և արևմտյան խորանների կենտրոններով տարված շրջագծի վրա։ Այս տիպի որոշ տաճարներում այդ շրջագծի վրա են ընկնում հյուսիսային և հարավային խորանների գագաթները։ Երեք քառորդ խորշերի կենտրոնները գտնվում են վերոհիշյալ շրջագծի այն կետերում, որոնցով անցնում են գմբեթատակ քառակուսու արևելյան և արևմտյան կողերի միջնակետերից երկար առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերը, ինչպես նաև կարճ առանցքի վրա գտնվող տաճարի ներքին լայնության $^1/_3$-ի և $^2/_3$-ի կետերից, այդ առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերը։ Այդ գծերից առաջին չորսը տարբեր կողմերից շոշափում են կենտրոնում գծված այն շրջագիծը, որի շառավիղը հավասար է գմբեթի շառավղի կեսին։

Ավանի չորս անկյունների շրջագծային հիմքով սենյակների չափերը ստացվել են արևելյան և արևմտյան խորանների երկու կողմերում ազատ մնացած տեղի համեմատ։ Այդ սենյակների պատուհանները տեղադրված են կենտրոնով տարված արևելք-արևմուտք ուղղության առանցքների վրա, իսկ դռները՝ այդ մատուռների և անցում հանդիսացող $^3/_4$ խորշերի կենտրոնները միացնող գծի վրա։

Օրինաչափությունից, սակայն, շեղում չպիտի համարել այն, որ Ավանում $^3/_4$ խորշերի և անկյունային բոլորակ սենյակների միջև դռների բարավորները ստեղծվել են երկու-երեք շարք կողի վրա դրված երկար քարասալերով և նրանց միջև թողնված են բեռը թեթևացնող ճեղքեր։ Այդ, ինչ խոսք, նշան է ճարտարապետի ոչ թե հին նկատմամբ պահպանողական հակվածության, ինչպես կարծում են ոմանք, այլ շինության տվյալ դրվագի կոնստրուկտիվ ճիշտ լուծման։ Չէ որ այդտեղ բարավորի հաստությունը հազիվ հասնում է 9—13 սանտիմետրի։

Նույնպիսի վիճակ գոյություն ունի նաև Հռիփսիմեի նույն դրվագներում։ Այնտեղ ավանդատներից յուրաքանչյուրի մուտքի բարավորը հեծանի ձևով հորիզոնական դրված համեմատաբար մեծ չափերի տուֆաքար է։ Նկատի ունենալով, որ այդ բարավորի հաստությունը ընդամենը 37 սանտիմետր է, ճարտարապետը բարավորի վերևում ստեղծել է կամարաձև փակ լունետով, որը և իրականում իր վրա վերցնելով, վերևում առկա մեծ բարձրության պատի ծանրությունը, այն փոխա-



Գծ. 23. Ավան. արևելյան ճակատի համաչափությունների վերլուծություն։



Գծ 24. Ավան. կտրվածքի համաչափությունների վերլուծություն:

դրում է մուտքի երկու կողմերի, համեմատաբար հաստ պատերին:

Ավանն ու Հռիփսիմեն բացառություններ չեն այդ հարցում, տաճարներից շատերում, այդ թվում և Գառնահովտում և Թոդոսակի կառուցած Աթեն տաճարում ավանդատների մուտքերի բարավորները երկշերտ են՝ $^3/_4$ խորշի կողմից միակտոր հեծանաձև դրված քարեր են, իսկ ավանդատների կողմից՝ կամարներ: $^3/_4$ խորշի կողմից կամար չի արվել, նկատի ունենալով, որ այդպիսին խորշի բոլորաձև պատի հարթության վրա ստանում է բարդ եկրագիծ:

Հետաքրքիր է, որ Գառնահովտի Հռիփսիմեից վաղ կառուցված լինելու համոզումն է ունեցել ճանաչված հետազոտող Գարեգին Հովսեփյանը[56]: Եվ իրոք, Գառնահովտում առկա որոշակի պարագաների հանգամանալից վերաքննությունը մեկ ևս բերում է այդ նույն համոզման:

Ավանի տաճարի հատակագծում առկա համաչափությունների բացահայտումը առանձնապես կապված չէ մեծ դժվարությունների հետ, մանավանդ որ վանական նորոգումների ընթացքում նրանում ձևափոխություններ տեղի չեն ունեցել, հետևաբար հաշվարկվող տվյալները գրեթե ճշգրիտ են:

Դժվարությունները կգալի են տաճարի տարածական հորինվածքում թաքնված համաչափությունների բացահայտման գործում. չէ՞ որ գմբեթից պահպանված դրվագներ չկան, որոնց օգնությամբ հնարավոր կլիներ ստանալ առավել իրական տվյալներ: Այս պայմաններում օգնության է գալիս ավերակի մնացորդների հիման վրա, ինչպես և նույն տիպի գոյությունը պահպանած տաճարների հարաբերական նմանությամբ ստեղծած, այստեղ ներկայացվող վերակազմության նախագիծը (գծ. 19, 22—24):

Ավանի վերակազմության նախագծում գրեթե բոլոր չափերը համապատասխանում են հուշարձանի տվյալներին, միայն գմբեթաթմբուկի բարձրության չափն է, որ ենթակա է որոշման այլ տաճարների անալոգիայով:

Տաճարների մեծ մասում գմբեթաթմբուկի բարձրությունը կախում ունի նիստերի վրա գոյություն ունեցող պատուհանի բարձրությունից: Եվ այդ պատուհանը շատ հաճախ ունենում է տաճարի ներքնամասում առկա պատուհանների չափը, այդպես է, օրինակ, Գառնահովտում, Թարգմանչացում, Մրենում, Սիսիանում և այլուր: Ավանի վերակազմության նախագծում գմբեթաթմբուկի պատուհանի բարձրությունը ցույց է տրված տաճարի հյուսիսային և հարավային խորաններում այժմ էլ առկա պատուհանների բարձրության չափով: Հնադարյան հուշարձաններում պատուհանների դրսի և ներսի չափերը միմյանցից շատ քիչ են տարբերվում, պատուհանագոգը դրանցում գրեթե հորիզոնական է, այսպես լինելու դեպքում գմբեթի պատուհանը գմբեթի հիմքով անցնող գոտուց դրվում էր բարձր, ընդմիջելով պատի կես կամ մեկ շարք: Գմբեթի կիսագնդաձև ծածկը սովորաբար դրվում էր պատուհանի բարավորի վրա: Այսպես էլ արված է Ավանի վերակազմության նախագծում:

Ի վերջո, այսպիսով, պարզ է դառնում, որ Ավանի գմբեթաթմբուկի բարձրությունը վերակազմության նախագծում որոշված է գրեթե ճիշտ չափերով: Այդ են հուշում նաև տաճարի ծավալատարածական հորինվածքի կանոնիկ կազմավորման սխեմատիկ գծագրերը (գծ. 22—24):

Ավանում գմբեթատակ քառակուսին արևելք-արևմուտք ուղղությամբ մոտ 8,50 մետր է, հարավ-

հյուսիս ուղղությամբ՝ 9,00 մետր: Այս հուշարձանում գմբեթային փոխանցման հանրահայտ համակարգի ընձեռած տվյալներով հնարավոր է դառնում եզրակացնել, որ Ավանի գմբեթն իր հիմքում, հավանական է, ունեցել է ճիշտ շրջագծային պարագիծ: Այդ դեպքում որքա՞ն է եղել նրա տրամագիծը. ութ ու հիսո՞ւն, թե՞ ինը մետր: 8,50 մետր ընդունելու դեպքում տաճարի ներքին բարձրությունը կազմում է նրա կրկնակի չափը, մոտ 17,00 մետր, այսինքն՝ այնքան, որքան տաճարի ներքին երկարությունն է արևելք-արևմուտք առանցքով (16,80 մ.):

Արևելյան և արևմտյան գմբեթակիր կամարների լայնքը նույն կամարների բարձրության մեջ (հաշված սեղանի հարթությունից) տեղավորվում է **մեկուկես անգամ:**

Զգալի հետաքրքրություն են ներկայացնում առկա համաչափությունները տաճարի արտաքին ծավալային ընդհանուր հորինվածքում և այդ բանը առավել ակներև է դրանց գծային արտահայտություններում, որ ներկայացվում են վերակազմության համապատասխան գծագրերով (գծ. 22, 23):

Աիավասիկ տաճարի արևելյան ճակատը. այստեղ գմբեթն իր արտաքին պարագծով ներգծվում է մի շրջագծի մեջ, որի տրամագիծը հավասար է գմբեթաթմբուկի արտաքին տրամագծին. նույն տրամագծով շրջագծի մեջ է ներգծվում տաճարի նաև ներքնամասը: Ստացվում է, որ տաճարի արտաքին ընդհանուր բարձրությունը հավասար է գմբեթի արտաքին տրամագծի կրկնակի մեծությանը: Նույն գծագրի տվյալներով գմբեթաթմբուկի բարձրությունը հավասարվում է իր լայնության կեսին, այդ նույն բարձրությունն ունի նաև գմբեթի բրգաձև ծածկը:

Տաճարի այժմ նայվող արևելյան ճակատի վրա անց է կացված գմբեթի արտաքին շրջագծի շառավղի հիման վրա ստեղծված մի ցանց, որի խաչմերուկները ճշտորեն ծածկում են ճակատի, գրեթե բոլոր կարևոր հանգուցակետերը:

Նույնպիսի պատկեր է ստացվում տաճարի նաև երկար, ինչպես և արևմտյան ճակատների համաչափությունները նայելիս:

Զվարթնոց, Բանակ[57] և Ավան տաճարներում նույնանման համաչափական երևույթների առկայությունը բերում է այն համոզման, որ նրանց ստեղծողները իրենց աշխատանքի հիմքում անպայման նկատի են ունեցել որոշակի կանոններ, կազմել են առանձին մասերը միմյանց կապող և հարաբերող սխեմաներ, միջոցառումներ, որոնց արդյունքը արտահայտվում է այդ հուշարձանների վայելչակազմ, աչք շոյող, գեղագիտորեն կմայլանք պատճառող հորինվածքներում:

*
* *

Մեր միջնադարի հուշարձանները կառուցվել են քարով, գերազանցապես տեղական տուֆերով, այդ թվում նաև Արթիկի ու Անիի հանքատեսակներով, ինչպես և ֆիլզիտով ու որձաքարով (բազալտ):

Ընդհանրապես չի նկատվում, թե վարպետները երբևէ խորշել են որևէ հանքատեսակից, կամ քարի գույնից: Հուշարձաններ ունենք կառուցված սև տուֆերով, մուգ և բաց դարչնագույն, դեղնավարդագույն, կարմիր, նարնջագույն, կանաչ-կապտագույն, սպիտակ-դեղնագույն և շատ այլ երանգների քարերով: Հաճախ որոշ հուշարձաններ ժողովրդի մեջ անուն են ստացել իրենց պատերի քարի գույնով, այսպես՝ «Կարմիր վանք», «Թուխ մանուկ» և այլն:

Այնտեղ, որտեղ հարմար շինաքար չի եղել, բերվել է հեռու տեղերից:

Որոշ հետազոտողների արտահայտությամբ հայկական եկեղեցիները ընդհանուր առմամբ կառուցվել են սև ու գորշագույն քարերով, որ դրա համար էլ իբր նրանք տեսքով մռայլ են: Աչքի անցկացնելով մեր շատ հուշարձանների շինաքարի գունային ներկապնակը, տեսնում ենք վերոհիշյալ կարծիքների ակներև միակողմանի լինելը: Չի կարելի ժխտել, որ սև և դարչնագույն քարերը շատ հարգի են եղել և մեր հուշարձանների մեծ մասը կառուցված է նրանցով: Այդ, հարկավ, վկայի չափով բնորոշ է մեր եկեղեցաշինությանը, սակայն դա դեռ չի նշանակում, թե բաց գույնի քարով կերտված հուշարձանները ինչպես ակնարկում են ոմանք, կամ հայկական չեն, կամ կրում են այլ ճարտարապետական շրջանների անմիջական ազդեցությունը:

Սև տուֆը իր երանգներով, որ հրաբխային ծագում ունի, շատ է տարածված մեր լեռնաշխարհում, նրա որոշ տեսակները հեշտ էլ մշակվում են,

և որ կարևորն է, դիմացկուն են և դիմագրավում են ամեն կարգի հողմահարման: Մեր վարպետները երբեմն հմտորեն ձեռնպահ են մնացել ֆիլլիտների գործադրումից, և այդ ոչ թե նրանց բաց գույնի, այլ արագ հողմահարվող հատկության պատճառով: Տեղական տուֆաքարերը ավելի քան մեկուկես հազարամյակի ընթացքում իրենց հարթությունների վրա պահպանում են տաշվածքի սկզբնական տեսքը, տաշող գործիքների հետքը: Այս հանգամանքը, ըստ երևույթին, խաղացել է ամենակարևոր դերը շինաքարի ընտրման գործում, հանգամանք, որը ոմանց կողմից ըմբռնման չարժանանալով, մոռացվում ու բացասաբար էլ գնահատվում է:

Մուգ գույնի, այդ թվում և կարմրավուն քարերով կառուցված հուշարձանները իրոք որ լավ են նկարվում մեր խստաշունչ լեռնային լանդշաֆթին, լավ էլ ուրվագծվում են երկնքի թե հստակ՝ կապույտ, թե գորշ՝ ամպամած պաստառի վրա: Սև գույնը, ըստ երևույթին, խորապես համապատասխանել է եկեղեցիների բնույթին, հարապատորեն արտահայտել նրա ներքին բովանդակությունը, իր խստությամբ ներազդել հավատացյալի հոգեկան աշխարհի վրա, ճնշել, հպատակեցրել:

Ավանի պատերում գործադրված սև, կարմրավուն և դարչնագույն տեղական տուֆաքարը իր գունային հստակ երանգներով տաճարն օժտում է նշանակությանը ճշմարտապես համապատասխան արտահայտչականությամբ:

### ՈՎ Է ԵՂԵԼ ԱՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Սեբեոսի մոտ հիշվում է որպես տաճարի կառուցող հայոց հակաթոռ կաթողիկոս Հովհան Բագարանցին. ճարտարապետի մասին որևէ խոսք չի ասվում:

Այդ նույն ձևով են արտահայտվում մեր մատենագիրները Զվարթնոցի կառուցողի վերաբերյալ՝ հանձին Ներսես Գ Շինող կաթողիկոսի, Հռիփսիմեի կառուցողի՝ կաթողիկոս Կոմիտասի մասին և այլն:

Ինչպե՞ս հասկանալ, այդ Հովհան Բագարանցին, Ներսես Գ Շինողը կամ Կոմիտասը պատվիրատունե՞ր են լոկ, թե՞ իրոք կառուցողներ, ներկա իմաստով՝ ճարտարապետներ:

Մեր օրերում ընդունված է կարծել, որ պատմիչների թողած այդ անունները կրողները, որ եղել են իրենց ժամանակի հայոց կաթողիկոսները, հանդիսացել են պատվիրատուներ, իսկ ճարտարապետները եղել են այլ անձնավորություններ, որոնց անունները չեն պահպանվել, այդ համարվել է անկարևոր. պահպանվել, արձանագրություններում նույնպես գրվել է պատվիրատուի անունը. տաճարի կառուցման պատիվը շնորհվել, վերագրվել է նրան:

Ահա սրանից ելնելով էլ մեր ժամանակի հետազոտողներին, և ընդհանրապես գիտակներին, հետաքրքրում է այդ հուշարձանների անանուն ճարտարապետների անձնավորության հարցը: Չէ որ բազմադարյան հնություն ունեցող այդ շինություններն արվեստի մեծագույն գործեր են և ունեցել են իրենց մեծաքանքար ստեղծագործողները:

Մի առիթով Թորոս Թորամանյանը գրում է. «Եկեղեցիներու հատակագծերը բնավ պետք չէ, որ կապվեն շինարարական կամ գեղարվեստական ոճերու հետ, կրոնական վարդապետությունները և ծեսերը ավելի դեր կկատարեն հատակագծերու համաչափությանց և դասավորությանց մեջ, քան արվեստն ու ճաշակը»[58]:

Այս նշանակո՞ւմ է արդյոք, որ տաճարի հատակագիծը ճարտարապետին է հանձնվում պատվիրատուի կողմից, որ վերջինիս մնում է այդ հատակագծի վրա բարձրացնել շինության լոկ ծավալատարածական հորինվածքը: Այսպես, թերևս հնարավոր է ենթադրել նույնատիպ տաճարների հաջորդ օրինակների կամ ընդօրինակումների համար միայն, մինչ առաջին օրինակի համար հնարավոր չէ, քանի որ պատվիրատուն հատակագիծը չի ստացել «ի վերուստ» ու հրամցրել ճարտարապետին: Առաջին հատակագծի կազմումն ինքնին մեծ ստեղծագործություն է, ճարտարապետական մտքի գործադրության արգասիք:

Ուրեմն ո՞վ է առաջին հատակագծի ստեղծողը:

Տողերիս գրողը այնուամենայնիվ կարծում է, որ հնարավոր չպիտի լիներ պատմության քննախույզ աչքից ու ականջից թաքցնել մեծ ստեղծագործության հեղինակ ճարտարապետի անունը, մոռացության տալ նրան այնպես, որ ժողովրդի բանավոր հիշողությունն էլ չպահպաներ այն, չհա-



Գծ. 25. Ճարտարապետական տարբեր շրջանների պատկանող նույնատիպ տաճարների ներքին հատակածներ:

Ա. Հռիփսիմե, Բ. Ավան, Գ. Քոլատակ, Դ. Ջվարի, Ե. Վարագավանք, Զ. Արամուս, Է. Թարգմանչաց վանք, Ը. Սիսիան, Թ. Աթեն, Ժ. Զորադիր, Ի. Աղթամար, Լ. Մեծ Ծուամթա:

ղորդեր հետնորդներին ու այլ ճանապարհով այն չթափանցեր գրավոր պատմության մեջ, տեղ չունենար մեզ հասած մատյաններում, կամ թեկուկն չփորագրվեր շինության համեմատաբար աննկատ տեղում՝ քարի վրա:

Մեր միջնադարը ունեցել է մշակույթի բարձր

մակարդակ և այդ պայմաններում ստեղծագործողի նկատմամբ այդ կարգի դաժանություն չէր կարող կիրառվել: Դեռ ավելին, այդպես լինելու պարագաներում հնարավոր չպիտի լիներ նորանոր մեծ ստեղծագործությունների ի հայտ գալը, մինչդեռ ինչպես հայտնի է, բարձրարվեստ ստեղծագործությունները մեր ճարտարապետության անդաստանում եզակի չեն:

Այս ամենը բերում է մի եզրակացության, որ **մեծ ստեղծագործությունների իրական հեղինակները նրանք են, որոնց անունները պահպանվել են պատմությամբ, այսպես՝ Ավանինը՝ Հովհան Բագարանցին, Զվարթնոցինը՝ Ներսես Գ Շինողը, Հռիփսիմեինը՝ Կոմիտասը** և այլն:

Որ հոգևոր պետերն են թելադրել կառուցվելիք տաճարի ներքին դասավորությունն ու առանձին մասերին վերաբերող պահանջները, այսինքն՝ հարցեր, որոնք իրենց լուծումն են պահանջում դեռևս հատակագծում, կասկածից վեր է: Այս մի՞թե չի նշանակում, որ իրոք, նրանք էլ, համենայն դեպս, ընդհանուր գծերով հանդիսացել են շինության ներքին հատակաձևի թելադրողը: Չպետք է մոռանալ, որ խոսվում է եկեղեցու և ո՛չ մի այլ նշանակության շինության վերաբերյալ: Այստեղ առաջին խոսքը նրանցն է եղել:

Արդ, ի՞նչ է իրենից ներկայացնում հատակաձևը—հատակագիծը, կառուցվող շինության համար ի՞նչ կարևորություն—արժեք ունի այն: Եկեղեցու, և ոչ միայն եկեղեցու, նաև ամեն մի շինության հատակագիծը կառույցի հիմքն է, որի վրա և բարձրանում է նրա ողջ հորինվածքը: Չէ որ հատակագիծը մշակողը նույն պահին՝ միաժամանակ իր մտապատկերում ստեղծում է նաև կառույցն իր ամբողջությամբ, թեկուզև ընդհանուր գծերով, սակայն չգալի որոշակիությամբ: Եվ ահա այդ մտապատկերներին համապատասխան էլ փոփոխում, վերամշակում է հատակագիծը — հատակաձևը: Շինության այդ երկու կոմպոնենտները դասական երկերում ստեղծվել են միաժամանակ, փոխադարձ կապի մեջ, համապատասխանեցվել մեկը՝ մյուսին, պայմանավորել մեկը՝ մյուսով: Եվ եթե այդպես է, ապա մի՞թե պարզ չէ, որ հատակաձև ստեղծողն էլ ստեղծագործության օրինական հեղինակն է, մեր այսօրվա մտածողությամբ՝ ճարտարապետը:

Իսկ ով է եղել այն անձնավորությունը, որը երկի հեղինակի հետ միասին վերջնական ու ռեալ տեսք է տվել մտահղացմանը, հսկել ու գլուխ բերել շինության կառուցումը: Ահա նա էլ եղել է փորձով ու մասնագիտական բարձր պատրաստականությամբ օժտված վարպետաց-վարպետը, վարպետներից ամենաճարտարը, նրանց ղեկավարը:

Վաղ միջնադարում բարձր հոգևորականությունը իր կրթությունն ստանալու ընթացքում, պետք է ենթադրել, որպես պարտադիր պայման, տիրապետելու էր նաև «ճարտարապետություն» դասընթացը, ճիշտ այնպես, ինչպես տիրապետել է աստվածաբանությունը, փիլիսոփայությունը, ճշգրիտ գիտությունները և այլն: Եթե հոգևորական գործիչը դրանց չտիրապետեր, չէր էլ բարձրանա այն պաշտոնին, որի գործունեության մեջ մտնում էր նաև տաճարաշինությունը: Այս հարցում հնարավոր է վկայաբերել Մխիթար Գոշին, որն իր «դատաստանագրքում» գրում է «Զհիմունս եկեղեցւոյ եպիսկոպոսն միայն իշխեսցէ ծրագրել ուղղափառութեամբ, կամ քորեպիսկոպոս եւ կամ պերեւոուտն հրամանաւ եպիսկոպոսին»[59]:

Ավելի ուշ, արդեն Աղթամարի (ճարտ. Մանվել), Անիի Մայր տաճարի (ճարտ. Տրդատ) ժամանակներում է, որ ոչ հոգևորական կառուցող ճարտարապետին է անցնում նաև եկեղեցու պատվերի հորինվածքային մտահղացման, հեղինակային ստեղծագործության պարտականությունը:

### ԱՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵԻ ԱՆՎԱՆ ՀԱՐՑԸ

Ավանի այս դարասկզբի բնակիչները Կաթողիկե եկեղեցուն, որ արդեն ավերակ էր, կոչում էին Ծիրանավոր: Ընդ որում, այդ անունը իրենց է հասել, իբր ավանդաբար: Թորոս Թորամանյանը հիմնավոր ապացույցներ չտեսնելով, այդ չի համարում հավաստի: Նա տվյալ դեպքում նկատի ունի այն, որ Ավանի ներկա բնակիչների նախնիները բնիկներ չեն, նրանք այդտեղ են գաղթել Պարսկաստանից XIX դարի 26—28 թվականների ռուս-պարսկական պատերազմի օրերին, հետևաբար չէին կարող գիտենալ եկեղեցու պատմական անվանումը:

Եվ իրոք, ինչպես կարող էին միաժամանակ նույն՝ Ծիրանավոր անունը կրել միմյանց այնքան մոտ գտնվող նույնատիպ Ավանն ու Արամուսը:

Ավանի կառուցման ժամանակներում մի եկեղեցի է եղել, որ ունեցել է հինգ գմբեթ և դա Կոստանդնուպոլիսում էր, անունը՝ Առաքելոց (կառուցված VI դարի 80-ական թվականներին)։

Հինգ գմբեթանի եկեղեցիները, որ առավել նշանակալից են եղել, կապվել են առաքյալների անվան հետ։ Այդպիսին է եղել նաև Անիի հինգ գմբեթանի Առաքելոցը (X դար)։ Էջմիածինը, որ V դարում կրած վերակառուցմամբ դարձել է հինգ գմբեթանի, կապվել է Միածնի՝ Քրիստոսի անվան հետ։

Վաղ միջնադարում Հայաստանում չէր կարող առաքյալներին նվիրված եկեղեցի չլինել. լինելու դեպքում, այն պիտի ունեցած լինի հինգ գմբեթ։ Կան, իհարկե, միագմբեթ եկեղեցիներ, որ նույնպես կոչվում են Առաքելոց (օրինակ՝ Կարսի Առաքելոց եկեղեցին), սակայն դրանք համեմատաբար ուշ երևույթներ են։

Մեր հինգ գմբեթանի եկեղեցիներից Էջմիածնից հետո ամենահինը Ավանի կաթուղիկեն է (կառուցված VI դարի 80-ական թվականներին), արդ պիտի ենթադրել, որ նրա անունն էլ եղել է «Առաքելոց»։

## ԱՐԱՄՈՒՍԻ ԾԻՐԱՆԱՎՈՐ Ս. ՆՇԱՆ

Ճշտորեն Ավանի սկզբունքներով է կառուցվել այդ տիպի հուշարձաններից Արամուսի Ծիրանավոր եկեղեցին: Ավանն ու Արամուսը միմյանցից հիմնականում տարբերվում են անկյունային չորս սենյակների ձևով (գծ. 26): Ավանում, ինչպես ասվեց վերևում, դրանք բոլորաձև են, գմբեթածածկով և, հատկապես արևելյանները հանդիսանում են մատուռներ, Արամուսում՝ ուղղանկյուն-քառանկյունի, մի փոքր ձգված արևելք-արևմուտք առանցքով, թաղածածկ: Սրանք հարավ-արևելյանի բացառությամբ, որ թերևս աղոթարան է, կամ կընքատուն, ավանդատուներ են: Այս տիպի, Ավանից ավելի ուշ կառուցված տաճարներում անկյունային սենյակները չունեն Ավանի անկյունային սենյակների բոլորակ ձևը, բոլորն էլ կամ քառակուսի են, կամ ուղղանկյուն-քառանկյունի: Նրանցից մի քանիսը արևելակողմից ունեն կիսաշրջան խորանաձև կլորացումներ: Արամուսի հարավ-արևելյան անկյունային սենյակի արևելակողմի կիսաբոլորակ խորշը վքաղեցնում է պատուհանատակ պատահատվածը միայն:

Արամուսում, Ավանի նման շքամուտքը արևմտակողմից է, դուռ կա նաև հարավից: Արամուսի ճակատների վրա չկան եռանկյունի հիմքով խորշեր, այդպիսիք չկային նաև Ավանում, սակայն առկա են հետագայում կառուցված մեր՝ այդ տիպի բոլոր հուշարձաններում: Ողջ վերոհիշյալը նկատի ունենալով, հետազոտողների մեծամասնությունը այն համոզման է, որ Արամուսը կառուցվել է Ավանից անմիջապես հետո և մյուս մնացածներից վաղ՝ VI դարի 90-ական թվականներին:

Ա. Բ. Երեմյանի կարծիքով Արամուսը պետք է կառուցված լինի ավելի վաղ, այսինքն՝ VI դարի կեսերին՝ Ավանին նախորդող շրջանում, երբ այնտեղ քահանա էր Զոշիկը: Դվինին հակաթոռ կաթողիկոս Հովհան Բագարանցին նախքան Ավանի կաթողիկոսական եկեղեցու կառուցման ավարտը, պետք է որ տեղավորված ու գործելիս լիներ Արամուսի Ծիրանավոր եկեղեցում:

Կիրակոս Գանձակեցին, Սամվել Անեցին և այլ պատմիչներ Արամուսի կառուցումը վերագրում են տեղացի կաթողիկոս Դավթին (728—741 թթ.): Այժմ ենթադրում են, որ Դավիթը ոչ թե կառուցել, այլ արաբների արշավանքներով ու տիրապետությամբ վնասված տաճարը նորոգել, վերականգնել է[60]: Ա. Բ. Երեմյանը տասից ավելի փաստեր է նշում իր «Հռիփսիմե...» աշխատության էջերում[61], հավաստելով Արամուսի վերականգնումը Դավթին վերագրելու և ո՛չ առաջին կառուցումը իրականացնելու թեզը:

Հուշարձանի կառուցման ժամանակը ճարտարապետական-արվեստագիտական վերլուծությամբ ճշգրտելու համար առավել ստույգ տվյալներ են պարունակում ինչպես ընդհանուր ծավալային հորինվածքը, գործադրված ճարտարապետական ձևերն ու այլ մանրամասներ, այնպես էլ կառուցվածքային եղանակները, ծածկաձևերը, այդ թվում և գմբեթատակ քառակուսուց գմբեթի հիմքի բոլորակին անցնելու մեթոդները: Ցավոք Արամուսի այդ դրվագներից կանգուն մասեր կամ ընկած բեկորներ, բացառությամբ արևելակողմում առկա դըրվագների, չկան. չունենք հնից եկող, մանրամասներին վերաբերող նկարագրություններ և ոչ էլ մոտ անցյալից մեզ հասած լուսանկարներ: Այս



Գծ. 26. Արամուս. հատակագիծ:



Գծ. 27. Արամուս. հատակագծի համաչափությունների վերլուծությունը:

պարագաներում մեզ մնում է Արամուսի հատակաձևը, տաճարի պատերից մասամբ պահպանված արևելյան հատվածը և այլ մնացորդներ համադրել Ավանի պահպանված մասերի հետ, նպատակ ունենալով որոշել այդ հուշարձանների կառուցման հաջորդականությունը:

VI—VII դարերի սահմանագծում հայտնագործված եռանկյունի կամ սեղանաձև հիմքով խորշերը տաճարների արտաքին ճակատների ձևավորման գործում այնպիսի հեղաշրջում առաջացրին, որ հետագայում կառուցված շինություններում բացառիկ դեպքերում միայն այդպիսիք չգործադրվեցին: Դրանցից խուսափել չէր լինում: Եթե Արամուսում այդ խորշերը չեն գործադրվել, նշանակում է հուշարձանը այդ ժամանակներից ավելի հին է: Սակայն հնարավոր է մտածել, որ այդ խորշերի փոխարեն Արամուսի արտաքին հոծ պատերի ներսում տեղավորվել են ներքին՝ փակ խորշեր, թաքստոցներ, որոնց մնացորդները այսօր էլ առկա են ավերակի հյուսիս-արևելյան անկյունում՝ հյուսիսային պատի մեջ: Այդ դեպքում ինչո՞վ բացատրել այդ եռանկյուն խորշերի բացակայությունը նաև արևելյան ճակատում, որի հոծ պատերի ներսում ներքին թաքստոցներ չկան: Հայտնի են հուշարձաններ, որոնց միայն արևելյան ճակատի վրա եռանկյունի խորշեր կան, այդպես էլ կարող էր լինել Արամուսում. նրանց լինելուն ոչինչ չէր խանգարի:

Երբ որպես ապացույց Արամուսի հնության նշվում են նրա մնացորդների վրա վարպետների նշանների գոյությունը, որոշ հետազոտողներ դրանք նկատի չեն առնում, հիշեցնելով, որ վարպետների նշաններ կան նաև ուշ, նույնիսկ IX—X դարերի հուշարձաններում, սակայն տվյալ դեպքում կարևորը ոչ թե ընդհանրապես այդ նշանների առկայությունն է, այլ նրանց տեսակները: Արամուսի հյուսիս-արևելյան անկյունում դեռևս մասամբ կանգուն պատերի վրա առկա վարպետների նշանները այնպիսին են, ինչպիսիք տեսնում ենք միայն ու միայն 6—7-րդ դարերին պատկանող հուշարձաններում: Ավելի ուշ հուշարձաններում ևս վարպետների նշաններ կան, բայց դրանք նման չեն նրանց, որպիսիք կան Արամուսում[62]: Այնպես որ Արամուսը Ավանի ժամանակներում կառուցված լինելու ամենահավանական թեզը ամրանում է նաև վարպետների կոնկրետ նշաններով: Այս արդեն այն-

պիսի կռվան է, որին անուշադրության մատնել անհնար է:

Ավանն ամբողջությամբ վերցրած, մնում է Արամուս-Հռիփսիմե տաճարների տիպի շրջանակներում, հանդիսանալով նրանց մի տարատեսակը, անկախ իր բազմագմբեթայնության, որով նա առավելապես հարում է լուսավորչավանդ ձևերին, ընդհուպ մոտենում Էջմիածնին, նրա այն բնույթին, որպիսին վերակազմել է Թ. Թորամանյանը, կենտրոնագմբեթ եկեղեցի՝ մեկ գլխավոր և չորս երկրորդական գմբեթներով:

Որոշ մասնագետների այն կարծիքը, որ իբր այդ տիպի հուշարձաններում անկյունային սենյակների բոլորաձևության փոխարեն Ավանին հաջորդող հուշարձաններում ուղղանկյունաձև կառուցելը հատակագծի հետագա պարզեցմանն ուղղված միջոցառում է, չի հիմնավորված: Եթե Ավանից և առաջ և հետո այդ սենյակները կառուցվել են ուղղանկյունաձև, հետևում է, որ Ավանում բոլորաձև կառուցելը եղել է կանխամտածված:

Արամուսի անկյունային սենյակների ոչ բոլորաձև, և ոչ էլ նույնիսկ քառակուսի լինելը, ինչպես և ավանդատների սովորական թաղային ծածկի առկայությունը հավաստում են, որ այդպիսիք ինքնուրույն մասունք չեն եղել և որպես գմբեթային առանձին ծավալներ տաճարի արտաքին հորինվածքում ամենևին չեն դրսևորվել: Այստեղից եզրակացվում է, որ Արամուսը միագմբեթ տաճար է: Անկախ դրանից, Արամուսի հիմքում ընկած է Ավանի հատակաձևը անկյունային սենյակների պարագծաձևերի տարբերությամբ հանդերձ: Որպես իրողություն, ակնբախ է, որ այդ եկեղեցիներում հատակաձևը ապրելով որոշ վարգացում, կրել է համեմատաբար ոչ մեծ ձևափոխություններ, մինչդեռ ծավալատարածական առումով ձևափոխությունները ակնառու են և դրանցից ամենագլխավորը՝ գմբեթների քանակի խիստ կրճատումն է: Այս ձևափոխությունը, թվում է, անխուսափելի էր, պայմանավորված երկու հանգամանքով: Նախ այն, որ սենյակների նշանակությունը Արամուսում փոխվել էր, փոխվել էին նաև նրանց հատակաձևերը, այս դեպքում արդեն ոչ մի անհրաժեշտություն չկար, որ նրանք ունենային ինքնուրույն գմբեթներ: Նրանց նույնիսկ ծածկերը պարզագույն ձևի տաշտանման թաղեր էին: Եվ ապա այն, որ անկյունային փոքր գմբեթները Ավանում շատ կուսպ էին արտահայտված. նրանք տաճարի ընդհանուր հորինվածքում նոր ու ազդեցիկ երանգներ չէին ստեղծում և, հետևաբար, նրանց անհետանալը այդ տեղերում կարող էր մնալ աննկատ:

Այսպիսով, հնարավոր է դառնում եզրակացնել, որ անկախ այդ ձևափոխություններից, Արամուսը մնում է որպես Ավանի տիպի հուշարձան, միաժամանակ՝ կամուրջ Ավանի և Հռիփսիմեի միջև:

Այս երկու՝ Ավան և Արամուս, ինչպես և հետագայում կառուցված տաճարների հատակագծերի համեմատությունից հնարավոր է դառնում եզրակացնել, որ դրանց ներքին տարածությունը գնալով շարունակում է ձգվել արևելք-արևմուտք առանցքով: Չափումներով ստացված թվերը առավել ճշգրիտ են արտահայտում իրերի ռեալ վիճակը, երբ այդպիսիք համեմատության մեջ ենք դնում գմբեթների ներքին տրամագծերի հետ: Որպես դրա արդյունք հայտնի է դառնում, որ Արամուսը Ավանի համեմատությամբ ունի մեծ ձգվածություն: Ավանում մեծ առանցքը հարաբերում է գմբեթի տրամագծին այնպես, ինչպես 1:1,19-ին, մինչդեռ Արամուսում այդ հարաբերությունը կազմում է 1:1,23: Այս ցույց է տալիս, որ Արամուսում գմբեթատակ քառակուսու համեմատությամբ, խաչաթևերը երկարած են, ըստ որում, այդ արտահայտվում է գմբեթատակ քառակուսու և արևելյան ու արևմտյան խորանների միջև առկա թաղածածկ տարածության՝ նախախորանների չափերում: Ուսումնասիրության արդյունքներով հայտնի է դառնում, որ այդ նախախորանները գնալով մեծանում են: Եթե Ավանում դրանց միջին չափը 116 սմ. է, ապա Արամուսում՝ 145 սմ.:

Այժմ պարզ դարձած երևույթներից է նաև այն, որ այս տիպի տաճարներում $^3/_4$ խորշերի տրամագծերը գնալով փոքրանում են: Եթե Ավանում այդ խորշերի տրամագծերը գլխավոր գմբեթի տրամագծից փոքր են ընդամենը 4,02 անգամ, ապա Արամուսում այդ թիվը կազմում է 5,65:

Այս տիպի, և ոչ միայն այս տիպի տաճարներում ներքին տարածությունը գնալով դառնում է բարձր, ճարտարապետական ձևերը՝ որմնամույթերը, խորանները, $^3/_4$ խորշերը ընդունում են առավել սլացիկ համաչափություններ:

Ավանում արևելյան խորանի բարձրությունն իր բացվածքի համեմատությամբ մեծ է 1,8 անգամ, Արամուսում՝ 2,5 անգամ: Ավանում որմնամույթերի

բարձրությունը լայնքի համեմատությամբ մեծ է 5,5 անգամ, Արամուսում՝ 12 անգամ:

Առավել հին տաճարներում ձևավոր կամարաղեղները միաժամանակ հանդիսանում են պատուհանների բարավորներ: Ճշտորեն այդպիսին է իրավիճակը Ավանում, մինչդեռ Արամուսում կամարաղեղը տեղադրվել է պատուհանի կորաձև բարավորից հետո՝ նրա վերևում: Միակ օրինակը Արամուսում պահպանվում է հուշարձանի արևելյան պատի վրա՝ հյուսիս-արևելյան ավանդատան պատուհանի վերևում (նկ. 14):

Ուշագրավ է, որ Ավանում, Արամուսում և Հռիփսիմեում որոշ կամարաղեղների կողադեմը նույնը լինելով, միմյանցից տարբերվում են իրենց ատամնաշարով, այն Արամուսում և Հռիփսիմեում երկշար է՝ շախմատային դասավորությամբ, մինչ Ավանում՝ միաշար:

Այս բոլորով ահա հնարավոր է դառնում գալու այն համոզման, որ Ավանը կառուցվել է Արամուսից վաղ:

Արամուսի հատակաձևի ստեղծման սխեման իր որոշ կողմերով Ավանից չի տարբերվում (գծ. 27). այն իրենով միաժամանակ հավաստում է տվյալ սխեմայի կանոնիկ լինելը, առնվազն նաև Ավանում:

Գմբեթատակ քառակուսին Արամուսում նույնպես ձգված է հյուսիս-հարավ առանցքով, նրա կողերի տարբերությունը 60 սանտիմետր է: Որպես սրա հետևանք, հիշյալ սխեմայի որոշ պատկերներ կազմելիս հիմք է ընդունվում փոքր տրամագծով շրջագիծը, մյուս պատկերները կազմելիս՝ մեծ տրամագծով շրջագիծը: Ահավասիկ՝ արևելյան և արևմտյան կիսաշրջանաձև խորանների կենտրոնները որոշվել են սխեմայի համապատասխան գծերը հիմնելով փոքր տրամագծով շրջագծի վրա, հյուսիսային և հարավային խորանների գագաթները՝ մեծ տրամագծով շրջագծի վրա: Փոքր տրամագծով շրջագծի վրա են հենվում նաև $^{3}/_{4}$ խորշերի կենտրոնների տեղը կանխորոշող գծերից առաջինները. երկրորդները սկիզբ են առնում կարճ առանցքի վրա տաճարի լայնքի $^{1}/_{3}$-ում և $^{2}/_{3}$-ում գտնվող կետերից:

Արամուս տաճարի տեղում լոկ ավերակ է մնացել, անհամեմատ ավելի վատ վիճակում, քան Ավանի ավերակը: Շինության ողջ պարագծով առկա է պատի միայն առաջին շարքը (հատակից վերև): Հյուսիս-արևելյան հատվածում՝ ավագ խորանից և երկու ավանդատներից կանգուն գոյատևում են պատերի և պատամիջի կրաբետոնե, վեց-յոթ մետր բարձրությամբ երեք պանգվածներ, որոնցից կառչած դեռևս իրենց տեղում կարելի է տեսնել երեսապատման քարեր, գլխավորապես ներսի կողմից: Դրսից հյուսիս-արևելյան ավանդատան կոր վերնամասով պատուհանի քարակերտ բարավորն է ու ձևավոր, պարզ կողադեմով ատամնաշար կամարաղեղը և էլի 4—5 քար:

Ավերակի չափագրության գծագրերը՝ հյուսիս-արևելյան մասի հատակագիծը, կանգուն պանգվածների ճակատները և այլ դրվագների պատկերներ կատարվել են ճարտ. Լ. Սադոյանի կողմից ու հրատարակվել Ա. Բ. Երեմյանի «Հռիփսիմէի տաճարը» աշխատության էջերում (գծ. 28—34): Տաճարի պահպանված մասի սխեմատիկ հատակագիծը առկա է Ն. Մ. Տոկարսկու «Հայաստանի ճարտարապետությունը IV—XIV դարերում» աշխատության 120-րդ էջում (նկ. 52բ):

Հուշարձանի ամբողջական հատակագիծ կազմվել է Գ. Քոչոյանի կողմից: Սույն աշխատության մեջ բերված տաճարի ամբողջական հատակագիծը (գծ. 26) կազմվել է տողերիս գրողի կողմից ավերակի նոր չափագրման հիման վրա:

## ԳԱՌՆԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ Ս. ԳԵՎՈՐԳ

Ավանի տիպի հուշարձաններից է Գառնահովիտ գյուղի ս. Գևորգ տաճարը (Աղիաման): Թորամանյանը այս հուշարձանի մասին գրում է. «Արագածի հարավ-արևմտյան բարձունքներուն վրա Թալինի շրջանի Փոքր գյուղի մեջ կանգուն է մի մեծ հոյակապ եկեղեցի անվրեպ 7-րդ դարու գործ. անհայտ է շինողը. արձանագրություններ չկան. ներքուստ խաչաձև է և անսյուն, լայնանիստ գմբեթ ունի»[63]:

Թորամանյանը թեթևի է հանձնում տաճարի



Գծ. 28. Գառնահովիտ. հատակագիծ:

արտաքին եկրագծի իր չափագրությունը, արևմըտյան ճակատի սեղանաձև հիմքով խորշերից մեկի և վերջինիս խորքում առկա կույգ սյուների մանրամասն գծագիրը, իր հայտնաբերած քարտաշ վարպետների 12 տիպի նշաններ և հուշարձանի ստորև բերվող կարճառոտ նկարագիրը: Նա գրում է. «Աղիամանի եկեղեցին ներքին կողմեն շատ նմանություն ունի Էջմիածնի մոտ Հռիփսիմեի վանքին, նույնիսկ գմբեթի մեջ շուրջանակի ունի մույլուրներով շինված բոլորակ վարդաձևներու շարքը, շուրջանակի, արտաքուստ ամեն կողմէ ունի խորշեր, բայց արևմտյան կողմը խորշերուն մեջ կեսեն քիչ ավելի բարձրությամբ կան կույգ սյուներ վրաները խոյակներով, խոյակներեն անմիջապես վերևը ուղիղ կիսաբոլորակ գոգավոր խորշ շինված է, կարծես արձաններ դնելու համար, որոնց պատվանդաններ պիտի լինեին կույգ սյուները: Այս կիսաբոլորակ խորշերեն մեկ հատ ալ շինված է արևելյան կողմը միջին ֆրանտոնին ներքև: Քիվեր և պատուհաններու պսակներ ըստ ամենայնի V—VII դարու հատկանիշներն ունին. հետաքրքրական են քիվին ճակատին վրա քանդակված վարդաքանդակները, որոնք շուշանածաղկի նմանություն ունին, իսկ այդ քանդակի ներքև երկրորդ մույլուրի թեք հարթության վրա քանդակված է բարձրաքանդակ երկրաչափական մի ձև, որ ստալակտիտի երևույթն ունի:

Հարավային և արևմտյան կողմեն ունի երկու դուռ, որոնք արտաքուստ կույգ որմնասյուներու վրա պսակված աղեղներ ունին, կույգ սյուներու խոյակները և խարիսխները, նույն տիպն ունին,

ինչ որ ուրիշ առհասարակ VII դարու շենքերուն վրա գտնված ձևերը: Գմբեթն ալ ունի խորշեր: Այս ձևին կպատկանի Մաստարայի եկեղեցվո գըմբեթը, որ հազիվ 7—8 կիլոմետր հեռավորության վրա է: Հավանորեն մեկըմեկե ազդված: Արձանագրություններ չեն երևիր, հավանաբար կորած պանական նորոգություններու ժամանակ, սակայն այնքան ալ լուրջ նորոգությանց հետքեր չեն երևեր. արևելյան ճակատին վրա կան քանի մը փակագիր արձանագրություններ:

Իսկ հարավային կողմը դռան աջ կողմի եռանկյունի խորշին մեջ կա շատ եղծված և անընթեռնելի դարձած արձանագրություն, որուն տառերուն ձևեն կենթադրվի, որ մոտավորապես XII—XIII դարերու տառեր են»[64]:

Գառնահովիտն իր չորս խորաններով, չորս $^{3}/_{4}$ խորշերով ու անկյունային չորս սենյակներով ամփոփված է 19,5 մետր երկարության և 15,70 մետր լայնության հատակագծային չափեր ունեցող ուղղանկյուն ծավալի մեջ (գծ. 28):

Հատակագծային կազմության առումով Գառնահովիտը բավական մոտ է Ավանին և նրանից տարբերվում է անկյունային սենյակների ձևով ու չորս ճակատների սեղանաձև հիմքով զույգ խորշերի առկայությամբ:



Գծ. 29. Գառնահովիտ. տաճարի ծածկը՝ տեսքը ներսից:



Գծ. 30. Գառնահովիտ. գմբեթային մասի հատակագիծ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն, որ մյուս հուշարձանների համեմատությամբ այս տաճարների՝ Ավանի և Գառնահովիտի հատակագծային կարևոր դրվագների չափային փոխհարաբերությունները միմյանց բավական մոտ են: Այստեղ ևս, ինչպես Ավանում, արևելյան և արևմտյան նախախորաններն այդ տիպի մյուս տաճարների նույն դրվագների համեմատությամբ ունեն փոքր խորություն, երեք քառորդ խորշերը՝ մեծ տրամագիծ, գմբեթատակ քառակուսին՝ զգալի չափեր:

Գառնահովտում անկյունային սենյակները ճիշտ քառակուսիներ են և իրենց արևելյան պատի վրա չունեն խորանաձև կլորացումներ: Հարավ-արևելյան սենյակի հյուսիսային պատի վրա կա քառակուսի փոքր խորության խորշ, հյուսիս-արևելյան սենյակի հարավային պատի վրա նույնպիսի մի խորշ, որի հատակը, սակայն խորանում է հոծ պատի ներսում, ենթադրել տալով, որ այն եղել է գաղտնարանի-գանձարանի նման մի բան:

Տաճարի մուտքերը երկուսն են, արևմուտքից և հարավից: Բոլոր խորաններն ունեն մեկական պատուհան: Անկյունային սենյակներից արևելա-

կողմիններն ունեն երկուական, արևմտակողմինները՝ մեկական պատուհան[65] (արևմտյան պատի վրա)։ Պատուհանները դեպի ներս առանձնապես շատ չեն լայնանում։

Արևելյան խորանում սեղանն ունի միջին բարձրություն. տաճարի կենտրոնական մասի սալահատակից այնտեղ են բարձրանում երեքական աստիճաններով։ Բուն սեղանը առաջանալով դուրս է գալիս խորանի և նախախորանի սահմաններից, ավելի քան մեկ մետրով։ Ի տարբերություն մյուս տաճարների, Գառնահովտում արևելյան խորանի առջևում առկա է «դաս» կոչվող հարթակը, որը մինչև տաճարի կենտրոնը հասնող մի կիսաշրջանաձև տարածություն է, ընդհանուր հատակից բարձրացած տասը սանտիմետրի սահմաններում։

Արևելակողմի անկյունային սենյակների և տաճարի կենտրոնական մասի հատակներն ունեն նույն բարձրությունը, մինչ արևմտակողմի սենյակների հատակները վերոհիշյալներից ցածր են 50—55 սանտիմետրով։ Այդ սենյակների և ³/₄ խորշերի միջև առկա է քսան սանտիմետր բարձրության և լայնության միջնորմ (այդտեղ աստիճանների հետքեր չկան)։

Տաճարի արտաքին պարագծով անցնում է եռաստիճան որմնախարիսխ, որի մեծ մասը՝ հատկապես արևելակողմից և հյուսիսակողմից ծածկված է հաստ հողաշերտով (և ընդհանրապես հողի մեջ է թաղված տաճարի արևելյան հատվածի ողջ ներքնամասը)։ Որմնախարիսխը արևմտյան և հարավային ճակատները (հավանաբար նաև մյուս ճակատները) շրջանցելիս, կրկնում է արտաքին պատի պարագիծը՝ սեղանաձև հիմքով խորշերից ներս մտնում ու դուրս է գալիս լիակատար կանոնավորությամբ։

Մասնագիտական գրականության մեջ[66] նշվում է, որ Գառնահովտում արևմտյան երկու սենյակներն իրենց արևմտակողմից ունեն առանձին դռներ։ Իրականում այդտեղ դռներ չկան, սակայն այնտեղ, որտեղ պիտի նշած դռները լինեին, պահպանվում են հորիզոնական դիրքով դրված վգալի երկարության քարեր, վրաները քանդակված փարդյակներ և հավասարաթև խաչեր, առնված շրջագծի մեջ[67], որոնք երբեմնի եղած դռների բարավորները լինելու հավակնությունն ունեն։ Ահա այդ, որպես բարավորներ ընդունված քարերից ցած, պատի, ինչպես և որմնախարիսխի նորմալ շարվածք է, ու երբեմնի եղած դռների հետքեր բնավ չկան։ Դեռ ավելին, բարավորներ ենթադրվող այդ քարերի ճիշտ կրկնօրինակը, համեմատաբար, քայքայված վիճակում առկա է տաճարի նաև արևելակողմում ճակատի կենտրոնական հատվածի ներքնամասում։ Իսկ այս վերջինի տակ դռան հետքեր կան, թե չկան, հնարավոր կլինի պարզել տաճարի շրջապատը լիցքից մաքրելուց հետո միայն։ Պարզ է, որ արևելյան խորանն այդ կողմից դուռ չպիտի ունենար։ Այդտեղ դուռ լինելու դեպքում, այն պիտի տաներ **սեղանի տակ, թերևս որևէ սրբի դամբարան**, մանավանդ որ արևելյան խորանի կիսաշրջանի սահմաններում հատակը անսովոր բարձր է։

Կարևոր է իմանալ, որ ողջ տաճարի վրա և, հատկապես վերևում հիշվող խաչաքանդակ քարերի շուրջը նորոգումների հետքեր խսպառ չկան։ Թերևս ենթադրվի, որ դռներ ունենալու անհրաժեշտությունը հայտնի է դարձել այն ժամանակ միայն, երբ կառուցվող տաճարի պատերն արդեն բարձրացած են եղել մինչ բարավորներ համարվող քարերը, շարի աշխատանքները շարունակվել են, բարավորները դրվել, դռներ բացելու գործը թողնվել է ապագային, որին սակայն այլևս չեն անդրադարձել։

Գառնահովտի հատակաձևում առկա է նախանձելի կանոնավորություն, մի բան, որ չենք տեսնում մյուս հուշարձաններում։ Այստեղ արևելյան և արևմտյան խորաններն ունեն նույն՝ 416—417 սմ. լայնքը, հյուսիսային և հարավային խորանները համապատասխանաբար՝ 317 և 310 սանտիմետր լայնք։ Երեք քառորդ խորշերի տրամագիծը ամենուրեք 255—257 սմ. է, անկյունային սենյակները լիակատար քառակուսիներ են, որոնց կողերն ունեն 273—276 սմ. չափեր։ Նույն՝ 462—464 սմ. լայնքն ունեն արևելյան և արևմտյան նախախորանները։ Բոլոր ութ որմնամույթերն ունեն նույն՝ 80—82 սմ. լայնքը[68]։

Լիակատար կանոնավոր է գմբեթատակ քառակուսին, հանդիպակաց որմնամույթերի միջև տարածությունը երեք դեպքում 8,30 մետր է, մի դեպքում՝ 8,26 մետր։ Քառակուսու անկյունագծային չափերը ևս նույնն են։ ³/₄ խորշերը և անկյունային սենյակները կապող դռներն ունեն նույն 76 սմ. լայնքը։ Ամենուրեք ³/₄ խորշի կողմից դռների բարավորներն ուղիղ են, անկյունային սենյակների կողմից՝ կամարակապ։ Այս միանգամայն հասկա-

նալի է ու տրամաբանական, 3/4 խորշի կողմից բարավորը կամարակապ ստեղծելու դեպքում, այն կունենար բարդ՝ երկկոր ձև, համեմատաբար դըժվար իրականացվող: Տաճարի բոլոր ճակատներում խորշերի հիմքը կանոնավոր սեղանաձև է՝ երկու էջերը միմյանց հավասար՝ նույն անկյան տակ, նրանց չափերն են 95, 95; 109, 109; 112, 112 սմ. (գծ. 31, 34, ՆԿ 15, 16, 18):

Անկախ այն բանից, որ տաճարի արևմտյան դուռը լայն է հարավային դռնից (համապատասխանաբար 155 սմ և 123 սմ), նրանք մշակված են միաձև: Մուտքերի աջ և ձախ կողմերում 48 սմ. ընդհանուր լայնքով, 35 սմ. առաջացած պատերի ճակատներին ձուլված, իրենց խարիսխների վրա բարձրանում են քսանական սմ. տրամագծով կույգ կիսասյուներ (միմյանց միջև ունենալով 7—8 սմ ապատ տարածություն):

Շքամուտքերի երկու կողմերի ընդհանուր խոյակները իրենց վրա երբեմնի կրել են կամարակապը ճակտոնաձև վերնամասով, որն այժմ չկա, պատի հարթության վրա մնացել են դրանց հըպման հետքերը: Բուն դռները ուղղանկյունի են, բարավորները՝ միակտոր մեծ քարեր:

Գառնահովտի հատակաձևի կազմավորման սխեման իր հիմնական կողմերով գրեթե կրկնում է նախորդներին, թերևս ավելի կատարյալ ձևով, սակայն և ունի շեղումներ (գծ. 37): Սրա ներքին համաչափությունները Ավանի, Արամուսի և Վարագվանքի համեմատությամբ ավելի ձգված են հատկապես արևելք-արևմուտք առանցքով: Անկախ նրանից, որ արևելակողմի և արևմտակողմի խորանների տրամագծաչափը նույնպես հավասար է գմբեթի ներքին տրամագծի կեսին, սակայն այդ խորաններն իրենց նախախորաններով գմբեթատակ քառակուսուց հեռացած են գմբեթակիր կամարների լայնքի չափով, որ հավասար է 36 սանտիմետրի: Այս նշանակում է, որ տաճարի ներքին երկարությունը գմբեթի ներքին տրամագծաչափի կրկնակիից ավելի է 72 սանտիմետրով: Թերևս սրանով էլ կանխորոշվել է, որ հյուսիսային ու հարավային խորանների գագաթները ընկնում են արևելյան և արևմտյան խորանների կենտրոններով անցնող շրջագծի վրա: Այս բանը հետագա կառուցվածքներում հաճախ կրկնվող կանոնիկ երևույթներից է, որն առաջին անգամ հանդիպում է այստեղ՝ Գառնահովտում:



Գծ. 31. Գառնահովիտ. արևելյան ճակատ:

Մի քանի այլ հուշարձանների նման, այստեղ նույնպես արևելյան և արևմտյան խորանների գագաթնակետերը հյուսիսային և հարավային խորանների կենտրոններին միացնող գծերը տաճարի երկար առանցքի հետ կազմում են 30°-ի անկյուն:

Տաճարի հյուսիսակողմի 3/4 երկու խորշերից յուրաքանչյուրի կենտրոնը գտնվում է այն երկու գծերի խաչմերուկում, որոնցից մեկը սկսվելով արևելյան կամ արևմտյան խորանի գագաթնակետից, ձգվում է աջ կամ ձախ, տաճարի երկար առանցքի հետ կազմելով 45°-ի անկյուն, մյուսը, որ սկսվելով տաճարի կենտրոնից կարճ առանցքի վրա կես շառավղաչափ հեռու գտնվող կետից, այդ առանցքի հետ 30°-ի անկյուն կազմելով, ձգվում է աջ ու ձախ:

Տաճարի հարավակողմի 3/4 խորշերի կենտրոնները մյուսների նկատմամբ ինչ-որ չափով շեղված լինելու հետևանքով, հիշյալ երկու գծերի խաչմերուկից հեռացած են 20—25 սանտիմետրով:

Հետաքրքրական է, որ այս տաճարում ավանդատների արևելակողմի և արևմտակողմի լուսամուտները ընկնում են տաճարի կենտրոնից երկար առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերի վրա:



Գծ. 32. Գառնահովիտ. արևմտյան ճակատ:

Գառնահովիտը ներքին տարածական, արտաքին ծավալային և հարթությունների պլաստիկ մըշակման առումով ևս մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Շինության հիմնական ծավալը, որ հիմքում ուղղանկյուն-քառանկյունի է, 9 մետր բարձրության վրա ավարտվում է պարզ, միջին բարձրության քիվով, որի ճակատային հարթությունը մշակված է կամարիկների շարքով: Հարավային և հյուսիսային ճակատների թևային մասերում այդ քիվն ունի հորիզոնական դիրք, արևելյան և արևմտյան ճակատներում՝ թեք, թելադրված անկյունային սենյակների տանիքների դիրքով:

Տաճարի բոլոր ճակատներում, առկա են սեղա-

նաձև հիմքով երկուական խորշեր, որոնք վերևում ավարտվում են անկարդ, հատած կիսակոնով: Արևելյան հյուսիսային և հարավային ճակատների խորշերը միաձև են, արևմտյան ճակատի խորշերը նախորդներից տարբերվում են միայն նրանով, որ իրենց ներքնամասում ունեն կույգ սյուներ (խարիսխով և խոյակով)[69], իսկ վերնամասում նոր խորշեր, որ հիմքում կիսաշրջանաձև են, իսկ ծածկը՝ գմբեթարդ է: Այս խորշերի, հատկապես աջակողմյանի վերնամասում երևում է գմբեթարդ ծածկի եզրահատվածը (գծ. 32, նկ. 18):

Ինչպես այս, այնպես էլ ճակտոնների խորշերում (տե՛ս ստորև), թերևս դրված են եղել տաճարի մանրաքանդակը և քարակերտ խաչեր, որոնց հետքերը չեն պահպանվում:

Ճակատների կույգ խորշերի միջև ամենուրեք խորանների մեծադիր պատուհաններն են, իսկ արևմտյան և հարավային ճակատներում հիշյալ պատուհաններից ցած՝ տաճարի շքամուտքերը, որոնցից գլխավորը արևմտյանն է: Ճակատների թևային մասերում ավանդատների պատուհաններն են և բոլորն էլ ունեն քանդակված կամարաղեղներ (նկ. 22, 23, գծ. 38, 39):

Այս տիպի տաճարներում ներքին տարածության խաչաձև կազմությունը առավել ակնբախ դրսևորվում է շինության տանիքից վերև՝ խաչաթևերի բարձրացած ծավալներով:

Այն բոլոր տաճարներում, որտեղ խաչաթևերը իրենց վերնամասում ավարտվում են ճակտոններով, խորանների գմբեթարդ ծածկերի վերևում՝ երկթեք տանիքների տակ առաջանում են որոշ դատարկություններ, որոնց չափերը երբեմն պգալի լինելով, օգտագործվում են, որպես գաղտնարաններ և այլ նպատակներով:

Ճշտորեն այդպիսի վիճակ գոյություն ունի Գառնահովտում: Այստեղ հյուսիսային և հարավային խորանների գմբեթարդ ծածկերը գտնվում են մյուսների համեմատությամբ, ցածր դիրքում, հետևաբար նրանց վերնամասում առկա դատարկությունները ավելի բարձր են, քան մյուս խորանների վերևում եղածները (գծ. 35, 36):

Գմբեթավոր բազիլիկ կամ գմբեթավոր դահլիճներում, գմբեթի տրամագիծը պայմանավորված է միջին նավի կամ գլխավոր սրահի լայնքով: Միջին նավի վերնամասը իր երկթեք տանիքով ունենում էր գմբեթի լայնքը, նույնպիսի լայնք էր ունենում նաև կողային թևերով ստեղծված լայնական նավը:

Այսպիսով, գմբեթը գրավում էր երկայնական և լայնական նավերի (թևերի) խաչմերուկի կենտրոնը, տրամագիծ ունենալով մի չափ՝ հավասար խաչաթևերի լայնքին:

Տանիքի վերևում ստացվող այս ձևը ժառանգաբար անցել է Ավան-Հռիփսիմեի տիպի մեր բոլոր հուշարձաններին, անկախ այն բանից, որ գմբեթներն այստեղ խորաններով ստեղծված խաչաթևերից լայն են: Գառնահովտի կառուցողը խաչաթևերի ճակտոնների վերջավորություններում փոքր բարձրության և անօգտագործելի տարածություններից հրաժարվելով, տանիքից վերև խաչաձևն ստեղծող ծավալները սահմանափակել, դրանց տվել է խորանների լայնքով թելադրված չափ (գծ. 30): Որոշ հուշարձաններում ճակտոնների հետևում առաջացած հիշյալ դատարկությունները բոլոր կողմերից փակված լինելով, չէին օդափոխվում. այնտեղ կարելի էր բարձրանալ $^3/_4$ խորշերի կամ անկյունային սենյակների ծածկերում թողնված, կամ էլ հետո փորված-բացված անցքերից փայտե շարժական աստիճաններով, թերևս և այլ միջոցներով:

Գառնահովտի ճարտարապետը իր կառույցում այդ դատարկությունները ոչ միայն օդափոխել, այլև լուսավորել է դեպի տաճարի ներսը, հիմնական առանցքների ուղղությամբ, խորաններից վերև բացելով շրջանակներով ձևավորված չորս բոլորակ անցքեր:

Գառնահովիտը ճակտոններում գմբեթարդ ծածկով խորշերի առկայությամբ և տանիքից վերև խաչ ստեղծող ծավալների, գմբեթից պակաս լայնք ունենալու հանգամանքով, ինչ որ չափով տարբերվում է այդ տիպի մյուս տաճարներից:

Գառնահովտի չորս թևերի խաչմերուկի վրա վեր է բարձրանում մի շքեղ գմբեթաթմբուկ, այն եզակիներից մեկը, որ անաղարտ պահպանվում է կառուցման օրվանից ի վեր: Գմբեթաթմբուկի ձևերում անդրադարձում են գտել տաճարի առաջին աստիճանում գործադրված ձևերը, որոշակի վերամշակումով, որով հնարավոր է դարձել սերտ ընդհանրություն և կապ պահպանել ստորին մեծ և վերին փոքր ծավալների միջև: Նման հարակատ ու ներդաշնակ հարաբերություն, որ առկա է Գառնահովտի երկու կարևոր մասերի միջև, ճարտարա-



Գծ. 33. Գառնահովիտ. ճարավային ճակատ:

պետության ոչ շատ հուշարձաններում է հնարավոր տեսնել (նկ. 18. գծ. 31—34):

Գմբեթաթմբուկը Գառնահովտում ութ նիստ ունի և այդ նիստերի հատած անկյուններում ութ եռանկյունի հիմքով խորշեր: Հիմնական առանցքներով կանգնած նիստերի վրա կույգ պատուհաններ են, անկյունագծային նիստերի վրա՝ կենտ, ընդամենը 12 հատ: Ըստ որում, կույգ պատուհանները, որ գտնվում են խորանների գլխավերևում, իրենց չափերով գերազանցում են բարձր տրոմպների գլխավերևում նստած կենտ պատուհաններին: Թե կույգ, թե կենտ պատուհանների կիսաշրջան բարավորների ու նրանց երիկող հորիկոնական մասեր ունեցող քանդակազարդ կամարաղեղների կենտրոնները գտնվում են մի բարձրության վրա, կույգ պատուհանները կենտ պատուհաններից քարի մի շարքով շուտ են սկսվում և այդ չափով էլ երկար են: Գմբեթի եռանկյունի հիմքով խորշերի կիսակոնաձև վերնամասը պատուհանների բարավորներից երկու շարքով բարձր է:

Գմբեթաթմբուկը պսակող քիվի ճակատային մասով անցնում է կամարիկների շարք: Քիվի վրա բարձրանում է ևս քարի մի շարք, իսկ վերջինիս եզրից սկսել ու բարձրացել է բրգաձև տանիքը,

որը ներկայումս չկա, կործանվել է կիսագնդաձև գմբեթաթաղի մեծ մասի կործանման հետ միասին. պահպանվում է կիսագնդաձև գմբեթածածկի ստորին երեք-չորս շարքը միայն:

Գառնահովտի գմբեթի մշակման գործում ճարտարապետը ի հայտ է բերել նուրբ ճաշակ և կատարողական ըգալի վարպետություն:

Որպեսզի գմբեթը իրեն ձևերով ու մասերի համաչափությամբ ներդաշնակեր տաճարի հիմնական՝ ստորին օրգանիզմին, ճարտարապետը չէր կարող 8,3 մետր ներքին տրամագծով պայմանավորված ըգալի չափերի գմբեթի ութ նիստերից միայն չորսի վրա ունենալ մեկական փոքր պատուհան: Չէ որ այդ դեպքում գմբեթը կընկալվեր անմասշտաբ, ծանր ու փակված, ավելի ասկետիկ, ինչպես որ է այդ տիպի, որոշ, նույնիսկ հայտնի տաճարներում:

Գառնահովտի գմբեթի անկյունագծային նիստերի վրա ևս հնարավոր էր երկուական լուսամուտ ունենալ. նիստերի միանման լուծումով, գմբեթը առանձին վերցրած, թերևս առավել միասնական երևար, սակայն նրբանկատ կառուցողը այդ չի արել, թողել է, որ զույգ պատուհաններով նիստերի միջև կենտ պատուհանով նիստերը իրենց հարթ պատերի հանգստությամբ հարմար կապ և անցում լինեն:

Գառնահովտի կառուցողը գմբեթի նիստերի հանդիպումներում լոկ անկյուններ ունենալու փոխարեն, ստեղծել է եռանկյունի հիմքով և կիսակոնաձև վերնամասով, հաճելի համաչափությամբ և հստակ վարպետությամբ իրականացված խորշեր: Այս պայմաններում գմբեթաթմբուկի նիստերը լայնական նոր չափեր են ստանում, դառնում առավել օրգանական, համահնչուն տաճարի մյուս մասերի հետ:

Գառնահովտի գմբեթում ամենևին էլ չկա ոմանց ակնարկած տարբեր ձևերի ինչ-որ կուտակում: Այստեղ ամեն ինչ արված է մտածված, անհրաժեշտ տակտով ու չափի ըգացումով, որի շնորհիվ գմբեթն ամբողջությամբ վերցրած, թե՛ անխառն ձևերով, թե՛ հետաքրքիր լույս ու ստվերով հնչում է ողջ ուժով, մի հաճելի տպավորություն, որը հարատևում է մարդու հիշողության մեջ:

Հետաքրքիր է, որ ճարտարապետական մի քանի ձևերի որոշակի ընդհանրություն գոյություն ունի Գառնահովտի և, ընդամենը 6—8 կիլոմետրի վրա գտնվող հայտնի Մաստարա եկեղեցու գմբեթների



Գծ. 34. Գառնահովիտ. Հյուսիսային ճակատ:

միջև, դրանց ինչպես ներսում, նույնպես և դրսում (նկ. 17):

Երկուստեք՝ և Մաստարայում, և Գառնահովտում գմբեթի կիսագնդաձև ծածկի հիմքով անցնում է պարզ կողադեմով վահանակների (бляшка) շարք. ըստ որում, եթե Մաստարայում դրանք գմբեթի դեկորատիվ խաչ կազմող ճառագայթների շրջանաձև վերջավորություններն են (մեկական վահանակ էլ, համեմատաբար փոքր տրամագծով, առկա է անկյունագծային ուղղության պատուհանների վերևում՝ խաչաթևերի միջև), ապա Գառնահովտում այդ շարքի վահանակները միմյանց շատ մոտ են, բայց չեն շոշափում: Այստեղ ևս, ինչպես Մաստարայում դեկորատիվ խաչաթևերը վերջանում են մեկական վահանակներով (գծ. 35, 36, նկ. 21):

Ճիշտ և ճիշտ նույնպիսին է վահանակների շարքը և խաչաթևերի վերջավորությունը Թալինի կաթողիկե եկեղեցու գմբեթում: Այդ վահանակները Հռիփսիմեի գմբեթում ունենալով ավելի մեծ տրամագիծ, միմյանց շոշափում են: Այստեղ դեկորատիվ խաչի վերջավորություններում վահանակ չկա: Դրանք վերջանում են կիսակորով:

Մաստարայում ևս, ինչպես Գառնահովտում գմբեթաթմբուկի արտաքին նիստերի հանդիպման տեղերում սովորական անկյունների փոխարեն առկա են եռանկյունի հիմքով խորշեր: Այս վերջիններս, սակայն, իրենց վերնամասի լուծմամբ տար-



Գծ. 35. Գառնահովիտ. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով:

բերվում են Գառնահովտի նույն դրվագից: Այս խորշերի վերևում նույնպես առկա են կիսակոնաձև տրոմպանման դրվագներ, սակայն դրանք կգալի փոքր են և կիսով չափ միայն վերևից սահմանափակում են այդ խորշերը: Դրանցից՝ այդ փոքր տրոմպներից վերև խորշերը շարունակվում են՝ ընդունելով արդեն սեղանաձև հիմք, վերևից չունենալով որևէ ծածկ: Ճշտորեն այդ եզրագծով էլ անցնում է գմբեթաթմբուկը վերևից պսակող կամարիկներով մշակված քիվը: Գառնահովտի նման Մաստարայում նույնպես քիվից վերև առկա է երկու շարքի բարձրության պատ, որի եզրից էլ սկիզբ է առել գմբեթի կոնաձև տանիքը: Այստեղ նիստերից յուրաքանչյուրի վրա մեկ պատուհան է, ընդամենը ութ հատ:

Ոմանք Մաստարայի (ինչպես և Գառնահովտի) գմբեթի եռանկյունի հիմքով խորշերը ընդունում և անվանում են թեթևացնող երևույթ, սակայն այդ չէ այդ խորշերի իսկական դերը. այդ թեթևացումները համեմատաբար չնչին են և կրող կառուցվածքների համար աննշան: Այդտեղ ճարտարապետը տաճարի հիմնական ոչ մեծ մարմնի վրա բարձրացրել է բավական մեծ տրամագծի գմբեթ: Եթե հիշյալ խորշերը չլինեին, այդ գմբեթը, ակներև անմաշտաբ, շատ ծանր ու ճնշող տպավորություն պիտի թողներ, մանավանդ եթե նկատի առնելու լինենք տաճարի ստորին ծավալի ոչ ընդհանրական հորինվածքը: Այդտեղ հիմքում խաչաձև տաճարի խորանները արտաքին բազմանիստ կազմությամբ դուրս են գալիս կենտրոնական խորանարդի պարագծերից: Տաճարի ներքին բովանդակությունը, ներքին տարածական ձևերը ճշտորեն արտահայտվում են արտաքին ընդհանուր հորինվածքում: Եվ ահա վերոհիշյալ խորշերի շնորհիվ գմբեթի որոշակիորեն արտահայտված նիստերը իրենց համաչափություններով լիակատար ներդաշնակում են ստորին ծավալի առանձին դրվագների և նրանց մասերի՝ տվյալ դեպքում՝ խորանների և նրանց նիստերի հետ: Տարակույս չկա, որ ճարտարապետը կանխամտածված է խորանների ճակատային նիստերը մյուսների համեմատությամբ լայն վերցրել: Այս միջոցառումները՝ մի կողմից եռանկյունի խորշերով գմբեթաթմբուկի նիստերը միմյանցից պատելը, և մյուս կողմից, խորանների ճակատային նիստերը լայնացնելը, գմբեթը օրգանապես կապել են տաճարի ստորին ծավալի հետ, խորթության ոչ մի նշույլ չթողնելով նրանց միջև:

Գառնահովտի և Մաստարայի ընդհանուր, ինչպես և որոշ մանրամասերի ու, հատկապես գմբե-



Գծ. 36. Գառնահովիտ. կտրվածք արևելք-արևմուտք առանցքով:

թաթմբուկների համեմատությունից հնարավոր է եզրակացնել, որ նախ կառուցվել է Մաստարան, ապա Գառնահովիտը: Մաստարայի կառուցման ժամանակը ընդունելով VI դարի վերջերը, Գառնահովտի կառուցման ժամանակը պետք է համարել վեցերորդ և յոթերորդ դարերի սահմանագիծը:

Շատ հնարավոր է, որ եռանկյունի հիմքով խորշերը սկզբնապես ստեղծված լինեն հենց Մաստարայի գմբեթաթմբուկում: Այստեղ դրանք, թեև վարպետորեն կերտված, ինչ-որ չափով նախնական են:

*

* *

Գառնահովիտ տաճարի ներքին տարածությունը հոյակապ է, տպավորիչ, այն ընդարձակ է, բարձր, ձևերը՝ հստակ և կանոնավոր, առատորեն լուսավորված. այստեղ ամեն ինչ իրականացված է կգացումով, սիրով:

Այս տիպի մյուս տաճարներից շատերի նման Գառնահովտում ևս արևելյան և արևմտյան խորանները հյուսիսային և հարավային խորաններից լայն են ու խոր, ինչպես և բարձր: Այս հանգամանքը ներքին համաչափություններում ամենևին էլ բացասաբար չի արտահայտվում, ընդհակառակը, ոչ միայն առանձնակի հետաքրքրություն է ստեղծում, այլև ճշտում և հասկանալի է դարձնում տաճարի առանձին հատվածների ֆունկցիոնալ նշանակությունը, կողմնորոշում, ուղղություն տալիս ներս մտնողին, այս վերջինս էլ ուշադրությամբ սևեռվում է դեպի գլխավորը՝ արևելյան խորանը՝ ուր և սեղանն է, ուր և արարողությունն է կենտրոնացված, ինչը տեսնելու և մասնակցելու համար է եկել տաճար մտնողը:

Խորանների միաչափությունը, որ միօրինակության հիմքն է, տաճարի ներսում այլ միջոցներով կանխամտածված, միշտ էլ, ըստ էության, քողարկվում, խախտվում է հանուն բովանդակության ճշգրիտ արտահայտման: Հենց այդ նպատակի՝ խորանների դիֆերենցման մարմնավորման արդյունք պիտի համարել նախախորանների առաջանալը արևմուտք-արևելք առանցքի վրա:

Խորաններից հետո, ներքին տարածության կազմակերպման կարևոր տարրերից են 3/4 խորշերը, որոնք Գառնահովտում բավական մեծ են,




Գծ. 37. Գառնահովիտ. հատակագծի համաչափությունների վերլուծություն

սակայն իրենց բացվածքի կուսպ չափերով և վերնամասի յուրովի լուծմամբ որևէ չափով չեն խոչընդոտում կարևոր մասերի՝ խորանների լիակատար հնչեղությանը ներքին ընդհանուր տարածության ներդաշնակության մեջ: Այս տիպի հուշարձաններից շատերում, այդ թվում և Գառնահովտում 3/4 խորշերն իրենց բացվածքներով ճշտորեն չեն ուղղված գմբեթատակ քառակուսու կենտրոնին, այլ թեքված են: Ահավասիկ՝ հայկական այդ տիպի տասը հուշարձաններից վեցում և վրացական յոթ հուշարձաններից հինգում 3/4 խորշերը ավել կամ պակաս չափով իրենց մեկ քառորդ բացվածքով թեքված են դեպի մեծ առանցքը. բացառություն չեն կազմում այդպիսիք նույնիսկ աստղաձև Նինոծմինդայում և անկյունային սենյակներ չունեցող հին Շուամթայի փոքր եկեղեցում: Առավել թեքվածների թվում են Ավանի հարավ-արևելյան խորշը, Գառնահովտի և երկու Շուամթաների խորշերը: Ակներև է, որ 3/4 խորշերի թեքվածությունը հատուկ է առավել հին հուշարձաններին, մինչ ուշ կառուցված հուշարձաններում այդ խորշերը թեքվածություն չունեն:

**Երեք-քառորդ խորշերի գլխավոր դերը, դրանց գործնական նշանակությունը, ինչպես հայտնի**




Գծ. 38. Գառնահովիտ. ճարավային խորանի պատուհանի ՄՈՎՍԷՍ անունը կրող արտաքին պսակը։

**դարձավ նախորդ էջերում, անցման ռացիոնալ կազմակերպումն է տաճարի կենտրոնական տարածության և անկյունային սենյակների միջև։** Այս առումով դրանց ուղիղ կամ որոշ չափով թեքված լինելը առիթ չէ երևույթի բացասական գնահատման։ Տվյալ իրավիճակում կապը մեծ ու փոքր տարածությունների միջև հարմար է, բնական։

Կոնստրուկտիվ առումով ևս խորշերի այդ կարգի թեքվածությունը որևէ չափով չի անդրադառնում առանձին դրվագների, տվյալ դեպքում անկյունային մասերի նորմալ աշխատանքի վրա։

Երեք-քառորդ խորշը, ընդհանրապես և նպատակային առումով, չի հանդիսանում գմբեթային փոխանցման համակարգի անկապտելի մասը, հետևաբար ուղիղ կամ թեքված, չի անդրադառնում հիշյալ համակարգի անմիջական դերի որևէ կողմի վրա։

Երեք-քառորդ խորշի եկրակամարի վրա բարձրացող ճակատային պատը իր գոյությամբ գմբեթային փոխանցման համակարգի առաջին աստիճանում կիսակոնաձև տրոմպը դարձնում է հատած տրոմպ։ Եվ քանի որ այդ տրոմպները՝ լրիվ, թե հատած, վերևից եկած ծանրությունը ստորին պատերին են փոխադրում միևնույն հաջողությամբ, հետևաբար ճակատային պատի բացակայությունը որևէ չափով չի թուլացնում գմբեթային փոխանցման համակարգի, որպես կոնստրուկտիվ կարևոր տարրի կրողունակությունը։

Երեք-քառորդ խորշերի թեքվածությունը, թերևս այս կամ այն չափով վնասում է տաճարի ներքին տարածության, տվյալ տիպին հատուկ կանոնավորությանը։ Ակներև խախտված է ճարտարապետական ձևերի սիմետրիկ դասավորությունը առանցքներից մեկի կամ մյուսի նկատմամբ, և ոչ ավելին

Ողջ վերոհիշյալով պարզ է դառնում հետազոտողներից մի քանիսի $^3/_4$ խորշերի թեքվածության առիթով Գառնահովտի վերաբերյալ արտահայտած բացասական որակումների, ըստ էության, ոչ ճշգրիտ լինելը։

Անընդունելի, անպատշաճ է ասել, առավել ևս գրել թե Գառնահովտի՝ «այդ տիպին գավառական, որոշ առումներով պակաս գրագետ» հուշարձանի «կառուցողը չի ունեցել $^3/_4$ խորշերի իմաստի հասկացությունը» կամ «...չի ըմբռնել ողջ շենքի կոնստրուկտիվ համակարգի իմաստը», «ակնբախ է նրա փոխանցման առանձնահատկության անհասկացողությունը» և այլն[70]։

Իր Հայաստանի IV—XIV դարերի ճարտարապետությանը[71] նվիրված աշխատության մեջ Ն. Մ. Տոկարսկին Գառնահովիտ եկեղեցու մասին գրում է. «Այստեղ հիմնական ճարտարապետական գաղափարը միջակ կարողության տեր վարպետի կողմից բավականաչափ չհասկացվելու հետևանքով

վրա են հասել մի շարք անհաջողություններ, առավել խորացած ճակտոնների վերնամասում խորշի ձևով անտեղի կուտակված մանրամասների գործադրումով:

Սակայն հիմնական թերությունը արտահայտվել է գմբեթի տակ՝ եկեղեցու կենտրոնական մասի սխալ մշակումով: Այստեղ անկյունային երեք քառորդ խորշերը անկյունագծից թեքված են դեպի հյուսիս և հարավ, դրանով էլ դուրս են մնացել կենտրոնական ծավալից, լինելով նրա անանջատելի մասը, **վեր են ածվել ավանդատները տանող անցումների:** Այդ պատճառով էլ նրանց կամարները, սովորականին հակառակ, չեն մտնում գմբեթով թմբուկը կրող համակարգի մեջ, և ճարտարապետին մնացել է դիմել թմբուկի փոխանցման ամբողջովին արհեստական լուծման՝ անկյուններում չորս ինքնուրույն տրոմպների գործադրման:

Ադիամանի եկեղեցին կարելի է թվագրել VII դարի երկրորդ կիսով[72], նկատի առնելով այն, որ եկեղեցական ճարտարապետության մեջ VII դարի ողջ ընթացքում առկա հատկանիշներին կուգընթաց, այստեղ կա մի մանրամասն՝ սյուներ հիմնական խորշերում, որ ի հայտ են եկել դարի լրկ երկրորդ կեսի ընթացքում (Թալինի կաթողիկե, Եղվարդի Զորավոր եկեղեցի) :

Այդ ժամանակներում տրոմպները իրենց դերը վիջում են կորաձև առագաստներին, սակայն թըմբուկի անցման հին ձևի պահպանումը Ադիամանում կարելի է բացատրել տեղային վարպետի ոչ բավականաչափ փորձվածությամբ:

Ադիամանի եկեղեցին, անկախ նրա բոլոր թերությունների, ուշադրության է ներկայացվում, որպես օրինակ գավառական վարպետների ձգտման ճարտարապետական բարդ խնդիրների լուծման գործում»,— ավարտում է իր խոսքը Ն. Տոկարսկին:

Պարզ է, սակայն, որ $^3/_4$ խորշերի բացվածքների թեքվածությունը, նրանց գմբեթարդ ծածկի եկրակամարի չմասնակցելը գմբեթային փոխանցման համակարգին և կամ հատած տրոմպի փոխարեն լիակատար տրոմպի գործադրությամբ գմբեթային փոխանցման իրականացումը, բոլորովին էլ բավարար պայման չէ Գառնահովիտը կառուցող ճարտարապետի ունակությունները այդպես ցածր որակելու և հուշարձանն էլ ամբողջությամբ վերցրած՝ գավառական կամ երկրորդ կարգի համարելու համար, մանավանդ, եթե նկատի առնելու լինենք այդ հետապոտողների տվյալ գնահատումներում առկա ոչ հստակ ձևակերպումները, ինչպես և խնդրի էությունից չբխող ակնարկները:

Ինչպես երևում է, այս հարցում կարևոր դեր է խաղում հուշարձանի կառուցման ժամանակի անորոշությունը և դրանից բխող փոխհարաբերությունը մյուս հուշարձանների հետ, տիպի կարգացման առնչությամբ:

Ոմանց կարծիքով Գառնահովիտը կառուցվել է այդ տիպի շատ հուշարձաններից հետո, որ նա ունեցել է մեկից ավելի նախօրինակներ և նրա ճարտարապետին մնում էր միայն ու միայն կրկնել որևէ հաջողված հուշարձան կամ նրա հաջողված դրվագներից ցանկացածը, և ահա այդ էլ չի կարողացել անել Գառնահովտի կառուցողը: Բայց արդյո՞ք այդպես է իրավիճակը իրականում, ամենևին էլ ոչ:

Բանն այն է, որ Գառնահովտում առկա որոշ երևույթներ հիմք են տալիս համոզվելու, որ այս հուշարձանը շատ հարցերում Ավանից բացի, այլ նախորդ չի ունեցել և, հետևաբար, գտնվելով տիպի կարգացման ակունքներում, նրա հեղինակը նորի ստեղծման հետ կապված մեծ դժվարություններ է հաղթահարել ու նախապատրաստել է պայմաններ, որպես գրավական հաջորդ կառուցումների հաջողության: Այս իրավիճակում անտրամաբանական է ներկայանում Գառնահովտի և ավելի ուշ կառուցված հուշարձանների ժամանակից կըտըրված այն պարզունակ համեմատությունը, որ որոշ հետապոտողներ ունեն իրենց եզրակացությունների հիմքում:

Գառնահովտի ճարտարապետը իր կառույցում գործադրած ունի և եռանկյունի հիմքով խորշեր (գմբեթաթմբուկի անկյուններում), և սեղանաձև հիմքով խորշեր (տաճարի բոլոր ճակատներում երկուական հատ), այդ խորշերի և լրիվ կիսակոնաձև ծածկ, և հատած կիսակոնաձև ծածկ[73]: Ահա այս վերջինի և գմբեթային փոխանցման սովորական տրոմպի միջև ոչ մի տարբերություն չկա: Պարզ է, որ ճարտարապետը քաջատեղյակ է հատած տրոմպի կառուցմանը, բայց ինչո՞ւ այդ մոտիվը չի գործադրել գմբեթային փոխանցման համակարգում, ահա այդ է հարցը:

Եթե նախորդ մեջբերումներից առաջինում կառուցողի սխալը համարվում է այն, որ գմբեթային



Գծ. 39. Գառնահովիտ. արևմտյան խորանի պատուհանի ԳՈՐ և ԳՐԻ գրերը կրող պսակը:

փոխանցման մեջ հատած կիսակոնի, այսինքն՝ հատած տրոմպի փոխարեն գործադրվել է լրիվ կիսակոն, այսինքն՝ ոչ հատած տրոմպ, ապա Ն. Տոկարսկին Գառնահովիտը համարելով VII դարի երկրորդ կեսի հուշարձան կառուցողի «անփորձությամբ» է բացատրում գմբեթային փոխանցումը առագաստայինի փոխարեն տրոմպայինով իրականացնելը:

Առաջին դեպքում խանգարող հանգամանքը ինքնին է գալիս, չէ որ $^3/_4$ խորշի բացվածքի խիստ թեքվածության պատճառով գմբեթատակ քառակուսին իր ձևը պահպանում է ընդհուպ մինչև փոխանցման համակարգին հասնելը, որի դեպքում փոխանցման լրիվ կիսակոնաձև տրոմպային եղանակն անխուսափելի է: Երկրորդ դեպքում տվյալ տիպի տաճարների համար, բացառությամբ Աղթամարի, յուրահատուկը տրոմպային և ո՛չ առագաստային փոխանցումն է, ամենաշատը՝ փոխանցման կոմբինացված եղանակը, ինչպես Ավանում է և մասամբ Հռիփսիմեում: Այս հարցում, ըստ երևույթին, արդարացին կառուցողն է:

Արդ, ինչով բացատրել $^3/_4$ խորշերի խիստ թեքվածությունը Գառնահովտում: Ըստ երևույթին նըրանով, որ $^3/_4$ խորշի մոտիվը սկզբնապես հայտնագործվել է նախ և առաջ որպես կապակերպված անցում տաճարի ներսից դեպի անկյունային սենյակները: Այս դեպքում ամենևին նշանակություն չի ունեցել $^3/_4$ խորշի բացվածքի այս կամ այն չափի թեքվածությունը, ինչպես և անհրաժեշտ չի համարվել խորշի վերնամասի մասնակցությունը գմբեթային փոխանցման համակարգում: Չէ որ այդ ժամանակներում կիսակոնաձև տրոմպային փոխանցումը գրեթե միակ և կատարելագործված ձևն էր[74], ու այն էլ վարպետորեն գործադրվել է Գառնահովտում:

Այն, որ ճարտարապետը քաջածանոթ լինելով հատած կիսակոնաձևին, այնուամենայնիվ գմբեթային փոխանցումն իրականացրել է լրիվ կիսակոնաձև տրոմպային եղանակով, մի լրացուցիչ փաստ է Գառնահովտի, այդ տիպի մյուս հուշարձաններից ավելի վաղ կառուցված լինելու: Եթե Գառնահովիտը կառուցված լիներ մյուս հուշարձաններից ուշ, նրա, ինչպես վերևում համոզվեցինք, չնորհաշատ ճարտարապետը ի վիճակի պիտի լիներ և ամենաչնչին դժվարության չէր հանդիպի, գմբեթային փոխանցման յուրջ դժվարություններ չըպարունակող համակարգը կերտել նախորդներից որևէ լավագույնի օրինակով:

Չպետք է մոռանալ, որ Գառնահովիտը խոշոր հուշարձան է, գրեթե Հռիփսիմեի մեծության. այդպիսի հուշարձանի կառուցումը չէր կարող հեռու լինել երկրի հոգևոր կենտրոնի ուշադրությունից ու հսկողությունից, դեռ ավելին, կառուցման նախաձեռնությունից: Այդպիսի մեծ ձեռնարկի իրագործումը ոչ մի դեպքում չէր կարող վստահվել ոմն

«գավառական», «անփորձ», «որոշ հարցերում ոչ գրագետ» ճարտարապետի:

Գառնահովտի կառուցողը, ամենայն հավանականությամբ, եղել է Ավանի կառուցողից հետո երկրորդը կամ երրորդը և նրա նման պլիներ իր կարևոր ստեղծագործությունը կերտելիս:

Հայտնի չէ, թե երբ և ով է կառուցել Գառնահովտի սուրբ Գևորգ տաճարը: Մատյաններում այդ մասին ոչինչ չի ասվում:

Տաճարի շինության կոնստրուկտիվ մասերի կարգացման աստիճանով, ճակատներում ու ներսում գործադրություն գտած ճարտարապետական ձևերի արվեստագիտական վերլուծությամբ միայն հնարավոր է դառնում նշել, որ տաճարի կառուցումը տեղի է ունեցել մոտավորապես VI—VII դարերի սահմանագծում:

Բանն այն է, որ հուշարձանի պատերի վրա առկա արձանագրությունները հողմահարվել և ընթեռնելի չեն: Համեմատաբար լավ պահպանվել և ընթերցվում են տաճարի արևմտյան և հարավային ճակատներում խորանների պատուհանների պսակների (կամարաղեղների) վրայի գրերը: Արևմտյան խորանի պատուհանի արտաքին պսակի 10—12 սմ. տրամագծով կամարիկներից ձախակողմյան երեքում փորված են Գ, Ո, Ր (կամ ԳՈՐ) տառերը, աջակողմյան երեքում՝ Գ, Ր, Ի (կամ ԳՐԻ) տառերը (նկ. 23, գծ. 39): Հարավային խորանի պատուհանի արտաքին պսակի կամարիկներից ձախակողմյան վեցում փորված են ՄՈՎՍԷՍ անունը ստեղծող վեց տառերը (նկ. 22, գծ. 38):

Ո՞ւմ անունն է այդտեղ դրոշմված, վարպետի՞, ճարտարապետի՞, թե՞ պատվիրատու կաթողիկոսի: պարզ է մի բան, որ գրերը փորված են երկու շքամուտքերի գլխավերևում, պատուհաններից այդ երկուսի, հատկապես ձոխ մշակված պսակների վրա, Մեսրոպյան գեղեցիկ տառերով: Շքամուտքերի տիմպանների վրա գրեր չկան:

Մենք հակված ենք այդ ՄՈՎՍԷՍ (և ոչ ՄՈՍԷՍ) անվան մեջ տեսնել Մովսես Եղվարդեցի կաթողիկոսին (574—604 թթ.):

Արևմտյան խորանի պատուհանի արտաքին պսակի վրայի գրերը, հավանաբար վերաբերում են որևէ անվան, թերևս վարպետ-ճարտարապետի:

Ա. Ն. Շահինյանը վկայում է, որ Ս. Բարխուդարյանը հնարավոր էր համարում այդ երկու խումբ տառերի տեղափոխմամբ կարդալ ԳՐԻԳՈՐ, որ իբր այլ հուշարձաններում նույնպես հանդիպում են նման դեպքեր[75]:

Անկախ նրանից, թե ով է եղել Գառնահովտի կառուցողը, այժմ անմիջական առիթ է ներկայանում տաճարի ամբողջական և տարբեր մասերի կոնստրուկտիվ համակարգերի լրջագույն հետազոտման, այն իմաստով, որ հուշարձանը դարերի խորքից մինչև մեր օրերը հարատևում ու իր կանգուն գոյությամբ շարժում է նաև ժամանակակիցների հետաքրքրությունը, թե ինչ ալդու գործոնների, կամ այդ որ կոնստրուկտիվ տարրերի, թերևս՝ համակարգի վարպետ լուծման ու իրականացման շնորհիվ է, որ այն մեր շատ ու շատ լավագույն, սակայն արդեն կործանված հուշարձանների տխուր բախտից վերծ է մնացել և այժմ դասականորեն պարզ, բայց քարեղեն լեզվով պատմում է իր հեռավոր, անանուն ստեղծողի ու կառուցողի քանքարի մասին, այնպես, ինչպես որ նա եղել է:

# Զ Ո Ր Ա Դ Ի Ր Ի Ս. Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Զորադիր (Սորադիր) տաճարը մոտ առնչության մեջ է Աղթամարի հետ. առկա է սրանց հատակագծերի մեծ ընդհանրությունը: Անկախ դրանից Աղթամարը միշտ էլ հայտնի է եղել և նրա վերաբերյալ ստեղծվել է մեծ գրականություն, մինչ Զորադիրը, որ կրում է «սուրբ Էջմիածին» անունը, մասնագիտական գրականություն է մտնում նոր միայն, այն էլ շնորհիվ իտալացի հինգ ճարտարապետների, որոնք 1967 թվականին գտնվելով պատմական Հայաստանի արևմտյան նահանգներում (ժամանակակից Թուրքիայում) հետազոտել և արդյունքները տպագրել են իտալական և ֆրանսիական մամուլում:




Գծ. 40. Զորադիր. հատակագիծ:

Պաոլո Կունեոն դեռևս 1968 թվականին Փարիզում ընդարձակ հոդված է հրատարակում «Վասպուրականի Սորադիրի սուրբ Էջմիածին եկեղեցին» վերնագրով[76], իսկ Թոմազո Բրեչչա Ֆրաթադոկքին՝ 1971 թվականին, Հռոմում «Սորդիրի սուրբ Էջմիածին եկեղեցին» մենագրությունը[77], որպես առաջինը «Միջնադարյան հայ ճարտարապետության ուսումնասիրություններ» մենագրությունների շարքի, որ լույս է տեսնելու «Իտալական հետազոտական խորհրդի» որոշմամբ: Այդ գործի ընդհանուր ղեկավարությունը իրականացնում էր Հռոմի համալսարանի գրականության ֆակուլտետի «Միջնադարյան և արդի արվեստների պատմության» ինստիտուտի դիրեկտորը, գիտնական Ջեվա դե Ֆրանկովիչը, այժմ՝ Ֆերնանդա դի Մաֆֆեյը:

Զորադիրը քննարկվող տիպի մյուս տաճարներից, բացառությամբ Աղթամարի, տարբերվում է նրանով, որ սրա հատակագծում անկյունային սենյակներ կան արևելյան խորանի երկու կողմերում միայն, արևմտյան խորանի երկու կողմերում այդպիսիք չկան: Անկախ դրանից, գմբեթատակ քառակուսու չորս անկյուններում առկա են 3/4 խորշեր, որոնցից արևելակողմի երկուսը ծառայում են որպես անցումներ ավանդատները գնալու համար, արևմտակողմի երկուսը, որ փակուղի են, ստեղծված են ներքին դեկորատիվ ձևավորման նկատառումներով՝ կենտրոնական տարածության հավասարակշռությունը՝ երկու գլխավոր առանցքներով սիմետրիկ պահպանելու համար (գծ. 40):




Գծ. 41: Զորադիր. գմբեթային մասի հատակագիծ:




Գծ. 42. Զորադիր. գմբեթի 12 նիստերով տարբերակի հատակագիծ:

Եթե Աղթամարի և կառուցման ժամանակն է հայտնի, և կառուցողի ով լինելը, և պատվիրատուն, ապա Զորադիր տաճարի ոչ կառուցման ժամանակն է հայտնի, ոչ ճարտարապետը և ոչ էլ պատվիրատուն, իսկ մատենագրությունից առայժմ ոչինչ հայտնի չէ[78]: Եվ ինչպես պատահում է հաճախ, այս անգամ էլ մեր ժամանակակից մասնագետների կարծիքները, հատկապես տաճարի կառուցման ժամանակի հարցում, բաժանվում են:

Ֆերնանդո Դե Մաֆֆեի մեկնաբանմամբ Զորադիրը պետք է կառուցված լինի VI դարի առաջին տասնամյակներում. որպես ասվածի հիմք մատնանշում է դեկորատիվ հնադարյան ձևերը, գմբեթի ոչ բոլորակությունը, օգտագործված քարի արխայիկ չափերը:

Պաոլո Կունեոն Զորադիրում առկա ոճական և ճարտարապետական յուրահատուկ կողմերը համեմատության մեջ դնելով տաճարների այս տիպի Կովկասի օրինակների հետ, հանգում է այն եզրակացության, որ այն հանդիսացել է այս վերջիններիս համար նախօրինակ, ինչպես նաև ավելի ուշ կառուցված Աղթամարի համար, և որ նրա կառուցման ժամանակը համարում է VI դարի կեսի և հաջորդ տասնամյակների միջև:

Թոմասո Բրեչչա Ֆրաթադոկքին հայտնում է այն կարծիքը, որ Զորադիրը ժամանակակից է VII դարի սկզբներում կառուցված նույնատիպ տաճարներին, նրանում գործադրված դեկորատիվ մոտիվների թեմաների առումով, այն նախորդում է նրանց մի քանի տասնամյակով:

Այս հուշարձանում որոշ ձևեր, մոտիվներ, քանդակատեսակներ, հանգույցների լուծումներ և այլ հանգամանքներ, իրոք դժվարացնում են Զորադիրի կառուցման հավանական ժամանակը որոշելը:

Եթե տաճարի յուրահատուկ հատակաձևը իր բոլոր կողմերով հայտնվում է Աղթամարին անմիջականորեն նախորդող շրջանում, գմբեթային փոխանցման համակարգը գնում, հասնում է Հռիփսիմեի կառուցմանը նախորդած շրջանը, ապա դեկորատիվ մոտիվները, օգտագործված քանդակատեսակները, իրենց մի մասով մնալով VI—VII դարերի սահմանագծում, մյուս մասով հասնում են V—VI դարերի սահմանագիծը, երբ այդպիսիք տեղ էին գտնում բազիլիկ տաճարների համապատասխան տեղերում: Տաճարի ժամանակակից ավերա-



Գծ. 43. Զորադիր. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով:

կում կան դրվագներ էլ, որոնք արդյունք են վերակառուցումների, իրականացված ուշ միջնադարում:

Այս պայմաններում ակներևաբար առաջանում է ճարտարապետական-արվեստագիտական հետազոտության ընթացքում սկզբունքային բծախնդրության ցուցաբերման անհրաժեշտություն: Մինչ այդ, պետք կլինի ամեն հարց առանձին նայելիս, պարզել տաճարի բազմադարյան գոյության ընթացքում արված վերանորոգումների տեղն ու բնույթը, մասշտաբը և ձևափոխությունները:

## ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Նկատենք, որ քննարկվող տիպի եկեղեցիներ եղել են թե վաղ, թե ուշ՝ թե VII, թե X—XI դարերում: Դրանց թվում են, օրինակ՝ Շուամթայի գմբեթավոր փոքր եկեղեցին, որ VII դարի հուշարձան է և ավանդատներ չունի, Կվետերան, որ X—XI դարերի հուշարձան է, նույնպես ավանդատներ չունի:

Զվարթի ճարտարապետը նրա «Խաչի եկեղեցի» անվանը համապատասխան սկզբնապես կառուցած եկեղեցուն թե ներսից, թե դրսից տվել է խաչակերպ հատակաձև: Նա դրան հասել է՝ հրաժարվելով խաչաթևերի միջև ավանդատներ կառուցելուց: «Խաչի եկեղեցի» անունն է կրում նաև Աղթամարը: Այս վերջինիս կառուցողը շինության հիմքում նույնպես դրել է խաչաձևը և, չնայած արևելակողմում պահանջներին համապատասխան նախատեսել է ավանդատներ, սակայն դրանց լայնական չափերը այնքան է սեղմել, որ այդ վերջիններիս ձևական գոյությունը չի փոխել հատակագծի խաչաձևությունը նաև դրսից:

Ճշտորեն այդ հատակաձևն ունի նաև Զորադիրի սուրբ Էջմիածին եկեղեցին:

Այս տաճարում, ինչպես վաղ շրջանի մեր հուշարձաններում, այդ թվում հենց Ավանում, մուտքի միայն մի դուռ կա և այն էլ արևմտակողմից: Խորաններից յուրաքանչյուրում առկա է մեկ պատուհան, շատ փոքր թեքության կողերով:

Հատկանշական է նաև սեղմված համաչափությունների գոյությունը ներքին ձևերում: Օրինակ որմնամույթերի լայնությունը կազմում է բարձրության յոթերորդ ($^1/_7$) մասը, խորանների բարձրության մեջ լայնքը տեղավորվում է ընդամենը երկու անգամ և այլն (գծ. 43; նկ. 25):

Աղթամարում արտաքին ծավալներն ու նրանց ձևերը առավել շարժուն են:

Զորադիրում $^3/_4$ խորշերը արտաքին ծավալում արտահայտվում են արևմտյան երկուսը եռանիստ և արևելյան երկուսը ուղղանկյուն ծավալներով: Այստեղ արևելյան ճակատի խորշերը հիմքում ճշտորեն եռանկյունի են (նկ. 24; գծ. 40):

Վերևում ասվեց, որ Աղթամարի արևմտյան ճակատի վրա նույնպես կան եռանկյունի հիմքով խորշեր, մինչ Զորադիրում՝ այդպիսիք չկան: Այդ ճակատի վերնամասում, խորանի պատուհանի երկու կողմերում նույն պատուհանի բացվածքի չափերով ու եզրագծերով առկա խորշերը, որ հիմքում ուղղանկյունի են, պատի մեջ որքան էլ խորանում, այնուամենայնիվ խորանի ներքին բոլորակ հիմքով հարթությանը չեն հասնում:

Նախորդ էջերում եզրակացրել էինք, որ նայվող հուշարձաններում սեղանաձև հիմքով խորշերը նախորդում են եռանկյունի հիմքով խորշերին, սակայն այլ տիպի, ավելի վաղ կառուցված հուշարձաններ

կան, որոնք օժտված են եռանկյունի հիմքով խորշերով: Այդ առումով նշենք մեր լավագույն և հին հուշարձաններից Պտղնին, որի արևելյան ճակատի վրա առկա են երկու խոշոր եռանկյունի հիմքով խորշեր:

Պտղնին, որ ոմանց կարծիքով 6-րդ դարի երկրորդ կեսի, մյուսների կարծիքով՝ 7-րդ դարասկզբի հուշարձան է, հիմք է տալիս հնարավոր համարելու, որ Զորադիրի արևելյան ճակատի խորշերի հիմքում եռանկյունի, ոչ սեղանաձև լինելը չի կարող առիթ հանդիսանալ այս տաճարը համեմատաբար ուշ ժամանակի հուշարձան համարելու:

Նշանակալից երևույթներից է, որ արևելակողմի ավանդատների հատակաձևը Զորադիրում, Աղթամարի նույն դրվագի համեմատությամբ, պարզ են, որոշակի եկրագծերով, և որ կարևորն է՝ առանց արևելակողմի խորանաձև կլորացման. առաջ անցնելով նկատենք, որ այդ ավանդատների ծածկերը սովորական տաշտաձև թաղեր են: Սրանք հանգամանքներ են, որոնք խոսում են Զորադիրի մի շարք այլ հուշարձաններից առավել վաղ կառուցված լինելու օգտին:

Ի տարբերություն քննարկվող տիպի մյուս տաճարների, բացառությամբ Աղթամարի, Զորադիրում ավելի լայն են հարավային, հյուսիսային և արևմտյան խորանները և ավելի նեղ՝ արևելյանը, ըստ որում, երեք լայն խորաններից յուրաքանչյուրի լայնքն ունի արևելակողմի նախախորանը:

Չափային այս դասակարգումն ունեցող տվյալ պարագան հնարավոր է դարձրել, որ գմբեթատակ քառակուսին, իրոք լինի քառակուսի, ինչպես և $^{3}/_{4}$ խորշերը ճշտորեն՝ անկյունագծով ուղղված լինեն հիշյալ քառակուսու կենտրոնին:

Տվյալ տիպի մեր տասը տաճարներից այսպես է չորսում (Գառնահովիտ, Վարագավանք, Աղթամար, Զորադիր) և վրացական յոթ տաճարներից՝ երկուսում (Մարտվիլի, Կվետերա): Ինչպես երևում է Մարտվիլիի նման Զորադիրն էլ բացառություններից է, որ հին լինելով հանդերձ իր այս կողմով նման է համեմատաբար ուշ հուշարձաններին:

### ԳՄԲԵԹԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Տաճարի կառուցման մոտավոր ժամանակի որոշման հարցում նշանակալից արդյունքներ են ստացվում նաև Զորադիրի ու Հռիփսիմեի գմբեթային փոխանցման համակարգերի համեմատությունը միմյանց հետ:



Գծ. 44. Զորադիր. գմբեթային փոխանցման համակարգի դրվագ:

Զորադիրում գմբեթային փոխանցման համակարգը այնպես չէ, ինչպես Աղթամարում, այստեղ կիրառված ձևերը ավելի հին են և որոշ մասերով նման Հռիփսիմեի նույն դրվագին. դեռ ավելին, Հռիփսիմեի համեմատությամբ սրա փոխանցման մաքուր տրոմպային համակարգը ավելի նախնական է և զարգացման աստիճանով հին իր հետնորդից՝ Հռիփսիմեից (գծ. 44. նկ. 28):

Հռիփսիմեում որմնամույթերի պարզ կողադեմով խոյակից վերև, $^{3}/_{4}$ խորշի գմբեթարդ ծածկի երևացող ճակատային մասի դիմաց — ձախ ու աջ կողմից ծալքաձև աստիճանական անցումով սկըսվող լրիվ կիսակոն տրոմպ է՝ իր ժապավենաձև ճակատային մասով, ապա կամարվում է ավելի մեծ թռիչք ունեցող հատած կիսակոն տրոմպը. այս վերջինից վերև, նրա ձախ ու աջ կողմերում, մեկ ամբողջական քարի մեջ, հովհարի պատկերով ձագարաձև փորված փոքր տրոմպներ են: Այնուհետև փոքր ինչ թեքված քարակերտ մի շարք ու գմբեթամբուկի հիմքով անցնող, սովորական կողադեմով առաջակարկառ գոտի: Այս ամբողջը տեղավորվում է որմնամույթերի խոյակների և գմբեթի հիմքով անցնող գոտու միջև, տարածությունը զբաղեցնելով ամբողջությամբ, գմբեթատակ քառակուսին փոխարկելով գմբեթի հիմքի բոլորակին:



Գծ. 45. Զորադիր. արևմտյան ճակատ:

Զորադիրի գմբեթային փոխանցման համակարգում փաստորեն բացակայում է Հռիփսիմեում առկա մեծ թռիչք ունեցող հատած կիսակոնաձև տրոմպը: Նրա տեղում ու նրա փոխարեն տեղադրված է կուսպ կողադեմով՝ կամարիկներով ու երկաստիճան ատամնաշարով մշակված, հեծանի տպավորություն թողնող գոտու մի հատված: Սրա երկու ծայրերում առկա են մի կողմով հենված հիշյալ գոտուն, մյուս կողմով՝ գմբեթակիր կամարին, փոքր չափերի, բավական յուրօրինակ, մի ամբողջական քարի մեջ եռանկյունաձև փորված տրոմպներ: Այնուհետև, դարձյալ քարակերտ մի շարք, ապա հորիզոնական կույգ ակոսներով մշակված գոտի ու նրա վրա էլ, նույնպես կամարիկներով ու ատամնաշարով օժտված գմբեթի հիմքով անցնող գոտի:

Որմնամույթերի խոյակներից մինչև գմբեթաթըմբուկի հիմքն ընկած տարածությունը, փոխանցման համակարգի ընձեռած հնարավորությունները լիակատար կերպով չօգտագործելու հետևանքով, գմբեթատակ քառակուսուց փոխանցումը գմբեթի հիմքին չի տվել անհրաժեշտ արդյունք. լրիվ բոլորակ ստանալու փոխարեն, ստացվել են շրջագծի չորս քառորդներ, ուղիղ գծերով կապված միմյանց, այսինքն՝ բոլորակ անկյուններով քառակուսի: Ահա այս. իրավիճակով է նաև պայմանավորված տաճարի կառուցման ժամանակի ու գմբեթաթմբուկի ձևի անորոշությունը:

Զորադիրի և Հռիփսիմեի գմբեթային փոխանցման համակարգում հովհարաձև բացվող դրվագի առկայությունը հավաստում է, որ այդ տաճարներից համեմատաբար ուշ կառուցվածի ճարտարապետին ծանոթ է եղել ավելի վաղ կառուցված տաճարը և, մասնավորապես, հիշյալ դրվագը: Որոշ հանգամանքներ համոզում են, որ Հռիփսիմեի կառուցողն է եղել Զորադիրում, ուսումնասիրել այն: Հակառակը ենթադրելու դեպքում, անհասկանալի կդառնա, թե ինչու Զորադիրի կառուցողը իր նոր ձեռնարկում չի կիրառել այն բոլոր առաջադիմականը, որը առկա է Հռիփսիմեի կարևոր դրվագներում: Ենթադրել, թե այդ հետևանք է Զորադիրը



Գծ. 46. Զորադիր. արևելյան ճակատ:

կառուցողի պակաս վարպետության, ճիշտ չի լինի, քանի որ մեկից ավելի են շինվածքում առկա երևույթներ, որոնք հավաստում են նրա կառուցողի բարձրաճաշակ և շնորհալի լինելը: Օրինակ Զորադիրի արևելյան ճակատի եռանկյունի հիմքով խորշերի ծածկերը հստակորեն իրականացված կիսակոներ են, այսինքն՝ տրոմպներ. նշանակում է՝ ճարտարապետը քաջածանոթ է եղել դրանց կառուցման եղանակներին, հետևաբար նրա համար դժվար չէր լինի գմբեթային փոխանցման համակարգում իրականացնել հատած տրոմպը, այնպես, ինչպես Հռիփսիմեում է: Եվ քանի որ Զորադիրում հատած տրոմպը չկա, նշանակում է՝ նրա կառուցողը ավելի վաղ է գործել, քան կառուցվել է Հռիփսիմեն: Այստեղից հետևում է, որ Հռիփսիմեի կառուցողն է ծանոթ եղել Զորադիր տաճարին և նրանում, վերը նշված դրվագը նախասիրել, կրկնել Հռիփսիմեում, պարզացրել այն:

Այս եզրահանգումով ևս հնարավոր է ենթադրել, որ Զորադիրի կառուցումն ավարտված կարող էր լինել VI դարի վերջում, ամենաուշը՝ VII դարի սկզբում:



Գծ. 47. Զորադիր. արևելյան ճակատի տարբերակ-գմբեթը 12 նիստերով:

## ԳՄԲԵԹԻ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հուշարձանի ժամանակակից գմբեթը սկզբնականը չէ, այն վերակառուցման արդյունք է և այս եզրակացությունը ոչ ոքի կողմից չի վիճարկվում: Այժմյան գմբեթի ծավալի մեջ ամփոփված է միայն ու միայն կիսագնդաձև ծածկը. այստեղ գմբեթաթմբուկ, որի նիստերի վրա պիտի լինեին պատուհաններ, գոյություն չունի: Այժմյան գմբեթը տվյալ տիպի հուշարձանների համար արտասովոր է՝ խաչվող կամարներով իրականացված, երդիկով գմբեթածածկ, մի ձև, որով ծածկվում էին գոյություն ունեցող եկեղեցիներին կից կառուցվող գավիթները, ժամատները, սեղանատները և այլ պաշտամունքային ու քաղաքացիական նշանակության շինություններ (գծ. 43, նկ. 25):

«Զորադիրի սուրբ Էջմիածին եկեղեցին» մենագրության հեղինակ Ֆրաթառոկքին իր ներկայացրած վերակազմության կտրվածքում խիտ ստվերագծով ցույց է տվել, որ իբր գմբեթի հիմքով անցնող գոտուց վերև, այսինքն՝ գմբեթաթմբուկի առաջին շարքը սկզբնապես կառուցված գմբեթի մնացորդն է. ասել է, թե՝ սկզբնապես կառուցված գմբեթը իր հիմքում ունեցել է նույն ուրվագիծը, ինչ որ այժմյան գմբեթն ունի՝ ներսում մոտ 6,40 մետր կողեր ունեցող քառակուսի, որի չորս անկյունները կլորացվել են մոտ 2,25 մետր շառավղով:

«Զորադիր...» մենագրության նյութերը, սակայն, առիթ չեն տալիս կասկածի տակ առնել նրա հեղինակի հավաստիացումներն այն մասին, որ հուշարձանի ներքնամասի վրա հետագայում բարձրացված ծավալը ամբողջությամբ չէ, որ արդյունք է վերակառուցման:

Հիշյալ մենագրության մեջ բերված լուսանկարների և հեղինակ Ֆրաթառոկքիի ներկայացրած չափագրական ու վերակազմական գծագրերի ուշադիր համեմատության հիման վրա եզրակացվում է, որ իրոք, այժմյան գմբեթածավալի ոչ բոլոր շարքերն են նոր: Նոր են վերին 10—12 շարքերը (հաշված գմբեթը պսակող Քիվի տակից). ստորին 3—4 շարքերը հնից են գալիս: Ըստ որում, վերին 8—10-րդ շարքերը իրականացված են համեմատաբար փոքր բարձրության շինաքարով, 11—12-րդ




Գծ. 48. Զորադիր. հարավային ճակատ:

շարքերը, որ ավելի բաց գույնի են, հնից եկող ստորին շարքերի բարձրության շինաքարով: Միաժամանակ պարզվում է, որ հնից եկող ստորին 11-րդ շարքը հասնում է գմբեթի հիմքով անցնող գոտու բարձրությանը միայն, այդ գոտուց անմիջապես վերև պատերը շարվել են նոր գմբեթը կառուցելիս (նկ. 24):

Անշուշտ հնարավոր է, որ այժմյան գմբեթի ստորին շարքերում օգտագործվել են մասամբ ավերված տաճարի շուրջը թափված ու շարքի համար պիտանիությունը դեռ պահպանած քարերը և պակասը միայն լրացվել է նոր հանքաքարով, և կամ անվնաս քարերով շարվել են ստորին շարքերը, վնասված քարերը նորից մշակվել, որի ընթացքում փոքրացվել ու նրանցով շարվել է գմբեթածավալի վերնամասը:

Այսպիսով, անխուսափելի է դառնում մենագրության տվյալների հետ համաձայնելը, համոզվելով, որ այժմյան գմբեթաթմբուկի ստորին 3—4 շարքերն են միայն պատկանում սկզբնապես կառուցված տաճարին, իսկ վերին շարքերը (առնըվազն 10—11 շարք, հաշված վերևից) նոր են, վերակառուցման արդյունք:

Այս տաճարի հատակագիծը իր զարգացման աստիճանով ընդհանրություններ ունի ոչ վաղ, քան VI—VII դարերի սահմանագծի հուշարձանների հատակագծերի հետ, մինչ գմբեթային մասի ձևերը այլ ժամանակ են բնորոշում: Եթե պարզ է, որ մեր օրերում պահպանված գմբեթը արդյունք է ուշ ժամանակների վերակառուցման, ապա հետազոտողի այն կարծիքը, թե սկզբնապես կառուցված գմբե-

թի ստորին շարքերը ներկա գմբեթում պահպանվում են անաղարտ և դրանով էլ նրա ժամանակը գնում է VI դարի կեսերը, երբ բոլորաձև հիմքով գմբեթների կառուցողական արվեստը կատարելագործված չէր, ստեղծում է առեղծվածային վիճակ. չէ որ գմբեթը չէր կարող ավելի վաղ կառուցված լինել, քան բուն հատակագծով պայմանավորված ներքնամասը: Բայց քանի որ սկզբնական գմբեթը կառուցվել է տաճարի ներքնամասի հետ՝ հաջորդաբար, ուրեմն գմբեթի ձևերն էլ պիտի համապատասխանեին այդ ժամանակվա գմբեթների ձևերին և ոչ ներկա գմբեթին:

Այժմյան ավերակի ամենակարևոր իրողությունն այն է, որ **գմբեթի օրգանիզմում հինից մնացած ստորին շարքերը վերջանում են արևելյան և արևմըտյան խաչաթևերի տանիքների գագաթների մակարդակի վրա:** Ինչպես հայտնի է, գմբեթավոր տաճարներում գմբեթաթմբուկներն սկսվում են հենց այդ մակարդակից, երբեմն մի քիչ էլ վերևից: Ի վերջո, առկա նյութերի քննությամբ պարզվում է, որ սկզբնապես կառուցված տաճարից այժմյան տաճարում բացակայում է միայն ու միայն գմբեթը, սկսած թմբուկի հիմքից և վերև: Ստեղծված առեղծվածը իսկույն ստանում է իր լուծումը, հենց որ հայտնի է դառնում, որ **այժմյան գմբեթաթմբուկի հնից եկող ստորին շարքերը պատկանում են ոչ թե սկզբնական գմբեթին, այլ տաճարի կենտրոնական՝ ներքին տարածության արտաքին արտահայտությունը հանդիսացող գմբեթատակ ծավալին:**

Այդ ծավալը սովորաբար լինում է հիմքում քառակուսի, երբեմն այլ եկրագծերով: Օրինակ, Ավանում այն կտրված անկյուններով է, որի հետևանքով էլ կենտրոնական ծավալի եկրագիծը ստացվել է ութնիստ՝ չորս մեծ և չորս փոքր կողերով:

Նույնպիսի իրավիճակ գոյություն ունի Թալինի Կամսարականների կառուցած (VII դար) տաճարում: Այստեղ գմբեթատակ ծավալը հիմքում ոչ թե քառակուսի, այլ բազմանիստ է, ունի չորս մեծ և ութ փոքր նիստեր, ըստ որում, հիմնական առանցքների վրա ընկնող չորս նիստերը մեծ չափերի են, մինչ անկյունագծերի վրա ընկնող երկուական նիստերը՝ փոքր չափերի:

Զորադիրում այդ ծավալի անկյունները նույնպես կտրված են, այն էլ երեքական փոքր նիստերով: Այստեղ կենտրոնական ծավալի եկրագիծը ստեղծում են չորս մեծ և տասներկու փոքր կողեր:



Գծ. 49. Զորադիր. հատակագծի համաչափությունների վերլուծություն:

Ավանում տվյալ միջոցառումը՝ այդ ծավալի անկյունների բթացումը հետևանք էր չորս փոքր գըմբեթների առկայության (գծ. 10), տաճարի արտաքին հորինվածքում դրանց ծավալների ինքնուրույն դրսևորման, Թալինում գմբեթատակ քառակուսի հիմքով ծավալի անկյունային մասերի ցցունությունը ոչ մեծ գմբեթի ֆոնի վրա մեղմելու ձգտման, Զորադիրում՝ $^3/_4$ խորշերի եռանիստ ծավալների որոշակի արտահայտման, կենտրոնական ծավալի ճիշտ անկյունների դիմաց (գծ. 41): Հակառակ դեպքում քառակուսի հիմքով կենտրոնական ծավալի անկյունները ոչ միայն կծածկեին $^3/_4$ խորշերի ծավալները, այլև անցնելով նրանց սահմանները, կկախվեին օդում:

Այս պարագաներում բնականորեն հնարավոր պետք է համարել, որ գմբեթաթմբուկը հիմքում կարող էր նաև այլ պարագծեր ունենալ: Արդ ոչինչ չի խանգարում ենթադրելու, որ գմբեթաթմբուկը Զորադիրում կարող էր լինել ներսից բոլորակ, դրսից կանոնավոր բազմանիստ[79] (գծ. 41, 42): Այս առումով Հռիփսիմեի գմբեթը լավագույն օրինակ է: Այստեղ գմբեթի հիմքով անցնող գոտին նույնպես, ինչ որ չափով կանոնավոր բոլորակ չէ, մինչ գմբեթաթմբուկը ներսից լիակատար բոլորակ է, ավելի ճիշտ բոլորակին համակոր բազմանիստ, գմբեթածածկն էլ միանգամայն կանոնավոր կիսա-




Գծ. 50. Զորադիր. արևելյան ճակատի համաչափությունների վերլուծություն:

գնդաձև: Կառուցողը դրան հասել է գմբեթաթմբուկի պատերը հետ դնելով՝ մեծացնելով նրա տրամագիծը (գծ. 53): Պետք է, որ Զորադիրի ճարտարապետը նույնը արած լինի իր կառույցում: Թերևս դրանով էլ բացատրվի այն, որ անկյունային փոխանցման համակարգը կերտելիս նա ջանք չի գործադրել գմբեթատակ քառակուսուց գմբեթի լիակատար շրջագծային հիմք ստանալու համար:

Զորադիրի, ինչպես և Հռիփսիմեի կառուցողները այդ ձևով գմբեթի պատերի համար ապահովել են առավել կայուն հիմքեր: Ցարդ երկուստեք՝ և՛ Զորադիրում, և՛ Հռիփսիմեում գմբեթակիր կամարները կանգուն են և այն էլ լավ վիճակում: Այդ նշան է նաև այն բանի, որ Զորադիրի գմբեթի կործանվելը տեղի է ունեցել, համենայնդեպս ոչ գմբեթակիր կամարների պատճառով:

Գմբեթը ներսից բոլորակ լինելու դեպքում նրա պատերը խորանների եպրակամարներից, այսինքն՝ երկու գլխավոր առանցքների ուղղությամբ հետ են կանգնում մոտ 30 սմ-ի չափով, մինչ անկյունա-




Գծ. 51. Զորադիր. հյուսիսային ճակատի համաչափությունների վերլուծություն:

գծային ուղղությամբ՝ առաջ—եկրագծին մոտ[80]: Առաջին հայացքից խորթ թվացող այս երևույթը գմբեթի հիմքով անցնող գոտու առկայության պայմաններում այնքան էլ կգալի չի լինում: Նույնպիսի վիճակ է նաև այժմյան գմբեթում, որտեղ պատերը բավական հետ են դրված (մոտ 65 սմ-ի չափով) սակայն անկյունագծերի՛ ուղղությամբ:

### ՔԱՆԴԱԿՆԵՐ

Տարբեր առումներով կգալի հետաքրքրություն են ներկայացնում Զորադիրի նաև քանդակները, ինչպես տաճարի ներսում, այնպես էլ ճակատների վրա: Այդ քանդակների հատկանշականն այն է, որ և՛ թեմատիկ բովանդակությամբ, և՛ նկարվածքի ու կատարման տեխնիկայով դրանք բավական հին են, թերևս բնույթով ավելի հին, քան ինքը՝ տաճարը: Օրինակ արևելյան խորանի և նախախորանի երկու կողմերի որմնամույթերի խոյակների բարձրության վրա գտնվող խոյոստների քանդակները բառացիորեն կրկնում են Քասաղի, Տեկորի, այդ հնագույն (V դար) բազիլիկ եկեղեցիների շքամուտքերի խոյակների և այլ դրվագների քանդակները: Արևմտակողմի որմնամույթերի խոյակների քանդակների միջին շերտը Տեկորի, Բոլնիսի, Զվարթնոցի գդալանման քան-

դակների ավելի նախնական օրինակն է, վերին շերտը, որ խաղողի ողկույզի ու տերևի հանրահայտ որդագալար պատկերն է, չի տարբերվում Մաստարայի հարավային խորանի պատուհանի արտաքին կամարաղեղի քանդակապատկերից (նկ. 27ա, 27բ, 27գ, 27դ):

Գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտու, տըրոմպների վերևում դրված հեծանանման քարերի և արևմտյան ճակատի պատուհանի կամարաղեղի կամարիկներով ձևավորված ճակատները մեր VI դարի վերջի հուշարձաններում գործադրված նույնպիսի դրվագների աներկբա կրկնօրինակներն են:

Զորադիրի արևմտյան մուտքի առաջակարկառ ծածկը ուշ վերակառուցման արգասիք է և նրա քանդակները չեն առնչվում սկզբնապես կառուցված շինությանը (նկ. 24):

Տաճարի սկզբնական գմբեթի կործանումով, անկասկած վնասվել են խաչաթևերի վերնամասերը: Նոր գմբեթի կառուցման ժամանակներում վերակառուցվել են նաև ճակտոնները, դրանցում թողնելով իրենց ժամանակի դրոշմը:

### ԶՈՐԱԴԻՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԱՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ պատմական ճարտարապետության ուսումնասիրությամբ զբաղվող իտալացի մասնագետները մեր օրերում եղան Զորադիր տաճարի առաջին չափագրողները (Մաուրիցիո Գուիդի և Էնրիկո Կոստա), լուսանկարողները (Ուգո Արնյանի և Պաոլո Կունեո), ինչպես և վերականգնման գծագրեր ստեղծողները: Այդ նյութերը ամփոփված են ճարտարապետ Թոմաս Բրեչչա Ֆրաթադոկքիի հեղինակած «Սորադիրի սուրբ Էջմիածին եկեղեցին» մենագրության մեջ:

Այստեղ բերված 12 գծագրերից երկուսը հատակագծեր են, չորսը՝ բոլոր ճակատների մաքրագծված չափագրություններ, չորսը՝ վերականգնման գծագրեր, մեկը՝ կտրվածք և մեկ գծագիր, ուր պատկերված է տաճարի ներքին տեսքը ակսոնոմետրիկ պատկերումով:

Հատակագծերից մեկը տալիս է սկզբնապես կառուցված տաճարի հատակաձևը, ներառյալ ավանդատները, վերջինիս պատուհանների բարձրության վրա, մյուսը՝ առանց ավանդատների՝ վերջիններիս տանիքներից բարձր, խորանների պատուհանների բարձրության վրա: Այս, ինչպես և նախորդ գծագրում կետագծով ցույց է տրված գմբեթի և $^{3}/_{4}$ խորշերի ծածկաձևը, ստվերագծով՝ մուտքի ծածկը:

Չորս ճակատների մաքրագծված չափագրության գծագրերում ամենայն մանրամասնությամբ պատկերված է այն, ինչը տեղում ցարդ պաշտպանվում է թե սկզբնապես կառուցված տաճարից, թե հետագա վերակառուցումներից: Հաջորդ չորս գըծագրերում ամբողջությամբ անդրադարձել են չափագրական նույն նյութերը, ինչպես և մենագրության հեղինակի վերակազմական հավելումները, որոնցով վերականգնվում է այն պատկերը, որ ունեցել է տաճարը, նախքան ներկա՝ կիսավեր վիճակին հասնելը: Իսկ թե ինչպիսին է եղել սկզբնապես կառուցված տաճարը, հատկապես նրա գմբեթային մասը, առանց հետագա հավելումների և ձևափոխությունների, մենագրության մեջ չի բերված:

Սույն աշխատության կապակցությամբ մեր կողմից կազմվել և ներկայացվել են մի շարք գծագրեր, որոնցով փորձ է արվում ցույց տալ, թե ինչպիսին է եղել սկզբնապես կառուցված տաճարն ընդհանրապես ու, հատկապես, նրա գմբեթային մասը, ինչպես և գծագրեր, որոնցում պարզվում են տաճարի հորինվածքում առկա որոշակի համաչափություններ, չափային հարաբերություններ և այլ երևույթներ (գծ. 40—51):

Նկատի ունենալով, որ Ֆրաթադոկքիի մենագրության մեջ տաճարի ստորին մասը գծագրերում վերականգնվել է փաստացի նյութի հիման վրա, որի հավաստի լինելը հաստատում են բարձր որակով և գիտական վարպետությամբ կատարված ու նույն մենագրության մեջ բերված բազմաթիվ լուսանկարները, սույն աշխատության մեջ, վերակազմական գծագրերում դրանք, այդ գծագրական նյութերը ընդունվում են, հիմնականում անփոփոխ: Եվ եթե որոշ մանրամասներ փոքր ինչ շտկվել են, ապա դրանք կատարվել են վերոհիշյալ լուսանկարների հիման վրա, երբեմն նաև նկատի առնելով մեր եկեղեցաշինության ռեալ ավանդույթը, կանոնիկ դարձած երևույթներ:

Այս առումով օգտակար դեր են ունեցել հուշարձանում այժմ բացահայտված որոշակի համաչափությունները, որոնց մի մասը, հնարավոր է

ենթադրել, թերևս և հավատալ, որ նկատի է ունեցել այս տաճարի կառուցողը, դնելով այդպիսիք իր նոր ձեռնարկի հիմքում:

Հետաքրքիր և նույնիսկ կարևոր է այն, որ նույն համաչափական երևույթներն են առկա և նույն բնույթի գծագրական պատկերով են արտահայտվում այդ համաչափությունները ինչպես տաճարի ընդհանուր ծավալատարածական հորինվածքում, այնպես էլ հատակագծերում: Այս հանգամանքը ինչ-որ չափով ավելացնում է այդ համաչափությունների գործադրված լինելու հավանականությունը տաճարի շինության թե՛ նախահղացման, և թե՛ կառուցումն իրականացնելու ընթացքում (գծ. 49, 50, 51):

Հնարավոր չէ ժխտել, նույնիսկ չհավատալ, որ հայտնագործված համաչափական սխեմաները մեծ չափով օգնում, և երբեմն հնարավոր են դարձնում գտնել, առավել ևս՝ ճշտել սկզբնապես կառուցված դրվագի չափերը, ձևերը և որոշ մանրամասներ: Տվյալ դեպքում հնարավոր է դառնում գտնել Զորադիրի սկզբնապես կառուցված և հետագայում կործանված ու անհետացած գմբեթի ընդհանուր ուրվագծերը, չափերին ու ձևերին վերաբերող որոշ կողմեր:

Վերակազմական գծագրերում գմբեթային մասը մշակվել է այժմ միայն, հիմք ընդունելով այն ամենը, ինչ ասվեց նախորդ պարբերությունում տաճարի ստորին մասի գծագրերում կատարված փոքր շըտկումների կապակցությամբ:

Գմբեթային մասի համար ներկայացվում է երկու տարբերակ, որոնք միմյանցից տարբերվում են նիստերի քանակով միայն: Առաջին տարբերակում գմբեթաթմբուկը ցույց է տրված ութ նիստերով, որոնք իրենց մասշտաբային չափերով օրգանապես կապվում են ստորին ծավալի մասերին և այդ ակներև է հատկապես արևելյան և արևմտյան ճակատների գծագրերում (գծ. 45, 46): Գմբեթաթըմբուկը երկրորդ տարբերակում ցույց է տրված տասներկու նիստերով, որոնք նույնպես կապվում են տաճարի ստորին մասի ձևերին, սակայն իրենց մասշտաբայնությամբ առավել հարազատ են հյուսիսային և հարավային ճակատներին, որոնք իրենց հիմքում, համեմատաբար հարուստ են եռագծի բեկյալներով, որ առաջացել են հարավային և հյուսիսային խորանների, ինչպես և հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան 3/4 խորշերի տաճարի արտաքին հորինվածքում դրսևորված համապատասխանաբար՝ հնգանիստ և եռանիստ ծավալներով (գծ. 48):

Հասկանալի է, իհարկե, որ գմբեթաթմբուկը մի չափի նիստեր պիտի ունենար, հետևաբար պիտի լիներ ութ, կամ տասներկու նիստերով: Որոշ հանգամանքներ համոզում են, որ Զորադիրում սկըզբնապես կառուցված տաճարի գմբեթը արտաքուստ եղել է թմբուկ ութ միանման նիստերով: Այս դեպքում երկու գլխավոր առանցքների վրա կանգնած նիստերը գմբեթի հիմքը կազմող կենտրոնական ծավալի չորս մեծ նիստերի շարունակությունն են, մյուս՝ անկյունագծային ուղղության չորս նիստերը հետ են գնում հիշյալ կենտրոնական ծավալի երեքական նիստերով ստեղծված անկյունային մասերից, բաց թողնելով սեգմենտաձև հատվածներ, որոնք ունեն իրենց առանձին տանիքները (գծ. 41, 42):

Զորադիրում այս ձևով ստեղծվող ութնիստ գըմբեթաթմբուկի հիմքը ճշտորեն ներգծվում է մի շրջագծի, որն իր չափային տվյալներով կրկնում է տաճարի ճակատներում բացահայտված համաչափությունների պատկերում առկա փոքր շրջագիծը:

Տաճարի ամբողջական հատակագիծը (քիվերի բարձրության վրա) ճշտորեն ներգծվում է մի շրջագծի, որն իր չափային տվյալներով կրկնում է տաճարի ճակատներում բացահայտված համաչափությունների պատկերում առկա մեծ շրջագիծը:

Տաճարի հատակագծի հյուսիսային և հարավային խորանների ճակատային նիստերի անկյունները (քիվերի բարձրության վրա) ճշտորեն ներգըծվում են մի շրջագծի, որն իր չափային տվյալներով կրկնում է տաճարի ճակատների համար կազմված համաչափությունների պատկերում առկա միջին շրջագծին:

Գմբեթատակ քառակուսու կենտրոնից 60 և 120 աստիճանի անկյան տակ տարված երկու ճառագայթները մի կողմից անցնում են տաճարի արևելյան ճակատի երկու անկյուններով, մյուս կողմից արևմտակողմի խորանի և նրա երկու կողմերի 3/4 խորշերի ծավալների հանդիպման անկյուններով:

Տաճարի ներքին տարածության հատակագծում որոշ հանգուցային կետեր ընկնում են 60 և 120 աստիճանի անկյուններով ստեղծված շեղանկյունների գագաթների վրա (գծ. 49—51):

Կասկած չի կարող լինել, որ այս պարզ երկրաչափական ձևերը նույնպես իրենց գործադրությունն են գտել տաճարի հատակագծում նրա կպմավորման ընթացքում։

Զորադիրի արևելյան ճակատում, շատ անգամ ավելի, քան հատակագծում, առկա են համաչափական բազմաձև ու բազմապլիսի պատկերներ, որոնք հավաստում են տաճարը կառուցող ճարտարապետի լավատեղյակ լինելը իր ժամանակի շինարվեստում տեղ ու գործադրություն գտած համաչափական նորմերին ու ձևերին, որոնք իրենց ներսում թաքցնում են գեղեցիկն ստեղծելու հնարքները։

Տաճարի արևելյան ճակատի ստորին մասը, իր լայնքով ու բարձրությամբ ճշտորեն ներգծվում է մի շրջագծի, որին ներգծվում է նաև ութնիստ գմբեթաթմբուկի արտաքին պարագիծը։

Տաճարի արևելակողմի ամբողջական ճակատը ճշտորեն ներգծվում է մի շրջագծի, որին ներգծվում է նաև ամբողջական հատակագիծը։

Տաճարի արևելյան ճակատը, առանց բրգաձև տանիքի, ներգծվում է մի շրջագծի, որին ներգծվում է տաճարի հատակագծի կենտրոնական մասը կազմող քառակուսին։

Այս ճակատի գրեթե բոլոր կարևոր կետերն ընկնում են այնպիսի մի ցանցի հանգույցների վրա, որոնց անկյունագծի երկարությունը հավասար է գմբեթաթմբուկի բարձրությանը։

Տաճարի մյուս ճակատների վրա ստեղծված համաչափական պատկերներն իրենց բնույթով գրեթե նույնն են, ինչը առկա է արևելյան ճակատում, անկախ նրանից, թե այդ ցանցերն ստեղծված են քառակուսիներով կամ շեղանկյուններով (գծ. 49—51)։

Զորադիրի վերակազմության գծագրերում գմբեթաթմբուկի ու բրգաձև տանիքի համաչափությունները կրկնում են Մաստարայի, Գառնահովտի, Թարգմանչացի, Թալինի կաթողիկեի և Սիսիանի գմբեթների համաչափությունները։

Զորադիրի սուրբ Էջմիածին եկեղեցու կառուցման ժամանակի բացման հարցում, ըստ երևույթին, ճշմարտությանը մոտ են իտալացի ճարտարապետները։

Նյութի ուսումնասիրությունը բերում է այն եզրահանգման, որ այս հուշարձանը կառուցված պիտի լինի ամենաուշը VII դարի սկզբներում՝ Հռիփսիմեից առաջ, երբ ամենուրեք տիրապետող էր դառնում գմբեթավոր $^3/_4$ խորշերով քառակուսի եկեղեցիների՝ Ավան-Հռիփսիմեի տիպը։

# ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ՏԱՃԱՐԸ

Հայ ճարտարապետության գլուխգործոցներից Հռիփսիմե տաճարը աշխարհին հայտնի է որպես դասական ստեղծագործության ինքնատիպ, եզակի երևույթ:

Ներքին խաչաձև հիմքով կենտրոնագմբեթ եկեղեցիների այն տիպը, որ սկզբնավորվեց Ավանում ու մեծ տարածում գտավ ողջ Հայաստանով մեկ, ընդունված է կոչել Ավանի կամ Հռիփսիմեի անունով՝ «Հռիփսիմեի տիպի տաճարներ»[81]:

Այդ տաճարների շարքում նախապատվությունը Հռիփսիմեն նվաճել է, հարկավ, ոչ այն պատճառով, որ բախտ է ունեցել առաջինն ուսումնասիրվելու և կամ իր ծավալով ամենախոշորն է, և ոչ էլ այն, որ գտնվում է լուսավորչական եկեղեցու բուն կենտրոնի՝ Էջմիածնի մերձ ոլորտում, կամ թե իր ներսում ամփոփում է սուրբ Հռիփսիմեի աճյունը, այլ նախ և առաջ նրանով, որ իր ճարտարապետական բարձր բարեմասնություններով ամենահամապարփակն է, ամենակատարյալը: Հնարավոր է, որ այդ շարքի տաճարներից որևէ մեկում կամ մյուսում առանձին դրվագներից մեկը կամ մյուսը Հռիփսիմեի համապատասխան դրվագի համեմատությամբ ինչ-որ չափով առավել կատարյալ է, մյուսը՝ արվեստի առումով կամ կոնստրուկտիվ լուծմամբ նախընտրելի, սակայն դրանք ի վերջո մնում են, որպես առանձին, մասնակի, փոքր, դրվագային երևույթներ:

Հռիփսիմեում ոչ միայն ի մի է բերված նախորդ շրջանի ժողովրդի շինարարական գործունեության նվաճումներով ձևավորված ողջ դրականը, այլև այդ ամենը բարձրացվել է որակական նոր աստիճանի, դրանով իսկ արժանավորապես տեղ գրավել արվեստի ու շինարարության իր ժամանակի ճանաչված մակարդակի բարձրակետում:

Հռիփսիմեն այս տիպի տաճարներից առաջինը չէ. ինչպես տեսանք, մինչ Հռիփսիմեն, ավելի քան երեք տասնամյակ առաջ արդեն գոյություն ուներ տաճարների այդ տիպը սկզբնավորող Ավանի կաթողիկեն:

Ավանից հետո և Հռիփսիմեից առաջ շուրջ երեք տասնամյակի ընթացքում շատ տաճարներ կառուցվեցին Հայաստանում, այդ թվում և տվյալ տիպի կառուցվածքներ, որոնք ինչպես հատակագծային, այնպես էլ ծավալատարածական հորինվածքի առումով Հռիփսիմեի ստեղծման ճանապարհին նրա համար դարձան նախօրինակներ: Բայց այնուամենայնիվ, սովորույթի կարգով Հռիփսիմեի ուսումնասիրության, նրա ճարտարապետական-գեղարվեստական վերլուծության ընթացքում այն համեմատության մեջ է դրվում առաջնեկի՝ Ավանի հետ, զուգահեռներ են անցկացվում դրանց միջև: Այդ նաև նրա համար, որ նրանց միջև եղած տարբերությունները ակնառու են, և որ կարևորն է՝ պարզորոշ ուրվագծվում է եկեղեցական տվյալ տիպի շինությունների զարգացումը երեսնամյա ժամանակաշրջանում:

Հռիփսիմեն համեմատաբար լավ ուսումնասիրված հուշարձաններից է[82], բայց ամեն անգամ նրան անդրադառնալով, հետազոտողները նրա մեջ տեսնում են մինչ այդ չնկատված որևէ երևույթ, կամ երևույթի գնահատմանը բերում են մի նոր երանգ, հարցին նայելով նոր ժամանակի պահանջներով իմաստավորված տեսանկյունով: Այս առումով տվյալ աշխատության առիթով Հռիփսիմեին, ավելի



Գծ. 52. Հռիփսիմե. հատակագիծ:

կոնկրետ՝ Հռիփսիմեի որոշ կողմերին և առանձին դրվագներին նորից անդրադառնալը, թերևս, ավելորդ չի լինի:

Արևելք-արևմուտք առանցքով փոքր ինչ երկարած ուղղանկյուն քառանկյան մեջ ներգծված խաչաձև դասավորության կիսաշրջան հիմքով չորս խորանները, անկյունագծային ուղղության 3/4 խորշերը և քառակուսի հատակաձև ունեցող անկյունների չորս սենյակները կազմավորում են Հռիփսիմեի ամբողջական հատակաձևը (գծ. 52): Ահա այդ հիմքի վրա էլ բարձրանում է տաճարի ներքին տարածությունն ընդգրկող խորանարդաձև ծավալը: Այս վերջինի վրա՝ ներքին խաչաթևերի խաչմերուկի ճիշտ վերևում բազմանիստ գմբեթի ծավալն է, ծածկված բրգաձև տանիքով:

Տաճարի հատակաձևում հյուսիսային և հարավային խորանները, որ և՛ լայնքով, և՛ խորությամբ համեմատաբար փոքր չափեր ունեն, անմիջականորեն հարում են գմբեթատակ քառակուսուն, մինչ արևելյան և արևմտյան խորանները, որ և լայնքով, և խորությամբ գերազանցում են նախորդներին, հիշյալ քառակուսուց հեռացված են մոտ 2,10 մետր լայնք ունեցող ուղղանկյուն թաղածածկ տարածությամբ՝ նախախորաններով: Տվյալ երկու հանգամանքներով էլ պայմանավորված է տաճարի ձգվածությունը արևելք-արևմուտք առանցքով: Նախախորաններով են պայմանավորված նաև գմբեթատակ քառակուսու, ավելի ճիշտ՝ քառանկյան չափերը (հյուսիս-հարավ առանցքով՝ 10, 10, արևելք-արևմուտք առանցքով՝ 9,52 մետր):

Խորանների և 3/4 խորշերի միջև գտնվող բոլոր որմնամույթերը մոտավորապես նույն լայնքն ունեն (95—105 սմ.): Զգալի չափեր ունեն 3/4 խորշերը (նրանց տրամագիծը 2,49—2,57 մետր է): Անկյունային սենյակները հիմքում կանոնավոր քառակուսիներ են (4,00×4,00, 4,10×4,07 մետր և այլն): Դրանց արևելակողմի պատերի բարակացման հաշվին ստեղծվել են ոչ մեծ, կիսաշրջան հիմքով ու գմբեթարդ վերնամասով խորշեր: Արևելյան սենյակների խորշերում են բացվում այդ կողմի պատուհանները: Արևմտակողմի սենյակներում խորշերը զբաղեցնում են դռների բացվածքներից ազատ պատահատվածները:

Անկյունային սենյակների և 3/4 խորշերի միջև պատերը սովորականից բարակ են (35—40 սմ.), և որպեսզի բարավորները կարողանան դիմանալ վերնամասի պատերի ծանրությանը, ճարտարապետը այդ բարավորների վերևում ստեղծել է կամարակապ լյունետներ, փակ տիմպանով:

Այս սենյակները լուսավորում են երկուական լուսամուտներ: Մեկական լուսամուտ ունեն խորաններից յուրաքանչյուրը: Արևելյան խորանում պատուհանները երեքն են. երկու կողայինները այժմ հոծ պատերով փակված են: Ա. Բ. Երեմյանի ուսումնասիրությունների համաձայն դրանք սկզբնապես չեն եղել, իբր հետո են բացվել և, ապա փակվել: Հռիփսիմեի բոլոր պատուհանների կողերը գրեթե զուգահեռ են, դրանք դեպի ներս չեն լայնանում:

Տաճարը մուտքեր ունի արևմուտքից և հարավից, որոնք սկզբնապես եղել են ձևավորված շքամուտքեր: Բոլոր ճակատներում առկա են երկուական սեղանաձև հիմքով խորշեր: Հյուսիսային և հարավային ճակատների խորշերը երկաստիճան են՝ ունեն երկուական ծածկ՝ մեկը վերևում, մյուսը՝ խորշի բարձրության մոտ 2/3-ում: Վերին ծածկը, որ հատած խոշոր կիսակոն է, ընդգրկում է ողջ խորշի լայնքը, իսկ խորության միայն կեսը: Մնա-

ցած կեսը՝ խորքային մասը ծածկում է համեմատաբար փոքր չափի լրիվ կիսակոնը, որ գտնվում է ցածր դիրքում՝ մոտավորապես ճակատի թևերի քիվերի գծի վրա (գծ. 54, 55; նկ. 28):

Գմբեթաթմբուկի ներքին հարթությունը մշակված է փոքր խորության խորշերի շարքով, որոնցից 12-ի վրա բացվում են լուսամուտներ, չորսի վրա փոքր բարձրության դռներ: Այդ խորշերի վերևով անցնում է 32 փափանակներով ստեղծված անընդհատ մի շարք: Ավելի վերև՝ գմբեթի կիսագնդաձև հարթությունը ձևավորում են քարակերտ դեկորատիվ խաչի թևերը, յուրաքանչյուրը երեքական ճառագայթով (նկ. 30):

Այս ճառագայթաձև դեկորատիվ խաչերը իրենց սիմվոլիկ և, ինչ որ չափով կոնստրուկտիվ նշանակությունից պատ, մեծ դեր են խաղում ձևակարմության առումով: Մեծ բարձրության վրա գտնվող կիսագնդաձևը ներքևից դիտվելիս տեսողական կրճատման երևույթով տափակվում, ընդունում է փոքր խորության ափսեի ձև: Այս երևույթը Հռիփսիմեում առավել ակնբախ կարող էր լինել երկու պատճառով: Նախ, որ ծածկի կիսագնդաձևը սկսվում է ոչ թե պատուհանների բարավորների վերևից, ինչպես որ սովորաբար լինում է, այլ ավելի ցածրից, և երկրորդ, որ գմբեթաթմբուկի հիմքում առկա պատշգամբը իր բազրիքով դիտողից ծածկում է թմբուկի պգալի մասը: Եվ ահա, խաչ կազմող այդ ճառագայթները նշանակալի չափով կիսագնդաձևը ներկայացնում են գրեթե այնպես, ինչպես որ կա իրականում:

Գործադրված ճարտարապետական այս ձևերը գմբեթային ներքին տարածությանը տալիս են տեսողական առավել հաճելի համաչափություններ: Այս հողի վրա է, որ հետագայում գմբեթներն ստեղծվում էին ավելի մեծ բարձրությամբ, սլացիկ ձևերով:

Այն կարծիքը, որ կողեր կազմող այդ ճառագայթները կառուցվել են սկզբից, և հետո լցվել են նրանց միջև առաջացած հարթությունները, սխալ է: Նախ, այդ ճառագայթների լայնական չափերը փոքր են ինքնուրույն կառուցվելու և կայուն լինելու առումով և, ապա, ինչպես առկա է իրականում, այդ ճառագայթները ստեղծված են գմբեթի սովորական շարքային քարերի վրա, կազմելով նրանց լայնքի մի մասը միայն: Սրանից հետևում է, որ նրանք ստեղծվել են գմբեթածածկի հետ միասին և միաժամանակ:

Այն կարծիքը, որ իբր մեր եկեղեցիների գմբեթներում այդ կողերը ունեն ավելի ճառագայթների, քան խաչի բնույթ, մերժվում է ցարդ կանգուն գմբեթների առկայությամբ: Գրեթե ամենուրեք (որոշ բացառություններով) այդ ճառագայթներն իրենց խմբվածությամբ դեկորատիվ խաչեր են:

Հռիփսիմեում գմբեթաթմբուկի արտաքին 16 նիստերից 12-ը զբաղված են լուսամուտներով, չորս անկյունայինները՝ $^{3}/_{4}$ բոլորակ հիմքով փոքր աշտարականման ծավալներով:

Շինության ընդհանուր և կարևոր դրվագների չափերը արտահայտվում են գծագրերում և աշխատության մեջ բերված ցանկում:

Հռիփսիմեն Ավանից տարբերում են հատակագծային և ծավալատարածական չափերը (սա անհամեմատ մեծ է նախորդից), անկյունային սենյակների ձևերը (սրանում սենյակները, ինչպես ավելեց վերևում, հիմքում քառակուսի են, Ավանում՝ բոլորաձև): Սրանում շինության արտաքին ճակատներում առկա են երկուական սեղանաձև հիմքով խորշեր, որպիսիք Ավանում չկան, Ավանի անկյուններում առկա են չորս փոքր գմբեթներ, ասել է, թե Ավանը հինգ գմբեթանի եկեղեցի է. Հռիփսիմեում այդպիսիք չկան և նա ունի միայն մեկ խոշոր գմբեթ: Ավանը և Հռիփսիմեն, անկախ գմբեթների քանակից, պատկանում են տաճարների նույն տիպին, քանզի տիպը բնորոշող կողմերից ամենակարևոր կողմը՝ ներքին $^{3}/_{4}$ խորշերը առկա են և՛ մեկում, և՛ մյուսում (նկ. 29—31):

Ահա այս է Հռիփսիմե տաճարի խիստ համառոտ նկարագիրը: Ստորև կշոշափվեն լոկ այն հարցերը, որոնք այժմեական են և դրանց արծարծումը մեր օրերում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

* * *

Հռիփսիմեի ճարտարապետը մեծ արվեստագետ լինելուց բացի եղել է հմուտ, և որ ակներև է, համարձակ կառուցող: Հատակաձևին նայողն անմիջապես կնկատի, թե ինչպես շինության հատակա-



Գծ. 53. Հռիփսիմե. գմբեթային մասի հատակագիծ:

ձևում ներքին ու արտաքին եզրագծերը ընդհուպ մոտենում են միմյանց, իրենց միջև պատերի համար թողնելով շատ փոքր տարածություն, երբեմն այնքան, որ այնտեղ հազիվ տեղավորվում է մեկ քար, բայց չէ որ այդ օրերի պատերը ստեղծվում էին երկկողմ երեսապատումով ու ներքին շաղախապանգվածով:

Այդ ժամանակներում նոր գործադրություն ըստացած արտաքին սեղանաձև հիմքով խորշերը Հռիփսիմեում, հանուն նոր, հզոր հնչեղության, ընդունելով նոր մասշտաբներ, բառիս բուն իմաստով՝ մխրճվում են պատերի և կանգվածների թանձրության մեջ և կանգ առնում այնտեղ միայն, որտեղ մինչև ներքին հարթությունը մնում է տարածություն հազիվ մի քար տեղավորելու համար: Այդպես է իրավիճակը անկյունների չորս սենյակների և արևելյան ու արևմտյան ճակատների խորշերի միջև, ինչպես և 3/4 խորշերի և հյուսիսային ու հարավային ճակատների խորշերի միջև: Սրանով էլ պետք է բացատրել այդ խորշերի իրենց հիմքում սեղանաձև, և ո՛չ եռանկյունաձև լինելը, չէ որ եռանկյունու գագաթը կշարունակեր այնքան խորրանալ պատի մեջ, որ այլևս կվտանգեր բուն պատի անհրաժեշտ կայունությունն ու կրողունակությունը:

Առաջին տպավորության ազդեցությամբ շատերը, այդ թվում և մասնագետ հետազոտողներ, որպես բացասական երևույթ, նշում են Հռիփսիմեի ճակատների սեղանաձև հիմքով խորշերի երկու կողերի տարբեր թեքվածությունը հիմքում, այն վերագրելով կառուցողի պակաս վարպետությանը:

Խորամուխ լինելով մանրամասներում, մենք հանգում ենք այլ եզրակացության:

Նախ, ընդունենք, որ տաճար ստեղծողը որոշած է եղել մեծ կանգվածները հնարավոր առավելագույն չափով թեթևացնելով հանդերձ, այդ ծավալների նորագյուտ մոտիվը իր կառույցում հնչեցնել ըստ ամենայնի, համապատասխան չափերով ու ձևերով: Եվ երբ այդպիսիք նա նշել է հատակաձևի դրանց համար բնորոշ տեղերում, անմիջապես դրսևորվել են դժվարություններ, որոնց հետ պիտի հաշվի նստեր և գտներ ընդունելի լուծումներ:

Արևելյան ճակատում խորանին համապատասխանող միջնամասը պիտի ունենար մասշտաբային իմաստով անհրաժեշտ լայնք և միայն այնքան, որ տեղ մնար նաև խորշերին, հատկապես նրանց վերնամասում, որտեղ ճակտոնը վերջանում, ուղղաձիգ իջնում է անկյուն կազմող պատի մի հատված և սկսվում ավանդատան միաթեք տանիքը: Ինչպես երևում է հատակագծում, արտաքին խորշերի ներքին խորանին կից կողերը վերջինիս կորության հետ գտնվում են նորմալ վիճակում, մինչ մյուս էջերը արևելյան սենյակների որոշ անկյուններին շատ մոտ են՝ 50—60 սմ վրա: Ճարտարապետը համաձայնել է հանգույցի տվյալ լուծմանը, այդ թվում և խորշերի դրսի կողերի թեքվածության փոքր ինչ ավելացմանը, հանուն այդ խորշերի նախընտրած չափերի պահպանման:

Հավանական է, որ նույնպիսի լուծում կստանար տվյալ դրվագը արևմտյան ճակատում, եթե այդտեղ չլիներ տաճարի երկու շքամուտքերից մեկը, որի լայնական չափը անհամեմատ մեծ է եղել արևելյան խորանի պատուհանի համապատասխան չափից: Այստեղ ճակատի միջնամասի լայնացումը ակներև անխուսափելի է, և այդ անել հնարավոր է միայն ու միայն արտաքին խորշերի փոքրաց-

ման, և ոչ մի դեպքում՝ հեռացման հաշվին. ավելի այն կողմ դրանք տեղ չունեն, անկյունային սենյակները փակում են խորշերի դեպի ճակատի թեվերը շարժելու ճանապարհը: Եվ որպեսզի արևմըտյան ճակատի խորշերը մյուս ճակատների խորշերի մասշտաբից չընկնեն, ճարտարապետը խիստ փոքրացրել է տվյալ խորշերի, հատկապես խորանին կից կողերի թեքվածությունը:

Հարավային և հյուսիսային ճակատներում միջնամասի լայնքը վերցված է արևելյանի չափով: Շինության այդ մասերում առկա են ավելի մեծ վանգվածներ: Օգտվելով ճակատների ձգվածությամբ առաջացած հնարավորություններից՝ ճարտարապետը խորշերին տվել է ավելի մեծ չափեր, թերևս՝ սահմանային մեծության չափեր. դրանց լայնությունը հասնում է 2,70—3,20, խորությունը՝ 2,00—2,20 մետրի: Այստեղ վանգվածները ավելի խոր են խորանների, լայն՝ անկյունային սենյակների մոտ: Այդ իրավիճակով էլ պայմանավորված է այդ խորշերի կողային նիստերի և, նույնիսկ, ներսի ճակատային պատերի թեքվածությունը: Այս բոլորը Հռիփսիմեում կարմանալիորեն տրամաբանված է և նշան է կառուցողի ավելի հմտության, քան «պակաս վարպետության» կամ պատահականության:

*
* *

Հռիփսիմեի գմբեթային փոխանցման համակարգը դիտելիս չի կարելի չնկատել արվեստագետ կառուցողի ձգտումը՝ հետ տանել «վարագույրը» և թափանցիկության աստիճանի ցույց տալ շինության կոնստրուկցիան և նրա կառուցելակերպը, ըստ որում, ոչ թե կրող մասերի մերկությունը ի ցույց դնելով, այլ արվեստի միջոցներով վերակերտելով, դրանց հաճելի տեսք ու կերպարանք տալով (նկ. 29, 31):

Հռիփսիմեում իրոք որ $^3/_4$ խորշի ծածկը անմիջականորեն մասնակցում է գմբեթային փոխանցման համակարգի աշխատանքին, որպես գործող մաս: Որմնամույթի խոյակի վրայից խորշի գմբեթարդ ծածկի հետ սկսվում և վեր են բարձրանում հովհարաձև բացվող միջանկյալ քարի շարքեր, ստեղծելով հիմք կիսակոնաձև տրոմպի համար, որի կամարակապ ճակատային մասի վրա հենվում և բացվելով՝ առաջանում է համակարգի ամենակարևոր հատվածը՝ հատած կիսակոնային տրոմպը: Այս վերջինս ոչ միայն վերևից եկող ուժը փոխադրում է որմնամույթերին, այլև իր ուսերին հենված փոքր տրոմպներով և էլի քարի մի շարքով ու գոտով ստեղծում է գմբեթաթմբուկի համար բոլորակ հիմք. դեռ ավելին, այն իր երկու ծայրերում տարբեր լայնքեր ունենալու շնորհիվ հնարավոր չափով շտկում է գմբեթատակ քառակուսու հյուսիսհարավ ձգվածության հետևանքները:

Հատկանշական է, որ այս համակարգում բարձրի հատած տրոմպի և նրա ներսում լրիվ կիսակոն տրոմպի միջև առկա վերջինիս ճակատային մասը հանդիսացող շերտը իր երկու ծայրերով հենվում է երկու հարևան որմնամույթերի վրա, ակաղեցնելով խոյակի մոտ մեկերրորդ մասը: Այդպես չէ իրավիճակը մի շարք այլ տաճարներում, այդ թվում Զվարթնում և Աթենում:

Այս վերջիններում հատած տրոմպի ճակատային պատը ոչ մի չափով չի հենվում որմնամույթի վրա, նա փաստորեն իրենով ծածկում է այն ամենը, ինչ երևում է Հռիփսիմեում, միաժամանակ խկում առաջացնում հատած մեծ տրոմպի և $^3/_4$ խորշի գմբեթարդ ծածկի ու սրա եկրակամարի միջև: Այդ ճակատային պատը հանդիսանում է $^3/_4$ խորշի բոլորակ պատի վերնամասի ավարտը, տեղ գրավում խորշի գմբեթարդ ծածկի և որմնամույթի միջև: Այս առումով $^3/_4$ խորշի վերնամասը տեսողապես պոկված լինելով որմնամույթից և հեռացած մնալով հատած մեծ տրոմպից, ոչ մի մասնակցություն չի բերում գմբեթային փոխանցման համակարգին, մի բան, որ սխալմամբ վերագրում էին նրան (գծ. 88): Ըստ էության, Զվարթնում և Գառնահովտում այդ հարցում տարբերություն չկա: Տարբեր է միայն այն, որ Զվարթնում պակաս չափով են թեքված $^3/_4$ խորշի բացվածքն ու ճակատային մասը, մինչ Գառնահովտում համեմատաբար մեծ չափով:

Զվարթի և Աթենի տաճարների օրինակը լավագույն ձևով ցույց է տալիս, որ $^3/_4$ խորշի գմբեթարդ ծածկը և եկրակամարը որոշ տաճարներում չեն հանդիսանում գմբեթային փոխանցման համակարգի օրգանական և անհրաժեշտ մասը և այդ պարտադիր էլ չէ, թեպետև նրանք իրենց առկայությամբ և դիրքով իրոք անհրաժեշտություն են կառուցվածքի տվյալ հանգույցում գործող, դեպի



Գծ. 54. Հռիփսիմե. արևելյան ճակատ։

դուրս հրող ուժերը դիմագրավելու և մարելու, կամ դրսի պատերին փոխադրելու համար։

*
* *

Հռիփսիմեն նկարագրողների, ուսումնասիրողների, հետազոտողների գերակշռող մեծամասնությունը ունեցել է այն կարծիքը, թե տաճարի սկզբնապես կառուցված գմբեթը կործանվել է, չթողնելով ոչ մի հետք, իսկ ժամանակակից գմբեթը հետագայում է կառուցվել՝ X—XI դարերում։ Որոշ հետազոտողներ տաճարի կառուցումը տանում են IX դարի վերջը կամ X դարի սկիզբը[83], իսկ գմբեթի վերակառուցումը՝ X դարի վերջը, կամ XI դարի սկիզբը։ Նրանց կարծիքով սկզբնական գմբեթը, որ գոյատևել է մեկ դարից էլ պակաս ժամանակամիջոցում չէր կարող ունենալ 16 նիստեր, ինչպես այժմյան գմբեթն է։ Ա. Երեմյանը Հռիփսիմեի ներկա գմբեթի կառուցումը համարում է X դարի սկզբի գործ[84]։

Հռիփսիմեի այժմյան գմբեթը ոչ սկզբնականը համարելու փաստերն այնպիսին են, որ դրանց օրինականությունը հավաստելու համար թերևս հարկավոր են առավել հավաստի փաստեր։

Հավականալի է, որ նախնական գմբեթավոր տաճարներում գմբեթատակ քառակուսին սկզբնապես պետք է ծածկված լիներ հիմքում քառակուսի եկրագծեր ունեցող գմբեթով, հաջորդ էտապում՝ ութնիստ եկրագծեր ունեցող գմբեթով։ Սակայն ի՞նչ հիմք կա պնդելու, թե Հռիփսիմեի կառուցման ժամանակներում 12 կամ 16 նիստերով գըմբեթներ չեն եղել։ Ընդունենք, որ դրանց այլ օրինակներ չկան, բայց չէ որ հենց Հռիփսիմեի գըմբեթը կարող է դրանց պահպանված օրինակը լինել։ Ընդամենը երկու տասնամյակ անց սկսվել է Զվարթնոցի կառուցումը, որի վերակազմության նախագծում Թորամանյանը գմբեթը իրավացիորեն պատկերում է 16 նիստերով. մեր ժամանակակիցներից ոմանք՝ 12 նիստերով, բայց չէ որ հնարավոր չէ Զվարթնոցի ահագին գմբեթը պատկերացնել ութ նիստերով, և այդպես ոչ ոք չի էլ առաջարկում։ Նշանակում է, չի կարելի VII դարին վերագրվող բոլոր տաճարների գմբեթները պատկերել միայն ու միայն ութ նիստերով, լոկ այն հիման վրա, որ պահպանվող գմբեթները ութ նիստեր ունեն։ Չէ որ դրանց տրամագծերը Հռիփսիմեի գմբեթի տրամագծից փոքր են և հարկ չկար նրանց նիստերի թիվը վերցնել ութից ավելի։ Ճիշտ է, Զվարիի գմբեթի տրամագիծը մոտենում է Հռիփսիմեի գմբեթի տրամագծաչափին և այժմյան գմբեթը ընդամենը ութ նիստեր ունի, հայտնի է սակայն, որ այն 925 թ. կործանվելուց հետո, վերականգնվել



Գծ. 55. Հռիփսիմե. հարավային ճակատ։

է XI դարում: Գրվում է, որ իբր կործանված է եղել նրա միայն արևելյան կեսը և վերականգնվել է նախկին ձևով, սակայն այդ հաստատող տվյալները անառարկելի չեն: Տաճարի արևմտակողմի որոշ մույթերի վրա երևում են փլուզման և վերականգնման այնպիսի հետքեր, որոնք հուշում են ինչ-որ ժամանակ գմբեթի նաև արևմտյան կեսի կործանման մասին: Այսպիսի պարագաներում VII դարի բոլոր տաճարներին վերագրել գմբեթներ, ինչպիսին մեր օրերում ունի Զվարթնոցը, երբ իրականում հայտնի չէ, թե ինչպիսին է եղել այդ տաճարի սկզբնապես կառուցված գմբեթը,— առնվազն չի կարող ճիշտ համարվել:

Առավել կարևոր է նկատել, որ Զվարթնոցի գմբեթաթմբուկը միայն դրսից է ութ նիստերով, ներսից՝ պատուհանների կես բարձրությունից վերև **այն 16 նիստերով է:** Իրականում Զվարթնոցի գմբեթաթմբուկի բարձրության ավելի քան $^{3}/_{4}$-ի սահմաններում ներսն ու դուրսը միմյանց չեն համապատասխանում, այլ կերպ ասած, դրսի և ներսի նիստերը միմյանց զուգահեռ չեն: Ն. Պ. Սևերովի կազմած Զվարթնոցի գմբեթային մասի հատակագիծը, որ տեղադրված է «Զվարթնոցի տիպի հուշարձաններ» հայտնի աշխատության ալբոմում (էջ 3), ճիշտ է միայն գմբեթաթմբուկի բարձրության ստորին քառորդի համար:

Մի այլ ճարտարապետ այդ նույն ժամանակներում, թերևս առավել արդարացի ու անսխալ կլիներ, եթե իր կառուցած տաճարում ներսից 16 նիստ ունեցող թմբուկի արտաքին նիստերի թիվը հասցներ նույնպես 16-ի:

Բանն այն է, որ Հռիփսիմեի գմբեթային փոխանցման համակարգը նշանակալից չափով տարբերվում է Զվարթնոցի նույն դրվածքից և, ըստ երևույթին, փոխանցման այդ ձևը կառուցողի կողմից եղել է նախօրոք ծրագրված: Այդ մի դեպք է, որի պայմաններում գմբեթի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարթությունները կարելի է ձևակերպել ցանկացած ձևով ու նիստերի ցանկացած քանակով: Տվյալ դեպքում Հռիփսիմեի գմբեթաթմբուկի ներքին հարթությունը մշակված է 16 խորշերով, դրան ճշտորեն համապատասխան 16 նիստեր ունի գմբեթը նաև արտաքինում: Հետևում է, որ Հռիփսիմեի համար մի այլ քանակի նիստերով գմբեթ ենթադրելը ինչ-որ չափով սուբյեկտիվ մոտեցման արգասիք կարող է համարվել:

Այդ նույն հետազոտողների կողմից Հռիփսիմեի այժմյան գմբեթի VII դարում կառուցված լինելը մերժվում է նաև գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտու առկայության փաստով:

Գոտու գոյությունը առաջին հայացքից պետք է որ այդ կարգի նշանակություն չունենար, սակայն տվյալ դեպքում նա հանդիսանում է գմբեթային փոխանցման համակարգի մասը և, ապա նրա առկայության դեպքում միայն հնարավոր է գմբեթաթմբուկի պատերը տրոմպների եզրերից ետ տանել և անկախ փոխանցման համակարգի ոչ լիակատար բոլորակության, ստեղծել գմբեթ ամենայն կանոնավորությամբ:

Հռիփսիմեի գմբեթաթմբուկի հիմքում չէր կարող գոտի չլինել, քանի որ փոխանցման համակարգի բուն էությունը, տրոմպի թռիչքաչափն ու տարածության ընդգրկման լայնությունը նկատի ունեն գոտու գոյությունը իրենց ավարտում: Հակառակ դեպքում անհրաժեշտ կլիներ մեծ տրոմպներով միանգամից անցնել թմբուկի ներքին ութ նիստ հարթության, ինչպես Զվարթնոցում է, մի բան, որ չէր բավարարի Հռիփսիմեն կառուցողի գեղագիտական ըմբռնմանը:

Միաժամանակ պետք է նկատել, որ տվյալ հարցադրումն ինքնին ճիշտ չէ, թե իբր VII դարի գմբեթների հիմքով գոտի չի անցնում: Հիշենք, որ V դարի հուշարձան Տեկորի գմբեթաթմբուկի հիմքով անցնում է գոտի, Ավանի հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան փոքր գմբեթների հիմքերով անցնում է գոտի, Թարգմանչացում, նաև Մաստարայում առկա է այդ գոտին: Զվարթնոցում պահպանվում են գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտու որոշ թվով բեկորներ:

Ի վերջո պատմությամբ հայտնի չէ, որ VII դարում շինարարական որևէ կանոնով արգելվեր գմբեթային փոխանցման համակարգի գոտով ավարտվելը գմբեթի հիմքի բարձրության վրա: Հետևում է, որ տվյալ գոտու գոյությունը Հռիփսիմեում չի կարող փաստարկ հանդիսանալ գմբեթի ուշ կառուցման համար:

Հռիփսիմեի գմբեթաթմբուկի ներքին հարթությունը մշակված է փոքր խորության 16 խորշերով: Հետազոտողներից ոմանք, այդ թվում և Ա. Երեմյանը այդ խորշերը համարում են ոչ հատկանշական VII դարի հուշարձանների համար, մանավանդ որ դրանց օրինակները իբր չկան: Մինչդեռ, ինչ-



Գծ. 56. Հռիփսիմե. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով:

պես հայտնի է, ճիշտ նույնպիսի խորշերով է մշակված VII դարի Պեմզաշենի եկեղեցու (Մահմուտձուք) գմբեթի ներքին հարթությունը: Իսկ թե ինչ նպատակով են արված այդ խորշերը այս տաճարների գմբեթներում, կերևա ստորև:

Հռիփսիմեի գմբեթաթմբուկի և կիսագնդաձև ծածկի սահմանագծով (մի քիչ բարձրից) անցնում է փոքրիկ վահանակներով ստեղծված գոտի: Այս հուշարձանի հետազոտողներից մեկը այդ ևս համարում է ոչ հատկանշական VII դարի համար, մանավանդ, որ նման գոտի կա Գառնահովտում և Թալինի կաթողիկեում, իսկ այս վերջիններս իբր ոչ թե VII, այլ X—XI դարի հուշարձաններ են, հետևաբար, ըստ նրա Հռիփսիմեի գմբեթը ևս պիտի լինի XI դարի գործ[85]:

Ա. Երեմյանը, ընդհակառակը, այդ վահանակների մոտիվը համարում է հատկանշական VII դարի համար, սակայն այն, ինչը կա Հռիփսիմեում իրեն որոշ կողմերով, իբր հեռանում է VII դարից, հասնում X դարի սկզբները: Որո՞նք են այդ կողմերը. այն, որ այդ վահանակները մյուսների համեմատ խոշոր են, ավելի խոր են փորված քարի մեջ և որ դրանք միմյանց մոտ են դրված, շոշափում են միմյանց:

Ցարդ հայտնի չէ, թե այդ ի՞նչ օրենքով կամ կանոնով է սահմանված վահանակների տրամագծաչափը, փորվածքների խորությունը, կամ դրանց հեռավորությունը միմյանցից, որպեսզի այդ գոտին համարվի VII դարի գործ, հակառակ դեպքում կտարվի X դար, ի՞նչ փույթ, որ նման մոտիվ չի գործադրվել X—XI դարերի որևէ այլ հուշարձանում:

Համաձայն տեսություններից մեկի Հռիփսիմեն և Գառնահովիտը միմյանց նման են իրենց ծավալային հորինվածքներով, հետևաբար նման պիտի լինեին նաև նրանց գմբեթները, ուրեմն Հռիփսիմեի սկզբնական գմբեթը նման պետք է եղած լինի Գառնահովտի պահպանված գմբեթին. այս վերջինս էլ նման է Մաստարայի գմբեթին, սրանք էլ իրենց ծալքերով (եռանկյունի հիմքով խորշերով) նման են XI դարի հուշարձան Անիի Հովվի եկեղեցուն: Հետևում է, որ բոլորը X—XI դարերի հուշարձաններ են[86]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս ենթադրությունները հենվում են նույնպիսի ենթադրությունների վրա, դրանով իսկ անառարկայական դարձ-



Գծ. 57. Հռիփսիմե. հատակագծի համաչափությունների վերլուծություն:

նում Հռիփսիմեի ու այդ թվում նրա գմբեթի ուշ ժամանակների արգասիք լինելու վերաբերյալ տեսությունը:

* * *

Արդ, հիմնականում երկու հարց է ծառանում Հռիփսիմեն հետապնդողի առջև՝ թե Հռիփսիմե տաճարը ո՛ր ժամանակի գործ է և, ապա, նրա այժմյան գմբեթը կառուցվել է բուն տաճարի հետ միաժամանա՞կ, թե՞ սկզբնականը կործանվելուց հետո:

Յոթերորդ դարի պատմիչ Սեբեոսի հաղորդման համաձայն՝ Խոսրով Ապրուեզի թագավորության 28-րդ տարում (618 թվական) սուրբ Ներսեսի որդի Կոմիտաս կաթողիկոսը քանդում է սուրբ Սահակի կառուցած սուրբ Հռիփսիմեի մատուռը, որը ցածր էր և մութ ու նրա տեղում կառուցում է նորը[87]: Արդ, ոչ մի հիմք չկա Սեբեոսի թողած տեղեկությունը հավաստի չհամարելու համար: Տվյալ դեպքում վիճարկվում է մի այլ հարց, թե Հռիփսիմեի տաճարը իր այժմյան տեսքով Կոմիտաս կաթողիկոսի կառուցա՞ծն է, թե՞ ժամանակի ընթացքում այն խիստ վերափոխվել և կամ կործանվել է ու նրա տեղում, X—XI դարերում հիմն ի վեր կառուցվել է նորը, որը և կանգուն է մինչև այսօր:

Առանց վարանելու պետք է ընդունել, որ այժմյան կանգուն տաճարը Կոմիտասի կառուցածն է: Արդ ինչ հիմքեր ունենք մեր այս եզրակացությունը սկզբից ևեթ հայտնելու համար: Մեր միջնադարի մատենագիրները թողել են մանրամասն տեղեկություններ տաճարի վանական նորոգությունների վերաբերյալ, մինչ նրա լրիվ ավերման ու նույն տեղում բոլորովին նորի կառուցման վերաբերյալ տեղեկություններ չկան: Շատ տաճարներ կան, իհարկե, որոնց մասին չունենք մատենագրական տեղեկություններ, սակայն նման բան չէր կարող լինել Հռիփսիմեի վերաբերյալ երկու առումով: Նախ, որ նա գտնվում է հայ լուսավորչական եկեղեցու կենտրոնում, որտեղ ժողովուրդը շարունակ գոյատևել է, ու այն որպես բնակավայր երբեք չի ամայացել: Եվ ապա խոսքը վերաբերում է ոչ թե պատահական կամ երկրորդական, այլ հռչակված մի սրբավայրի, որտեղ տեղի ունեցող ամեն երևույթ արձագանք է գտել, գրի առնվել մատենագիրների կողմից:

Եվ իրոք, ժամանակը չէր կարող մոռացության տալ Վաղարշապատում տվյալ սրբավայրի հետ պատահած այնքան կարևոր երևույթներ, ինչպիսիք են Հռիփսիմեի կործանումն ու հիմն ի վեր նորից կառուցումը, այն էլ մի այլ ձևով ու տեսքով: Դեռ ավելին, որպես հռչակված սրբավայր Հռիփսիմե էին գալիս նաև այլ ժողովուրդներ, որոնց հիշողությունն ու գիրը կարող էին տեղեկություններ պահպանել նաև իրենց սրբության՝ Հռիփսիմեի հետ տեղի ունեցածի մասին, մինչ նման բաներ չկան:

Հռիփսիմեի այժմյան տաճարում երկու վիմական արձանագրություն կա, որոնցից մեկը արևմտյան ճակատում, պանգակատնով մասամբ ծածկված, մյուսը՝ արևելյան խորանի պատուհանի վերևում՝ պատին ագուցված: Առաջին արձանագրությունը կարդացվում է. «ԵՍ ԿՈՄԻՏԱՍ ԵԿԵՂԵՑԱՊԱՆ ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵԻ ԿՈՉԵՑԱՅ ՅԱԹՌՈ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՇԻՆԵՑԻ ԶՏԱՃԱՐ ՍՐԲՈՑ ՎԿԱՅԻՑՍ ՔՐԻՍՏՈՍԻ»[88]: Երկրորդ արձանագրությունը կարդացվում է. «ՔՍ ԱԾ ՅԻՇԵԱ ԶԿՈՄԻՏԱՍ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՇԻՆՈՂ ՍՐԲՈՅ ՀՌԻՓՍԻՄԷԻ»[89]:

Այս արձանագրություններն իրենց բովանդակությամբ հավաստում են Սեբեոսի թողած հիշատակությունը Հռիփսիմեի տաճարը Կոմիտաս կաթողիկոսի կողմից կառուցված լինելու վերաբերյալ: Հ. Ա. Օրբելին քննելով այս արձանագրությունները, հետևյալ ձևով է արտահայտվում դրանց մասին. «Այժմ խուսափում եմ անվերապահ վճռելուց, թե մեր արձանագրությունն իր ներկա տեսքով իրոք պատկանում է Կոմիտասին: Միայն կասեմ, որ արձանագրության և՛ արտաքինը, և՛ կցագրի կապը ինչ-որ չի կպչում մեր թվագրության 618 թվականին»: «Բոլոր դեպքերում համարում եմ անթույլատրելի տաճարի կառուցման ժամանակի լրիվ նույնացումը արձանագրության իրականացման ժամանակի հետ... Մեկ ժամանակակիցներից և ականատեսներից հայտնի է միայն տաճարի կառուցման թվականը (ըստ որում, դեռ հարց է, ա՞յն տեսքով, ինչպիսին նա պահպանվել է մինչև մեր ժամանակը), բայց ոչ երբեք արձանագրության, արձանագրության վերաբերյալ առայժմ մենք չունենք որևէ հաղորդում», «Ողջ վերոհիշյալը կապված է հարուցում մեր արձանագրության հիրավի

պատկանելիությանը Կոմիտաս կաթողիկոսին»[90]:

Երկրորդ արձանագրության մասին Հ. Ա. Օրբելին գրում է. «Զունենալով Հռիփսիմե տաճարի խորանի կոնխում գտնվող արձանագրության պատկերը, չեմ համարձակվում արտահայտվել նրա՝ Կոմիտասին վերաբերելու մասին»... «...Արձանագրությունը այնպիսի տպավորություն է թողնում, կարծեք թե այն, ինչի մասին խոսվում է նրանում, ամենևին էլ նախատեսված չի եղել եկեղեցու պատի վրա փորվելու համար»[91]:

Ինչպես տեսնում ենք Հ. Օրբելու նկատողությունները վերաբերում են արձանագրությունների ձևական կողմին, նրանց գրվելու ժամանակին, բայց ո՛չ երբեք բովանդակությանը՝ տաճարը 618 թվականին կառուցված լինելուն: Մի դեպքում միայն, այն էլ տողատակի փակագծերի ներսում ակնարկում է «դեռ հարց է, թե արդյոք ա՞յն տեսքով, ինչպես նա պահպանվել է մինչև մեր ժամանակը», այսինքն՝ հնարավոր է համարում, որ տաճարը ժամանակի ընթացքում գուցե կրած լինի որոշ ձևափոխություններ: Մինչ ոմանք օգտագործելով տվյալ արձանագրությունների վերաբերյալ Հ. Օրբելու նկատողությունները, դրանց այլ մեկնաբանություն տալով՝ փորձում են շինծու համարել հիշյալ արձանագրությունները ու ժխտել Հռիփսիմեի դեռևս 618 թվականին կառուցված լինելը, ասելով թե «...Հ. Օրբելին շատ քուսպ ձևով կասկածի տակ է առնում ոչ միայն արձանագրությունների կատարման, այլև իրեն՝ այժմ կանգուն տաճարի կառուցման ժամանակը»[92]:

Նույնիսկ հնարավոր չէ մտածել այդ արձանագրությունների շինծու լինելու վերաբերյալ և կամ պատկերացնել, որ կարող են սկզբնապես կառուցված ու արդեն կործանված եկեղեցու արձանագրությունները մեքենայաբար տեղափոխելով դնել բոլորովին նոր կառուցված, մի այլ տիպի տաճարի պատի շարվածքում. սա կլիներ պատմության անօրինակ կեղծում: Մինչդեռ հենց դրան են բերում վերոհիշյալ հետազոտողների որոշակի ակնարկները ու տեսությունները:

Բանն այն է, որ այդ արձանագրությունները հայտնի են եղել ընդհանուրին նախ նրանով, որ նրանցից, համենայն դեպս մեկը՝ արևմտյան ճակատինը ամեն ոք կարող էր կարդալ ու սխալ տեսնելու դեպքում երևույթի դեմ ծառանալ, և ապա, դրանք վիմական են, փորված քարի վրա, այդ գաղտնի անելու գործ չէ: Նման ենթադրություն, թերևս, թույլատրվեր ներկով գրած արձանագրությունների վերաբերյալ. այն ավելի մատչելի կլիներ կատարել առանձին անձի կողմից, ինչ-որ շահ նկատի առնելով: Այդ ո՞ր մեծ ստեղծագործող կառուցողը և կամ նման մեծ ձեռնարկի պատվիրատուն կհանդուրժեր, որ իր իրականացրած մեծագործությունը վերագրվեր մի ուրիշի, թեկուզև դարեր առաջ ապրած մի մեծանուն կաթողիկոսի: Ո՞ւմ է նման հնարավորություն տրվում, որ կեղծարար պատմությունից մեկի անունը հանի, մյուսինը դնի, ինքը մնալով անպատիժ, դեպքն էլ պատմությանը անհայտ: Այդպիսի գործողությունը միշտ էլ մեծ աղմուկի առիթ է դառնում ու առավել հավանականությամբ տեղ գրավում պատմության էջերում, մատենագրության մեջ և ժողովրդի բանավոր զրույցներով հաղորդվում հաջորդ սերունդներին:

Արդ, կարևորն այն է, և այդ պետք է հասկանալի դառնա, որ Հռիփսիմեի արձանագրությունների Հ. Օրբելու ուսումնասիրությունները իրադրության մեջ ոչ մի փոփոխություն չեն մտցնում, քանի որ արձանագրությունների սկզբնականը լինելը կամ պատճեն հանդիսանալը, VII դարում գրված լինելը, թե ավելի ուշ, կամ ինչ-որ չափով լեզվի անկատարությունը նույնպես վիճակը չեն փոխում: Մեծագործությունը և նրա ստեղծողը միշտ էլ հոչակվում են միասին՝ միաժամանակ: Բարեբախտաբար արձանագրությունները ոչ թե հակասում, այլ հաստատում են Սեբեոսի հաղորդումը, ճարտարապետական-գեղագիտական վերլուծությունը՝ նույնպես:

Պատմությամբ հայտնի են հակառակ երևույթներ, երբ վնասված տաճարի վերանորոգող-վերականգնողին վերագրվում է կառուցողի պատիվ, մեծ տարբերություն չդնելով նորը կառուցողի և հինը վերականգնողի միջև: Այդպիսի դեպքերից են, օրինակ, Իշխանի նորոգող Սաբանին «երկրորդ անգամ կառուցողի» պատիվ վերագրելը, կիսակործան Բանակ տաճարը «Կյուրիկեի ձեռքով» վերականգնող թագավոր Ադրներսեհին նորը կառուցողի պատիվ արձանագրելը և այլն.

Ողջ վերոհիշյալի հիման վրա մերժման է դատապարտվում այն հարցադրումը, թե այժմյան Հռիփսիմեն Կոմիտասի կառուցածը չէ: Հետևում է,

որ այդ հուշարձանը հենց այն է, որի մասին գրել է Սեբեոսը:

Սակայն կան պատմությանը հայտնի դեպքեր, երբ սկզբնապես կառուցված տաճարը չկործանվելով հանդերձ, ժամանակի ընթացքում կրելով բազմաթիվ ձևափոխություններ, սկզբնականից հեռանալով, փոխակերպվում, ստանում է նոր որակ, նոր ժամանակի արտահայտություն, դառնում տաճարների մի այլ տիպի բնօրինակ ու, այնուամենայնիվ, պահպանում նախկին անվանումն ու կառուցման ժամանակը:

Արդ, կարո՞ղ ենք ենթադրել, որ նման բան պատահել է նաև Հռիփսիմեի հետ, որ իբր այն՝ այժմյան Հռիփսիմեն դեռևս 618 թվականին Կոմիտասի կողմից կառուցածն է, սակայն կրած նշանակալից ձևափոխումների հետևանքով ստացել է նոր կերպարանք, որ նույնացնել սկզբնականի հետ հնարավոր չէ:

Տվյալ հարցադրումից ելնելով, փորձենք հետամուտ լինել, պարզելու համար, թե հետագայում տաճարի օրգանիզմում ի՞նչ կարգի փոփոխություններ կարող էին տեղի ունենալ և այդպիսիք ի՞նչ չափով կարող էին ձևափոխել սկզբնապես կառուցված տաճարի հատակագծային և ծավալատարածական հորինվածքը, ներառյալ ներքին ու արտաքին կարևոր դրվագները, հարթությունների մշակումները և այլ մանրամասներ:

Ակներև է, որ Հռիփսիմեի հատակագծում սկզբնական կառուցումից ի վեր որևէ, այս կամ այն չափով նշանակալից ձևափոխություն տեղի չի ունեցել և հետազոտողներից որևէ մեկի մոտ նման ակնարկի չենք հանդիպում:

Այժմյան տաճարի հիմնական ծավալը հինն է, վրան չկան դեկորատիվ այնպիսի ձևեր, որոնց ավելացումը հետագայում, շինարարության իրականացման իմաստով, հնարավոր լիներ (գմբեթի մասին կխոսվի ստորև):

Որոշ հետազոտողների մոտ տարակարծությունների առիթ են դարձել Հռիփսիմեի ճակատների խորշերը: Նրանք այդ խորշերի առկայության հիման վրա Հռիփսիմեի կառուցման ժամանակը համարում են X դարը, վկայակոչելով Թորոս Թորամանյանին, որը «Տեկորի տաճարը» աշխատության մեջ[93] կարծիք է հայտնում, թե ճակատների խորշերը ավելի հեռու տանել, քան X դարը, հնարավոր չէ: Հետագայում, նույն ինքը՝ Թորամանյանը գրում է. «Երկրորդ վերածնության հատուկ է շենքի կանապան կողմերի վրա բարձր և կամարակապ խորշեր շինելու ոճը: Այս ոճի ծագման պատճառների մասին բացատրություններ տվել եմ «Տեկորի տաճարը» անունով ուսումնասիրությանս մեջ. սակայն հարկ է ուղղել այստեղ, որ այդ աշխատությանս մեջ համարել էի X դարու ոճ, բայց հետագային կատարած ուսումնասիրություններս ապացուցեցին, որ VII դարու ոճ է և ոչ X դարու»[94]: Նրանք իրենց նախորդ աշխատություններում չէին հիշատակում Թորամանյանի վերոհիշյալ ուղղումը: Ավելի ուշ ստիպված եղան ակնարկել այդ ուղղումը, մեկնաբանելով սակայն, որ այդ ուղղումը Թորամանյանը կատարել է, տուրք տալով Ստրժիգովսկու ոչ ճիշտ տեսությանը[95]: Ահա, այս հիման վրա Ծրոմի տաճարն ուսումնասիրողներից մեկը ճակատներում խորշեր ունեցող VII դարի մեր բազմաթիվ տաճարները թվագրում է IX—X դարերով: Հակառակ դրան, հնարավոր է համարում համոզել, որ այդ խորշերը, որպես կարգացում Զվարիի արևելյան խորշերի, սկզբնապես ստեղծվել են Ծրոմիի VII դարի (626—634) հուշարձանում:

Արդ, փորձենք պարզել, թե Հռիփսիմեի ճակատների խորշերը կարո՞ղ են արգասիք լինել VII դարի տաճարի IX—X դարերի վերակառուցման:

Բանն այն է, որ Հռիփսիմեի ճակատների խորշերը այնպիսի խոշոր չափեր ունեն և այնպես խորն են նստել պատերի մեջ, որ առանց պատերը և հիշյալ կանգվածները հիմն ի վեր քանդելու, գոյություն ունեցող տաճարում հնարավոր չէր լինի այդպիսի խորշեր ավելացնել: Իսկ եթե իրոք պատերն ու կանգվածները քանդեին, նոր խորշերով պատեր ու կանգվածներ բարձրացնեին, այդ կնշանակեր բոլորովին նոր եկեղեցի կառուցել, մի դեպք, որի մասին խոսվեց վերևում: Այն դեպքում, եթե խորշերն ավելացնեին, առանց կործանելու գոյություն ունեցող եկեղեցին, անշուշտ այժմյան պատերի վրա և՛ ներսից, և՛ դրսից պիտի պահպանվեին այդ մեծ գործողությունների անկոծկելի հետքերը: Մինչդեռ նման երևույթներ այժմյան տաճարում չկան:

Այսպիսով, եզրակացվում է, որ Հռիփսիմեի ճակատների խորշերն ստեղծվել են բուն տաճարի կառուցման հետ միաժամանակ՝ VII դարում (գծ. 52, 54, 55, նկ. 28):

Տաճարի ճակատներում ակներև նորացվել են

երեսպատման ոչ միայն առանձին քարեր, այլև կցալի հարթություններ, փոխակերպվել են պատերը պսակող քիվերը, նոր շարքերով ծածկվել են արտաքին որմնախարիսխները, անհետացել են շքամուտքերը ձևավորող հարամասերը՝ խոյակով ու խարիսխով սյուներ, կամարակապ վերնամասեր և այլն:

Այժմ փորձենք բացահայտել տեղի ունեցած փոփոխությունները տաճարի ներքին կալմության ամբողջական հատվածներում և առանձին դրվագներում: Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ տաճարի ներսը դրսից անհամեմատ լավ է պահպանվել: Այստեղ մեծ չափեր ունեցող երեսապատման քարերը պահպանվում են իրենց ամբողջականությամբ, թեպետ և նկատելի է նրանց ծերացածությունը՝ ողջ հարթությունը պատված է մապանոթների տեսքով միկրոձեղքերով:

Այժմ, մեծ զոհունակությամբ պետք է հավաստել, որ Հռիփսիմեի ներքին պատերն ու ճարտարապետական ձևերը հատակից մինչև գմբեթի հիմքով անցնող գոտին՝ ներառյալ փոխանցման տրոմպային համակարգը, կառուցման օրվանից անաղարտ հասել է մեզ: Այս իրավիճակը հիմնական փաստարկներից է տաճարը IX—X դարերից ավելի վաղ կառուցված լինելու վերաբերյալ: Չէ՞ որ IX—X դարերում գմբեթային փոխանցման այդպիսի համակարգով կառուցված մի այլ տաճար գոյություն չունի և չէր էլ կարող ունենալ, քանի որ ամենուրեք կիրառվում էր ու տիրապետող էր դարձել գմբեթային փոխանցման մի այլ եղանակ՝ առագաստային համակարգը: Տրոմպային եղանակը IX դարում երբեմն հանդիպում է, որպես բացառություն, այն էլ իր նախնական ձևերով, առավելապես Սյունիքի կողմերում:

Զորադիրի փոխանցման համակարգում հատած տրոմպը բացակայում է. Հռիփսիմեի փոխանցման համակարգը Զորադիրից տարբերվում է հատած տրոմպի առկայությամբ: Այս վերջինս սակայն դեռևս նախնական բնույթի է, սրա վերևում բացակայում է այն ուժեղացրած կամարաղեղը, որը իր վրա պիտի վերցներ գմբեթից եկող բեռը, և փոխանցեր որմնամույթերին: Հենց այդպես է գմբեթային փոխանցումը հաջորդ շրջանում կառուցված Զվարի, Աթենի և Սիսիանի տաճարներում:

Հռիփսիմեի գմբեթը, ինչպես ասվեց սկզբում, հետազոտողներից շատերի կարծիքով ժամանակակից չէ բուն տաճարին: Հարցի առավել հանգամանալից քննողներից Ա. Բ. Երեմյանի կարծիքով այն կառուցվել է X դարի սկզբներում, ուրիշների կարծիքով X դարի վերջերում—XI դարի սկզբներում: Տաճարի ներքին պատերի ուշ ժամանակների սվաղը վերջերս հեռացնելուց հետո եղան հետազոտողներ էլ, որոնք համոզվեցին, որ ներկա գմբեթը սկզբնականն է:

Կործանված գմբեթի փոխարեն նոր գմբեթներ ստացած հուշարձանները եզակի երևույթներ չեն: Արդ, որքա՞ն հավանական է, որ դրանցից է նաև Հռիփսիմեն: Նախորդ էջերում բերվեցին այն փաստարկները, որոնց հիման վրա Հռիփսիմեի գմբեթը համարվում էր ոչ սկզբնականը: Արդ, փորձենք բերել այն փաստարկները, որոնք հավաստում են տաճարի ժամանակակից գմբեթի սկզբնապես՝ VII դարի երկրորդ տասնամյակում կառուցված լինելը:

Անհրաժեշտաբար նորից անդրադառնանք գմբեթի համար ամբողջական հիմք ստեղծող փոխանցման համակարգին: Ասվեց, որ գմբեթային փոխանցման համակարգը ժամանակի ընթացքում որևէ ձևափոխման չի ենթարկվել՝ այն սկզբնականն է, հետազոտողներն էլ նրան անդրադառնում են, որպես այդպիսին: Ասվեց նաև, որ Հռիփսիմեում հատած տրոմպը իր վերևում չունի լրացուցիչ և ուժեղացված բեռնաթափող կամարաղեղ: Այս նշան է այն բանի, որ գմբեթը սկզբից էլ ծանրացած չի եղել այժմ առկա տրոմպների վրա, նրա պատերը այդ տրոմպների եկրագծից հետ են դրվել, ստանալով առավել հուսալի հիմքեր: Այս պայմաններում, որպես անխուսափելի անհրաժեշտություն, առաջացել է տրոմպների վերևով անցնող գոտին: Եվ որպեսզի այդ գոտին հնարավորին չափ մոտենա բոլորակին, հատած տրոմպի երկու կողմերում, նրա և գոտու միջև, հենված այդ տրոմպների և գմբեթատակ քառակուսին կալմավորող կամարների վրա, ստեղծվել են փոքր տրոմպներ: Այս վերջինների վերևով անցնող քարի մեկ շարքի և վերոհիշյալ ձևավոր կողադեմով գոտու օգնությամբ ավարտվել է գմբեթի բոլորակ հիմքի ստացումը: Այստեղ միջին չափերի տրոմպների գործադրման անհրաժեշտություն չի կգացվել՝ գմբեթաթմբուկը կրողունակ և լիակատար բոլորակության հիմքի վրա դնելու համար: Գմբեթաթմբուկի ետ դնելը եղել է անխուսափելի և նախորոշված: Այդպիսին՝ միջին չափի տրոմպը անհրաժեշտ է լինում, երբ

փոխանցման համակարգը տարածվում, զբաղեցնում է գմբեթաթմբուկի ողջ բարձրությունը, երբ այդ վերջինի պատերը տրոմպների եզրակամարներից ետ չեն դրվում:

Հռիփսիմեում փոխանցման վերևով անցնող գոտու գործադրությունը կառուցողի կողմից նախապես ծրագրված է եղել, դրանով է բացատրվում փոխանցման համակարգի սեղմվելը, սահմանափակվելը այդ գոտով, դրանով նաև բացատրվում է լիակատար բոլորակություն ստեղծելու մեծ ձգտման բացակայությունը տաճարը կառուցողի մոտ: Եվ իրոք, դրա հույժ կարիքը վերանում է, երբ գմբեթի պատերը ետ են դրվում:

Այսպիսով, եզրակացվում է, որ գմբեթի հիմքով անցնող գոտին ստեղծվել է VII դարի փոխանցման համակարգի հետ միաժամանակ, այս նաև հավաստում է, որ գմբեթի պատերը ետ դնելը, ասել է, թե գմբեթի հիմքում փոքր լայնության անցում ստեղծելը ամենևին էլ խորթ չէ VII դարի գմբեթաշինության ավանդույթին: Այս նշանակում է, որ գոտու և նրա վրայի փոքր լայնության անցման (գալերեայի) առկայությունը գիտականորեն հիմնավորված բավարար հիմք չէ Հռիփսիմեի գմբեթը X—XI դարերը տեղափոխելու համար:

Հռիփսիմեում գմբեթաթմբուկի պատերը անսովոր չափով տաճարի ներքնամասի պատերից հաստ են, բայց ոչ ծանր: Այդ պատերը թեթևացվել են ոչ մեծ խորության գմբեթարդ վերնամաս ունեցող խորշերով և նրանցում տեղադրված պատուհաններով: Գմբեթի այս կառուցվածքը հավաստում է կառուցողի գիտական էրուդիցիան և շինարարի հմտությունը: Գմբեթաթմբուկի պատերը Հռիփսիմեում ստացել են տարածականորեն աշխատող կոնստրուկցիայի բնույթ: Այս հանգամանքը մեծապես օգնել է գմբեթային թաղից առաջացող, դեպի դուրս հրող ուժերի դիմագրավմանը, ասել է, թե՝ գմբեթի կայունությանը:

Ճշտորեն այդպիսի խորշերով օժտված մինչև օրս կանգուն գմբեթաթմբուկ ունի Պեմզաշենի VII դարի եկեղեցին: Ինչ որ չափով այդ մոտիվն են հիշեցնում նույնպես VII դարի հուշարձաններ Թալինի կաթողիկեի և Թարգմանչաց վանքի գմբեթաթմբուկների ներքին հարթությունների ձևավորումը հարթ որմնախորշերով, որ ստեղծվում են որմնամույթերով և դրանք միմյանց կապող հարթ կամարներով:

IX—X դարերով թվագրված հուշարձաններից ոչ մեկում չկա վահանակներով ստեղծված այնպիսի գոտի, ինչպիսին կա VII դարով թվագրված հուշարձաններից նախնական ձևով՝ Մաստարայում, լիակատար ձևով՝ Գառնահովտում, Հռիփսիմեում, Թալինի կաթողիկեում: Տվյալ տաճարներում առկա, վահանակներով այդ գոտիները դեռևս լավ չեն ուսումնասիրված: Դրանք՝ այդ վահանակները փորված են համեմատաբար մեծ չափի կանոնավոր քարերի վրա և շարված են առավել ուշադիր, այնպես, որ փակեն իրենց վրա և իրենց տակ գտնվող սովորական շարքի ուղղաձիգ կարերը: Դեռ հայտնի չէ, թե այդ քարերը շարքի ներսում ի՞նչ ձևով են միմյանց կապված: Հիշենք, որ այս գոտիների վրա են անմիջականորեն հենվում գմբեթային թաղերը: Արդյո՞ք սրանք հակաերկրաշարժային միջոցառումներ չեն, ուղղված գմբեթի առավել կայունության նպատակին:

Հռիփսիմեի կիսագնդաձև գմբեթաթաղի ձևավորող քարակերտ դեկորատիվ խաչը հատուկ է VI—VII դարերին, այսինքն՝ առկա է այդ ժամանակաշրջանի հուշարձաններում՝ Ավանում, Մաստարայում, Գառնահովտում, Թարգմանչացում, Թալինում, Մրենում, Օձունում: IX—X դարերի համար այդ մոտիվը հատուկ չէ:

Հռիփսիմեի գմբեթում առկա խորշերը, վահանակների շարքը, դեկորատիվ խաչը, որոնք լոկ զարդաձևեր չեն, այլ միաժամանակ և առավելապես կառուցելակերպ, կոնստրուկցիա, որ երբեմն պարուրված են լինում այլ զարդաձևերով, աներկբա հավաստում են այժմյան գմբեթի սկզբնական լինելը, կառուցված դեռևս VII դարի առաջին տասնամյակներում:

Այժմ, երբ Հռիփսիմեի ներքին քարակերտ պատերի սվաղը չկա, անկանխակալ դիտողի համար ակնբախ է գմբեթի հարազատությունը տաճարի ներքնամասի հետ: Հայտնաբերված վարպետների նշաններ կան թե՛ պատերի, թե՛ գմբեթաթաղի քարերի վրա: Այն, որ գմբեթում եղած նշանները մասամբ ինչ-որ չափով այլ տեսակի են և կամ գլխիվայր դիրքով, այդ դեռ չի նշանակում, թե գմբեթը ներքնամասի հետ նույն ժամանակներում չի կառուցվել: Այդ լոկ նշանակում է, որ պատերը կառուցող վարպետները ավարտելով իրենց գործը, նրանց մի մասը գնացել, գմբեթ կառուցող, մասնագիտացած վարպետները եկել, շարունակել են, ա-

վարտել անելիքը, քարերին թողնելով իրենց նշանները:

Հռիփսիմեի գմբեթի VII դարում կառուցված լինելը վիճարկողները վկայակոչում են նրա պատերի շարվածքում եկրակոսների բացակայությունը:

Բանն այն է, որ Ավանի ի սկզբանե կառուցված փոքր գմբեթի շարվածքում նույնպես եկրակոսներ չկան. այդ նկատելի է հինադարյան նաև այլ հուշարձաններում: Ըստ երևույթին գմբեթածածկի գոգավորությունը ստեղծելիս դրանք իրենց չեն արդարացնում: Եվ այնուամենայնիվ մեր դիտարկումները հաստատում են և, նույնիսկ անզեն աչքով դիտողը տեսնում է այդ եկրակոսների գոյությունը Հռիփսիմեի գմբեթածածկում: Դրանք այն սպիտակ կարերն են, որ բացվել են տարիներ առաջ պատերից հեռացված սվաղից հետո: Պարզապես եկրակոսները լցված են կրաշաղախի մնացորդներով: Հակառակ դեպքում շարքի հորիզոնական կարերում շաղախի հետքեր չէին մնա:

Հետաքրքիր է, որ Հռիփսիմեի ներքին պատերում շարքի շատ քարեր, որ ակներև հնից են գալիս՝ նորոգման արդյունք չեն, նույնպես եկրակոսներ չունեն:

Վերոհիշյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ գմբեթածածկի շարքերում եկրակոսների մասնակի բացակայությունը նշան չէ նրա ուշ կառուցման:

Հռիփսիմեի գմբեթաթմբուկի և գմբեթատակ ուղղանկյուն ծավալի արտաքին եզրագծերի միջև— անկյուններում առաջացած եռանկյունաձև մասերը, որ այլ տաճարներում ծածկվում են առանձին փոքր տանիքներով, այստեղ ստացել են այլ լուծում. չորս անկյուններում առկա են բոլորակ հիմքով փոքր աշտարականման ծավալներ, որոնք իրենց մոտ $^{1}/_{4}$-ով հպվում են գմբեթաթմբուկի անկյունային նիստերին և փոքր դռներով հաղորդակցվում տաճարի ներքին տարածությանը, այնտեղ առկա փոքր լայնության պատշգամբին: Ոմանք դրանց գմբեթ լինելու պատրանք վերագրելով, կուզահեռ անցկացնելով Հռիփսիմեի և Անիի X—XI դարերի Առաքելոց հինգ գմբեթանի եկեղեցու միջև, Հռիփսիմեի գմբեթի կառուցումը տեղափոխում են X—XI դարերը: Այժմ հնարավորություն է ստեղծվում այդպիսի զուգահեռ անցկացնել ոչ թե Հռիփսիմեի և Առաքելոցի, այլ Հռիփսիմեի ու իր մոտ նախորդի՝ Ավանի հինգ գմբեթանի եկեղեցու միջև: Այս դեպքում Հռիփսիմեի գմբեթը այդ փոքր ծավալների առիթով չի տեղափոխվում XI դար, այլ մնում է VII դարում:

Հիշյալ աշտարականման փոքր ծավալների շարքի քարերը համեմատաբար մանր են, սակայն այդ չի կարող առիթ հանդիսանալ դրանց ուշ կառուցված համարելու համար, նույնիսկ անբնական, նաև դժվար կլիներ այդ փոքր ծավալները մեծ քարերով ստեղծելը: Դրանք ևս ժամանակակից են գմբեթին: Չէ՞ որ ներքին 16 խորշերից միայն 12-ում են բացվում պատուհաններ, մյուս չորսում պատուհաններից կգալի ցածր դռներ են բացվում այդ ծավալների ներսը գնալու համար: Բանն այն է, որ այդ աշտարականման ծավալները, որ Ավանի չորս փոքր գմբեթների արձագանքը հանդիսանալու հավակնությունն ունեն, կառուցողի կողմից կանխամտածված կերպով ստեղծվել են գմբեթի կայունությունը պահպանելու համար (նկ. 28):

Հռիփսիմեում գմբեթաթմբուկի պատերը տրոմպների եզրերից ետ դնելը, այդ պատերին տարածական ձև տալը և անկյուններում չորս փոքր աշտարակներ ստեղծելը այն գլխավոր գործոններն են, որոնց առկայությամբ այս տաճարի գմբեթը իր կառուցման օրվանից մինչև մեր ժամանակները մնացել է հաստատուն, դրանով իսկ դարձել իր շուրջը վեճեր բորբոքելու և տեսություններ հորինելու հարատև առիթ:

Հռիփսիմեի գմբեթը X դարի գործ համարողներից Ա. Բ. Երեմյանը, նույն Հռիփսիմեի VII դարի ձևերը վերականգնող իր առաջարկած վերակազմության նախագծի երկրորդ տարբերակում, գրեթե նույնությամբ պահպանում է գմբեթային մասում առկա ճարտարապետական այն բոլոր ձևերը, որոնց նույն աշխատության նախորդ էջերում համարում էր ոչ բնորոշ, ոչ հատուկ VII դարի համար: Դրանք են գմբեթի ներսի խորշերով շարքը, վահանակներով ստեղծված շարքը, գմբեթի հիմքով անցնող գոտին, գմբեթի ութից ավելի (16) նիստեր ունենալը և այլն:

Այս վերակազմության գմբեթային մասը մեր օրերի գմբեթի նույն մասերից տարբերվում է՝

ա) Ներքին խորշերի քանակով՝ արված է 12, 16-ի փոխարեն, համապատասխանաբար և արտաքին նիստերի քանակով՝ 12, 16-ի փոխարեն:

բ) Վահանակների քանակով և դրանց մեծությամբ՝ 48, 32-ի փոխարեն, մեկ քարի բարձրու-

թյամբ, երկու քարի բարձրության փոխարեն, որով և նրանք միմյանցից հեռանում և իրար չեն շոշափում:

գ) Գմբեթի գոտիների մեջ տարբերություն չկա (նկատենք, որ գոտին արվում է ո՛չ աննպատակ, թերևս գլխավորապես նրա համար, որ գմբեթաթմբուկի պատերը, թեկուզ և փոքր չափով, ետ դրվեն տրոմպների եզրերից. հեղինակը գոտի անելով, փաստորեն պահպանել է թմբուկի պատերը ետ դնելու հնարավորությունը, որից, սակայն չի օգտվել. տրամաբանական կլիներ, որ վերակազմության մեջ այդ պատերը ետ դրված լինեին):

դ) Փոխվել է տանիքի ուրվագիծը, որի համար բավարար հիմքեր չկան[96]:

ե) Այստեղ բացակայում են չորս փոքր աշտարականման ծավալները, որոնք VII դարում նոր կազմավորվող հորինվածքում, այն էլ Ավանից հետո կարող էին և լինել: Դրանք խորթ են թվում մե՞ր օրերում:

Վերակազմության հեղինակը երկշարք տրոմպների փոխարեն ցույց է տվել եռաշարք տրոմպների համակարգ, որը աննախադեպ է առկա փոքր տարածության պայմաններում, այն էլ գոտու առկայությամբ: Նա հատած տրոմպի վերևում ցույց է տվել կցալի կողադեմով լրացուցիչ կամարաղեղ, որը իրականում չի եղել, եթե եղած լիներ, մինչ այժմ պահպանված փոխանցման համակարգում նույնպես կպահպանվեր. ոչ մի վերակառուցող նրա գոյությունը ավելորդ չէր համարի ու չէր վերացնի, եթե վնասված էլ լիներ, կնորոգեր, կվերակառուցեր:

Հնի ու նորի այստեղ նշված տարբերությունները վերաբերում են ոչ թե VII դարի համար, այսպես ասած «ճարտարապետության մերժվող ձևերին», այլ նրանց լոկ քանակին, մի հանգամանք, որը գմբեթի կառուցման ժամանակը ճշգրտելու առումով վճռական նշանակություն չունի:

Հետազոտողի, վերակազմության նախագիծ ստեղծողի հենց սկզբից այս անսքող նախանձը սեփական հայացքներից Հռիփսիմեի գմբեթի ուշ ժամանակներում կառուցված լինելու վերաբերյալ, հավաստում է նախապես բերված փաստարկների պակաս հիմնավորված լինելը: Հետևապես նրա կարծիքը, թե եկեղեցու «...մասերից ոչ մեկը շինարարական առումով այնպիսի անճարակ լուծում չի ստացել, ինչպես գմբեթը»[97], ոչ մի չափով չի կարող ընդունելի համարվել:

Հռիփսիմեի հատակաձևը ստեղծվել և իրականացվել է մինչ այդ կառուցվող նույնատիպ տաճարներում մշակված ու ձևավորված սխեմայի սրամիտ ու ճարտար գործադրությամբ: Այդ սխեման, որպես լրիվ համակարգ, առաջին անգամ լիակատարությամբ մարմնավորվել է Հռիփսիմեում: Նախորդ տաճարներում օգտագործվում էին նրա որոշ կողմերը միայն, այլ և այլ շեղումներով, կապված կոնկրետ իրավիճակի հետ (գծ. 57):

Ողջ տաճարի տեղն ու դիրքը տվյալ վայրում կանխորոշվել է սուրբ Հռիփսիմեի դամբարանով: Հիշյալ դամբարանի արևելակողմի կիսաշրջան խորանաձև խորշի կենտրոնը, ըստ երևույթին կանխամտածված, ընդունվել է իբրև կենտրոն նաև տաճարի արևելակողմի կիսաշրջանաձև խորանի համար (գծ. 52):

Այդ նույն դամբարանի արևմտյան պատով ստեղծվող գիծը, թերևս նույնպես կանխամտածված, ընդունվել է որպես տաճարի գմբեթատակ քառակուսու արևելյան կող: Ելնելով առաջադրանքով տրված գմբեթի մեծության չափից, որոշվել է նաև տաճարի կենտրոնը, ասել է, թե՝ արևելք-արևմուտք և հյուսիս-հարավ առանցքների խաչմերուկը: Այնուհետև այդ կենտրոնի շուրջն էլ համախմբվել է տաճարի ամբողջական հյուսվածքը, հիմք ընդունելով ավանդույթի ուժ ստացած հատակաձևի ստեղծման կանոնիկ սխեման (գծ. 100):

Ունենալով Հռիփսիմեի գմբեթատակ քառակուսին, համաձայն այդ սխեմայի, որոշվում են տաճարի ներքին երկարությունն ու լայնությունը: Դրա համար գմբեթատակ քառակուսու կողերի միջնակետերից, այդ կողերի հետ կազմելով 30°-ի անկյուն, գծեր են գնում աջ ու ձախ, որոնցից ամեն երկուսը միմյանց հանդիպում են տաճարի առանցքների վրա: Այդ հանդիպումներից երկար առանցքի վրա ստացված կետերը հանդիսանում են արևելյան և արևմտյան խորանների կենտրոնները, իսկ կարճ առանցքի վրա ստացված կետերը՝ հյուսիսային և հարավային խորանների գագաթնակետերը: Հյուսիսային և հարավային խորանների կենտրոնները գտնվում են կարճ առանցքի այն կետերում, որտեղ հանդիպում են արևելյան և արևմտյան խորանների գագաթներից երկար առանցքների նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերը:

Պարզվում է, որ արևելյան ու արևմտյան խորանների կենտրոնների հեռավորությունը հավասար է տաճարի ներքին լայնությանը: Այդ բանը գծագրում (գծ. 57) արտահայտվում է շրջագծով, որ անցնում է ստացված բոլոր չորս կետերով: Արևելյան և արևմտյան կիսաշրջանաձև խորանների տրամագծերը վերցվել են հավասար գմբեթատակ քառակուսու կես կողի չափով, իսկ հյուսիսային ու հարավային խորանների չափերը արդեն կանխորոշվել են տվյալ խորանների կենտրոնների և գագաթնակետերի միջև ընկած տարածությամբ:

Երեք քառորդ խորշերի դիրքը Հռիփսիմեում նույնպես շատ որոշակի է, և ստացվում է հիշյալ կանոնիկ սխեմայի գործադրմամբ: Այդ խորշերից յուրաքանչյուրի կենտրոնը գտնվում է այն երկու գծերի հանդիպումներում, որոնցից մեկը սկսվում է գմբեթատակ քառակուսու արևելյան կամ արևմտյան կողերի միջնակետից, տաճարի երկար առանցքի նկատմամբ 30°-ի անկյուն կազմելով, ձգվում է աջ կամ ձախ, հանդիպելու մյուս գծին: Գծերից այդ մյուսը սկսվում է կարճ առանցքի տաճարի կենտրոնից քառորդ տրամագծաչափ հեռավորության վրա գտնվող կետից, և այդ նույն առանցքի նկատմամբ 30°-ի անկյուն կազմելով, ձգվում է աջ կամ ձախ, հանդիպում առաջին գծին:

Տաճարում պատուհաններից միայն արևելյան ավանդատների արևելյան պատուհաններն են կանոնի ենթարկվում, դրանց առանցքները գտնվում են տաճարի կենտրոնից երկար առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ աջ ու ձախ տարված գծերի վրա: Ավանդատների մյուս պատուհանները տեղադրված են ոչ միօրինակ, որի հետևանքով էլ սխեմայի նույն կանոնին չեն ենթարկվում:

## ԱՅԳԵՇԱՏԻ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՆՔ

Թարգմանչաց վանքը գտնվում է Էջմիածնից մոտ յոթ կիլոմետրի վրա, այժմյան Այգեշատ գյուղում: Բնակիչները, որ անցած դարի ռուս-պարսկական պատերազմների ժամանակ այստեղ են եկել Խոյից, տաճարը կոչում էին ս. Մարիամ Աստվածածին: Թորոս Թորամանյանը հաղորդում է. «Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանը **Թարգմանչաց վանք** անունը կուտա եղեր այս ավերակին, բայց ինչ ապացույցների վրա հիմնված, ինձ հայտնի չէ»[98]: Այժմ մասնագիտական գրականության մեջ այն այդպես էլ կոչվում է՝ **«Թարգմանչաց վանք»**, կառուցված ի հավերժացումն հայ գրերի գյուտի:

Իր «Աշխատությունների»... առաջին գրքի 246-րդ էջում Թորամանյանը գրում է. «Թարգմանչաց վանք», շինողը անհայտ, կգտնվի Էջմիածնեն Օշական գնալու ճանապարհին ձախ կողմը, Էջմիածնեն քիչ հեռու. Հռիփսիմեի ձևն ու ոճը ունի, անկասկած է VII դարուն պատկանելը»:

1924 թ. սեպտեմբերի 21-ին (մինչև 23-ը) գտնվելով Հաճի-Ղարա (այժմ՝ Այգեշատ—Տ. Մ.) գյուղում, Թորամանյանը գրում է. «Նախապես գնացի գյուղի արևելյան կողմում գտնված կիսավեր եկեղեցին, որուն արևելյան կողմը մինչև գմբեթի թմբուկի պսակը դեռ կանգուն է[99]: Հատակագիծը չափագրեցի, որչափ որ գոյություն ուներ, սա շատ նման է հատակագծով Էջմիածնի մոտ Հռիփսիմեի վանքին, ամենայն հավանականությամբ այս ևս VII դարու շինություն է»[100]:

### ԱՎԵՐԱԿԸ

Հուշարձանի կործանված լինելը չի խանգարում եզրակացնելու, որ այն կառուցված է եղել մեծ վարպետությամբ, խնոորեն և ամրակուռ: Անկախ գրավոր նյութերի բացակայության, ժամանակակից բնակիչները հաղորդում են իրենց ծնողներից լսածը այն մասին, որ տաճարը մինչև անցյալ դարի կեսերը եղել է կատարելապես կանգուն, որ այն կործանվել է ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների ժամանակ: Համաձայն բանավոր հաղորդումների՝ հակառակորդը գյուղի արևելակողմում գտնվող «Արդար Դավիթ» անունը կրող բլուրների վրա տեղակայված հրանոթներից ուղիղ նշանառությամբ կրակել, կործանել է տաճարը, որպես կռվող մյուս կողմի ամրացված օբյեկտ: Տաճարի գմբեթի արևելյան հատվածը հենված գմբեթակիր կամարի վրա գոյատևել է մինչև 1926 թվականը (նկ. 32, 33): Հավականալի է, որ այդ վիճակում այն երկար ժամանակ չէր կարող կանգնած լինել: Տվյալ պատկերը ինքնին հավաստում է, որ գմբեթի հիմնական մասը պետք է կործանված լինի շատ մոտ անցյալում: Այժմ կանգուն է տաճարի հյուսիս-արևելյան անկյունը միայն՝ արևելյան խորանի, հյուսիս-արևելյան ավանդատան ու $^3/_4$ խորշի և հարավ-արևելյան ավանդատան մի մասի ներքնամասերը միայն՝ մինչև գմբեթակիր կամարների հիմքը: Տաճարի մյուս մասերը մեծ պանգվածների ձևով ընկած են իրենց երբեմնի տեղերից ոչ հեռու: Այդ պանգվածները վերին աստիճանի ամրակուռ են, շաղախը՝ կարծր: Շինության կործանումը ինչ-որ երկրաշարժի վերագրելը ակներև անհիմն է:

Տաճարը կառուցված է եղել տեղական սև և մասամբ շագանակագույն մեծ չափերի տուֆաքարով և կրաշաղախով: Շարքի քարերի բարձրու-




Գծ. 58. Թարգմանչաց վանք. հատակագիծ:

թյունը ճակատներում 50—70 սանտիմետր է, ներսի պատերում 40—50 սանտիմետր: Շարքերը և կարերը կանոնավոր են, քարերը մշակված են սրբատաշ, եզրագծերը՝ ճիշտ:

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Տաճարում գործադրված ճարտարապետական ձևերը պարզ են, վուսպ, կերտված չափի և համաչափության նուրբ զգացումով, նրանց միջև ակներև է ներքին ներդաշնակություն, որ արտահայտվում է մասերում և ամբողջի մեջ վեհ հանգստությամբ:

Շինության ներսում բացակայում է քանդակը: Ուղղանկյուն հիմքի վրա բարձրացող որմնամույթերի խոյակները պարզ խորանարդներ են, որ դեպի վերև թեթևակի լայնանում են, փոխանցվում ոչ լայն եզրաշերտի: Դրանց հենվող գմբեթակիր կամարները կողաձև չունեն, կամարաքարերը երկարությամբ դրված են կամարի ուղղությամբ: Կողաձև չունեն նաև գմբեթային փոխանցման համակարգի տրոմպի կամարները:

Գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտին, որ ունի մոտ կես քարի բարձրություն, պատից դուրս է գալիս փոքր չափով: Այն մի սալաքար է, որի ներքին եզրը կլորացվել է, տրվել գլանի ձև: Գմբեթաթմբուկի ներսում, պատի հարթությունից փոքր չափով առաջացած, նույնպես առանց կողաձևի հարթ որմնասյունակամարաշար է, դրանցից ութի մեջ պատուհաններ են, մյուս ութը՝ խուլ են՝ հարթ պատի ձևով (նկ. 33): Գմբեթաթմբուկի ներսում կանգուն մնացած երեք կամարների վրայից դեպի գմբեթի գագաթն են ձգվում հարթ եզրագծով քարակերտ ջլաղեղներ: Այդպիսիք գմբեթում եղել են ընդամենը 12-ը՝ երեքական հատ ամեն խորանի վերևում, որոնցով և ստեղծվել է գմբեթածածկի դեկորատիվ խաչը,այնպես, ինչպես այն առկա է Ավանի և Հռիփսիմեի գմբեթներում:

Տաճարի արտաքին ճակատների վրա տեղ գտած վարդաձևերը նույնպես վուսպ են և փոքրաթիվ: Օրինակ, շքամուտքը, որքան հնարավոր է եզրակացնել մնացորդներից, վարդաձևեր չի ունեցել, մուտքի ճակատակալ քարը պատի ընդհանուր հարթությունից մի փոքր խորացել է և ուրիշ ոչինչ: Որոշ կողաձև և ճակատային եզրաշերտի վրա քանդակներ ունեն պատուհանների վերևների կամարաղեղները, ըստ որում, այստեղ օգտագործված վարդամոտիվները հին են, հատուկ «Դվինյան շրջանին» (VI—VII դարեր): Նկատենք, որ այդպիսի կամարաղեղներ չունեն գմբեթի պատուհանները, նրանք վերևից ավարտվում են կամարակապ հարթ և անզարդ քարավորներով:

Առանց պեղումների դժվար է ճշգրիտ պատկերել տաճարի քիվերը, այդ թվում և գմբեթինը, որը լուսանկարում որոշակի չի երևում: Ավերակում ընկած բեկորներում նկատվում են քիվի մասեր, յուրօրինակ ատամնաշարով:

Տաճարի արևելյան, հյուսիսային և հարավային ճակատները օժտված են սեղանաձև հիմքով և հատած կիսակոնաձև վերնամաս ունեցող զույգ խորշերով, որոնք իրենց չափերով և ճակատների հարթության վրա զրաված դիրքով տաճարի ամբողջական հորինվածքի հետ ներդաշնակ են ու համաչափ, մի բան, որը մեծ հաջողությամբ պատկերված է Ա. Երեմյանի «Հռիփսիմեի տաճարը» աշխատության մեջ (նկ. 61, 1): Նախորդ հետա-

կոտողները այդպիսի խորշեր են նշել նաև արևմըտյան ճակատներում, որը, սակայն հակասում է ավերակի տվյալներին և արդյունք է անկգույշ չափագրման:

### ԳՄԲԵԹԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթի բոլորակ հիմքին, Թարգմանչացում իրագործվել է երկաստիճան տրոմպային համակարգով: Երեք-քառորդ խորշի գմբեթարդ ծածկի ճակատային մասից փոքր ինչ վերև, հարևան մույթերն իրար է կապել կիսակոնաձև հատած մեծ տրոմպը, որի սեպաձև եզրաքարերի վրա, անմիջականորեն գմբեթակիր կամարներին հենված կամրջում է ավելի մեծ թռիչքով և կցալի առաջացած մի երկրորդ կամար: Այս վերջինիս երկու կողմերում, սրան և հարևան գմբեթակիր կամարին հենված համակարգի երկրորդ աստիճանը կազմող փոքր տրոմպն է: Չորս մեծ և ութ փոքր տրոմպների վերևով փոխանցման չորս հատվածները միավորելով անցնում է գմբեթի բոլորակ հիմքը նշանավորող գոտին: Գմբեթային փոխանցման համակարգը Թարգմանչացում սկըսվում և ավարտվում է որմնամույթերի խոյակների և գմբեթի հիմքով անցնող գոտու միջև: Դրանով իսկ գմբեթաթմբուկի ներքին հարթությունը մնում է ազատ, ենթակա ճարտարապետական ձևավորման: Այստեղ փոխանցման համակարգը իրագործված է ճարտարապետական հստակ տրամաբանությամբ, շինարվեստի տեկտոնիկ կանոնների անադարտ կիրառմամբ:

Ավան-Հռիփսիմեի տիպի հուշարձաններին անդրադարձող հետազոտողները միշտ էլ հիշում են Թարգմանչաց վանքը, նրա վերաբերյալ շարադրում իրենց կարծիքը, երբեմն ներկայացնում հատակագիծը, նաև այլ գծագրեր և լուսանկարներ: Թարգմանչաց վանքին առավել հանգամանորեն անդրադառնում են Ն. Տոկարսկին, Ա. Երեմյանը և ուրիշները: Եթե Տոկարսկին այս տաճարի կառուցումը ժամանակակից է համարում Հռիփսիմեին և նշում նրանից էլ առաջ, Երեմյանը՝ կառուցված VII դարի առաջին կեսի ընթացքում, ապա ուրիշները տանում են X դար: Թարգմանչացը X դարի հուշարձան համարելու որպես փաստարկ մատնանշվում է գմբեթի հիմքով անցնող ներքին գոտու առկայությունը, իբր VII դարին ոչ հատուկ երևույթ. հա-



Գծ. 59. Թարգմանչաց վանք. արևմտյան ճակատ:

մաձայն վերջիններիս «Ներսում, գմբեթաթմբուկի ցածրի սահմանում առկա քիվը, ինչպես վրաց, այնպես էլ հայ ճարտարապետության մեջ երևում է կարգացած միջնադարից սկսած»[101]:

Այս տեսության ոչ ճիշտ լինելը հավաստվում է VII դարի մի քանի հուշարձաններում այդ գոտու (քիվի) առկայությամբ (Տեկոր—V դար, Ավան—VI դար, Զվարթնոց, Հռիփսիմե, Զորադիր—երեքն էլ VII դար, Մարտվիլի—VII դար:

Նրանց մյուս փաստարկը գմբեթաթմբուկի ներքին մակերեսի 16 կանոնավոր հարթությունների բաժանված լինելն է, որը նույնպես, իբր, հատուկ չէ VII դարին: Հիշենք, որ այդ նույն մշակումն է առկա VII դարի հուշարձան Թալինի կաթողիկե տաճարի գմբեթի ներսում, ինչպես և Պեմզաշենում (Մահմուտճուք) և Հռիփսիմեում խորշերի ձևով (երկուսն էլ VII դար):

### ՀԱՏԱԿԱԶԵՎԸ

Թարգմանչաց վանքի հատակաձևը այդ տիպի մյուս հուշարձանների մի տարատեսակն է: Նրա



Գծ. 60. Թարգմանչաց վանք. արևելյան ճակատ:

ներքին տարածությունը նույնպես բարձրանում է խաչաձև դասավորության չորս կիսաշրջան խորանների և չորս անկյուններում գտնվող $^{3}/_{4}$ խորշերի հիմքի վրա: Սա մյուսներից տարբերվում է արևմտակողմի ավանդատների բացակայությամբ միայն: Ըստ որում, Թարգմանչացը տարբերվում է նաև այն տաճարներից, որոնցում արևմտակողմի ավանդատներ նույնպես չկան, այդ թվում՝ Զորադիրից և Աղթամարից: Այս վերջիններում ներքին հատակաձևը գրեթե չի տարբերվում տիպի հիմնական օրինակների հատակաձևից, մինչ արտաքին պարագծերը տարբերվում են մեծ չափով (գծ. 58):

Թարգմանչացի ինչպես ներքին հատակաձևը, այնպես էլ արտաքին պարագծերը կրկնում են տիպի հիմնական օրինակները, նույնիսկ նույնն են ճակատների մշակումները (զույգ խորշերով). այստեղ պարզապես, գրեթե մեխանիկորեն սղվել են հիշյալ՝ արևմտակողմի ավանդատները: Այս իրավիճակով էլ պետք է բացատրել, որ մինչև օրս բոլոր հետազոտողները Թարգմանչացի ինչպես հատակագծային, այնպես էլ ընդհանուր ծավալային հորինվածքը ներկայացնում են տիպի հիմնական օրինակների նման, այնպես, կարծես թե արևմտյան ավանդատները չեն բացակայում: Օրինակ, Ն. Մ. Տոկարսկին իր կողմից գրեթե ճիշտ կայված հատակագծի արևմտակողմում կետագծով ցույց է տալիս իրականում գոյություն չունեցող հիշյալ ավանդատները: Դեռ ավելին, Ա. Բ. Երեմյանի հետ ստեղծած վերակայվության ակսոնոմետրիկ ծավալատարածական պատկերում արևմտակողմի ավանդատները կան, ճիշտ այն ձևով, ինչպիսի ձև ունեն տիպի հիմնական օրինակները, այսինքն՝ չորս անկյունների ավանդատներով: Վերակայվության հեղինակներին խորթ է թվում արևմտյան ավանդատների այդ կերպ բացակայելը Թարգմանչացում: Այդ համարում են անհնար և հակառակ ռեալ դրությանը, իրենց աշխատություններում տաճարը ամփոփում են լրիվ ուղղանկյան պարագծերում[102]: Թարգմանչացի հատակագիծը ահա այդ նույն պարագծերն ունի նաև մյուս բոլոր ուսումնասիրություններում[103]:

Հետաքրքիր է, որ հետազոտողներն իրենց աշխատություններում տվյալ երևույթի մոտով անցնում են բացարձակ լռությամբ:

Այս աշխատության կապակցությամբ կայված հատակագիծը (գծ. 58) առաջինն է, որ ներկայացվում է առանց արևմտյան ավանդատների: Դա հնարավոր է դառնում ավերակում առկա, նրա հյուսիս-արևմտակողմում և հարավ-արևմտակողմում ընկած կանգվածների նոր ուսումնասիրման և չափումների շնորհիվ: Առավասիկ այդ կանգվածներից հյուսիս-արևմտակողմինը: Այն իրենից ներկայացնում է տաճարի հյուսիս-արևմտակողմի անկյունը. այս կանգվածը անկյան երկու կողմերից երեսապատված է սրբատաշ քարերով և այդտեղ պատի դեպի արևմուտք շարունակվելու որևէ նշան չկա: Այդ կանգվածի ներսում առկա է այդ նույն անկյան $^{3}/_{4}$ խորշի արևմտակողմի կեսը և հյուսիսային ճակատի արևմտակողմի խորշի վերնամասը: Ճշտորեն նույն պատկերն է առկա հարավ-արևմտակողմի կանգվածում:

Ավերակում լավ վիճակում պահպանվում է նաև տաճարի արևմտյան խաչաթևի հարավ-արևմտյան կեսը կանգվածի ձևով ընկած մի կողքի: Այդ կանգվածի վրա պահպանվում է արևմտակողմի շքամուտքի հետքը՝ եսրաքարերը, կոր վերնամասով բարավորի անկյունաքարը և մուտքից վերև պատուհանի եսրը:



Գծ. 62. Թարգմանչաց վանք. հատակագծի համաչափությունների վերլուծություն։

ների կենտրոնները, գմբեթատակ քառակուսու հյուսիսային և հարավային կողերի միջնակետերին միացնող գծերը տաճարի երկար առանցքի հետ կազմում են 30°-ի անկյուններ։ Թարգմանչաց վանքի ներքին լայնությունը հավասար է գմբեթի ներքին տրամագծի $^5/_3$, իսկ արտաքին լայնքը՝ գմբեթի տրամագծի կրկնակի չափին։

Տաճարի $^3/_4$ խորշերի կենտրոնները գտնվում են գմբեթատակ քառակուսու արևելյան և արևմտյան կողերի շարունակության վրա, այնտեղ, որտեղ այդ գծերին հատում են տաճարի կենտրոնից $^2/_3$ շառավղաչափ հեռու — կարճ առանցքի վրա սկըսվող և այդ առանցքի հետ 30°-ի անկյուն կազմող գծերը, ինչպես նաև գմբեթատակ քառակուսու արևելյան և արևմտյան կողերի միջնակետերից երկար առանցքի հետ 30°-ի անկյան տակ եկող գծերը։

Այստեղ նույնպես արևելյան և արևմտյան նախախորանների, ինչպես և հյուսիսային ու հարավային գմբեթակիր կամարների թռիչքներն ունեն գմբեթի ներքին շառավղի չափը։

Ինչպես Հռիփսիմեում էր, այստեղ նույնպես տաճարի կենտրոնից երկար առանցքի հետ 30°-ի անկյուն կազմող գծերի վրա են գտնվում արևելյան ավանդատների խորանաձև խորշերի կենտրոնները։

Համաչափական կանոնները Թարգմանչացի հատակագծից վերաճում են նաև ծավալա-տարածական հորինվածքի ոլորտները։ Այստեղ՝ ճակատների համապատասխան գծագրերում (գծ. 63, 64) մանրակիրճեն պատկերված են առանձին ծավալների, լուսամուտների, դռների ու խորշերի քիվերի, տանիքի ու որմնախարիսխի միջև առկա կապերն ու փոխհարաբերությունները, որոնք որպես համաչափական երևույթներ հուշում են դրանց, ճարտարապետի կողմից կանխամտածված գործադրության վերաբերյալ։

## ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Մասնագիտական գրականության մեջ Թարգմանչաց վանքը տեղ է գրավում VII դարում կառուցված հուշարձանների շարքում։ Հետազոտողները այդպիսի եզրակացության են հանգել՝ քննելով հուշարձանի ճարտարապետական-գեղարվեստական առանձնահատկությունները բոլոր առումներով։ Կան հետազոտողներ էլ, որ այդ տիպին պատկանող Վրաստանի յոթ հուշարձաններից վեցը համարում են կառուցված VI—VII դարերում, միայն կախեթական Կվետերային են տեղ հատկացնում X դարի սկզբներում, իսկ Ավանից բացի մեր այդ տիպի բոլոր ինը հուշարձանները, այդ թվում՝ Թարգմանչացը, առանց բավարար հիմքեր ունենալու, VI—VII դարերից տեղափոխում են մասամբ IX, մեծ մասով՝ X և, նույնիսկ XI դարերը։

Տիպի առաջացման և զարգացման ընթացքը նկատի ունենալով՝ պետք է որ հնարավոր լինի Թարգմանչացի տեղը, գրեթե անսխալ որոշել տաճարների այդ ընդհանուր շարքում։

Հայտնի է, որ քրիստոնեական տաճարները կառուցվել են կրոնական ծեսերի կանոններից ու պահանջներից ելնելով։ Այս հարցը դիտարկելով մասնավորապես հիմնական շինությանը կից սպասարկող սենյակների ժամանակի ընթացքում առաջանալու և անհետանալու երևույթի կապակցությամբ, նկատվում է, որ վաղ կառուցված խաչաձև հիմքով տաճարներում այդպիսի սենյակներ կամ

չկան, կամ լինելու դեպքում դրանց թիվը չի անցնում սկզբնապես մեկից, ավելի ուշ՝ երկուսից, և բոլոր դեպքերում՝ կից արևելյան խորանին:

Հետազոտողները բազմակողմանի ուսումնասիրություններով պարզել են, որ արևելակողմի սենյակները ստեղծվել են եկեղեցու ավագ քահանայի բնակության և անոթները պահելու համար: Հետագայում արևելակողմի սենյակների նշանակությունը փոխվել է, այդպիսիք դարձել են մատուռներ, իսկ ավագ քահանան և անոթները տեղափոխվել են անհրաժեշտաբար ստեղծված արևմտակողմի սենյակները: Եզր կաթողիկոսի օրոք (630—641) արգելվում է որևէ մեկի բնակությունը եկեղեցում, իսկ քահանաների համար բնակարան է կառուցվում եկեղեցուց դուրս: Հենց այսպես էլ արել է կաթողիկոս Եզրը՝ Գայանե տաճարը կառուցելիս:

Պետք է կարծել, որ այդ ժամանակ էլ կառուցվել է Թարգմանչաց վանքը: Տաճարի բուն պատերը պետք է բարձրացած լինեն արդեն 630 թվականից հետո՝ Եզր կաթողիկոսի օրոք, որը և պետք է արգելած լինի նախօրոք բնակության համար նախատեսված արևմտյան սենյակների պատերի կառուցումը[104]: Այսպիսի պայմաններում միայն հնարավոր է բացատրել Թարգմանչացի ծավալային հորինվածքի նման կազմավորումը, երբ թվում է, թե արևմտյան սենյակների ծավալները ընդհանուր հորինվածքից անջատվել են բուն շինարարության ընթացքում, չնախապատրաստված, հանկարծական, «զավազանի ուժով»:




Գծ. 63. Թարգմանչաց վանք. արևելյան ճակատի համաչափությունների վերլուծություն



Գծ. 64. Թարգմանչաց վանք. հյուսիսային ճակատի համաչափությունների վերլուծություն:

Այսպես չէ արևելյան սենյակներ ունեցող և արևմտյան սենյակներ չունեցող Զորադիրում և Ախթամարում, որոնցում, ինչպես հատակագծային, այնպես էլ ծավալային կոմպոզիցիոն կազմությունը, ճակատների պլաստիկ լուծումը ամբողջությամբ վերցրած օրգանական է, տրամաբանված, հասկանալի:

Վերոհիշյալի հիման վրա հնարավոր է Թարգմանչաց վանքի հիմնադրումը վերագրել Եզրին նախորդած կաթողիկոս Քրիստափոր Բ-ին (628—630), կառուցման ավարտը՝ մոտավորապես 635 թվականը, որից հետո Եզրը պիտի ավարտեր Գայանեի կառուցումը (մինչև 641 թվականը):

* * *

Թարգմանչացը կառուցողի տաղանդը շատ որոշակի ուրվագծվում է հուշարձանի առանձին մասերի և ամբողջական հորինվածքի ճարտարապետական-գեղարվեստական և նույնքան տեխնիկական կատարյալ իրականացումներում: Այստեղ ստեղծված նվաճումները տեղ և հաջող գործադրություն են գտել հաջորդ շրջանում կառուցված նույնատիպ, սակայն իրենց չափերով սրան գերազանցող այլ հուշարձաններում:

## Ս Ի Ս Ի Ա Ն Ի Ս. Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս

Պատմական Սյունիքի Սիսավանում մի նշանավոր հուշարձան կա, որ կերտված է թուխ որձաքարից: Այն վերջին նորոգումներով զգալի չափով վերստացել է իր նախկին կերպարանքը՝ համաչափ մասեր, կուսպ ձևեր, ամբողջությամբ ներդաշնակ անշուք, խստաշունչ լեռնային շրջապատին:

Այստեղ ավարտվում է Որոտանի հովիտը, եղբագծվում հորիզոնը հյուսիսակողմից:

Այս հուշարձանն այնպես առինքնող է, թարմ, որ ամեն այցելության թվում է, թե նոր-նոր է միայն կառուցումն ավարտվել. հափշտակվում, անցնում ես չորս բոլորը, նայում ամբողջին, կլանվում մանրամասներով, մինչ, ինչպես հայտնի է նրա կանգուն գոյությունը հասնում է մոտ 1300 տարվա, չէ որ այն կառուցվել է դեռևս VII դարում:

Անկախ նրանից, որ այս տաճարը՝ Սիսիանի ս. Հովհաննես եկեղեցին գրեթե վրիպել, կամ դուրս է մնացել շատ հետազոտողների ուշադրությունից ու այնպես չի ուսումնասիրվել, ինչպես նույն տիպին պատկանող մյուս տաճարները, իր ուրույն և շատ նշանակալից տեղն ունի հռչակավոր Ավան-Հռիփսիմեի տիպի հուշարձանների շարքում: Եվ որքանով այն նման է իր նախորդներին, նույնքանով էլ տարբեր է նրանցից ու եզակի:

Այստեղ նույնպես շինության ներքին բովանդակությունն ստեղծող խաչաձև դասավորության չորս խորանները, $^{3}/_{4}$ խորշերն ու անկյունային սենյակները արտաքուստ ամփոփված են ուղղանկյուն ծավալի մեջ, որը և վերևից պսակվում է բացառիկ ներդաշնակ մի գմբեթով (գծ. 65; նկ. 34, 36):

Առաջին հայացքից Սիսիանի տաճարը հատակագծային կապմությամբ չի տարբերվում այդ տիպի մյուս տաճարներից՝ ասենք Հռիփսիմեից, Գառնահովտից, Թարգմանչացից, սակայն մոտիկ ծանոթությամբ պարզվում է, որ սրանում շատ բան այլ է: Ի տարբերություն մյուսների, բոլոր խորանները, ինչպես Թարգմանչացում է՝ լայնքով միաչափ են, խորությամբ մեծ են արևելյանն ու արևմըտյանը, այդ էլ նախախորանների առկայության շնորհիվ, որոնցով և տարբեր են ստացվել գմբեթակիր կամարները լայնքով ու բարձրությամբ: Խորաններից յուրաքանչյուրը նախորդների մեկական պատուհանի փոխարեն, բացառությամբ Քըլատակի, ունի երեքական պատուհան[105]:

Այս հուշարձանում արտաքին եռատիձան որմախարիսխը շինությանը շրջանցում է, առանց խորշերից ներս մտնելու ու դուրս գալու:

Վերոհիշյալ տաճարներում ձակատների խորշերը հիմքում սեղանաձև են, մինչ Սիսիանում՝ ձշտորեն եռանկյուն: Ըստ որում, այդ խորշերը բավական լայն են ու խոր և կարող են համեմատվել միայն Հռիփսիմեի հզոր խորշերի հետ:

Մյուսների նկատմամբ տարբերությունները Սիսիանում չեն սահմանափակվում հատակագծային հարցերով, այդպիսիք առկա են նաև ներքին տարածության կապմակերպման մեջ, արտաքին ծավալներում, ինչպես և մի շարք մանրամասներում ու ձևերում:

Եթե Հռիփսիմեում, Թարգմանչացում և մյուսներից մի քանիսում գմբեթային փոխանցման համակարգը ավարտվում է գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտուն հասնելով, ապա այստեղ այն

սկսվելով որմնամույթերի խոյակներից, ավարտվում է գմբեթաթմբուկի ու կիսագնդաձև ծածկի սահմանագծում: Որպես դրա տրամաբանական հետևանք, գմբեթաթմբուկը ներսից ոչ թե բոլորակ, այլ բազմանիստ է: Գմբեթային փոխանցման համակարգը Սիսիանում և Զվարիում գրեթե միատեսակ է: Երկուստեք մեծ տրոմպները հատած կիսակոներ են, գմբեթի հիմքով չի անցնում հատուկ գոտի: Տարբերությունը միայն նրանում է, որ Զվարիում տրոմպային փոխանցման համակարգը եռաստիճան է, Սիսիանում՝ երկաստիճան: Վերջինիս առավելությունը նրանում է, որ ստորին մեծ և բավական բարձրում գտնվող փոքր տրոմպների միջև միջին տրոմպների բացակայությամբ թմբուկի ներքին նիստերը պերծ են մնացել թվով ութ կիսաձագարաձև խորշերից: Գմբեթի ներքին հարթությունն իր անաղարտ գծերով հանգստություն է հաղորդում ամբողջական տարածությանը:

Բացառիկ երևույթներից է Սիսիանի գմբեթաթմբուկի ներսից ութ, դրսից տասներկու նիստերով լինելը: Եվ այնուամենայնիվ այստեղ տրամաբանության դեմ ոչ մի մեղանչում կամ խախտում չկա: Գմբեթաթմբուկի ներքին ութ նիստերը ստացվել են գմբեթատակ չորս հավասար կողեր ունեցող քառակուսու տրոմպային բնական փոխանցումով, արտաքին տասներկու նիստերը՝ սյունակամարաշարի համաչափական անհրաժեշտությամբ: Հասկանալի է, որ եթե գմբեթաթմբուկը դրսից նույնպես ութ նիստերով ստեղծվեր, ունենալով ոչ մեծ բարձրություն, չէր կարող պատվել դեկորատիվ սյունակամարաշարով: Վերջինիս սյուները կլինեին շատ կարճ, կամարները՝ մեծաթռիչք, արդյունքը՝ անհամաչափ և անմաշտաբ:

Ճարտարապետը իր կանխամտածված նպատակը իրականացնելու համար կարողացել է խնդիրը ճիշտ լուծել՝ գմբեթաթմբուկը դրսից բարձրացրել է տասներկու նիստերով և այդ վերջինների անկյուն կազմող հանդիպումները ձևակերպել զույգ կիսասյուներով, ապա դրանց խոյակների վրայից դեպի աջ ու ձախ՝ մեկից մյուսին նետել կամարներ, ստեղծել ազնիվ համաչափություններով սյունակամարաշար, իր ժամանակի շքեղություններից մեկը:

Ներսից ութ, դրսից տասներկու նիստերով թմբուկի պատերը անկյունագծերի ուղղությամբ՝ $^3/_4$ խորշերի գլխավերևում, մյուս՝ առանցքային նիս-



Գծ. 65. Սիսիանի սուրբ Հովհաննես. հատակագիծ:

տերի համեմատությամբ ստացվել են ավելի հոծ և դրանք էլ հուսալիորեն դիմագրավում են դեպի դուրս հրող ուժերին, գմբեթին պարգևելով կանգուն երկարակեցություն:

Շատ չեն մեր այն տաճարները, որոնց գմբեթները անաղարտ վիճակում հասել են մեզ: Դրանցից է, ահա, Սիսիանի տաճարը: Յոթերորդ դարի գմբեթների վերաբերյալ արդ գաղափար է կազմըվում նաև Սիսիանով, Թալինի գմբեթաթմբուկի մնացորդով: Մյուս կանգուն գմբեթները չունեն սրանց նման դեկորատիվ հարդարանք՝ սյունակամարաշարի ձևով:

Սիսիան տաճարի կառուցումն իրականացված է բարձր վարպետությամբ. պատի շարքերը կանոնավոր են և՛ ներսում, և՛ դրսում, նույնիսկ ավանդատներում[106]: Կանոնավոր են նաև որմնամույթերն ու նուրբ ճաշակով կերտված խոյակները[107], կամարներն ու խորշերը, պատուհանների եզրագծերը, բարավորներն ու քանդակածածկ կամարա-



Գծ. 66. Սիսիանի սուրբ Հովհաննես. հատակագծի համաչափությունների վերլուծություն:

ղեղները, պատերի ու գմբեթի կողովահյուս[108] քիվերն ու վերջինիս յուրահատուկ ատամնաշարը:

Վաղուց անհետացել են տաճարի երկու՝ արևմըտյան և հարավային շքամուտքերի մասերը: Դրանց այժմյան տեսքը արդյունք է երբեմնի ոչ բարձրաճաշակ նորոգության:

Տաճարի դրսի և ներսի պատերի վրա պահպանվում են կառուցող վարպետների բազմաթիվ նշաններ, որոնք բնույթով հար և նման են հատկապես VII դարում կառուցված հուշարձանների վարպետների նշաններին:

Սիսիանի հատակագծում որոշակի կիրառություն է գտել Հռիփսիմեի հատակաձևի ստեղծման սխեման, սակայն ակներև են նաև շեղումներ: Այստեղ արևելյան և արևմտյան խորանների կենտրոնները գտնվում են տաճարի երկար առանցքի այն կետերում, որտեղ այդ առանցքներին են հանդիպում գմբեթատակ քառակուսու հյուսիսային և հարավային կողերի միջնակետերից սկսվող երկար առանցքի հետ 30°-ի անկյուն կազմող գծերը: Ինչպես երևում է գծագրից (գծ. 66), հյուսիսային և հարավային խորանների կենտրոնների միջև եղած տարածության կրկնակի չափն ունի տաճարի արտաքին երկարությունը, իսկ ներքին լայնությունը ստացվում է հավասար գմբեթի ներքին տրամագծաչափի հինգ երրորդին ($^5/_3 = 1^2/_3$): Հիշենք, որ Թարգմանչացում նույնպես տաճարի ներքին լայնքը հավասար է գմբեթի ներքին տրամագծի $^5/_3$ ($1^2/_3$)-ին:

Պատմական աղբյուրների վրա հիմնված նորագույն ուսումնասիրություններով հավաստվում է, որ տաճարը կառուցվել է VII դարի վերջին տասնամյակներում[109]: Կառուցվածքի ճարտարապետական-գեղարվեստական կողմը լուսաբանող հետազոտական տվյալները նույնպես հավաստում են տաճարի VII դարում կառուցված լինելը:

Այստեղ $^3/_4$ խորշերի կենտրոնները գտնվում են գմբեթատակ քառակուսու արևելյան և արևմտյան կողերի շարունակության վրա, այնտեղ, որտեղ այդ գծերին հանդիպում են տաճարի կենտրոնից $^2/_3$ շառավղաչափ հեռու, կարճ առանցքի վրա սկըսվող և այդ առանցքի հետ 30°-ի անկյուն կազմող գծերը: Հիշենք, որ այդպես է նաև Թարգմանչացում:

Այս պարագաներում, ունենալով տաճարի ներքին գմբեթաչափը (տրամագիծը), հնարավոր է դառնում կազմավորել ողջ տաճարի հատակաձևը:

## ՔՈԼԱՏԱԿԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (ԱԼՈՒՋԱԼՈՒ)

Քոլատակը նույնպես Հռիփսիմեատիպ տաճար է. այն գտնվում է Մարտունու շրջանի ներքին Ալուչալու գյուղից վերև, լճահայաց լանջի վրա:

Տաճարի շուրջը այս ու այն կողմում նկատվում են հին, անհետացած կառուցումների հետքեր: Պետք է կարծել, որ այդտեղ երբեմն եղել է բնակավայր, որի բնակիչները կլիմայական անբարենպաստ պայմաններից խուսափել, գյուղը տեղափոխել են ցած, մոտեցել Սևանի ափերին[110]:

Տաճարն այժմ ավերված վիճակում է, պահպանվում են դրսի ու ներսի պատերի ներքնամասերը, տեղ-տեղ 6—7 մետր բարձրությամբ: Փլած պատերի քարերը լցված են շինության ներսում ու դրսում, ծածկված հողով ու բուսականությամբ:

Հուշարձանը կառուցված է եղել դժվար մշակվող որձաքարով, շարքերը հորիզոնական են, համեմատաբար պակաս կանոնավորությամբ: Պատերի կառուցելակերպը սկզբունքորեն նույնն է, ինչպես էին մեր հուշարձաններում, այն տարբերությամբ միայն, որ այստեղ երեսապատ քարերը փոքր չափեր ունեն, տաշվածքն էլ կոպիտ է, սկզբից ևեթ ենթակա սվաղման. այժմ էլ պատերի վրա այս ու այնտեղ պահպանվում են դրանց հետքերը: Այդ մեր տաճարաշինության բացառիկ դեպքերից է, երբ պատերը սվաղվում են նաև դրսից: Պետք է կարծել, որ եկեղեցական տոների նախօրերին սվաղված պատերի ներկվածքը թարմացվել, և մուգ կանաչ մարգագետնի ֆոնի վրա ճերմակին է տվել տաճարը, ճարտարապետական ձևերի իր համաչափ ուրվագծերով հաճելի և տպավորիչ (նկ. 35):

Հատակագծային չափերով այս տաճարը փոքրերից չէ, նա նույնիսկ մեծ է Արամուսից ու Թարգմանչացից, Վարագավանքից, Աղթամարից ու Զորադիրից: Այն մի քիչ է փոքր Սիսիանից, սակայն սրա կենտրոնական քառակուսին, ասել է, թե գմբեթը՝ մեծ է նրանից (գծ. 67):

Քոլատակ տաճարի գոյությունը հետազոտողների նախորդ սերնդին հայտնի չի եղել, միայն վերջերս է այն մտել գիտական գրականության մեջ: Ա. Երեմյանը ուշադրության արժանի է դարձնում նրա ավանդատների ձգվածությունը հյուսիս-հարավ ուղղությամբ, իբրև բացառիկ երևույթ այդ տիպի տաճարներում[111]: Ս. Մնացականյանը գրում է. «Ինքնին հասկանալի է, որ IX—X դարերի Սյունիքի պայմաններում այսպիսի բարդ ճարտարապետական կոմպոզիցիայի վերարտադրությունը կապված էր էական դժվարությունների հետ և պարզ է, որ չէր կարող լայն տարածում ստանալ»[112]: Գ. Ն. Չուբինաշվիլին հուշարձանի թվագրման հարցում համաձայնում է վերոհիշյալ հետազոտողների հետ՝ կառուցողական տեխնիկայի առանձնահատկությունների հիման վրա տաճարի կառուցման ժամանակը թողնելով IX—X դարերի սահմանագծում[113]:

Ինչպես այս տիպի մյուս բոլոր տաճարներում, Քոլատակի հատակագիծը, որ ներգծված է մոտ 17,80×14,00 մետր պարագծերով ուղղանկյուն քառանկյան մեջ, կպցավորում են խաչաձև դասավորության չորս խորանները, անկյունների $^3/_4$ խորշերն ու ավանդատները: Ինչպես պատկերված են Ա. Երեմյանի և Ս. Մնացականյանի հիշյալ աշխատություններում տեղադրված գծագրերում, տաճա-




Գծ. 67. Քոլատակ (Սլուշալու). հատակագիծ:

րի հատակաձևը շատ տաճարների համեմատությամբ առավել կանոնավոր է. ըստ որում, գմբեթատակ քառակուսին Ա. Երեմյանի չափագրությամբ, իրոք քառակուսի է, այն ունի միաչափ կողեր, Ս. Մնացականյանի չափագրությամբ մոտ 20 սանտիմետրի տարբերությամբ այն ձգված է արևելք-արևմուտք ուղղությամբ: Հավասար լայնություններ ունեն որմնամույթերը, հավասար տրամագիծ՝ $^{3}/_{4}$ խորշերը, միաչափ են ավանդատները[114], հավասար լայնություն ունեն հյուսիսային, հարավային խորաններն ու արևելյան, արևմտյան նախախորանները, մինչ արևելյան ու արևմտյան բուն խորանների լայնությունը մյուսներից փոքր է մոտ 40—45 սանտիմետրով:

Տաճարի մուտքերը երկուսն են՝ արևմուտքից և հարավից: Անկախ նրանից, որ հյուսիսային ճակատը տեսանելիության առումով ավելի լայն հորիզոն ունի, ինչպես և այն, որ երբեմնի գոյություն ունեցող գյուղ բերող, ասել է, թե նաև տաճարին մոտեցող կարևոր ճանապարհը եղել է հյուսիսակողմից, տաճարն այդ ճակատի վրա մուտք չունի:

Բոլոր խորաններն ունեն երեքական լուսամուտներ՝ մեկական հատ ճակատային նիստերի վրա, մյուս երկուսը՝ խորշերի ներսում, թեք նիստերի վրա: Ավանդատները լուսավորվում են մեկական պատուհաններով բացված, համապատասխանաբար արևելքից և արևմուտքից:

Բոլոր ճակատների վրա առկա են երկուական եռանկյունի հիմքով, մեծ լայնության ու խորության (1,80—1,70 մետր) խորշեր:

Ի տարբերություն այս տիպի մյուս տաճարների, հիմնական առանձնահատուկը Քոլատակի հատակագծում այն է, որ արևելյան և արևմտյան խորանների լայնքը փոքր է, հյուսիսային և հարավային խորանների համապատասխան չափերից: Ինչպես հայտնի է, այս տիպի տաճարների մի մասում դրանք հավասար են, մյուս մասում՝ լայն են արևելյանն ու արևմտյանը: Դրանով ճարտարապետը Քոլատակում հնարավոր է դարձրել, որ գմբեթատակ քառակուսու կողմերը ստացվեն հավասար, $^{3}/_{4}$ խորշերն ուղղված լինեն այդ քառակուսու ճիշտ կենտրոնին, գմբեթակիր կամարների լայնքերը, հետևաբար և բարձրությունները լինեն հավասար, գմբեթի բոլորակ հիմքը ունենա կանոնավոր շրջագիծ և այլն:

Այն, որ այստեղ ավանդատները քառակուսի չեն, կամ լինելով քառանկյունի, ձգված են ոչ թե արևելք-արևմուտք, այլ հյուսիս-հարավ ուղղությամբ,— ամենևին էլ բացառիկ երևույթ չէ, ինչպես կարծում են որոշ հետազոտողներ, այդ նախ և առաջ արդյունք է այն բանի, որ այստեղ տաճարը, մյուսների համեմատությամբ, լայն է. այն բոլոր տաճարներում, որոնցում երկարության և լայնության տարբերությունը (դրանց հարաբերությունը) փոքր է, ավանդատները ձգված են հյուսիս-հարավ ուղղությամբ: Այդ հարաբերությունը Սիսիանում 1:1,36 է, Թարգմանչացում՝ 1:1,34, Գառնահովտում՝ 1:1,31, Հռիփսիմեում՝ 1:1,29, մինչ Քոլատակում 1:1,26, Ավանում՝ 1:1,19, փոքր են նույնպես Զվարթում՝ 1:1,24, Աթենում՝ 1:1,23, Մարտվիլիում՝ 1:1,14, Մեծ Ջուամթայում՝ 1:1,28: Եվ ահա, այս հուշարձաններից Սիսիանում (արևելակողմյանները), Մարտվիլիում, Զվարթում, Աթենում, մեծ Ջուամթայում (նաև արևմտակողմյանները), ինչպես և Քոլատակում ավանդատները ձգված են հյուսիս-հարավ ուղղությամբ:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Քոլատակի կառուցման ժամանակի որոշման հարցը: Միայն ու միայն կառուցելակերպի հիման վրա գալ որոշակի եզրակացության՝ տվյալ դեպքում ճիշտ չի լինի, որովհետև այն կառուցելակերպը, որով իրականացվել է այս տաճարը, գոյություն է ունեցել դեռևս նախքան տաճարի կառուցումը և շարունակվում է գործադրվել մինչև մեր օրերը:

Մի ժամանակ այդ նույն ձևով փորձում էին որոշել Աղվանական Լյակիթ տաճարի կառուցման ժամանակը, բայց պարզվեց, որ այդ կառուցելակերպը գոյատևել է հազարամյակներ ու միայն դրանով դժվար է ճշգրիտ եզրակացության գալ: Նույնը հնարավոր է ասել մեծ ու փոքր Շուամթա տաճարների վերաբերյալ: Նրանցում գործադրված կառուցելակերպը հարատևել է դարերով, մինչ այդ շինությունները ստեղծվել են ընդամենը մի քանի տարվա ընթացքում:

Բանն այն է, որ Քոլատակի կառուցելակերպը մեծ չափով կապված է եղել տաճարի կառուցման վայրի հետ: Այստեղ ճանապարհը Սևանի ափից անընդհատ բարձրանում է լանջն ի վեր, մինչև հուշարձանին հասնելը: Հասկանալի է, միջնադարի եղանակներով հեռավոր, առաջնակարգ հանքե-



Գծ. 68. Քոլատակ. հատակագծի համաչափությունների վերլուծություն:




Գծ. 69. Չամխուս. հատակագիծ:

րից մեծ քանակությամբ շինաքար բերել, վերև հասցնելը կապված պիտի լիներ անհաղթահարելի դժվարությունների հետ: Որձաքարի մեծաչափ սալերով են կառուցված Անբերդի, ինչպես և Սիսիանի եկեղեցիները, սակայն դրանց շինաքարի հանքը հենց իրենց մոտ է, անմիջապես հիմքերի տակ: Քոլատակի մոտ գործող բարձրորակ քարի հանք չի եղել: Սովորաբար լավ մշակվում է հողի տակից, հատուկ հանքաշերտից հանվող քարը: Եվ ահա, ձեռքի տակ ունեցած տվյալ շինանյութից ավելին անել, քան կառուցվածն է, չի հաջողվել: Տվյալ տաճարի համար պայմանները նույնը պիտի լինեին թե VII, թե IX և թե X դարերում, այս նշանակում է, որ տաճարի կառուցման ժամանակը լոկ կառուցելակերպով որոշելու դեպքում կարող են նշվել VII, IX, նաև X դարերը և այլն:

Արդ, փորձենք Քոլատակի կառուցման ժամանակը գտնել այդ տիպի տաճարների հատակագծերի համեմատության միջոցով, չէ որ այլ դրվագների ուսումնասիրության ու համադրության հնարավորությունները բացառված են տաճարի վերնամասը այժմ գոյություն չունենալու հետևանքով:

Քոլատակը իր հատակագծային պատկերով կարող է համեմատության մեջ դրվել Սիսիանի հետ. նրանք մերձավորագույն նմանություն ունեն, չա-



Գծ. 70. Ս. Հրեշտակապետ եկեղեցի (Աղտուց վանք-Սեբաստիա). սխեմատիկ հատակագիծ:

փերով էլ միմյանց շատ մոտ են: Այս տաճարներում ճակատների խորշերը հիմքում եռանկյունի են, ունեն համանման ձև ու չափեր, բոլոր խորաններն ունեն երեքական պատուհան, մուտքերի դասավորությունը նույնն է: Տարբեր են նրանց ավանդատների ձևերը: Քոլատակում բոլոր ավանդատները ուղղանկյուն-քառանկյուններ են, ձգված հյուսիս-հարավ ուղղությամբ, Սիսիանում այդպես են միայն արևելակողմի երկուսը, որոնք, սակայն արևելյան պատի վրա ունեն կիսաշրջան հիմքով խորշեր, արևմտակողմի ավանդատները ճիշտ քառակուսիներ են:

Մեր այս տիպի բոլոր տաճարներում, բացառությամբ Սիսիանի և Քոլատակի, խորաններում մեկական պատուհան է, Հռիփսիմեի արևելյան խորանի երկու կողայինները, որոնք այժմ փակված են, ենթադրում են, որ ուշ վերակառուցման արդյունք են: Երեքական պատուհան ունեն նույն տիպի հուշարձաններից՝ Նինոծմինդայի, Ջվարիի, Աթենի և Մարտվիլիի միայն արևելյան խորանները:

Սիսիանի արևմտյան խորանում մեկ պատուհան է, սակայն տաճարի կառուցման ընթացքում փորձ է արվել խորշերի ներսում ունենալ երկու պատուհան ևս, այդ են վկայում շարվածքում պահպանված կորաձև բարավորների մնացորդները: Ճակատի այդ մասում, թվում է, սկզբնական շարվածքը անփոփոխ պահպանվում է կառուցման օրվանից ի վեր: Քոլատակում, նրա բոլոր խորաններն անխտիր ունեն երեքական պատուհաններ:

Հատակագծերի պարզ համեմատությունից երևում է, որ Քոլատակը նախորդել է Սիսիանին, կառուցվել VII դարի երկրորդ կեսի սկզբներում:

Ամփոփենք այս եզրակացության փաստարկները: Դրանք են.

ա) Սիսիանը հատակագծում Քոլատակի համեմատությամբ ավելի մեծ ձգվածություն ունի (արևելք-արևմուտք ուղղությամբ):

բ) Սիսիանի և Քոլատակի որմնամույթերի լայնական չափերով հնարավոր է եզրակացնել, որ առաջինը երկրորդի համեմատությամբ ունեցել է բարձրության ձգված համաչափություններ:

գ) Սիսիանի գմբեթի տրամագիծը փոքր է եղել մոտավորապես նույն չափերն ունեցող Քոլատակ եկեղեցու գմբեթի տրամագծից:

դ) Սիսիանի արևելյան ավանդատներն ունեն կիսաշրջան հիմքով և գմբեթարդ ծածկով խորշեր, Քոլատակի ավանդատները չունեն:

ե) Սիսիանի կառուցողը ձգտել է իր մոտ հարևան և հատակագծով հարազատ տաճարը գերազանցել երկարությամբ, բարձրությամբ, կառուցելակերպով ու շքեղությամբ:

Քոլատակի հատակաձևի ստեղծման սխեման ինչ-որ չափով հեռանում է Հռիփսիմեում գործա-



Գծ. 71. Սատվածածին եկեղեցի (ս. Նշանի վանք-Սեբաստիա). սխեմատիկ հատակագիծ:

դլրվածից: Սրա ներքին երկարությունը հավասար է գմբեթի տրամագծի կրկնակի չափին, լայնությունը՝ մեկուկես չափին: Ուրեմն, լայնությունը վերցված է երկարության $^3/_4$-ի չափով: Տաճարի արտաքին երկարությունը մեծ է արտաքին լայնությունից գմբեթի կես տրամագծաչափով (գծ. 68):

Գմբեթատակ քառակուսին այստեղ ճիշտ չափեր ունի և $^3/_4$ խորշերի կենտրոնները ընկնում են այդ քառակուսու անկյունագծերի շարունակության վրա. այն կետերում, որտեղ այդ անկյունագծերը հատում են գմբեթի $^3/_4$ տրամագծաչափ ունեցող շառավղով տարված շրջագծին, նույնն է, թե տաճարի ներքին լայնքի կես չափն ունեցող շառավղով տարված շրջագծին:

Այսպիսով, ունենալով գմբեթի ներքին տրամագծաչափը, հնարավոր է դառնում ստեղծել ողջ տաճարի հատակաձևը:

## ՎԱՐԱԳԱՎԱՆՔԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Վասպուրականում կա Վերին Վարագ և Ներքին Վարագ. այստեղ դիտվող հուշարձանների հետ առնչվում է ներքին Վարագվանքի յոթ եկեղեցիներից միայն ս. Աստվածածինը:

Ե. Լալայանը իր Վասպուրականի նշանավոր վանքերին նվիրված աշխատության մեջ գրում է. «Ներքին Վարագը բարձրանում է համանուն լեռան արևմտահայաց լանջին, փոքրիկ, արհեստական հարթության վրա, ...մի աքանչելի տեսարան պարուրում է այցելուի հոգին — արևմտյան կողմում երևում է Վանա լիճը, որ երեկոյան վերջալույսին արևի մայր մտնելը հրաշագեղ տեսք է ստանում, մի քիչ հեռու ցցվում է Վանի մերկ, ապառաժոտ բերդը, իսկ սրա կողքին՝ Այգեստանը՝ յուր բարձրուղեշ բարդիներով և ուռիներով: Հեռուն երևում է Սիփանը: Արևելյան կողմում ցցվում են Վարագա մայրոտ, ասեղնավոր կատարները:

Վարագի բոլոր եկեղեցիների մեջ ամենագեղեցիկը, թերևս ամենահինը, ս. Աստվածածնի եկեղեցին է, որի հատակագիծը միանգամայն նման է Աղթամարի ս. Խաչ եկեղեցու հատակագծին: Սա շինված է անտաշ, մեծ-մեծ քարերից, իսկ կաթողիկեն՝ թրծած աղյուսից:

Եկեղեցին խաչաձև է, անսյուն, չորս խորաններով, և վարդարված 12 անկյունանի գմբեթով և բրգաձև կաթողիկեով: ...Արևմտյան կողմի խորշերի դռները, որ բացվում էին խորանների մեջ, փակված են, որովհետև այս խորշերից մինը Արծրունի թագավորի, մյուսը՝ թագուհու իբր աղոթատեղի է հարմարեցրած եղել... Եկեղեցու բոլոր կամարները պայտաձև են»[115]:

Առկա նյութի սակավությամբ պայմանավորված տաճարի ճարտարապետական կողմի վերաբերյալ խոսք չասելով հանդերձ, հնարավոր չէ չանդրադառնալ նրա հատակաձևին և դրա հետ կապված նրա կառուցման ժամանակի որոշմանը:

Առաջին իսկ հայացքից այս տաճարի հատակաձևը հիշեցնում է Ավանը, որոշ առումով՝ Արամուսը և ակամայից անհրաժեշտություն է ստեղծվում դրանց համեմատության՝ ընդհանրություններն ու տարբերությունները բացահայտելու նկատառումով (գծ. 72):

Հարկ է, որ նախօրոք վերականգնվի հատակաձևի նախնական տեսքը, հատկապես նրա արևմըտյան մասում: Ինչպես տեսանք, արևմտակողմի անկյունային սենյակների մուտքերը եղել են արևելակողմի ավանդատների մուտքերի նմանողությամբ՝ $^{3}/_{4}$ խորշերից: Հետագայում օրինական մուտքերը հոծ պատով փակվել և այդ խորշերը վեր են ածվել աղոթարանների Արծրունյաց թագավորի ու թագուհու համար, իսկ մուտքեր ստեղծվել են արևմտյան խորանից, ըստ որում, հյուսիս-արևմտյան ավանդատունը, որպես առանձին սենյակ, կորցրել է իր նշանակությունը, դառնալով միջանցիկ տարածություն եկեղեցու և նրա հյուսիսակողմի մի այլ եկեղեցու միջև:

Թվում է, որ հուշարձանի ճարտարապետական կողմին անդրադառնալիս, պետք է ներկայացնել կառուցվածքի սկզբնական տեսքը, առանց հետագա ձևափոխությունների. տվյալ դեպքում տաճարի հատակագիծը մասնագիտական գրականության մեջ ներկայացնել այնպես, ինչպես այն կառուցված է եղել սկզբնապես (գծ. 72):

Վարագավանքի Աստվածածինը իր հատակա-

ձևով Ավանից հիմնականում տարբերվում է ավանդատների ձևով և նախախորաններով: Ավանում ավանդատները հիմքում բոլորակ են, իսկ նախախորանները արևելյան և արևմտյան խորաններից՝ լայն: Այստեղ արևմտակողմի ավանդատները ուղղանկյուն-քառանկյունիներ են, ձգված արևելք-արևմուտք ուղղությամբ: Արևելակողմի ավանդատների ծածկաձևի անհայտ լինելու հետևանքով, այժմ հնարավոր է պատկերացնել երկու ձևով, մի դեպքում դրանք նման են արևմտակողմի ավանդատներին, սակայն երկու կողմերից ունեն լայնացումներ. մյուս դեպքում՝ հյուսիս-հարավ ուղղությամբ ձգված ուղղանկյուն-քառանկյունի սենյակներ արևելակողմի, նույնպես ուղղանկյուն խորշերով:

Այստեղ խորաններն ունեն մեկական պատուհան, ավանդատները նույնպես: Արևմտյան ավանդատների լուսամուտները, որ եղել են արևմտակողմից, փակվել են հետագայում կառուցված գավթի պատերով:

Տաճարն ունեցել է մեկ մուտք—արևմտակողմից: Հյուսիսակողմի մուտքը հետագայում է բացվել. այդպես էր նաև Ավանում:

Անկախ նրանից, որ այս տաճարի պատերը շատ հաստ են, առկա են հոծ պանգվածներ, սակայն դրանցում չեն ստեղծվել արտաքին խորշեր. այդպես է նաև Ավանում և Արամուսում: Այս երևույթը ոչ մի պայմանով չի կարելի բացատրել շինանյութի առանձնահատկությամբ՝ թե «պատերը շարված են մեծ չափերի անմշակ քարերով»: Նախ, իրավիճակը մի քիչ այլ է, այդտեղ քարերը ինչ-որ չափով մշակվել են, իհարկե՝ ոչ լիակատարությամբ, սակայն ավելի լավ չեն մշակված քարերը նաև Շուամթայում, Նինոծմինդայում և Քոլատակում, մինչ այս հուշարձաններից առաջինում և երրորդում արտաքին խորշեր կան բոլոր ճակատներում: Վարագավանքում սեղանաձև կամ եռանկյունի հիմքով խորշերի բացակայությունը բացատրելի չէ նաև կառուցողի վարպետության պակասով, խորշերի մոտիվի գոյության անտեղեկությամբ կամ IX—X դարերին իբր հատուկ պրիմիտիվությամբ, այդ ժամանակներում են կառուցվել Աղթամարը, Կվետերան և նորի շնչով բնորոշվող շատ ուրիշ տաճարներ:

Վարագավանքում, ի տարբերություն հյուսիսային և հարավային խորանների, արևելյանն ու արևմըտյանը մեծ խորություն ունեն, սակայն դրանք




Գծ. 72 Վարագավանք. հատակագիծ:

չունեն որոշակի եկրագծված նախախորաններ. այդ ևս չի կարելի մեկնաբանել շինաքարի ու շինելակերպի առանձնահատկությամբ: Հենց այդտեղ նույն շինանյութով են ստեղծվել բոլորակ պատերով $^{3}/_{4}$ խորշերը, ուղղանկյուն քարերով որմնամույթերը և այլ մանրամասներ:

Վարագավանքի հատակաձևի ստեղծման սխեմայում հետաքրքիրը $^{3}/_{4}$ խորշերի կենտրոնների գտնվելն է արևելյան և արևմտյան խորանների կենտրոններով տարված շրջագծի վրա: Այս պատկերը, որ բացառիկ երևույթներից է, նախ հանդիպում ենք Ավանում (գծ. 73):

Վարագավանքում ևս, ինչպես Ավանում, տաճարի ներքին երկարությունը վերցված է գմբեթի ներքին տրամագծի կրկնակի չափով, իսկ լայնությունը՝ նույն տրամագծի մեկևկեսի չափով — մի քիչ ավելի:

Երեք քառորդ խորշերի կենտրոնները գտնվում են գմբեթատակ քառակուսու անկյունագծերի վրա.



Գծ. 73. Վարագավանք. հատակագծի համաչափությունների վերլուծություն:

այդ կանխորոշվել է հիշյալ քառակուսու ճշտորեն քառակուսի լինելու հանգամանքով:

Շատ նշանակալից է, որ Վարագավանքում գմբեթակիր կամարները պայտաձև են: Պայտաձև կամարների գործադրությունը մեր տաճարաշինության մեջ հատուկ էր վաղ միջնադարին՝ V, VII դարերին:

**Վարագավանքում առկա են մեկից ավելի երևույթներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ այս տաճարը սկզբնապես կառուցվել է Ավանի, Արամուսի կառուցման ժամանակներում՝ VI—VII դարերի սահմանագծում,** ապա կործանվել, հետո կառուցվել է ժամանակակից եկեղեցին հին եկեղեցու հիմքերի վրա:

Տաճարի աղյուսաշեն գմբեթը սկզբնականը չէ: Դեռևս 1648 թվականին Վասպուրականում տեղի ունեցած սոսկալի երկրաշարժով ավերվել էին նաև եկեղեցիները: 1649 թվականին Մարխաս Չալապին վերականգնում, վերանորոգում է ս. Աստվածածինը. թերևս հենց այդ ժամանակ էլ կործանված քարաշեն գմբեթին փոխարինել է աղյուսաշենը:

Այն, որ Վարագավանքի արևմտակողմում և նրանից ավելի ուշ կառուցված գավթում են թաղված Արծրունիներից հայտնի թագավոր Սենեքերիմը (1029 թ.) և նրա կին՝ Խուշուշ թագուհին (1022 թ.) կգալի օգնում են տաճարի թվագրմանը: Գավիթը պետք է որ կառուցված լինի 1022 թվականից առաջ՝ X դարում, բուն եկեղեցին՝ գավթից առաջ: Աստվածածին եկեղեցին վանքի ամենահին կառուցվածքն է, այս տաճարը հավատացյալների մոտ, ողջ Վասպուրականի եկեղեցիների թվում եղել է ամենահարգին և ամենահայտնին, նույնիսկ ավելի, քան Աղթամարի հռչակավոր վանքը. ոչ թե Աղթամարի, այլ Վարագավանքի գավթում են թաղվել թագավորները: Այսպիսի վերաբերմունքի է արժանանում եկեղեցին նախ և առաջ իր մեծ հնությամբ ու ավանդներով:

Աղթամարը կառուցվել է 915—921 թվականներին: Այս շքեղաշուք եկեղեցուց հետո, երկրի ամենամասսայական և ամենահարգի սրբավայրում, որպես նրա գլխավոր եկեղեցի, չէր կարող կառուցվել «անմշակ քարով», անշուք արտաքինով և այդքան փոքրածավալ: Սրանք հանգամանքներ են, որոնք մտածելու առիթ են տալիս տաճարի սկզբնական կառուցման ժամանակի վերաբերյալ վերոհիշյալ եպրակացության կապակցությամբ:

# ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱՉ ՏԱՃԱՐԸ

Հովսեփ Օրբելին Աղթամարի իր ուսումնասիրությունը սկսում է, գրելով թե «Աղթամարի կղզում Գագիկ Արծրունու երբեմնի կանգնեցրած շինությունների պատերից և իր արդեն անցած-գնացած հոյակապ պալատից ոչինչ չի մնացել և միայն Գագիկի կերտած ս. խաչի նշանավոր տաճարն է մինչև մեր օրերը կանգուն գոյատևում, որը կղզու ոչ միայն իսկական տեսարժան բանն է, այլև մեկը հայ հարուստ ճարտարապետության մյուս աչքի ընկնող հուշարձանների ամենալավագույն օրինակների շարքում»[116]:

Պատմաբան Թովմա Արծրունին հիացմունքով է նկարագրում Աղթամարի տաճարը և հանգամանորեն շարադրում նրա բարեմասնությունները: Մեր պատմական նույնարժեք հուշարձաններից և ոչ մեկը պատմիչների այդպիսի ուշադրության չի արժանացել: Եվ բնական է, որ հետագա ուսումնասիրողներն իրենց աշխատություններում ոչ միայն քաղվածաբար, այլ ամբողջական էջերով մեջբերումներ են անում Թովմա Արծրունու շարադրած Արծրունիների պատմության Աղթամարի տաճարին վերաբերող հատվածներից:

Մեր ժամանակներում Աղթամարի հռչակի տարածման շրջանակները զգալի լայնացան, շնորհիվ այն ճոխ, պատկերազարդ, շքեղ հրատարակությունների, որ եղան հատկապես վերջին տասնամյակների ընթացքում, աշխարհի տարբեր երկրներում:

Այն գեղագիտական երջանիկ բավարարվածությունը, որ ստացել են Աղթամարի կղզի այցելողները տաճարի ներքին ու արտաքին բարձրարվեստ որմնանկարների ու բարձրաքանդակների դիտումից, ճարտարապետական կոթողի հարուստ, բայց ոչ շլացնող շքեղությունից, այլև պահպանել են ողջ կյանքի ընթացքում, որպես երբևէ տեսած ու ապրած անմոռանալի պահեր:

Վանա լճի Աղթամար կղզում թագավոր Գագիկ Արծրունու 915—921 թվականների ընթացքում կառուցած ս. խաչ տաճարը մեր միջնադարի մեծ ճարտարապետ Մանվելի հանճարեղ ստեղծագործությունն է:

Աղթամարի հատակագիծը Զորադիրի ս. Էջմիածին տաճարի մերձավորագույն նմանակն է, Ավան-Հռիփսիմե տիպի տաճարների մի տարատեսակը (գծ. 74):

«Սորադիրի ս. Էջմիածին» գրքի հեղինակ Թոմապո Բրեչչա Ֆրաթադոկքիի կարծիքով՝ ճարտարապետ Մանվելը իր կառուցած Աղթամարի ս. Խաչ տաճարի հիմքում դրել է Զորադիր տաճարի հատակագիծը, նկատի ունենալով, որ Արծրունյաց տոհմի երևելի ներկայացուցիչները թաղված են այդ տոհմի Աղբակ բնակավայրի ս. Խաչ եկեղեցում:

Աղթամարում, մյուս տաճարների նման ներքին խաչաձևությունը ստեղծված է կենտրոնական քառակուսու չորս կողմերում առկա կիսաշրջան հիմքով խորաններով: Ըստ որում, արևելյան և արևմտյան խորանների և այդ քառակուսու միջև առկա են նախախորաններ. հյուսիսային և հարավային խորանների առջևում նախախորաններ չկան: Այս հիման վրա է, որ տաճարի ներքին հատակաձևը երկարած է արևելք-արևմուտք առանցքով:

Այստեղ ամեն զույգ խորանների միջև առկա են տաճարների տվյալ տիպի առանձնահատկությունը բնորոշող $^3/_4$ շրջագծի հիմքով խորշեր:



Գծ. 74. Ախթամար, հատակագիծ:

Սրանցից արևելյան երկուսը ստեղծում են կապ և անցում տաճարի կենտրոնի և արևելյան խորանի երկու կողմերի ավանդատների միջև: Արևմտյան խորանի երկու կողմերում ավանդատներ չլինելու հետևանքով այդ կողմի $^3/_4$ խորշերի դերը սահմանափակվում է տաճարի ներքին տարածության, ինչպես և շինության կրող կոնստրուկցիաների արևելյան և արևմտյան կեսերի տեկտոնիկ հավասարակշռությունը պահպանելով:

Այստեղ հիշյալ խորշերն իրենց բացվածքներով ճշտորեն ուղղված են տաճարի կենտրոնին:

Ավան-Հռիփսիմեի տիպի մեր բոլոր տաճարները ամփոփված են արտաքին ուղղանկյուն-քառանկյունի պարագծերում. բացառություն են կազմում Զորադիրն ու Աղթամարը. սրանց հյուսիսային և հարավային խորաններն իրենց արտաքին բազմանիստ ծավալներով դուրս են գալիս հիշյալ պարագծերից: Անկախ արևելակողմի ավանդատների գոյությա՛ն, Աղթամարի ս. Խաչ կաթողիկեն, իր անվանը համապատասխանող խաչաձևությունը պահպանում է նաև արտաքին պարագծերում:

Ավանդատները արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված ուղղանկյուն-քառանկյուններ են, արևելյան պատի միջնամասի խորանաձև խորշերով:

Տաճարը ունի մուտքի երեք դռներ՝ արևմուտքից, հարավից և հյուսիսից, բացված խորանների ներքնամասում, առանցքների վրա:

Շինության ներքին ընդարձակ տարածությունն առատորեն լուսավորվում է գմբեթում և խորաններում առկա մեծաքանակ պատուհաններով: Դրանց քանակը՝ խորաններից յուրաքանչյուրում տարբեր է. այսպես՝ արևելյանում մեծ չափերի մեկ պատուհան է, արևմտյանում՝ չորս պատուհան, որոնցից երկուսը արևմտյան շքամուտքի վերևում, մեծը՝ միջին բարձրության վրա, համեմատաբար փոքրը՝ նախորդի վերևում: Պատուհաններից մյուս երկուսը բացվում են խորանի և նախախորանի սահմանագծում հյուսիսից և հարավից. ի տարբերություն տաճարի բոլոր պատուհանների, որ վերևից ունեն կամարակապ բարավորներ, այս վերջիններիս բարավորները ուղղագիծ են, հորիզոնական դիրքով: Հյուսիսային խորանում երկու պատուհան է, մեկը մուտքի գլխավերևում, մյուսը՝ արևելակողմից — արևելյան նիստի խոր ընկած մասում: Հարավային խորանում երեք պատուհան է և օթյակ մտնելու մեկ դուռ (հարավային շքամուտքից բացի): Կենտրոնական պատուհանը հիշյալ դռան վերևում է, խորանի գմբեթարդ ծածկի հիմքի բարձրության վրա, մյուս երկուսը համեմատաբար ցածր դիրքում են. ձախակողմինն ընկնում է խորանի արտաքին՝ հարավարևելյան նիստի խոր ընկած մասում, աջակողմինը՝ հարավ-արևմտյան փոքր նիստի վրա: Սրանցից բացի մեկական պատուհան ունեն $^3/_4$ խորշերից երեքը, հարավ-արևմտյան խորշը ունի երկու պատուհան, որոնցից բարձրինը այժմ պատով փակված է:

Ավանդատներն ունեն մեկական պատուհան, որ բացվում են արևելակողմի պատի վրա՝ խորշի ներսում: Հյուսիս-արևելյան ավանդատան արևելյան պատի վրա, արտաքին խորշի կամարաղեղի աջ ծայրի բարձրության վրա բացվում է ուղղանկյուն պարագծերով ևս մի լուսանցք:

Մասնագիտական գրքերում տաճարի պարբերաբար տպագրվող հատակագծում ոչ բոլոր պատուհաններն են ցույց տրված. այդ վերաբերում է նաև Հ. Օրբելու չափագրած շինության արտաքին պարագծերը պատկերող գծագրին:

Այստեղ ներկայացվող տաճարի հատակագծում պատուհանները ցույց են տրված համաձայն գոյություն ունեցող լուսանկարների:

Աղթամարի ինչպես ներքին տարածությունը, այնպես էլ արտաքին ծավալային հորինվածքը բարձրանում են նախորդ էջում պատկերված հատակաձևի վրա:

Ի տարբերություն մեր, և ոչ միայն մեր այս տիպի տաճարների, Աղթամարի հարավային խորանի վերնամասում ստեղծված է վերնահարկ, որտեղ իր աղոթքն էր կատարում թագավորը (գծ. 75): Համաձայն Հ. Օրբելու ուսումնասիրության, այդ վերնահարկ օթյակը բարձրանալու համար գոյություն են ունեցել արտաքին քարակերտ բաց աստիճաններ: Այժմ այդ աստիճանները չկան. ըստ երևույթին վերացվել են հարավային խորանին կից կանգակատան կառուցման կապակցությամբ:

## ԳՄԲԵԹԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Այս տիպի նախորդ հուշարձանների գմբեթային փոխանցման համակարգերում կիրառություն էին գտել հաջորդաբար մեծացող կամարների և առագաստների կոմբինացված, տրոմպային և առագաստային կոմբինացված, ապա տրոմպային և դրանց տարատեսակ եղանակները:

Աղթամարում գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթի բոլորակ հիմքին իրականացված է առագաստային եղանակով: Առագաստն այդ սկըսվում է ամեն զույգ խորանների միջև, հարևան որմնամույթերը միացնող կամարի վրայից և վերջանում է գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտով:

Այս տաճարում առագաստային համակարգի ներքնամասը տարբերվում է սովորական դեպքերից՝ երբ դրանք սկսվում են պատերով ստեղծված անկյունից: Աղթամարում այդպիսի անկյան փոխարեն $^3/_4$ խորշի բացվածքն է գմբեթարդ ծածկի հիմքում ուղղագիծ եկրակամարով: Այստեղ՝ առագաստային փոխանցման ստորին մասում առկա կամարը սովորականի նման կուգահեռ չէ $^3/_4$ խորշի ծածկի եկրակամարին իր երկկոր լինելու պատճառով: Այս ձևով սկսվող առագաստը Աղթամարում ստացել է իր հստակ իրականացումը:

Աղթամարի ներքին տարածությունը պսակվում է ընդարձակ գմբեթով: Ութ միջին չափի լուսա-



Գծ. 75. Աղթամար. կտրվածք արևելք-արևմուտք առանցքով:

մուտներ են բացվում նրա մեջ, լույսով ողողում տաճարի ներսը:

Գմբեթաթմբուկի հոծ պատը պատուհանների բացվածքներից բացի թեթևացնում են նույն պատուհանների պարագծերով ութ խորշեր: Մնացած հարթությունը, ներառյալ կիսագնդաձև ծածկի ողջ մակերեսը պատած է որմնանկարներով: Եվ ընդհանրապես, սվաղված և որմնանկարներով են ծածկված տաճարի պատերի ներքին հարթություններն ամբողջությամբ, անկախ այդ պատերի սըրբատաշ քարերով ամենայն կանոնավորությամբ երեսպատված լինելուն:

Տաճարի կառուցման, պատերի արտաքին ու ներքին հարթությունների երեսպատման քարերը բերվել են պատմական Հայաստանի և Սիրիայի սահմանային գոտուց, նավերով ու լաստերով փոխադրվել կղզի:

Աղթամարն արտաքուստ ճոխացվել է բազմաշան բովանդակության քանդակագոտիներով ու առանձին բարձրաքանդակներով, որոնց մանրամասն նկարագրությունը, բովանդակության հավաստի մեկնաբանմամբ բերված է Հ. Օրբելու հանրահայտ «Աղթամարի տաճարը» աշխատության 6—9-րդ գլուխներում և այլ հրատարակություններում, որից

ելնելով այդ հարցին չենք անդրադառնում: Նկատենք, սակայն, որ ողջ տաճարի արտաքին պատերի վրա շռայլորեն սփռված քանդակազարդումը իրականացվել է չափի այնպիսի զգացումով, դրանց տեղաբաշխումը՝ արվեստագետի այնպիսի իմաստությամբ, որ ոչ միայն որևէ չափով չի խաթարվել շինության արտաքին հարդարման ճարտարապետական տեկտոնիկան, այլև իմաստավորվել է այն, դարձել նշանակալից (նկ. 37, 38): Այս կապակցությամբ պետք է մերժել որոշ անբարյացակամ հետազոտողների թյուր տեսությունները այս եզակի հուշարձանի գնահատման և արժեքավորման առումով, ավելորդ համարելով դրանց հանգամանալից վերաքննությունը[117]:

Արտաքին հորինվածքում ներքին տարածության ճշմարիտ անդրադարձումը ներկայացնող ծավալներն ու նրանց ձևերը այս տիպի մյուս հուշարձանների համեմատությամբ Աղթամարում, ինչ խոսք, առավել շարժուն են: Օրինակ, 3/4 խորշերն արտաքուստ արտահայտվում են բազմանիստ թըմբուկի ձևով: Դեռ ավելին, այդ վերջինների և տաճարի բուն օրգանիզմի հանդիպման տեղում ստեղծվել են լրացուցիչ անկյուններով փոքր չափերի ուղղաձիգ ծավալներ: Սակայն դրանք, ըստ երևույթին, արվել են առանձին քանդակները անկյուններով սահմանազատվող առանձին հարթությունների վրա՝ համաձայն բովանդակության ու ձևի հարմարագույնս տեղադրելու, լույս ու ստվերի հակադրությունը առավել արտահայտիչ դարձնելու նպատակով (նկ. 37):

Թերևս նույն նպատակն է հետապնդել կառուցողը, որ արևելյան ու արևմտյան ճակատների եռանկյունի հիմքով խորշերից յուրաքանչյուրի ներսում առաջացրել է նույնպես եռանկյունի հիմքով ուղղաձիգ ծավալ, որով ստացվել է զույգ խորշ մեկ վերնամասի տակ: Դրանով միաժամանակ հնարավոր է դարձել ունենալ լայն ու խոր, մեկի փոխարեն՝ կրկնակի լույս ու ստվերով, իրոք տպավորիչ խորշ, առանց պատի ոչ մեծ զանգվածի մեջ չափից ավելի խորանալու:

Ճարտարապետական ռելյեֆ ձևերից բացի, տաճարի ճակատներում քիչ չեն կլոր քանդակի չափեր ընդունող կենդանական և այլ բովանդակության բարձրաքանդակները, որոնք տեղադրված են նաև ճարտարապետական խնդիրներ լուծելու, կոմպոզիցիոն մտահղացումները ընկալելի դարձնելու միտումով: Պատի հարթությունից դուրս կարկառված այս փոքր ծավալները առավել ցցուն են երևում իրենցից իսկ ընկնող ստվերների շնորհիվ: Դեռ ավելին: Արևածագից մինչև արևամուտ երկնակամարով անցնող մեծ լուսատուի անընդհատ շարժման շնորհիվ, շարժվում՝ կարճվում ու երկարում են այդ ստվերները, լույս ու ստվերի նորանոր պատկերներ դրոշմում պատի վրա, շարժման մեջ դնում լուսավորված ծավալները, սեփական և ընկնող ստվերները, ու թվում է, թե լիաձայն հնչում է մի լուռ, ներդաշնակ համանվագ (նկ. 38):

Տաճարի արևմտյան ճակատը դեպի վերև ձգված համաչափություններով ուղղանկյուն-քառանկյունի պատ է, վերևից ավարտված ճակտոնով, առանց հորիզոնական գոտու: Ճակատի ներքնամասում արևմտակողմի շքամուտքն է, որի ձևերը այժմ ներկայացնել հնարավոր չէ, արևմտակողմի հետագայում կառուցված գավիթով ծածկված լինելու պատճառով: Գավթի կտուրից վերև, ճակատի առանցքով տեղադրված է արևմտյան խորանի հիմնական պատուհանը, որի ձախակողմյան պատի վրա ողջ հասակով մեկ քանդակված է թագավոր Գագիկ Արծրունին, տաճարի քարե մանրակերտը ձախ ձեռքի վրա. նույն պատուհանի աջակողմյան պատի վրա Քրիստոսի բարձրաքանդակն է, նույնպես լրիվ հասակով: Առանցքային պատուհանի վերևում տեղադրված է երկրորդ պատուհանը, որի բարավորը կիսաբոլորակով մխրճվել է հորիզոնական քանդակագոտու մեջ, դառնալով առիթ քանդակի մի այլ կոմպոզիցիոն հանգույցի ստեղծման հենց այստեղ՝ վերևում: Նույն առանցքի վրա, ճակտոնի գագաթի անմիջական ներքևում ումն սրբի քանդակ է:

Գագիկ թագավորի քանդակից ձախ և Քրիստոսի քանդակից աջ վեր են խոյանում բարձրության ու լայնության հաճելի համաչափության եռանկյունի հիմքով ու կամարակապ վերնամասով երկու խորշերը, որոնց ներսում հետաքրքիր լույս ու ստվեր են ստեղծում սլաքաձև վերձիգ ծավալները:

Պատուհաններից ստորինն ու երկու խորշերն իրենց վերևում օժտված են պսակակարդ կամարաղեղներով:

Տաճարի արևելյան ճակատը կոմպոզիցիոն լուծմամբ հիմնականում նման է արևմտյան ճակատին, այն տարբերությամբ, որ այստեղ ավանդա-



Գծ. 76. Աղթամար. ճատակագծի
համաչափությունների վերլուծություն:

տների առկայությամբ պայմանավորված լայնական չափերը մեծ են, իսկ ուղղաձիգ խորշերը ճակատի ողջ հարթությունը բաժանել են երեք, գրեթե հավասար լայնքով մասերի (նկ. 38):

Առանցքային պատահատվածի վրա գլխավոր՝ արևելյան խորանի մեծադիր պատուհանն է. նրա վերևում՝ սրբի քանդակով մեդալիոնը: Ճակտոնի գագաթի անմիջական ներքևում կանգնած դիրքով մի այլ սրբի քանդակ կա:

Արևելյան ճակատի ձախ ու աջ պատահատվածների վրա, ցածր դիրքում ավանդատների քարի մեկ և կես շարքի բարձրության պատուհաններն են, ավելի վերև՝ այլ և այլ հարթաքանդակներ և բարձրաքանդակներ:

Արևելյան ճակատն իր ողջ լայնությամբ առնըված է ճակտոնի քիվի տակ: Այս քիվը, սակայն, ճակտոնի վերին մասում, երկու կողմերի ցածրադիր մասերի համեմատ այլ՝ կենդանաքանդակ մշակում ունի. դեռ ավելին, քիվի այդ մասը կես ճանապարհին ավարտվում է լիակատար ձևավորումով: Ճիշտ այդտեղից երկու քարի բարձրությամբ ուղղաձիգ կար է իջնում: Ձախակողմյան և աջակողմյան կարերի միջև առկա է մեկ շարքի բարձրության քանդակաշերտ: Ճակատի՝ վերին ձախ անկյունում առկա է մի այլ թեք գիծ, իսկ շարքի քարերը այդ և մյուս անկյունում համեմատաբար մուգ երանգ ունեն:

Տաճարի արևելյան ճակատում նկատված այս մանրամասները ենթադրել են տալիս, որ այստեղ ավանդատների տանիքները երբեմն փոքր-ինչ ցածր դիրքում են եղել և համեմատաբար փոքր թեքության, այնպես, ինչպես այդ տիպի մյուս հուշարձաններում:

Տաճարի հյուսիսային և հարավային ճակատներն ունեցել են միևնույն կոմպոզիցիոն պարագծերը, այն տարբերությամբ միայն, որ հարավային ճակատի կենտրոնական նիստի վրայով վեր է բարձրացել արքայի օթյակը տանող քարակերտ սանդուղքը: Այդտեղ եղել է օթյակի մուտքը, իսկ պատուհանը տեղադրվել է ավելի բարձր դիրքում:

Հարավային ճակատի կենտրոնական մասն այժմ ծածկված է հետագայում կառուցված կանգակատան եռահարկ շինությամբ:

Աղթամար տաճարի հիմքում խաչաձև ստորին ծավալը վերևում ավարտվում է արտաքին հորինվածքն ամբողջացնող գմբեթով, որն անմիջականորեն բարձրանում է տաճարի կենտրոնական ծավալի վրա:

Ինչպես Ավանում էր, Թալինի խաչաձև փոքր եկեղեցում և Զորադիրում, Աղթամարում նույնպես, ինչպես տեսնում ենք տաճարի հարավ-արևմտյան անկյունը պատկերող լուսանկարում, հիշյալ կենտրոնական ծավալի պարագիծը, գմբեթի հիմքի մակարդակի վրա, քառակուսու փոխարեն բազմանիստ է: Նիստերից չորսը մեծ են, 6-ը՝ փոքր: Ըստ որում, այդ փոքր նիստերից երկու եզրայինները, անկախ այն բանից, որ չեն կազմում կենտրոնական ծավալի կից կողերի շարունակությունը (ինչպես լինում է սովորաբար), փոքր-ինչ ետ կանգնելով հանդերձ, մնում են նրան կուցահեռ:

Աղթամարի գմբեթաթմբուկը 16 նիստեր ունի, որոնցից ութի վրա բացվում են կամարակապ վերնամասով պատուհաններ: Դրանց բարավորներն ընդգրկված են կամարաղեղներով, որոնց հորիզոնական դիրք ընդունած երկու ծայրերը երկարելով,

անցնում են անկյունը, ծալվում, ծածկում են հարևան նիստերի սկզբնամասերը:

Ինչպես Հռիփսիմեի գմբեթում, այստեղ նույնպես պատուհաններ կան, որոնք նիստերի առանցքների վրա չեն, աննկատելիորեն շեղված են, շարժված մի կողմի վրա: Եվ այնտեղ, և այստեղ ճարտարապետին ավելի հետաքրքիր է գմբեթաթմբուկի ներքին հարթության վրա պատուհանների և խորշերի առավել ճշգրիտ տեղաբաշխումը:

Տաճարի գմբեթաթմբուկը վերևից ավարտվում է կենդանաքանդակ գոտով, որտեղից սկսվում ու բարձրանում է գմբեթի բրգաձև ծածկը:

Դիտարկելով տաճարի մանրակերտը (թագավորի ձեռքի վրա), Հ. Օրբելին հանգում է այն եզրակացության, որ թերևս գմբեթի այժմյան վեղարաձև ծածկը սկզբնականը չէ, որ իբր սկզբնականը եղել է գնդաձև: Մանրակերտի լուսանկարի հնարավոր ուսումնասիրությունը մեզ նույն եզրակացության չի բերում: Քանդակող վարպետը ձգտել է տաճարի մանրակերտը տեղավորել մեկ ամբողջական քարաբեկորի վրա: Սկզբից քանդակել է միջին՝ կարևոր մասը, ապա՝ որմնախարիսխն ու վերնածածկը: Քարի սահմանափակ չափերը ստիպել են նրան իրական եռաստիճան որմնախարիսխը ցույց տալ միայն երկաստիճան, ինչպես և բթացնել վեղարաձև տանիքի սրածայր վերնամասը: Եթե նույնիսկ հիշյալ ծածկը պատկերված լիներ ներկայիս գմբեթի նման սրածայր, միևնույն է, մեկ հազարամյակի ընթացքում այդ սուր ծայրը կբթացվեր և տեղում կմնար այնպես, ինչպես այդ առկա է մանրակերտում:

Որքան հայտնի է, գնդաձևություն ունեցող տանիքները եղել են կղմինդրածածկ: Աղթամարում կղմինդր չի գործադրվել, չէ որ նրա կառուցման ժամանակներում այլ տաճարների կղմինդրյա ծածկերը արդեն փոխարինվում էին քարասալերով: Համենայն դեպս, քարասալերով գնդաձև ծածկի մի այլ դեպք հայտնի չէ:

Աղթամարի հատակաձևի վերլուծությունը (գծ. 76), ցույց է տալիս, որ այն ստեղծվել է ճշտորեն նույն կանոնական համակարգի գործադրմամբ, որը մշակել էր Ավանի ճարտարապետը, կատարելության հասցրել Հռիփսիմեի կառուցողը:

## ԵՐԵՔ ՔԱՌՈՐԴ ԽՈՐՇԵՐՈՎ ՏԵՏՐԱԿՈՆԽԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅԼ ՏՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

### ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

Առեղծվածային, դրանով իսկ հետաքրքիր հուշարձան է կախեթական ճարտարապետության մարգարիտ Նինոծմինդան: Սրա և՛ ինչ լինելն է անհայտ, և՛ կառուցման ժամանակը, և այդ հարցերում էլ մասնագետների կարծիքները բաժանվում են:

Անկախ նրանից, որ գիտական գրականության մեջ այն կանգնած է սույն աշխատությամբ նայվող հուշարձանների շարքում և, ինչպես կարծում են, հանդիսանում է Զվարթի համար նախօրինակ, այնուամենայնիվ տիպոլոգիական առումով Նինոծմինդան յուրօրինակ է, բոլորից տարբեր:

Նկատի առնելով աստղակերպ հատակաձևը, քրիստոնեական տաճարներից ինչ-որ չափով տար, բերվող ծավալա-տարածական հորինվածքը[118], ոմանք այն դիտել են որպես կռատուն-հեթանոսական տաճար, որ հետագայում փոխարկվել, դարձել է քրիստոնեական եկեղեցի: Ոմանք էլ կարծում են, որ այն հենց սկզբից ստեղծվել է որպես քրիստոնեական եկեղեցի[119]:

Տաճարի հատակագիծը, որ ներգծվում է մոտ 21,5 մետր տրամագծով շրջագծի մեջ, կազմավորված է խաչաձև դասավորության չորս խորաններով և նրանց միջև անկյունագծային ուղղությամբ տեղավորված չորս վգալի չափերի սենյակներով: Խաչաթևերը կազմող կիսաբոլոր հիմքով խորանները կենտրոնը ստեղծող տարածությունից հեռացած են թաղածածկ ուղղանկյուն տարածությամբ. անկյունագծային ուղղության սենյակները դեմ-դեմի երկու կիսաշրջան հիմքով խորանանման խորշեր են, միմյանցից հեռացած քառակուսուն մոտ ուղղանկյուն տարածությամբ, որն իր երկար կողմով բացվում է տաճարի կենտրոնական տարածության վրա:

Հուշարձանի հատակաձևի արտաքին պարագիծը, որ պայմանավորված է ներքին հատակաձևով (անկախ անկյունագծային ուղղության սենյակների, խորաններից ունեցած տարբեր հատակաձևի), իրենից ներկայացնում է մի վարդակ, ստեղծված գրեթե միահավասար ութ կիսաբոլորակ թերթերով:

Տաճարի մուտքի դռները յոթն են, որոնցից երեքը բացվում են հյուսիսային, հարավային և արևմտյան խորանների վրա, մյուս չորսը, որ համեմատաբար փոքր չափերի են՝ անկյունագծային ուղղության սենյակների վրա: Հիմնական մուտքը արևմտակողմինն է:

Արևելյան խորանի վրա բացվում են երեք, մյուս խորանների վրա՝ մեկական պատուհան: Անկյունագծային ուղղության սենյակներից արևելյան երկուսը մեկական փոքր չափի պատուհան ունեն արևելակողմից, հյուսիս-արևմտյան սենյակը՝ արևմտյան կողմից, հարավ-արևմտյան սենյակը քանդված է:

Ավելի քան տասը մետր բարձրության վրա՝ գմբեթակիր կամարների վերևից անցնում է պարզ կողադեմով մի գոտի, որից վերև եղել է գմբեթը: Չորս մեծ և չորս փոքր նիստերով ներքին տարածությունը գմբեթի բոլորակ հիմքին է փոխանցվել ութ գմբեթակիր կամարների միջև առկա փոքրիկ տրոմպների օգնությամբ (նկ. 40):

Սրա արտաքին աստղակերպ հատակաձևի վրա բարձրանում են ութ կիսաբոլորակ հիմքով թմբուկներ, որոնք իրենց վերևում ունեցել են ութնիստ գմբեթաթմբուկ՝ չորս պատուհաններով (նկ. 39):

Նինոծմինդա տաճարի սկզբնապես կառուցված շինությունը այնպիսին չի եղել, ինչպիսին նկարագրվեց վերևում: Այն մեկ է հասել շատ մեծ ձևափոխություններ բնորոշող վերակառուցումներով:



Գծ. 77. Նինոծմինդա. հատակագիծ:

Նինոծմինդայի հատակաձևը քրիստոնեական կրոնի հետ կապողը ոչ այնքան խաչաձևությունն է, որքան մեծ խորանի արևելյան կողմնորոշումը (որոշ թեքվածությամբ դեպի հարավ-արևելք):

Մասնագիտական գրքերում ներկայացվող այն վերակայմությունը, որը ստեղծված է սկզբնապես կառուցված տաճարի համար (գծ. 78) կատարված Միներվա Մեդիկայի վերակայմության ձևերով, ավելի ենթադրական է, քան հիմնված ավերակի ռեալ տվյալների վրա:

Բանն այն է, որ այդ **վերակայմության համար հիմք են ընդունված ավերակի հենց այն մասերը, որոնք իրենց իսկ համոզմամբ արգասիք են հետագա հավելումների:**

«Կախեթիայի ճարտարապետություն» աշխատության Նինոծմինդային նվիրված բաժնում հեղինակը տաճարի համեմատաբար լավ պահպանված արևելակողմի հատվածի վերնամասը կամարներից սկսած, համարում է հետագա վերաշինությունների արդյունք: Նույն աշխատության 237 էջում գրում է. «Մեղանի խորանի գմբեթարդը չի պահպանվել... վերականգնվել է դեղնավուն քարով... իհարկե, նաև գմբեթարդի արտաքին կամարն է վերականգնվել այդ նույն ժամանակ»: Հաջորդ՝ 238 էջում հեղինակը շարունակում է «...արևելակողմի այդ երկու սենյակների թաղերը վերաբերում են վերանորոգումների ժամանակներին, նույնպես և ողջ վերնամասը, սկսած տաճարի ներսը բացվող կամարների կրունկներից, դրանք շարվել են դեղնավուն քարով»: 239 էջում կարդում ենք «Գմբեթաթմբուկը իր բոլոր պահպանված մնացորդներով վերականգնման արդյունք է... Նույնպես պահպանված թաղերն ու կամարները»[120]:

Հետազոտողը իրավացիորեն ամենուրեք հիշեցնում է, որ սկզբնական տաճարը կառուցվել է կանաչավուն քարով, մինչ վերակառուցումները իրականացվել են դեղնավուն քարով:

Անկախ ողջ վերոհիշյալի, տաճարի սկզբնական տեսքը պատկերող վերակայմության տվյալ գծագրում (գծ. 78) առանց ձևափոխության տեղադրված են այն բոլոր դրվագները, որոնք վերևում հետազոտողի կողմից ներկայացվեցին որպես արդյունք հետագա նորոգությունների, վերակառուցումների, ձևափոխությունների:

Նախքան սկզբնապես կառուցված տաճարի համար վերակայմության փորձ անելը, ճշգրտենք, թե ավերակում առկա ո՛ր մասերն են նույնից (սկզբնականից) գալիս, ո՛ր մասերն են հետագա վերակառուցումների արգասիք:

Տաճարի ներքին, վզալի չափերի որմնամույթերը, որ իրենց հիմքում քառորդ, կես և լրիվ շրջանի ուրվագծեր ունեն, որ հիշյալ աշխատության մեջ հեղինակի կողմից անվանվում են «կոնտրֆորսներ», ոչ թե արդյունք են վերակառուցման, այլ հանդիսանում են սկզբնապես կառուցված տաճարի օրգանական մասերը: Դրանք ստեղծված են այն նույն կանաչավուն քարով, որով կառուցված է բուն շինությունը սկզբնապես: Այդ մույթերից արևմտակողմինները կործանված են, տեղում առկա են նրանց ներքնամասերը: Ամենաբծախնդիր պրպտումը դրանցում ի հայտ չի բերում երկիրեք կայմավորման որևէ հետք ու նշան: Դրանք խորանների պատերի հետ միաձույլ են, կառուցվել են նույն նյութով, նույն տեխնիկայով, նույն ժամանակ: Այս անժխտելի է:

Ստորև բերվող գծագրում (գծ. 83) կորագիծ հոծ սևով ցույց են տրված այժմյան ավերակում առկա որմնամույթերի ուրվագծերը, նրանց վրա ուղիղ գծերով որմնամույթերի այնպիսի եզրագծեր, ինչպիսին պիտի ունենային դրանք, եթե սկզբնապես կառուցված տաճարը լիներ այնպիսին, ինչ-

պիսին առաջարկված վերակավմության գծագիրն է, տեղավորված նույն հեղինակի աշխատության 239 էջում (գծ. 78)։ Ի միջի այլոց, այդ նույն եղ-րագծերով մույթեր են պատկերված նաև XI—XII դարերում իրականացված վերակառուցման համար առաջարկվող գծագրում, որ տեղադրված է նույն աշխատության հաջորդ՝ 240-րդ էջում (գծ. 79)։

Գմբեթակիր որմնամույթերի այնպիսի ձևափոխում, ինչպիսին ցույց է տրված այստեղ բերված 83-րդ գծագրում, հնարավոր չէ պատկերացնել, առավել ևս, կյանքում իրականացնել։ Նախքան հիշյալ վերակավմական և վերակառուցողական գծագրերի ի հայտ բերելը, անհրաժեշտ էր մույթերի համար վերակառուցման գծագրեր պատրաստել, որով կպարզվեր, թե որքանո՞վ ռեալ է կամ՝ հնարավոր այդպիսի ձեռնարկումը շինարարական գործում։

Այս որմնամույթերից գոյությունը պահպանած արևելակողմի երեքը 9,5 մետր բարձրության վրա ավարտվում են պարզ կողադեմ ունեցող գոտիով։ Դրանց վրա այժմ բարձրացող կամարները այնքան են ետ դրված, որ թվում է, թե մույթերը իրենց վրա ոչինչ չեն կրում։ Այդ գոտիներից վերև, բառացիորեն, ամեն ինչ արդյունք է վերակառուցման, դրանք իրենց ճարտարապետության բնույթով, քարով, կառուցման տեխնիկայով ոչ մի կապ չունեն,



Գծ. 78. Նիննծմինդա. վերակազմության կտրվածք սկզբնապես կառուցված տաճարի համար։



Գծ. 79. Նիննծմինդա. վերակազմության կտրվածք առաջին վերակառուցմամբ կազմավորված տաճարի համար։

ինչպես ներքնամասի հաստահեղույս մույթերի, այնպես էլ արտաքին պատերի հետ։ Մոտավորապես այդ նույն հորիզոնից վերև արտաքին պատերը ևս շարվել են այլ քարատեսակով և այլ տեխնիկայով։

Նույն աշխատության 232-րդ էջում հեղինակը հավաստում է, որ արտաքին ճակատներում «...քիվից ներքև եղող վերին շարքերը... վերաբերում են վերակառուցումներից որևէ մեկին»։

Սկզբնապես կառուցված տաճարի վերակազմության գծագրի համաձայն, շինության ծածկը եղել է «գոց թաղի» (сомкнутый овод) ձևով։ Մոտ 10 մետր թռիչքով գոց թաղը Նիննծմինդայում քիչ հավանական է, առավել ևս, երբ ներքնամասը ու, հատկապես որմնամույթերը, իրականացված են բավական հասարակ, ոչ առաջնակարգ տեխնիկայով։ Որպես ասածի ապացույց հնարավոր է մատնանշել անկյունային սենյակի քարակերտ ծածկի իրոք որ պարզունակ կառուցելակերպը։ Ամենուրեք շարքի քարերի արտաքին հարթություններն կոպիտ են, եզրագծերը՝ պակաս որոշակի, շարքերը՝ ոչ լրիվ կանոնավոր, մեծ ու փոքր քարերի համադրում, ծեփված կարեր և այլն։

Ժամանակակից ավերակում «կոնտրֆորսներ» անվանված հաստահեղույս մույթերից վերև՝ խորանների և անկյունային մասերի կամարաշարը,



Գծ. 80. Նինոծմինդա. ճակատ:

գմբեթի կորին անցնելու համակարգը, ինչպես և գմբեթից մնացած դրվագները, որ մնացել են հետագա վերակառուցումներից, հիմնականում ճիշտ են պատկերված Գ. Ն. Չուբինաշվիլու աշխատության 240-րդ էջում բերված գծագրի միայն վերնամասում: Այդ հատվածի հատակագծային պատկերը եղել է այնպիսին, ինչպիսին բերված է սույն աշխատության 83-րդ գծագրում ուղիղ գծերով:

Իսկ ինչպիսին է եղել սկզբնապես կառուցված տաճարի ծածկը: Այժմ հնարավոր է համոզված ասել, որ տվյալ շինությունը ունեցել է փայտաշեն ծածկ, որը անմիջականորեն դրված է եղել ներկայիս հաստահեղույս մույթերի վրա: Ըստ որում, այդ ծածկը, հավանաբար, ունեցել է «հազարաշեն» անվանվող ժողովրդական տների գվիրգվինի ծածկաձևը իր լուսիցուքով, ինչպիսին ցույց է տրված 80, 81, 82-րդ գծագրերում:

Նինոծմինդան Ջվարիին այնքան մոտ տեսնելը և, նույնիսկ, դրանք նույն վարպետի գործ համարելը անհավանական է: Եթե հատակագծային հարցերում որոշ ընդհանրություն կա (խաչաձևություն, արևելյան կողմնորոշում և այլն), ապա կառուցելակերպում ո՛չ մի նմանություն: Այդ տաճարներում երկուստեք արևելյան խորանը լուսավորում են երեք լուսամուտներ: Եթե Ջվարիում այդպիսիք ստեղծվել են տաճարի կառուցման հետ միաժամանակ, ապա Նինոծմինդայում նույն վիճակը հաստատող տվյալներ չկան. չէ որ շինության այդ պատուհաններով զբաղեցված մասում հետագա վերակառուցման մեկից ավելի նշաններ կան: Այստեղ օգտագործված քարը այլ տեսակի է՝ դեղնագույն, համեմատաբար լավ մշակված, որոշ փայլ ունեցող կրաքար, շարքի քարերից մի քանիսի վրա առկա են անընթեռնելի փոքր արձանագրություններ և քանդակված վարդյակներ: Արևելյան խորանի ներքնամասը ի տարբերություն մյուս յոթ բոլորակ հիմքով պատերի, շարված է ուղիղ նիստերով: Հնգանիստ ծավալի միջին երեք նիստերից յուրաքանչյուրի վրա կա մեկ պատուհան: Շարվածքի տեխնիկայից և վիճակից հասկացվում




Գծ. 81. Նիկոծմինդա. կտրվածք:

է, որ փորձեր են արվել այդ քարերը այս կամ այն չափով հարմարեցնելու մինչ այդ գոյություն ունեցող պատի օրգանիզմում: Եվ, թերևս այդ ժամանակ էլ բացվել են այդ պատուհանները, առնվազն՝ երկու կողայինները: Խորանի ներսում ևս վերակառուցման նշաններ կան, այդտեղ շարքի քարերը դրվել են, ինչպես հաջողվել է, համենայն դեպս ո՛չ հորիզոնական շարքերով: Կան հիմքեր, որոնք համոզում են, որ ո՛չ թե Ջվարիի կառուցողն է Նիկոծմինդայի օրինակով արևելյան խորանը արտաքուստ նիստերով կառուցել և երեք պատուհան տեղադրել, այլ ճշտորեն հակառակը, Նիկոծմինդան վերականգնելիս Ջվարիի նմանողությամբ խորանն արտաքուստ ստեղծվել է նիստերով, տեղադրվել երեք պատուհան: Իսկ եթե փոքր, ինչպես ասվեց անընթեռնելի արձանագրությունների մի մասը ենթադրվում է նախորդ շրջանի գործ, ապա պետք է ենթադրել, որ այդ դեղնագույն, լավ մշակված քարերը (կրաքար) այդտեղ են փոխադրվել մի այլ, ավելի հին և մինչ այդ ավերված շինությունից:

«Բեմ» (նախախորան) անվանված դրվագները ևս այս երկու տաճարները միմյանցից ավելի հեռացնում, քան մոտեցնում են: Այդպիսիք Նիկոծմինդայում բոլոր խորանները ունեն, մինչ Ջվարիում՝ արևելյանն ու արևմտյանը: Եթե դրանց եպրակամարները Ջվարիում միաժամանակ հանդիսանում են գմբեթ կրողները, ապա Նիկոծմինդայում հոծ պատի մեջ ստեղծված խորշեր են, իսկ գմբեթակիր կամարները գտնվում են դրանց և գմբեթատակ տարածության միջև և թռիչքով էլ խորանի եպրակամարից մեծ չեն:

Նիկոծմինդայում անկյունագծի ուղղությամբ գտնվում են լիակատար սենյակներ, մինչ Ջվարիի սկզբնապես կառուցված տաճարում $^3/_4$ խորշեր, ըստ որում ոչ թե Նիկոծմինդայի, այլ ճշտորեն Ավանի $^3/_4$ խորշերի ձևով:

Այս բոլորով պարզ է դառնում, որ Նիկոծմին-



Գծ. 82. Նինոծմինդա. ծածկի տեսքը ներսից:



Գծ. 83. Նինոծմինդա. որմնամույթերի ենթադրյալ ձևափոխություններ հատակագծում:

դան չի հանդիսանում Ջվարիի անմիջական նախորդը:

Նինոծմինդայի կառուցողները ոչ թե խորանները հեռացրել, անկյունային մույթը ճեղքել երկուսի ու այդտեղ տեղավորել են անկյունային սենյակներ, ինչպես կարծում են ոմանք, այլ կենտրոնի շուրջը դասավորված ութ բաժիններից չորս առանցքայիններին տվել են մի տեսք ու մի չափ, անկյունագծային դասավորության բաժիններին, մի այլ տեսք ու այլ չափ, որի հետևանքով էլ որմնամույթերը ստացվել են կույգ-կույգ խմբավորված: Այդպես չէ սակայն տեսքը արտաքինից. այդտեղ ութ աշտարականման ծավալներ են, գրեթե միաչափ, միաձև:

Ի վերջո, ի՞նչ է իր ներսում ամփոփել սկզբնապես կառուցված այս հուշարձանը, արդյոք հնարավոր չէ՞ ենթադրել, որ Նինոծմինդան, որ ծանր է, փակված, ներամփոփ, արտաքին աշխարհին անհաղորդ, դամբարանային շինություն է եղել և արդյո՞ք պեղումները նրա ներսում թաղման հետքեր չեն հայտնաբերի:

## ՄՑԽԵԹԻ ՋՎԱՐԻ (Ս. ԽԱՉ)

Ջվարին և Ավանը նույն տիպի տաճարներ են, նրանց փոխհարաբերության լուսաբանումը բոլոր առումներով կարևոր նշանակություն ունի Հայաստանի և Վրաստանի պաշտամունքային կառուցվածքների ճարտարապետության պատմության համար: Նախքան այդ խնդրին անդրադառնալը՝ հարկ է ըստ ամենայնի ներկայացնել Մցխեթայի Խաչի մեծ եկեղեցու՝ Ջվարիի ճարտարապետությունը:

Գ. Ն. Չուբինաշվիլին գտնում է, որ Վրաստանի և Հայաստանի այդ տիպի բոլոր հուշարձանների առաջնեկը Ջվարին է, որը «ծնվել է մեծ արվեստագետ ճարտարապետի գլխում», որ այն նախորդներ չի ունեցել և «ստեղծվել է հենց VI դարի վերջում» և, ապա՝ «ստեղծված երկով ընտրված ուղղությամբ ասվել է վերջին խոսքը», որ «ամբողջական կոմպոզիցիայի իր լրիվ ավարտվածությամբ, հանգստությամբ, հավասարակշռվածությամբ ու բոլոր քառորդների սիմետրիայով չի թողել ոչ մի հնարավորություն ճարտարապետական ձևերի հետագա օրգանական զարգացման համար», որ

«նրանում այլևս չեն մնացել չպարգաչած վիճակում պահպանված մասեր», որ այդ տիպը «ճարտարապետության հետագա պարգացման միջանկյալ աստիճան չէ... այլ հանդիսանում է որոշակի որոնումների ավարտական էտապը...»[122] (նկ. 41):

Համաձայն նույն հետազոտողի, Ջվարիից հետո այդ տիպի մնացած բոլոր տաճարները հանդիսանում են նրա կրկնությունները, տարբերակները և մեծ մասամբ չհասկացված, անճաշակ, անքանքար, անարվեստ ընդօրինակումները, ինչպես հատակագծային, ընդհանուր ծավալա-տարածական հորինվածքի, այնպես էլ առանձին հանգույցների, դրվագների և այլ մանրամասների առումով:

Ջվարին բազմակողմանի ուսումնասիրված հընագույն տաճարներից է, սակայն, ըստ երևույթին նրա մասին դեռ չի ասված ողջ հնարավորը և այդ է պատճառը, որ հետազոտողները հուշարձանին վերաբերող շատ հարցերում տարակարծիք են:



Գծ. 84. Ջվարի. այժմյան տաճարի հատակագիծ:

### ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Անկախ նրանից, որ «Վրաստանի դարձը» խրոնիկայի տվյալներով Խաչի եկեղեցին[123] հիմնադրվել է Կյուրապաղատ Գուարամի կողմից, որը և տաճարի պատերը բարձրացրել է մինչև «գոտկատեղ», այնուհետև նրա կառուցումը շարունակել է նրա որդի, Դեմետրեի եղբայր Ստեփանոսը, տաճարի կառուցման ավարտը վերագրվում է մի դեպքում Ստեփանոսի հաջորդ՝ Վրաստանի մթավար Ադրներսեհին, մյուս դեպքում՝ վերջինիս որդի Ստեփանոս երկրորդին (Քոբուլին):

Այս էրիսթավների և մթավարների կողմից երկիրը կառավարելու ժամանակագրությամբ, որ առաջին անգամ մշակել է XVIII դարի վրաց աշխարհագրագետ արքայական Վախուշտին, Գուարամը երկիրը կառավարել է 575—600 թվականներին, Ստեփանոս առաջինը՝ 600—619 թվականներին, Ադրներսեհը՝ 619—639 թվականներին, Ստեփանոս երկրորդը՝ 639—663 թվականներին: Այստեղից հետևում է, որ Գուարամը տաճարը պիտի հիմնադրած լինի իր տիրապետության վերջին տարիներին՝ մինչ 600 թվականը, շինարարությունը պիտի ավարտված լինի մի դեպքում մինչև 639 թվականը, մյուս դեպքում՝ ավելի ուշ, Ստեփանոս երկրորդի օրոք (մինչև 663 թվականը):

Գ. Չուբինաշվիլին, ելնելով դրամագիտության և այլ տվյալներից, վերախմբագրելով Վախուշտիին, Գուարամի կողմից երկրի ղեկավարումը տանում է 545—586 թվականները: Ըստ նրա, արդեն 590 թվականին երկրի ղեկավար էր Ստեփանոսը, 604—605 մինչև 634—635 թվականները՝ Ադրներսեհը, 634—635 թվականներին Ադրներսեհին փոխարինում է Ստեփանոս երկրորդը:

Համաձայն ժամանակագրության այդ վերախմբավորման, Գուարամը սկսել և, ապա ավարտել է Խաչի Փոքր եկեղեցու կառուցումը 575 թվականին, իսկ Ստեփանոսը 590 թվականին սկսել և, ամենաուշը 604—605 թվականներին ավարտել է Խաչի Մեծ եկեղեցու կառուցումը, որ իբր Ադրներսեհը և նրա որդի Ստեփանոս երկրորդը տաճարի կառուցմանը իրենց մասնակցությունն են բերել ոչ թե երկրի ղեկավարներ դառնալու ժամանակամիջոցում, այլ դեռևս Ստեփանոս Ա-ի օրոք՝ մինչև 604—605 թվականները, որպես կառավարիչների նույն ընտանիքի անդամներ:

Բանն այն է, որ **իրականում գոյություն չունի որևէ տվյալ կամ վկայություն, Խաչի Փոքր եկեղեցու կառուցումը լիովին Գուարամին և Խաչի Մեծ**



Գծ. 85. Ջվարի. սկզբնապես կառուցված տաճարի հատակագիծ:

**եկեղեցու կառուցումը լիովին Ստեփանոսին վերագրելու համար:**

Երկրի ղեկավարների փոփոխված ժամանակագրությունը հաստատելու նպատակով, հիշատակվող դրամները իրականում խիստ վնասված և գրեթե անընթեռնելի լինելու հետևանքով, ինչ խոսք, անկարող են հավաստել ստույգ տվյալներ, այստեղից հետևում է, որ **վերևում բերված տեսությունը տաճարի կառուցողների և կառուցման ժամանակի վերաբերյալ լոկ կարծիք է, բերված հեղինակի կողմից:**

Իր կարծիքը՝ Խաչի մեծ եկեղեցու կառուցումը մինչև 600, ամենաուշը՝ 604—605 թվականները ավարտված լինելու վերաբերյալ առավել հավաստի ներկայացնելու նպատակով «Ջվարիի տիպի հուշարձաններ» գրքի հեղինակը վկայաբերում է հայկական աղբյուրներից «Գիրք թղթոց»-ը և Ուխտանեսի «Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց»-ը[124]: Նա գրում է. «Վրաստանի կաթողիկոս Կիւրիոնի և Հայաստանի կաթողիկոս Աբրահամի 607—609 թվականներին վերաբերող պաշտոնական գրագրության, այն գրագրության, որը նախորդում էր երկու երկրների եկեղեցական բաժանմանը, հիշվում է նաև այս սուրբը, ըստ որում նշվում է, որ Մցխեթի խաչի **եկեղեցի**[125] երկրպագության էին գալիս մեծ թվով ոչ միայն վրացիներ, այլև հայեր»[126]:

Մեր ձեռքի տակ ունենալով նույն աղբյուրները, այստեղ բերում ենք հիշված էջերից նույն հատվածները, միտք ունենալով պարզել դրանց համապատասխանությունը հետազոտողի աշխատության մեջ բերվածներին:

Ահավասիկ «Գիրք թղթոց»-ի 164 էջը:

«Թուղթ առաջին Տեառն Աբրահամու հայոց կաթողիկոսի, առ Կիւրիոն վրաց կաթողիկոս».

Նամակի տեքստում կարդում ենք.

«Աստի ի Մցխիթայի ի **Խաչն** գալով. և այտի ի Սուրբ **Կաթուղիկէ»:**

Բառացիորեն ասվում է, որ այստեղից աղոթելու համար գալիս էին Մցխեթի Խաչը, և այդտեղից՝ սուրբ Կաթուղիկէ:

Այս նախադասության մեջ **եկեղեցի** բառը չկա: Այստեղ կա միայն **Խաչը**, և խաչ անվան տակ ոչ մի կերպ չի հասկացվում **Խաչի եկեղեցի:**

Ինչպես հայտնի է, բոլոր եկեղեցիներում էլ Խաչ է լինում, բայց հայոց կաթողիկոս Աբրահամի վերոհիշյալ նամակի այստեղ բերված հատվածի երկրորդ մասում ասվում է, որ աղոթելու համար այդտեղից գալիս էին կաթողիկե, այսինքն՝ կաթողիկոսական եկեղեցի և չի ասվում նրանում գտնըվող Խաչը պաշտելու:

Ահա մի հատված ևս այդ նույն նամակից (164—165 էջերում).

«...կի մի ոք եկեսցէ աղաւթել աստի ի սուրբ **Խաչդ.** և այտի ի սուրբ կաթուղիկէ»:

Այստեղ ևս բոլորովին նույն իրավիճակն է, ինչ որ էր մեջբերված նախորդ հատվածում:

«Գիրք թղթոց»-ի 169-րդ էջում կարդում ենք.

«Թուղթ Տեառն Սմբատայ՝ Վրկան մարզպանի առ Կիւրիոն՝ վրաց կաթողիկոս».

«...Այդ սուրբ վկայարան որ Ցուրտավ, պատուական եկեղեցիդ հաստատեցաւ, և պաշտաւնդ և կարգդ հայերէն ի ձեր միջի էր, և փոխեալ թըշնամութիւն ի մէջ արկանէք, մանաւանդ թէ և թէրութիւն, արգելուլ և մեկ աստ որք կամին գալ և երկրպագանել սրբոյ **Խաչիդ,** և ոչ տալ մտանել որք այտի գան ի սուրբ **կաթուղիկէ եկեղեցի,** և յայլ վկայարանս յաղաւթել»:

Այս նամակում ևս՝ աղոթելու օբյեկտը հանդիսանում է **Խաչը** և ոչ երբեք Խաչի եկեղեցին: Անկախ այն բանից, որ կաթողիկե նշանակում է ընդհանուր եկեղեցի, այնուամենայնիվ այստեղ գրվել է «կաթուղիկէ **եկեղեցի»**, հետևաբար արտահայտության նույն ձևով պետք է լիներ՝ «Խաչի եկեղեցի», եթե իսկապես այդպիսին լիներ:

Սմբատ մարզպանի նամակի վերը բերված հատվածում մեծ պարզություն է մտցնում նաև **«մտանել»** բառը: Այսինքն՝ սուրբ կաթողիկե եկեղեցում աղոթելու համար նախ պետք է **մտնել** եկեղեցի, դռնով ներս **մտնել**: Այսպիսի արտահայտության ամենահետավոր նշույլ անգամ չկա, երբ խոսվում է սուրբ Խաչի մասին:

Այժմ մեջ բերենք հատվածներ վրաց կաթողիկոս Կիրիոնի պատասխաններից՝ ուղղված հայոց կաթողիկոս Աբրահամին և Սմբատ մարզպանին. 171 էջում կարդում ենք.

«... և երկրպագել պատուական և կենսատու սրբոյ **Խաչին** Մծխիթայի...»:

«...այլ մեք համենայն ժամ յաղաւթս յիշեմք առաջի սրբոյ **Խաչին...»:**

«... և արժանի լինիջիք ի մաւտէ աւուրս գալ և երկրպագել սրբոյ **Խաչին**»:

178 էջում կարդում ենք.

«... և ի սուրբ **Խաչս** Մծխիթայի աղաւթել և աւրհնաց հաղորդէին: Նոյնպէս և որ աստի այդր գային ի սուրբ **կաթուղիկէ և յայլ եկեղեցիսդ** աղաւթել...»:

Ինչպես տեսնում ենք, վրաց Կիրիոն կաթողիկոսը ևս Մցխեթի տվյալ սրբությունը անվանում է **«Խաչ»** և ո՛չ «Խաչի եկեղեցի». մինչդեռ այնտեղից այստեղ աղոթքի եկողների համար կաթողիկեից բացի նշում է «յայլ եկեղեցիսդ»:

Երբ հայոց կաթողիկոս Աբրահամին չի հաջողվում վրաց Կիրիոն կաթողիկոսի հետ հասնել հավատքի միաբանության, նա 608—609 թվականներին գրում է իր «Շրջագայականը» հայ հավատացյալներին և ահա «Գիրք թղթոց»-ի 194 էջում կարդում ենք.

«Թուղթ շրջագայական Տեառն Աբրահամու հայոց կաթուղիկոսի»

«... մի աղաւթիւք երթալով ի **Խաչն** որ ի Մըցխիթայի տեղաւքն համբաւի. մի՛ Մանգլեայց խաչն և մի ի մեր **եկեղեցիս** վնոսա ընդունել...»:

Աբրահամ կաթողիկոսը խոսելով Խաչի մասին,




Գծ. 86. Ջվարի. սկզբնապես կառուցված տաճարի գմբեթային մասի հատակագիծ:

ասում է, որ նա հայտնի է Մցխեթի կողմերում, ու չի ասում, որ գտնվում է Խաչի հայտնի եկեղեցում. մինչ մեր սրբավայրերի մասին խոսելիս, այդպիսիք անվանում է **«եկեղեցի»:**

Երբ Ուխտանեսը գրում էր «Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց»-ը, իր ձեռքի տակ ուներ այն փաստաթղթերը, որոնք գրված են եղել 606—609 թվականներին և ամփոփված են «Գիրք թղթոց»-ում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ուխտանեսը այս կամ այն չափով կրկնում է «Գիրք թղթոց»-ը, և այնուամենայնիվ մենք այստեղ մեջ ենք բերում հիշյալ խնդրին վերաբերող մի հատված, նկատի առնելով, որ վերևում հիշատակվում են էջեր նաև Ուխտանեսից:

Գրքի երկրորդ հատվածի 90-րդ էջում կարդում ենք Կիրիոնի պատասխանը. «Եւ դարձյալ մեր Հարքն ասէ՝ և Վարդապետի և ամենայն բնակիչք աշխարհիս՝ յորժամ գային անդր՝ աղաւթեին ի սուրբ **եկեղեցիսդ**, նոյնպես և ձերդ աստ գային առ **սուրբ Խաչս** Մցխիթայի՝ և աղաւթեին»:

Այսպիսով, աներկբայորեն հաստատվում է, որ

606—609 թվականներին, այսինքն վրաց և հայոց եկեղեցիների բաժանման ժամանակ Մցխեթի «ս. Խաչ» աղոթատեղին եղել է **Խաչ** և ո՛չ **Խաչի եկեղեցի**, ինչպես ներկայացվում է «Ջվարիի տիպի հուշարձաններ» գրքում:

Ի. Ա. Ջավախովը իր «Վրաստանի և Հայաստանի միջև VII դարի սկզբի եկեղեցական բաժանման պատմությունը» աշխատության մեջ նույնպես մեջբերումներ է անում «Գիրք թղթոց»-ից, սակայն ռուսերեն թարգմանելիս երբեմն բնագրի նկատմամբ ազատ է վարվում, բաց թողնելով մեկ հետաքրքրող հարցի տեսակետից շատ կարևոր հատվածներ: Օրինակ. հայերեն բնագրում կարդում ենք. «Ազատ մարդիկն, որ ի հայոց ի Վիրս խնամութիւն արարեալ էր, ի սրբոյ Շուշանկայ պաշտավնն գային էւ ի սուրբ **Խաչս** Մցխիթայի աղաւթել և աւրհնաց հաղորդէին: Նոյնպես եւ որ աստի այդր գային ի սուրբ **Կաթուղիկէ** եւ յայլ **եկեղեցիսդ** աղաւթել...» և այլն, Ի. Ջավախովի թարգմանության մեջ բացակայում են այստեղ ընդգծված **«Կաթուղիկէ»** և **«եկեղեցիսդ»** բառերը ու այլ մանրամասներ և ստացվել է.

«Հայաստանից Վրաստան ամուսնական կապերով մտնող ազատ ժողովուրդը գալիս էր ժամերգության (ի հիշատակ սբ. Շուշանիկի) և աղոթելու Մցխեթի **սբ. Խաչին**, հաղորդվելու սուրբ ընծաներին. ճշտորեն այդպես էլ նրանք, ովքեր այստեղից (Վրաստանից) ձեր մոտ (Հայաստան) էին գալիս հանգիստ խղճով հաղորդվելու...» և այլն[127]:

Ինչպես տեսնում ենք, հայերեն բնագրում պարզ հասկացվում է, որ Մցխեթայի սրբությունը, որին աղոթում էին, եղել է լոկ սբ. **Խաչը** (և ո՛չ **եկեղեցի**), իսկ Հայաստան եկողների համար աղոթելու սրբավայրեր են եղել **Կաթուղիկեն** և այլ **եկեղեցիներ:** Ահա և տեքստի այդ կարևոր կողմը չի ընկալվում ռուսերեն թարգմանությանը ծանոթանալիս և ապակողմնորոշում է ընթերցողին:

Նույն մոտիվներով վկայաբերվում է նաև վերջերս Ցխիսի-ում (Ախլցխա) հայտնաբերված Ի. Վ. Աբուլաձեի վերծանմամբ 616—619 թվակիր կոթողը, որի վրա քանդակված է խաչ և կանգնողի գիրը՝ «Այս խաչը ես, Կոստանտս կանգնեցրի հանուն Մցխեթի **Խաչի** իմ, կնոջս և երեխաներիս աղոթքի համար»[128]:

Եվ ահա այստեղ ևս «Ջվարիի տիպի հուշարձաններ» գրքի հեղինակը **«Խաչ»** խոսքի տակ հասկանում է եկեղեցի: Նա գրում է. «Այստեղից ամենայն հավանականությամբ պետք է հասկանալ, որ կոթողը կանգնեցվել է հանուն մոտակայքում գտնվող **եկեղեցու**, նվիրված Մցխեթի Խաչի տոնին, որը հաստատում է այն մեծ նշանակությունը, որ ուներ այս սրբությունը այն ժամանակվա Վրաստանում»[129]:

Եթե ենթադրենք, որ արդեն կառուցված է եղել Խաչի մեծ եկեղեցին, նա ինքն է դարձել սրբավայր և իր նշանակությամբ ստվեր է գցել նրանում պահպանվող խաչին, ապա կոթող կանգնողը այն թերևս Խաչի եկեղեցուն նվիրեր և այդպես էլ գրեր, և քանի որ այն գրված է **Խաչին** (և ոչ եկեղեցուն), միանգամայն բնական է եզրակացնելը, որ **616—619 թթ. Խաչի մեծ եկեղեցին դեռևս գոյություն չի ունեցել:**

Ինչպես երևում է հայտնաբերված կոթողի մեկնաբանողը «Խաչ» խոսքի տակ ընդունում է **«Խաչի եկեղեցի»** գաղափարը, մի բան, որ չի կարող ընդունելի լինել, որովհետև ի սկզբանե գոյություն է ունեցել «Խաչի եկեղեցի» (վրացերենում՝ Ջվարիս-Սակդարի) արտահայտությունը, և վերը բերված վկայությունների հեղինակները ինչու պիտի



Գծ. 87. Ջվարի. հատակագծի համաչափությունների վերլուծություն:

կլանային գրել՝ պարզ և լրիվ: Հետաքրքիր է նկատել, որ Ստեփանոսի քանդակի արձանագրության մեջ նույնպես սուրբը **Խա՛չն** է համարվում, ահավասիկ. «Кресть Спасителя, помилуй Степаноса, патрикия Грузии»:

Մցխեթի խաչը երկար ժամանակ գոյություն է ունեցել, հետո է միայն կառուցվել Խաչի եկեղեցին: Արդ, եթե խոսք սավելու լինի սուրբ Խաչի մասին նախքան եկեղեցու կառուցվելը, ինչպե՞ս պիտի անվանվի այն, դարձյալ «սուրբ Խաչ», այսինքն այնպես, ինչպես որ գործ է ածվել իր ժամանակին, ինչպես այժմ գրվում է «Խաչի» կանգնման պատմություններում՝ «սուրբ Խաչ»: Հետեվաբար, երբ «ս. Խաչի» վրա կառուցվել է եկեղեցի, ճիշտ գաղափար ստանալու և նախորդ «սուրբ խաչ» արտահայտության հետ չշփոթելու համար անհրաժեշտաբար պետք է ստեղծվեր լիակատար արտահայտություն «Խաչի եկեղեցի» և ոչ այլ կերպ, և այդպես էլ եղել է իրականում (տե՛ս վրացական քրոնիկները), և այդպես էլ գրվում է հիմա, առանց բացառության, բոլոր հեղինակների, այդ թվում և Գ. Ն. Չուբինաշվիլու կողմից:

Այն բանից հետո, երբ Մցխեթի ս. Խաչի վրա կառուցվեց եկեղեցի, աստիճանաբար «Խաչին» վերագրվող սրբությունը անցնում է եկեղեցուն, մինչև այն աստիճան, որ ինչ-ինչ առիթներով ոչնչացած, թերևս տեղափոխված մարմարակերտ խաչը հետագայում չի վերականգնվում և «միանձնյա սրբությունը» համարվում է եկեղեցին: Ահա այս առիթով էլ ժողովրդի բանավոր խոսքում «Խաչի» կարճ անվանումը ևս անցնում է եկեղեցուն կոչվելով «Ջվարի», որ վրացերենում նշանակում է «Խաչ»: Սակայն այս **նոր** արտահայտություն է և կապ չունի «Գիրք թղթոց»-ի ժամանակների հետ:

Արդ տեսնենք, թե ինչպես է բացատրում հեղինակը «Խաչի եկեղեցի»-ի փոխարեն միայն «Խաչ»՝ «Ջվարի» գործածելը «Ջվարիի տիպի հուշարձաններ» գրքում՝

«Так как в общежитии установилось приурочение наименования Джвари именно к большой церкви данной группы в особенности и так как с другой стороны это дает значительное сокращение при наименовании, то это грузинское название (из нарицательного давно ставшее собственным, как напр. и название «Сиони» для Атенской церкви этого типа) я **решил применить в настоящем исследовании**»[130].

Այս է պատճառը, որ որոշ աշխատություններում եկեղեցին միաժամանակ անվանվում է երկու ձևով՝ հաճախ՝ «Խաչի եկեղեցի» և մերթ ընդ մերթ՝ «Խաչ» (Ջվարի):

Դրամագիտության հայտնի մասնագետ Ե. Ա. Պախոմովը դարձյալ դրամագիտության տվյալներով Ստեփանոս Ա-ի վերջին տարին համարում է ոչ 604/5, ոչ էլ Վախուշտիի որոշած 619, այլ՝ 625 թվականը, երբ կայսր Հերակլը, գրավելով Թբիլիսի քաղաքը, կռիվների ընթացքում սպանված Ստեփանոսի փոխարեն երկրի ղեկավար է նշանակում Կախեթիայի էրիսթավ Ադրներսեհին, որը Բակուրի (և ո՛չ Ստեփանոսի) որդին էր:

Այս ամենով հնարավոր է եզրակացնել, որ **Մցխեթայի Խաչի Փոքր եկեղեցին հիմնադրել է Գուարամը, շինարարությունը շարունակել և ավարտել է նրա որդին՝ Ստեփանոս Ա-ը:** Սա չի հակասում վրացական քրոնիկներին:

Պատմաբան Սումբաթի մոտ կա տեղեկություն, որ կայսրը Բաղդադը գրավելուց և հափշտակված սուրբ մասունքները հետ խլելուց հետո Քարթլի վերադարձավ 7-րդ տարում: Եվ ապա՝ «Մինչև նրա վերադարձը Թբիլիսիի Սիոնը բնակիչների կողմից ավարտվել էր և, միայն պակասում էր Խաչի եկեղեցուն»: Այս նույնը Գ. Չուբինաշվիլին բերում է իր գրքի 20-րդ էջում:

«Այսպես, դեռևս VII դարի 20-ական թվականների վերջի դեպքերը նկարագրելիս ժամանակագիրը (Սումբաթը) նշում է, որ «Թբիլիսիի Սիոն եկեղեցին ավարտված էր, իսկ **Խաչի եկեղեցուն պակասում էր»:**

Ինչպես հայտնի է, Հերակլը Թբիլիսին գրավել է 626 (կամ 624 թվականին), ուրեմն պարսկական արշավանքներից վերադարձել էր 631 թվականին և այդ ժամանակ էլ Խաչի եկեղեցին դեռևս ավարտված չի եղել: Այս ևս չի հակասում վրացական քրոնիկների տվյալներին: Պահպանված որոշ տեղեկություններով Խաչի եկեղեցին ավարտել է Ադրներսեհը, որը, համաձայն վրաց աղբյուրների ապրել է մինչև 639 (կամ 634/5) թվականները:

Ադրներսեհի որդին՝ Ստեփանոս Բ համաձայն քրոնիկների նույնպես մասնակցել է բուն Խաչի եկեղեցու շինարարությանը և ավարտել է այն: Այս Ստեփանոս 2-րդը, համաձայն քրոնիկների,

հորը՝ Ադրներսեհին փոխարինել է 639 (կամ 634/5) թվականներին և ապրել է մինչև 660-ական թվականները: Հետաքրքրական է նկատել, որ 604—605 թվականներին Ստեփանոս Բ-ն դեռևս մանուկ էր և չէր կարող գործուն մասնակցություն ունենալ եկեղեցու կառուցմանը (տե՛ս արևելյան ճակատի աջակողմյան քանդակը), մինչ նույն Ստեփանոս Բ-ն հարավային ճակատի քանդակում պատկերված է հասուն այր և կարևոր դեմք: Ակներև է այս երկու քանդակների միջև ընկած առնվազն 2—3 տասնամյակների ժամանակամիջոցը, երբ տաճարի կառուցմանը բերած իր արդյունավետ մասնակցության իրավունքով Ստեփանոս Բ-ն տաճարի ամենաերևացող տեղում, գլխավոր՝ հարավային մուտքի վերևում դրել է իր քանդակը, երբ իր նախորդներն արդեն չկային, այսինքն՝ ոչ վաղ, քան 634—635 (կամ 639) թթ.:

Մեր համոզմամբ, կայսր Հերակլը, երբ երկրին տեր նշանակեց Ադրներսեհին, իր ազդեցությունը տվյալ երկրամասում ամրացնելու մտադրությամբ միջոցներ տրամադրեց նրան, որ եկեղեցիներ կառուցի Թբիլիսիում, ինչպես և Մցխեթայի հռչակավոր խաչի վրա: Սրանով միայն կարելի է բացատրել, որ պատմաբան Սումբաթը այդ եկեղեցիների շինարարության վիճակը հիշում է հատկապես Հերակլու վերադառնալու կապակցությամբ:

**Ուրեմն, Մցխեթայի Խաչի մեծ եկեղեցու կառուցումը դեռևս 626 թվականին սկսել է Ադրներսեհը, շարունակել և, մոտավորապես 640-ական թվականներին, եթե ոչ ավելի ուշ, ավարտել է Ստեփանոս Բ-ն՝ Քոբուլը:** Ընդամենը մեկուկես—երկու տասնամյակ, որը միանգամայն նորմալ ժամանակամիջոց է այդպիսի դժվար պայմաններում նման եկեղեցի կառուցելու համար:

Այս հարցին տալով հույժ կարևոր նշանակություն, առիթ ունեցավ նրան անդրադառնալ նաև Ի. Վ. Աբուլաձեն: Հրապարակի վրա է նրա «Замечания по поводу статьи П. М. Мурадяна: «Армянская надпись храма Джвари» աշխատությունը, տպագրված Վրացական ՍՍՀ ԳԱ «Мацне» հանդեսի 1968 թվականի վերջին (4-րդ) համարում (էջ 171—189)[131]:

Նկատենք, որ հեղինակը՝ Ի. Վ. Աբուլաձեն այդ աշխատության 187—188 էջերում «Գիրք թղթոց»-ից կատարած բոլոր մեջբերումներում «խաչ» բառի տեղ գրում է «Джвари»: Հայտնի է, որ



Գծ. 88. Ջվարի. գմբեթային փոխանցման համակարգի դրվագ:

«Джвари» վրացերեն նշանակում է խաչ, սակայն հեղինակը սեփական նախաձեռնությամբ ռուսերեն «крест» է գրում, երբ խոսքը գնում է առանձին կանգնած խաչի վերաբերյալ, և «Джвари» է գրում, երբ խոսքը տանում է խաչի եկեղեցու վերաբերյալ, մինչդեռ վրացական բնագրերում ու, հատկապես, քրոնիկներում նման բաժանում չկա: Սրանով աշխատության հեղինակը փորձում է արհեստականորեն այն տպավորությունն ստեղծել, որ իբր «Գիրք թղթոց»-ում խոսքը գնում է միայն և միայն եկեղեցու և ոչ առանձին կանգնած խաչի վերաբերյալ, որ իբր «Գիրք թղթոց»-ի ժամանակներում խաչի եկեղեցին կար, որ իբր այդ է հաստատում հավաստի աղբյուր «Գիրք-թղթոց»-ը:

Մինչև այժմ ոչ ոք սկզբնաաղբյուրները այդպես քմահաճորեն չի մեկնաբանել, ինչպես այդ անում է տվյալ հոդվածի հեղինակը քննարկվող հարցում, ըստ երևույթին «պարզություն մտցնելու» նպատակով: Ե. Թաղիշվիլին, որ հրատարակել է «Источники грузинских летописей—Три хроники, перевод с грузинского»[132],— վրացերեն «Ջվարի»-ն ամենուրեք թարգմանաբար գրում է «крест», թե այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է առան-



Գծ. 89. Ջվարի. սկզբնապես կառուցված տաճարի արևելյան ճակատը:

ձին կանգնած խաչին և թե այն ժամանակ, երբ խոսքը գնում է խաչի եկեղեցուն՝ «церковь креста»:

Գ. Զուբինաշվիլին քրոնիկներից վերցրած բոլոր մեջբերումներում իրավացիորեն գրում է «крест Мцхетский», երբ խոսքը վերաբերում է առանձին կանգնած խաչին[133] և «большая церковь креста Мцхетсого», երբ խոսքը վերաբերում է խաչի եկեղեցուն: Նա «Խաչ»-ին կուգընթաց ռուսերեն «Джвари» է գրում միայն քրոնիկից առնված մի հատվածում ուղղանկյուն փակագծերի մեջ[134]:

Ի. Ջավախովը (Ի. Ջավախաշվիլին) ևս վրացերեն խաչը (ջվարին) ռուսերեն գործերում գրում է «крест» (տե՛ս նրա վերոհիշյալ աշխատությունը):

Հետաքրքիր է նկատել, որ X—XI դարերի հայ և վրացի պատմագիրները, անդրադառնալով նույն հարցին, «Գիրք թղթոց»-ի որոշ արտահայտություններ հարապատությամբ կրկնում են նույն ձևով, նույն խոսքերով: Նրանցից և ոչ մեկը ոչ մի դեպքում Մցխեթայի խաչը չի դիտում որպես եկեղեցի: Ահավասիկ՝ Մովսես Կաղանկատվացին հետևյալ ձևով է շարադրում Աբրահամ կաթողիկոսի «Շրջագայականի» մեկ հետաքրքրող մասը՝ «...ամեննին չպետք է շփվել նրանց հետ ոչ աղոթելիս, ոչ ճաշելիս. ոչ էլ խմելիս, ոչ բարեկամությամբ, ոչ

դայակությամբ, աղոթելու չպետք է գնալ այն խաչի **մոտ,** որ Մցխեթ վայրով է հոչակված, չպետք է գնալ նաև Մանգլիսի խաչը, նրանց մեր եկեղեցիներում չպետք է ընդունել, իսկ ամուսնական կապերից ամենևին պետք է հեռու մնալ. միայն կարելի է առևտուր անել նրանց հետ, այնպես, ինչպես հրեաների հետ»:

Մեր օրերում նույնպես որոշ հետազոտողներ «Մցխեթայի խաչը», «Սուրբ և կենսատու խաչը» կամ «Մցխեթայի Ջվարին» արտահայտությունների տակ հասկանում են առանձին կանգնած խաչը: Աիավասիկ Նիկո Չուբինաշվիլին (Գ. Ն. Չուբինաշվիլու որդին) իր «Խանդիսի» աշխատության մեջ գրում է «Этот Цкисский крест функционально аналогичен Мцхетскому кресту», նույն տեղում՝ «Джвари-Мцхетский крест явился символом признания христианства», և ապա «...каппадокийка Нино и царь Мириан со своими приближенными установил крест—на горе, получившей название Джвари именно от этого креста...».

Ուրեմն «Գիրք թղթոց»-ում առկա **«խաչը» վե**րաբերում է առանձին կանգնած խաչին և ոչ նրա վրա կառուցված եկեղեցուն, այն խաչին, որը համաձայն ավանդության կանգնեցվել է դեռևս Միրան թագավորի կողմից: Հետևում է, որ **«Գիրք թղթոց»-ի տվյալները ամենևին էլ հիմք չեն հանդիսանում Ի. Աբուլաձեի վերևում բերված եզրակացության համար:**

Այսպիսով, մեզ համար պարզվում է, որ Մցխեթայի Խաչի Մեծ եկեղեցին կառուցվել է մեր Մրենի եկեղեցու (639—640 թթ.) հետ մոտավորապես նույն ժամանակներում և, ըստ երևույթին, նույն վարպետների կողմից: Դրանում համոզում են ոչ միայն Մեծ եկեղեցում պահպանված քարգործ վարպետների նշաններն ու հայերեն արձանագրության մնացորդները, այլև նրա վրայի քանդակները, որոնք, ինչպես տարբեր ժամանակներում նշել են որոշ գիտնականներ, այդ թվում Հ. Ստրժիգովսկին, Բ. Առաքելյանը, Մ. Սարգսյանը, Պ. Մուրադյանը և ուրիշներ, ունեն շատ ընդհանուր կողմեր: Այդ քանդակների մանրամասների իրականացման մեջ, ինչպես մեզ երևում է, առկա է բոլորովին նույն ձեռագիրը[135]:

Ջվարի տաճարը իր տեսակի մեջ առաջինը չէ. նրա համար նախօրինակներ են հանդիսացել դեռևս VI դարի վերջին քառորդում սկզբնավորող և VII դարի առաջին քառորդի ընթացքում կառուցված նույնատիպ տաճարները:

### ՏԱՃԱՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Այս տաճարի հատակագիծը մի առանձին հետաքրքրություն է ստեղծել մեր ժամանակի հետազոտողների շրջանում: Նրանց մի մասը այն համոզման է, որ ժամանակակից տաճարի հատակագիծը ստեղծվել է միանգամից և որ այն ի սկզբանե հիմնադրվել և կառուցվել է ճիշտ այնպես, ինչպես այսօր կա (գծ. 84): Հետազոտողների մյուս մասը գտնում է, որ Ջվարի եկեղեցու հատակագիծը վերջնական տեսքի է եկել երկու հերթում՝ սկզբնականը իրենից ներկայացրել է տաճարի միջուկը միայն՝ կենտրոնական խաչաձևը (գծ. 85), մինչ չորս անկյունների սենյակները քառախորան կենտրոնին են կցվել հետագայում, որով և վերջնականապես կազմավորվել է ժամանակակից տաճարի հատակագիծը:

Այս, իհարկե, նոր միայն արծարծվող հարց չէ. մեր դարասկզբում արդեն գոյություն ուներ Ջվարի տաճարը երկու հերթում կառուցված լինելու տեսությունը, սակայն դա մնում էր սոսկ կարծիք, մինչև որ հետագայում, շինարարական վերլուծության հիման վրա ներկայացվեց որպես ռեալ փաստ:

Եվ իրոք, նույնիսկ առաջին հայացքից, դեռ մանրամասների մեջ չխորացած ստացվում է հենց այդպիսի տպավորություն: Կենտրոնական խաչաձևը այնքան միասնական է ու ամբողջական, որ թվում է, թե անկյունների սենյակները խախտում են նրա ավարտուն, համասարակշռված հանգստությունը: Ներկա հատակաձևը կարծեք ստեղծված լինի առնվազն հինգ մասերի՝ կենտրոնական խաչաձևի և անկյունների չորս սենյակների մեխանիկական միակցումով, որ եթե այդ չորս սենյակները հեռացվեն, կենտրոնական խաչաձևը ոչ միայն չի տուժի, այլ կներկայանա անխառն՝ իր դասական պարզության մեջ:

Արդ, ինչ իրական հիմքեր կան Ջվարիի հատակաձևը և, ընդհանրապես տվյալ շինության ծավալա-տարածական ողջ հորինվածքը երկու հերթում կազմավորված լինելու թեզը հավաստի համարելու համար: Այս հարցի լիակատար հիմնավորումը



Գծ. 90. Ջվարի. սկզբնապես կառուցված տաճարի հարավային ճակատ:

առկա է Մ. Ա. Չիխկվաձեի «Ջվարիի ճարտարապետությունը»[136] աշխատության էջերում:

Այն, ինչ Մ. Չիխկվաձեն տաճարի կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ գրում է, պետք է համարել ստույգ, նկատի ունենալով, որ նա անմիջականորեն մասնակցել է հուշարձանի 1921—1939 թվականների վերանորոգման ու ամրացման աշխատանքներին և գրում է այն, ինչ որ տեսել է: Նա մասնավորապես հաղորդում է՝ տաճարի «...արևմտյան խորանի [հիմքը հանդիսացող] կենտրոնական հենապատը կառուցվել է, երբ բարձրացվելու էր բուն տաճարը: Այն կառուցվել է ուղղաձիգ և կապված տարբեր բարձրության քարերի հորիզոնական շարքերից: Հենապատի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան անկյունային սենյակների տակ ընկած մասերը կառուցված են 5—10° թեքությամբ և շարքերը կապված չեն կենտրոնական հենապատի շարքերին. հատկապես այդպիսին է հարավ-արևմտյան սենյակի հիմնահենապատը: Հենապատի այդ հատվածներում, անձամբ իմ կողմից,—գրում է Մ. Չիխկվաձեն,—հայտնաբերվել են գմբեթի քիվի բեկորներ՝ այսպիսով հաստատվում է հենապատի այդ մասերի [հետևաբար նաև նրանց վրա բարձրացած անկյունային սենյակների] առավել ուշ առաջացումը»:

«Եռաստիճան որմնախարիսխի այն բոլոր մասերում [խորշերում], որտեղ [տաճարի] կենտրոնական մասի և անկյունային սենյակների խարիսխները հանդիպում են միմյանց, ակնբախ են վերասարքվածության հետքեր»:

«Եռաստիճան որմնախարիսխի ամեն աստիճանըն ունի 32—34 սմ բարձրություն և 24 սմ լայնություն: Արևելյան խորշերի ներսում, անկյունային սենյակների որմնախարիսխի աստիճանների լայնությունը հասնում է ընդամենը 10 սմ-ի»:

«Արևելյան ճակատի հյուսիս-արևելյան խորշում որմնախարսխի վերին աստիճանը հողմահարվել է, այդպիսով ի հայտ է եկել որմնախարսխի ցածրի՝ երկրորդ աստիճանի շարանը՝ խորանի որմնախարսխի քարերը խորանում են անկյունային սենյակի տակ, մինչ անկյունային սենյակի որմնախարսխի քարերը միայն կպչում ու կապված չեն խորանի որմնախարսխի հետ: Զվարթի հիմնական որմնախարիսխը կապված է ուղղանկյուն քարերից: Հյուսիս-արևելյան և մյուս խորշերի քարերի պատահական ձևը ցույց է տալիս, որ Զվարթում անկյունային սենյակների որմնախարիսխները կից կառուցվել են հետագայում»:

Տաճարի «պատերը խորանային մասերում լավ են պահպանվել, մինչ անկյունային սենյակներում՝ հողմահարվել են (նկ. 41): Խորաններում գործադրվել է առավել կայուն՝ կարմրագույն երանգով ավազաքար, մինչ անկյունային սենյակներում՝ մոխրադեղնագույն, տեղ-տեղ կանաչավուն ավազաքար»: «Հյուսիս-արևմտյան անկյունային սենյակի արևմտակողմի պատը շարելիս այլ՝ հողմնահարվող հանքաքար գործադրելու պատճառով, ամբողջապես քայքայվել է ժամանակի և մթնոլորտային ազդեցությունից»:

«Այն տեղերում, որտեղ անկյունային սենյակների պատերը միանում են կենտրոնական մասի պատերին, խորանների որոշ քարեր իրենց տեղից հանվել են»:

«Հարավային ճակատի հարավ-արևմտյան խորշում խորանի թափված երեսապատման տեղերում հորիզոնական լիցքից բացի, առկա է նաև ուղղաձիգ լիցք: Ըստ երևույթի վերաշինելիս հին պատի բացված մասը ստացել է նոր երեսապատում, որից և առաջացել է ուղղաձիգ կար: Հին լիցքը նոր լիցքից տարբերվում է նաև շաղախի կազմով ու լցանյութով»:

«Հարավային և հյուսիսային ճակատներում [անկյունային սենյակների կցումով առաջացած խորշերին կանոնավոր եզրագծեր ապահովելու կապակցությամբ—Տ. Մ.] խորանները դրսից լրիվ վերափոխված են»:

«Արևելյան ճակատի վրա անկյունային սենյակների քիվերը ընդհատվում են խորանի արտաքին նիստերին չհասած՝ այդ տեղերում առաջացել են ճեղքեր...»: «Նմանօրինակ երևույթներ են դիտվում հարավային և հյուսիսային ճակատների վրա: Քիվերը խորշերի վերևով անցնելիս կտրում են խորշերի թաղածածկի եզրակամարի վերին մասերը...»:

Հյուսիսային և հարավային ճակատների «խորշերի թաղերը խորանի պատի վրա սկսվել են կես քարից, ...մինչ նույն թաղերը անկյունային սենյակների պատերի վրա սկսվել են հերթական շարքից»:

«Տեխնիկական և գեղարվեստական վերլուծությունը ցույց է տալիս, որ կամարաղեղի առաջին և վերջին քարերը (արևելյան ճակատի խորշերի ներսում—Տ. Մ.) դրված են հետագայում, դրանք այլ նկարվածքի են ու պատրաստված են այլ տեսակի քարից»[137]:

«Զվարթի կոնստրուկտիվ բոլոր առանձնահատկությունները բերում են այն եզրահանգման, որ անկյունային սենյակները տաճարի կենտրոնական մասին կցվել են հետո»[138]:

Ն. Տոկարսկին գրում է. «Մցխեթի խաչի եկեղեցին... սկզբնապես մտածված և իրականացված էր առանց անկյունային սենյակների, վերջիններս կցվել են հետագայում... այն իր արտաքին հորինվածքով մեծ նմանություն ուներ Մաստարայի եկեղեցու հետ: Շենքը լրացնելիս ճարտարապետի առաջ դրված է եղել նոր մասերը հնի հետ կապելու հարցը՝ դրա համար նա անմիջապես քիվի տակ կամարներ է նետում նոր սենյակների և [մինչ այդ կառուցված] խորանների միջև, ճակատների վրա ստանալով ինչ-որ անկանոն խորշի նման մի բան»[139]:

Ա. Վ. Կուլնեցովը գրում է. «Քառաթև հատակագծի անկյունները լցված են ոչ մեծ քառակուսի սենյակներով: Կան հաստատող տվյալներ, որ անկյունները կից կառուցվել են հետագայում՝ 640 թվականին: Առանց անկյունային սենյակների հատակագիծը կլինենար առավել ավարտուն մաքուր քառակոնխի համակենտրոն համակարգի ամփոփ

ձև, ինչպես այդ ավելի վաղ Ծուամթայի եկեղեցում է»[140]:

Ա. Լ. Յակոբսոնը գրում է. «Ջվարին ավարտված էր 606—610 թթ., սակայն նորագույն հետազոտողի կարծիքով սկզբնապես չուներ անկյունային սենյակներ, որպիսիք ավելացվել են VII դարի 40-ական թթ.»[141]:

Հետաքրքիր է, որ մինչև այժմ փորձ չի արվել վերակազմական գծագրերով ցույց տալ սկզբնապես կառուցված՝ ավանդատուներ չունեցող տաճարի հավանական պատկերը: Սույն աշխատության մեջ բերված երկու հատակագծերը և երկու ճակատները այդ ուղղությամբ արված առաջին փորձերն են (գծ. 85, 86, 89, 90):

Վերևում, Մ. Չիխկվաձեի աշխատությունից բերված՝ տաճարը երկու հերթում կառուցված լինելու վերաբերյալ իրականությանը համապատասխանող փաստերը հնարավոր է լրացնել նաև այլ երևույթներով. այսպես օրինակ, $^{3}/_{4}$ խորշերի և անկյունային սենյակների միջև դռների բացվածքները վուրկ են սկզբնականը լինելու նշաններից: **Հարավ-արևելյան, հարավ-արևմտյան և հյուսիս-արևմտյան անկյուններում սկզբնապես գոյություն ունեցող պատերը փորվել են ու փորվածքներում նոր շարվածքով ստեղծվել են մուտքեր:** Հյուսիս-արևելյան անկյունում այլ վիճակ գոյություն ունի. այստեղ անվնաս են և՛ սենյակի մուտքը, և՛ տրոմպն ու որմնամույթերը: Հետազոտությամբ եզրակացվում է, որ գմբեթի արևելյան կեսի կործանումով խիստ վնասված են եղել արևելակողմի երկու մեծ տրոմպները, որմնամույթերն ու կից սենյակի մուտքը, որ մյուս երեքի նման երբեմնի բացված է եղել նույնպես հետագայում: Ու երբ ձեռնամուխ են եղել տաճարի, այդ թվում և գմբեթի վերականգնմանը, նախապես վերականգնել են վնասված որմնամույթերը, տրոմպներն ու կից սենյակի մուտքը: Անկյունային սենյակների մուտքերի այդ կերպ լինելը ինքնին բավական է որոշակի եզրակացության համար. **այդ դռները բացվել են անկյունային սենյակները գոյություն ունեցող տաճարին կցելու ժամանակներում:**

Այս առումով մի առանձին հետաքրքրություն է ներկայացնում «ոմն» Տեմետիայի վիմական արձանագրությունը տաճարի հարավ-արևմտյան սենյակի ներսում, հարավից բացվող դռան միակտոր բարավորի վրա, որը կարդացվում է. «Աստծո ողորմածությամբ, և օգնությամբ Խաչի, ես, Քրիստոսի սպասուհի Տեմետիաս շինությունն այս կառուցեցի իմ հոգու հիշատակին կանանց երկրպագության համար»[142]:

Այս արձանագրությունը պետք է որ ըստ ամենայնի արժեքավորվեր, որպես **շինարարական արձանագրություն:** Տաճարի բոլոր, այդ թվում և Խաչի պատվանդանի վրայի ու այլ կոթողների արձանագրությունները նախորդի բնույթը չունեն և որոշակի ոչինչ չեն ասում, թե ովքեր են տաճարի կառուցողները, դրանցում լոկ դիմումներ են, ուղղված բարձրյալին կամ այլ սրբերի, սրա կամ նրա կյանքը երկարելու կամ հիշատակը պահելու համար:

«Ջվարիի տիպի հուշարձաններ» գրքի հեղինակի մեկնաբանությամբ՝ Տեմետիայի արձանագրությունը վերաբերում է լոկ այն սենյակի կառուցմանը, որտեղ գտնվում է արձանագրությունը: Սակայն արձանագրության բնագրում որոշակիորեն սենյակ չի հիշվում, այլ՝ շինություն, հետևաբար հնարավոր է, որ այն վերաբերում է ողջ տաճարին: Այսպես է մեկնաբանվել դեռևս տասնամյակներ առաջ: Օրինակ, Ե. Թաղաիշվիլին գրում է. «**Այս արձանագրությունը արդարացնում է այն տեղեկությունը, որ իբր Ջվարին հնում եղել է կանանց վանք**»[143]: Մոտավորապես նույնն է ասում նաև Ա. Նատրոևը: Ե. Թաղաիշվիլու (ինչպես և Ա. Նատրոևի) մեկնաբանության տրամաբանությունը նույնպես բերում է այն մտքին, որ իրոք, **արձանագրությունը վերաբերում է ողջ տաճարին**, և ոչ հարավ-արևմտյան անկյունային սենյակին: Այստեղից էլ ստացվում է, որ արձանագրություն գրողը՝ ինքը՝ **Տեմետիան հանդիսանում է ողջ տաճարի կառուցողը:** Այսպես լինելու դեպքում Տեմետիան չէր կարող անհայտ անձնավորություն լինել: Նրա մասին Ե. Թաղաիշվիլին գրում է. «Հայտնի չէ, թե ով է արձանագրությունում հիշատակվող Տեմետիան, սակայն նրան չի կարելի նույնացնել Կղարջքի Մերիյի վանքի սպասուհու, Գրիգոր Խանձթեցու (759—861 թթ.) գործակցուհու հետ»[144]: Իսկ թե ինչու չի կարելի նույնացնել, Թաղաիշվիլին չի պատճառաբանում, լոկ հիշեցնում է «համենայն դեպս արձանագրությունը հնագրական առումով լիովին համընկնում է Ջվարիի մնացած արձանագրություններին»: Բայց այդ խանգարո՞ւմ է, որ Մցխեթայի Խաչի եկեղեցու կառու-

ցողը եղած լինի VIII—IX դարերի եկեղեցական գործիչը, ամենևին: Այդ լրկ նշանակում է, որ ոչ միայն հարավ-արևմտյան սենյակն է կառուցվել նրա կողմից այդ ժամանակներում, այլ ամբողջ եկեղեցին: Թերևս այստեղ էլ հիշենք, որ Աթեն եկեղեցում Դ. Բաքրաձեի հայտնաբերած ամենահին արձանագրությունը վերաբերում է այդ նույն՝ Բագրատ առաջինի ժամանակներին՝ 853 թվականին: Ի. Ջավախովը (Ջավախաշվիլին) ուղղակի ասում է, թե 853 թվականին Աթենի նախկին բազիլիկ տաճարը արդեն վերակառուցված էր և ուներ խաչաձև հատակագիծ: Աթեն տաճարի կառուցումը Ջավախովի և մյուսների կողմից VII դար տեղափոխելու միակ հիմքը նրա ճարտարապետական վերլուծությունն է, նրա և Ջվարիի որոշ ձևերի ընդհանրությունը: Այդ նույն պարագան կարող է ունենալ և հակադարձ ուժ՝ որ Ջվարին ևս կառուցվել է ընդհանուր ձևեր ունեցող Աթեն տաճարի կառուցման ժամանակներում, VIII դարի երկրորդ, կամ IX դարի առաջին կեսի ընթացքում, Տեմետիայի գործունեության տարիներին: Ինչ վերաբերում է քրոնիկների, պատմիչների հաղորդումներին, այն մասին, թե Գուարամը (Գուրգենը), նրա որդին՝ Ստեփանոսը, կամ Ադրներսեհը, նրա որդին՝ Քոբուլը Ջվարի եկեղեցու կառուցողներն են, հնարավոր է, որ դրանց հիմքը եղած լինի երկրի այդ ղեկավարների առկա քանդակները եկեղեցու պատերի վրա: Բայց քանդակների գոյությունը դեռ չի նշանակում, որ նրանք էլ տաճարի կառուցողներն են, այդպիսի եզրակացության համար ոչ մի ռեալ հիմք չկա, արձանագրություններում էլ՝ ոչ մի խոսք:

Ոչինչ չէր խանգարի, որ Տեմետիան, իր ժամանակ արդեն սրբերի շարքն անցած երկրի նախկին ղեկավարների հիշատակը հավերժացնելու միտումով, նրանց քանդակները դներ տաճարի ճակատներին:

Այս եզրակացությունն ունի կզալի հավանականություն նաև այն առումով, որ Գրիգոր Խանձթեցու բոլոր գործակիցները այդ ժամանակներում զբաղվում էին եկեղեցաշինությամբ՝ առավելապես արաբական արշավանքներից վնասված տաճարների նորոգումներով, վերականգնում դրանցում ընդհատված եկեղեցական գործունեությունը, այնպես, ինչպես նույն Խանձթեցու գործակից Սաբանը նորոգեց Իշխանի վնասված տաճարը և վերականգնեց «երանելի Ներսեսի» ամբիոնը՝ թեմի գործունեությունը Իշխանում:

Խանձթեցու գործակցուհի Տեմետիան չէր կարող բացառություն կազմել, մինչ նրա անվան հետ կապված մի այլ տաճարի վերականգնում կամ կառուցում պատմությամբ չի հիշվում, բացի Ջվարիից (համաձայն հիշյալ արձանագրության), որը և, ըստ երևույթին, նրա հիշատակը պահպանող միակ հուշարձանն է:

Վերջին հաշվով պետք է անուշադիր չլինել, որ «ջվարի» բառը վրացերեն նշանակում է «խաչ», և որպես անուն Վրաստանում շատ տարածում ուներ, շատ խաչեր են դրվել տարբեր տեղերում, նաև եկեղեցիներ, որոնք այժմ կրում են «Ջվարի» անունը. արդ դրանցից միայն մեկն է Մցխեթի Ջվարին:

Ինչ իմանանք, քրոնիկների «Ջվարին» որ մեկի մասին է, ո՞ր խաչին է վերաբերում, կամ ո՞ր եկեղեցուն: Օրինակ, համաձայն այդ աղբյուրների՝ Գուարամը հիմնադրել է ոչ թե Խաչի եկեղեցի, այլ՝ խաչ: Հետո միայն, այն էլ XI դարի պատմիչները հավաստել են, թե այդ վերաբերում է Մցխեթայի խաչին, այն էլ՝ Խաչի եկեղեցուն և, նույնիսկ, թե պատերը բարձրացրել է մինչև «գոտկատեղ» և այլն:

Միանգամայն տեղին է Պ. Մ. Մուրադյանի հարցը, թե «...այդ ո՞ր Խաչի եկեղեցու մասին է խոսքը՝ Ֆ. Ժորդանիան նշում է, թե Ստեփանոս առաջինը կառուցել է նաև Քոբիից ոչ հեռու՝ Արագվայի Խաչ սարի Խաչի եկեղեցին (Ջվարին), որ Պլ. Իոսելիանին տեսել է այդ հուշարձանը արձանագրությամբ «Պատրիկ Ստեփանոս» և այլն[145]:

**Ահա այսպիսի պարագաներում միանգամայն բնական է Տեմետիայի շինարարական վիմական արձանագրության հիման վրա Ջվարիի կառուցումը վերագրել եկեղեցիներ կառուցող, հայտնի Գրիգոր Խանձթեցու գործակից Տեմետիային, ժամանակը՝ VIII դարի երկրորդ, կամ թերևս IX դարի առաջին կեսը:** Հիշենք, որ այս ժամանակներում էր, որ այս տիպի տաճարներ էին կառուցվում առանց ավանդատների, երբեմն միայն արևելյան մեկ կամ երկու ավանդատներով: Այդպիսին էլ եղել է Ջվարին սկզբնապես:

Հակառակ ողջ վերոհիշյալի, Տեմետիայի արձանագրությունը կարող է վերաբերվել միայն ու միայն հարավ-արևմտյան սենյակին, և այդ լրկ

այն դեպքում, եթե ռեալ լինի այդ սենյակի հետագա կցումը տաճարի խաչաձև կենտրոնին: Անկյունային սենյակների և խաչաձև կենտրոնի միաժամանակ կառուցված լինելու դեպքում, այդ արձանագրության վերագրումը միայն հարավ-արևմտյան սենյակին, ակներև անտրամաբանական կլիներ: Եթե Տեմեստիան կառուցմանը բերած իր դրամական մասնակցության համար հնարավորություն է ստացել թողնել նման արձանագրություն, ապա տաճարի մյուս մասերը, առավել ևս՝ նրա հիմնական մասը ֆինանսավորողը տաճարի մյուս հատվածներում, նաև կենտրոնական մասում կթողներ ավելի ընդարձակ և նույնիսկ որոշակի ասված շինարարական արձանագրություն, մի՛ բան, որը սակայն իրականում չկա: Դեռ ավելին, երբ ողջ շինության պատվիրատուն, ինչպես ընդունված է կարծել, երկրի ղեկավարն է, էլ ինչպե՞ս հատուկ վիմական արձանագրությամբ նրա մի անկյան պատվիրատու լինելու իրավունքը կթողնվեր մի անձնավորության, որի մասին ժամանակի և այսօրվա պատմիչներն ու պատմաբանները ոչինչ չգիտեն: Տաճարում առկա բոլոր, այդ թվում և Տեմեստիայի արձանագրությունների հնագիտական համընկնումը, ինչպես հավաստում է Ե. Թաղաիշվիլին, իրերի դրության մեջ ոչինչ չի փոխում. չէ որ սովորաբար գրելաձևը նորանում կամ լուրջ ձևափոխություններ է կրում ավելի երկար ժամանակահատվածներում. տասնամյակներն այստեղ դեր չեն խաղում:

Այսպիսով, եթե համաձայնելու լինենք այն տեսության հետ, ըստ որի Տեմեստիայի արձանագրությունը վերաբերում է լոկ հարավ-արևմտյան սենյակին, միաժամանակ Մ. Ա. Չիխիվաձեի տաճարի հետազոտության արդյունքներն ընդունենք որպես ճշմարտություն[146], կարող ենք վերջնականապես և հաստատապես պարզված համարել, որ **Ջվարիի սկզբնապես կառուցված շինությունը սահմանափակվել է կենտրոնական խաչաձևով, իսկ անկյունային չորս սենյակները տաճարին կից կառուցվել են հետո, Տեմեստիայի օրոք՝ VIII դարի երկրորդ, կամ IX դարի առաջին կեսի ընթացքում:**

Սույն աշխատության Ավանին վերաբերող բաժնից պարզ դարձավ, որ Ջվարին իր տեսակի մեջ չէր կարող առաջինը լինել, քանի որ տվյալ տիպի հուշարձանների բնորոշ կողմ հանդիսացող տաճարի անկյուններում առկա $^{3}/_{4}$ խորշերը սկզբնապես ստեղծվել են, որպես կապ և անցում տաճարի կենտրոնի և անկյունային մատուռների կամ ավանդատների միջև: Ջվարիի առաջին հերթի կառուցման ժամանակ անկյունային սենյակներ չեն եղել, սակայն $^{3}/_{4}$ խորշեր եղել են: Եվ եթե տիպը սկզբնավորող հուշարձաններում այդ $^{3}/_{4}$ խորշերը ունեցել են ուտիլիտար (գործնական), իսկ Ջվարիում՝ դեկորատիվ նշանակություն, հետևում է, որ **Ջվարիի սկզբնական հորինվածքը առաջինը չէ, այլ արգասիք է նախորդների պարզեցման՝ ավանդատներից հրաժարվելու ձևով:**

Անկյունային սենյակները Ջվարիում ոչ կլոր են, ինչպես Ավանում, ոչ քառակուսի կամ ուղղանկյուն քառանկյունի, ինչպես Հռիփսիմեում է, Գառնահովտում կամ Շուամթայում: Այստեղ քառակուսու չորս կողերի վրա կամարակապ խորշերի կիրառմամբ ստեղծված խաչաձև է: Այդ ձևի առաջանալը ոմանց կողմից կապվում է Խաչի Փոքր եկեղեցու ներքին ձևերի հետ: Խաչի Փոքր եկեղեցում ներքին տարածությունը ձգված է արևելք-արևմուտք առանցքով, արևելակողմում առկա է կիսաբոլորակ խորան ու վգալի չափերի նախախորան, ինչպես և նույն չափի արևմտակողմի թաղածածկ թև:

Ջվարիի անկյունային սենյակները ավելի մոտ են Բագավանի ու Մրենի ավանդատներին:

Ջվարի և Մրեն տաճարներում առկա են քանդակների որոշակի ընդհանրություններ, մեր այժմյան դիտարկումները հավաստում են նրանց նաև ավանդատների հատակաձևերի ընդհանրությունը:

## ԵՌԱՆԿՅՈՒՆԻ ԽՈՐՇԵՐԻ ՄԱՍԻՆ

Եռանկյունի կամ սեղանաձև հիմքով խորշեր, այն ձևով, ինչ ձևով այդպիսիք հասկացվում կամ ընդունվում են, Ջվարիում չկան: Ջվարիի խորշերը առաջացել են տաճարի կենտրոնական խաչաձևին անկյունային սենյակների կցումով: Արևելակողմի սենյակների արևելյան պատերը իրենց չափերով արևելյան խորանին մոտենալով՝ կծածկեին խորանի թեք նիստերի վրա բացված պատուհանները, իսկ եթե այդ պատերը ետ քաշվեին, սենյակների չափերը կփոքրանային: Ճարտարապետը պատերի հանդիպման տեղում դրսից ետ տարել, բարակացրել, ներսից հաստացրել է սենյակների այդ պատերը, դրանով էլ կարողացել է չծածկել

արևելյան խորանի երեք պատուհաններից երկու կողայինները և նրանց վերևում գտնվող քանդակները: Այդ հանգույցի վերնամասում առաջացող անկանոն կոտրտվածությունից խուսափելու համար, ճարտարապետը սենյակի պատից կամար է նետել խորանի կողային թեք նիստին, վերևից սահմանափակելով ստեղծված ոչ մեծ խորության խորշը, որի կամարաքարի վրա էլ, հապիվ կես քար ընդմիջելով, նստել է անկյունային մասի քիվը, դրա վրա էլ խորանի նիստերը պսակող քիվը: Զվարթի այս հանգույցը խորշի համար ակներև հարմար չէ, այստեղ մեծ թանձրությամբ պատ չկա, որ բավարար խորությամբ խորշ ստացվի: Արևմտյան ճակատում առկա նույնպիսի հանգույցում խորշ չկա և պատերն էլ միանգամայն կանոնավոր են: Արևմտյան ճակատում խորշ չլինելը հետազոտողները բացատրում են նրանով, որ այդ ճակատը դիտվում է հեռվից՝ Մցխեթ բնակավայրից, որ այն չէր ընկալվի: Ո՞չ, ճիշտ հակառակը: Այժմ այդ նույն տեղից դիտելիս, տաճարը երևում է ընդհանուր եզրագծերով միայն, մինչդեռ այստեղ խորշեր լինելու դեպքում ցանկացած հեռավորությունից, մեծ մակերեսներով լույս ու ստվերի շնորհիվ, տաճարը կընկալվեր իր ծավալային որոշակի կայմությամբ: Ինչ խոսք, այսքանը նրա կառուցող ճարտարապետը գիտեցել է, սակայն խորշ չի արել, որովհետև տաճարի այդ մասերում հոծ պատեր չկան, որ այդպիսիք թեթևացնելու նպատակով արևելյանի նմանողությամբ խորշեր արվեին: Խորշեր չեն արվել, որովհետև արևմտյան խորանում մեկ պատուհան է, կողային նիստերի վրա պատուհաններ, ինչպես և քանդակներ չկան և, հետևաբար, պատերի հանդիպման հանգույցները չթուլացնելու շահերից ելնելով նորմալ պատերը չեն բարակացվել ու անհարկի խորշեր չեն ստեղծվել:

Արտաքին խորշեր ունեցող տաճարներում այդ խորշերի կիսակոնաձև կամարակապ ծածկից վերև պատ է շարունակվում: Նման պատ Զվարթի արևելյան ճակատի խորշերի վերևում չկա, լինելու համար հարկ կլիներ խորշի ծածկը երկու-երեք շարքի չափով ցած բերել: Այդպիսի հնարավորություն չի եղել. **չէ որ այդ ծածկակամարները կառուցելիս, տաճարի արևելյան խորանը գոյություն ուներ և այդ խորանի թեք նիստերի վրա էլ արդեն ամրացված էին Դեմետրեի ու Ադրներսեհի հարթաքանդակները**[147]**: Այս հանգամանքն ինքնին ցույց է տալիս, որ անկյունային սենյակները խորաններից հետո են կառուցվել:** Դեռ ավելին, եթե կառուցողը ցանկանար իսկական խորշեր ստեղծել, նա անկյունային սենյակների արևելյան պատերը ավելի արևելք կշարժեր, կամարակապ ծածկն էլ ողջ լիակատարությամբ իր տակ կառներ, անձրևներից ու հողմահարումից կպահպաներ հիշյալ քանդակները: Այժմ այդ քանդակները կիսով չափ են միայն ծածկի տակ: Այդ նա չի արել, չէր էլ կարող անել, քանի որ խորշի եզրակամարը կկտրեր, վեր կբարձրանար անկյունային սենյակի թեք քիվից:

Բոլորովին նույն հանգամանքներում էլ առաջացել են Զվարթի հյուսիսային և հարավային ճակատների ուղղանկյուն հիմքով խորշերը: Գոյություն ունեցող ամեն կույգ խորանների միջև տեղավորվել են ուղղանկյուն հատակագծով անկյունային սենյակներ: Եվ որպեսզի այդ նոր սենյակների հարավային և հյուսիսային ճակատների վրա զգալի չափով դուրս եկող ինքնուրույն՝ սեփական սիմետրիկ առանցքով պատերը ինչ-որ չափով կապված լինեն տաճարի ընդհանուր օրգանիզմին, կառուցողը սենյակների պատերից կամարաթաղեր է նետել դեպի խորանների պատերը, որոնք սակայն թեքադիր նիստեր էին ու անհարմար երկու առումով՝ մեկ, որ խորշի երկու կողմերը ստացվում էին տարբեր՝ սենյակների կողմից ուղիղ, խորանի կողմից՝ թեք և, ապա կամարաթաղերի հենարանները թեք նիստի վրա պիտի ստացվեին անկանոն, դժվար իրագործելի: Այստեղ էլ կառուցողը որոշում է խորանների թեք նիստերը պատերի բարակացման հաշվին մասամբ վերակառուցել, այնպես որ խորշերը խորանների կողմից ևս ստանային ուղիղ կողեր: Ու թեև այս նրան հաջողվում է, այնուամենայնիվ նրանց հետագայում վերակառուցված լինելու դրոշմը առ այսօր առկա է հուշարձանի վրա: Այստեղ կամարաթաղերը իրենց երկու հենարաններում նստել են տարբեր բարձրությունների վրա, ինչի մասին հիշում է նաև Մ. Չխիկվաձեն, ապա այդ կամարաթաղերի ստեղծումով ծածկվել կամ փչացվել են հին պատի վրա եղած քանդակներ, արձանագրություններ, իսկ վերևից ճակատի քիվը նստել է կամարաքարերի վրա, մասամբ կտրելով՝ իջեցնելով այդ կամարաքարերի նորմալ բարձրությունը:

Եթե ճարտարապետը փորձեր այդ նույն տե-

ղերում ստեղծել սեղանաձև հիմքով խորշեր, ընդունված ձևով, այնպես, ինչպես դրանք կան այլ հուշարձաններում, կարող էր, անշուշտ, քանի որ հնարավորություն ուներ անկյունային սենյակների խորաններին ուղղված անկյուններում ստեղծել թեք հարթություններ, որոնք, խորանների թեք նիստերի հետ կառաջացնեին սեղանաձև հիմքով խորշեր, այդ դեպքում չէին վերակառուցվի խորանների թեք նիստերի ներքնամասերը, որ այժմ վերնամասի համեմատությամբ փոքր են և թուլացնում են խորանների արտաքին ամբողջական տպավորությունը, ինչպես և անկյունային սենյակները սեղանաձև հիմքով խորշերով ավելի օրգանապես կկապվեին խորաններին և ճակատների այնքան մասնատվածության փոխարեն կստացվեին առավել ամբողջական ու միասնական:

Ճարտարապետը նման գործողության չի դիմել, այդ անելու հնարավորությունից զուրկ լինելու պատճառով: Չէ որ այդ դեպքում նա ստիպված կլիներ նոր սենյակների պատերը կենտրոնական խորանարդի հարավային և հյուսիսային պատերին կցելու տեղում բարակացնել, քարերը սուր անկյունով հպել հին պատին: Նման պարագաներում այդ սուր տաշված քարերը ոչ միայն շուտ էլ կհողմահարվեին, այլև կառուցումը դեռ չավարտած, վերի շարքերի ճնշման տակ կճաքճքվեին, կթափվեին իրենց տեղերից: **Ճարտարապետի հարկադրյալ կառուցելակերպը ևս հավաստում է տաճարի երկու հերթում կազմավորված լինելը:**

Անկյունային սենյակների ավելացումով ստեղծված խորշերի, թերևս պարզունակ և ո՛չ օրգանական լինելը նկատի առնելով Ի. Ստրժիգովսկին գրել է, թե «...Մցխեթում չեն իմացել ինչպես գործադրել այդ մոտիվը»: Մինչդեռ, ինչպես տեսանք, տաճարի սկզբնական խաչաձև հորինվածքում խորշի նույնիսկ տեղ ու անհրաժեշտություն չկար:

Կան հետազոտողներ էլ, որոնք փորձում են Ջվարիի արևելյան ճակատի խորշերը համարել եռանկյունի կամ սեղանաձև հիմքով խորշերի նախօրինակներ, որոնց և պարտական են հետագայում կառուցված հուշարձաններում զանազան տարբերակներով ստեղծված, կատարյալ համաչափություններ և ճոխ մանրամասներ ունեցող խորշերը: Այս մասին «Ծրոմիի» էջերում կարդում ենք. «Հենց Ջվարիի տիպի շինությունների ճակատներում մենք ունենք խորշեր, որոնք օգնում են շինության կանգվածներն ամբողջացնելուն, նրանք իրենց իսկ ձևերով կգալապես նախապատրաստում են Ծրոմի տաճարի խորշերի ձևերը»[148]: Ջվարիի արևելյան ճակատի խորշերի գոյացումից կարելի է առանց միջանկյալ աստիճանների հանգել Ծրոմիի արևելյան ճակատի ձևավորմանը»: «Ծրոմիի» հեղինակը եռանկյունի հիմքով խորշերի սկզբնավորումը փորձում է վերագրել նույնիսկ Դրանդայի արևելյան ճակատին[149], որտեղ խորանների արտաքին կիսաթմբկաձև՝ եռանիստ և հնգանիստ ծավալները միմյանց հանդիպելով, հատակագծում ընտեղծում են լոկ ներս ընկած անկյուններ, սակայն վերից ծածկ չունեն և իրականում խորշեր չեն:

Ինչպես վերևում տեսանք, **Ջվարիի խորշերը աներկբա հետևանք են տաճարը երկու հերթում կազմավորելու կապակցությամբ որոշ հանգույցների ռացիոնալ լուծման, գործողություն, որը տեղի է ունեցել անհամեմատ ուշ և, հետևաբար, այդպիսիք չէին կարող ավելի վաղ ստեղծված տաճարներում առկա խորշերի համար դառնալ նախօրինակ:**

Եթե նույնիսկ Ջվարիի կենտրոնն ու անկյունային սենյակները միաժամանակ կառուցված լինեին, արևելյան ճակատի վրա խորշեր ենթադրելը ոչ միայն չէր հիմնավորվի կոնստրուկտիվ առումով, այլև պիտի համարվեր անտրամաբանական: **Չէ որ եռանկյունի կամ սեղանաձև հիմքով խորշերը սկզբունքորեն առաջացել են խորանների և ավանդատների հարևանությամբ ստացված մեծ կանգվածների թեթևացման, ինչպես և տաճարի ներքին խաչաձև կազմությունը արտաքին ուղղանկյուն հորինվածքում որոշակիորեն արտահայտելու միտումով:** Մինչ Ջվարիում լրացուցիչ միջոցառման որևէ անհրաժեշտություն չի եղել ներքինն արտաքինում արտահայտելու կամ մեծ կանգվածները թեթևացնելու համար, քանի որ առանց այն էլ այնտեղ չկան պատի հոծ կանգվածներ, իսկ խորանները ճակատային պատի ընդհանուր հարթությունից, ավելի քան որոշակի դուրս են գալիս բազմանիստ ծավալով և դրանով իսկ խսպառ վերացնում ամենայն պահանջ ու առիթ եռանկյունի կամ սեղանաձև խորշի առաջացման համար:

**Եռանկյունի խորշերը ի սկզբանե ի հայտ են եկել այն տաճարների ճակատներում, որոնց ներքին բովանդակությունն ամբողջովին ամփոփված է եղել արտաքին ուղղանկյուն եզրագծերով պատերի մեջ:** Այս դեպքում միայն խորանի և ավան-

դատների միջև առաջանում են մեծ պանգվածներ, երբ ներքին խաչաձևը փակվում է արտաքին խորանարդաձև հորինվածքում, հետևաբար այս դեպքում էլ ստեղծվում է անհրաժեշտություն խորշերի առաջացման:

Ահա այս էլ մեր տաճարներից շատերի բնորոշ կողմն է: Այստեղից հետևում է, որ դրանցում էլ պիտի ի հայտ եկած լինեն եռանկյունի խորշերը: Ուղղանկյուն պարագծեր ունեն Ավանը, Արամուսն ու Պտղնին, Հռիփսիմեն ու Գառնահովիտը (Ադիաման), Թարգմանչացն ու Սիսիանը և այլ տաճարներ: Եթե ավելի վաղ կառուցված Ավանում և Արամուսում այդ խորշերը չկան, ապա մյուսներում կան. նախորդների թերի կողմերից խուսափելու ձգտումով էլ, ինչպես երևում է, պայմանավորված է եղել հաջորդներում այդ խորշերի առաջանալը:

Այս հարցի վերաբերյալ նույն «Ջրոմի» աշխատության մեջ կարդում ենք՝ «Ջրոմիի ճարտարապետն առաջինն էր, որ ստեղծեց և օգտագործեց Վրաստանում մոտիվն այդ իր լրիվությամբ՝ ինչպես կոնստրուկտիվ, այնպես էլ գեղարվեստական-դեկորատիվ առումով»[150]:

Որ եռանկյուն հիմքով խորշերի առաջին օգտագործողը Վրաստանում Ջրոմիի կառուցողն էր, ընդունելի է, բայց որ նա է այդ մոտիվի առաջին ստեղծողը, ընդհանրապես, ապա՝ կուրկ է որևէ հիմքից[151]:

Ջրոմի տաճարի կառուցումը հիմնվելով հուշարձանի, փաստորեն անվերծանելի արձանագրության վրա, վերագրվում է Ադրներսեհի որդի Ստեփանոս-Քոբուլին[152]: Հիշյալ արձանագրությունը Տ. Ժորդանիան ընթերցում է. «Սուրբ եկեղեցի, օրհնիր իպատոս Ստեփանոսին»:

Նախ, Ադրներսեհի որդի Քոբուլի իպատոսի կոչում ունենալը պատմությամբ հայտնի չէ, և ապա, Վրաստանը կառավարող այդ դինաստիայում, ավելի ուշ էլի Ստեփանոսներ են եղել (նույնիսկ մի այլ Ադրներսեհի որդի), հետևաբար հնարավոր է Ջրոմիի կառուցումը նույն կերպ վերագրել հաջորդ սերունդների Ստեփանոսներից որևէ մեկին: Իսկ եթե, այնուամենայնիվ, արձանագրության Ստեփանոսը Քոբուլին վերագրելու հետ համաձայնենք, ապա այս դեպքում էլ պետք է նկատի ունենալ հետևյալը: Վրաստանի պատմությունից հայտնի է, որ Մցխեթի Ջվարին կառուցում էր Ադրներսեհը, իսկ մահից (634 կամ 638) հետո տաճարի կառուցումը շարունակում, ապա ավարտում է որդին՝ Քոբուլը: Եվ եթե նա էլ կառուցած լինի Ջրոմին, ապա շինարարությունը ամենաշատը պիտի սկսած լինի երեսնականի վերջերում ու ավարտած քառասնականի վերջերում (նա ապրել է մինչև 663 թվականը): Այստեղից ստացվում է, որ Վրաստանում եռանկյունի հիմքով խորշերի գործածությունը սկսվել է ոչ թե 626 թվականին, այլ դարի կեսից ոչ վաղ:

Ջրոմիի արևելյան ճակատի միջին՝ հարթ խորշի դեկորատիվ ձևավորման փաստը, ինչպես և ավանդատների արևելյան պատերի ներքին եռախորշ լուծումները ևս հուշում են տաճարի համեմատաբար ոչ այդքան վաղ կառուցման մասին:

Մինչ այդ Հայաստանում արդեն կառուցված էին ճակատներում եռանկյունի և սեղանաձև հիմքով խորշեր ունեցող Պտղնին, Գառնահովիտը, Հռիփսիմեն (սա համաձայն ցարդ պահպանված երկու վիմական արձանագրությունների և պատմիչների թողած տվյալների, կառուցվել է 618 թվականին) և այդ տիպի մեր մի շարք հուշարձաններ:

«Ջրոմի» աշխատության մեջ (էջ 52) խոսելով եռանկյունի խորշերի հարցի շուրջը, շարունակ զուգահեռներ անցկացնելով այդ մոտիվի կիրառությանը Վրաստանում և Հայաստանում, հեղինակը գրում է. «Վրացական շինություններում որ ժամանակ էլ վերցնելու լինենք, ճակատային խորշերը երբեք չեն կորցնում իրենց կոնստրուկտիվ հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը, այդ երբեք չի անտեսվում: Ուրիշ խոսքերով ասած,— շարունակում է նա,— ճարտարապետական-տեխնիկական կողմը միշտ պահպանում է իր կենսունակությունը. այլ է վիճակը հայկական ճարտարապետության մեջ, որտեղ այդ մոտիվը հաճախ անցնում է մի քանի, նույնիսկ բոլոր չորս ճակատները և, ըստ այնմ, առանց որևէ կոնստրուկտիվ արդարացման, երբեմն, նույնիսկ հակասելով կառուցվածքի տեկտոնիկային»:

Վերևում ասվեց, որ Ջվարիի արևելյան ճակատի սեղանաձև հիմքով խորշերը օրգանական չեն և առաջացել են տաճարի երկու հերթում կազմավորվելու ընթացքում: Պետք է նկատել, որ իրավիճակը գրեթե նույնն է նաև Աթենի տաճարում: Անկախ նրանից, որ այստեղ արևելյան ճակատի խորշերը ստեղծվել են տաճարի սկզբնական կառուցման ընթացքում, ելնելով խորանի երկու կո-

ղային նիստերի վրա լուսամուտներ ունենալու անհրաժեշտությունից, այնուամենայնիվ այդ խորշերը թողնում են արհեստականորեն ստեղծված լինելու տպավորություն: Բանն այն է, որ այդ հանգույցներում պատի մեծ թանձրություն չկա, խորանն առանց այն էլ արտաքինում արտահայտված է: Հետևում է, որ այստեղ խորշեր ունենալու անհրաժեշտություն չի եղել: Ճարտարապետը դրան կարող էր հասնել եթե ավանդատներում սահմանափակվեր հատակաձևի քառակուսով, արևելյան պատերը եռ քաշեր այնքան, որ դրանք խորանի կողային լուսամուտները չծածկեին և խորշերի գոյությունը կբացառվեր:

Մարտվիլիում նույնպես արևելյան և արևմտյան խորշերը չեն պատճառաբանված և ստեղծված են ձևականորեն՝ խորշեր ունենալու ցանկությամբ միայն: Արևելյան, նաև արևմտյան ճակատի այդ խորշերում նույնիսկ պատուհաններ չեն բացվում, դրանք ստացել են մաքուր դեկորատիվ բնույթ, այն աստիճան, որ կարող էին նույնիսկ չլինել և դրանից ոչինչ չէր վնասվի:

Մարտվիլիի այդ ճակատում գլխավորը պատի հարթությունից դուրս եկած մեծ բարձրության հնգանիստ խորաններն են, իսկ խորշերը դարձել են ենթակա. նրանք ցածր են և մակերեսային: Դեռ ավելին, իրենց գոյությամբ այդ խորշերը խախտել են խորանների պատերի ներսի և դրսի հարթությունների վուգահեռությունը, վերջինիս երկու նիստերի սահմաններում այդ պատերը կիսով չափ բարակացվել են:

Մարտվիլիում այդ խորշերը իրենց չափերով խախտում են ճակատի մասշտաբային միասնությունը:

Այնպիսի լիահունչ, հզոր խորշեր, ինչպիսիք կան VII դարի մեր հուշարձաններում, ասենք՝ Հռիփսիմեի բոլոր չորս ճակատներում, մենք տեսնում ենք Ծրոմիի արևելյան ճակատում միայն: Եվ սիա այդ երկու, կգալի խորության խորշերը պետք է որ ճշմարտապես բացահայտեին արևելյան խորանի առկայությունը պատի ետևում: Սակայն դեկորատիվ նպատակներով այդ երկու խորշերը միացնող՝ նրանց միջև ստեղծված հարթ խորշը խախտում է սպասվելիք հանգստությունը ճակատում. փխրուն, քանդակածածկ շրջանակով է փոխարինվում միջնամասի բնական պատը, դրանով իսկ վերևում առկա մեծ մակերեսով պատը թողնըվում է, ըստ էության, առանց հենարանի՝ օդում կախված: Ճակատի երկու թևերի հարթությունները խորշերով հեռացված լինելով միջնամասից, ակներև ոչ մի նպաստ չեն բերում հուշարձանի այս կարևոր դրվագի «հյուսված» տեկտոնիկան կայունացնելու գործում:

Այդ նույն ճարտարապետության հուշարձաններում (որոշ բացառություններով) արևելյան ճակատներում միայն եռանկյունի կամ սեղանաձև հիմքով խորշեր կան, որոնց թեքադիր կողերի վրա էլ բացվում են խորանի երկու կողային լուսամուտները:

Կան հուշարձաններ, որոնց մյուս ճակատներում առկա են պատերի հոծ պանգվածներ, սակայն այդպիսիք խորշերով չեն թեթևացված:

Ի վերջո պարզվում է, որ եռանկյունի կամ սեղանաձև հիմքով խորշերը ճարտարապետության տվյալ շրջանակներում հետագա զարգացման՝ նորաձևության, բազմապանության փուլեր չեն անցել ու չեն նվաճել գործադրության այնպիսի լայն ասպարեզ, ինչպիսին իրականում առկա է հայ ճարտարապետության շրջանակներում:

Անկարևոր չէ նկատել, որ եռանկյունի խորշերի մոտիվը VII դարի սկզբներից մինչև ուշ միջնադար, հայ ճարտարապետության շրջանակներում, որպես սիրված ձև չի դադարել գործադրվելուց: Մեր օրերում անգամ այն իր յուրօրինակ կիրառությունն է գտնում հասարակական և որոշ ունիկալ կառուցվածքների ճակատներում: Ըստ որում, այդ մոտիվը, եթե սկզբնապես առաջացավ, որպես կոնստրուկտիվ և արվեստի պահանջներից բխող տարր, ապա հետագայում, նոր ժամանակների պահանջների համեմատ, իր այդ հիմնական նշանակությանը զուգընթաց, ձեռք բերեց նաև դեկորատիվ, ձևավորող հատկություն:

Եռանկյուն խորշերի մոտիվը, որ ճարտարապետական այլ շրջանակներում համեմատաբար փոքր տարածում գտավ՝ բացի արևելյան ճակատից, մյուս ճակատներում գրեթե չերևաց, իր ծննդավայրում ունեցավ զարգացման փուլեր, ստանալով նոր համաչափություններ, դեկորատիվ նոր զարդաձևեր և կիրառման ավելի լայն ոլորտ՝ միշտ մնալով պատճառաբանված, ձևերում պարզ՝ առանց պաճուճանքի: Այդ խորշերը տեղ գտան տաճարների ոչ միայն արևելյան, այլև մյուս, հաճախ բոլոր՝ չորս ճակատներում, դեռ ավելին՝ գմբեթաթմբուկներում,

իսկ մեր ժամանակներում՝ քաղաքային շինարարության մեջ և այլուր: Եռանկյունի խորշերի հայրենիքը Հայաստանն է, կիրառման անսահմանափակ ասպարեզը՝ մեր ճարտարապետական հուշարձանները:

Ծրոմիի խորշերի խորքում առկա են մեկական կույգ ոչ մեծ տրամագծի կլոր սյուներ, որոնց խոյակներից վերև խորանում են կիսաշրջան հիմքով ու գմբեթարդ ծածկով միջին բարձրության խորշեր: Այդտեղ, ըստ երևույթին երբեմնի դրված են եղել քարակերտ խաչեր, կամ կլոր քանդակներ:

Խորշերն իրենցով հարստացնող այդ նույն մոտիվը առկա է Գառնահովտում, Արթիկում (Կաթողիկե), Թալինում (մեծ եկեղեցի), Իրինդում և Եղվարդում: Սրանք իրենց տեղերում օրգանական են և արևոտ օրերին հնչում են ամբողջ ուժով. պատկերն ավելի լիահնչուն է ներկայանում, երբ փորձում ենք պատկերացնել այդ խորշերում դրված քարակերտ կամ մարմարակերտ խաչերը, գուցե և տաճարի մանրակերտը (մանրաքանդակը) համեմատաբար բաց գույնի նյութից:

Իրինդում և Եղվարդում, ի տարբերություն մյուսների, սյուները կենտ են, Եղվարդում դրանք շարունակվում են բարձրանալ, մտնելով խորշի վերնամասի կոնաձև մարմնի մեջ:

Հետաքրքիր է, որ Գառնահովտում, Թալինում, Արթիկում, ինչպես և Ծրոմիում այդ դեկորատիվ սյուներով մշակված դրվագը բոլորովին նույնն է, նրանցից մի քանիսում՝ Թալինում և Ծրոմիում նույնիսկ մանրամասները նույնն են, թվում է, թե դրանք նույն վարպետի գործեր են, նույն հաջողությամբ իրենց մասնակցությունն են բերում ճակատների ընդհանուր ճարտարապետական պատկերի ամբողջացմանը: Սակայն «Ծրոմի» աշխատության հեղինակը տվյալ մոտիվի գործադրումը Ծրոմիում շատ բարձր գնահատելով, նույն դրվագները, լուծված նույն հաջողությամբ Գառնահովտում ու Թալինում ոչ միայն արժեքազրկում, այլև համարում է ընդօրինակություն. «հայկական օրինակներում,— գրում է նա,— այդ մոտիվի կիրառությունը այնքան է պատահական և կորված շինության օրգանիզմից և նրա դեկորատիվ սիստեմից, որ այն անկասկած պետք է ճանաչել որպես ընդօրինակում»[153]:

Հետազոտողի այս երկու հետևություններն էլ ակներևորեն սխալ են, քանի որ թե Գառնահովիտը (Ադիաման), թե մեր մի շարք տաճարներ VII դարի սկզբների գործեր են, կառուցվել են Ծրոմիից վաղ և հետևաբար եթե կա ընդօրինակման հարց, ապա այդ չի վերաբերում ոչ Գառնահովտին և ոչ էլ վերևում բերված հուշարձաններից որևէ մեկին:

## ՏԱՃԱՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զվարիի խաչաձև կենտրոնը ստեղծում են գմբեթատակ քառակուսու չորս կողերին առընթեր խորանները և վերջիններիս միջև՝ անկյունագծային դասավորության $^3/_4$ խորշերը: Նախախորաններ ունեն արևելյան և արևմտյան, չունեն՝ հյուսիսային և հարավային թևերը[154]: Այդ նախախորանների չափով էլ տաճարի ներքին խաչաձևը երկար է արևելք-արևմուտք և կարճ՝ հյուսիս-հարավ ուղղությամբ (գծ. 84, 85):

Ի տարբերություն Ավանի, Զվարիում խորաններն ունեն, մոտավորապես հավասար լայնություն. անկախ դրանից, տարբեր թռիչքներ ունեն գմբեթակիր կամարները՝ արևելյանն ու արևմտյանը ավելի մեծ են, քան հյուսիսայինն ու հարավայինը: Նախախորանների առկայությամբ պայմանավորված գմբեթակիր կամարների թռիչքների հիշյալ տարբերությունների հետևանքով էլ գմբեթատակ քառակուսին, մոտ 0,3 մետրի չափով ձգված է հյուսիս-հարավ առանցքով և $^3/_4$ խորշերի բացվածքները թեքված են դեպի տաճարի արևելք-արևմուտք առանցքը:

Արևելյան և արևմտյան խորանների երկու կողմերի խաչաձև հատակագծով չորս սենյակները տաճարի կենտրոնի հետ հաղորդակցվում են $^3/_4$ խորշերի մեջ բացվող դռներով:

Տաճարի մուտքերը երկուսն են՝ հարավից և հյուսիսից, մի դուռ էլ բացվում է հարավ-արևմտյան անկյունային սենյակի հարավային պատի վրա: Արևելյան խորանում առկա է երեք պատուհան, արևմտյան և հարավային խորաններում՝ մեկական պատուհան, հյուսիսային խորանում պատուհան չկա: Մեկական պատուհան ունեն անկյունային սենյակներից հյուսիս-արևելյանը (արևելակողմից), հյուսիս-արևմտյանը (արևմտակողմից) և հարավ-արևմտյանը՝ (հարավակողմից), երկու պատուհան՝ հարավ-արևելյանը (արևելքից և հարավից):

Այս նույն տիպի հուշարձանների թվում կան

այնպիսիները, որոնց բոլոր խորաններն ունեն նույն լայնությունը. դրանք են՝ Զվարթն, Աթենը, Մարտվիլին, Փոքր Շուամթան, Կվետերան Վրաստանում, Արամուսը, Թարգմանչացը, Սիսիանը Հայաստանում: Կան, որ հյուսիսային և հարավային խորանները փոքր են, արևելյանն ու արևմտյանը՝ մեծ. դրանք են Մեծ Շուամթան Վրաստանում, Ավանը, Հռիփսիմեն, Գառնահովիտը, Վարագավանքը Հայաստանում: Կան նաև, որ հյուսիսային և հարավային խորանները մեծ են, արևելյանն ու արևմտյանը, երբեմն միայն արևելյանը (Քոլատակ) փոքր, ըստ որում, այս վերջիններում կողային խորանների լայնքն ունեն արևելյան և արևմտյան նախախորանները, այս դեպքում միայն հավասար թռիչքներ ունեն գմբեթակիր կամարները, այդպես է Զորադիր, Ախթամար և Քոլատակ հայկական հուշարձաններում:

Տաճարների ներքին տարածության կազմակերպման ու ձևավորման առումով այս երեք դեպքերից որն է նախընտրելի, որին տալ նախապատվությունը: «Զվարթի տիպի հուշարձաններ» գրքի հեղինակը միակ ճիշտն ու նախընտրելին համարում է Զվարթի դեպքը, այսինքն՝ երբ խորաններն ունեն հավասար լայնություններ: Պարզ չէ, սակայն, թե ինչու նա միաժամանակ չի նշում որ այդ դեպքում էլ գմբեթատակ տարածության ամբողջական ընկալման համար առավել նշանակալից գմբեթակիր կամարները, որ գտնվում են առաջին պլանի վրա, մնում են անհավասար: Ըստ նրա, վատ են այն հուշարձանները, որոնցում կողային խորանները փոքր են արևելյանից և արևմտյանից (Ավան, Հռիփսիմե, Գառնահովիտ և այլն): Նկատենք, որ նա խորանների լայնությունների անհավասար լինելու պատճառը համարում է տաճարի ներքին խաչաձևը արտաքին ուղղանկյան մեջ ընդգրկելը: Բայց թե ինչու խիստ դրականորեն է արտահայտվում Մեծ Շուամթայի վերաբերյալ, որտեղ կողային խորանները նույնպես փոքր են քան մյուսները, մինչ ներքին խաչաձևը չի ամփոփված արտաքին ուղղանկյան մեջ, հեղինակի կողմից մնում է չբացատրված:

Բանն այն է, որ խորանների չափային փոխհարաբերությունները տաճարի ներսում կախում ունեն նաև այլ հանգամանքներից: Այդ առումով ըստ երևույթին առաջնային նշանակություն պետք է ունենա գլխավոր մուտքի տեղը տաճարում: Հասկանալի է, որ դրանով նկատի է առնվում թե հավատացյալը տաճար մտնելով սկզբից ներ ինչպես է ընկալում ներքին ընդհանուր տարածությունը և, ապա, նրա մասերն առանձին-առանձին:

Մի բան է տաճար մտնել արևմտյան կողմից, երբ միանգամից իր ամբողջությամբ հառնում է արևելակողմում գտնվող գլխավոր խորանը՝ սեղանը, իսկ կողայիններն ուրվագծվում են կրճատումով, մնալով տեսադաշտի երկու թևերում (ինչպես որ Ավանում է, Հռիփսիմեում, Գառնահովտում), մի այլ բան է տաճար մտնել հարավային կամ հյուսիսային կողմից, երբ դիմացը ոչ թե գլխավոր խորանն է, արարողության հիմնական վայրը, այլ իր դիրքով ու նշանակությամբ արևելյանին զիջող կողային խորանը, երբ սեղանը տեսնելու համար նախ պետք է առաջանալ, ապա դառնալ դեպի արևելք (ինչպես որ Զվարթում է):

Առանց երկմտանքի պետք է եզրակացնել ու նախընտրելի համարել այն դեպքը, երբ տաճարի այս կամ այն մասի, տվյալ դեպքում՝ խորանի չափային մեծությունը համապատասխանում է նշանակությանը (ճշտորեն այդպես է Ավանում, Հռիփսիմեում, Գառնահովտում):

Խորանների ոչ միայն լայնությունը, այլև խորությունը այս տիպի առաջնային տաճարներում միահավասար չէ. արևելյան և արևմտյան թևերը նախախորանների շնորհիվ կողային թևերի համեմատությամբ ունեն ավելի մեծ խորություն: Այլ կերպ էլ չէր կարող լինել. արևմտյան մուտքից մինչև արևելյան սեղանը եղած տարածության վրա կիսաբոլորաձև խորանը տեսողական առումով պետք է կարճվեր: Եվ որպեսզի նման իրավիճակ չստեղծվեր, որպեսզի ամեն ինչ երևար բնական ձևով ու չափով, կառուցողները կանխապես այդ խորաններին համապատասխանորեն տվել են մեծ խորություն: Ճիշտը սա է:

Հավասար լայնության և խորության խորանները հատկանշական են հավասարաթև և աստղաձև տաճարներին: Միայն այստեղ է, որ նրանց հավասարությունը արդարացվում է, այդ դեպքում մուտքերն էլ կենտրոնից գտնվում են հավասար հեռավորության վրա (Զվարթնոց, Բանակ, Նինոծմինդա, բազմախորան և այդ տիպի այլ տաճարներ):

Հավասար խորաններ ունեցող Զվարթում և Աթենում դրությունը այս կամ այն չափով փրկվում է նրանով, որ արևելյան և արևմտյան թևերում

նախախորանները այնուամենայնիվ ավելի լայն բացվածքներ ունեն, քան կողային խորանները:

Այսպիսով, եզրակացվում է, որ **քննարկվող տիպի տաճարներում խորանների չափային հավասարությունը ոչ մի դեպքում և ոչ մի չափով չի կարող դիտվել որպես առավելություն:**

Զվարթնոցում գմբեթատակ քառակուսին ստեղծող հյուսիսային ու հարավային խորաններից և արևելյան ու արևմտյան նախախորաններից առաջին երկուսը փոքր թռիչքներ և փոքր բարձրություն ունեն, երկրորդ երկուսը՝ մեծ թռիչքներ և մեծ բարձրություն: Այլ, սակայն կգալի չափեր ունեն անկյունագծային չորս մեծ, ինչպես և 16 միջակ ու 32 փոքր տրոմպները: Այս պայմաններում խոսք չի կարող լինել տաճարի ներքին կենտրոնական տարածությունն ստեղծող կոմպոնենտների կատարյալ ներդաշնակության գոյության վերաբերյալ:

Ավան-Հռիփսիմեի տիպի տաճարներում այս առումով դրությունը համեմատաբար բարվոք է, քանի որ անկյունագծային տրոմպները իրենց չափերով մեծ չեն և պբաղեցնում են ամեն կույգ որմնամույթերի վերնամասը միայն, չեն հենում գըմբեթակիր կամարներին և ներքին ներդաշնակության ստեղծման հարցում պահպանում են իրենց բովանդակային նշանակությանը համեմատ համեստ մասնակցություն:

Զվարթի ներքին հատակաձևը ստեղծվել է այն նույն սխեմայի հիման վրա, որը գործադրվել է մինչ այդ կառուցված տաճարներում, լիակատար մշակվածության հասել Հռիփսիմեում (գծ. 57): Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ Հռիփսիմեի և Զվարթի ներքին հատակաձևերի միջև, ինչպես նշվեց նախորդ էջերում, գրեթե տարբերություն չկա (գծ. 25): Եվ այդ այն պատճառով, որ երբ կայսր Հերակլը Հայաստանի վրայով մտնում էր Վրաստան, Արդներսեհին նշանակում երկրի կառավարիչ ու, թերևս, միջոցներ տրամադրում Խաչի եկեղեցին կառուցելու, միաժամանակ ցանկություն հայտնում, որ այն լինի այնպիսին, ինչպիսին է կառուցումը նոր ավարտած ու շքեղ կահավորված, իր էսթետիկ ներգործմամբ այդ ժամանակ չգերազանցված Հռիփսիմե տաճարը: Այսպիսի պարագաներում միայն սա՝ Խաչի եկեղեցին Հռիփսիմեի հետ կունենար նույն հատակաձևը, նույն չափերով[155]:

Ներքին հատակաձևերի նույնության առկայությունը, իհարկե, իսպառ չի բացառում որոշակի տարբերությունների գոյությունը տվյալ հուշարձանների արտաքին պլաստիկ լուծումներում, սակայն դրանք իրենց բնույթով և նշանակության չափով այնպիսին են, որպիսի տարբերությունները բնականաբար առկա են նաև ամեն մի ճարտարապետության տարբեր դպրոցներ բնորոշող երևույթներում, և ոչ ավելի:

Նշանակալից է այն փաստը, որ այս երկու հուշարձանները՝ Հռիփսիմեն ու Զվարթին, նաև Աթենը իրենց հատակաձևերով միմյանց շատ ավելի մոտ են, քան նրանցից ամեն մեկը, առանձին վերցրած ճարտարապետական իր շրջանակներում գտնվող մյուս տաճարների հետ:

Զվարթում ևս (գծ. 87) շինության հորինվածքի հիմքում ընդունված է գմբեթի ներքին տրամագիծը: Սրանում արևելյան և արևմտյան խորանների կենտրոնները գտնվում են երկար առանցքի այն կետերում, որտեղ հանդիպում են գմբեթատակ քառակուսու հյուսիսային և հարավային կողերի միջնակետերից տաճարի երկար առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերը: Հյուսիսային և հարավային խորանների կենտրոնները գտնվում են կարճ առանցքի այն կետերում, որտեղ հանդիպում են արևելյան և արևմտյան խորանների գագաթներից տաճարի երկար առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերը: Հյուսիսային և հարավային խորանների գագաթները գտնվում են կարճ առանցքի այն կետերում, որտեղ հանդիպում են գմբեթատակ քառակուսու արևելյան և արևմտյան կողերի միջնակետերից, այդ նույն առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերը: Տաճարի բոլոր խորանների թռիչքները հավասար են գմբեթի ներքին տրամագծի կես մեծությանը: Անկյունների 3/4 խորշերի կենտրոնները գտնվում են տաճարի կենտրոնից 2/3 շառավղաչափ հեռու, կարճ առանցքի վրա գտնվող կետերից, այդ նույն առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերի ու գմբեթատակ քառակուսու հյուսիսային և հարավային կողերի հանդիպման տեղում:

Զվարթի արտաքին լայնությունը հավասար է գմբեթի ներքին տրամագծի կրկնակի չափին, երկարությունը՝ մոտ 2,5 տրամագծաչափին և այլն:

## ԳՄԲԵԹԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Վաղ միջնադարի հուշարձաններում գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթային բոլորակին իրականացվում էր տրոմպների օգնությամբ: Սկզբներում, երբ ստեղծվում էին փոքր տրամագծով գմբեթներ, անցումը գմբեթի բոլորակին իրականացվում էր մեկ շարք, միջին տրամագծաչափի գմբեթներում՝ երկու շարք, մեծ տրամագծով գմբեթներում՝ երեք շարք կամ եռաստիճան տրոմպների համակարգով: Վերջին երկուսի դեպքերում գմբեթաթմբուկի նիստերի քանակը արտաքուստ և ներքուստ տարբեր է լինում՝ 8 և 16, 8 և 32, 16 և 32 և այլն:

Զվարթնոց գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթի բոլորակին իրականացված է տրոմպների եռաստիճան համակարգով: Անկյունային չորս մեծ տրոմպների օգնությամբ քառակուսին փոխարկվում է ութնիստ թմբուկի: Հաջորդ ութ միջին մեծության տրոմպներով ութնիստը փոխարկվում է 16 նիստերի: Վերջին՝ 16 փոքր տրոմպներով 16 նիստ ունեցող թմբուկը փոխարկվում է 32 նիստերով թմբուկի: Այստեղ նիստերից յուրաքանչյուրի լայնքը կազմում է ընդամենը 91 սմ., իսկ նրանց միջև ստացված անկյունը՝ մոտ 169° (168°48′): Այս, շրջագծից գրեթե չտարբերվող բազմանիստ թմբուկի վրա էլ նստում է կիսագնդաձև գմբեթածածկը:

Տեխնիկապես ճշգրիտ, որոշակի կանոնով, կատարման հստակությամբ Զվարթնոցում իրականացված գմբեթային փոխանցման համակարգը մասնագիտական գրականության մեջ դրականորեն գնահատված օրինակներից է (գծ. 88):

Հայկական և վրացական ճարտարապետական շրջանակներում գմբեթային փոխանցման տվյալ համակարգով ոչ քիչ հուշարձաններ կան, որոնցում տարբերությունները միմյանց նկատմամբ մեծ չեն և երբեմն արտահայտվում են տրոմպների շարքերի քանակով:

Զվարթնոցի գմբեթային փոխանցման համակարգի համակողմանի արժեքավորման համար, մի քանի հուշարձաններում իրականացված նույն հանգույցների համադրումը և այդ հիման վրա բացահայտումը այն դրականի և բացասականի, որ առկա է օրինակներից յուրաքանչյուրում առանձին-առանձին, ներկայացնում է որոշակի հետաքրքրություն: Այս առումով իր նշանակությամբ առաջնայինը և, թերևս, ամենահիմնականը այն հարցն է, թե գմբեթային փոխանցման միջոցները, տվյալ դեպքում՝ տրոմպները կառուցվածքի ո՛ր մասում են տեղադրված, ասել է թե՝ ամբողջական համակարգը ի՛նչ սահմաններ է ընդգրկում կամ զբաղեցնում հուշարձանում:

Զվարթնոցում անկյունային չորս մեծ տրոմպները անմիջականորեն հենվում են գմբեթակիր կամարների ուսերին և կիսաշրջանով բարձրանում նրանցից վեր, զբաղեցնում գմբեթաթմբուկի ութնիստ ներքնամասը: Տրոմպների երկրորդ շարքը տեղադրված է պատուհանների կես բարձրության վրա և զբաղեցնում է գմբեթաթմբուկի միջին շերտը: Տրոմպների երրորդ շարքը, որ միակտոր քարերի մեջ փորված 16 կիսաձագարներ են, իրենց վերևում ունեն գմբեթածածկի կիսագունդը, ներքևում՝ պատուհանների բարավորները:

Գմբեթային փոխանցման համակարգը Զվարթնոցում, ինչպես տեսնում ենք, զբաղեցնում է գմբեթաթմբուկի ողջ բարձրությունը՝ գմբեթակիր կամարներից մինչև ծածկի կիսագունդը:

Ակամայից այն տպավորությունն է ստեղծվում, թե այստեղ գմբեթաթմբուկը ստեղծված է հենց նրա համար, որ իր ներսում տեղավորի տրոմպների այդ համակարգը[156]: Եվ իրոք, Զվարթնոցում գմբեթաթմբուկի ներսի հարթությունը այնպես է զբաղեցված (եթե չասենք՝ քրքրված), տարբեր քանակի, տարբեր չափերի մեծաթիվ տրոմպների կիսաձագարներով, որ տեղ չի մնում ներքին հարդարման ընթացքում ճարտարապետական այլ ձևերի գործադրման:

«Զվարթնոցի տիպի հուշարձաններ» գրքի հեղինակը անդրադառնալով Թարգմանչաց վանքին, գրում է. «Այստեղ ամբողջությամբ կրկնվում է Զվարթնոցի փոխանցումը»[157]: Մի քիչ անց կրկնում է. «Հատկանշական է, որ [տաճարի] ներսում կոնստրուկտիվ առումով տրվում է Զվարթնոցի փոխանցման համակարգի միանգամայն ճշգրիտ վերարտադրությունը»[158]:

Համաձայն ռեալ նյութերի (հուշարձանների ընձեռած տվյալների), իրականում Թարգմանչացում և Զվարթնոցում գմբեթային փոխանցումները ոչ միայն նույնություն չեն, այլ զգալիորեն տարբերվում են միմյանցից:

Ինչպես տեսանք, Զվարթնոցում գմբեթային փո-

խանցումը իրականացված է գմբեթաթմբուկի ողջ բարձրությամբ տեղաբաշխված տրոմպների եռաստիճան համակարգով: Մինչ Թարգմանչացում փոխանցումը իրականացված է անկյունային չորս մեծ և չորս փոքր տրոմպների գործադրմամբ, ըստ որում, տրոմպների այդ երկաստիճան համակարգը սահմանափակվում է գմբեթակիր կամարների և գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտու միջև: Իսկ ինչ վերաբերում է գմբեթաթմբուկի ներքին հարթությանը, ապա այն իր ողջ բարձրությամբ ազատ է կոնստրուկտիվ այլ և այլ մասերից, այդ թվում՝ մեծ ու փոքր տրոմպներից: Թմբուկի ներքին հարթությունը Թարգմանչացում բաժանված է 16 կանոնավոր մասերի, որոնցից ութի վրա բացված են լուսամուտներ, մյուս ութի վրա՝ հարթ խորշեր և այդ բոլորը միավորված են պարզ կողադեմ ունեցող կամարաշարով:

Այս պայմաններում եթե որևէ նմանություն կա Զվարթի և Թարգմանչացի միջև, ապա այդ ամբողջությամբ վերաբերում է միայն ու միայն չորս մեծ տրոմպներին, որոնք երկուստեք, իրոք որ ստեղծված են միանման կոնստրուկտիվ տրամաբանված ձևերով:

Թարգմանչացում իրագործված գմբեթային փոխանցման համակարգը (մեծ տրոմպ, փոքր տրոմպ, գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտի), լիովին ապահովում է ինչպես գմբեթատակ քառակուսու փոխակերպվելը գմբեթի բոլորակին, այնպես էլ գմբեթաթմբուկի ներքին հարթության ամբողջապես ազատ լինելը կոնստրուկտիվ մասերից՝ տրոմպներից և դրանց տրամադրվելը ճարտարապետական ձևավորման նպատակներին:

Այս առումով Զվարթնոցում իրագործված գմբեթային փոխանցման համակարգը, որ ցարդ համարվում է ամենակատարյալը, արդյունք է միակողմանի մոտեցման: Այդտեղ իրագործվում էր կոնստրուկտիվ բնույթի մեկ առաջադրանք՝ փոխանցումը քառակուսուց բոլորակին և միայն ու միայն դրան էլ տրամադրվում էր գմբեթաթմբուկի ներքին հարթությունը վարից վեր, ողջ պարագծով, տեղ չթողնելով նույնիսկ անհրաժեշտ քանակով լուսամուտներ բացելու համար:

Հնարավոր չէ աննկատ թողնել, որ հանգուցային հուշարձաններում գմբեթային փոխանցումները իրականացվել են այնպես, ինչպես Թարգմանչացում: Այս տեսակետից հետաքրքիր է, որ փոխանցման տրոմպային համակարգին փոխարինած առագաստային փոխանցման համակարգի դեպքում գըմբեթաթմբուկի ներքին հարթությունը վերծ կոնստրուկտիվ մասերից, ամբողջությամբ տրամադըրվում է ճարտարապետական ձևավորման, պատկերազարդման և նման այլ նպատակների:

Այս հիման վրա հնարավոր է դառնում հանգել այն եզրակացության, որ **Թարգմանչացում իրագործված գմբեթային փոխանցման համակարգը նախընտրելի է:**

Նախորդ էջերում նշվեց, որ Զվարթնոցում գմբեթային փոխանցման համակարգը տեխնիկապես ճշգրիտ է: Այդ նշանակում է, որ անկյունային չորս մեծ տրոմպների գործադրմամբ գմբեթատակ քառակուսին միանգամից փոխարկվում է ութնիստ թմբուկի: Եվ քանի որ Զվարթնոցում գմբեթաթմբուկը կգալի չափեր ունի (տրամագիծը մոտավորապես 9,35 մետր է), անկյունային չորս տրոմպներն էլ ստացվել են կգալի մեծության. նրանցից յուրաքանչյուրի եզրակամարի թռիչքը գրեթե չի զիջում կողային խորանների լայնությանը: Այդ է՛լ ավելի է աչքի ընկնում տրոմպների ավելի շահեկան, առավել բարձր դիրքում գտնվելու պատճառով:

Այստեղ ակնբախ է հակասությունը տաճարի կարևոր հանգույցների բովանդակային նշանակության և այն բացահայտող ձևերի միջև: Տաճարի ներքին տարածությունը իրենցով կազմավորող խորանների ներգործող ուժը տվյալ պայմաններում՝ Զվարթնոցում ակներև տեղի է տալիս, մինչ միայն ու միայն կոնստրուկտիվ նշանակության տրոմպները, որոնց ցցուն ի հայտ գալը, որ արվեստի գործերում որոշ առումով անհրաժեշտ էլ չէ, այստեղ բավականաչափ ազդեցիկ են՝ չափերով՝ մեծ, դիրքով՝ բարձր:

**Ճարտարապետական երկում հաջողակ լուծված կոնստրուկցիան դեռևս մեծ նվաճում չէ, եթե այն ստեղծվելիս մոռացության է մատնվել կերտվածքի գեղագիտական կողմը:** Ահա այս տեսանկյունից էլ, ինչպես մենք կարծում ենք, պետք է գնահատել Զվարթնոցում առկա գմբեթային փոխանցման համակարգը:

Զվարթնոցում իրականացված գմբեթային փոխանցման եռաստիճան տրոմպային համակարգը միանգամից չի ստեղծվել, այդ գործն ապրել է աստիճանական կարգացում: Սկզբում փոխանցման այդ ձևը փորձել են փոքր չափերի տաճարներում, այ-

նուհետև այն կատարելագործել, ձեռք բերած փորձի ու արդյունքի հիման վրա իրականացրել մեծ կառույցներում:

Հայաստանի ու Վրաստանի այդ տիպի տաճարներն իրարից շատ էլ հեռու չեն գտնվում. նրանցից մեկում ձեռք բերած նվաճումը գործադրություն էր գտնում մյուսում:

Այս հիման վրա հնարավոր է մտածել, որ գմբեթային փոխանցման համակարգը կառուցող վարպետների մասնագիտացած խումբը Ջվարի է մեկնել Թարգմանչաց վանքը կառուցելուց հետո, իր հետ առնելով այստեղ հաջողությամբ իրականացված տրոմպային փոխանցման փորձը: Հիշենք, որ Ջվարիում և Թարգմանչացում անկյունային փոխանցման մեծ՝ հատած կոնաձև տրոմպները հար և նման են միմյանց[159]:

Ջվարին հիմնավորապես հետազոտող Մ. Ա. Չիխկվաձեն վարպետների նշանների տեսակների հիման վրա բացահայտել է շինարարության ընթացքում տեղի ունեցած դադարի-ընդմիջման փաստը. նա բառացիորեն գրում է. «Շինարարության ընթացքում [քարգործ] վարպետների մի տիպի նշաններին հաջորդում են մյուսները...»[160]: «Եվ իսկապես, մինչև խորանների թաղերի ավարտը պատահում են վարպետների մի տեսքի նշաններ, իսկ հետո հայտնվում են այլ նշաններ»[161]:

«Ինչպես երևում է Ջվարիի շինարարության կեսում եղել է բավական երկար ընդմիջում, երբ վարպետներին ազատել են աշխատանքից, իսկ հետագայում, շինարարությունը վերսկսելիս ընդունել են նոր վարպետներ...»[162]:

Ջվարիի կառուցման ընթացքում տեղի ունեցած հիշյալ ընդմիջման փաստը խիստ ուշագրավ է:

Հուշարձանների գեղարվեստական և ճարտարագիտական ուսումնասիրության ընթացքում որոշակիորեն ուրվագծվում է տեղի ունեցող զարգացումը ոչ միայն նոր հատակաձևերի, նոր կոմպոզիցիաների, նոր տիպերի առաջացման, այլև որոշ կարևոր հանգույցների լուծման կատարելագործման հարցում: Կենտրոնագմբեթ հուշարձաններում ամենաէական հանգույցներից է գմբեթատակ քառակուսուց գմբեթի բոլորակին անցնելու հատվածը, որ ընդգրկում է մույթերի խոյակներից վերև, մինչև գմբեթի կիսագնդաձև ծածկը, երբեմն՝ գմբեթաթըմբուկի հիմքը: Այդ հանգույցի կոնստրուկտիվ լուծումից է կախված եղել նոր ծածկաձևերի առաջացումը, ներքին մեծ տարածություններ ունենալու հնարավորությունը և այլն:

Խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցիներում VI—VII դարերում և երբեմն ավելի ուշ, գմբեթային փոխանցումը իրականացվում էր տրոմպային համակարգի օգնությամբ: Ավանում տրոմպների փոխարեն գործադրվել է անցման եռակամար սիստեմը և առագաստը: Հռիփսիմեում՝ տրոմպային համակարգը և, մասամբ, շատ փոքր չափով՝ առագաստը, Թարգմանչացում, Գառնահովտում, Սիսիանում և այդ տիպի որոշ հուշարձաններում տրոմպների համակարգը բազմաթիվ տարբերակներով: Ջվարիում գմբեթային փոխանցումը իրագործվել է տրոմպային եռաստիճան համակարգով:

Հետաքրքիր է, որ Ջվարիի շինարարությունում տեղի ունեցած ընդմիջումը մեր օրերում երբեմն ստանում է տարբեր մեկնաբանություններ՝ երկրի անհանգիստ վիճակ, պատերազմական գործողություններ և այլն: Ադրներսեհի մահվանից (634 թ.) հետո, նրան փոխարինող որդին՝ Քոբուլը—Ստեփանոս Բ-ն վերսկսեց Խաչի եկեղեցու դադարեցված շինարարությունը: Հնարավոր է ենթադրել, որ նա Փոքր եկեղեցուց մեծ եկեղեցի տեղափոխեց Ստեփանոս Առաջինի և Դեմետրեի քանդակները, ավելացրեց հոր՝ Ադրներսեհի քանդակը (շինարարությունն ավարտելուց հետո, նաև իրենը) և այլն:

Թերևս հավանական պետք է համարել, որ հիշյալ ընդմիջումը կապված է եղել ավելի կառուցողական աշխատանքների բնույթի փոփոխման հետ:

Հատկանշական է, որ այդ ընդմիջումը սկսվել է, երբ կառուցված է եղել տաճարի ներքնամասը, որից հետո պետք է սկսվեր գմբեթային փոխանցման համակարգի կառուցումը, մի աշխատանք, որն իր բնույթով, թերևս ամենաբարդն է և պահանջում է կառուցողական վարպետություն, այն հաշվով, որ ապահովվի հանգույցի կոնստրուկտիվտեկտոնիկ հստակ իրականացումը, առանց ձևերի աղավաղման:

Հայտնի է, որ այդ ժամանակներում գործելիս են եղել քարգործ վարպետների մասնագիտացված խմբեր, որոնք մի շինարարությունից մյուսն էին գնում, ձեռնամուխ լինում իրենց հանձնարարվող այս կամ այն հուշարձանի հատկապես բարդ հանգույցների կառուցմանը:

Ահա այսպես էլ պետք է որ պատահած լինի

Ջվարիի հետ. հիշյալ մասնագիտացված վարպետների խումբը, որ նույն ժամանակներում զբաղված է եղել մի այլ տաճարի կառուցումով, Զվարթ է մեկնել այնտեղ գործը վերջացնելուց հետո միայն, դրանով իսկ շինարարության մեջ առաջացրել այն ընդմիջումը, որի մասին ասվեց վերևում:

* * *

Ջվարի տաճարի կենտրոնական տարածությունը լուսավորվում է խորանների և գմբեթաթմբուկի պատուհաններով. արևելյան խորանն ունի երեք, հարավայինն ու արևմտյանը՝ մեկական պատուհան. հյուսիսային խորանը պատուհան չունի: Գմբեթի պատուհանները չորսն են:Գմբեթային փոխանցման Ջվարիում կիրառված տրոմպային համակարգի պայմաններում հնարավոր չի եղել չորսից ավելի պատուհան ունենալ:

Յոթերորդ դարում կառուցված կարևոր հուշարձաններում պատուհանները, սովորաբար մեծ չափերի են. հակառակ դրան, Ջվարիում այդպիսիք և հատկապես նրա գմբեթում եղածները, անհամեմատ փոքր են. նրանց լայնքը հազիվ 0,7 մետր է (գմբեթում՝ 0,5 մետր), բարձրությունը՝ 2,5 մետր է (գմբեթում՝ 1,5 մետր): Հնարավոր է մտածել, որ գմբեթի այժմյան պատուհանները սկզբնականը չեն:

Լուսամուտների այս քանակը, ակներև, անբավարար է տաճարի ներքին ընդարձակ տարածությունը անհրաժեշտ չափով լուսավորելու համար: Անկյունային սենյակներից երեքը լուսավորվում են մեկական, հարավ-արևելյանը՝ երկու, նույնպես ոչ մեծ չափերի պատուհաններով, նրանցում, սովորաբար կիսախավար է:

## ՏԱՃԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Ջվարիում արտաքին ծավալներն ու ճակատներն իրենց համաչափությամբ ու ձևերով տաճարի յուրօրինակ հատակաձևով պայմանավորված ներքին տարածության և առանձին մասերի ու դրվագների լիակատար արտացոլումն են:

Այստեղ առավել հստակությամբ անդրադարձել են հատակաձևի երկիերթ կապվածորման հետ կապված անխուսափելի երևույթներ, որոնք իրենց կնիքն են դրել տաճարի ամբողջական կերպարի և նրա արժեքավորման վրա, որպես արվեստի գործ:

Այս առումով առաջին իսկ հայացքից անմիջականորեն ընկալվում են ծավալների ընդգծված մասնատվածությունն ու մասշտաբային անհամաչափությունը տաճարի գլխավոր մասերի՝ գմբեթի ու շինության ողջ ներքնամասի միջև:

Տաճարի արտաքին ընդհանուր հորինվածքում որոշակիորեն դրսևորվում են գմբեթն ու կենտրոնական ծավալը, բարձրացած գմբեթատակ քառակուսու վրա, խորանների եռանիստ ծավալները ողջ բարձրությամբ և անկյունային սենյակների ծավալները միաթեք տանիքով: Այս վերջիններս, որ ընդհանուր ֆոնի վրա կցալի ինքնուրույն են ու ամբողջական, իրենց ավարտուն երկաստիճան խարիսխով ու քիվով, պատուհանի և դռան բացվածքներով պայմանավորված սիմետրիայի սեփական առանցքով, տաճարի կենտրոնական մասի և խաչաթևերի հետ իրենց կապերի արհեստականությամբ անհապաղ առաջ են բերում այն նույն կգացումը, որը տիրապետում էր հատակաձևը քննելիս՝ որ այդպիսիք հանդիսանում են երկրորդ հերթի կառուցումներ, ուղղակի կցված նախապես գոյություն ունեցող ավարտված օրգանիզմին:

Ամեն ճակատն առանձին նայելիս նույն տպավորությունն է ստեղծվում. ահավասիկ դրանցից արևելյան ճակատը՝ VII դարի տաճարներից ոչ մեկում անկյունային սենյակների ծավալներն այդ ձևով չեն միանում արտաքուստ նիստերով կապավորված խորանների ծավալներին: Այստեղ միայն խորշերի կոր վերնամասերի ծեփվածքի նմանող չհաջողված անցումը չէ՝ մի ծավալից մյուսը, որ ակնբախ է, այլև միաթեք տանիքի անբնական հանդիպումը խաչաթևի թեքադիր նիստին, որով և բավականաչափ ծածկվում է խաչաթևի վերնամասը, աղճատելով նրա արտահայտիչ ամբողջականությունը:

Սովորաբար անկյունային սենյակների արևելյան (նաև արևմտյան) պատերը խորանի արտաքին պատի հետ կազմում են մի ամբողջություն, իսկ կողային միաթեք տանիքներն էլ վերջանում են բնական կանոնավորությամբ, հանդիպելով միջնամասում բարձրացած խորանի կողային պատին:

Մյուս դեպքում՝ խորանի եռանիստ կամ հնգանիստ ծավալները դուրս են գալիս ճակատոնով ավարտված արևելյան ճակատի ընդհանուր պատից, իսկ անկյունային սենյակները մնում են հիշյալ ընդհանուր պատի ետևում ու որևէ ձևով չեն առնչվում խորանի նիստերի հետ:

Այն, ինչը առկա է Զվարթնում, կարող էր տեղի ունենալ միայն ու միայն այն դեպքում, երբ տաճարի առանձին մասեր ստեղծվում են առանձին-առանձին, տարբեր ժամանակներում:

Իրավիճակը արևմտյան ճակատում նույնն է, ինչ որ արևելյանում է, բացառությամբ խորշերի, որպիսիք այդ ճակատում ընդհանրապես բացակայում են:

Հյուսիսային և հարավային ճակատներում, որոնց լայնությունը 20,5 մետրից չի անցնում, յոթական բաժանում կա, որոնցից երկուսը ճակատի ծայրերում՝ անկյունային սենյակների պատերն են, երեքը՝ ճակատի միջնամասում խորանի, միմյանց նկատմամբ անկյուն կազմող երեք նիստերը. մնացած երկուսը ճակատի երկու ծայրերի և միջնամասի միջև առկա, այդ մասերն իրար կապող, միաժամանակ այդպիսիք միմյանցից բաժանող ուղղանկյուն հիմքով, անմիջականորեն տանիքի տակ ստեղծված կամարակապ վերնամասով խորշերն են:

Հարթությունների ու ծավալների պլաստիկ մասնատվածությամբ բնորոշ Զվարթի տաճարի ներքնամասի և լայնական մեծ չափեր ունեցող ութնիստ գմբեթաթմբուկի անհամաչափ լինելը անառարկելի է:

Այդ երևույթը ավելի քան ընդգծվում է գմբեթի հիմքով անցնող գոտիների առկայությամբ և դիտողական առումով նրա՝ գմբեթի ծավալը ստանում է ավելի սեղմված համաչափություններ, քան իրականում կա:

Հյուսիսակողմից գմբեթի հիմքով անցնող գոտին առանցքային նիստի սահմաններում բացակայում է, դրա շնորհիվ հիշյալ առանցքային նիստը գմբեթատակ ծավալի հյուսիսային պատի հետ կազմում է մի հարթություն, հանդիսանում նրա օրգանական շարունակությունը: Այս պարագաներում Զվարթի գմբեթը ձեռք է բերում նոր համաչափություններ: Աթեն տաճարում այդպես է բոլոր կողմերից, մինչ Զվարթում միայն մեկ՝ հյուսիսակողմից. այդպես չէ արևելյան և հարավային ճակատներում, այդտեղ գոտին չի ընդհատվում, դրանով իսկ գմբեթի ծավալը կտրվում է ստորին մեծ ծավալից, իսկ տաճարի ողջ հորինվածքը տրոհվում մասերի, ու թվում է, թե կենտրոնական մեծ ծավալի շուրջը առկա մյուս ծավալները նույնպես, այդ թվում՝ նույնիսկ խորանները, որպես հետագա հավելումներ, արհեստականորեն բերվել, կպցվել են հիշյալ խոշոր ծավալին:

Ի տարբերություն նախորդ հետազոտողներից ոմանց կարծիքի, հավանական պետք է համարել, որ Զվարթնում ևս գոտի եղել է տաճարի կենտրոնական ծավալի միայն ու միայն չորս անկյուններում, որտեղ պատերը վերջանում են գոտով ու ծածկվում տանիքով, մինչ կենտրոնական մասերում ծավալի պատերը շարունակվում, վեր են ածվում գմբեթաթմբուկի չորս հիմնական նիստերի:

Ճշտորեն այս ձևով էլ նախ ճարտարապետ Ն. Պ. Սևերովը, ապա ճարտարապետ Նիկո Չուբինաշվիլին վերակազմել են համապատասխանաբար՝ Ծրոմիի և Սամշվիլդեի գմբեթները: Դրանք՝ երկուսն էլ վերականգնված են անալոգիայի սկզբունքով և իրենց ուրվագծերով, համաչափությամբ ու ընդհանուր պատկերով համընկնում են ավելի Աթեն, Գայանե և Օձուն տաճարների գմբեթների հետ:

Զվարթի տաճարը, իր հարամասերում առավել համաչափ և ամբողջական պատկերացնելու ներքին ձգտումը տողերիս գրողին շարունակ մղում էր այն գաղափարին, որ սկզբնապես այս հուշարձանը, պսակված է եղել բոլորովին այլ համաչափություններ ունեցող մի այլ գմբեթով, ասենք՝ 12, 16 նիստերով, որի դեպքում մասշտաբային կապը տաճարի վերնամասի և ներքնամասի միջև եղել է անբասիր:

Հայտնի է, որ մենք ունեցել ենք մեծարժեք հուշարձաններ, որոնց գմբեթները նույնպես եղել են ութնիստ. ահա Ավանը, Մաստարան, Օձունը, Մրենը, Գայանեն և շատ ուրիշներ: Սակայն սրանցում տաճարի ամբողջական միամասշտաբայնության նպատակով նոր լուծումներ են գտնվել և գրեթե բոլոր դեպքերում կառուցողներին այդ հաջողվել է: Ավանում գմբեթի նիստերը լայն են եղել, դրան համապատասխան տաճարի ներքնամասը զերծ է եղել որևէ մասնատվածությունից: Մաստարայի գմբեթի նիստերի հանդիպումներում ստեղծվել են փոքր չափերի խորշեր, որոնք պգալապես

թեթևացրել են լայնանիստ գմբեթի ճնշող ապավորությունը ներքնամասի վրա. միաժամանակ ներքնամասի խաչաթևերի առանցքային նիստերին տրվել են չափեր, որոնք համապատասխանել են գմբեթի նիստերի մասշտաբին: Օձունի, Մրենի, Գայանեի ութնիստ գմբեթների տրամագծերը այնպիսիք են, որ յուրաքանչյուր նիստի լայնքը ստացվել է տաճարի մնացած մասերին համապատասխան: Արթիկի մեծ եկեղեցու գմբեթը Զվարթի գմբեթից 3—3,5 մետրով լայն է եղել, սակայն նրա նիստերի քանակը նույնպես մեծ է եղել: Ն. Տոկարսկին սխեմատիկ վերակազմության մեջ ցույց է տվել 12 նիստերով: Թվում է ավելի հավանական նրա 16 նիստերով լինելը. այդ դեպքում այն ավելի կհամապատասխաներ տաճարի ներքնամասի ձևերին, խուլ կամարաշարով ձևավորված խաչաթևերին: Համաձայն Թորամանյանի վերակազմության, 16 նիստ է ունեցել նաև Զվարթնոցի գմբեթը: 16 նիստ ունի այսօրվա Հռիփսիմեի գմբեթը և որ նրա և տաճարի մնացած մասի միջև աղաղակող խորթություն չկա: Տասներկուական նիստեր են ունեցել VII դարի Թալինի Կաթողիկեի, Հառիճի և Սիսիանի Ս. Հովհաննես տաճարների գմբեթները: Ոչ մի հիմք չկա պնդելու, թե VII դարի տաճարներում գմբեթները եղել են ութնիստ, որ իբր 12 և 16 նիստերով գմբեթները ավելի ուշ ժամանակի արգասիք են: Աբխազական Դրանդա տաճարը, որ ոմանց կարծիքով ժամանակակից է Զվարթին, ըստ ճարտարապետ Նորևի կազմած կտրվածքի ունեցել է 16 նիստ: Տվյալ դեպքում կարևոր չէ, որ տաճարը բյուզանդականի օրինակ է սեպանում և գմբեթաթմբուկ չունի, փաստն այն է, որ ծածկի կիսագնդի վրա բացված են 16 լուսամուտներ:

Անկախ VII դարի բազմանիստ գմբեթների օրինակների թվարկման, մի բան սակայն, իրավացիորեն հետ է պահում Զվարթի գմբեթի նիստերի թիվը ութից ավելի ենթադրելու մտքից: Բանն այն է, որ Զվարթի գմբեթը իր ժամանակին կառուցվել է, նկատի չունենալով, որ հետագայում տաճարն ընդարձակվելու է չորս անկյունների ավանդատներով, որ սկզբնապես ստեղծված համակենտրոն, ամփոփ, ամբողջական հորինվածքը մասնատվելու է կցալի կցվածքներով:

Դրան համոզվելու համար բավական է նայել տաճարի սկզբնական տեսքը պատկերող վերակազմության գծագրերին, այդ թվում արևելյան ու հարավային ճակատներին (գծ. 89, 90) և առանց հապաղելու մեր մտապատկերում հառնում է տաճարի բնական խոյանքով մարմնավորված հորինվածքը, որի վրայով նայողի հայացքը անկաշկանդ սահում է վերից վար և ելնում կրկին վեր: Այստեղ գմբեթը[163], որ ստորին մասի տրամաբանական ավարտն է, վստահորեն գլխավորում է ուղղաձիգ առանցքի շուրջը սերտորեն համախմբված անպաճույճ ծավալները: Այս կերտվածքում ամեն ինչ համահնչուն է, փոխնեթակա, միասնական, միամասշտաբ: Հարկ է հավատալ, որ Զվարթին սկզբնապես եղել է այսպիսին:

### ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զվարթին, որ իր տեսակի մեջ լավագույններից է, որ կառուցվել է հմուտ ճարտարապետի և առաջնակարգ վարպետների կողմից, զերծ չէ որոշակի անկանոնություններից: Այստեղ՝ տաճարի ներսում արևելյան նախախորանի մի կողմի լայնքը ավելի է մյուս կողմից: Արևմտյան նախախորանի մի կողմի լայնքն ավելի մեծ է մյուս կողմից: Խորանների լայնության չափերը միմյանցից տարբերվում են մինչև 20 սանտիմետրի չափով: Խորաններում առկա է մի անսպասելի իրավիճակ՝ արևմտյան, հյուսիսային և հարավային խորանները ոչ միայն կանոնավոր կիսաշրջաններ չեն, այլև տաճարի գլխավոր առանցքներից շրջված կամ թեքված են՝ արևմտյանը դեպի հյուսիս, հյուսիսայինը դեպի արևմուտք, հարավայինը դեպի արևելք: 3/4 խորշերից հյուսիս-արևելյանը փոքր, մյուս երեքը համեմատաբար կցալի չափով թեքված են դեպի երկար առանցքը: Այդ խորշերից հարավ-արևմըտյանի տրամագծաչափը մյուսներից փոքր է: Գմբեթակիր ութ որմնամույթներից վեցում անկանոնություններ կան՝ հյուսիս-արևելյան զույգ որմնամույթերի համեմատությամբ մյուսները ետ են կանգնած 5—20 սմ.-ի չափով: Հատակագծային չափերը անկյունային սենյակներում տարբեր են. եթե կենտրոնական քառակուսիների չափերը միմյանց մոտավորապես հավասար են, ապա խաչ ստեղծող կամարների լայնքերը գրեթե ամենուրեք՝ տարբեր: Հյուսիս-արևմտյան սենյակում ոչ միայն դռան

բացվածքն է անկանոն, այլև արևելյան խաչաթևն է ծուռ:

Տաճարի արտաքինում ևս առկա են զգալի անկանոնություններ. օրինակ՝ արևելյան ճակատի սեղանաձև հիմքով խորշերից հյուսիսայինը ծուռ է, նրա ձախ և աջ թեք նիստերը անհավասար են: Այդ նույն խորշերի ներսի պատը ճակատի ընդհանուր պատի նկատմամբ թեք է: Հարավային և հյուսիսային ճակատներում խորշերը տարբեր չափերի են թե լայնքով, թե խորությամբ և թե թեքվածքով ճակատային պատի նկատմամբ: Բոլորից լայն է հարավային ճակատի արևելակողմի խորշը. ճակատային պատի նկատմամբ թեք է նույն ճակատի արևմտյան խորշը: Ճակատային պատից առաջինի ներսի պատը ավելի է ետ դրված քան երկրորդինը: Այդ խորշերի տարբեր լայնքերի հետևանք է հարավային խորանի կողային պատերի տարբեր հաստությունը: Իրավիճակը հյուսիսային ճակատում շատ էլ չի տարբերվում հարավայինից: Այստեղ արևելյան խորշի ներսի պատը թեք է ճակատի պատի նկատմամբ: Խորշերի գծի վրա տարբեր հաստություն ունեն խորանի պատերը: Տարբեր լայնքեր ունեն ամեն զույգ խորանների նաև արտաքին նիստերը և այլն:

Շատ ավելի մեծ տարբերությունների շարքը պետք է դասել տաճարի երկու առանցքների միմյանց ուղղահայաց չլինելը, եթե որպես լայնական առանցք ընդունենք երկու մուտքերի կենտրոնները միացնող գիծը: Կիսաշրջան խորանների կենտրոնները միացնող գիծը լայնական առանցք ընդունելու դեպքում, այն չի համընկնում մուտքերի կենտրոնները միացնող գծին:

Անկյունային սենյակների արտաքին պատերի դրսի հարթությունները, գրեթե բոլոր ճակատներում չեն գտնվում մեկ գծի վրա: Տաճարի առանցքների նկատմամբ նրանք այս կամ այն չափով թեքված են: Այս վերջին հանգամանքը նշան է այն բանի, որ այդ պատերը նշահարվել և կառուցվել են, երբ արդեն կառուցված են եղել խորանները, որոնք և խանգարել են, որ պատերը հիմնադրվեն և բարձրացվեն մեկ ընդհանուր լարով:

Գմբեթատակ քառակուսին չորս մեծ տրոմպների գործադրմամբ գմբեթի սահմաններում փոխանցվել է ութնիստ թմբուկի, որը, սակայն, կանոնավոր չէ, որ արտահայտվում է նիստերի անհավասար լայնքերով: Այս իրավիճակի հետևանք է անշուշտ, որ գմբեթաթմբուկն արտաքուստ ստացվել է անհավասար նիստերով՝ 5,15—5,25 մետր լայնքեր ունեն արևելյան և արևմտյան նիստերը, 4,30-ական մետր՝ հարավային և հյուսիսային նիստերը, 4,65-ական մետր՝ հարավ-արևելյան և հարավ-արևմտյան նիստերը, 4,85-ական մետր՝ հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան նիստերը:

Այստեղ ամենաանսպասելին անկյունագծային ուղղության նիստերի հյուսիսային և հարավային խորաններին համապատասխանող նիստերից ավելի լայն լինելն է: Այդ հետևանք է ոչ միայն մեծ տրոմպների խորանների համեմատությամբ անմասշտաբ մեծ չափերի, այլև նրանց զգալի թեքվածության մեծ առանցքի նկատմամբ, այս վերջինս էլ իր հերթին հետևանք է խորանների, ավելի ճիշտ՝ գմբեթակիր կամարների տարբեր թռիչքների և բարձրության:

Այն բազմաթիվ անկանոնություններն ու որոշակի շեղումները կանոնիկ ձևերից, որ առկա են Ջվարիում և որպիսիք մասամբ թվարկվեցին այստեղ, որքան էլ նկատելի են և արժանի ափսոսանքի, մեր գնահատմամբ ճակատագրական չեն ու առանձնակի բացասաբար չեն անդրադառնում տաճարի ամբողջական, դրականորեն ընկալվող պատկերի վրա ու չեն կաշկանդում նրա գեղագիտական ներգործման ուժն ու հմայքը:

Մոտավորապես նույնպիսի վիճակ գոյություն ունի Վրաստանի, ինչպես և Հայաստանի միջնադարի շատ հուշարձաններում, և այնուամենայնիվ այդ հուշարձանները մնում են որպես գեղարվեստի բարձրագույն արժեքներ[164]:

### ԱԹԵՆԻ ՍԻՈՆ

Աթենը քննարկվող տիպի տաճարների շարքում ունի իր ուրույն տեղը և որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

Տաճարը կառուցված է Գորի քաղաքից 10 կիլոմետրի վրա, Աթեն բնակավայրից ոչ հեռու, Թանա գետակի ձախափնյա բարձրադիր բլրալանջին, բարձր հենապատերով ստեղծած հարթակի վրա:

Գեղատեսիլ գետահովտի վերևներում բարձր, անտառապատ լեռներ են, կլիման համեմատաբար մեղմ է՝ բարենպաստ բնակության համար:

Կարելի է ենթադրել, որ տաճարը իր կառուցման ժամանակներում շրջապատված է եղել գետակի երկու կողմերում տարածված մի մեծ բնակավայրի



Գծ. 91. Աթեն. հատակագիծ:

թաղամասերով: XI դարի մի արձանագրությամբ հայտնի է, որ բերդն ու նախկին բնակավայրը վերափոխվել են քաղաքի:

Իր չափերով Աթենը այդ տիպի հուշարձանների խոշորներից է, եթե ոչ ամենախոշորը:

Ճարտարապետական հորինվածքի որոշ կողմերով Աթենը մոտ է մի կողմից հայկական, մյուս կողմից՝ վրացական օրինակներին, դրանց կապող օղակն է, կամուրջը ճարտարապետական այդ երկու շրջանակների (նկ. 42):

Աթենում նույնպես հատակագիծը կազմավորված է խաչաձև դասավորության չորս խորաններով, չորս անկյունային սենյակներով և անկյունագծային $^3/_4$ խորշերով (գծ. 91):

Այս տիպի տաճարներն իրենց կենտրոնական մասի ներքին հատակածով միմյանց շատ նման են և հիմնականում տարբերվում են մասերի համաչափություններով: Ներքուստ, ամբողջական հատակածի առումով Աթենը ավելի մոտ է տիպի հայկական օրինակներին, որտեղ բոլոր անկյուններում առկա են ավանդատներ, քան նախապես կառուցված Ջվարին, երբ վերջինս դեռ ավանդատներ չուներ և, փաստորեն, խաչաձև եկեղեցի էր: Սակայն հետագայում, երբ երկրորդ հերթի կառուցումով ամբողջացավ, ստացավ հատակագծային ճշտորեն նույն ուրվագծերը, որպիսին ունի Աթենը:

Այս տաճարում ևս հատակածը ստեղծվել է այն նույն կանոնիկ դարձած սխեմայի հիման վրա, որն իր կատարյալ մշակվածությանը հասավ Հռիփսիմեում ու գործադրություն գտավ տվյալ տիպի տաճարներում, որոշ դեպքերում թեթև շեղումներով: Այստեղ նույնպես արևելյան ու արևմտյան, ինչպես և հյուսիսային ու հարավային խորանների կենտրոնների տեղերը որոշվել են վերոհիշյալ սխեմայի կիրառմամբ, հիմքում ունենալով գմբեթի ներքին տրամագիծն ու գմբեթատակ քառակուսին (գծ. 92):

Անկյունների $^3/_4$ խորշերի կենտրոնների տեղի որոշման ձևը Աթենում և Ջվարիում մասամբ տարբերվում է նախորդներից: Այստեղ այդ կենտրոնները գտնվում են այն երկու գծերի հանդիպման տեղում, որոնցից մեկը նախորդների նման սկսվում է կարճ առանցքի վրա տաճարի կենտրոնից $^2/_3$ շառավղաչափ հեռու և անցնում նույն կարճ առանցքի նկատմամբ 30°-ի անկյուն կազմելով, մյուսը՝ կենտրոնից $^1/_2$ շառավղաչափ հեռու, և անցնում է այդ առանցքի նկատմամբ 60°-ի անկյուն կազմելով:

Աթենում նույնպես տաճարի արտաքին լայնքը հավասարվում է գմբեթի ներքին տրամագծի կրկնակի չափին, երկարությունը՝ մոտավորապես 2 և $^1/_2$ տրամագծաչափին: Այստեղ $^3/_4$ խորշերից յուրաքանչյուրի կենտրոնից տարված շրջագիծը, որ անցնում է տաճարի կենտրոնով, շոշափում է նաև տաճարի մոտակա դրսի անկյունը:

Այս երկու՝ Աթեն և Ջվարի տաճարների փոխհարաբերությունը ճարտարապետության պատմության հաճախ արծարծվող խնդիրներից է, որից խուսափելու առիթ չի ներկայանում նաև այժմ:

Նախորդ հետազոտողներից շատերը նկատի ունենալով տաճարի ամբողջական հատակածը, որտեղ խաչաձև կենտրոնից բացի, այդ խաչաթևերի միջև առկա են նաև անկյունային չորս սենյակներ, ինչպես և նրա կառուցողի՝ Թոդոսակի հայ լինելը, Աթենը համարում էին հատակագծային նույնպիսի ուրվագծեր ունեցող Հռիփսիմեի օրինակով կառուցված տաճար: Ի հակադրություն Ջվարիի, Աթենն ունեցել է կառուցման մի հերթ,

այսինքն՝ նրա ավանդատները կառուցվել են տաճարի կենտրոնի հետ միաժամանակ, այնպես, ինչպես տիպի նախօրինակներում է: Եվ ինչպես հնարավոր է ենթադրել, Աթենի կառուցման ժամանակ, Զվարթի ավանդատները դեռևս չէին կցվել և տաճարը կանգնած էր իր սկզբնական՝ խաչաձև հորինվածքով: Թերևս Աթենի տաճարի կառուցումից անմիջապես հետո, նույն վարպետ ճարտարապետների կողմից Աթենի օրինակով խաչաձև Զվարթի չորս անկյուններում ստեղծվեցին չորս ավանդատներ:

Այս հարցի վերաբերյալ այժմ առկա է տրամագծորեն հակառակ կարծիք, համաձայն որի Զվարթն ի սկզբանե կառուցվել է մի հերթում և տաճարի առկա հատակագծային, ծավալատարածական հորինվածքը հետագայում որևէ ձևափոխման չի ենթարկվել, և որ Աթենը հանդիսանում է Զվարթի կրկնօրինակը և ոչ ավելին: Իր «Զվարթի տիպի հուշարձաններ» աշխատության մեջ հեղինակը գրում է. «...Աթենի Սիոնը, որպես ճարտարապետական ստեղծագործություն,— ճշգրտագույն, թույլատրելի է նույնիսկ ասել, կույր կրկնօրինակն է Մցխեթի Խաչի եկեղեցու»: Հետագայում աշխատության տարբեր էջերում, տարբեր առիթներով Աթենի տաճարի ու նրա կառուցողի վերաբերյալ իր այս նույն վերաբերմունքը շարադրում է տարբեր գունավորումներով և երանգներով, երբեմն, նույնիսկ վիրավորական արտահայտություններով՝ «ճորտական ընդօրինակում» և այլն[165]:

Արդ, որոնք են այս տեսության հիմնական կռվանները Աթենը Զվարթի ճշգրտագույն կրկնօրինակը համարելու համար, մի կարծիք, որը, վարմանալիորեն, ցարդ վիճարկման չի արժանացել:

Համաձայն հիշյալ աշխատության հեղինակի, Խաչի եկեղեցու ինչպես ներսի, այնպես էլ դրսի բաժանումներն ու նշանակալից հարամասերը պայմանավորված են տաճարի տեղի առանձնահատկություններով: Աթենում այդ առանձնահատկությունները այլ բնույթի են, մինչ շինության վրա պահպանվում են Խաչի եկեղեցում գործադրված ձևերը ամենայն մանրամասնությամբ: Ավելի կոնկրետ, որո՞նք են դրանք: Զվարթում հնարավոր է եղել մուտքեր ստեղծել միայն հարավից և հյուսիսից. արևմուտքից մուտք չի արվել, որովհետև տաճարի այդ ճակատը դրված է պարիսպի վերևում՝ հենապատի եզրից շատ մոտ, անցուդարձի համար այնտեղ տարածություն չկա: Աթենում պարիսպին ու հենապատը հարավից են և արևելքից, մինչ մուտքեր են արված դարձյալ հարավից և հյուսիսից, ինչպես Զվարթում է. արևմուտքից մուտք չի արված, անկախ նրանից, որ այդտեղ դրա համար շատ հնարավորություններ կան, այդ կողմից են մոտենում տաճարին: Այդտեղ էլ պիտի արվեր գլխավոր մուտքը, ինչպես արվել է Մարտվիլիում: Այսպիսին է հեղինակի եզրակացությունը մուտքերի հարցում:

Ուսումնասիրություններով պարզվում է, որ Աթենում արևմտակողմից մուտք չի արվել, ոչ թե կուրորեն Զվարթի օրինակին հետևելու պատճառով, այլ համաձայն մինչ այդ, ըստ երևույթին գոյություն ունեցող մի կանոնի, որի հիման վրա արևմտակողմից մուտք չի արվել այդ նույն տիպի հուշարձաններից հին Շուամթայի մեծ եկեղեցում, նույն Շուամթայի նաև փոքր եկեղեցում: Ե՛վ Զվարթում, և՛ Աթենում, և՛ Շուամթայում մի մուտքից եկեղեցի են մտել իշխանները, մյուսով՝ հոգևորականները, իսկ ժողովուրդը հետևել է նրանց, իրավահավասար մի այլ մուտք չունենալու պատճառով:

Հին Շուամթայի վանքի առավել վաղ կառուցված բազիլիկ եկեղեցում հարավային և հյուսիսային մուտքերից բացի, առկա է նաև արևմտակողմյան մուտք: Նրա հյուսիսակողմում, շատ մոտ տարածության վրա հետագայում կառուցվում է գմբեթավոր տաճարը: Տրամաբանական կլիներ, եթե նրա արևմտակողմի ճակատի վրա բացվեր մուտք, եկեղեցի մտնելու համար, ինչպես որ հարևան բազիլիկ եկեղեցում էր, մինչ իրականում եկեղեցու այդ մասում մուտք չկա:

Նույն վանքի գմբեթավոր փոքր եկեղեցի մըտնելու համար մի քանի առումներով ավելի հարմար էր մուտք ունենալ արևմտակողմից, մինչ մուտք է ստեղծված եկեղեցու հարավային թևի վրա, արևմտակողմից, այնուամենայնիվ, մուտք չկա:

Նույն տիպի այս տաճարներում արևմտակողմի մուտքի բացակայությունը մեծ անհարմարություններ է ստեղծել արևմտակողմի խաչաթևում, ինչպես փակուղում խմբված հավատացյալների համար: Նրանք արևելյան խորանից՝ հիմնական սեղանից, որտեղ կենտրոնացված է եկեղեցական արարողությունը, հեռացված են կողային մուտքերից մեկով մտնող և այդ մուտքերից մյուսով դուրս ելնող

մարդկային շարժվող հոսանքով: Ահա այս և այլ անհարմարություններից խուսափելու անհրաժեշտությունն անգամ անպոր է եղել այն գործող կանոնի հանդեպ, որի ուժով տվյալ տիպի հուշարձաններից չորսում արևմտակողմից մուտքեր չեն ստեղծվել:

Մարտվիլի տաճարը կառուցողները այդ հարցում, երևի, հետևել են այն կանոնին, որով առաջնորդվելով՝ հայ վարպետները այդ տիպի բոլոր հուշարձաններում մուտքեր են ստեղծել նաև, և երբեմն միայն արևմտակողմից:

Պետք է կարծել, որ նշանակալից հուշարձանների կառուցման պատվիրատուները այլ հարցերի թվում, մուտքերի տեղադրման հարցում ևս իրենց վճռական կարծիքն են ունեցել ու թերևս եղել են նաև թելադրող:

Որ Աթենը եղել է եկեղեցական նշանավոր շինություններից, և որ նրա կառուցողը շատ հարցերում կախված է եղել բարձրաստիճան պատվիրատուի քմահաճույքից, կասկած չի կարող լինել:

Նկատելի է, որ Վրաստանում արևմտյան կողմից մուտք չունեն ոչ միայն քննարկվող տիպի վերոհիշյալ տաճարները, այլև այլ հուշարձաններ ու այդ թվում Բոլնիսի Բազիլիկ եկեղեցին (նրա այժմյան արևմտակողմի մուտքը բացվել է հետագայում): Սա բացառիկ երևույթ է, երբ արևմտակողմից մուտք չունի արևելք-արևմուտք առանցքով ձգված եկեղեցին, որի գլխավոր սեղանը արևելակողմում է: Այստեղ, համաձայն տրամաբանության, գլխավոր մուտքը պիտի լիներ արևմտակողմում, որպեսզի եկեղեցի մտնողին անմիջապես բացվեր կենտրոնական նավի (неф) բարձր ու երկարավուն ներքին տարածությունը, ավարտված գմբեթարդ խորանով, որ արարողության կիզակետն է, որին պիտի ուղղվեր հավատացյալների սևեռուն հայացքը:

Այս առանձնահատուկ յուրօրինակությանը մի այլ առիթով անդրադառնալով, Գ. Չուբինաշվիլին իրավացիորեն գրում է. «Устройство входов не с запада, а в боковых стенах, даже по их середине, что конечно, противоречит сущности базилики, поскольку в ней все должно подчиняться движению по продольной оси — с запада на восток, к алтарю, все должно подчеркивать эту перспективу, это стремление. А боковые входы, как в Болниси — словно пересекают и останавливают это движение; входящему с юга или с севера, для того, чтобы обозреть и воспринять пространство, нужно смотреть не только в одну сторону, вдоль одной оси, но и в другую, т. е. направо и налево, пространство, в какой-то мере, распределяется равномерно от зрителя, как в сооружения с центральным планом». Վ. Բերիձեն իր նոր գրքի 25-րդ էջում բացականչում է[165]ա. «... вот где дает о себе знать привязанность грузинского архитектора к вековым коренным традициям».

Այս մեջբերումը լավագույն հաստատումն է նրա, որ ճարտարապետ Թոդոսակը Աթեն տաճարում շքամուտքերը տեղադրել է հարավային և հյուսիսային ճակատների կենտրոններում ոչ թե Ջվարիին «կուրորեն» և «ճորտաբար» կրկնելու համար, այլ առաջնորդվել է ավանդույթի և ծիսակատարության կոնկրետ և պարտադիր կանոններով:

«Ջվարիին կուրորեն կրկնելու» կողմնակից է նաև այն, որ Աթենի հարավային մուտքը գնացող ուղամարդիկ իրենց ճանապարհին անցնում են կանանց աղոթասենյակի՝ հարավ-արևմտյան ավանդատան հարավակողմի վրա բացվող դռան առջևով, որ խիստ տհաճությունների առիթ հանդիսացող այս հանգամանքը ճարտարապետի կողմից անուշադրության է մատնվել և նա գլխավոր մուտք է ստեղծել եկեղեցու հարավակողմի թևի վրա, այսինքն, այնպես, ինչպես Ջվարիում է:

Նախ նկատենք, որ արևմտակողմից մուտք ունեցող եկեղեցիներում երկրորդ մուտքն անպայման հարավից է լինում և ոչ հյուսիսից. այստեղից հետևում է, որ հարավ-արևմտյան սենյակի դռան մեկուսացումը ոչ մի դեպքում հնարավոր չէր: Իսկ հարավ-արևմտյան սենյակը հյուսիս-արևմտյան անկյունում ներթափանցելու հնարավորությունը, բացառվում է, քանի որ անկյունային չորս սենյակներից յուրաքանչյուրն իր նշանակությունն ունի ու իր կանխորոշված տեղը:

Վաղ միջնադարում հայ և վրաց եկեղեցիներում գործելիս են եղել նույն կանոնները, եկեղեցական շինություններն էլ կառուցվել են նույն պահանջների և նույն նորմերի հիման վրա: Անկախ VII դարի առաջին տասնամյակում հայ և վրաց եկեղեցիների բաժանման, շատ բան շարունակվում

էր հին ավանդույթով: Հավանական է, և այդ են հավաստում տաճարների պատերին պահպանվող վարպետների նշանները, որ եկեղեցաշինության ասպարեզում ևս երկուսի միջև պատնեշներ չըստեղծվեցին: Եվ ահա, հայ ճարտարապետության շրջանակներում կառուցվող, այս տիպին պատկանող մի շարք հուշարձաններում ոչ միայն հարավ-արևմտակողմի սենյակներն են ունեցել դրսից առանձին դռներ, այլև հյուսիս-արևմտյանները (Հռիփսիմե և այլն), և որ, կարևորն է, այդ սենյակներից դեպի դուրս դռները բացվել են նույն կողմի վրա, որ կողմի վրա բացվել են տաճարի գլխավոր մուտքերը: Այսպես, Ավանի միակ մուտքը արևմտակողմից է, այդ կողմից է նաև հարավ-արևմտակողմի սենյակի առանձին մուտքը, ըստ որում, ճիշտ այն ճանապարհի վրա, որտեղից մարդկային հոսանքը շարժվել է դեպի գլխավոր մուտքը:

Հռիփսիմեում արևմտակողմի երկու սենյակներն էլ առանձին դռներ են ունեցել արևմտակողմից: Ինչպես հայտնի է, արևմտակողմից է Հռիփսիմեի նաև գլխավոր մուտքը:

Եթե նույնն է եղել եկեղեցին, նույն օրենքներն են գործել եկեղեցաշինության մեջ, ապա նույն նշանակությունը պիտի ունենային նաև անկյունային սենյակները:

Հայտնի է, որ այդ տիպի եկեղեցիների Հայաստանի օրինակներում այդ սենյակները կանանց աղոթարան լինելու տվյալներ և վկայություններ ամենևին չկան: Պետք է կարծել, որ Աթենում այդ սենյակը այլ նշանակություն է ունեցել, և սա ավելի հավանական է, քան այն մեկնաբանությունը, որ բերվում է վերոհիշյալ աշխատության հեղինակի կողմից:

Ահա այս ամենով ևս առավել հավաստի է ներկայանում որոշ հետազոտողների կողմից առաջ քաշված Տեմետիայի արձանագրության ողջ տաճարին և ոչ հարավ-արևմտյան սենյակին վերաբերելու թեզը:

Աթենում արևմտյան ճակատի վրա խորշեր չանելը ևս մեկնաբանվում է որպես «Ջվարիին կուրորեն կրկնելու» հետևանք, որ իբր Ջվարիում այդ ճակատը դիտվում է լոկ Մցխեթ բնակավայրից, որ այդ հեռավորությունից դրանք չեն երևա և դրանից ելնելով էլ՝ կառուցողը արևմտյան ճակատի վրա խորշեր չի արել, մինչ Աթեն կառուցողը պիտի աներ, քանի որ արևմտյան ճակատի դիրքը տեսողական առումով ամենանպաստավորն է:

Նախորդ էջերում նշվեց, որ Ջվարիի արևմըտյան ճակատը շատ կշահեր, եթե խորշեր ունենար, սակայն այնտեղ խորշեր չեն արվել ավելի հիմնավոր պատճառով: Ջվարիի արևմտյան ճակատի այն մասերում, որտեղ սովորաբար լինում են խորշեր, պատի հոծ զանգվածներ չկան, և որ իրականացվող ամեն մի խորշը տաճարի տվյալ հատվածի համար կոնստրուկտիվ թուլացում կնշանակեր:

Ճշտորեն նույն վիճակն է նաև Աթենում: Այնտեղ, որտեղ խորանը բազմանիստ ծավալով դուրս է գալիս ճակատային պատից, խորշերի անհրաժեշտությունը բացառվում է: Նույնպիսի իրավիճակում խորշեր են արվել Մարտվիլիի և հին Շուամթայի մեծ եկեղեցիների արևմտյան ճակատներում: Դրանք սակայն ամենայն իրավամբ կոնստրուկտիվ և, նույնիսկ, ճարտարապետական-գեղարվեստական, նաև դեկորատիվ առումով իրենց չեն արդարացնում և կրում են ձևական բնույթ: Մարտվիլիում արևելյան ճակատի երեք լուսամուտներից երկու կողայիններն անգամ կից խորշերում չեն բացվում:

Աթենը «Ջվարիի կրկնությունը» համարելու կռվաններից է նաև պատուհանների տեղադրումը ճակատների վրա:

Իրականում պատուհանները թե՛ Աթենում, թե՛ Ջվարիում գտնվում են իրենց խորապես տրամաբանված տեղերում: Դրանց մի այլ դասավորություն առավել մեծ առարկությունների կարժանանար: Հետևաբար ինչո՞ւ պիտի անբնական քայլի դիմեր տաճարներից մեկի կամ մյուսի կառուցողը:

Աթեն տաճարի հյուսիսակողմում, շատ մոտ տարածության վրա գտնվող բլուրը մեծ բարձրություն չունի, սակայն իր չափով ծածկում է տաճարի ներքնամասը, դրանով իսկ խանգարում նրա ամբողջական դիտմանը անհրաժեշտ հեռավորությունից:

Տաճարի վերնամասը՝ մուտքից վերև բաց է և ոչնչով չի պաշտպանվում հյուսիսային քամիներից: Դրանից ելնելով՝ այդ ճակատի վրա ավանդատների համար պատուհաններ չեն բացվել: Այդպես է նաև Ջվարիում: Կան տաճարներ, որոնք պատուհաններ ունեն նաև հյուսիսակողմից, սակայն բո-

լորը, փչող քամիների պատճառով քարով շարվել՝ փակվել են:

Աթենում հարավ-արևմտյան սենյակի արևմըտյան պատի վրա պատուհան չբացելը ճիշտ է ոչ թե Զվարիի նույն դրվագը կրկնելու, այլ նրա համար, որ ընդամենը տասը քառակուսի մետր մակերեսով այդ սենյակը լուսավորելու համար ավելի քան բավարար է եղել հարավակողմի պատի վրա մի պատուհան և մեկ դուռ ունենալը: Առան շոգին արևմտակողմի պատուհանը միայն վնաս կարող էր բերել հիշյալ սենյակի միկրոկլիմային: Եվ ապա, հյուսիս-արևմտյան սենյակի արևմտակողմի լուսամուտը իր մեծության և նշանակության համեմատ ի վիճակի չէր ողջ ճակատում այնպիսի անհավասարակշռություն ստեղծել, որ անհրաժեշտ համարվեր հարավ-արևմտյան սենյակում ևս նույն կողմի վրա պատուհան բացել:

Ամենևին նկատողության ենթակա չէ նաև շքամուտքերի ձևավորումը: Իրականում հյուսիսային և հարավային մուտքերը մշակված են միաձև, տրամաբանորեն համապատասխան իրենց տեղերին:

Աթենի արևելակողմի խորանի բոլորակ ներքնամասում առկա է եռաստիճան որմնախարիսխ հիշեցնող քարակերտ շարվածք: Հետազոտողներից ոմանք այդպիսիք համարում են նստարաններ հոգևորականների համար: Դրանց գոյությունը Զվարիում նրանք համարում են օրինական՝ համապատասխան տաճարի մեծ նշանակությանը, Աթենում՝ ավելորդ, որ իբր այն չի եղել նույնիսկ եպիսկոպոսանիստ եկեղեցի:

Հիշյալ եռաստիճան քարաշարվածքը իրականում չէր կարող նստարանի դեր կատարել, քանի որ այդ աստիճանների չափերը փոքր են և նրանց վրա նստելը, այն էլ երեք շարք, անհնար է: Դրանք, դասասացների (երգողների) համար են, չէ որ նրանց վրա հազիվ կարելի լինի կանգնել, իսկ երգչախումբ, հավանական է, կունենար նաև Աթեն տաճարը: Այս տաճարը իր չափերով գերազանցում է Զվարթին և այդպիսի շքեղ եկեղեցին իր ժամանակին չէր կարող աննպատակ կառուցվել և այնքան աննշան լինել, որքան մեկնաբանվում է:

Որ Աթենը իր գեղարվեստական-ճարտարապետական, ինչպես և ճարտարագիտական բարեմասնություններով բարձր արժանիքներ է ունեցել, և որ որոշ հարցերում ակներև գերազանցել է Զվարթին, հավաստում են ստորև բերվող պարզաբանումները:

Ի՞նչ փույթ, թե այն անկանոնությունները, որ կային Զվարթի հատակաձևում, այս կամ այն չափով առկա են նաև Աթենի հատակաձևում, Աթենում, սակայն ճարտարապետը հաջողացրել է, որ տաճարի գլխավոր առանցքները լինեն փոխուղղահայաց, որ գմբեթատակ քառակուսու չափերը ավելի մոտ լինեն իսկական քառակուսուն, որ գմբեթը իր հիմքում լինի ճիշտ շրջագծային, որ տաճարի ներքին տարածությունը ինչ որ չափով ընդարձակվի: Դրա համար նա Զվարթի համեմատությամբ մոտ 70 սանտիմետրով մեծացրել է տաճարի երկարությունը և լայնությունը, ավելի քան մեկ մետրով ավելացրել է ներքին բարձրությունը: Եթե Զվարթում արևելյան խորանի լայնքը իր բարձրության մեջ տեղավորվում է 2,25 անգամ, ապա Աթենում՝ 2,50 անգամ: Զվարթում մույթերի բարձրությունը լայնքի համեմատ մեծ է 8,70 անգամ, մինչ Աթենում՝ 9,50 անգամ և այլն:

Անհամեմատ կանոնավոր են Աթեն տաճարի ավանդատների մուտքերը. դրանց բարավորները $^3/_4$ խորշերի կողմից հորիզոնական են, ստեղծված միակտոր մեծ քարերով, իսկ ներսի կողմից՝ կամարակապ: Այս, ինչ խոսք, պայմանավորված է Աթենի ամբողջական հատակաձևը միանգամից կազմավորվելու հետևանքով:

Աթենում ևս, ինչպես Զվարթում, գմբեթային փոխանցումն իրականացվել է եռաստիճան տրոմպային համակարգով, սակայն դրանք նույնություն չեն և միմյանցից տարբերվում են: Եթե Զվարթում մեծ տրոմպի եզրակամարը անմիջապես նստում է գմբեթակիր կամարի վրա, տրոմպների երկրորդ շարքը անցնում է պատուհանների կես բարձրության գծով, իսկ երրորդ շարքը՝ պատուհանների բարավորներից վերև՝ գմբեթածածկի տակ, ապա Աթենում մեծ տրոմպները անմիջականորեն չեն ծանրանում գմբեթակիր կամարներին, սկսվում են 2—2,5 շարք բարձրից՝ պատուհանի գոգի հետ մի գծի վրա (սա շատ դրական կողմ է այլայլ առումներով), տրոմպների երկրորդ շարքը համընկնում է պատուհանների բարավորներին, նրանց կենտրոնները գտնվում են նույն գծի վրա (այս ևս դրական երևույթ է): Տրոմպների երրորդ շարքը բարձրանում է անմիջականորեն երկրորդ շարքի վրա:

Հետազոտողներից ոմանք տրոմպների ըստ բարձրության տեղադրման առումով առավելությունը տալիս են Զվարթնոցին, գտնելով, որ տրոմպների երկրորդ և երրորդ շարքերի սերտ մոտիկությունը անհանգստություն է ստեղծում Աթենիի գմբեթում: Այդ եկրակացությունը, ըստ երևույթին արդյունք է վերակազմության գծագրական նյութերից, և ո՛չ անմիջական տաճարից ստացած տպավորության:

Բանն այն է, որ Զվարթնոցում խորանները մեծ տրոմպների անմիջական հարևանությամբ ինչ-որ չափով կորցնում են իրենց ինքնուրույն, հանգիստ ու անկաշկանդ դիրքը ընդհանուր տարածության մեջ: Այդտեղ տրոմպները ճնշում են խորաններին, դառնում նրանց դերի անմիջական մասնակիցը: Տրոմպների երկրորդ շարքը, գտնվելով առաջին և երրորդ շարքերի միջև, նրանցից հավասար հեռավորությունների վրա, իրենով պլաղեցրել է գմբեթաթմբուկի պատուհանների միջև գտնվող հարթությունները, դրանով իսկ հանգիստ տեղ չթողնելով թմբուկի ողջ բարձրության վրա: Թերևս դրանով էլ պետք է բացատրել գմբեթի պատուհանների տեղի անկայուն, անորոշ, ինչպես նաև անկապ լինելը այդտեղ առկա մյուս ձևերի հետ: Այս առումով անհամեմատ նախընտրելի է իրավիճակը Աթենում: Այստեղ առանցքային նիստերը, որոնց վրա մեկական պատուհան է, հանդիսանում են գմբեթատակ քառակուսին կազմող պատերի հարթությունների օրգանական շարունակությունը, նրանք մեծ տրոմպներով միմյանցից անջատված չեն և պատի այդ ընդհանրական հարթության վրա ապատորեն կամարում են չորս խորանների գմբեթարդ ծածկերի եզրակամարները: Գմբեթակիր կամարներից մինչև տրոմպների երկրորդ շարքը առանցքային նիստերը ապատ են, ըստ հարկի հանգիստ հարթություններ են, մեծ տրոմպների կիսաձագարների միջև: Տրոմպների երկրորդ և երրորդ շարքերի մոտիկությունը իրականում ոչ մի անհանգստություն կամ ձևերի կուտակում չի ստեղծում, քանի որ տրոմպների երրորդ շարքը կազմող առանձին կիսաձագարները չունեն պգալի խորություն, փորված են մեկական քարի վրա, գրեթե ձուլված են ինչպես իրենցից ներքև գտնըվող պատին, այնպես էլ ծածկի կիսագնդին: Բանն այն է, որ դրանք գծագրերում ավելի որոշակի են արտահայտվում, քան տեղում, դրանով էլ անբարենպաստ կարծիք ստեղծում ոմանց մոտ: Այսպիսով հասկացվում է, որ գմբեթային փոխանցման համակարգը Աթենում ակներև կատարյալ է, սկզբունքորեն նախընտրելի:

Տրոմպային համակարգից վերև քարակերտ դեկորատիվ խաչն է, որի յուրաքանչյուր թևը ստեղծված է երկճյուղ ճառագայթներով, հենված շրջանաձև փաթանակների վրա:

Զվարթ տաճարի այս նույն դրվագը հիմնականում չի պահպանվել. վերակազմության գծագրերում ցույց է տրվում Աթենի նմանողությամբ: Անբնական է հնչում պնդումը, թե «Այս հարցում նույնպես Աթենի կառուցողը կրկնել է այն, ինչ կա Զվարթնոցում»:

Աթենի տաճարի ներսը հարուստ պատկերազարդված է: Դատելով սվաղից ապատ մնացած տեղերով պատերը, սկսած հատակից և ավարտված գմբեթի գագաթով շարված են սրբատաշ քարի կանոնավոր շարքերով: Տաճարի կառուցողները նկատի չեն ունեցել, որ հետագայում նկարազարդումների համար պատերը ներսից սվաղվելու են: Շինության ներքին ընդհանուր տարածությունն ստեղծող մասերը համաչափ են, ներդաշնակ, թեթև, սլացիկ, այդտեղ ամեն ինչ կերտված է վարպետորեն, այն հոյակապ է, ամբողջական և լավ պահպանված:

Տաճարի արտաքին ծավալային հորինվածքում ևս առկա են երևույթներ, որոնք Աթենը դրականորեն տարբերում են Զվարթնոցից:

Աթենի ճարտարապետը հնարավորության սահմաններում փորձել է խուսափել այժմ էլ Զվարթնոցում առկա որոշ թերություններից, որոնց իր ժամանակին ի վիճակի չի եղել հաղթահարել Զվարթնոցի կառուցողը: Այս առումով նույնպես դեր է խաղացել Աթենի տաճարը մեկ հերթում կառուցված լինելու շատ կարևոր հանգամանքը:

Անկախ այս երկու տաճարների հատակաձևի արտաքին պարագծերի, ծավալային ամբողջական հորինվածքի ակներև ընդհանրությունների առկայության, մեկը մյուսի կրկնօրինակը չէ: Դրանք միմյանցից այնպես են տարբերվում, ինչպես միմյանցից տարբերվում են Գառնահովիտն ու Թարգմանչացը, Սիսիանն ու Քոլատակը, Զորաթիրն ու Աղթամարը, թեպետև այս հուշարձաններից ամեն մի զույգում ակներև առկա է հատակագծային արտաքին պարագծերի և ծավալային ամբողջական հորինվածքների որոշակի ընդհանրություն:

Աթենի տաճարի ճակատներում ինչպես արեվելյան սեղանաձև, այնպես էլ հյուսիսային և հարավային ուղղանկյուն հիմքով խորշերն իրենց վերնամասի թաղածածկերով անհամեմատ կանոնավոր են, հարևան ձևերին համաչափ:

Արտաքին հորինվածքում ամենագնահատելին Աթեն տաճարի գմբեթի, կենտրոնական խորանարդի և մյուս ծավալների միասնական, օրգանական լինելն է: Կենտրոնական՝ քառակուսի հիմքով խորանարդը անհրաժեշտ բարձրության վրա փոխարկվում, վեր է ածվում ութնիստ գմբեթաթմբուկի. նրանց միջև ոչ մի բաժանող գոտի, ոչ մի ձևական խոչընդոտ: Այստեղ գմբեթը ոչ թե որոշակիորեն սահմանազատված ծավալ է ծանրացած տաճարի ներքնամասի վրա, ինչպես Զվարթնում է, այլ ամբողջի մի մասը, նրա վեր խոյացած միջուկը, ներքնամասի նկատելիորեն մասնատված օրգանիզմի համախմբողը, գլխավորողը, պսակը: Ահա այն հիմնականը, Աթենը Զվարթնից տարբերող բնորոշը, որը և հանդիսանում է Աթենը ստեղծողի ինքնուրույն, անուրանալի քանքարի հավաստի վավերականը:

Աթեն տաճարի ճակատներում ճարտարապետական հիմնական միջոցներն ու դեկորատիվ ձևերը կապվում են մի միասնական ընդհանրություն, մի ամբողջական պատկեր, որը և հանդիսանում է տաճարի գեղարվեստական էության արտահայտությունը: Եթե հիշյալ միջոցների և ձևերի մի մասը լուծում է կառույցի հիմքում ընկած ուտիլիտար խնդիրները, ապա մյուս մասը մի կողմից իրեն հատուկ հնարավորություններով առավել պարզ ու հասկանալի է դարձնում նպատակային այն բովանդակությունը, որ առկա է ստեղծագործական կերտվածքում ընդհանրապես, և, մյուս կողմից, գեղարվեստորեն մշակված մանրամասներով գոհացնում ընծայում մարդու գեղագիտական սպասումներին: Եթե կառույցի ներքին տարածությունը սպասարկելի դարձնելու համար արվում են դռներ, լուսամուտներ, աստիճաններ,ապա գեղագիտական պահանջմունքները գոհացնելու նպատակով մուտքերն ու լուսամուտները շրջանակվում են դեկորատիվ կանսպան ձևերով, ճակատների համապատասխան տեղերում դրվում են որոշակի բովանդակություն ունեցող քանդակներ:

Աթենի տաճարի կառուցողը արել է այն ամեն անհրաժեշտը, ինչը պայման է երկի դասական լինելու համար:

Այստեղ հյուսիսային և հարավային ճակատներում առկա երկու շքամուտքերը գրավում են խաչաթևերի կենտրոնական նիստերը: Ուղղանկյուն եզրագծերով դռան բացվածքը երկու կողմերում ունի երկուական կիսասյուներ, որոնց ընդհանուր խոյակների վրա հանգչում է վերնամասի կամարակապը: Այդ շքամուտքերը իրենց ընդհանուր ուրվագծերով հարում են Թալինի Փոքր եկեղեցու, Օձունի, Մաստարայի, Կոշի, Գառնահովտի (առանց ճակատոնի) շքամուտքերի ձևերին, մանրամասների կգալի տարբերությամբ: Մուտքի, պատի հարթությունից առաջացած անպարդ կամարը եզրափակվում է իրար կից երկու կիսագլաններով ստեղծված գոտով: Ընդհանուր գծերով բավական նման են Աթենի և Զվարթ տաճարների շքամուտքերը:

Աթենի հյուսիսային շքամուտքի տիմպանում հարթաքանդակ է, երկու դեմ-դեմի կանգնած եղջերուների պատկերով: Նրանք շրթունքներով հըպվում են մի քանդակածածկ շրջանակի, որի կենտրոնում առկա է մի փոքրիկ խաչ: Ն. Պ. Կոնդակովի մեկնաբանմամբ այդ եղջերուները ջուր են ըմպում շրիորից:

Արևելյան ճակատի երեք պատուհանների կամարաղեղները հորիզոնական հատվածներով միավորված են: Այդ կամարաղեղի կողադեմի միջին թեքադիր հարթության վրայով անցնում է խաղողի գալարվող ճյուղի, ողկույզի ու տերևի հանրահայտ քանդակը, ինչպիսին կա Հռիփսիմեի արևմտյան ճակատում, Զվարթի արևելյան ճակատում և այլուր: Կողադեմի ներքին եզրը ոլորքով պարանի, վերին եզրը՝ պարանահյուս բլիթների շարք պատկերող քանդակներ են:

Մոտավորապես նույն կողադեմն ունեն տաճարի բոլոր ճակատների, այդ թվում և գմբեթի առանցքային չորս նիստերի պատուհանների քանդակազարդ կամարաղեղները: Դրանց ինչպես կողադեմի եզրագիծը, նույնպես և քանդակներն ու այլ մանրամասներ լիովին ինքնուրույն են և հետաքրքիր:

Տաճարների ճակատներում քանդակները սովորաբար գրավում են ոչ պատահական տեղեր: Անկախ նրանից, որ այլ տաճարներում, այդ թվում և Զվարթնում քանդակները պսակեցնում են խաչաթևի երեք նիստերը, Աթեն տաճարի ճարտարապետը դրանով իրեն չի կաշկանդել և ինքը նույնպես պսակեցրել է արևելյան խաչաթևի միջին երեք նիստերը, այնենին չմտահոգվելով, որ 13 հարյուրամ-

յակ հետո դրա համար, ինչ որ հետազոտողներ իրեն մեղադրելու են «էպիգոնության» մեջ[166]:

Եվ այսպես, կենտրոնական նիստը զբաղեցնում է Քրիստոսի քանդակը, աջ ու ձախ նիստերը՝ միյանցից փոքր ինչ հեռու կանգնած երկուական մարդապատկերներ, որոնցից ձախ նիստի աջ քանդակում, թերևս տաճարի պատվիրատուն է. նա ձեռքում բռնած ունի տաճարի մանրաքանդակը: Այդտեղ, մի փոքր ցածր դիրքում կան թռչունների երկու քանդակներ:

Տաճարի մյուս ճակատներում ևս առկա են նույնանման քանդակներ, որոնցից մի մասը իր սկզբնական տեղում է, մյուս մասը՝ տեղափոխված, մի հանգամանք, որը լրջորեն դժվարացնում է ընկալել այդ քանդակների ներքին փոխհարաբերությունը, կապը, նշանակությունը: Անկասկած, նախկին տեղից տեղափոխված քանդակները իրենց իսկական տեղում ունեցել են հասկանալի նշանակություն և բովանդակային կապ մյուսների հետ:

Եթե այլ հուշարձաններում քանդակները իրականացված են մեկական մեծաչափ ամբողջական քարի վրա և տեղադրված են շարքի այլ բարձրություն ունեցող պատի մեջ, ինչպես այդ Ջվարիում է, ապա Աթենում քանդակները փորված են արդեն շարված պատի վրա, զբաղեցնելով 2—3 շարք, իրենց կարերով հանդերձ: Եթե Ջվարիի դեպքում երբեմն ենթադրություններ են արվում արևելյան խաչաթևի քանդակները մի այլ տեղից և կամ ավելի հին տաճարից բերված, կամ ուշ քանդակված և տաճարի պատերում ամրացված-ագուցված լինելու վերաբերյալ, ապա Աթենի վերաբերյալ նման ենթադրությունների համար առիթ չկա:

Աթենում քանդակների արվեստը, կատարման վարպետությունն ու տեխնիկան, ըստ տեղի դասավորումը, խմբավորումը, սիստեմավորումը և այլ կողմեր ինքնուրույն են, յուրօրինակ և ոչ մի դեպքում չի կարող ընդունելի համարվել այն կարծիքը, թե Աթենի ճարտարապետը «...չուներ անհրաժեշտ գեղագիտական ճաշակ և հասկացություն ոչ ճարտարապետությանը վերաբերող գործերում, ոչ էլ դեկորատիվ քանդակագործության ասպարեզում և գիտեր միայն ընդօրինակել»[167]:

Տվյալ տիպին պատկանող ավելի քան 17 տաճարները լայն առումով նույնություններ չեն, այլ նույն տիպի տարատեսակներ, դրանք միմյանց ամեն ինչում չեն կրկնում՝ կրկնօրինակներ չեն,



Գծ. 92. Աթեն. հատակագծի համաչափությունների վերլուծություն:

սակայն մեկը մյուսի համար, ինչ խոսք, հանդիսանում է այս կամ այն չափով նախօրինակ:

Աթենը և Ջվարիի սկզբնական կառուցվածքը արտաքին հորինվածքով ամբողջովին տարբեր էին, անժխտելի է սակայն, որ հենց Ջվարին կառուցման երկրորդ հերթի իրականացումով, որոշակի տարբերություններով հանդերձ, ընդհուպ մերձեցավ Աթենին: Դրանցում նույն լուծումն ունեցան երկար ճակատների ուղղանկյուն հիմքով խորշերը և, որպես հետևանք, նաև այդ ճակատները:

Այս ձևով կայմավորվեց և յուրահատուկ տեսք ստացավ ճարտարապետության այն դպրոցը, որով կառուցվեցին հին Շուամթայի գմբեթավոր մեծ եկեղեցին ու Մարտվիլին:

Այն թեզը, թե Աթենի ճարտարապետը զուրկ լինելով ինքնուրույնությունից ու քանքարից, կուրորեն կրկնել է Ջվարին, որպես անհիմն տեսություն, ինչպես պարզվեց նախորդ էջերում շարադրված ճարտարապետական-գեղարվեստական վերլուծությամբ, ժխտվում է: Մյուս թեզը հիմնված լինելով Ջվարիում գտնվող հայերեն արձանագրության տվյալների վրա, որով Ջվարիի կառուցումը վերագրվում է Աթենը կառուցողին, փաստակել է ինչպես կողմնակիցներ, այնպես էլ հակառակորդներ:

## ԱԹԵՆ ՏԱՃԱՐԻ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑԻՑ ԲԽՈՂ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թոդոսակ ճարտարապետի մասին ոչինչ հայտնի չէ, բացի այն հայագիր վիմական արձանագրության պահպանված դրվագից, որ առկա է Աթենի տաճարի պատի վրա, նրա հարավային ճակատի արևմտակողմի խորշում, վքաղեցնելով հինգ քար՝ գետնից վերև երրորդ շարքում: Այնտեղ գրված է. «Ես Թոդոսակ շինող սրբոյ եկեղե[ցին]»: Այս արձանագրությունը բազմիցս արտագրվել և հրատարակվել է[168]:

Հիշյալ մեծարժեք արձանագրությունը փչացվել է, մետաղե գործիքի գործադրմամբ գրեթե ոչնչացվել: Մեր օրերում դեռ նկատվում է տառերի փորվածքների հատակում պահպանված որթան կարմիրը, որով և հնարավոր է դառնում այն կարդալ:

Աթենի տաճարի նյութերի ուսումնասիրության հիման վրա արդ հնարավոր է դառնում հանգել որոշակի եզրակացությունների, դրանք են.

ա) այդպիսի մեծ և նշանավոր տաճարի կառուցումը կարող էր հանձնարարվել իր այլ և այլ կառուցումներով արդեն հռչակված, առնվազն՝ անուն հանած ճարտարապետի, ինչպիսին էր Թոդոսակը: Որ այդ ժամանակներում Թոդոսակը եղել է իր կշիռն ունեցող մասնագետ, որ նրա հետ անվերապահ հաշվի են նստել, վկայում է այն փաստը, որ նրան թույլատրվել է եկեղեցու պատի վրա հայերեն խոշոր տառերով դրոշմել իր անունը, որպես կառուցողի: Սա միջնադարի ակներև բացառիկ երևույթներից է:

բ) Թոդոսակը եղել է նաև վարպետ քանդակագործ և հեղինակը տաճարի պատերին առկա բազմաթիվ քանդակների: Նրա «Թոդոսա» անունը վերոհիշյալ արձանագրության տառերի նման տառերով փորված է նաև հյուսիսային ճակատի Սամսոնի քանդակապատկերի ձախակողմում կանգնած եղնիկի առջևի ոտքերի շուրջը:

գ) Ընդունելի չէ այն թեզը, թե իբր նա հրավիրված է եղել (ասենք՝ Հայաստանից) միայն Աթենը կառուցելու համար: Հայաստանում և այլուր նրա անվան հետ կապված որևէ կառուցում գոյություն չունի: Հետևաբար պետք է կարծել, որ նա իր գործունեությունը մինչ այդ ծավալած է եղել այն երկրամասում, որտեղ նրան ճանաչել են, հավանական է Գորիի կողմերում:

դ) Վերոհիշյալի հիման վրա և նկատի ունենալով, որ Թոդոսակը Աթենի կառուցումը մեծ հաջողությամբ հասցրել է ավարտի, պետք է կարծել, որ նա դրանից հետո ևս նոր կառուցումներ պիտի իրականացրած լինի:

ե) Քանի որ տաճարի վիմական արձանագրությունները միմիայն հայերեն են, այդ թվում ճարտարապետի արձանագրությունը և անունը առանձին քանդակի վրա, ինչպես և այլ գրեր գրված ողջ տաճարով մեկ, այսպես՝ Գրիգոր Դապս, ՍՄ, ԱՄ, Գ, Դ և այլն (վրացերեն արձանագրությունները գրված են շինության կառուցումից ուշ, ներկով, տաճարի հետ կապ չունեցող բովանդակությամբ), աներկբա եզրակացվում է, որ այն կառուցվել է հայ վարպետների կողմից:

## ՀԻՆ ՇՈՒԱՄԹԱ-ԳՄԲԵԹԱՎՈՐ ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻ

Հին Շուամթա վանախումբը գտնվում է Թելավ շրջկենտրոնից ոչ հեռու, դեպի հարավ-արևմուտք, անտառապատ բլրալանջի ոչ մեծ բացատում: Վանքում երեք տաճար կա, որոնցից մեկը՝ հարավակողմինը բազիլիկ եկեղեցի է, երկրորդը և երրորդը՝ քննարկվող տիպի գմբեթավոր եկեղեցիներ:

Գմբեթավոր մեծ եկեղեցին (երկրորդը) մոտ 12,8×8,8 մետր հատակագծային չափեր ունի (երրորդը ավելի փոքր է): Սա ավելի Աթեն տաճարի փոքրացրած նմանակն է, քան Ջվարիի, այստեղ անկյունային սենյակները ստեղծվել են, ինչպես Աթենում՝ ողջ տաճարի հետ միաժամանակ (գծ. 93): Բացարձակ չափերով փոքր, ինչպես և գետաքարով կառուցված լինելու պատճառով Աթենի համեմատությամբ մի քանի հանգույցներ կցալի պարզեցված են: Եկեղեցու հյուսիսային և հարավային ճակատներում մեկական դռներից բացի պատուհաններ չկան. պատուհան չունի նաև արևմտյան խորանը: Շինության ներքին տարածությունը լուսավորվում է գմբեթի չորս և արևելյան խորանի մեկ փոքր չափերի պատուհաններով, անկյունային սենյակները՝ մեկական փոքր անցքեր հիշեցնող պատուհաններով, բացված արևելյան և արևմտյան ճակատների վրա:

Եկեղեցում հյուսիսային և հարավային խորանները արևելյան և արևմտյան խորաններից փոքր են: Այդ տիպի վրացական հուշարձաններից և ոչ մեկում նման բան չկա: Անկյունային սենյակները

Ջվարիում, Աթենում, Մարտվիլիում խաչաձև են, Շուամթայում՝ քառակուսուն մոտ քառանկյունի: Ջվարիի, Աթենի արևմտյան ճակատներում խորշեր չկան, Շուամթայում (նաև Մարտվիլիում) կան: Ջվարիում գմբեթածածկը արտաքուստ ևս կիսագնդաձև է, այստեղ (նաև Աթենում և Մարտվիլիում) բրգաձև: Ջվարիում և Աթենում գմբեթային անցման տրոմպային համակարգը եռաստիճան է, Շուամթայում՝ երկաստիճան:

Եկեղեցու կենտրոնական տարածության խաչաձև դասավորության չորս խորանների միջև $^3/_4$ խորշերը այս տաճարում, ավելի քան Գառնահո;տում, խիստ թեքված են, Գ. Ն. Չուբինաշվիլու արտահայտությամբ «...դրանք տեղադրված են ավելի վուգահեռ-երկայնական առանցքին, քան ուղղված քառակուսու անկյունագծին»[169]: Անկախ դրանից, փոխանցման տրոմպները, որ անմիջականորեն հենված են գմբեթակիր կամարներին, դըրված են անկյունագծով, որով հնարավոր է դարձել գմբեթատակ քառակուսին փոխարկել ութնիստ գըմբեթթմբուկի: Երկրորդ շարքի փոքր տրոմպներով առանց դժվարության ստեղծվում է կիսագնդաձև ծածկի բոլորակ հիմքը:

Մեծ տրոմպները Շուամթայում կիսակոներ չեն, սրանց Գ. Ն. Չուբինաշվիլին անվանում է տրոմպների երրորդ տեսակը՝ գմբեթարդային կամ կոնխային: Երբ տրոմպը ստեղծվում է անկյան վրա, նա չի կարող ունենալ հստակ գմբեթարդի ձև, նրա աղավաղվելը անխուսափելի է: Հենց այդպես է վիճակը Շուամթայում, որտեղ գմբեթային փոխանցումը փաստորեն իրականացվել է երկաստիճան կամարներով, իսկ անկյունը լցվել է քար ու շաղախով, ստեղծելով տրոմպային փոխանցման պատրանք (նկ. 43):

Այս շինության կառուցվածքում անկանոնությունները քիչ չեն, թերևս ավելի շատ, քան տվյալ տիպի տաճարներից որևէ մեկում: Այդ մասամբ բացատրվում է շինանյութի առանձնահատկությամբ. ինչպես ասվեց, շինությունը կառուցված է գետաքարով, ինչ որ չափով մշակված: Ամենուրեք անկյունային մասերը և կրող տարրերը շարված են համեմատաբար կանոնավոր տուֆաքարով:

Շուամթայում արտաքին խորշերը, որ արևելյան և արևմտյան ճակատներում հիմքում սեղանաձև են, իսկ հյուսիսային և հարավային ճակատներում՝ ուղղանկյուն, շատ փոքր խորություն ունեն և հա-



Գծ. 93. Հին Շուամթա-գմբեթավոր մեծ եկեղեցի. հատակագիծ համաչափությունների վերլուծությամբ:

վիվ են արտահայտվում (նկ. 44): Այդ նրանից է, որ խորանները ճակատի ընդհանուր հարթությունից դուրս գալով՝ բացառում են պատի հոծ զանգվածների գոյություն, դրանով իսկ վերացնում խորշի անհրաժեշտությունը: Այստեղ դրանք ստեղծվել են ավելի դեկորատիվ էֆեկտ ստանալու ակնկալությամբ՝ խորանները արտաքին հորինվածքում առավել նշանակալից դարձնելու համար: Այդ ավելի նկատելի է արևմտյան ճակատում. այդ կողմից տաճարը ոչ մուտք ունի, ոչ խորանը՝ պատուհան, ոչ ճակատն է դիտվում անտառի անմիջական մոտ լինելու և ծառերով ծածկվելու պատճառով և ոչ էլ պատն է թեթևանում խորշի շատ փոքր, ընդամենը 25 սանտիմետր խորություն ունենալու կապակցությամբ: Հետևում է, որ այդտեղ խորշեր կարող էին նաև չլինել:

Շուամթա կառուցողին, ինչ խոսք, կարելի է գնահատել, որ նման շինանյութով կարողացել է գլուխ բերել վգալի բարդություններով բնորոշվող այս տիպի տաճար, սակայն այս գործի մեջ տեսնել ճարտարապետի վարգացած և նուրբ ճաշակ, նշանակում է հարցին մոտենալ միակողմանի:

ճարտարապետության մեջ ամեն ձև, դրվագ կամ ամբողջական օրգանիզմ ենթակա է դրական գնահատման, երբ այն կերտված է իր բնույթին համապատասխան չափերով: Շուամթան չունի տվյալ տիպի տաճարներին այս կամ այն չափով համապատասխանող բացարձակ չափեր, այսինքն՝ անմաաշտաբ է ճարտարապետական տվյալ ձևի համար: Շուամթայից շատ ավելի փոքր ծավալի հուշարձաններ կան, նույնիսկ նրա քառորդի չափ, սակայն նրանք այլ ձևի են և ունեն համապատասխան մասշտաբ:

Շուամթայում անկյունային սենյակի լայնությունը մեծ չէ, մեծ չէ նաև $^{3}/_{4}$ խորշի տրամագիծը, սակայն այնտեղ անցնելը, գրեթե անհնար, մեղմ ասած՝ անհարմար է, քանի որ անցում հանդիսացող այդ խորշի բացվածքը ընդամենը 40—50 սմ. է: Ստացվում է «խաղալիքային» մի բան, անկախ նրանից, որ շինության ամբողջական ծավալը շատ էլ փոքր չէ, նույնիսկ մեծ է անմիջապես մոտը գտնվող բազիլիկ եկեղեցուց:

Այս եկեղեցում հատակագծի ստեղծման սխեման նույնն է, ինչ որ էր նախորդ հուշարձաններում, սակայն կառուցվածքի առանձին դրվագներում և հանգույցներում առկա որոշ անկանոնությունների հետևանքով տվյալ սխեման այստեղ կիրառության է արժանացել համեմատաբար պակաս հստակությամբ (գծ. 93):

## ՀԻՆ ՇՈՒԱՄԹԱ-ԳՄԲԵԹԱՎՈՐ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻ

Այս եկեղեցին նախորդից տարբերվում է նրանով միայն, որ իր անկյուններում չունի սենյակներ՝ ավանդատներ: Այն ուսումնասիրվող տիպի տաճարների շարքում է շնորհիվ $^{3}/_{4}$ խորշերի առկայության (գծ. 94): Մոտավորապես այս ձևն է ունեցել նաև սկզբնապես կառուցված Զվարթնոց, երբ անկյուններում սենյակներ չուներ, բայց $^{3}/_{4}$ խորշեր ուներ: Սկզբունքով այսպիսին է նաև կախեթական ճարտարապետության հուշարձաններից Կվետերան, որ անկյուններում դարձյալ սենյակներ չունի, սակայն $^{3}/_{4}$ խորշեր ունի[170]:

Այս հուշարձանում ևս նախորդի նման փոքր չափեր ունեն $^{3}/_{4}$ խորշերը, առավել ևս եկեղեցու կենտրոնին ուղղված բացվածքները (35 սանտիմետր), բայց քանի որ դրանց նշանակությունն այստեղ օգտագործելի չէ՝ դրանք չեն հանդիսանում անցումներ դեպի անկյունային սենյակներ, ճարտարապետը այդ խորշերը արել է նեղ, դեկորատիվ խնդիրները լուծելու առնչությամբ միայն, հետևաբար դրանց նկատմամբ այլ պահանջներ ներկայացնելն ավելորդ է:

Փոքր Շուամթայի հատակաձևը սկզբունքով բավական մոտ է դեռևս VI դարավերջում կառուցված Մաստարայի հատակաձևին. տարբերությունը $^{3}/_{4}$ խորշերի առկայությունն է այստեղ, մինչ տրոմպները անհամեմատ փոքր են Մաստարայի արտակարգ մեծ տրոմպներից:

Այս տաճարի ներքին տարածությունն ստեղծում են չորս կիսաշրջան խորանները, անկյունների փոքր չափերի խորշերը և դրանց վրա բարձրացած գմբեթը:

Խորանները արտաքին ճակատների վրա արտահայտվում են կիսաթմբաձև, յուրաքանչյուրը երեք մեծ և երկու փոքր նիստերով, նրանց միջև՝ $^{3}/_{4}$ խորշերը՝ անկյունաձև ծավալներով:

Եկեղեցին մուտք ունի միայն հարավակողմից, պատուհան՝ արևելյան խորանում և չորս հատ գմբեթաթմբուկի նիստերի վրա:

Փոքր Շուամթայի գմբեթը ամբողջությամբ վերակառուցված է և անհամաչափ բարձրացված: Տեղում պահպանվում է նախկին գմբեթի ներքնամասը միայն և ահա այդ մնացորդն իր յուրահատուկ կորագծով (տե՛ս կտրվածքը գծ. 94) հնարավոր է դարձնում համոզվելու, որ սկզբնապես կառուցված տաճարը գմբեթաթմբուկ չի ունեցել, այլ միայն կիսագնդաձև ծածկ ու փոքր բարձրության կոնաձև, թերևս՝ բրգաձև տանիք (նկ. 45):

Այս կառուցվածքին գմբեթաթմբուկով չօժտելը եղել է կանխամտածված: Այն միաժամանակ հանդիսացել է դամբարան և իր համեստ նշանակությամբ վիճող մի քանի քայլի վրա գտնվող, կողք-կողքի կանգնած եկեղեցիներին:

Հուշարձանախմբի միասնական կոմպոզիցիայի առումով կառուցողը միանգամայն ճիշտ է եղել իր որոշման մեջ: Բազիլիկ տաճարի փոքր բարձրությունը նկատի առնելով, իր տաճար-դամբարանը ևս թողել է ցածր: Այս պարագաներում դրանց միջև գտնվող առավել բարձր գմբեթավոր եկեղեցին, իր գմբեթով հանդերձ, անկասկած գլխավորել է ողջ կոմպլեքսը: Այլ կերպ էլ չէր կարելի անել, մանավանդ, որ դրանք, այդ եկեղեցիները կանգնած են միմյանց շատ մոտ:




Գծ. 94. Հին Շուամթա գմբեթավոր փոքր եկեղեցի, հատակագիծ և կտրվածք:

Փոքր եկեղեցու գմբեթի հետագա բարձրացումով ստացվել է ինչ-որ երկվություն. խախտվել է ոչ միայն բուն տաճարի հորինվածքային համամասնությունը վերի ու վարի մասերի միջև, այլև այդ երեք տաճարների միջև, ինչպես նրանց ունեցած նշանակության, այնպես էլ ճարտարապետական համակարգի միասնության և ներդաշնակության առումով:

Այս եկեղեցին մյուսներից ուշ է կառուցվել, ավելի ուշ մինչ այդ կառուցված տետրակոնխերից, որոնցից մի քանիսը հանդիսանում են գմբեթավոր եկեղեցիների նախօրինակը, առաջին բջիջը՝ գմբեթավոր քառակուսին, չորս կողմերից հպված գմբեթարդ հենախորշերով:

Շուամթայի փոքր եկեղեցին իր 3/4 խորշերով այդ նախնականից շատ է հեռացել և ոչ մի դեպքում չի կարող նախնական բջիջը ներկայացնելու հավակնություն ի հայտ բերել:

Հին Շուամթայի տաճարները շատ նորոգումներ են կրել, սակայն այժմ գտնվում են լավ վիճակում: 1966 թվականի սեպտեմբերին իմ ներկայությամբ նորոգվում էր այս եկեղեցիներից մեծը, որպես շինանյութ թե պատերի, թե ծածկի համար օգտագործվում էր նույնը, ինչով կառուցված էր բուն եկեղեցին, ամեն ջանք գործ էր դրվում, որ ամեն ինչ արվի հին ձևով: Առաջին հայացքից թվում էր, թե եկեղեցին սկզբի օրվանից մինչև այսօր անվնաս մնում է այնպես, ինչպես կառուցվել է ու չի կրել որևէ նորոգում:

Կարելի է համոզվել, որ գետաքարով ավելի լավ կառուցել, քան իր ժամանակին կառուցվել են այս հուշարձանները, հնարավոր չէ:

Այս երեք տաճարները զբաղեցնում են անտառային բացատի հյուսիս-արևմտյան անկյունը, թողնում են հանգիստ, անվրդով, հաճելի տպավորություն:

## ՄԱՐՏՎԻԼԻ

Մարտվիլին Ջվարիի տիպի տաճարներից է, գտնվում է Քութաիսիից ավելի քան 30 կիլոմետր հյուսիս-արևելք, լայն հորիզոն ընդգրկող մի գեղատեսիլ բարձրավանդակի վրա:

Այս տաճարը տարիներ առաջ համարվում էր X—XI դարերի հուշարձան: Իր հետազոտություններում Գ. Ն. Չուբինաշվիլին հանգել է այն եզրակացության, որ Մարտվիլին սկզբնապես կառուցվել է VII դարում, վերակառուցվել X—XI և հաջորդ դարերում: Այդ կապակցությամբ Ա. Վ. Կուզնեցովը գրում է. «Բացի արդեն հիշատակված Աթենի Սիոնից, Ջվարիի կրկնօրինակների այդ շարքը պիտի դասել նաև Մարտվիլի Չկոնդիդի (Աբխազիայում) տաճարը: Այս տաճարը X դարում ենթարկվել է նշանակալից վերափոխության, ըստ որում, գմբեթաթմբուկը խիստ բարձրացվել է»[171] (նկ. 46):

Որ այս տաճարի այժմյան գմբեթը նոր է, հասկանալի է ու չի վիճարկվում, ինչ վերաբերում է



Գծ. 95. Մարտվիլի. հատակագիծ:



Գծ. 96. Մարտվիլի. հատակագծի համաչափությունների վերլուծություն:

հիմնական ծավալին, այն այնքան նորոգություններ է կրել, որ արտաքինից զրկվել է տաճարների տվյալ տիպը բնորոշող հորինվածքային պատկերից: Տաճարի միայն ներքին կազմությամբ է պարզվում, որ այն Ջվարիի տիպի հուշարձան է, ունի խաչաձև դասավորության չորս խորաններ, անկյուններում ³/₄ խորշեր և ավանդատներ (գծ. 95):

Իր որոշ դրվագներով Մարտվիլին մյուս տաճարների շարքում գրավում է իր ուրույն տեղը և ներկայացնում է զգալի հետաքրքրություն: Այն առավել մանրամասն ուսումնասիրվել է «Ջվարիի տիպի հուշարձաններ» աշխատության գլուխներում: Այստեղ նշվում են լոկ որոշ հանգույցներ, որոնք իրենց լուծմամբ ուրույն են և տարբերվում են տվյալ տիպի մյուս տաճարների համապատասխան հանգույցներից և այս կամ այն չափով առնչվում են Ավանի հետ:

Տաճարի հատակաձևում որոշ կողմեր զարմանալիորեն հիշեցնում են ոչ թե տիպը Վրաստանում գլխավորող Ջվարին ու Աթենը, այլ շատ ավելի հեռու գտնվող Կախեթիայի հուշարձանները և, առաջին հերթին Նինոծմինդան: Բանն այն է, որ դրանցում խորանները կիսաշրջանից բավական ավելի են, այն էլ պայտաձև, որ սակայն տվյալ դեպքում հնության նշան չէ. այդպիսի խորաններ ունեն Կախեթիայի նաև XI—XIII դարերի հուշարձաններից շատերը:

Նույն կարգի նմանություններ ունեն նաև նախախորանները: Սովորաբար նախախորանները խորաններից լայն են լինում և ունենում են ուղղագիծ կողեր. այստեղ նույնպես լայն են, սակայն ուղղագիծ չեն և այլ եզրանկարի են: Դրանց, ինչպես խորանին, այնպես էլ որմնամույթին կից մասերը առաջանում, միջնամասը ետ է մնում, նախախորանի երկու կողերը ստանում են միմյանց ուղղված երկու տաշտանման հարթությունների ձև:

Ուշագրավ է, որ այս տաճարի երկու կողային խորանների եզրակամարից հետո առկա են շատ փոքր չափի նախախորաններ: Այս պայմաններում բոլոր գմբեթակիր կամարները ստացվում են հավասար թռիչքներով և հավասար բարձրությամբ: Որպես սրա հետևանք, անկյունների ³/₄ խորշերն իրենց բացվածքներով ճշտորեն ուղղվում են գմբեթատակ քառակուսու կենտրոնին: Հատակաձևում ստեղծվող այս կանոնավորությունը ակներև իր բարերար հետևանքներն է ունենում գմբեթի կանոնավոր հիմքի ստեղծման ընթացքում:

Մարտվիլիում յուրահատուկ է նաև գմբեթային փոխանցման համակարգը։ Այստեղ ոչ տրոմպներ կան, ոչ առագաստներ, կան միայն հաջորդաբար մեծացող թռիչքներով կամարներ, ինչպես և ութ փոքր կամարիկներ, որոնք մեկը մյուսին հենվելով՝ հասնում են գմբեթի հիմքով անցնող գոտուն, ստեղծելով նրա համար բոլորակ հիմք լիակատար շրջագծի ձևով։ Գմբեթային փոխանցման իր համակարգով Մարտվիլին ինչ-որ չափով կապվում է Ավանի հետ, որտեղ փոխանցման համակարգը ստեղծված էր հիմնականում հաջորդաբար մեծացող կամարներով։

Եթե այս տիպի բոլոր տաճարներում գմբեթային փոխանցման համակարգը սկսվում է որմնամույթերի խոյակի վրայից, ապա Մարտվիլիում այն նախապատրաստվում է դեռևս որմնամույթի բարձրության վերին մեկ երրորդից։ $^3/_4$ խորշերի երկու կողմերի որմնամույթերը վերնամասում իրենց լայնության կեսի չափով բեկվելով առաջանում, ստեղծում են $^3/_4$ խորշերի ճակատային պատի հարթությանը զուգահեռ հարմարագույն հիմք գմբեթային փոխանցման կամարների համար։ Անկախ որմնամույթերի վերնամասի տեկտոնիկ խախտման, ճարտարապետի այդ հնարանքը սրամիտ է։

Այս դրվագը ակներև հանդիսանում է Ավանի նույն դրվագի մի տարբերակը, ստեղծված հաջորդ ժամանակաշրջանում։

Մարտվիլի տաճարի ներքին հատակաձևի ստեղծման սխեման քիչ կողմերով է նման նախորդներին (գծ. 96)։ Այստեղ ևս հյուսիսային և հարավային խորանների գագաթներով տարված շրջագիծը անցնում է արևելյան և արևմտյան խորանների կենտրոններով։ Գմբեթի ներքին տրամագծի կրկնակի չափն ունի տաճարի ոչ թե արտաքին, այլ ներքին լայնքը և $2^1/_2$ տրամագծաչափի է տաճարի ոչ թե արտաքին, այլ ներքին երկարությունը։ Հյուսիսային և հարավային խորանների կենտրոնները, որ կարճ առանցքի վրա են, վերջինիս հատում են արևելյան և արևմտյան խորանների ոչ թե ներքին, այլ արտաքին գագաթներից մեծ առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ եկող գծերը։ Այստեղ $^3/_4$ խորշերի կենտրոնները գտնվում են գմբեթատակ քառակուսու անկյունագծերի և հյուսիսային ու հարավային խորանների եզրագծերի (որ անցնում են որմնամույթերի թիկունքով) հատման տեղում։

## ԿՎԵՏԵՐԱ

Կվետերան քննարկվող տիպի այն տաճարներից է, որ անկյուններում սենյակներ չունի, սակայն $^3/_4$ խորշեր ունի (գծ. 97)։ Ինչպես նախորդ գլուխներում տեսանք, այդպիսին էին Ջվարիի սկզբնապես կառուցված տաճարը և Շուամթայի գմբեթավոր փոքր եկեղեցին։ Ըստ որում Կվետերան իր թևերի երկարած համաչափություններով ավելի մոտ է Ջվարիին, քան Շուամթային, որի թևերը արտաքուստ փոքր չափով են արտահայտվում կենտրոնական ծավալի չորս կողմերում։ Կվետերան Ջվարիի սկզբնական տեսքից տարբերող կողմերից է այն, որ սրանում խաչաթևերի միջև առկա $^3/_4$ խորշերը բոլորակ են նաև արտաքուստ, մինչ Ջվարիում դրանք ուղղանկյուն ծավալներ են։ Դեռ ավելին, Կվետերայում տաճարի ստորին մասը կազմավորում են հիմնականում խաչաթևերի ծավալները, իսկ $^3/_4$ խորշերի բոլորակ ծավալները, որ չափերով բավական փոքր են ու ցածր, մասամբ միայն լցնում են խաչաթևերով ստեղծված անկյունները։ $^3/_4$ խորշերի տանիքի վերևում շատ փոքր չափերով արտահայտվում են գմբեթակիր կամարների շարունակությունը կազմող անկյունավոր ծավալներ, որոնցով հասկացվում է, որ գմբեթատակ տարածությունը հիմքում քառակուսի է, և ոչ բոլորակ։ Այդ փոքր ծավալներն ունեցել են իրենց առանձին տանիքները, որոնց գագաթները հավիվ թե հասնեին թևերի խաչմերուկի վրա բարձրացած գմբեթի հիմքով անցնող գոտուն։

Ջվարիում, ընդհակառակը, տաճարի արտաքին հորինվածքում հիմնականը գմբեթատակ կենտրոնական մեծ չափերի ծավալն է, որի չորս կողերին հպվում են խաչաձևություններ ստեղծող չորս, համեմատաբար փոքրածավալ խորանները։ Խորանների միջև անկյունաձև երևում են կենտրոնական ծավալի անկյունային մասերը և ոչ լրացուցիչ ծավալներ, ինչպես Կվետերայում է, ըստ որում, այստեղ՝ Ջվարիում գմբեթը բարձրանում է կենտրոնական ծավալի վրա։

Կվետերան, որը իրենով ևս բնորոշում է կախեթական ճարտարապետության ինքնահատուկ դեմքը, հատակաձևի կազմությամբ և որոշ մանրամասներով (հատկապես նախախորանների ուրվագծերով) թերևս ավելի մոտ է Նինոծմինդային. սա ավելի աստղաձև է, ոչ միայն չորս խորան-



Գծ. 97. Կվետերա. հատակագիծ:

ներն են միմյանց հավասար, այլ գրեթե նախախորանները ևս, այնպես որ տաճարը սիմետրիկ է բոլոր առանցքներով: Արևելք-արևմուտք գծով տաճարը փոքր չափով՝ ընդամենը մեկ մետրով է երկար հարավ-հյուսիս չափերից: Այսպես է նաև փոքր Շուամթան, մինչդեռ Ջվարին, Աթենը, մեծ Շուամթան արևելք-արևմուտք առանցքով իրենց լայնության համեմատ բավական երկար են:

Կվետերայի չորս խորանների և չորս $^3/_4$ խորշերի հանդիպումներում որմնամույթերն են, որոնք ոչ թե սովորականի պես հարթ են, այլ ստեղծված են երեքական, հիմքում կիսաբոլորակ սյուների խրձերով: Ըստ որում, ամեն դեպքում երեքական սյուներից երկուսականը ուղղված են միմյանց՝ մի դեպքում հանդիսանալով հիմք գմբեթակիր կամարների, մյուս դեպքում՝ $^3/_4$ խորշերի եզրակամարների համար:

Այս տաճարում գմբեթային փոխանցման համակարգը նույնպես յուրօրինակ է ու հետաքրքիր: Այդպիսին լինելով հանդերձ, նա իր մեջ կրում է սկզբունքային այն գծերը, որոնք ստեղծվել են դեռևս տաճարների այդ տիպի կազմավորման ժամանակներում: Այստեղ, նախախորանների, ինչպես և $^3/_4$ խորշերի եզրակամարները հենվում են որմնամույթերի խոյակների վրա, մինչ դրանց երկրորդ կամարները, որ մի քիչ առաջացած լինելով,



Գծ. 98. Կվետերա. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով:

թռիչքով, հետևաբար և բարձրությամբ ավելի մեծ են ու բարձր, հենվում են նույն խոյակներից դուրս եկած բարձակների (КОНСОЛЬ) վրա: Երեք-քառորդ խորշերի այդ երկրորդ կամարների վրա բարձրանում են պատեր, որոնց առկայությամբ գմբեթատակ քառակուսին այդ բարձրության վրա փաստորեն դառնում է անկյունները կտրած քառակուսի, ավելի ճիշտ՝ բազմանկյունի — չորս լայն և չորս նեղ նիստերով: Երեք քառորդ խորշերի այդ ճակատային պատերը վերևից սահմանափակվում են երկտակ կամարներով, որոնք անմիջականորեն հենվում են գմբեթակիր կամարների վրա: Այս վերջինների բարձրությանը հավասար, գմբեթակիր կամարների վրա բարձրանում են լուսնաձև եզրագծով ուղղաձիգ պատեր. այսպիսով ստացվում են նույն բարձրության ութ հավասարաթռիչք կամարներ: Այս ութ կամարների միջև, նրանց հանդիպման կետերից սկսվելով՝ վեր են բարձրանում ութ առագաստային հատվածներ: Այս ամենի վերևով անցնում է միավորող, ընդհանրացնող քարի մի շարք ու նրա վրա՝ գմբեթաթմբուկի բոլորակ հիմքը կազմող, ձևավոր կողադեմով գոտին (գծ. 98):

Գմբեթային փոխանցման վերևում նկարագրված համակարգը ոչ տրոմպային է, ոչ լրիվ առագաստային. այստեղ իրականում առկա է անցման կոմբինացված եղանակը, ճիշտ այն սկզբունքով,

ինչպիսին առաջին անգամ գործադրվել է Ավանում՝ այդ ժամանակներից երեք-չորս դար առաջ: Ահա մի վառ օրինակ, թե ինչպես վարգացած միջնադարի վարպետները նորը ստեղծելու ճանապարհին, երբեմն հրաժարվելով իրենց ժամանակակից կառուցելակերպից ու նվաճումներից (տվյալ դեպքում՝ գմբեթային փոխանցման առագաստային համակարգի գործադրումից) օգտագործում էին վաղ միջնադարի տաճարաշինության որոշ սկզբունքները, նվաճումները, երբեմն նաև՝ կոնկրետ ձևերը (նկ. 47):

Կվետերայի գմբեթը ներսից հիմքում բոլորակ է, ծածկը՝ կիսագնդաձև: Տաճարի թևերը արտաքուստ հնգանիստ են, հանդիպումների անկյուններում բոլորակ հիմքով որմնասյուների փնջեր են, միմյանց հետ կապված կամարաղեղներով: Նույնպիսի դեկորատիվ սյունակամարաշարի մոտիվով է միջակված նաև գմբեթը:

Անկախ հատակաձևի ուրվագծային ակներև մասնատվածության, լավ գտնված չափերով գմբեթի առկայությամբ տաճարն ընկալվում է հավաքված, ձևերով ու համաչափություններով ավարտված ստեղծագործություն:

Տասնմեկերորդ դարում Կախեթը հասել էր մեծ հզորության և մրցակցում էր Վրաստանի հետ: Աբխազո-վրացական թագավոր Բագրատ Դ-ն (1027—1072) Կախեթի վրա ձեռնարկած իր արշավանքի ընթացքում (1059—1060) չի կարողանում գրավել լավ ամրացված Կվետերա ամրոցը (Թելավից հյուսիս-արևմուտք, մոտ 30 կիլոմետրի վրա, Ալազան և Իորի գետերի միջև, կախեթական լեռնաշղթայի փեշերին):

Գ. Ն. Չուբինաշվիլու կարծիքով, հենց այդ ժամանակ էլ՝ XI դարում պիտի կառուցված լինի ամրոցի ներսում գտնվող այս եկեղեցին: Կախեթական թագավորները[172] Կվետերա ամրոցի մշտական հաճախորդներն էին, նրանք էլ իրենց համար պիտի կառուցած լինեն այդ, կարելի է ասել՝ պալատական եկեղեցին[173]:

Ստորև բերվում է աղյուսակ, որը պարունակում է աշխատության մեջ քննվող տաճարների հատակագծային չափեր[174] ու համաչափություններ արտահայտող տվյալներ: Աղյուսակում Վրաստանի յոթ հուշարձանների տվյալներին տեղ հատկացնելը նպատակ է հետապնդել ստանալ տվյալ տիպի տաճարների վերաբերյալ առավել ամբողջական պատկեր:

| | №№ ըստ կարգի | Տաճարի անունը | Ներքին երկարությունը A | Ներքին լայնությունը B | Գմբեթի ներքին տրամագիծը D | Նախախորանի լայնքը l | 3/4 խորշի տրամագիծը d | A/B | A/D | D/l | D/d |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայաստանում գտնվող հուշարձաններ | 1 | Ավան | 16,80 | 14,05 | 8,73 | 1,16 | 2,17 | 1:1,19 | 1:1,92 | 7,52 | 4,02 |
| | 2 | Սրամուս | 13,50 | 10,95 | 6,22 | 1,45 | 1,10 | 1:1,23 | 1:2,17 | 4,29 | 5,65 |
| | 3 | Գառնահովիտ (Ադիաման) | 17,40 | 13,30 | 8,30 | 1,63 | 2,56 | 1:1,31 | 1:2,09 | 5,72 | 3,24 |
| | 4 | Հռիփսիմե | 20,80 | 16,10 | 9,81 | 2,08 | 2,52 | 1:1,29 | 1:2,12 | 4,70 | 3,88 |
| | 5 | Թարգմանչաց վանք | 13,00 | 9,70 | 5,95 | 1,15 | 1,85 | 1:1,34 | 1:2,18 | 5,17 | 3,21 |
| | 6 | Սիսիան | 16,15 | 12,10 | 7,20 | 2,10 | 2,12 | 1:1,36 | 1:2,43 | 3,43 | 3,40 |
| | 7 | Զորադիր | 14,45 | 11,35 | 6,40 | 2,15 | 1,15 | 1:1,30 | 1:2,26 | 3,55 | 5,56 |
| | 8 | Քոլատակ | 15,50 | 12,30 | 7,80 | 1,80 | 1,95 | 1:1,26 | 1:1,98 | 4,32 | 4,00 |
| | 9 | Աղթամար | 15,10 | 11,60 | 7,00 | 1,20 | 1,90 | 1:1,30 | 1:2,16 | 3,68 | 5,73 |
| | 10 | Վարագավանք | 12,00 | 9,35 | 6,00 | — | 1,28 | 1:1,28 | 1:2,00 | — | 4,70 |
| Վրաստանում գտնվող հուշարձաններ | 1 | Նինոծմինդա | 19,70 | 19,00 | 9,40 | 2,50 | 4,20 | 1:1,03 | 1:2,09 | 3,76 | — |
| | 2 | Ջվարի | 20,20 | 16,30 | 9,35 | 2,23 | 1,95 | 1:1,24 | 1:2,16 | 4,20 | 4,80 |
| | 3 | Աթեն | 20,90 | 16,95 | 9,35 | 2,00 | 2,00 | 1:1,23 | 1:2,24 | 4,19 | 4,67 |
| | 4 | Ծուամթա (մեծը) | 10,10 | 7,90 | 4,75 | 1,05 | 0,80 | 1:1,28 | 1:2,12 | 5,94 | 4,52 |
| | 5 | Մարտվիլի | 17,90 | 15,65 | 7,70 | 2,65 | 2,20 | 1:1,14 | 1:2,32 | 2,90 | 3,50 |
| | 6 | Ծուամթա (փոքրը) | 6,80 | 5,80 | 3,50 | — | 0,65 | 1:1,17 | 1:1,94 | — | 5,38 |
| | 7 | Կվետերա | 9,00 | 8,00 | 3,70 | 1,25 | 0,90 | 1:1,13 | 1:2,43 | 2,96 | 4,11 |

# ԱՎԱՆԱՏԻՊ ՏԱՃԱՐՆԵՐԻ ՀԱՏԱԿԱՁԵՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկա աշխատության էջերում նայվող հուշարձաններից յուրաքանչյուրում առկա համաչափությունների, այդ տաճարների ուրվագծերի ստացման ճանապարհների՝ հատակաձևերի ու ծավալատարածական հորինվածքների ստեղծման ընթացքի վերաբերյալ ավելց համապատասխան գլուխներում: Ամեն դեպքում բերվեցին կոնկրետ կառուցվածքում բացահայտված օրինաչափությունները, ինչպես և տեղ գտած շեղումները: Այդ բոլորի համեմատության արդյունքներով ի հայտ են գալիս ընդհանրական երևույթներ, որոնց կանոնական սահմանումը բանաձևի բնույթով, ինքնին անհրաժեշտություն է:

Տրամաբանական է, որ այս կարգի տաճարների ճարտարապետական օրգանիզմը չէր կարող կազմավորվել դիպվածորեն, որպես հետևանք պատահական հանգամանքների: Այդ առավել ևս տվյալ դեպքում, երբ նայվում են որոշակի ժամանակաշրջանի ընթացքում սկզբնավորված, կարգացման ճանապարհ անցած, լիակատար, դասականորեն ավարտուն տեսք ստացած մի մեծ խումբ տաճարներ, որոնք անվանվում են «Ավան-Հռիփսիմեի» (Հայաստան) և Ջվարիի (Վրաստան) տիպի հուշարձաններ:

Սրանց հատակագծային և ծավալատարածական ուրվագծերը իրենց չափային և ձևական արտահայտություններով, ներկա բացահայտմամբ հետևանք են ժամանակի ընթացքում **կանոնիկ բնույթ ստացած համակարգի (սիստեմի)**: Ըստ որում, պարզվում է, որ այդ համակարգի կանոնները կամ նրանց որոշ կողմերը չեն կրում խիստ դոգմատիկ բնույթ. տարբեր հուշարձաններում դրանք այս կամ այն չափով, որոշակի սահմաններում ունենում են շեղումներ, ամեն դեպքում բխում կոնկրետ պայմաններից և իրավիճակից: Այս շեղումները անսպասելի չեն և իրենց բնույթով ո՛չ բացառիկ: Աշխարհի բոլոր ոճերով ստեղծված դասական հուշարձաններում տվյալ երևույթը կա և այդ բնական է, ուր նույնիսկ անհրաժեշտ, միօրինակությունից խուսափելու առումով:

Տարբեր հետապոտություններով բացահայտված է, որ մեր կենտրոնագմբեթ հուշարձաններում կերտվածքի ընդհանուր և առանձին մասերի չափերի հիմքում դրված է գմբեթի ներքին տրամագիծը (հասկանալի է՝ իր բաղադրիչ մասերով)[176]:

Գմբեթը տվյալ տիպի կառուցվածքներում հորինվածքի դեմքի բնորոշման առումով գլխավորն է, բնականաբար մյուս մասերը արվեստի պարզ օրինաչափություններով, պիտի լինեն նրան ենթակա, մի բան, որ վերաբերում է այդ մասերի նաև չափային կողմին: Սա անհրաժեշտ է ստեղծագործության բոլոր մասերի միջև լիակատար ներդաշնակություն ունենալու համար:

Կերտվածքի օրգանիզմում առանձին մասերի չափերից բացի, անհրաժեշտ է դրանց՝ այդ մասերի նաև նպատակային ճիշտ տեղադրումը: Տրվյալ դեպքում տաճարի հատակաձևի ստեղծման հիմքում գմբեթի չափերը պայմանավորողը[177] գմբեթատակ քառակուսին է, որի շուրջն էլ համախմբվում է հատակաձևի ամբողջական հյուսվածքը[178]:

Ինչպես բերված է «Հատակագծի ստեղծման ընթացքը» գծագրի (գծ. 99) Ա պատկերում, առաջին քայլը գմբեթատակ քառակուսու չափերի ընտրությունն է: Այդ չափը ճարտարապետը ստանում է պատվիրատուից, քանի որ դրանով էլ կանխորոշվում են տաճարի գրեթե բոլոր չափերը:

Հատակագծի ստեղծման ճանապարհին երկրորդ քայլը տաճարի ներքին երկարության և լայնության որոշումն է: Դրա համար գմբեթատակ քառակուսու չորս կողերի միջնակետերից, այդ կողերի նկատմամբ 30°-ի անկյան տակ դեպի աջ և դեպի ձախ տարվում են գծեր, այնպես, որ դրանցից յուրաքանչյուր զույգը միմյանց հանդիպեն քառակուսու երկու հիմնական առանցքների վրա, ինչպես որ պատկերված է 99-րդ գծագրի Բ պատկերում: Ահա այդ հանդիպման չորս կետերից արևելք-արևմուտք առանցքի վրայի երկուսը հանդիսանում են արևելյան և արևմտյան կիսա-




Գծ. 99. Տիպական հատակագծի ստեղծման ընթացքը:

շրջանաձև խորանների կենտրոնները, իսկ հյուսիս-հարավ առանցքի վրա գտնվողները հանդիսանում են հյուսիսային և հարավային կիսաշրջան խորանների գագաթնակետերը: Այդ էլ ցույց է տրված 99-րդ գծագրի Գ պատկերում[179]:

Հատակագծի ստեղծման երրորդ քայլը ցույց է տրված նույն գծագրի Դ պատկերում. տաճարի չորս անկյուններում՝ արևելյան և արևմտյան խորանների երկու կողմերում տեղադրվել են չորս, քառակուսի հիմքով ավանդատներ, իսկ կառուցվածքի ներքին բովանդակությունն ամբողջությամբ առնվել է արտաքին ուղղանկյուն-քառանկյան մեջ[180]:

Հատակագծի ստեղծման հաջորդ քայլը ներկայացված է այդ գծագրի Ե պատկերում, որտեղ տեղադրված են տաճարի կենտրոնական մասի և ավանդատների միջև կապ և անցում հանդիսացող, հիմքում $^3/_4$ շրջագծային խորշերը: Այդ խորշերի կենտրոնները ընկնում են գմբեթատակ քառակուսու կենտրոնից $^3/_4$ տրամագծաչափի շառավղով տարված կորագծի վրա, ճշտորեն այն կետերում, որտեղ այդ շրջագիծը հատում են գմբեթատակ քառակուսու կենտրոնից, հյուսիս-հարավ առանցքի ուղղության վրա $^1/_4$ տրամագծաչափ հեռվից, 30°-ի անկյան տակ տարված գծերը[181]. նաև այն գծերը, որոնք տարվում են գմբեթատակ քառակուսու արևելյան և արևմտյան կողերի միջնակետերից արևելք-արևմուտք առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ:

Որպես այս բոլորի տրամաբանական հետևանք, հիմքում կազմավորվում, իրենց որոշակի տեղն ու տեսքն են ստանում գմբեթակիր ութ որմնամույթերը:

Հատակագծի ստեղծման վերջին քայլը բերված է այդ նույն գծագրի Զ պատկերում, որտեղ տեղադրված են հատակագծի մանրամասները՝ դռները, պատուհանները, եռանկյունի, երբեմն սեղանաձև հիմքով խորշերը և տաճարը պարագծով շրջանցող եռաստիճան որմնախարիսխը: Ըստ որում, ավանդատների պատուհանների դիրքը ևս որոշ դեպքերում ենթարկվում է տվյալ սխեմայի կանոններին. այսպես՝ արևելյան և արևմտյան պատուհանների առանցքները գտնվում են տաճարի կենտրոնից երկար առանցքի նկատմամբ 30°-ի անկյան տակ տարված գծերի վրա, իսկ հյուսիսային և հարավային պատուհանների առանցքները՝ նույն կենտրոնից առանցքների նկատմամբ 45°-ի անկյան տակ տարված գծերի վրա:

Ներկայումս հնարավոր չէ բացահայտել այդ շինություններում առկա բոլոր «մանրուքների» առնչությունը գմբեթի տրամագծի բաղադրիչների հետ և, այն էլ անալիտիկ ձևով՝ կոնկրետ թվական տվյալների հիման վրա, քանի որ այստեղ քննվող ոչ բոլոր տաճարներն ունեն անհրաժեշտ մակարդակի մասնագիտական չափագրություն: Դեռ ավելին, այդ տաճարների վզալի մասը գտնվելով ավերակ վիճակում, զրկում է երբեմնի կանգուն կառուցվածքի ճշգրիտ չափերն ունենալու հնարավորությունից:

Նկատի պետք է ունենալ նաև այն, որ հուշարձան կառուցողները, կանապան հանգամանքների թելադրմամբ ո՛չ բոլոր դեպքերում են հետամուտ եղել, որ բոլոր մանրամասները իրականացվեն նախանշված չափերով և կամ դրանք՝ այդ մանրամասները եղծվել են, փոխվել տարբեր ժամանակներում այլ և այլ նորոգումներով: Այս պայմաններում առաջարկված չափի որևէ միավոր կամ մոդուլ, ըստ էության, չի կարող բավարարել լիակատար ճշգրիտ լինելու պահանջը, որից ելնելով էլ այդպիսիք այստեղ չեն բերվում:

Այժմ տեսականորեն բացահայտված համակարգի կանոններով ստեղծված այստեղ բերվող հատակագիծը (գծ. 100) սկզբունքով չի տարբերվում Հռիփսիմեի հատակագծից: Եղած տարբերությունները հետևանք են այն բանի, որ տարբեր են գմբեթատակ քառակուսիները. այստեղ այն իրոք քառակուսի է, բոլոր կողերն ունեն տասական մետր երկարություն, մինչ Հռիփսիմեում գըմբեթատակ քառակուսին 50—60 սմ-ի չափով ձգված է հյուսիս-հարավ առանցքով: Դրա շնորհիվ Հռիփսիմեում $^3/_4$ խորշերի բացվածքները անկյունագծի նկատմամբ առավել կանոնավոր են՝ պակաս շեղված: Այս տիպի մյուս տաճարներից մի քանիսում ներկա համակարգի նկատմամբ շեղումներն արտահայտվում են գմբեթատակ քառակուսու ձևերով, խորանների կենտրոնների չնչին տեղաշարժումով և այլ մանրամասներով, որոնք և պատկերված են այդ տաճարների հատակագծերի համաչափությունների համար կազմված գծագրերում:

Հատակաձևերի ստեղծման այս համակարգսխեման հնարավոր լիակատարության է հասել




Գծ. 100. Տիպական հատակագծի ստեղծման կանոնական համակարգը:

Հռիփսիմեում և գործադրվել առավելապես Հռիփսիմեի ու նրանից անմիջապես հետո կառուցված այդ տիպի, գրեթե բոլոր տաճարներում:

Այս տիպի տաճարների **ծավալատարածական հորինվածքի** կերտման ընթացքում նույնպես գործել է որոշակի համակարգ: Այդ բերված է Ավան,

Թարգմանչաց, Զորադիր և այլ տաճարների համար նոր առաջարկված վերակազմական գծագրերում: Այստեղ երևում է, որ գմբեթի արտաքին տրամագծի կրկնակի չափն ունի ողջ տաճարի բարձրությունը, որի կեսն ընկնում է գմբեթին իր վեղարով: Ըստ որում, գմբեթաթմբուկի և վեղարի բարձրությունները միմյանց հավասար են: Մնացած մանրամասները պարզ երևում են վերոհիշյալ վերակազմություններում:

Այստեղ ևս առկա են շեղումներ և դրանցով է, գլխավորապես, որ անհրաժեշտաբար միմյանցից տարբերվում են տվյալ տիպին պատկանող մյուս հուշարձանները:

Այժմ բացահայտված վերոհիշյալ համակարգերը հայտնի են եղել այդ տաճարները կառուցողներին: Հասկանալի է, որ եկեղեցիների կառուցումները տեղի են ունեցել հոգևոր կենտրոնի իմացությամբ և, որ նրանց կողմից էլ թելադրվել են կառուցվելիք շինության տիպն ու չափը: Տվյալ դեպքում նրանք բավարարվել են կառուցող համայնքին տալով տաճարի գմբեթաչափը՝ ներքին տրամագիծը, մնացածը հայտնի է եղել ճարտարապետին: Թերևս սրանով էլ բացատրվի նույնիսկ նույն գմբեթաչափին ունեցող տաճարներում առկա տարբերությունները, գլխավորաբար մանրամասներում:

Տվյալ տիպի հուշարձանների հատակաձևերի ստեղծման համակարգը ինչպես ասվեց, մեծ չափով օգնում է տաճարների կառուցման հաջորդականությունը պարզելու, ասել է, թե դրանց թվագրությունը ճշգրտելու գործում:

## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Եգիպտական արվեստը իր բարձունքում էր, և դեռ կանգուն էին նրա ճարտարապետական հանրահռչակ գլուխգործոցներից շատերը, երբ հույն ժողովուրդը ձեռնամուխ եղավ ինքնուրույն, եգիպտականից բոլորովին տարբեր իր արվեստի կերտմանը, ստեղծեց ճարտարապետության դասական օրինակներ, իր ազդեցության տակ առնելով հարևան ու հեռավոր ժողովուրդների արվեստը:

Հունական արվեստի ազդեցության ոլորտում գտնվող իտալական ժողովուրդի հանճարը կարողացավ թոթափել օտար արվեստի կրեղ տիրապետումը և ստեղծել իր ազգայինը, ինքնուրույնը, նորը:

Մեր թվագրության նախորդ և առաջին դարերի Հայաստանը Արևելքի այն երկրներից էր, որը ստեղծում ու տարածում էր հելենական կուլտուրան ու արվեստը:

Սակայն ժամանակի հույժ քաղաքական հանգամանքները դրդապատճառ դարձան, և ինքնաճանաչման բարձրացած հայ ժողովուրդը ստեղծեց իր սեփական գիրը, արվեստը, ճարտարապետությունը, տարբեր եգիպտականից, հունականից, հռոմեականից, բյուզանդականից, հնդկականից և մյուսներից:

Հայ ճարտարապետության իր նախորդներից տարբեր պատկերի ու էության որոշակի, համակողմանի և ամբողջական լինելը հնարավոր են դարձրել նրա տեղ ունենալը այդ նախորդների շարքում:

Բանն այն է, որ հայ ճարտարապետական հանճարը կարմանալիորեն շռայլ գտնվեց նորի, բազմազանի, աննախադեպի, յուրօրինակի ստեղծման գործում, դրանով իսկ աշխարհի ճարտարապետական արվեստը հարստացրեց իրենով, միաժամանակ հիմք և նախասկիզբ նշանավորեց նոր ուղղությունների առաջացման համար:

Սրանք, ինչպես և մի քանի այլ ժողովուրդների ստեղծած այդ նույն բնույթի մեծագործ արժեքները ոչ առօրեական, ոչ սովորական, այլ արտակարգ երևույթներ են, իրական ֆենոմեններ, որոնց նշանակությունը դուրս գալով ազգային ամփոփ շրջանակներից, դարձել է համապարփակ, համընդհանուր, համամարդկային սեփականություն:

* * *

Վաղ ու զարգացած միջնադարերի հայ ազգային ճարտարապետությունը ներկայացնում են այնպիսի եզակի ու մեծարժեք հուշարձաններ, ինչ-

պիսիք են՝ Էջմիածինն ու Բագարանը, Քասաղն ու Դվինը, Տեկորն ու Եղվարդը, Երերույքն ու Թալինը, Օձունն ու Մրենը, Մաստարան ու Պտղնին, Գայանեն ու Արուճը, Ավան-Հռիփսիմեի տիպի տաճարները, դրանց թվում և Աղթամարը, Զվարթնոցն ու իր նմանակները, Անիի մայր տաճարն ու ողջ Անին, Տաթևի, Սանահնի, Հաղպատի, Խծկոնքի, Հաղարծնի, Գեղարդի, Կեչառուքի, Մարմաշենի ու այս կարգի շատ համալիրներ, ընկած պատմական Հայաստանի կենտրոնական ու ծայր գավառների ընդարձակ տարածքում։

Հայ ճարտարապետության վաղ կազմավորման և հասունացման առումով առանձնապես նշանակալից է այժմ Երևանի սահմանների մեջ մտնող, երբեմնի Կոտայքի Ավան գյուղաքաղաքում, դեռևս VI դարի վերջին քառորդում կառուցված կաթողիկոսական տաճարի դերը, որին և հիմնականում նվիրված է սույն աշխատությունը։

Նկատի առնելով, որ ճարտարապետական որոշ շրջանակներում տարածում է գտել այն թյուր տեսությունը, որի համաձայն տվյալ տիպի հուշարձանների առաջնեկը Ավանը չէ, որ իբր Ավանը և մեր այդ տիպի մյուս հուշարձանները ուղղակի, կամ այս ու այն չափով, այս ու այն կարգի փոփոխումներով դրսից, այն էլ ուշ ժամանակներում ներմուծված կրկնություններ են, մեր կողմից առանձնակի հետապնդվեց և հիմնավորապես ժխտվեց պատմա-ճարտարապետական տվյալների ու փաստերի նորովի վերլուծության հիման վրա։ Դրանով իսկ պարզ դարձավ, որ **հենց VI դարի վերջին քառորդում կառուցված Ավանն է մինչև այժմ մեզ հայտնի երեք քառորդ խորշերով քառակոնխ տիպի հուշարձաններից առաջինը**։ Հետևաբար մինչ այդ անհայտ այն նորը, որ դրսևորվել է Ավանում և կրկնվելով գործադրություն գտել հաջորդ շրջանի ճարտարապետական կառույցներում, աներկբա հանդիսանում է Ավանը կառուցող ճարտարապետի ստեղծագործությունը։ Արդ, Ավանի ճարտարապետը, որպես պիոներ, իր ժամանակի շինարարական արվեստի անդաստանում հանդես եկող նորարար, ձեռք է բերում իր յուրընտիր արժանիքների ճանաչում։ Նրա ստեղծած Ավանի տաճարն էլ վերստանում է իր իսկական դերը, որպես առաջնեկ, նախօրինակ, որին որոշ առումներով կրկնել, որից ինչ-որ կողմեր վերցրել և որին ինչ-որ ձևով նմանվել են, ապա կատարելագործվելով, որակական նոր աստիճան կազմելով, որպես արվեստի գործեր, նոր արժեք են նշանավորել պատմական հաջորդ շրջանում կառուցված հուշարձանները։

Ավանին նախորդող ժամանակաշրջանի քառակոնխերը հավասարաթև էին. Ավանի ճարտարապետը առաջին անգամ քառակոնխը ձգեց՝ երկարացրեց արևելք-արևմուտք առանցքով, նախախորաններ ստեղծելով նույն առանցքի վրա՝ արևելյան և արևմտյան խորանների առջևում։ Հետագայում կառուցված այս տիպի բոլոր տաճարներում Ավանի օրինակով ստեղծվեցին նախախորաններ և, փաստորեն այդպիսիք դարձան տիպի առանձնահատկությունը։

Նույն ժամանակներում կառուցված քառակոնխերը (բացառությամբ Թորամանյանի վերակազմած Էջմիածնի) ավանդատուներ կամ չունեին, կամ ունեին միայն արևելյան խորանների մեկ կամ երկու կողմերում։ Ավանի ճարտարապետը առաջին անգամ ավանդատուներ ստեղծեց նաև արևմտյան խորանի երկու կողմերում, դրանով իսկ նա ողջ տաճարն իր բոլոր հարամասերով ամփոփեց ուղղանկյուն պարագծերում։ Հետագայում կառուցված այս տիպի տաճարներում (բացառությամբ մի քանիսի) Ավանի օրինակով ավանդատուներ գոյացան նաև արևմտյան խորանի երկու կողմերում և, փաստորեն, տաճարի չորս անկյուններում չորս ավանդատների առկայությունը դարձավ այդ տիպի առաջնային տաճարների առանձնահատուկ կողմերից մեկը։

Ավանի չորս անկյուններում առաջացած բոլորակ հիմքով չորս սենյակների և տաճարի կենտրոնական տարածությունը օրգանապես միմյանց շաղկապելու, նրանց միջև անցում՝ լավագույն ձևով մուտք ստեղծելու միջոցառումների արդյունք հանդիսացան անկյունագծային դասավորության ³/₄ խորշերը։ Հետագայում ³/₄ խորշերը դարձան այդ տիպի տաճարների առանձնահատուկ՝ ամենաբնորոշ կողմը։ Չէ որ չորս ավանդատներով շատ քառակոնխեր կառուցվեցին հետագայում, որոնք սակայն տվյալ տիպի տաճարների շարքը չեն դասվում ³/₄ խորշեր չունենալու պատճառով։ Ահա՛ այս ³/₄ խորշերի առաջին ստեղծողը ևս Ավան տաճարի կառուցող ճարտարապետն էր։

Ավանում անկյունային չորս սենյակները հիմքում բոլորակ էին և նրանք, հատկապես արևելակողմի երկուսը, ոչ թե ավանդատներ, այլ մատուռ-

ներ էին: Մինչ այդ մեր իրականության մեջ բոլորակ հիմքով ոչ տաճարներ, ոչ էլ մատուռներ կային: Հետևում է, որ առաջին բոլորակ հիմքով մատուռները (ասել է, թե՝ փոքր եկեղեցիները) ստեղծվել են Ավանը կառուցողի կողմից:

Ավանից հետո կառուցված շատ տաճարներում գմբեթներն ունեցան Ավանի գմբեթի տեսքը, հանդիսացան նրա հետևորդները. նրանցում գմբեթաթմբուկի հիմքով անցնող գոտիները, ինչպես և քարակերտ դեկորատիվ խաչերը հանդիսացան Ավանի դրվագների կրկնությունը: Հետևում է, որ Ավանը կառուցող ճարտարապետի այդ ստեղծագործությունները հանդիսացել են նախօրինակներ հետագայում կառուցված հուշարձանների նույն դրվագների համար:

Գմբեթային փոխանցման առաջին անգամ Ավանում կիրառված համակարգը, որի ստեղծողը Ավանի ճարտարապետն էր, որոշ ձևափոխություններով գործադրվեց նաև Մարտիրիում, Կվետերայում և այլ տաճարներում:

Այս տիպի տաճարների հատակաձևերի ստեղծման ընթացքում կիրառություն գտած կանոնական համակարգը, որի առկայությունը Ավանի հատակաձևում ավելի քան ակնբախ է, ստեղծվել է Ավանը կառուցող ճարտարապետի կողմից, գործադրվել չորս խորաններով և չորս $^3/_4$ խորշերով կազմավորված տվյալ տիպի բոլոր նորակառույցներում:

Առայժմ չխոսելով Էջմիածնի մասին, հիշենք, որ Ավանը կառուցողը պատմության մեջ առաջինն ստեղծեց կենտրոնագմբեթ հինգ գմբեթանի եկեղեցի: Լինելով իր տեսակի մեջ առաջինը, այն որպես պաշտամունքային կառուցվածքի ձևավորված տիպ, որպես նախօրինակ մեծ տարածում գտավ աշխարհի չորս ծագերում:

Ավանի ճարտարապետը իր նշանավոր ստեղծագործությամբ, ըստ էության հանդիսացել է հայ ճարտարապետության դեմքը, նրա ինքնությունը կերտող առաջիններից մեկը:

Այս ամենով պարզ է դառնում, թե ինչ մեծ քանքարի, ստեղծագործական ուժի ու կառուցողական վարպետության տեր է եղել Ավանը կերտող վարպետաց-վարպետ՝ ճարտարապետը:

Արամուսը Ավանի մերձավոր ժամանակակիցն է:

Արամուսը, իր նախորդ Ավանն ու հաջորդ շրջանի հուշարձանները կապող անցման օղակն է:

Գառնահովիտը (Ադիաման) VII դարի սկզբի հուշարձան է, այն եզակիներից մեկը, որ ժամանակի ընթացքում ձևափոխությունների գրեթե չի ենթարկվել: Նրա կառուցող ճարտարապետը տվյալ տիպի հուշարձաններ ստեղծող առաջիններից է:

Այս տիպի հուշարձաններից է Զորադիրի (Սորադիրի) նորահայտ Էջմիածինը: Այն Հռիփսիմեի անմիջական նախորդն է: Իտալական հանրագիտարանում նրա կառուցման ժամանակը նշված է V—VII դարերով:

Հռիփսիմեն այս տիպի տաճարների լավագույնն է: Արտաքին երեսապատման և շքամուտքերի որոշ փոփոխություններով հանդերձ, այն հանդիսանում է դեռևս 618 թվականին Կոմիտասի կողմից կառուցված տաճարը: Այժմ գոյություն ունեցող գմբեթը նույնպես սկզբնականն է, փոփոխված են նրա վեղարի երեսպատումը և այլ մասեր:

Թարգմանչաց վանքի նոր ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ նրա հիմնադրումը տեղի է ունեցել 630 թվականից առաջ (628 թ.), և կառուցումը ավարտվել է 630 թվականից հետո, հավանական է, մինչև 635 թվականը:

Սիսիանի ս. Հովհաննեսը, որ կառուցվել է VII դարի չորրորդ քառորդում, հետապնդվող տիպի լավագույն հուշարձաններից է, այն լավ էլ պահպանվում է. փոփոխված են լոկ շքամուտքերը:

Քոլատակը (Ալուչալու), համաձայն նոր ուսումնասիրությունների պետք է կառուցված լինի VII դարի երկրորդ կեսի ընթացքում՝ նախքան Սիսիանի ս. Հովհաննեսը:

Վարագավանքի հատակագծային առանձնահատկությունները և այլ հանգամանքներ ենթադրել են տալիս, որ թերևս այն սկզբնապես կառուցվել է VI—VII դարերի սահմանագծում: Տասներորդ դարով թվագրված այժմյան հուշարձանը հնարավոր է, որ կառուցված լինի նախկին տաճարի հիմքերի վրա:

Աղթամար կղզու ս. Խաչի տաճարը, որ կառուցվել է 915—921 թվականներին, աշխարհում լայն հռչակ ստացած, հայ ճարտարապետության եզակի արժեք ներկայացնող հուշարձաններից է:

Դիոնծմինդայի համար ստեղծված առաջին վերակազմությունը ընդհանուր ոչինչ չունի ավերակի

հետ: Ավերակի տվյալներից է բխում երկրորդ վերակառուցման վերնամասը միայն: Սույն աշխատության մեջ Նինոծմինդայի համար առաջարկվում է վերակազմություն, որում արտացոլվում է սկզբնապես կառուցված շինությունն իր «հայաբաշեն» անվանված ծածկով:

Զվարին $^3/_4$ խորշերով քառակոնխ տաճարների տիպին պատկանող հուշարձաններից է: Համաձայն մեր ուսումնասիրությունների, այն հիմնադրվել է 627, ավարտվել՝ 640-ական թվականներին: Սկզբնապես կառուցված տաճարը իր անկյուններում ավանդատներ չի ունեցել. վերջիններս խաչակերպ կենտրոնին են կցվել հետագայում: Այստեղ ներկայացվում է վերակազմության նախագիծ սկզբնապես կառուցված, դրսից ու ներսից հիմքում խաչակերպ տաճարի համար:

Աթենը քննարկվող տիպի VII դարում կառուցված լավագույն տաճարներից է, այն չի հանդիսանում տվյալ տիպի հուշարձաններից որևէ մեկի «կույր ընդօրինակումը»: Աթենի տաճարի մեծատաղանդ կառուցող Թոդոսակ ճարտարապետին պետք է վերագրել նաև Զվարիի վերակառուցումը՝ անկյունային սենյակների կցումը սկզբնապես կառուցված խաչաձև տաճարին, որով և սրանք՝ այս երկուսը արտաքին ծավալատարածական հորինվածքով ու հարթությունների պլաստիկ մշակմամբ ստանում են ընդհանուր գծեր, նմանվում միմյանց:

Հին Շուամթայի գմբեթավոր եկեղեցիները, որ նույն տիպի հուշարձաններ են, միմյանցից տարբերվում են նրանով, որ մեկում առկա են ավանդատներ, մյուսում՝ այդպիսիք չկան: Ըստ որում, երկրորդ եկեղեցու սկզբնական գմբեթը թմբուկ չի ունեցել:

Մարտվիլին շատ փոփոխությունների է ենթարկվել, ներքին հատակաձևի վերականգնումով միայն հնարավոր է դառնում հավաստել նրա պատկանելիությունը տաճարների տվյալ տիպին: Համաձայն վրաց հետազոտողների, երկու Շուամթաները, ինչպես և Մարտվիլին VII դարի հուշարձաններ են:

Կվետերան ուշ միջնադարի (XI դար) հուշարձաններից է, այն ևս $^3/_4$ խորշերով քառակոնխ է, որ սակայն փոքր Շուամթայի նման անկյուններում ավանդատներ չունի: Կվետերա ամրոցի այս եկեղեցին կառուցվել է նախքան Կախեթիան Դավիթ Նորոգողի կողմից Վրաստանին միացնելը:

* * *

Այս աշխատության էջերում բերված հուշարձաններից հանգամանորեն դիտարկվեցին մի քանիսը միայն, մյուսները քննարկվեցին արմատական հարցերի պարզաբանմանը նրանց ունեցած աղերսի սահմաններում, մինչ դրանցից յուրաքանչյուրի համակողմանի հետազոտության անհրաժեշտությունը կասկած չի հարուցում:

## КРАТКОЕ СОДЕРЖАНИЕ

Средневековое зодчество Армении является одной из интереснейших страниц всеобщей истории архитектуры. Оно наряду с величайшими достижениями других народов в области архитектуры—явление чрезвычайное, которое, выйдя по своему значению за рамки национального характера, стало достоянием мировой культуры.

* * *

Армянскую национальную архитектуру раннего и развитого средневековья представляют такие уникальные памятники, как Эчмиадзин и Багаран, Касах и Двин, Одзун и Мрен, Мастара и Птгни, Гаяне и Аруч, храмы типа Аван—Рипсиме, в их числе Ахтамар, Звартноц и другие подобные ему, кафедральный собор в Ани, как и весь Ани, комплексы Татева, Санаина, Ахпата, Хцконка, Агарцина, Гегарда, Кечариса, Мармашена и многие другие ансамбли такого же порядка, разбросанные по обширной территории центральных и окраинных областей исторической Армении.

На раннем этапе формирования и развития армянской архитектуры особенно важна роль находящегося ныне на территории Еревана, а в прошлом в поселении Аван Котайкского района, кафедрального собора, построенного в последней четверти VI века. Ему, в основном, посвящена данная работа.

В определенных архитектурных кругах принята та ошибочная теория, согласно которой первенцем храмов типа «тетраконх с трехчетвертными нишами» был не Аван, который будто бы вместе с другими армянскими памятниками подобного типа прямо или косвенно, в той или иной степени является поздним повторением привнесенных извне образцов. Эта теория была особо тщательно исследована и на основании результатов исторического и архитектурного анализа опровергнута в данной работе. Результаты анализа и факты доказывают, что сооруженный в последней четверти VI века Аванский храм является первым из известных до сих пор памятников данного типа.

Поскольку Аванский храм не единственный в своем роде, а лишь один из двух десятков памятников, которые, порой хотя и довольно отличаются друг от друга, в сущности остаются разновидностями одного типа, постольку все они нашли должное освещение на страницах этого труда.

Каждый из этих памятников не внезапно возникший феномен и не классически совершенное творение, завершающее развитие типа, а определенная ступень на пути усовершенствования подобных храмов. В данной работе рассматриваются те их стороны, которые интересны для настоящего времени, ставятся те проблемы, которые, будучи связаны с решением других вопросов, до сих пор истолковывались с различных позиций и требовали своего исследования. В наши дни эти памят-

ники нуждаются в новом анализе, определяющем соответствующие их значению место и оценку как в отдельных архитектурных кругах, так и во всеобщей истории архитектуры.

## АВАН

После первого раздела Армении в 387 г. она вторично была разделена между двумя мировыми державами—Византией и Персией в 591 г. Довольно большая часть Араратской области по границе реки Азат отошла к Византии.

По приказу императора Маврикия (582—602 гг.) армянская церковь также была разделена с целью обращения населения из григорианского вероисповедания в греко-халкедонитское в той части Армении, которая перешла во владение императора. Именно в это время (591—602 гг.) поселение Аван становится резиденцией противопрестольного католикоса Ована (Иоанна) Багаранского. В перешедшей к Персии части Армении центром духовенства продолжает оставаться Двин, где с 574 года на престоле католикоса всех армян восседал Мовсес II Егвардский.

Престол католикоса Ована Багаранского устанавливается в построенном им кафедральном соборе Авана.

В формировании и дальнейшем развитии национального лица армянской архитектуры Аван сыграл большую роль. Этот памятник, дошедший до нас в полуразрушенном виде, имеет для истории нашей архитектуры неоценимое значение.

Согласно новейшим исследованиям, Ован Багаранский построил собор в 80-ых годах VI века, будучи еще настоятелем монастыря Аван.

* * *

Аван — центральнокупольное сооружение, представляющее собой в плане прямоугольник, несколько вытянутый в направлении восток—запад. Внутреннее центральное пространство возвышается над вписанным в этот прямоугольник тетраконховым крестом и диагонально расположенными нишами. Между внешним прямоугольным и внутренним крестообразным периметрами в четырех углах расположились помещения с круглыми основаниями и купольными перекрытиями. Храм имеет один входной портал с запада (северный вход открыт позже).

В отличие от преобладающей ныне точки зрения, Аванский храм имел, по мнению Тораманяна, не один, а пять куполов: большой в центре и четыре малых в углах.

Исследователи Р. Агабабян, Н. Токарский, А. Еремян и С. Мнацаканян отвергают предположение Т. Тораманяна на том основании, что угловые помещения с круглым основанием, будучи якобы невысокими, находятся под общим покрытием сооружения, никак не выявляются во внешнем абрисе и поэтому считаться купольными не могут. В. Арутюнян и С. Сафарян находят, что нынешнее состояние храма не дает возможности проверить истинность интересного предположения Тораманяна.

Для правильного решения вопроса о существовании четырех малых куполов Аванского собора нужно было произвести новые обмеры развалин и дать складывающуюся на их основе реконструкцию.

Ныне оказывается, что существующие развалины дают более чем достаточно данных для определения количества куполов храма. В результате исследований выяснилось, что храм Авана действительно имел пять куполов—один центральный и четыре угловых (малых), т. е. был таким, каким представлял его Торос Тораманян.

* * *

План Авана по своему решению в целом не имел предшественников. Тораманян считал, что план Авана был завещан Просветителем, как и план Эчмиадзина (который исследователи представляют себе по-разному). Аван, будучи в принципе близким Эчмиадзину, не

повторил его, а был первым в своем роде. Следовательно, все то новое, что есть в нем, является вкладом зодчего Авана в ряд нововведений формировавшейся армянской архитектуры.

В плане храма связь центра с боковыми помещениями и переход из одного в другое осуществлены изобретением трехчетвертных ниш. Это своеобразие плана Авана не результат расширения внутреннего пространства или усиления сейсмостойкости сооружения и не целенаправленная переработка плана типа Мастары, как пишут об этом некоторые исследователи, а прежде всего плод архитектурной разработки непосредственного перехода, наиболее удобного сообщения центрального и угловых подкупольных пространств пятикупольного храма.

Те крестообразные в плане храмы, которые не имеют или первоначально не имели приделов, но в угловых частях подкупольного пространства, по примеру Авана, имеют ниши с основанием в $^3/_4$ окружности, не могли быть построены раньше Авана, поскольку эти ниши возникли в процессе переработки входов, ведущих в боковые помещения. Такие храмы, по существу, являются не предшественниками основного типа (Авана), а позднейшими, в определенном смысле алогичными, упрощениями.

* * *

Центральный купол Авана представлял собой восьмигранный барабан с внутренним полусферическим покрытием и внешним пирамидальным черепичным шатром. Купольный барабан имел характерный для своего времени карниз и по одному окну с арочным верхом довольно больших размеров на каждой из осевых граней. Не исключено, что окна были и на диагонально расположенных гранях. Ныне не известно, как был оформлен купольный барабан изнутри, но то, что полусферическое покрытие имело декоративный высеченный из камня крест, каждый рукав которого был составлен из двух или трех лучей, и то, что они имели направление главных осей, доказывается фрагментами декоративных крестов из камня на двух малых куполах восточной стороны.

О форме Аванского купола высказывались нелестные мнения. К примеру, Н. Токарский пишет: «О первоначальном виде купола трудно что-либо сказать, так как он совершенно разрушен, возможно, что он был несколько неправильной формы, и грани его, расположенные под угловыми нишами, имели меньшую ширину, чем остальные»[1].

По мнению Г. Чубинашвили, незначительные фрагменты, оставшиеся от купольной части Авана, показывают, что «купол был здесь такой же грузный, как и корпус здания; форма его была почти квадратная со срезанными углами, т. е. и с этой стороны не было равномерности, стройности, а скорее случайное сочетание масс»[2].

Как это ни удивительно, но тем не менее факт, что простое недоразумение длится десятилетиями, и на нем основываются далеко идущие заключения.

Результаты исследований свидетельствуют о том, что форма центрального купола Авана не имеет никакого отношения к размерам и форме плана того фрагмента кладки из 2—3 рядов, на основе которого вышеупомянутые авторы создали свои теории.

* * *

Важно заметить, что зодчий Авана не повторил в своем новом сооружении известную до него и имевшую широкое применение систему тромповой купольной передачи, он осу-

[1] **Н. М. Токарский**, Архитектура древней Армении, Ереван, 1946, стр. 80.

[2] **Г. Н. Чубинашвили**, Памятники типа Джвари, Тбилиси, 1948, стр. 108.



Նկ. 1. Ավան. տաճարի ավերակը. տեսքը հարավ-արևմուտքից։



Նկ․ 2 Ավան. տաճարի արևմտյան ճակատը 30-ական թվականներին։



Նկ. 3. Ավան. տաճարի ավերակը նախքան 40-ական թվականների վերակառուցումը.
տեսքը հարավ-արևմտակողմից։



Նկ. 4. Ավան. ավերակի ընդհանուր տեսքը արևելակողմից։



Նկ. 5. Ավան. տաճարի արևմտյան ճակատը 40-ական թվականների վերակառուցումից հետո։



Նկ. 6. Ավան. տաճարի շքամուտքը։



Նկ. 7. Ավան. տաճարի արևելյան խորանի ներքնամասը և հարավ-արևելյան խորշը։



Նկ. 8. Ավան. տաճարի հարավային խորանը և հարավ-արևելյան խորշը:



Նկ. 9. Ավան. տաճարի հարավ-արևելյան անկյունը. տեսքը ներսից։



Նկ. 10. Ավան. հարավ-արևելյան $^3/_4$ խորշը վերականգնումից հետո:

Նկ. 11. Ավան. արձանագրված քարեր արևելյան ճակատի ներքևից երկրորդ շարքում:





Նկ. 12. Ավան. Հարավ-արևելյան բոլորակ սենյակի գմբեթարդ ծածկի մնացորդը, դեկորատիվ քարակերտ խաչի երկու ճառագայթներով:



Նկ. 13. Արամուս. տաճարի ավերակի ընդհանուր տեսքը արևմտակողմից։



Նկ. 14. Արամուս. տաճարի հյուսիս-արևելյան սենյակի պատուհանի կամարաղեղը։



Նկ. 15. Գառնահովիտ. տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևելակողմից:



Նկ. 16. Գառնահովիտ. տաճարի արևմտյան ճակատի դրվագ շքամուտքով։



Նկ. 17. Մաստարա. տաճարի վերնամասի հարավ-արևմտյան տեսքը։



Նկ. 18. Գառնահովիտ. տաճարի արևմտյան ճակատը։



Նկ. 19. Գառնահովիտ. տաճարի հարավ-արևելյան անկյան ներքին տեսքը։



Նկ. 20. Գառնահովիտ. տաճարի արևելյան ճակատի ներքնամասի երեք խաչաքանդակներով քար:



Նկ. 21. Գառնահովիտ. տաճարի հյուսիս-արևելյան անկյան ներքին տեսքը:



Նկ. 22. Գառնահովիտ. տաճարի հարավային խորանի պատուհանի արտաքին կամարաղեղը:



Նկ. 23. Գառնահովիտ. տաճարի արևմտյան խորանի պատուհանի արտաքին կամարաղեղը:



Նկ. 24. Ջորադիր. տաճարի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմտակողմից:



Նկ. 25. Զորադիր. տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը։

Նկ. 27. Զորադիր. ներքին որմնամույթերի խոյակներ։

Ա.



Բ





26. Զորադիր. տաճարի հյուսիս-արևմտյան $^3/_4$ խորշի վերնամաս։

Գ.



Դ.





Նկ. 28. Հռիփսիմե. տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևելակողմից։



Նկ. 29. Հռիփսիմե. տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը:



Նկ. 30. Հռիփսիմե. տաճարի գմբեթային մասի ներքին տեսքը:



Նկ. 31. Հռիփսիմե. տաճարի հյուսիս-արևելյան $^3/_4$ խորշը։



Նկ. 32. Թարգմանչաց վանք. տաճարի ավերակի ընդհանուր տեսքը արևելակողմից։



Նկ. 33. Թարգմանչաց վանք. տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը:



Նկ. 34. Սիսիան. տաճարի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմտակողմից:



Նկ. 35. Քոլատակ (Ալուչալու) տաճարի ավերակը, տեսքը հյուսիս-արևմտակողմից:



Նկ. 36. Սիսիան. տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևմտակողմից:



Նկ. 37. Աղթամար. տաճարի արևելյան ճակատի դրվագ։



Նկ. 38. Աղթամար. տաճարի տեսքը արևմտակողմից:



Նկ. 39. Նինոծմինդա. տաճարի ընդհանուր տեսքը արևելակողմից:



Նկ. 40. Նինոծմինդա. տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը:



Նկ. 41. Ջվարի. տաճարի ընդհանուր տեսքը արևելակողմից։



Նկ. 42. Աթեն. տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևմտակողմից



Նկ. 43. Հին Շուամթա. գմբեթավոր մեծ եկեղեցու արևելյան հատվածի ներքին տեսքը:



Նկ. 44. Հին Շուամթա. գմբեթավոր մեծ եկեղեցու ընդհանուր տեսքը արևելակողմից:



Նկ. 45. Հին Շուամթա, գմբեթավոր փոքր եկեղեցու ընդհանուր տեսքը հարավ-արևելակողմից:



Նկ. 46. Մարտվիլի. տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը։



Նկ. 47. Կվետերա. եկեղեցու արևելյան հատվածի ներքին տեսքը։



Նկ. 48. Արծվաբերդի Ս. Աստվածամոր եկեղեցին։

ществил купольный переход сочетанием двух новоизобретенных форм—арок и парусов. Эту систему принято называть способом комбинированной передачи.

Интерьер Аванского храма был хорошо освещен. Источниками дневного света являлись окна, продуманное расположение которых обеспечило равномерное освещение внутреннего пространства как нижней части храма, так и конх и купола.

Тщательные исследования частей и деталей храма Авана выявили определенные закономерности, функциональные связи, зависимости и соотношения целого и отдельных частей сооружения, на основе которых стало возможным заключить, что все это явления неслучайные, и что в свое время зодчий, несомненно, обращался не только к применявшимся до него, но и к созданным им самим канонам пропорциональности.

Общеизвестно и вполне логично, что в основу всех размеров и пропорций армянских (и не только армянских) купольных храмов взят внутренний диаметр купола с его частями. Теперь в этом убеждают и конкретные данные Авана.

Фотографии южной абсиды Авана и данные развалин позволили реконструировать всю нижнюю часть храма. А купольная часть в новой реконструкции представлена по типу сохранившихся до наших дней куполов того времени на основе фактических данных развалин храма.

В пятикупольной церкви Апостолов в Константинополе, в построенных по ее образцу соборах св. Иоанна в Эфесе и св. Марка в Венеции четыре малых купола построены на рукавах креста; на основании того, что сила распора купола гасилась в них малыми куполами, а не цилиндрическими сводами рукавов креста, эти сооружения в специальной литературе не относятся к типу центральнокупольных.

Центральнокупольным был широко известный пятикупольный храм византийского императора Василия I (867—886) Неа-Мони, который, в отличие от предыдущих, был построен по тому же принципу, что и Аван. Его четыре малых купола поставлены не на рукавах креста, а на находящихся между ними четырех углах четырехугольного сооружения.

Те же принципы наличествуют в эскизе пятикупольного храма Леонардо да Винчи (1452—1519), так же как и в основе пятикупольного храма св. Петра Микельанджело (1475—1564) в Риме.

Такой тип пятикупольного храма, нашедший широкое распространение во всем мире, имел своим предшественником построенный в конце VI века Аванский собор.

Первый пятикупольный византийский храм назывался храмом Апостолов, Анийский пятикупольный храм X века тоже назывался храмом Апостолов. Пятикупольный храм раннего средневековья Аван, думается, также должен был называться храмом Апостолов.

## ДРУГИЕ ТЕТРАКОНХИ С ТРЕХЧЕТВЕРТНЫМИ НИШАМИ

**Арамус.** Недалеко от Авана, в современном селе Арамус существуют развалины церкви Циранавор типа Авана. Арамус (Циранавор), построенный вслед за Аваном, без сомнения, был однокупольным. Построенные после Арамуса храмы этого типа также были однокупольными. Следовательно, Арамус является первым мостом, связывающим Аван с построенными впоследствии другими храмами того же типа.

**Гарнаовит.** «На юго-западных высотах Арагаца в селе Покр Талинского района стоит великолепный храм, несомненно, творение VII века, неизвестен строитель, надписей нет. Внутри крестообразный, бесстолпный, имеет барабан с широкими гранями» (Тораманян). Ряд признаков дают основание предположить, что этот памятник не имел другого предшественника, кроме Авана. Следовательно, находясь у истоков развития типа, автор памятника преодолел много трудностей, связанных с созданием нового, и подготовил условия, явившиеся залогом успеха для последующих сооружений. При таком положении нелогично

то упрощенное сравнение, которое проводится между Гарнаовитом и сравнительно поздними памятниками, находящимися на высокой ступени развития типа.

**Св. Эчмиадзин Дзорадира (Сорадир).** Дзорадир и Ахтамар связаны меж собой общностью планов. Причем, об Ахтамаре, о существовании которого знали всегда, есть огромная литература, в то время как св. Эчмиадзин Дзорадира только сейчас входит в литературу благодаря итальянским архитекторам, которые, отправившись в 1965 году в западные области исторической Армении (современная Турция), исследовали Дзорадир и опубликовали результаты в итальянской и французской печати.

По комментарию Фернанда де Маффеи, Дзорадир должен был быть построен в первых десятилетиях VI века; Паоло Кунео считает вероятным временем строительства середину и последующие десятилетия VI века; Томмазо Бречча Фраттадокки находит, что Дзорадир несколькими десятилетиями предшествует храмам такого типа, построенным в начале VII века.

Судя по строению плана, Дзорадир появился в предшествующий Ахтамару период, по системе подкупольного перехода—в предшествующий Рипсиме период, а по декоративным мотивам доходит до границы V—VI веков.

Для данного труда автор составил ряд чертежей, в которых сделана попытка показать, как выглядел храм первоначально, и, в частности, его купольная часть, а также чертежи, в которых выясняются существующие в решении храма определенные пропорции, размерные соотношения и другие явления.

**Рипсиме.** Шедевр армянской архитектуры храм св. Рипсиме известен как самобытное, исключительное явление классического искусства. Тип центральнокупольных церквей с внутренним крестообразным основанием, который сформировался в Аване и распространился по всей Армении, принято называть именем Рипсиме. Такое предпочтение храм Рипсиме получил потому, что по своим архитектурным качествам является наиболее совершенным. В Рипсиме не только подытожено все то положительное, что сформировалось благодаря достижениям строительной деятельности народа в предшествующий период, но и поднято на качественно новую ступень развития. В работе вновь обстоятельно исследуются вопросы строительства как всего храма в целом, так и купольной части.

**Таргманчац ванк.** Один из лучших памятников типа Аван—Рипсиме Таргманчац ванк находится приблизительно в 7 км от Эчмиадзина, в селе Айгешат. Этот храм построен в честь памяти наших переводчиков V—VI вв., деятельность которых была обусловлена созданием армянской письменности.

Таргманчац отличается от других памятников данного типа отсутствием западных приделов, в таком виде его план публикуется впервые, до сих пор он публиковался с четырьмя приделами, как в Рипсиме.

Исследование позволяет предположить, что храм основан ранее 630 г., при правлении католикоса Христофора II (628—630), а строительство стен продолжалось и после 630 г. Талант строителя Таргманчаца виден в совершенном архитектурно-художественном и столь же совершенном техническом осуществлении отдельных частей и в целом замысла храма. Достигнутые здесь успехи нашли применение в построенных в последующий период однотипных памятниках.

**Сисиан.** В Сисакане исторического Сюника есть великолепный памятник, построенный из темного базальта. Соразмерность его частей и сдержанность форм гармонируют с окружающим скупым и суровым горным ландшафтом.

Будучи одним из лучших памятников типа Аван—Рипсиме, он не идентифицируется с предшественниками и интересен своими уникальными чертами.

Исключительным является существование

внутри восьми-, и снаружи двенадцатигранного купольного барабана.

Купол Сисиана—один из немногих, дошедших до нас в нетронутом виде со времени сооружения (2-я половина VII века). Он обогащает наши представления о куполах VII века.

**Колатак (Алучалу).** Колатак также храм типа Рипсиме. Он находится выше села Неркин (Нижний) Алучалу Мартунинского района на склоне, обращенном к озеру. Храм ныне в развалинах, сохранились нижние части наружных и внутренних стен, кое-где высотой в 6—7 м.

Памятник сооружен из трудно поддающегося обработке базальта. Он был оштукатурен и внутри, и снаружи. Это исключительный случай в нашем церковном строительстве, когда стены святилища оштукатурены и снаружи.

По своему плану храм довольно большой, он больше Арамуса, Таргманчаца, Варагаванка, Ахтамара и Дзорадира, а по величине купола даже и Сисиана.

Особенно близок Колатак по своему плану к Сисиану. Сравнение этих двух храмов дает возможность предположить, что Колатак предшествовал Сисиану.

**Варагаванк.** Здесь рассматривается церковь св. Богородицы Нижнего Варагаванка. Ее план напоминает своим общим контуром планы Авана и Арамуса. В представленном плане восстановлены первоначальные входы в западные приделы через трехчетвертные ниши. В свое время, как пишет Е. Лалаян: «двери ниш западной стороны, которые открывались в приделы, заложены, так как одна из этих ниш была приспособлена в качестве молельни для царя Арцруни, другая — для царицы....»

Некоторые признаки наталкивают на мысль, что этот храм первоначально был построен не в X веке, а еще в VII веке, но был разрушен, и на старой основе воздвигнут новый.

**Храм св. Креста на острове Ахтамар.** Историк Товма Арцруни с восхищением описывает Ахтамарский храм и подробно перечисляет его достоинства.

В наши дни границы славы Ахтамара довольно расширились благодаря тем роскошным, прекрасно иллюстрированным изданиям, которые вышли в свет в разных странах на протяжении последних десятилетий.

Храм св. Креста на Ванском озере Ахтамар, построенный при царе Гагике Арцруни в 915—921 гг.,— творение гениального зодчего армянского средневековья Манвела.

План Ахтамара очень близок к плану св. Эчмиадзина в Дзорадире и является разновидностью храмов типа Аван—Рипсиме.

В Ахтамаре внутренняя крестообразность, сходная с другими храмами, создана существующими на четырех сторонах центрального квадрата абсидами с полукруглым основанием.

Здесь между каждой парой абсид находятся ниши с основанием в $^3/_4$ окружности, характеризующие специфику данного типа. Указанные ниши своими проемами точно направлены к центру.

Храм имеет три входа: с запада, юга и севера, открытые в нижних частях абсид.

Обширное внутреннее пространство храма щедро освещено многочисленными окнами в куполе и абсидах.

Внутреннее пространство и внешний объем вырастают из плана храма.

В отличие от всех остальных памятников такого типа, в верхней части южной абсиды Ахтамара создана небольшая молельня для царя.

В Ахтамаре переход от подкупольного квадрата к круглому основанию купола осуществлен посредством парусов.

Внутреннее пространство Ахтамара венчается обширным куполом. В нем открываются восемь окон, заливая светом интерьер храма.

Ахтамар украшен снаружи скульптурными поясами и отдельными барельефами различного содержания.

Западный фасад храма представляет собой прямоугольную стену с вытянутыми вверх пропорциями, завершающуюся щипцом без горизонтального пояса.

Восточный фасад храма по композицион-

ному решению в основном похож на западный.

Крестообразный в основании нижний объем Ахтамарского храма переходит непосредственно в купол, завершающий наружный облик храма.

В основании купола храма лежит не квадрат, а многоугольник, четыре стороны которого—большие, а шесть—малые.

Купольный барабан Ахтамара имеет 16 граней, на 8 из которых пробиты окна с арочными завершениями. Барабан опоясывается сверху скульптурным фризом, с которого начинается пирамидальное покрытие храма.

Анализ плана Ахтамара показывает, что он был создан посредством применения той канонической системы, которая была разработана архитектором Авана и доведена до совершенства строителем Рипсиме.

* * *

**Иноцминда.** Загадочен, тем и интересен Кахетинский памятник Ниноцминда. Не известны ни его назначение, ни время строительства. Мнения специалистов в этих вопросах расходятся.

Существуют два проекта реконструкции Ниноцминды. Тот проект реконструкции, который создан для первоначально построенного храма, скорее предположителен, чем основан на реальных данных развалин храма. В основу этой реконструкции взяты именно те части, которые, по мнению самих составителей, являются плодом последующих (в позднее средневековье) добавлений.

Восстановление первоначального облика храма возможно, если основываться на существующем материале развалин храма, освободившись при этом от наслоившихся со временем достроек.

**Джвари.** Джвари и Аван — храмы одного типа, освещение их взаимосвязи имеет важное во всех отношениях значение для истории архитектуры культовых сооружений.

Независимо от того, что Джвари является одним из самых разносторонне изученных в прошлом храмов, по существу о нем еще не все сказано. Это является причиной расхождения специалистов во многих вопросах касательно храма.

Г. Н. Чубинашвили, редактируя Вахушти, заключает, что Гуарам начал и завершил строительство малой церкви св. Креста в 575 г., а в 590 г. Степанос начал строительство большой церкви Креста и завершил его самое позднее в 604—605 гг.; причем, согласно заключению автора, Атрнерсе и его сын Степанос II участвовали в строительстве храма не во время своего правления страной, а еще в бытность Степаноса I, до 604—605 гг., как члены семьи правителя.

В действительности же не существует никаких данных или свидетельств для того, чтобы приписывать строительство малой церкви Креста полностью Гуараму, а большой церкви— полностью Степаносу.

Упомянутое заключение относительно строителей и времени строительства храма является лишь выражением желаний автора.

Обращение к свидетельствам сборника документов армянской церкви первого десятилетия VII века «Книга посланий» и воздвигнутой в 619 г. стелы в Цкиси с целью доказательства истинности указанных дат строительства не оправдывает себя, поскольку как в одном, так и в другом свидетельстве святыня данного места Мцхеты называется «Крестом», а не «церковью Креста». Речь идет в данном случае о кресте, который существовал на том же месте еще со времен царя Мириана. На основании упомянутых свидетельств становится известным, что, во всяком случае до 619 г., на восточном холме поселения Мцхеты был лишь крест, церкви Креста еще не существовало.

Понимать под словом «Джвари» (крест) церковь—явление новое, оно впервые применено Чубинашвили в его труде «Памятники типа Джвари» (стр. 29).

Согласно грузинскому историку Смбату, император Ираклий, заняв Багдад и вернув украденные святые реликвии, «возвратился в

Картли на седьмом году, и в это время строительство церкви Креста не доставало» (еще не было завершено.— Т. М.).

Надо принять, что строительство большой церкви Креста Мцхеты начал Атрнерсе, продолжил и приблизительно в 640 г., если не позже, закончил Степанос II Кобул.

До того малую церковь Креста Мцхеты основал Гуарам, продолжил и закончил строительство его сын Степанос I.

* * *

Существующий ныне план Джвари (большой церкви Креста) формировался в два этапа. Первоначальный план представлял собой лишь ядро— центральный крест, в то время как четыре угловых придела были пристроены к существующему храму впоследствии. Полное обоснование этого положения можно найти на страницах изданного в 1940 году труда «Архитектура Джвари», автором которого явился исследователь и непосредственный участник восстановительно-реставрационных работ храма в 20-х—30-х годах М. С. Чхиквадзе.

Приведенные им данные точны и не опровергнуты до сих пор даже автором самого подробного исследования Джвари Г. Н. Чубинашвили. Факты, приведенные Чхиквадзе, дополнены автором этих строк в данной работе.

В первоначально построенном Джвари, как уже говорилось, боковые приделы отсутствовали, в то время как присутствовали характеризующие данный тип диагонально расположенные трехчетвертные ниши. И если в первых, формирующих тип памятниках эти трехчетвертные ниши имели утилитарное значение, а в Джвари—декоративное, то, следовательно, первоначальное сооружение Джвари—не первый памятник данного типа, а плод упрощения плана предшествующих памятников путем отказа от приделов. План последующих угловых помещений Джвари ближе к приделам Багавана и Мрена, построенным в 30—40-е годы VI века.

* * *

Ниши с треугольным или трапецеидальным основанием, как таковые, в Джвари отсутствуют. Ниши на фасадах, как правило, создавались с целью облегчения стены от скопившихся в узлах больших масс и для соответственного выражения в экстерьере замкнутых в прямоугольный объем абсидных рукавов, создающих внутреннюю крестообразность.

В Джвари внутренние абсиды в экстерьере проявляются пятигранными объемами. При таком условии исключено скопление в узлах стен больших масс. Следовательно, на восточном фасаде Джвари ниш могло вовсе и не быть, как нет таковых на западном фасаде. Ниши восточного фасада искусственно созданы для того, чтобы не закрыть восточными стенами приделов боковые окна и барельефы над ними, высеченные на гранях восточной абсиды. Ниши восточного фасада, обусловленные здесь вторым этапом строительства храма и возникновением угловых помещений, не могут считаться первыми по времени.

Внутренний план Джвари возник на основе разработанной до совершенства в предшествующих храмах канонической схемы.

Переход от подкупольного квадрата к кругу купола осуществлен посредством трехступенчатой системы тромпов.

Осуществленная в Джвари система купольного перехода своей канонической точностью, определенностью, чистотой исполнения представляет собой один из положительно оцененных в специальной литературе образцов. Однако эта оценка является результатом одностороннего подхода. В архитектурном произведении удачно решенная конструкция еще не есть достижение, если при этом была забыта эстетическая сторона сооружения.

* * *

Во внешнем объеме храма довольно ощутимы раздробленность и масштабное несоот-

ветствие между главными частями здания—куполом и всей нижней частью.

Внутреннее стремление увидеть Джвари в его первоначальном объемно-пространственном замысле привело к созданию проекта реконструкции, представляющего храм без поздних добавлений. Здесь купол, являясь логическим завершением нижней части, уверенно главенствует над тесно сплотившимися вокруг вертикальной оси четкими объемами. В этом храме все созвучно, соподчинено, цельно, одномасштабно. Следует признать, что Джвари первоначально был таким.

**Атени.** Атени занимает в ряду храмов исследуемого типа особое место и представляет в определенном смысле большой интерес.

Храм построен в 10 км от города Гори, недалеко от поселения Атени, на площадке, созданной высокими подпорными стенами.

Некоторыми сторонами своего архитектурного облика Атени близок как армянским образцам, так и грузинским, являясь связующим звеном, мостом между этими двумя архитектурными кругами.

В отличие от Джвари, Атени имел одну очередь строительства. Возможно, непосредственно после строительства Атени те же строители-архитекторы по примеру Атени создали в четырех углах крестообразного Джвари четыре придела, благодаря чему эти два храма стали сходными в плане.

Анализ выясняет, что Атени не только не повторяет Джвари, но и отличается от него так же, как все храмы этого типа друг от друга. Более того, построенный первоначально крестообразный Джвари сам перенимает формы Атени, создав по его примеру угловые приделы и тем уподобившись Атени.

Что касается существующей между ними определенной общности, то это результат одинаковой дани уважения к получившим силу закона канонам, действовавшим в то время.

Формы решения в Атени целого ряда важных в архитектурном и строительном отношении вопросов, по сравнению с Джвари, без сомнения, более предпочтительны.

Тот тезис, что архитектор Атени, будучи лишенным самостоятельности и таланта, рабски повторил Джвари, опровергается и отвергается, как необоснованный.

* * *

О зодчем Тодосаке, построившем Атени, известно лишь то, что сообщает фрагмент надписи на армянском языке, высеченной на стене Атенского храма в западной нише южного фасада и занимающей 5 камней в 3-ем от земли ряду. Там написано: «Я, Тодосак, строитель святой церк (ви)». Архитектура храма дает основание заключить, что: а) Тодосак был архитектором-строителем с известным именем; б) Тодосак был мастер-скульптор; в) Тодосак не был приглашен для строительства Атени, а жил и творил в тех местах, где строил свои сооружения.

**Старая Шуамта—большая купольная церковь.** Монастырский комплекс Старая Шуамта находится недалеко от райцентра Телави, в юго-западном направлении, на небольшой поляне лесистого склона. В монастырский комплекс входило три храма: южный — базиликальный, второй и третий — церкви анализируемого купольного типа. Большая из них — уменьшенный вариант скорее Атени, чем Джвари. Приделы здесь построены одновременно с храмом. Проемы трехчетвертных ниш смещены в сторону оси восток—запад более, чем в каком-либо другом из храмов данного типа. В отличие от других, у этого храма нет соответствующего данному типу масштаба.

**Старая Шуамта—малая купольная церковь.** Храм отличается от предыдущего тем, что не имеет угловых помещений, следовательно, трехчетвертные ниши столь же малых размеров носят лишь декоративный характер.

Купол Малой Шуамты полностью перестроен и излишне наращен, чем нарушена единая композиционная целостность близко стоящих трех храмов. На месте сохранился лишь низ прежнего купола, и по этому фрагменту со специфической кривой можно убедиться в

том, что первоначально у храма, а правильнее, сооружения типа гробницы, был не купольный барабан, а лишь полусферическое покрытие с конической или пирамидальной кровлей.

Малый храм Шуамты не может считаться из-за существования трехчетвертных ниш прототипом тетраконхов, как это пытались доказать некоторые.

**Мартвили.** Мартвили принадлежит к храмам рассматриваемого типа. Он находится в 30 км северо-восточнее Кутаиси, на холме, с которого открывается красивый вид на прилегающее нагорье. А. В. Кузнецов пишет о нем: «Кроме уже упомянутого Сиона Атени, к ряду повторений Джвари надо отнести и храм Мартвили Чкондиди (в Абхазии)».

В настоящее время только его внутренняя структура говорит о том, что это памятник данного типа. В плане храма некоторые элементы удивительно напоминают расположенные довольно далеко от него памятники Кахетии. Системой купольного перехода Мартвили в какой-то степени связан с Аваном.

**Кветера.** Кветера принадлежит к числу тех памятников исследуемого типа, у которых нет приделов, но есть трехчетвертные ниши.

Кветера, характеризующая лицо кахетинской архитектуры, структурой плана ближе к Ниноцминде, план ее звездообразный, более симметричный относительно осей.

Достигшая в XI веке большого могущества Кахетия стала соперником Грузии. Грузино-абхазский царь Баграт IV (1027—1072) во время предпринятых в Кахетию походов (1059—1060) не смог взять крепость Кветеры. По мнению Г. Н. Чубинашвили, церковь крепости Кветеры должна была быть построена кахетинскими царями XI века.

## ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ ХРАМОВ ТИПА АВАНА И КАНОНИЧЕСКАЯ СТРУКТУРА ИХ ПЛАНОВ

О соразмерностях, существующих в каждом из рассмотренных в данном труде памятников, о путях складывания очертаний этих храмов в связи с процессом формирования плана и объемно-пространственного облика говорилось в соответствующих главах. В каждом случае приводятся обнаруженные в конкретном памятнике как закономерности, так и имеющие место отклонения от них. В результате их сравнения налицо общие явления, правильное определение которых в виде канона необходимо.

Планы и объемно-пространственные очертания этих памятников, как явствует из данного исследования, это следствие **системы, получившей со временем канонический характер.** При этом каноны данной системы или их определенные аспекты не строго догматического порядка; в разных памятниках они имеют, в определенных границах, какие-то отклонения, вытекающие в каждом случае из конкретных условий и ситуаций. Такие отклонения не неожиданны и не исключительны по своему характеру. В классических памятниках всех стилей наблюдаются подобные явления, что естественно и даже необходимо во избежание однообразия.

Как приведено на схеме А (чертеж 99, «Развитие плана»), первым шагом в создании плана являлся выбор размеров подкупольного квадрата. Размеры купола архитектор получал от заказчика, именно ими и определялись почти все остальные размеры памятника.

Вторым шагом в создании плана являлось определение внутренней длины и ширины храма. Для этого из середины каждой из четырех сторон квадрата проводятся вправо и влево линии под углом в 30° в отношении этих сторон так, чтобы каждая их пара скрестилась с другой на двух основных осях квадрата, как это представлено на схеме Б того же чертежа.

Из четырех точек скрещения две на оси восток—запад являются центрами восточной и западной полукруглых абсид, а находящиеся на оси север—юг — вершины северной и южной полукруглых абсид. Это показано на схеме В (чертеж 99).

На смехе Г того же чертежа показан тре-

тий шаг в создании плана — как в четырех углах храма по обеим сторонам восточной и западной абсид размещены четыре придела с квадратным основанием и как внутреннее содержание сооружения полностью вовлечено во внешний прямоугольник.

Следующий шаг представлен на схеме Д, где изображены ниши с основанием в $^3/_4$ окружности, являющиеся связью и переходом из центральной части в приделы. Центры ниш приходятся на окружность, проведенную из центра квадрата радиусом в $^3/_4$ диаметра, точно в тех точках, где эту окружность пересекают линии, проведенные с расстояния в $^1/_4$ диаметра от центра подкупольного квадрата на оси север—юг под углом в 30° к ней, и линии, которые проводятся из центров восточной и западной сторон подкупольного квадрата под углом в 30° в отношении к оси восток—запад.

Как логическое следствие всего этого, в основании формируются и получают свое определенное место и вид восемь пилонов, на которые опираются подкупольные арки.

Последний шаг создания плана приведен на последней схеме Е, где представлены детали: двери, окна, ниши с треугольным, иногда с трапецеидальным основанием и окружающий храм по периметру трехступенчатый цоколь. При этом положение окон приделов в некоторых случаях также подчинялось канонам данной схемы; так, оси восточных и западных окон находились на линиях, проведенных из центра храма под углом в 30° в отношении к длинной оси, а оси северных и южных окон — на линиях, проведенных из того же центра под углом в 45° в отношении к осям.

Принцип приведенного плана, созданного по канонам теоретически разъясненной системы, не отличается от плана Рипсиме. Существующие различия являются следствием различия подкупольных квадратов. Если здесь он действительно квадрат и все стороны имеют одинаковую длину, то подкупольный квадрат Рипсиме на 50—60 см вытянут по оси север—юг. Благодаря этому проемы трехчетвертных ниш в Рипсиме в отношении к диагонали наиболее каноничны — мало смещены. В некоторых других храмах этого типа отклонения от данной системы выражаются в незначительных смещениях центров абсид из-за формы подкупольного квадрата и в других деталях, представленных на чертежах, составленных для пропорции планов этих храмов.

Эта система—схема создания плана достигла своего возможного совершенства в Рипсиме и применялась чаще всего в храмах, построенных непосредственно после Рипсиме.

В основе создания объемно-пространственного облика исследуемых храмов также лежала определенная схема. Она приведена в чертежах новых реконструкций Авана, Таргманчаца, Дзорадира и других храмов.

Рассмотренная здесь система была известна строителям этих храмов. Естественно, строительство церквей велось с ведома духовных центров, ими диктовались тип и размеры строящегося сооружения. В данном случае они удовлетворялись указанием размеров купола (внутреннего диаметра), остальное же было известно архитектору. Очевидно, этим и объясняются различия в храмах (в основном в деталях) даже с одинаковой величиной купола.

Схема создания памятников данного типа в большой мере помогает определению последовательности возникновения храмов, уточнению дат их строительства.

## ВМЕСТО ЗАКЛЮЧЕНИЯ

Аван — первый из известных нам центральнокупольных памятников с крестообразным основанием, который имел четыре угловых придела, обладал трехчетвертными нишами диагонального расположения. Трехчетвертные ниши — результат архитектурной разработки тесной связи четырех угловых помещений с центральным пространством храма и наиболее удобного перехода между ними. Они же (ниши) являются характеризующим признаком памятников данного типа.

Те древнейшие храмы этого типа, которые изначально не имели четырех угловых помещений, но имели трехчетвертные ниши, являются упрощениями типа; они построены после Авана.

До Авана тетраконхи с западными приделами не встречаются, фактически Аван—это первый памятник с четырьмя приделами.

До Авана трехчетвертные ниши диагонального расположения нигде не встречаются. Следовательно, этот мотив трехчетвертных ниш, являющихся переходом, впервые создан в Аване.

До Авана бемы встречаются в восточных частях трехнефных храмов V в. в Егварде и Аштараке. Бемы в западной части впервые возникли в Аване.

До Авана тетраконхи имели равные рукава. Впервые в Аване тетраконх вытянулся по оси восток—запад.

До Авана не было часовен, молелен, маленьких церквей с круглым планом. Таковые впервые возникли в Аване.

До Авана в куполах не встречается каменных декоративных крестов. На куполах восточных часовен Авана таковые есть.

До Авана применялась тромповая система купольной передачи. В Аване впервые применена комбинированная система перехода посредством чередующихся арок и парусов.

До Авана не существовало канонической схемы создания плана храмов данного типа. Она была создана и впервые применена в Аване.

Все то новое, что впервые встречается в Аване, явилось конкретным прототипом подобных памятников и нашло широкое применение в построенных после Авана памятниках.

Все это говорит о том, что зодчий, построивший Аван, обладал огромным талантом, творческой фантазией и строительным мастерством.

* *
*

У Себеоса в качестве строителя Аванского храма упоминается противопрестольный католикос Ован Багаранский, об архитекторе ничего не говорится.

В наши дни принято считать, что оставленные историками имена лиц, бывших в свое время католикосами всех армян, являются именами заказчиков, или, как сейчас их называют, ктиторов, а архитекторами были лица, чьи имена не сохранились, так как это считалось недостойным. Фиксировались имена заказчиков, вся слава постройки храмов несправедливо приписывалась им.

Армянское средневековье имело довольно высокий уровень культуры, в условиях которой такого рода жестокость по отношению к творцу не могла иметь место. В подобных обстоятельствах было бы невозможным появление новых больших творений, в то время как высокохудожественные произведения в нашей архитектуре не единичные явления. Все это дает основание заключить, что действительными авторами крупных памятников были те, чьи имена сохранены историей. Так, автором Авана был Ован Багаранский, Звартноца—Нерсес III Строитель, Рипсиме—Комитас.

* *
*

Из приведенных на страницах данной работы памятников обстоятельно исследованы только некоторые, остальные же рассмотрены лишь в рамках решения коренных вопросов. Однако необходимость всестороннего исследования каждого из них не вызывает сомнений.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] **Г. Н. Чубинашвили,** Памятники типа Джвари, Тбилиси, 1948, стр. 9, 60.

[2] **А. Л. Якобсон,** Очерк истории зодчества Армении V—XVII веков, Москва—Ленинград, 1950, стр. 23.

[3] Հեղինակային կոլեկտիվ. Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 149:

[4] История Византии, Москва, 1967, стр. 396.

[5] Ռուբեն Աղաբաբյանի «Ավանի վերակազմությունը» աշխատությունը, որ այս առումով մյուսներից տարբերվում է, առայժմ միակն է (տե՛ս **Р. Я. Агабабян.** Реконструкция Авана (предварительное сообщение. Труды ЕрПИ им. К. Маркса, 20.9.1947, Ереван).

[6] **Սեբեոսի** Եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939:

[7] **Կ. Գ. Ղաֆադարյան,** Պատմահնագիտական դիտողություններ, Ավանի տաճարի վերաբերյալ: «Պատմաբանասիրական հանդես», № 3, 1968, էջ 87:

[8] Ավելի վաղ՝ 1955 թ. իր «Храм Рипсимэ» աշխատության մեջ (էջ 91) Ավանի կառուցումը թողնում էր 590—609/610 թթ.:

[9] **Կ. Գ. Ղաֆադարյան,** Պատմահնագիտական դիտողություններ, Ավանի տաճարի վերաբերյալ, «Պատմաբանասիրական հանդես», № 3, 1968, էջ 89:

[10] **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, էջ 288:

[11] **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների ժողովածու, 1948, Երևան, էջ 70:

[12] Manuel d'art bizantin. Par Ch Dihl, Paris, 1910 p. 406.

[13] **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների ժողովածու, Երևան, 1948, էջ 70—71:

[14] Նույն տեղում, էջ 71:

[15] **Н. И. Брунов,** Архитектура Византии. Всеобщая история архитектуры, том 3, стр. 57, «Церковь Апостолов не была крестовокупольной постройкой и примыкала к купольным базиликам...».

[16] Կոստանդնուպոլիսի Առաքելոց, Եփեսոսի Հովհանի, ինչպես և Վենետիկի սուրբ Մարկոսի եկեղեցիները համակարգում՝ թե ներսից, թե դրսից խաչաձև են՝ զուրկ անկյունային մասերից, հետևաբար երկրորդական չորս գմբեթները չէին կարող դրվել Ավանի սիստեմով՝ շենքի անկյուններում:

[17] **Р. А. Кацнельсон,** Архитектура Византии. Всеобщая история архитектуры, под редакцией Б. П. Михайлова, Москва, 1958, стр. 375.

[18] Թորոս Թորամանյանը իր հայտնի «Էջմիածնի տաճարը» աշխատությամբ հավաստում է, որ Էջմիածնի Մայր տաճարը եղել է հինգ գմբեթանի: Նման եզրակացության հանգելու նրա հիմնական կռվանը այժմյան տաճարի հյուսիսակողմի ճակատի երկու թևերի վերնամասում ցարդ պահպանված փոքր ճակտոնների առկայությունն է, ինչպես և այլ ապացույցներ:

Սույն աշխատության հեղինակը լիովին բաժանում է Թորամանյանի կարծիքը, դեռևս V դարում Վահան Մամիկոնյանի վերակառուցած տաճարի հինգ գմբեթանի լինելու վերաբերյալ: Սակայն Թորամանյանից հետո հանդես եկող շատ հետազոտողներ այդ կարծիքը չեն բաժանում և Էջմիածինը համարում են մեկ գմբեթով տաճար:

Քանի որ տվյալ հարցի վերջնական լուծումը մնում է ապագային, հնարավոր ենք գտնում Հայաստանում կառուցված հինգ գմբեթանի տաճարներից առաջինը (առայժմ) համարել Ավանը:

[19] **Н. М. Токарский,** Архитектура древней Армении, Ереван, 1946, стр. 80.

[20] **Р. Я. Агабабян,** Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950, стр. 60.

[21] **Н. М. Токарский,** Архитектура Армении VI—XIV вв., Ереван, 1961, стр. 121.

[22] **В. М. Арутюнян** и **С. А. Сафарян,** Памятники армянского зодчества, Москва, 1951, стр. 39.

[23] **А. Б. Еремян,** Храм Рипсиме, Ереван, 1955, стр. 93.

[24] **Հեղինակային կոլեկտիվ,** Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, գլուխ Դ, Երևան, 1964, էջ 147:

[25] **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, էջ 71:

[26] **Г. Н. Чубинашвили,** Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967, стр. 20.

[27] Այս կանոնը, իհարկե, առավելապես պարտադիր է գմբեթ ունեցող բազիլիկ տաճարների արևմտյան և արևելյան ճակատների համար, քանի որ դրանք, այդ ճակատները ծածկում են գմբեթի լայնքն ունեցող միջին նավի ծայրերը, մինչ Ավանի տիպի տաճարների համար խիստ պարտադիր չէ: Այստեղ նրանք կարող են ունենալ գմբեթից անհամեմատ փոքր լայնք ունեցող խորանների արտաքին չափերը: Այդպես է Գառնահովտում (նաև Մարտվիլիում):

[28] Հետաքրքիր է, որ երկկենտրոն է Ավանի նաև հարավակողմի (թերևս և հյուսիսակողմի) գմբեթակիր կամարը: Ինչպես երևում է, ճարտարապետը այդ միջոցով բարձրացրել է հիշյալ կամարների գագաթները, նպատակ ունենալով մեղմել մի կողմից՝ հյուսիսային և հարավային, մյուս կողմից՝ արևելյան և արևմտյան գմբեթակիր կամարների գագաթների բարձրությունների միջև ստացվող տարբերությունը, որ հետևանք է համապատասխան խորանների մեծությունների տարբերության:

Եվս երեք օրինակ՝ երկկենտրոն են Հռիփսիմեի հյուսիս-արևմտյան ավանդատան, Զվարթնոցի քառակուսի հիմքով ավանդատներից մեկի թաղերը (տե՛ս **А. Б. Еремян,** Храм Рипсиме, таблица 30, նաև **Г. Н. Чубинашвили**, Памятники..., ալբոմ, էջ 7, չափագրությունը՝ Ն. Պ. Սևերովի, ինչպես և Բագարանի խորանների եզրակամարները ու գմբեթակիր կամարները (տե՛ս **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների ժողովածու, 1942, էջ 123, նկ. 74):

Մեր օրերում ընդունված այն կարծիքը, թե Ավանի կառուցման ժամանակներում գործածական է եղել պայտաձև կամարը միայն, իսկ երկկենտրոնը ստեղծվել և գործադրվել է X և ավելի ուշ դարերում, ենթակա է ճշգրտման:

Արդ, Ավանի (նաև այլ տաճարների) օրինակով բացահայտվում է մեր արվեստում, դեռևս VI դարում տեղ գտած շատ կարևոր այդ երևույթը:

Ահա այս հիման վրա ամրանում է մեր ենթադրությունը, որ, թերևս Իշխանի գմբեթակիր կամարները, որ նույնպես երկկենտրոն են, հենց են գալիս՝ VII դարից, երբ Ներսեսը կառուցում էր իր եպիսկոպոսական կաթողիկեն հայրենի Իշխանում:

Ավանում գոյությունը պահպանած հարավակողմի գմբեթակիր կամարի գագաթում առկա է փականային շեղիգ քարը: Մեր տաճարաշինության սովորույթում կիսագմբեթածածկերը իրականացվել են քարի հորիզոնական շարքերով: Ամեն մի շարքը իր թեքվածքն է ունեցել և ամեն քարը՝ իր շարքին հատուկ եզրատաշվածքը: Եվ քանի որ խորաններն իրենց հիմքում կիսակլորից ավելի խորություն են ունեցել, կիսագմբեթածածկի գագաթում վերջին քարը ստացել է բոլորակ եզրանկար ու նրանից դեպի դուրս՝ դեպի գմբեթարդի եզրակամարը ձգված մի նեղ քարաշերտ, որը և դարձել է եզրակամարի փականային քարը:

Խաչակերպ քաղը, որ միմյանց ուղղահայաց երկու աշտաձև թաղերի պարզ համակերպումն է, իրեն գագաթում ունի այդ քարերը, որոնք և իրենց դասավորությամբ խաչակերպ թաղը բաժանում են չորս քառորդների:

Ավանում առկա գմբեթարդների և եզրակամարների այս կառուցելակերպը, իրեն բնորոշ փականային նեղ քարերով, յուրահատուկ է մեր միջնադարյան կառույցներին: Այն իր գործադրությունն է գտել նաև ճարտարապետական այլ շրջանակների շինություններում:

[29] Այն մասին, թե իբր Զվարթնոցն և Դրանդան նախորդել են Ավանին և վերջինիս ճարտարապետը նրանցից է վերցրել իր շինության հատակաձևը, թյուրիմացություն է, որի մասին կխոսվի տեղում:

[30] **Թ. Թորամանյան,** Աշխատությունների ժողովածու, 1942, էջ 220, «Էջմիածնի տաճարը»:

[31] **Н. М. Токарский,** Архитектура древней Армении, стр. 61.

[32] **А. Б. Еремян,** Храм Рипсиме, стр. 80.

[33] **Ա. Ա. Սահինյան,** Էջմիածնի Մայր տաճարը, «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» գրքում, Երևան, 1963, էջ 115, 117, 121:

[34] A. Khatchatrian, L'Architecture Arménienne du IV au VI siècle, Paris, 1971, p. 73.

[35] Ավանի արևելակողմի անկյունային երկու սենյակները, աներկբա, մատուռներ են՝ փոքր եկեղեցիներ-աղոթատեղի: Արևմտյան երկու սենյակների գմբեթածածկի վրա, ներսի կողմից չկան քարակերտ դեկորատիվ խաչեր, ինչպիսիք կային արևելյան սենյակների ծածկերում: Անկասկած է, որ ինչ-որ չափով այս վերջիններիս նշանակությունը տարբեր է եղել: Հետազոտողներից ոմանք, ելնելով տաճարների հարավ-արևմտյան սենյակներում առանձին մուտքեր ունենալու իրավիճակից, այդպիսիք համարել են ապաշխարհության սենյակ, կանանց բաժին, հեթանոսների սենյակ և այլն:

Ավելի վաղ, արևելյան սենյակներից մեկը, նույնիսկ երկուսը, հանդիսացել են ավագ քահանայի ու իր փոխարինողի կացարաններ: Ժամանակ անց, արևելակողմի սենյակների նշանակությունը փոխվում է, այդպիսիք դառնում են ավանդատուն, աղոթարան, մատուռ: Մինչև եկեղեցապանի համար եկեղեցուց դուրս առանձին շինություն ունենալը, հնարավոր է ենթադրել, որ արևմտակողմի առանձին դռնով սենյակը հանդիսացած լինի քահանայի կացարան: Առանձին դուռ ունենալու անհրաժեշտությունն այդ դեպքում անվիճելի է, քանի որ եկեղեցու դռները բաց պիտի լինեին միայն արարողության ժամանակ, որից հետո պիտի փակ լինեին, մինչ եկեղեցապանը իր կացարանի դռնից ամեն պահ կարող էր ներս ու դուրս անել:

Առաջին հայացքից հասարակ ու աննշան թվացող այս ենթադրությունը, առօրյա իրադրությունը նկատի ունենալով, պետք է որ հավանականությունից հեռու չլինի:

Ավանի հարավ-արևմտյան սենյակում առանձին դուռ ունենալը հետագայում դարձավ սովորույթ և կրկնվեց ավելի ուշ կառուցված նույն տիպի մի քանի տաճարներում:

[36] Վրաստանի նույն տիպի հուշարձանները չեն ամփոփված ուղղանկյուն ծավալներում, նրանցում բոլոր խորանները բազմանիստ ծավալներով դուրս են գալիս ճակատային պատերից: Այդպես է Զվարթնոցում, Աթենում, Մարտվիլիում, Հին Շուամթայի գմբեթավոր մեծ եկեղե-

ցում: Այս էլ վրացական տվյալ տիպի հուշարձանների յուրահատուկ կողմն է:

Ակներև հակասելով իրերի ռեալ վիճակին, Վ. Վ. Բերիձեն նորերս (1974 թ.) հրատարակած իր «Грузинская архитектура раннехристианского времени (IV—VII вв)» աշխատության մեջ տաճարների ուղղանկյուն ծավալներում ամփոփելը համարում է վրացական տաճարների յուրահատուկ կողմը, որ իբր սրանցում խորանները դուրս չեն գալիս ճակատային պատից: Հիշյալ աշխատության 10-րդ էջում կարդում ենք. «...очень типично, что алтарная абсида не выступает, а остается за линией прямой фасадной стены». երբ գրում է թե «...подавляющая масса грузинских церквей придерживается «прямоугольной формулы», կարող է վերաբերել անհամեմատ ուշ և ոչ երբեք, վաղ միջնադարի հուշարձաններին և ոչ այս տիպի տաճարներին:

37 Ս. Մնացականյանը Մաստարան նկատի ունենալով, հենց այդպես էլ գրում է. «Այս տիպի կառուցվածքներում, կոնստրուկտիվ տեսակետից առավել վտանգավոր էին անկյունային մասերում դուրս եկող արտաքին պատերի ուղղանկյուն հատվածները, որոնք ինչպես դժվար չէ տեսնել, միաժամանակ հանդիսանում էին ամբողջ հորինվածքի առավել ծանրաբեռնված հանգույցները: Այս պայմաններում միանգամայն տրամաբանական էր ճարտարապետների ձգտումը՝ ուժեղացնել այս հանգույցները, դրանք փոխարինել համեմատաբար ավելի ուժեղ, կիսաշրջանաձև (պետք է լիներ՝ $^3/_4$ — Տ. Մ.) հենախորշերով» տե՛ս «Երևանը և նրա շրջակայքը», Երևան, 1971, էջ 31—32): Նկատենք, որ այստեղ «առավել վտանգավոր» տեղերը անկյունային մասերը չեն, որ ներքին չորս մեծ տրոմպներն իրենց սահմաններում խորաններին հավասար իրենց վրա են վերցնում գմբեթից եկող բեռը, դրանով էլ ազատում անկյունները որևէ ծանրաբեռնությունից: Եվ ահա, քարով շարված $^3/_4$ խորշերը Ավան-Հռիփսիմեի տիպի հուշարձաններում կառուցվածքային ամենաթույլ հանգույցներից են: Հենց այդտեղ, որտեղ երկու կողմերից գմբեթակիր կամարների միջոցով փոխանցվում է գմբեթից եկող ուժը և կենտրոնում հորիզոնական ուղղությամբ, դեպի դուրս տարածվող ուժերը, զանգվածեղ մույթերի փոխարեն առկա են լղարիկ որմնամույթեր, ունենալով իրենց թիկունքակողմում կատարյալ դատարկություններ: Իրականում այդ $^3/_4$ խորշերը իրենց վրա եկող ուժերը ոչ թե մարում, այլ փոխանցում են արտաքին հոծ պատերին: Մաստարայի, Կարսի Առաքելոց եկեղեցու, այդ տիպի, ինչպես և բազմաթիվ պարզ խաչաձև եկեղեցիների «անկյունային պատեր» անվանվածները հուսալիորեն դրված են գմբեթակիր կամարների ճիշտ շարունակության վրա, դրանք կառուցվածքներ են, որոնք մշակված են անսխալ և հանդիսանում են հակաերկրաշարժային գործոններ: Մաստարան Ռսկեպարը, Հառիճը անաղարտ կանգուն են շուրջ 1300—1400 տարի, Կարսի նույնատիպ Առաքելոց եկեղեցին՝ 1000 տարի, այդ ինչպե՞ս կարելի է նրանց «անկյունային պատերը» համարել անհուսալի և դրանով բացատրել Ավան-Հռիփսիմեի տիպի տաճարների ներքին անկյունային $^3/_4$ խորշերի առաջացումը:

Նույն հարցի վերաբերյալ իր «Հռիփսիմե» աշխատության 87 էջում Ա. Բ. Երեմյանը գրում է. «Գմբեթատակ քառակուսու անկյուններում $^3/_4$ խորշերի ի հայտ գալը, մեզ թվում է, պայմանավորված էր տրոմպների և խորանների վրայով նետված գմբեթակիր կամարների ուժեղացման անհրաժեշտությամբ...»:

38. Ճարտարապետության հետազոտողներից շատերը $^3/_4$ խորշերը առանց երկմտանքի անվանում են «անցում» դեպի ավանդատուն: Օրինակ Հ. Խալփախչյանը «Հայաստանի ճարտարապետությունը» աշխատության մեջ («Всеобщя история архитектуры» հանրագիտարանի 3-րդ հատոր, էջ 216) գրում է՝ Ավանում «գմբեթատակ տարածության անկյունները ընդարձակված են $^3/_4$ խորշերով, որոնք հանդիսանում են բոլորակ ավանդատների համար անցումներ»: Նա այդ, գրեթե նույն ձևով, կրկնում է նաև 217 էջում:

Ճշտորեն նույնն են ասում նաև Գ. Չուբինաշվիլին, Ն. Սևերովը, Ա. Կուզնեցովը: «Կախեթիայի ճարտարապետությունը» իր աշխատության 246 էջում Գ. Ն. Չուբինաշվիլին գրում է. «...անցում են... գոյացնում $^3/_4$ խորշերը...»: Իր մյուս՝ «Ջվարիի տիպի հուշարձաններ» աշխատության 32 էջում գրում է, որ ~~այդ նպատակով~~ «...սարքված $^3/_4$ խորշերից դռները տանում են... անկյունային սենյակներ»: Նույն աշխատության 105 էջում գրում է. «Ավանի, Հռիփսիմեի, Թարգմանչացի անցումնային $^3/_4$ խորշերի դրությունը...» և այլն:

Ն. Սևերովը իր «Վրաց ճարտարապետության հուշարձաններ» աշխատության 171 էջում գրում է. «...Միանում են... գմբեթատակ քառակուսու անկյունների հատուկ անցումների՝ $^3/_4$ խորշերի միջոցով»:

Ա. Վ. Կուզնեցովը իր «Կենտրոնագմբեթ շինությունների տեկտոնիկան և կոնստրուկցիան» աշխատության 120-րդ էջում գրում է. «...անկյունային անցումներ՝ երեք քառորդ խորշեր»:

Պարզ է մի բան՝ անկյունային սենյակներ չունեցող տաճարներում խոսք չէր կարող լինել անցումների անհրաժեշտության մասին, հետևաբար դրանցում $^3/_4$ խորշեր չէին ստեղծվի: Այդպիսիք առաջին անգամ ստեղծվել են Ավանում, որը մեզ հայտնի առաջին խաչաձև եկեղեցին է, որ բոլոր չորս անկյուններում ունի սենյակներ:

Այսուհետև $^3/_4$ խորշերին անդրադառնալիս, պետք է նկատի ունենալ, որ այդպիսիք սկզբնապես առաջացել են, որպես **անցումներ** անկյունային սենյակները գնալու համար:

39 Ստ. Մնացականյանը «Երևանը և նրա շրջակայքը» աշխատության 33-րդ էջում $^3/_4$ խորշերն անվանում է «շրջանաձև նախամուտքեր», «հենախորշ նախամուտքեր», հասկանալի է՝ անկյունային սենյակները մտնելու ճանապարհին, միաժամանակ, նախորդ՝ 32-րդ էջում $^3/_4$ խորշերը դնում է նախորդ, իսկ անկյունային սենյակների առաջանալը հաջորդ հերթում՝ «Զարգացման հաջորդ աստիճանն էլ եղավ Ավանի տիպի հորինվածքը, որտեղ ամբողջ կառուցվածքը առնվեց արտաքին ուղղանկյուն եզրաձև ունեցող պատերի մեջ, և անկյունային սենյակներ ավելացրին նաև արևմտյան կողմից»: Դեռ ավելին, ըստ նրա, արև-

մտակողմի երկու սենյակների առաջացումը հետևանք է «արտաքին ուղղանկյուն եզրաձև ունեցող պատերի», և ոչ հակառակը, որ արևմտյան անկյունային սենյակների առաջացումով տաճարի արտաքին պարագծերն ընդունեցին ուղղանկյուն եզրաձև:

Եթե հետազոտողը $\frac{3}{4}$ խորշն անվանում է «մուտք», իսկ այդպիսին մուտք են համարում բոլորը (անցման ճանապարհ դեպի ավանդատուն), ապա առանց ավանդատան, չէր կարող մուտք ստեղծվել. այս նշանակում է, որ $\frac{3}{4}$ խորշն է զարգացման հաջորդ աստիճանը և ոչ հակառակը:

[40] Ինչպես հայտնի է, Հայաստանի և Վրաստանի այս տիպի տաճարների հատակաձևերը միմյանցից տարբերվում են արտաքին պատերի պարագծերով: Եթե վրացական օրինակներում արտաքին պարագծերը շրջանցում են խորանների ու ավանդատների ներքին ուրվագծերը, գրեթե կրկնում այդպիսիք, ապա հայկական օրինակներում ներքին խաչաձև հատակաձևը ամփոփվում է արտաքին ուղղանկյուն-քառանկյան մեջ: Մեր տաճարների այդ յուրահատկությամբ են ոմանք բացատրում այն «անկանոնությունները», որոնք նրանց կարծիքով հատուկ են ու բնորոշ միայն մեր տաճարներին, այդ թվում և Ավանին: Մինչդեռ այդ «անկանոնություններ» համարված երևույթները առկա են նաև վրացական այդ տիպի վեց հուշարձաններից՝ չորսում, թեպետև դրանք ամփոփված չեն քառանկյուն պարագծերում:

Հենց միայն այս հանգամանքը բավարար է, որ այդ թեզը համարվի մտացածին:

[41] «Разыскания...» գրքի (1967 թ.) 17-րդ էջում, խոսելով Ավանի հյուսիսային և հարավային խորանների ոչ մեծ խորության վերաբերյալ հեղինակը նշում է «...քառակուսու և խորանի միջև ինքնուրույն բեմ չունեն»: Այս տիպի տաճարների դասական օրինակներում, որպես կանոն, կողային՝ հյուսիսային և հարավային խորանների և գմբեթատակ քառակուսու միջև բեմ չի լինում: Ավանին ուղղված վերոհիշյալ նկատողությունը ակներև անտեղի է:

[42] Բյուզանդիոնի ընդարձակ տարածքում իրականացվող մեծածավալ շինարարական աշխատանքներում, իրենց մասնագիտության բերումով, հայ քարագործ վարպետների և ճարտարապետների կարևոր մասնակցությունը եղել է սովորական, առօրէական երևույթ և, հետևաբար երկրներից որևէ մեկում գործադրություն գտնող ամենայն նորույթ չէր կարող երկուստեք հայտնի չլինել:

[43] **А. В. Кузнецов,** Своды и их декор, Москва, 1938, стр. 368—369.

[44] Այդ տաճարի ներկայիս ծածկը ճարտարապետ Տըրդատի կառուցածն է, այն լրիվ կիսագունդ է:

[45] **А. В. Кузнецов,** Тектоника и конструкция центрических зданий, Москва, 1951, стр. 199.

[46] **Н. М. Токарский,** Архитектура древней Армении, стр. 80.

[47] **Н. М. Токарский,** Архитектура Армении IV—XIV вв., стр. 121.

[48] **Г. Н. Чубинашвили,** Разыскания..., стр. 15.

[49] **Г. Н. Чубинашвили,** Памятники..., стр. 108.

[50] Նույն տեղում; էջ 111:

[51] **Г. Н. Чубинашвили,** Разыскания..., стр. 20.

[52] **Ս. Խ. Մնացականյան,** Երևանը և նրա շրջակայքը, Երևան, 1971, էջ 34:

[53] Ոչ մի կերպ ընդունելի չի կարելի համարել, որ իբր Էջմիածնի կենտրոնագմբեթ տաճարը կառուցման օրվանից (*V* դար) մինչև *VII* դարը՝ մինչև քարակերտ գմբեթի կառուցումը Կոմիտաս կաթողիկոսի կողմից, ունեցել է փայտաշեն գմբեթ: Մինչև *VII* դարը հասած այդ փայտաշեն գմբեթը պետք է եղած լինի ժամանակավոր կառուցվածք սկզբնապես գոյություն ունեցող և ինչ-որ առիթով կործանված քարաշեն գմբեթածածկին միաժամանակ փոխարինելու համար:

[54] **Г. Н. Чубинашвили,** Разыскания..., стр. 23.

[55] Նույն տեղում, էջ 22, 23, 28:

[56] **Գարեգին** արքեպիսկոպոս **Հովսեփյան,** Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Գ. Նյու-Յորք, 1944, էջ 23 (Հռիփսիմեն ինքը շատ հեռու չէ այս շրջանից՝ 618 թվին շինուած, բացի դորանից կան նույն տիպի եկեղեցիներ, որ Հռիփսիմէից աւելի հին ենք համարում, ինչպես Ադիյամանի տաճարն է Արագածի արևմտեան լանջին. կարծում ենք Կամսարականների գործ):

[57] Այս տաճարներում առկա համաչափությունները բացահայտող սխեմաներում գործադրություն են գտել շրջագիծը, **ինչպես ուղիղ, այնպես էլ թեք ցանցերը,** «**ոսկե բաժանման**» **ֆունկցիոնալ** հարաբերությունները, երբեմն առանձին-առանձին, երբեմն միասին—միաժամանակ (տե՛ս **Տիրան Մարության,** Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ, Երևան, 1963, էջ 114, նաև նույնի Բանակ տաճարին նվիրված աշխատությունը:

[58] **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների ժողովածու, 1942, էջ 65:

[59] **Մխիթար Գոշ.** Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 141—142:

[60] **Н. М. Токарский,** Архитектура Армении, IV—XIV вв., стр. 122, 123.

[61] **А. Б. Еремян,** Храм Рипсиме, стр. 97—100.

[62] Արամուսում պահպանված քարգործ վարպետների նշաններ:

[63] **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 111:

[64] Նույն տեղում, էջ 162—163:

[65] Հետազոտողներից ոմանք Գառնահովտի արևմտյան սենյակներում, մեկական պատուհանի փոխարեն, ցույց են տվել երկուական պատուհան (տե՛ս **А. Б. Еремян,** Храм Рипсиме, стр. 101); так же **Г. Н. Чубинашвили.** Памятники... Таблицы, стр. 81): Իրականում այդ սենյակները համապատասխանաբար հյուսիսից և հարավից պատուհաններ երբևէ չեն ունեցել. երբեմնի ունենալու և հետո փակելու նշաններ ևս չկան: Սակայն, հարավային ճակատի արևմտյան ծայրում ավելի բարձր դիրքով երևում է ներքի տպավորություն թողնող փոքր պատուհան՝ անկյունային սենյակի ծածկից վերև առկա տարածությունը լուսավորելու և օդափոխելու համար:

67 **А. Б. Еремян,** Храм Рипсиме, стр. 100.

67 Հետաքրքիր է, որ նույնպիսի պատկեր ունեն, սակայն գծանկարի տեխնիկայով կատարված Ծրոմիի վերնահարկերի կամարակիր ելունաձև բարձակի (кронштейн) քարերը:

68 Զանազան հրատարակություններում տեղադրված Գառնահովտի հատակագծում հյուսիսային և հարավային զույգ որմնամույթերը, արևելյան և արևմտյան զույգ որմնամույթերի համեմատությամբ փոքրացված է պատկերված, մինչ նրանք գրեթե հավասար են:

69 Ն. Տոկարսկին իր հիշյալ աշխատություններում կոնկրետ չի նշում, թե զույգ սյուները արևմտյան ճակատի խորշերում են միայն, նա ուղղակի գրում է, «...имеются... колонки в основных нишах...» (էջ 127): Եթե խորշերի մեջ դասակարգում մտցնելու լինենք, ապա այս տիպի տաճարներում հիմնական խորշերը, թերևս, համարվեն արևելյանները, որոնցում սակայն սյուներ չկան:

70 **Г. Н. Чубинашвили.** Разыскания..., стр. 16, 19, 25, 27, 28, 35.

71 **Н. М. Токарский,** Архитектура Армении IV—XIV вв., стр. 126—127.

72 Ն. Տոկարսկին իր «Հին Հայաստանի ճարտարապետությունը» (1946 թ.) աշխատության 89-րդ էջում գրում է, որ Ադիամանի կառուցումը, ելնելով մի շարք յուրահատուկ մանրամասների առկայության, կարելի է թվագրել *VII* դարի առաջին կեսով:

73 Խորշի հատած կիսակոնաձև ծածկը, նույնն է թե հատած տրոմպը, որ առկա է շատ հուշարձաններում, ավելի որոշակի և հստակ է արտահայտված այն սեղանաձև հիմք ունեցող խորշերում, որոնցում չկան զույգ սյուներ ու նրանց վերևում՝ կիսաշրջան հիմքով նոր խորշեր, ինչպես որ է Գառնահովտի, Թալինի, Իրինդի և այլ տաճարների արևմտյան, Արթիկի, Ծրոմիի և այլ տաճարների արևելյան ճակատներում:

Գառնահովիտը Հռիփսիմեից վաղ կառուցված լինելու դեպքում, պետք է ընդունել, որ հստակ իրականացված սեղանաձև հիմքով խորշը առաջին անգամ ստեղծվել է հենց այնտեղ՝ Գառնահովտում, գործադրվել նրա արևելյան, հյուսիսային և հարավային ճակատներում:

74 *VII* դարի 2-րդ կեսում տրոմպային փոխանցումը ամենուրեք իր տեղը չի զիջում առագաստայինի, այն առկա է նույնիսկ Թալինի Կաթողիկեում, դեռ ավելին՝ *VIII—X* դարերի որոշ հուշարձաններում:

75 **Ա. Ն. Շահինյան,** *VII* դարի կոթողներ Գեղամա լեռներում, Էջմիածին (հանդես) № Է, էջ 78, 1974:

76 Պաոլո Կունեոյի հոդվածը տպագրվել է ֆրանսերեն, Փարիզում լույս տեսնող հայագիտական «Reuue des Etades Armeniennes» հանդեսի 1968 թվի համարում, որ *V*-ն է, էջ 91—108) նաև Արմեն Զարյանի թարգմանությամբ՝ «Գրական թերթ» 22 օգոստոսի, 1969 թ.):

77 Tommaso Breccia Fratadocchi. La Chiesadi S. Ejmiacin a Soradir, Roma, 1971.

78 XIX դարի հայ ճանապարհորդ Մ. Գ. Միրախորյանը անցնելով Զորադիրի կողմերով, իր հուշագրություններում թողել է ղեռի և տաճարի համառոտ նկարագրություն: Նրա հաղորդմամբ այդտեղ անցյալում գոյություն է ունեցել առևտրական կենտրոն՝ Սիգալ իշխանին պատկանող ամրոցապատ քաղաք:

Ծաքի անունը կրող այդ շրջանի հայկական անունը Աղբակ է եղել, իսկ գլխավոր քաղաքը՝ Հադամակերտ (այժմյան Բաշկալե գյուղի սահմաններում), որը և եղել է Արծրունյաց տոհմի բնակավայրը: Աղբակը ունեցել է քսան հազար բնակիչ, որից տասը հազարը՝ հայեր, մնացածը՝ քրդեր, ասորիներ, հրեաներ (**Մ. Գ. Միրախորյան,** Ճանապարհորդական նկարագրություն հայաբնակ արևելյան Թուրքիո շրջաններում, Կ. Պոլիս, 1885):

79 Իհարկե, չի կարելի կատեգորիկ բացառել մի վիճակ, երբ գմբեթաթմբուկը ներսից եղած լինի բոլորակ, դրսից այժմյան ձևով՝ չորս մեծ և տասներկու փոքր նիստերով:

80 Այստեղ էլ նշենք, որ նրբանկատ ճարտարապետը, ճիշտ այն մասում, որտեղ գմբեթաթմբուկի պատը մոտենում է բոլորակ եզրագծին կիսակոնաձև տրոմպի վերևում տեղադրել է հեծանաձև (քանդակածածկ) քար, վերևից եկող բեռը որմնամույթերին փոխանցելու համար, հարկավ բեռնաթափելով տրոմպը:

81 Վրաստանի այդ նույն տիպի տաճարները կոչում են Ջվարիի անունով՝ «Ջվարիի տիպի հուշարձաններ»:

82 Հռիփսիմեին անդրադարձել են շատերը, որոնց աշխատությունները միմյանցից տարբերվում են իրենց ընդգրկման ծավալով ու մոտեցման տեսանկյունով. դրանք մի դեպքում ճանապարհորդական նոթեր են, տպավորություններ, որ պարունակում են նաև պատմական տվյալներ, մյուս դեպքում տեսություններ են և ընդհանրացումներ տաճարի ոճական առանձնահատկությունների, նախօրինակների, կառուցման ժամանակի, ընդհանուր ճարտարապետության շղթայում նրա բռնած տեղի ու նշանակության վերաբերյալ, ապա և մենագրական բնույթի գործեր, որոնց մեջ նայվում են տաճարի կառուցման նախապայմանները, բուն շինության ճարտարապետական-գեղագիտական ու ճարտարագիտական առանձնահատկությունները, տաճարի ժամանակի ընթացքում կրած ձևափոխություններն ու նորոգումները, նրանում պահպանված արձանագրությունների վերլուծությունն ու գնահատումը. ներկայացվում են նրա համար նաև վերակազմության առաջարկներ ու նախագծեր:

Հռիփսիմեին նվիրված մենագրություն է **Ա. Բ. Երեմյանի** «Храм Рипсиме» աշխատությունը:

83 Գ. Ն. Չուբինաշվիլու կարծիքով, Հռիփսիմեն *VII* դարի գործ համարելը, նշանակում է հակասել հայ ճարտարապետության ընդհանուր զարգացման օրինաչափ ընթացքին: Եթե հետևելու լինենք հայ ճարտարապետության զարգացման նրա մշակած տեսությանը, ապա VII դարի հուշարձաններ կունենանք ընդամենը մի քանի հատ, այդ թվում՝ տվյալ տիպի հուշարձան մեկ հատ, VIII դարում՝ մեկ հատ, մնացածը IX դարի վերջում և X—XI դարերում:

Ստուգապես VI—VII դարերում կառուցված մեր հուշարձաններից Մաստարան, Պտղնին, Արամուսը, Արուճը, Թալինը, Գառնահովիտը, Հռիփսիմեն, Թարգմանչաց վանքը, Սիսիանը, Զորավարը և էլի բազմաթիվ հին հուշար-

ձևերն այդ տեսությամբ տեղափոխվում են *VIII—IX* և, մեծ մասամբ, X—XI դարերը (տե՛ս նրա «Разыскания...» աշխատությունը)։

84 **А. Б. Еремян,** Храм Рипсиме, стр. 65.

85 **Г. Н. Чубинашвили,** Разыскания..., стр. 35.

86 Նույն տեղում, էջ 35։

87 Եւ եղև յամի ԻԸ—երրորդի թագաւորութեանն Սպրուէզի Խոսրովու քակեաց Կաթողիկոսն Կոմիտաս զմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի Հայոց Կաթողիկոսի, որդւոյ սրբոյն Ներսէսին» (Պատմութիւն **Սեբէոսի** եպիսկոպոսի ի Հերակլն Թիֆլիս, **1913, էջ 141**)։ Մոտավորապես նույնն է գրում Հովհաննես կաթողիկոսը, թե «Զայս ժամանակաւ, մեծ հայրապետն Կոմիտաս, զվկայարան սուրբ Հռիփսիմեանց, նախ խրթին և փոքրատեսակ իմն էր շինեալ՝ և հրաշապէս և վայելուչ և նազելի և պայծառ շինուածով յարդարէր... **(Յովհաննես կաթողիկոս,** Թիֆլիս, 1912, էջ 74)։

88 **И. А. Орбели,** Избранные труды, Ереван, 1963, стр. 407.

89 Там же, стр. 408.

90 Там же, стр. 407.

91 Там же, стр. 409.

92 **Г. Н. Чубинашвили,** Памятники..., стр. 113. Նույնի Разыскания..., էջ 33։

93 **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների ժողովածու, 1942, էջ 215։

94 Նույնի էջ 90։

95 **Г. Н. Чубинашвили,** Разыскания..., стр. 34.

96 Մեր տաճարների բրգաձև տանիքը փոխ է առնված գմբեթների փայտաշեն, նույնպես բրգակերպ տանիքների ձևից։

97 **А. Б. Еремян,** Храм Рипсиме, стр. 55.

98 **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների երկրորդ ժողովածու, էջ 250։

99 Գմբեթից պահպանված արևելյան հատվածը կործանվել է 1926 թվականից հետո։

100 **Թորոս Թորամանյան,** Աշխատությունների երկրորդ ժողովածու, էջ 250։

101 **Г. Н. Чубинашвили,** Разыскания..., стр. 21.

102 **Н. М. Токарский,** Архитектура Армении IV—XIV вв., стр. 120, 124.

103 **А. Б. Ерьмян,** Храм Рипсиме, стр. 101, таб. 60.

104 Tommaso **Breccia Fratadocchi, La Chisadi** S. Ejmiacin a Soradir, **Roma, 1971, photo 60.**

105 Հնարավոր է նաև ենթադրել, որ սկզբնական՝ առանց անկյունային սենյակների Զվարթին կառուցված լինի հենց այս ժամանակներում՝ **630** թվականից հետո։ Հետագայում այդպիսիք՝, անկյունային սենյակները ավելացվել են որպես մատուռներ, հիմքում ընդունելով Խաչի փոքր եկեղեցու ձևերը։

106 Արևմտակողմի խորանում մեկ պատուհան է, սակայն հետքեր են մնացել, որ դեռևս կառուցման ժամանակ փորձ է արվել այդտեղ նույնպես ունենալ երեք պատուհան։ Այժմ տաճարի պատուհաններից շատերը, հատկապես հյուսիսային ճակատում շարված, փակված են։

107 Զվարթի ավանդատների, հատկապես հետագայում կցված դրսի երկու պատերը ներսից բավական անկանոն են, դրսից՝ լիակատար։ Այդ հուշարձանում ճակատները շարունակաբար այնպես են նորոգվել, որ գրեթե անհնար է դարձել տարբերել սկզբնականը հետագայում վերականգնվածից։

108 Որմնամույթերի խոյակները Սիսիանում և Պտղնիում մերձավորագույն նմանություն ունեն, խոյակները նույնն են, տարբեր են նրանց միջև առկա մեդալիոնները (Պտղնի) և խաղողի տերևի ու ողկույզի քանդակները (Սիսիան)։

109 Այս տաճարի՝ քիվի կոհովանյուսը, որ ստեղծված է եռաշերտ ժապավենով, նշան չէ նրա ուշ կառուցման, ճիշտ այդպիսի ժապավեններով են կերտված *VII* դարի 40—50-ական թվականների հուշարձան՝ Զվարթնոցի կամարաշար էքսեդրների սյուների հանրահռչակ խոյակները։

110 **Ս. Խ. Մնացականյան,** Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը։

111 Հյուսիսային կողմնորոշում ունեցող լանջերը այնպիսի բարձրության վրա, ինչպիսին ունի Քոլատակը (մոտ 2200 մետր), բնակավայրի համար բարենպաստ չեն։

112 **А. Б. Еремян,** Храм Рипсиме, стр. 102.

113 **Ս. Խ. Մնացականյան,** Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 84։

114 **Г. Н. Чубинашвили,** Разыскания..., стр. 37.

115 Ավանդատների մուտքերը չափագրողների կողմից վերհիշյալ հատակագծերում ցույց են տրված ոչ նույն տեղերում։

116 **Ե. Լալայան,** Վասպուրական, նշանավոր վանքեր, Ա պրակ (արտատպված «Ազգագրական հանդես»-ից), Թիֆլիս, 1912, էջ 42—44։

117 **И. А. Орбели,** Избранные труды, т. 1, Москва, 1968.

118 **Г. Н. Чубинашвили,** Архитектура Кахетии (текст) Тбилиси, 1959, стр. 415, 416.

119 **Пл. Иосселиани,** Описание древностей горо.а Тифлиса, 1866, стр. 132—133; то же **А. А. Муравьев,** Грузия и Армения, т. I, СПб, 1848, стр. 115.

120 **Г. Н. Чубинашвили,** Архитектура Кахетии, текст, стр. 232—246.

121 **А. В. Кузнецов,** Своды и декор, стр. 347.

122 **Г. Н. Чубинашвили,** Памятники..., стр. 124—126; то же, Разыскания..., стр. 13—40.

123 Քրոնիկում «եկեղեցի» բառը բացակայում է, այնտեղ բառացիորեն գրված է. «Գուարամը դրեց սուրբ խաչի հիմքը», կամ «Գուարամը հիմնադրեց սուրբ խաչը»։ «Մինչ այդ խաչը կանգնած էր բաց դաշտում», կամ «և նա եկեղեցին բարձրացրեց մինչև գոտկատեղ» արտահայտությունները պատկանում են XI դարի պատմիչ Ջիվանշերին։ Նույն ձևով է արտահայտվում XI դարի պատմիչ Սումբաթը, թե՝ «նա հիմնադրեց Խաչի եկեղեցին, որ գտնվում է Մցխեթայում»։

124 «Գիրք թղթոց», Սահակ Մեսրոպեան մատենադարան, Ե. Թ. 1901, էջեր 164, 178, 194, ինչպես նաև՝

Ուխտանես, Պատմություն բաժանման վրաց ի հայոց, Վաղարշապատ, 1871, էջեր 74, 89, 90, 130, 136:

125 Ամենուրեք ընդգծումները մերն են:

126 **Г. Н. Чубинашвили,** Памятники..., стр. 5.

127 **И. Джавахов,** История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века. СПБ, 1908 (Известия АН, 6. IX, 1908, № 5—6.

128 **Г. Н. Чубинашвили,** Памятники..., стр. 5.

129 Там же, стр. 5.

130 Там же, стр. 29.

131 Աշխատության 187—188 էջերում մանրատառ տպագրված 34 տողը ոչ մի առնչություն չունի Պ. Մ. Մուրադյանի վերոհիշյալ աշխատության մեջ արծարծված հարցին և ակներևաբար պատասխանելու մի փորձ է «Գիտություն և տեխնիկա» հայկական հանդեսի 1968 թ. մայիսյան համարում տպագրված տողերիս գրողի ««Գիրք թղթոցն» ու Մցխեթայի խաչը» աշխատության:

132 Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXVII, Тифлис, 1900.

133 **Г. Н. Чубинашвили,** Памятники..., стр. 3, 5.

134 Там же, стр. 32.

135 **Տ. Մարության,** «Գիրք թղթոց»-ն ու Մցխեթայի խաչը, «Գիտություն և տեխնիկա» (հանդես), 1968, № 5, էջ 44—52:

136 **М. А. Чхиквадзе,** Архитектура Джвари, Москва, 1940.

137 Այս տաճարի արևելյան խորանի երեք պատուհանների կամարաղեղները հորիզոնական հատվածներով միավորվում և ավարտվում են սեղանաձև հիմքով խորշերում: Դրանց երկու ծայրերի ձևավոր քարերը միաժամանակ պատկանում են հիշյալ խորշերի ճակատային պատերին: Այդ քարերն ունեն զգալի բարձրություն, նույնիսկ բարձր են իրենց շարքի հարևան քարերից: Նայվող կամարաղեղների շարքն, ընդհանրապես, բավականաչափ քայքայված վիճակում է. լավ են պահպանված երկու քարերի ներքնամասի քանդակապատ թեք հարթությունները:

Ոչ միայն լավ պահպանվածությամբ, այլև մյուսներից տարբերվող քանդակատեսակների առկայությամբ ու կատարման տարբեր տեխնիկայով որոշակիորեն հասկացվում է, որ այդ կամարաղեղի երկու ծայրերի քարերը հետո են քանդակվել և դրվել այդտեղ, և այդ պետք է որ տեղի ունեցած լինի հետագայում, անկյունային սենյակների ստեղծումով սեղանաձև հիմքով խորշերի առաջացման ժամանակ, երբ վերջիններիս ճակատային պատերը մասամբ ծածկել են արևելյան խորանի երկու կողային թեք հարթությունների վրա սովորականի պես շարունակվող կամարաղեղների երկու ծայրերի դրվագները:

138 **М. А. Чхиквадзе,** Архитектура Джвари, Москва, 1940.

139 **Н. М. Токарский,** Архитектура древней Армении, стр. 94.

140 **А. В. Кузнецов,** Тектоника..., стр. 120—121.

141 **А. Л. Якобсон.** Очерк истории зодчества Армении V—XVII вв. Москва—Ленинград, 1950, стр. 23.

142 Х. Милостью Божией и помощью Креста я, Теместия служанка Христова построила помещение это в поминовение души моей для поклонения женщин» (վրացերենից կատարված այս թարգմանությունը տե՛ս **Г. Н. Чубинашвили,** Памятники..., стр. 75).

143 **Е. Такайшвили,** «Эта надпись оправдывает сведения, будто Джвари был в древности женским монастырем» (**Г. Н. Чубинашвили,** Памятники..., стр. 75, примеч. 2).

144 Там же, стр. 74 (примеч. 3).

145 **П. М. Мурадян,** Армянская надпись храма Джвари («Вестник обществ. наук» АН Арм. ССР, № 2, 1968, стр. 65).

146 **Մ. Ա. Չխիկվաձեն** իր հետազոտությունների արդյունքները հրատարակել է 1940 թվականին: Ջվարիի վերաբերյալ ամենաընդարձակ և համապարփակ ընդգրկումներով աշխատությունը՝ «Ջվարիի տիպի հուշարձաններ»-ը գրել ու 1948 թվականին հրատարակել է Գ. Ն. Չուբինաշվիլին: Եվ ահա, աշխատության հեղինակը չի վերաքննում նախորդ հետազոտողի՝ Մ. Ա. Չխիկվաձեի աշխատության մեջ արծարծված առնվազն այն հարցերը, որոնց հետ ինքը համաձայն չէ և ունի տրամագծորեն հակառակ տեսակետ: Նա իր աշխատության 42-րդ էջում, տողատակի 4-րդ ծանոթագրությամբ այդպիսիք անվանում է «անհիմն», և իբր իր աշխատությամբ հերքում է Չխիկվաձեի տեսությունը: Ինչպես երևում է, Գ. Չուբինաշվիլին, չունենալով Մ. Չխիկվաձեի եզրակացությունները ժխտելու ռեալ փաստեր, գերադասում է լռել, դրանց չանդրադառնալ իր ասելիքը հրամցնել որպես ճշմարտություն: Հետագայում Ջվարիով զբաղվողներից ոչ ոք այլևս չի անդրադառնում այդ հարցերին: Հետևաբար, Մ. Ա. Չխիկվաձեի դրույթները առ այսօր մնում են չհերքված:

147 Այստեղից նաև հետևում է, որ անկյունային սենյակները տաճարին կցվել են առնվազն Ատրներսեհի մահից հետո:

148 **Г. Н. Чубинашвили,** Цроми, Москва, 1969, стр. 51, 52.

149 Նույն տեղում, էջ 97, ծանոթագրություն 31:

150 Նույն տեղում, էջ 52:

151 Նույն տեղում, էջ 10:

152 Թվում է անտրամաբանական, որ «մանուկ» Քոբուլի քանդակը դրվել է Ստեփանոսի կառուցած Ջվարիում, իսկ Ծրոմին կառուցող «հասուն» Քոբուլի քանդակը չի դրվել իր կառուցած Ծրոմիում:

153 **Г. Н. Чубинашвили,** Цроми..., стр. 50.

154 Այս տիպի, առանց բացառության, բոլոր հուշարձաններում հյուսիսային և հարավային խորանների և գմբեթատակ քառակուսու միջև ուղղանկյուն թաղածածկ տարածություններ (նախախորան, բեմ) գոյություն չունեն. դրանց բացակայությունը Ավանում միանգամայն բնական է և օրինական: Զարմացնում է Գ. Ն. Չուբինաշվիլին իր «Разыскания по армянской архитектуре» աշխատության 17-րդ էջում Ավանի հյուսիսային և հարավային խորանների վերաբերյալ գրելով, թե «...не имеют самостоятельных между квадратом и абсидой бем» [նախախո-

րան—Տ. Մ.]: Կոնտեքստում այս խոսքն այնպես է ասվում, որ ընթերցողի կողմից ընկալվում է, իբրև սխալ կամ բացասական երևույթ:

155 Վերոհիշյալ եզրակացության ճշմարտությունը հաստատող շատ օրինակներից ստորև բերվում են Ջվարին և Հռիփսիմեն: Շատ քչերը կարող են անմիջականորեն տարբերել այս երկու տաճարների ներքին հատակաձևերը: Բանն այն է, որ դրանցում գրեթե նույնն են կարևոր մասերի նաև չափերը: Ահավասիկ՝

| | Հռիփսիմե | Ջվարի |
|---|---|---|
| Տաճարի ներքին երկարությունը արևելք-արևմուտք առանցքով | 20,80 մ. | 20,20 մ. |
| Տաճարի ներքին լայնությունը հյուսիս-հարավ առանցքով | 16,10 » | 16,40 » |
| Գմբեթատակ քառակուսու չափերը արևելք-արևմուտք ուղղությամբ | 9,50 » | 9,20 » |
| Հյուսիս-հարավ ուղղությամբ | 10,05 » | 9,50 » |
| Արևելյան խորանի եզրակամարի թռիչքը | 4,70 » | 4,66 » |
| Արևմտյան խորանի եզրակամարի թռիչքը | 4,56 » | 4,53 » |
| Արևելյան նախախորանի թռիչքը | 5,42 » | 5,40 » |
| Արևելյան նախախորանի լայնքը | 2,05—2,09 | 2,05—2,12 |
| Արևմտյան նախախորանի թռիչքը | 5,41 » | 5,25 » |
| Արևմտյան նախախորանի լայնքը | 2,09—2,10 | 2,32—2,42 |
| Տարբեր են միայն կողային խորանների չափերը | 4,00—4,10 | 4,60—4,70 |

Երկուստեք արևելյան և, գրեթե նաև արևմտյան խորանների թռիչքները վերցված են գմբեթի ներքին տրամագծի կեսի՝ շառավղի չափով: Այստեղ նաև առկա է հատակաձևերի ստեղծման նույն մեթոդը (տե՛ս գծ. 44, 69):

156 Այդ իրոք այդպես էլ եղել է, սակայն այն դեպքում, երբ նոր միայն ստեղծվում էին գմբեթները: Ջվարիի ժամանակներում գմբեթաթմբուկի նշանակությունը այլ էր:

157 **Г. Н. Чубинашвили,** Памятники..., 1948, стр. 110.

158 Նույն տեղում, էջ 113:

159 Ջվարիի գմբեթային փոխանցման համար որպես նախօրինակ հիշվում է Թարգմանչացը, նկատի ունենալով, որ Վրաստանում այդ տիպի հուշարձաններից, թերևս ոչ մեկը չի նախորդել նրան. դեռ ավելին, փոխանցման ձևերը նրանցում (Աթենից բացի) կամ տարբեր են (Մարտվիլի), կամ էլ անորոշ եզրագծերով (Ծումբա):

160 **М. А. Чхиквадзе,** Архитектура Джвари, стр. 11.

161 Там же, стр. 11.

162 Там же, стр. 11.

163 Ջվարիի գմբեթածածկը՝ տանիքը, համաձայն վրաց հետազոտողների եղել է նույնպես կիսագնդաձև, այնպես, ինչպես գմբեթի ներքին ծածկն է, ինչպես որ այժմ վերականգնված ծածկը: Եվ ահա այդ ծածկի թե հին, թե նոր կղմինդրների կորություն ունենալու մասին ոչ մի խոսք չի ասվում, քանի որ նման բան իրականում գոյություն չի ունեցել:

164 Ի՞նչ փույթ, թե որոշ հետազոտողներ մի շարք հուշարձաններում դեն նետելով բոլոր բարձր բարեմասնությունները, նկատում են միայն ու միայն թերություններ, ու այդ, գրեթե օրինաչափ, անխուսափելի անկանոնությունների հիման վրա հյուսում հեռու գնացող, ըստ էության արատավոր տեսություններ: (Տե՛ս **Г. Н. Чубинашвили,** «Памятники...», стр. 112; Նույնի «Разыскания...», стр. 37):

165 **Г. Н. Чубинашвили,** Архитектура Кахетии, текст, стр. 250.

165(ա). **В. В. Беридзе,** Грузинская архитектура «раннехристианского» времени (IV—VII вв.), стр. 25

166 **Г. Н. Чубинашвили,** Памятники..., стр. 157.

167 Там же, стр. 159, 160.

168 Դեռևս 1833 թ. այդ արձանագրությունը պատճենել է Դյուբուա դե Մոնպրեն, 1840 թ. հրատարակել է Մ. Բրոսսեն: Հետագայում՝ 1848 թ. նույն ինքը Բրոսսեն տեղում անձամբ ստուգելուց հետո այն վերահրատարակում է: Այնուհետև հաջորդաբար հրատարակում են՝ 1848 թ. թարգմանաբար Ա. Ն. Մուրավյովը, 1894 թ. Պ. Ս. Ուվարովան (Խ. Ի. Հովհաննեսովի ընթերցմամբ), 1912 թ.՝ Ի. Ա. Ջավախովը, 1914 թ.՝ Ի. Ա. Օրբելին, 1919 թ.՝ Լ. Մելիքսեթ-Բեկովը, 1948 թ.՝ Գ. Ն. Չուբինաշվիլին, 1967 թ. տեղից պատճենում է ճարտ. Լ. Սադոյանը, 1968 թ. հրատարակում է Պ. Մ. Մուրադյանը իր «Армянская надпись храма Джвари» աշխատության մեջ (տե՛ս Հայկ. ՍՍՀ ԳԱ-ի «Լրաբեր հասարակական գիտությունների» 1968 թվականի 2-րդ համարի, 76—77 էջերի միջև):

169 **Г. Н. Чубинашвили,** Архитектура Кахетии, текст, стр. 246.

170 Գ. Ն. Չուբինաշվիլին այս կարգի տաճարներն անվանում է Ջվարիի տիպի հետագա պարզեցումներ, դրանց շարքը դասելով նաև Վանա կղզում գտնվող Աղթամարի հայտնի եկեղեցին: Իր «Ջվարիի տիպի հուշարձաններ» աշխատության 68-րդ էջում Աղթամարի մասին նա գրում է. «Պահպանելով մասերից մեկը ($^3/_4$ խորշը), դեն նետելով մյուսը (ավանդատունը), որը շինության ներքին տեկտոնիկայով կապված է նրանց հետ, դրանով նա ողջ շինությունը զրկում է ճարտարապետական ամբողջականությունից, կապվածությունից, մտածվածությունից և մասերի փոխադարձ անհրաժեշտությունից...»:

Նախ, նկատենք, որ Աղթամարը Ջվարիի տիպի հուշարձան չէ, ոչ էլ նրա պարզեցումը, և, ապա սկզբնապես կառուցված Ջվարին ինքը անկյունային սենյակներ չի ունեցել և հանդիսացել է մի այլ տաճարի պարզեցումը, դեռ ավելին, ինչպես երևում է 67-րդ և 68-րդ գծագրերից, սկզբնական Ջվարին ամբողջական ծավալային հորինվածքով ավելի տեկտոնիկ է, քան հետագա հավելումներով: Ինչ վերաբերում է ներքին տարածության տեկտոնիկային, ապա անկյունային սենյակները այդ համակարգից

միշտ էլ դուրս են մնում ու նրանց բացակայությունը ներքին տեկտոնիկայի վրա չի ազդում:

Արդ, եթե այնուամենայնիվ արևելյան խորանի երկու կողմերում ավանդատներ ունեցող Աղթամարի մասին հնարավոր է այդպես արտահայտվել, ապա, նույնը, որոշակի հավելումով, կարող է վերագրվել ավանդատներ բոլորովին չունեցող սկզբնական Զվարթին, փոքր Ծումբային, Կվետերային:

Նկատի ունենալով, որ իր ժամանակին տաճարներից յուրաքանչյուրը կառուցվել է համաձայն առաջադրանքի, հետևում է, որ կառուցողին այդ առիթով կշտամբանքի խոսք ուղղելը անտեղի է:

171 **А. В. Кузнецов,** Тектоника..., стр. 124.

172 **Հ. Ղևոնդ Մովսեսյան,** Լոռիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, 1923, Վիեննա: Այս աշխատության 86-րդ էջում կարդում ենք. «Կախեթի Կյուրիկյան հարստությունը կհիմնվի Գագիկով (1039—1058), որ վրաց պատմագրին մոտ Գագ ձևով ավանդված է: 1102—1105, Հերեթի և Կախեթի պետերը միանման բռնեն զինքը (Ախսորթանին—վերջին մեղկ թագավորին) և հանձնեն Դավիթ վերանորոգողի, որ ամբողջ Հերեթն ու Կախեթը նվաճեց: Ասով վերջ կգտնե Կախեթի Կյուրիկյան հարըստությունը»:

173 **Г. Н. Чубинашвили,** Архитектура Кахетии, текст, стр. 414—415.

174 Աղյուսակում բերված 17 հուշարձաններից 12-ի չափային տվյալները վերցված են Թ. Թորամանյանի, Ն. Սևերովի, Մ. Կալաշնիկովի, Ա. Երեմյանի և Տ. Ֆրաթադոկքիի չափագրություններից, մյուս հինգի՝ Ավանի, Արամուսի, Գառնահովտի, Հռիփսիմեի և Սիսիանի տըվյալները՝ աշխատության հեղինակի չափագրություններից:

175 Սույն աղյուսակում տեղ չեն գտել Հռիփսիմեի տիպի տաճարներից Զամխուսը, Սեբաստիայի ս. Նշան վանքի ս. Աստվածածին և Աղտուց վանքի ս. Հրեշտակապետ եկեղեցիների տվյալները, ձեռքի տակ պատշաճ հատակագծեր չունենալու պատճառով:

176 Դեռևս երևանական թվականներին Թ. Թորամանյանի հետ իր ունեցած զրույցները մեկնաբանելիս ճարտարապետ Միքայել Մազմանյանը հաճախ հիշում էր գիտնականի կարծիքը՝ գմբեթավոր տաճարների հիմքում գմբեթի տրամագծաչափի առկայությունը:

Նույն հարցի վերաբերյալ Գ. Չուբինաշվիլին իր «Զվարթի տիպի հուշարձաններ» գրքի (1948 թ.) 106-րդ էջում գրում է. «Վրաստանի կամ Հայաստանի ամեն մի գըմբեթավոր տաճարում, ներքին տարածության չափերի և համաչափությունների որոշող էլեմենտը պսակող գըմբեթն է»:

«Հայկական գավիթների ճարտարապետությունը» (1952) աշխատության 128-րդ էջում Ս. Մնացականյանը գրում է. «Զվարթնոցի կառուցման հիմքը հանդիսանում է շինության արտաքին շրջագիծը...»:

«Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը» (1955) աշխատության 184-րդ էջի տողատակում Ա. Սահինյանը գրում է. «Ըստ նախնական արդյունքների... մոդուլ է հանդիսանում... կենտրոնագմբեթ կառուցվածքներում՝ գմբեթի հիմքի շառավիղը (Ավան,Հռիփսիմե, Թալինի փոքր եկեղեցի... Զվարթ):

Ճարտարապետ Ս. Օրագյանը իր «Զվարթնոց» (1958) աշխատության մեջ հայտնում է՝ «Մոս գտած է, որ Օմարի (Երուսաղեմ) նշանավոր Մզկիթին հատակագիծը արդյունք է գմբեթին, կամ կենտրոնական բոլորակին մեջ գծված քառակուսիներու, որոնք հիմքեն ութանկյունի կփոխվին»:

Տողերիս գրողի «Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ» աշխատության մեջ (1963, էջ 110) ասված է «Զվարթնոցի սխեմայի կառուցման հիմք հանդիսացել է շինության գմբեթաթմբուկը»: Տե՛ս նաև նույնի Բանակ տաճարին նվիրված աշխատությունը, որտեղ գրված է. «Բանակում ևս, Զվարթնոցի նման տաճարի կարևոր մասերի չափերը որոշվել են, հիմք ունենալով գմբեթի ներքին տրամագիծը կամ նրա բաղկացուցիչները»:

177 Այստեղ որոշակի վերապահում կա: Բանն այն է, որ երբեմն գմբեթի ներքին տրամագիծը ճշգրտորեն չի համապատասխանում գմբեթատակ քառակուսու տվյալներին: Այդպես է, օրինակ, Հռիփսիմեում, Զորադիրում և այլ տաճարներում, որտեղ գմբեթի հիմքով անցնում է գոտի: Տվյալ միջոցառումով կառուցողը հնարավորություն է ունենում, անկախ գմբեթային փոխանցման համակարգի կատարելության, գմբեթը կերտել ցանկացած տրամագծաչափով և ուրվագծերով:

178 Հատակագծի այդ հյուսվածք-պատկերի ստեղծման ընթացքում գործադրություն են գտնում ինչպես տարբեր տրամագծի շրջագծերը, այնպես էլ եռանկյունիները: Կոնկրետ գծանկարները ցույց են տալիս, որ ճարտարապետի գործիքներից այստեղ գործել են կարկինը և եռանկյունին՝ 30, 60 և 90 աստիճանի անկյուններով (երբեմն նաև 45 աստիճանի անկյունով):

179 Հուշարձաններից մի քանիսում տվյալ կետերը տարբեր պատճառներով ճշտորեն չեն ընկնում սխեմայով ստացված կետերի վրա:

180 Համեմատաբար ուշ կառուցված տվյալ տիպի որոշ հուշարձաններում անկյունային սենյակների քանակը տարբեր է, կան նաև հուշարձաններ, որ սենյակներ չունեն.

181 Տաճարներից մի քանիսում այդ գծերը սկսվում են ոչ թե $^{1}/_{4}$, այլ $^{2}/_{3}$ տրամագծաչափ հեռվից:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


**Ադոնց Ն.**— Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948:

**Ակինյան Ն.**— Կիրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910:

**Առաքելյան Բ.**—Հայ ժողովրդի պատմությունը «Գրական թերթ» № 42, 18 հոկտեմբերի, 1968, Երևան:

**«Գիրք** թղթոց». Սահակ Մեսրոպեան Մատենադարան, Ե. Թ. 1901:

**Թորամանյան Թորոս**—Նյութեր հայ ճարտարապետության պատմության (Աշխատությունների ժողովածու), Երևան, 1942:

**Թորամանյան Թորոս**—Աշխատությունների երկրորդ ժողովածու, Երևան, 1948:

**Թորամանյան Նազիկ**—Թորոս Թորամանյան, Նամակներ, Երևան, 1968:

**Լալաեան Ե.**—Վասպուրական, նշանավոր վանքեր, Ա պրակ, Թիֆլիս, 1912:

**Կաղանկատվացի Մովսես**—Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969:

**Հեղինակային խումբ** — Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1963:

**Հովսեփեան Գարեգին արք.**— Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակույթի պատմութեան, պրակ Գ, Նիւեորք, 1944:

**Ղափադարյան Կարո** — Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945:

**Ղափադարյան Կ.**—Պատմահնագիտական դիտողություններ Ավան տաճարի վերաբերյալ. Պատմաբանասիրական հանդես, № 3, 1968:

**Մարության Տիրան** — Ջվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ, Երևան, 1963:

**Մարության Տ.**— «Գիրք թղթոց»-ն ու Մցխեթայի խաչը, գիտություն և տեխնիկա (հանդես), № 5, Երևան, 1968:

**Մելիքսեթ-Բեկ.** դր. պրոֆ.— Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հատոր Ա (Ե—ԺԲ դար), Երևան, 1934:

**Մխիթար Գոշ** — Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880:

**Մովսէսեան Հ.** Ղեւոնդ — Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923:

**Մնացականյան Ս.**—Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960:

**Մնացականյան Ստ.**— Երևանը և նրա շրջակայքը, Երևան, 1971:

**Ջուանշէր պատմիչ** — Համառոտ պատմութիւն Վրաց ընծայեալ, Վենետիկ, 1884:

**Սահինյան Ալ.**— Էջմիածնի Մայր տաճարը (Ակնարկ հայ ճարտարապետության պատմության), Երևան, 1963:

**Սեբէոսի եպիսկոպոսի** — Պատմութիւն ի ձեռն Ստ. Մալխասյանց, Երևան, 1939:

**Ուխտանես** — Պատմութիւն բաժանման վրաց ի հայոց, Վաղարշապատ, 1871:

**Абуладзе И. В.**— Замечания по поводу статьи П. М. Мурадяна «Армянская надпись храма Джвари» (Мацне, АН Груз. ССР, № 4, 1968).

**Агабабян Р. Я.**— Реконструкция Авана, Ереван, 1947.

**Агабабян Р. Я.**— Композиция купольных сооружений Грузии и Армении, Ереван, 1950.

**Аракелян Б. Н., Арутюнян В. М., Мнацаканян С. Х.**— О некоторых вопросах истории армянской архитектуры (по поводу книги Г. Н. Чубинашвили «Разыскания по армянской архитектуре»), Ереван, 1969.

**Арутюнян В. М.** и **Сафарян С. А.**— Памятники армянского зодчества, Москва, 1951.

**Беридзе Вахтанг** — Письмо в редакцию журнала «Мацне» (Еще раз о храме Джвари, о взаимоотношениях грузинской и армянской архитектур и некоторых статьях, касающихся этих вопросов), Тбилиси, 1970.

**Беридзе В. В.**—Грузинская архитектура «раннехристианского» времени (IV—VII вв.), «Мацнеиереба», Тбилиси, 1974.

**Брунов Н. И.**— Архитектура Византии (ВИА, том 9). Ленинград—Москва, 1966.

**Буниатов Н. Г., Яралов Ю. С.**— Архитектура Армении, Москва, 1951,

Всеобщая история архитектуры, 1 (Учебник— главный редактор Б. П. Михайлов), Москва, 1958.

Всеобщая история архитектуры, 3, (отв. редактор Ю. С. Яралов), Ленинград—Москва, 1966.

**Джавахов И.**— К вопросу о времени построения грузинского храма в Атени по вновь обследованным эпиграфическим памятникам (Христианский Восток I, в. III), СПБ, 1912.

**Джавахов И.**— История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века, (Известия АН, 6. IX, 1908, № 5—6).

**Еремян А. Б.**— Храм Рипсиме, Ереван, 1955.

**Иоселиани П. Л.**— Описание древностей города Тифлиса, Тифлис, 1866.

**Кацнельсон Р. А.**— Архитектура Византии (ВИА, гл. ред. П. Б. Михайлов, т. I), Москва, 1958.

**Кузнецов А. В.**— Своды и их декор, Москва, 1938.

**Кузнецов А. В.**— Тектоника и конструкция центрических зданий, Москва, 1951.

**Лордкипанидзе М. Д.**— К вопросу о надписях храма Джвари в Мцхета (Мацне, № 4), Тбилиси, 1968.

**Мнацаканян С. Х.**— Архитектура армянских притворов, Ереван, 1952.

**Муравьев А. Н.**— Грузия и Армения, т. I, СПБ, 1848.

**Мурадян П. М.**— Армянская надпись храма Джвари (Вестник АН Арм. ССР, № 2), Ереван, 1968.

**Орбели И. А.**— Избранные труды. Ереван, 1963.

**Пахомов Е. А.**— Монеты Грузии, I, СПБ, 1910.

Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXVIII, Тифлис, 1900.

**Такайшвили Е. С.**— Источники грузинских летописей, Три хроники, Тифлис, 1900.

**Токарский Н. М.**— Архитектура древней Армении, Ереван, 1946.

**Токарский Н. М.**— Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961.

**Халпахчьян О. Х.**— Архитектура Армении (Всеобщая история архитектуры, т. 3), Ленинград—Москва, 1966.

**Чубинашвили Г. Н.**— Памятники типа Джвари, Тбилиси, 1948.

**Чубинашвили Г. Н.**— Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967.

**Чубинашвили Г. Н.**— Архитектура Кахетии, тт. I и II, Тбилиси, 1956, 1959.

**Чубинашвили Г. Н.**— Ответ рецензентам (Мацне № 4), Тбилиси, 1969.

**Чубинашвили Г. Н.**— Цроми, Москва, 1969.

**Чубинашвили Нико**— Самшвильдский Сион, Тбилиси, 1969.

**Чубинашвили Нико**— Хандиси, Тбилиси, 1972.

**Чхиквадзе М. А.**— Архитектура Джвари, Москва, 1940.

**Якобсон А. Л.**— Очерк истории зодчества Армении V—XVII веков, Москва—Ленинград, 1950.

*Par Ch Diehl*—**Manuel d'art buzantier, Paris, 1910.**

*Fratadocchi Tommaso Breccia* — **La Chisadi S. Ejmiacin a Soradir, Roma, 1971.**

*Khatchatrian A. L'.*— **Architecture Arménienne du IV a VI siécle, Paris, 1971.**

*Strzygowski Y.*— **Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.**

## ՑԱՆԿ

### Տեքստում տեղադրված գծագրերի

1. Ավան. տաճարի ակոսոմետրիկ տեսքը հարավ-արևմտակողմից (վերակազմություն Տ. Մարության):

2. Ավան. հատակագիծ (չափագրություն Տ. Մարության):

3. Կոստանդնուպոլսի Առաքելոց եկեղեցի. կտրվածք (վերակազմություն Ա. Վ. Կուզնեցովի):

4. Անի. Առաքելոց եկեղեցի, ճակատ (վերակազմություն Թորոս Թորամանյանի):

5. Անիի Առաքելոց եկեղեցի. հատակագիծ (գծ. Թորոս Թորամանյանի):

6. Էջմիածին. տաճարի ընդհանուր տեսքը (վերակազմություն Թորոս Թորամանյանի):

7. Կենտրոնագմբեթ կառուցվածք ըստ Լեոնարդո դա Վինչիի:

8. Ավան. հարավ-արևելյան բոլորակ հիմքով սենյակի (մատուռ) ծածկի կտրվածք (վերակազմություն Տ. Մարության):

9. Ավան. ընդլայնական կտրվածք արևմտակողմի ավանդատներով (գծ. Տ. Մարության):

10. Ավան. գմբեթային մասի հատակագիծ (վերակազմություն Տ. Մարության):

11. Ավան. տանիքի հատակագիծ (վերակազմություն Տ. Մարության):

12. Ավան. արևմտյան ճակատ (վերակազմություն Տ. Մարության):

13. Ավան. արևմտյան ճակատի տարրերակ (վերակազմություն Տ. Մարության):

14. Ավան. Արևմտյան ճակատի տարրերակ (վերակազմություն Տ. Մարության):

15. Ավան. երեք քառորդ խորշերի կազմավորման ընթացքը հատակագծում (գծ. Տ. Մարության):

16. Ավան. արևելյան ճակատ (վերակազմություն Տ. Մարության):

17. Ավան. հյուսիսային ճակատ (վերակազմություն Տ. Մարության):

18. Ավան. հարավային ճակատ (վերակազմություն Տ. Մարության):

19. Ավան. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով (վերակազմություն Տ. Մարության):

20. Ավան. գմբեթային փոխանցման համակարգի դըրվագ (գծ. Տ. Մարության):

21. Ավան. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարության):

22. Ավան. արևելյան ճակատի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարության):

23. Ավան. հարավային ճակատի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարության):

24. Ավան. կտրվածքի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարության):

25. Ճարտարապետական տարբեր շրջանների պատկանող նույնատիպ տաճարների ներքին հատակածներ (գծ. Տ. Մարության):

26. Արամուս. հատակագիծ (չափագրություն Տ. Մարության):

27. Արամուս. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարության):

28. Գառնահովիտ. հատակագիծ (չափագրություն Տ. Մարության):

29. Գառնահովիտ. տաճարի ծածկը՝ տեսքը ներսից (չափագրություն Բ. Արզումանյանի և Ս. Ներսիսյանի):

30. Գառնահովիտ. գմբեթային մասի հատակագիծ (չափագրություն Բ. Արզումանյանի և Ս. Ներսիսյանի):

31. Գառնահովիտ. արևելյան ճակատ (վերակազմություն Տ. Մարության, չափագրություն Բ. Արզումանյանի և Ս. Ներսիսյանի):

32. Գառնահովիտ. արևմտյան ճակատ (վերակազմություն Տ. Մարության, չափագրություն Ս. Ներսիսյանի և Բ. Արզումանյանի):

33. Գառնահովիտ. Հարավային ճակատ (վերակազմություն Տ. Մարության, չափագրություն Ս. Ներսիսյանի և Բ. Արզումանյանի):

34. Գառնահովիտ. հյուսիսային ճակատ (վերակազմություն Տ. Մարությանի, չափագրություն Բ. Արզումանյանի և Ս. Ներսիսյանի)։

35. Գառնահովիտ. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով (վերակազմություն Տ. Մարությանի, չափագրություն Ս. Ներսիսյանի և Բ. Արզումանյանի)։

36. Գառնահովիտ. կտրվածք արևելք-արևմուտք առանցքով (վերակազմություն Տ. Մարությանի, չափագրություն Բ. Արզումանյանի և Ս. Ներսիսյանի)։

37. Գառնահովիտ. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

38. Գառնահովիտ. հարավային խորանի պատուհանի իր վրա ՄՈՎՍԷՍ անունը կրող արտաքին պսակը (չափագրություն Բ. Արզումանյանի և Ս. Ներսիսյանի)։

39. Գառնահովիտ. արևմտյան խորանի պատուհանի ԳՈՐ և ԳՐԻ գրերը կրող պսակը (չափագրություն Ս. Ներսիսյանի և Բ. Արզումանյանի)։

40. Զորադիր. հատակագիծ (չափագրություն Մաուրիցիո Գուիդիի և Էնրիկո Կոստայի)։

41. Զորադիր. գմբեթային մասի հատակագիծ (վերակազմություն Տ. Մարությանի)։

42. Զորադիր. գմբեթի 12 նիստերով տարբերակի հատակագիծ (վերակազմություն Տ. Մարությանի)։

43. Զորադիր. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով (վերակազմության վերնամասը՝ Տ. Մարությանի)։

44. Զորադիր. գմբեթային փոխանցման համակարգի դրվագ (գծ. Տ. Մարությանի)։

45. Զորադիր. արևմտյան ճակատ (վերակազմության վերնամասը՝ Տ. Մարությանի)։

46. Զորադիր. արևելյան ճակատ (վերակազմության վերնամասը՝ Տ. Մարությանի)։

47. Զորադիր. արևելյան ճակատի տարբերակ-գմբեթը 12 նիստերով (վերակազմություն Տ. Մարությանի)։

48. Զորադիր. հարավային ճակատ (վերակազմության վերնամասը Տ. Մարությանի)։

49. Զորադիր. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

50. Զորադիր. արևելյան ճակատի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

51. Զորադիր. հյուսիսային ճակատի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

52. Հռիփսիմե. հատակագիծ (չափագրություն Տ. Մարությանի)։

53. Հռիփսիմե. գմբեթային մասի հատակագիծ (Լ. Սադոյանի և Ս. Երեմյանի)։

54. Հռիփսիմե. արևելյան ճակատ (Լ. Սադոյանի և Ս. Երեմյանի)։

55. Հռիփսիմե. Հարավային ճակատ (Լ. Սադոյանի և Ս. Երեմյանի)։

56. Հռիփսիմե. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով (Լ. Սադոյանի և Ս. Երեմյանի)։

57. Հռիփսիմե. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

58. Թարգմանչաց վանք. Հատակագիծ (չափագրություն Տ. Մարությանի)։

59. Թարգմանչաց վանք. արևմտյան ճակատ (վերակազմություն Տ. Մարությանի)։

60. Թարգմանչաց վանք. արևելյան ճակատ (վերակազմություն Տ. Մարությանի)։

61. Թարգմանչաց վանք. հյուսիսային ճակատ (վերակազմություն Տ. Մարությանի)։

62. Թարգմանչաց վանք. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

63. Թարգմանչաց վանք. արևելյան ճակատի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

64. Թարգմանչաց վանք. հյուսիսային ճակատի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

65. Սիսիանի ս. Հովհաննես. հատակագիծ (չափագրություն Տ. Մարությանի)։

66. Սիսիանի ս. Հովհաննես, հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

67. Քոլատակ (Ալուչալու). հատակագիծ (ըստ Ա. Երեմյանի և Ս. Մնացականյանի)։

68. Քոլատակ հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

69. Ջամխուս. հատակագիծ։

70. Ս. Հրեշտակապետ եկեղեցի (Աղտուց վանք-Սեբաստիա). սխեմատիկ հատակագիծ (չափագրություն Թորգոմ Գուշակյանի)։

71. Աստվածածին եկեղեցի (ս. Նշանի վանք-Սեբաստիա). սխեմատիկ հատակագիծ (չափագրություն Թորգոմ Գուշակյանի)։

72. Վարագավանք. հատակագիծ (Ե. Լալայանի)։

73. Վարագավանք. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

74. Աղթամար, հատակագիծ (չափագրություն Թ. Թորամանյանի)։

75. Աղթամար. կտրվածք արևելք-արևմուտք առանցքով (ըստ Հ. Օրբելու)։

76. Աղթամար. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարությանի)։

77. Նինոծմինդա. հատակագիծ (չափագրություն Մ. Կալաշնիկովի, Ն. Սևերովի լրացումներով ու ուղղումներով)։

78. Նինոծմինդա. վերակազմության կտրվածք սկզբնապես կառուցված տաճարի համար (ըստ Գ. Ն. Չուբինաշվիլու)։

79. Նինոծմինդա. վերակազմության կտրվածք առաջին վերակառուցմամբ կազմավորված տաճարի համար (ըստ Գ. Ն. Չուբինաշվիլու)։

80. Նինոծմինդա. ճակատ (վերակազմություն Տ. Մարությանի)։

81. Նինոծմինդա. կտրվածք (վերակազմություն Տ. Մարությանի)։

82. Նինոծմինդա. ծածկի տեսքը ներսից (վերակազմություն Տ. Մարությանի)։

83. Նինոծմինդա. որմնամույթերի ենթադրյալ ձևափոխություններ հատակագծում (գծ. Տ. Մարությանի)։

84. Ջվարի. այժմյան տաճարի հատակագիծ (չափագրություն Ն. Սևերովի)։

85. Զվարթ. սկզբնապես կառուցված տաճարի հատակագիծ (վերակազմություն Տ. Մարության):

86. Զվարթ. սկզբնապես կառուցված տաճարի գմբեթային մասի հատակագիծ (վերակազմություն Տ. Մարության):

87. Զվարթ. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարության):

88. Զվարթ. գմբեթային փոխանցման համակարգի դրվագ (ըստ Ա. Վ. Կուզնեցովի, գծ. Տ. Մարության):

89. Զվարթ. սկզբնապես կառուցված տաճարի արևելյան ճակատ (վերակազմություն Տ. Մարության):

90. Զվարթ. սկզբնապես կառուցված տաճարի հարավային ճակատ (վերակազմություն Տ. Մարության):

91. Աթեն. հատակագիծ (չափագրություն Մ. Կալաշնիկովի):

92. Աթեն. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարության):

93. Հին Շուամթա-գմբեթավոր մեծ եկեղեցի. հատակագիծ համաչափությունների վերլուծությամբ (չափագրություն Մ. Կալաշնիկովի, վերլուծություն Տ. Մարության):

94. Հին Շուամթա գմբեթավոր փոքր եկեղեցի. հատակագիծ և կտրվածք (չափագրություն Մ. Կալաշնիկովի, գմբեթի վերակազմությունը Տ. Մարության):

95. Մարտվիլի. հատակագիծ (չափագրություն Ն. Սևերովի):

96. Մարտվիլի. հատակագծի համաչափությունների վերլուծություն (Տ. Մարության):

97. Կվետերա. հատակագիծ (չափագրություն Տ. Կյունեի):

98. Կվետերա. կտրվածք հյուսիս-հարավ առանցքով (ըստ Տ. Կյունեի):

99. Տիպական հատակագծի ստեղծման ընթացքը (Տ. Մարության):

100. Տիպական հատակագծի ստեղծման կանոնական համակարգը (Տ. Մարության):

## ՑԱՆԿ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ

1. Ավան, տաճարի ավերակը, տեսքը հարավ-արևմուտքից:

2. Ավան, տաճարի արևմտյան ճակատը 30-ական թվականներին:

3. Ավան, տաճարի ավերակը նախքան 40-ական թվականների վերակառուցումը, տեսքը հարավ-արևմտակողմից:

4. Ավան, ավերակի ընդհանուր տեսքը արևելակողմից

5. Ավան, տաճարի արևմտյան ճակատը 40-ական թվականների վերակառուցումից հետո

6. Ավան, տաճարի շքամուտքը

7. Ավան, տաճարի արևելյան խորանի ներքնամասը և հարավ-արևելյան խորշը

8. Ավան, տաճարի հարավային խորանը և հարավ-արևելյան խորշը

9. Ավան, տաճարի հարավ-արևելյան անկյունը, տեսքը ներսից

10. Ավան, հարավ-արևելյան $^3/_4$ խորշը վերականգնումից հետո

11. Ավան, արձանագրված քարեր արևելյան ճակատի ներքևից երկրորդ շարքում

12. Ավան, հարավ-արևելյան բոլորակ սենյակի գմբեթարդ ծածկի մնացորդը, դեկորատիվ քարակերտ խաչի երկու ճառագայթներով

13. Արամուս, տաճարի ավերակի ընդհանուր տեսքը արևմտակողմից

14. Արամուս, տաճարի հյուսիս-արևելյան սենյակի պատուհանի կամարաղեղը

15. Գառնահովիտ, տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևելակողմից

16. Գառնահովիտ, տաճարի արևմտյան ճակատի դրվագ շքամուտքով

17. Մաստարա, տաճարի վերնամասի հարավ-արևմըտյան տեսքը

18. Գառնահովիտ, տաճարի արևմտյան ճակատը

19. Գառնահովիտ, տաճարի հարավ-արևելյան անկյան ներքին տեսքը

20. Գառնահովիտ, տաճարի արևելյան ճակատի ներքնամասի երեք խաչքանդակներով քար

21. Գառնահովիտ, տաճարի հյուսիս-արևելյան անկյան ներքին տեսքը

22. Գառնահովիտ, տաճարի հարավային խորանի պատուհանի արտաքին կամարաղեղը

23. Գառնահովիտ, տաճարի արևմտյան խորանի պատուհանի արտաքին կամարաղեղը

24. Զորադիր, տաճարի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմտակողմից

25. Զորադիր, տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը

26. Զորադիր, տաճարի հյուսիս-արևմտյան $^3/_4$ խորշի վերնամասը

27. Ա, Բ, Գ, Դ Զորադիր, ներքին որմնամույթերի խոյակներ

28. Հռիփսիմե, տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևելակողմից

29. Հռիփսիմե, տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը

30. Հռիփսիմե, տաճարի գմբեթային մասի ներքին տեսքը

31. Հռիփսիմե, տաճարի հյուսիս-արևելյան $^3/_4$ խորշը

32. Թարգմանչաց վանք, տաճարի ավերակի ընդհանուր տեսքը արևելակողմից

33. Թարգմանչաց վանք, տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը

34. Սիսիան, տաճարի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմտակողմից

35. Քոլատակ (Ալուչալու) — տաճարի ավերակը, տեսքը հյուսիս-արևմտակողմից

36. Սիսիան, տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևմտակողմից

37. Աղթամար, տաճարի արևելյան ճակատի դրվագ

38. Աղթամար, տաճարի տեսքը արևմտակողմից

39. Նիննծմինդա, տաճարի ընդհանուր տեսքը արևելակողմից

40. Նիննծմինդա, տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը

41. Ջվարի, տաճարի ընդհանուր տեսքը արևելակողմից

42. Աթեն, տաճարի ընդհանուր տեսքը հարավ-արևմտակողմից

43. Հին Շուամթա, գմբեթավոր մեծ եկեղեցու արևելյան հատվածի ներքին տեսքը

44. Հին Շուամթա, գմբեթավոր մեծ եկեղեցու ընդհանուր տեսքը արևելակողմից

45. Հին Շուամթա, գմբեթավոր փոքր եկեղեցու ընդհանուր տեսքը հարավ-արևելակողմից

46. Մարտվիլի, տաճարի արևելյան հատվածի ներքին տեսքը

47. Կվետերա, եկեղեցու արևելյան հատվածի ներքին տեսքը

48. Արծվաբերդի ս. Աստվածամոր եկեղեցի—*VII* դար Արճիշահովիտ գավառ (Թուրքիա)

Լուսանկար Ժան Միշել Թիերի (Ֆրանսիա), 1973 թ.

Աշխատության մեջ տեղադրված լուսանկարների մի մասի համար օգտագործվել են Գ. Հովսեփյանի և Թ. Թորամանյանի կողմից կատարված Հայկական ՍՍՀ պետական պատմական թանգարանի և հուշարձանների պահպանության պետական կոմիտեի ֆոնդերում գտնվող նեգատիվները, որպիսիք տրամադրելու համար հեղինակը հայտնում է իր խորին շնորհակալությունը:

Լուսանկարներից մյուսները արտատպություններ են Հ. Ա. Օրբելու, Գ. Ն. Չուբինաշվիլու, Վ. Վ. Բերիձեի, Մ. Ա. Չխիկվաձեի, Տ. Բ. Ֆրաթադոկբիի և այլ աշխատություններից:

Գառնահովտի լուսանկարներից 15, 22, 26-ը պատկանում են աշխատության հեղինակին:

## ПЕРЕЧЕНЬ ЧЕРТЕЖЕЙ, ПОМЕЩЕННЫХ В ТЕКСТЕ


1. Аван. Аксонометрический вид храма с юго-запада (реконструкция Т. А. Марутяна).

2. Аван. План храма (обмер Т. А. Марутяна).

3. Церковь Апостолов в Константинополе. Разрез (реконструкция А. В. Кузнецова).

4. Церковь Апостолов в Ани. Фасад (реконструкция Тороса Тораманяна).

5. Церковь Апостолов в Ани. План (реконструкция Тороса Тораманяна).

6. Эчмиадзин. Общий вид храма (реконструкция Тороса Тораманяна).

7. Центрально-купольное сооружение по Леонардо да Винчи.

8. Аван. Разрез перекрытия юго-восточной круглой часовни (обмер и реконструкция Т. А. Марутяна).

9. Аван. Поперечный разрез по западным приделам (чертеж Т. А. Марутяна).

10. Аван. План купольной части (реконструкция Т. А. Марутяна).

11. Аван. План кровли (реконструкция Т. А. Марутяна).

12. Аван. Западный фасад (реконструкция Т. А. Марутяна).

13. Аван. Вариант западного фасада (реконструкция Т. А. Марутяна).

14. Аван. Вариант западного фасада (реконструкция Т. А. Марутяна).

15. Аван. Процесс образования трехчетвертных ниш в плане (чертеж Т. А. Марутяна).

16. Аван. Восточный фасад (реконструкция Т. А. Марутяна).

17. Аван. Северный фасад (реконструкция Т. А. Марутяна).

18. Аван. Южный фасад (реконструкция Т. А. Марутяна).

19. Аван. Разрез по оси север—юг (реконструкция Т. А. Марутяна).

20. Аван. Фрагмент купольного перехода (чертеж Т. А. Марутяна).

21. Аван. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

22. Аван. Анализ пропорциональности восточного фасада (по Т. А. Марутяну).

23. Аван. Анализ пропорциональности южного фасада (по Т. А. Марутяну).

24. Аван. Анализ пропорциональности разреза (по Т. А. Марутяну).

25. Планы центральных частей храмов данного типа в архитектуре Армении и Грузии (чертеж Т. А. Марутяна).

26. Арамус. План храма (обмер Т. А. Марутяна).

27. Арамус. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

28. Гарнаовит. План храма (обмер Т. А. Марутяна).

29. Гарнаовит. Плафон (обмер Б. Арзуманяна и С. Нерсисяна).

30. Гарнаовит. План купольной части (обмер С. Нерсисяна и Б. Арзуманяна)

31. Гарнаовит. Восточный фасад (реконструкция Т. А. Марутяна, обмер Б. Арзуманяна и С. Нерсисяна).

32. Гарнаовит. Западный фасад (реконструкция Т. А. Марутяна, обмер Б. Арзуманяна и С. Нерсисяна).

33. Гарнаовит. Южный фасад (реконструкция Т. А. Марутяна, обмер С. Нерсисяна и Б. Арзуманяна).

34. Гарнаовит. Северный фасад (реконструкция Т. А. Марутяна, обмер Б. Арзуманяна и С. Нерсисяна).

35. Гарнаовит. Разрез по оси север—юг (реконструкция Т. А. Марутяна, обмер С. Нерсисяна и Б. Арзуманяна).

36. Гарнаовит. Разрез по оси восток—запад (реконструкция Т. А. Марутяна, обмер Б. Арзуманяна и С. Нерсисяна).

37. Гарнаовит. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

38. Гарнаовит. Бровка окна южной абсиды с надписью ՄՈՎՍԷՍ МОВСЭС (обмер Б. Арзуманяна и С. Нерсисяна).

39. Гарнаовит. Бровка окна западной абсиды с надписью ԳՈՐ—ԳՐԻ ГОР и ГРИ (обмер Б. Арзуманяна и С. Нерсисяна).

40. Дзорадир. План храма (обмер Маурицио Гуиди и Энрико Коста).

41. Дзорадир. План купольной части (реконструкция Т. А. Марутяна).

42. Дзорадир. Вариант плана купола с 12-ю гранями (реконструкция Т. А. Марутяна).

43. Дзорадир. Разрез по оси север—юг (реконструкция купольной части Т. А. Марутяна).

44. Дзорадир. Фрагмент купольного перехода (чертеж Т. А. Марутяна).

45. Дзорадир. Западный фасад (реконструкция купольной части Т. А. Марутяна).

46. Дзорадир. Восточный фасад (реконструкция купольной части Т. А. Марутяна).

47. Дзорадир. Вариант восточного фасада с 12-гранным куполом (реконструкция Т. А. Марутяна).

48. Дзорадир. Южный фасад (реконструкция купольной части Т. А. Марутяна).

49. Дзорадир. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

50. Дзорадир. Анализ пропорциональности восточного фасада (по Т. А. Марутяну).

51. Дзорадир. Анализ пропорциональности северного фасада (по Т. А. Марутяну).

52. Рипсиме. План (обмер Т. А. Марутяна).

53. Рипсиме. План купольной части (по А. Б. Еремян и Л. А. Садояну).

54. Рипсиме. Восточный фасад (по А. Б. Еремян и Л. А. Садояну).

55. Рипсиме. Южный фасад (по А. Б. Еремян и Л. А. Садояну).

56. Рипсиме. Разрез по оси север—юг (по А. Б. Еремян и Л. А. Садояну).

57. Рипсиме. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

58. Таргманчац ванк. План (обмер Т. А. Марутяна).

59. Таргманчац ванк. Западный фасад (реконструкция Т. А. Марутяна).

60. Таргманчац ванк. Восточный фасад (реконструкция Т. А. Марутяна).

61. Таргманчац ванк. Северный фасад (реконструкция Т. А. Марутяна).

62. Таргманчац ванк. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

63. Таргманчац ванк. Анализ пропорциональности восточного фасада (по Т. А. Марутяну).

64. Таргманчац ванк. Анализ пропорциональности северного фасада (по Т. А. Марутяну).

65. Сисиан. План (обмер Т. А. Марутяна).

66. Сисиан. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

67. Колатак (Алучалу). План (по А. Б. Еремян и С. Х. Мнацаканяну).

68. Колатак. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

69. Чамхус. План.

70. Церковь св. Рештакапет (Ахтуц ванк—Себастия). Схематический план (обмер Торгома Гушакяна).

71. Церковь Аствацацин (св. Ншан ванк—Себастия). Схематический план (обмер Торгома Гушакяна).

72. Варагаванк. План (по Е. Лалаяну).

73. Варагаванк. Анализ пропорциональности (по Т. А. Марутяну).

74. Ахтамар. План (по Т. Тораманяну).

75. Ахтамар. Разрез по оси восток—запад (по И. А. Орбели).

76. Ахтамар. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

77. Ниноцминда. План (обмер М. Г. Калашникова и Н. П. Северова).

78. Ниноцминда. Реконструкция для первоначально построенного храма, разрез (по Г. Н. Чубинашвили).

79. Ниноцминда. Реконструкция храма после первого восстановления, разрез (по Г. Н. Чубинашвили).

80. Ниноцминда. Фасад (реконструкция Т. А. Марутяна).

81. Ниноцминда. Разрез (реконструкция Т. А. Марутяна).

82. Ниноцминда. Вид перекрытия изнутри (реконструкция Т. А. Марутяна).

83. Ниноцминда. Предполагаемые изменения пилонов в плане (черт. Т. А. Марутяна).

84. Джвари. План современного храма (обмер Н. П. Северова).

85. Джвари. План первоначально построенного храма (реконструкция Т. А. Марутяна).

86. Джвари. План купольной части первоначально построенного храма (реконструкция Т. А. Марутяна).

87. Джвари. Анализ пропорциональности плана первоначально построенного храма (по Т. А. Марутяну).

88. Джвари. Фрагмент купольного перехода (черт. Т. А. Марутяна по материалам А. В. Кузнецова).

89. Джвари. Восточный фасад первоначально построенного храма (реконструкция Т. А. Марутяна).

90. Джвари. Южный фасад первоначально построенного храма (реконструкция Т. А. Марутяна).

91. Атен. План (обмер М. Г. Калашникова).

92. Атен. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

93. Дзвели Шуамта. Большая купольная церковь. План (обмер М. Г. Калашникова, анализ пропорциональности по Т. А. Марутяну).

94. Дзвели Шуамта. Малая купольная церковь. План и разрез (обмер М. Г. Калашникова, реконструкция купольной части Т. А. Марутяна).

95. Мартвили. План (обмер Н. П. Северова).

96. Мартвили. Анализ пропорциональности плана (по Т. А. Марутяну).

97. Кветера. План (обмер Т. Г. Кюне).

98. Кветера. Разрез по оси север—юг (то Т. Г. Кюне)

99. Эволюция создания типового плана храма данного типа (по Т. А. Марутяну).

100. Каноническая система создания типового плана (по Т. А. Марутяну).

## ПЕРЕЧЕНЬ ИЛЛЮСТРАЦИЙ

1. Аван. Общий вид развалин храма с юго-запада.
2. Аван. Западный фасад храма в тридцатые годы.
3. Аван. Развалины храма до восстановительных работ сороковых годов. Вид с юго-запада.
4. Аван. Общий вид развалин храма, вид с восточной стороны.
5. Аван. Западный фасад храма после восстановительных работ сороковых годов.
6. Аван. Входной портал храма (с запада).
7. Аван. Нижняя часть восточной абсиды и юго-восточная трехчетвертная ниша.
8. Аван. Южная абсида и юго-восточная трехчетвертная ниша храма.
9. Аван. Внутренний вид юго-восточного угла храма.
10. Аван. Юго-восточная трехчетвертная ниша после восстановительных работ.
11. Аван. Камни с надписью на втором ряду кладки восточного фасада храма.
12. Аван. Часть полусферического перекрытия с двумя ветвями декоративного креста юго-восточной круглой комнаты храма.
13. Арамус. Общий вид развалин храма с запада.
14. Арамус. Бровка окна северо-восточной комнаты храма.
15. Гарнаовит (Адиаман). Общий вид храма с юго-востока.
16. Гарнаовит. Фрагмент западного фасада с входным порталом.
17. Мастара. Юго-западный вид верхней части храма.
18. Гарнаовит. Западный фасад храма.
19. Гарнаовит. Внутренний вид юго-восточного угла храма.
20. Гарнаовит. Камень с равноконечными крестами на нижней части восточного фасада.
21. Гарнаовит. Внутренний вид северо-восточного угла храма.
22. Гарнаовит. Наружная бровка окна южной абсиды.
23. Гарнаовит. Наружная бровка окна западной абсиды.
24. Дзорадир. Общий вид храма с северо-запада.
25. Дзорадир. Внутренний вид восточной части храма.
26. Дзорадир. Верхняя часть северо-западной трехчетвертной ниши.
27. Дзорадир. Капители пилястров (А, Б, В, Г).
28. Рипсиме. Общий вид храма с юго-востока.
29. Рипсиме. Внутренний вид восточной части храма.
30. Рипсиме. Внутренний вид купольной части храма.
31. Рипсиме. Северо-восточная трехчетвертная ниша храма.
32. Таргманчац ванк. Общий вид развалин храма с востока.
33. Таргманчац ванк. Внутренний вид восточной части храма.
34. Сисиан. Общий вид храма с северо-запада.
35. Колатак (Алучалу). Общий вид развалин храма с северо-запада.
36. Сисиан. Общий вид храма с юго-запада.
37. Ахтамар. Фрагмент восточного фасада храма.
38. Ахтамар. Общий вид храма с запада.
39. Ниноцминда. Общий вид храма с востока.
40. Ниноцминда. Внутренний вид восточной части храма.
41. Джвари. Общий вид храма с востока.
42. Атени. Общий вид храма с юго-запада.
43. Старая Шуамта. (Большая купольная церковь). Внутренний вид восточной части храма.
44. Старая Шуамта. (Большая купольная церковь). Общий вид храма с востока.
45. Старая Шуамта. (Малая купольная церковь). Общий вид храма с юго-востока.
46. Мартвили. Внутренний вид восточной части храма.
47. Кветера. Внутренний вид восточной части храма.
48. Церковь Богоматери в Арцваберде. VII век (ныне в пределах Турции). Фото Жана Мишеля Тиэри (Франция), 1973.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**Երկու խոսք** . . . . . . . . . . . 3

Ավանի տաճարը . . . . . . . . . . . 5

    Տաճարի ավերա՚լը . . . . . . . . . 12

    Տաճարի վերակազմության նախագծերի մասին . . . . 14

    Տաճարի հատակագծի կազմավորումը . . . . . . 18

    Գմբեթային փոխանցման եղանակը Ավանում . . . . . 28

    Տաճարի երկրորդական գմբեթների ձևի մասին . . . . 30

    Տաճարի կենտրոնական գմբեթի ձևի մասին . . . . 32

    Տաճարի ներքին տարածության լուսավորման մասին . . . 37

    Համաչափություններ տաճարի օրգանիզմում . . . . . 37

    Ով է եղել Ավանի կաթողիկեի ճարտարապետը . . . . 42

    Ավանի կաթողիկեի անվան հարցը . . . . . . 44

Արամուսի Ծիրանավոր Ս. Նշան . . . . . . . 46

Գառնահովիտ գյուղի Ս. Գևորգ . . . . . . . 50

Զորադիրի Ս. Էջմիածին . . . . . . . . . 64

    Հատակագիծը . . . . . . . . . . 66

    Գմբեթային փոխանցման համակարգը . . . . . . 67

    Գմբեթի ձևերի մասին . . . . . . . . 69

    Զորադիրի վերականգնման և վերակազմական գծագրերի մասին 74

Էջմիածնի Ս. Հռիփսիմե տաճարը . . . . . . . 77

Այգեշատի Թարգմանչաց վանք . . . . . . . 93

    Ճարտարապետական ձևերը . . . . . . . . 94

    Գմբեթային փոխանցման համակարգը . . . . . . 95

    Հատակաձևը . . . . . . . . . . 95

    Կառուցման ժամանակը . . . . . . . . 98

Սիսիանի Ս. Հովհաննես . . . . . . . . 100

Քղատակի Ս. Աստվածածին (Ալուչալու) . . . . . . 103

Վարագավանքի Ս. Աստվածածին . . . . . . . 108

Աղթամարի Ս. Խաչ տաճարը . . . . . . . 111

    Գմբեթային փոխանցման համակարգը . . . . . 113

Երեք քառորդ խորշերով տետրակոնխեր ճարտարապետական այլ շրջանակներում . . . . . . . . . . 117

Նիճոծմինդա . . . . . . . . . . 117
Ավանատիպ տաճարների ճարտկանի կազմավորման ընթացքը և կանոնական ճամակարգը . . . . . . . . . 166
Վերջաբանի փոխարեն . . . . . . . . . 170
Краткое содержание . . . . . . . . . 174
Ծանոթագրություններ . . . . . . . . . 186
Գրականություն . . . . . . . . . . 195
Ցանկ տեքստում տեղադրված գծագրերի . . . . . . 197
Ցանկ լուսանկարների . . . . . . . . . 199
Перечень чертежей, помещенных в тексте . . . . . . 201
Перечень иллюстраций . . . . . . . . . 203

Մարության Տիրան Հարությունի

**ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԸ**

Նկարիչ՝ **Վ. Ա. Հարությունյան**
Գեղ. խմբագիր՝ **Օգ. Ա. Ասատրյան**
Տեխ. խմբագիր՝ **Ս. Մ. Սիմոնյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Հ. Լ. Ղալումյան**

**Тиран Арутюнович Марутян**

**ХРАМ АВАН**

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван — 1976